ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 12-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՎԱՆԱՁՈՐ – 2025

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 12-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երիտասարդ գիտնականների
գիտահետազոտական ներուժի բացահայտում

ՎԱՆԱՁՈՐ
2025

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ФОНД «ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ИМЕНИ О. ТУМАНЯНА»

МАТЕРИАЛЫ 12-ОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ

Раскрытие научно-исследовательского
потенциала молодых ученых

ВАНАДЗОР
2025

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

"VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TUMANYAN" FOUNDATION

MATERIALS OF THE 12TH REPUBLICAN STUDENT CONFERENCE

Unveiling the research
potential of young scientists

VANADZOR
2025

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72ց43
Ե 859

Տպագրվում է
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Ռ. Ռ. Սահակյան, տեխ. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ)
Վ. Վ. Հովսեփյան, կ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)
Լ. Ս. Հակոբյան (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ
Վ. Վ. Բաղդասարյան, տնտ. գ. դ., **Հ. Ա. Ղազարյան**, ք. գ. դ., **Ֆ. Վ. Մովսիսյան**, պ. գ. դ., **Պ. Հ. Գևորգյան**, մ. գ. դ., **Ս. Մ. Փարսադանյան**, ֆ.-մ. գ. թ., **Հ. Պ. Հարությունյան**, բ. գ. թ., **Վ. Ա. Փիլոյան**, բ. գ. թ., **Լ. Յ. Վարդանյան**, բ. գ. թ., **Վ. Վ. Հարությունյան**, տնտ. գ. թ., **Հ. Կ. Հակոբյան**, արվեստագիտության դոցենտ

Ե 859 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 12-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ / ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ, Խմբ. խորհուրդ՝ Ռ. Սահակյան և այլք. – Վանաձոր: 2025. – 600 էջ:

Ժողովածուն ամփոփում է «ՎՊՀ» հիմնադրամի 2023 թվականի մայիսի 15-ին կայացած ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերը: Հոդվածները խմբագրական խորհրդի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISBN 978-9939-1-1686-0

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72ց43

© Հեղինակային խումբ, 2025
© «Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամ, 2025

Печатается по решению Ученого Совета
Фонда «Ванадзорский государственный университет имени О. Туманяна»

Редакционный совет
Р. Р. Саакян, д. тех. н. (председатель редакционного совета)
В. В. Овсепян, к. б. н. (заместитель председателя редакционного совета)
Л. С. Акопян (ответственный секретарь)

Члены редакционного совета
В. В. Багдасарян, д. э. н., **Г. А. Казарян**, д. х. н., **Ф. В. Мовсисян**, д. и. н, **П. О. Геворкян**, д. пед. н., **С. М. Парсаданян**, к. физ.-мат. н., **А. П. Арутюнян**, к. ф. н., **В. А. Пилоян**, к. ф. н, **Л. Ю. Варданян**, к. ф. н., **В. В. Арутюнян**, к. э. н., **А. К. Акопян**, доцент искусствоведения

МАТЕРИАЛЫ 12-ОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ.
/ Министерство образования, науки, культуры и спорта РА,
Фонд «Ванадзорский государственный университет имени О. Туманяна», Ред. совет – Р. Саакян и др. –Ванадзор. 2025. – 600 стр.

Сборник обобщает материалы республиканской студенческой конференции, состоявшейся 15 мая 2023 года. Статьи были рецензированы, отредактированы и гарантированы печати редакционным комитетом.

© Авторская группа, 2025
© Фонд «Ванадзорский государственный университет имени О. Туманяна», 2025

Printed by the Resolution of the Academic Council of
"Vanadzor State University after H. Tumanyan" Foundation

Editorial Board
R. R. Saakyan, Doctor of Technical Sciences (Chairman of Editorial Board)
V. V. Hovsepyan, Candidate of Biological Sciences (Deputy Chairman of the Editorial Board)
L. S. Hakobyan (Secretary-in-charge)

Editorial Board Members
V. V. Baghdasaryan, Doctor of Economic Sciences, **H. A. Ghazaryan**, Doctor of Chemical Sciences, **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, **P. H. Gevorgyan**, Doctor of Pedagogical Sciences, **S. M. Parsadanyan**, Candidate of Physical and Mathematical Sciences, **H. P. Harutyunyan**, Candidate of Philological Sciences, **V. A. Piloyan**, Candidate of Philological Sciences, **L. Y. Vardanyan,** Candidate of Philological Sciences, **V. V. Harutyunyan**, Candidate of Economic Sciences, **H. K. Hakobyan**, Associate Professor of Art History

MATERIALS OF THE 12TH REPUBLICAN STUDENT CONFERENCE.
/ RA Ministry of Education, Science, Culture and Sport, "Vanadzor State University after H. Tumanyan" Foundation.. Editorial Board: R. Sahakyan, etc. – Vanadzor. 2025. – 600 p.

The collection summarizes the materials represented during the republican student conference at Vanadzor State University on May 15, 2023. The articles are reviewed, edited and guaranteed to be printed by the editorial staff.

© Author group, 2025
© "Vanadzor State University after H. Tumanyan" Foundation, 2025

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

АРМЯНСКАЯ ФИЛОЛОГИЯ

ARMENIAN PHILOLOGY

Այվազյան Գոհար
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Ա. Սանթոյան

Հանգուցային բառեր. *անվանական նախադասություն, հանգույց, հոգեբանական ենթակա, վերացական բայ*

Անվանական են կոչվում այն միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտված է լինում ուղղական հոլովով դրված որևէ անունով և ցույց է տալիս տվյալ առարկայի առկայությունը խոսելու պահին ու խոսողի վերաբերմունքն այդ առարկայի նկատմամբ [4, 147]: Օրինակ՝ ***«Ահա և իրենց գործարանի ճաշարանը: Դեմքե՛ր, դեմքե՛ր, դեմքե՛ր... Բոլորը կենդանի, պարզ, ծանոթ»*** [2, 118]: Այս օրինակով հեղինակը ցույց է տալիս ոչ միայն գործարանի ճաշարանը, ծանոթ դեմքերը, այլև հաստատում է դրանց առկա լինելը, գոյությունը խոսքի պահին: ***«Սասանող լռություն»*** [4, 586]: ***«Ահա իր ոտնատեղը: Հողի թարմ փլվածքը» [2, 119]: «Շուկան: Գեղջուհիներ, գյուղացիներ, պիոներներ, զինվորական խռհանոցի սայլը, խուրջիններ, եղաններ, ավտոմոբիլ, եզ...»*** [2, 281]: ***«Հասան խանի, յաթաղան, զնջիլ, ֆարրաշներ:*** **Խանը խոսեց, գլուխը թռավ: *Հետո ուրիշ օրեր: Երկմյուղ մորուքավոր պրիստավ, յասավուլ՝ ահռելի փափախով: Մտրակ, ծեծ, հայհոյանք, կաշառք»*** [2, 283]:

Անվանական նախադասություններն ունեն երկու առանձնահատկություն՝ ***կառուցվածքային*** և ***բովանդակային:***

1) ***Կառուցվածքային*** առանձնահատկությունն այն է, որ սրանք ունեն մեկ գերադաս անդամ, որն արտահայտվում է ուղղական հոլովով. Վերջինս կոչվում է գերադաս անդամ: Օրինակ՝ ***«Ահա և իրենց գործարանի ճաշարանը: Դեմքե՛ր, դեմքե՛ր, դեմքե՛ր... Բոլորը*** **կենդանի, պարզ, ծանոթ»** [2, 118]: ***«Եվ ահա նա՝*** **հաղթական ճարտարապետը»** [1, 234]: **«Ահա մի գեղեցիկ *օրինակ»*** [3, 692]: ***«Ա՛յ ընտիր հեծելազոր ...»*** [3, 124]: ***«Չէ՛, կենդանի զինվորյալներս՝ Վարդանս, Արտակներս, Ներշապուհս, Գաղիշոս»*** [3, 450]:

2) **Բովանդակային** առանձնահատկությունն այն է, որ այս նախադասությունները ցույց են տալիս տվյալ առարկայի գոյությունը, առկայությունը խոսելու պահին. օրինակ՝ **«Ահա իր *ոտնատեղը:* Հողի թարմ *փլվածքը»* [1, 119]: *«Զոր, վերելք, ոլորք... մնաց բարձունքի վերջին կատարը»* [2, 7]: «Սասանող *լռություն:* Եվ հանկարծ այդ լռությունը խզեց մեծ տիկնոջ սպառնալի, խռպոտ ձայնը»** [3, 586]: ***«Ահա և «այն բանը»... Ծածկված բներ են՝ տեղ-տեղ քարացած, տեղ-տեղ ցեխոտ, խոնավ խրամատներ և ուրիշ ոչինչ»*** [2, 111]: ***«Խորի՛ն, իսկական Հայաստան: Նրա քաղաքներից մինը: Քաղաք՝ ձեռաց շինած: Խրճիթների, մարագների ու ախոռների արանքում՝ տպարան, կոռպերատիվի էլեկտրական»*** [2, 281]:

Անվանական նախադասությունները չունեն ստորոգման քերականական ձև, ձևաբանական արտահայտություն: Այս տիպի նախադասություններում ստորգ-

ման դեր կատարում է հնչերանգը [4, 147]**:** Անվանական նախադասություններում առկա է մեկ գլխավոր (գերադաս) անդամ, որն արտահայտվում է որևէ անուն խոսքի մասի՝ ***գոյականի, դերանվան կամ գոյականաբար կիրառված ածականի, թվականի ուղղական հոլովով***. օրինակ՝ **«Սիամանթոն ապրեց, տառապեց տառապանքի մեջ: Չարենցը սկիզբ առավ տառապանքից: *Երկու երազող բանաստեղծ, ցավոտ բանաստեղծ»* [4, 94]:** Այստեղ՝ ***«Երկու երազող բանաստեղծ, ցավոտ բանաստեղծ»*** անվանական նախադասության քերականական կենտրոնը ***բանաստեղծն է***, իսկ նրա լրացումներն են ***երկու, երազող, ցավոտ*** բառերը:

Որոշ քերականներ գտնում են, որ անվանական նախադասության գերադաս անդամը կարող է համապատասխանել ենթակային կամ ստորոգյալին [4, 143]: Ա. Ա. Շախմատովն ընդունում է ***ենթակա*** և ***ստորոգյալ անվանական նախադասություններ*** հասկացությունը. Նա համարում է, որ անվանական նախադասությունների գերադաս անդամը համապատասխանում է ենթակային, իսկ որոշ նախադասություններինը՝ ստորոգյալին [4, 144]: Շախմատովը գտնում է, որ ստորոգյալին համապատասխանելիս սուբյեկտի անունը բաց է թողնվում, արտասանության տոնն իջնում է: Օրինակ՝

– Ես ձեզ տեսնել չեմ ուզում:

– Էգոիստ:

«Նա ասաց, որ ոչ մեկին չի նեղացնի: «Երկնային հոգի»: Շախմատովի կողմից վերը բերված երկու օրինակներում անվանական նախադասությունները համապատասխանում են ստորոգյալին: Ի տարբերություն ***Շախմատովի***, որը գտնում է, որ անվանական նախադասությունները ենթակա կամ ստորոգյալ չունեն, և այդ կենտրոնական անդամն անվանում է սոսկ գլխավոր անդամ, ***Ֆ. Ֆ. Ֆորտունատովի*** կարծիքով՝ նախադասությունը երկու պատկերացումների կապակցություն է՝ **հոգեբանական ենթակայի** *և* **ստորոգյալի**, և այդ կապակցություններից որևէ մեկը բառային արտահայտություն չի ունենում. օրինակ՝ **«Հրդե՛հ»***:* Այստեղ նախադասության հոգեբանական ենթական ***բոցն ու ծուխն*** է, որ տեսնում է բացականչողը, իսկ հոգեբանական ստորոգյալը **«Հրդե՛հ»** բառն է [4, 145]: Մեկ այլ լեզվաբան՝ ***Ա. Մ. Պեշկովսկին,*** օրինակ բերելով ***«*Օգոստոս. Շուտով կսկսվեն դասերը»** նախադասությունը, նշում է, որ եթե ասենք ***Օգոստոս է,*** կկորչի խոսելու պահին օգոստոսի լինելիության գաղափարը, և նախադասությունը չի արտահայտի խոսքի պահին օգոստոսի առկա լինելու գաղափարը. Առանց էական բառի կնշանակի՝ **ահա օգոստոսը** [4,145]: Օրինակ՝ **«Հանկարծ Վարդանի մեջ կայծեց զվարթ միտքը. *«Այրուձի՛ն... »* [3, 855]:**

«Ատոմը թռավ նժույգի վրա,– ժա՛մ է...

– Գրրրո՛ռ՛հ...» [3, 971]:

Անվանական նախադասություններն արտահայտում են լրիվ, ավարտված միտք՝ անթերի կատարելով հաղորդակցման իրենց դերը: Նրանց կենտրոնական անդամի՝ ուղղական հոլովով արտահայտված լինելը ցույց է տալիս տվյալ առարկայի առկայությունը խոսելու պահին, և խոսողը կարիք չի ունենում կիրառելու ***է*** կամ ***կա*** վերացական բայերը: Օրինակ՝ **«Սրբազանը ոգևորությամբ արտասանեց.**

– ***Անի՛ն*** [4, 100]:

Սրբազանի բացականչությունը՝ **«Անի՛ն»**, ցույց է տալիս, որ նա ոչ միայն տեսնում է քաղաքը, նրա աչքի առաջ է այն, այլև արտահայտում է իր հոգում նրա առաջացած հույզը, ուրախությունը: ***Ի տարբերություն բայական անդեմ նախադասությունների՝ անվանական անդեմ նախադասությունների գերադաս անդամը բայական լրացումներ՝ խնդիրներ և պարագաներ չի ունենում. Այն ունենում է գոյականական լրացումներ, քանի որ գերադաս անդամը անուն է, ոչ թե բայ: Պարագա ու խնդիր լրացումների առկայությունը, եթե նրանք որևէ առկա դերբայի լրացում չեն, ենթադրում է ստորոգյալի առկայություն, որ տվյալ դեպքում զեղչված է լինում*** [4, 145]: Օրինակ՝ «***Ամենուրեք կեղտ, մուր, ցեխ»*** [4, 94]: ***«Ամեն տեղ ավազ ու կիր, քարքարուտներ և չորացած աղային լճեր»*** [4, 92]: Այս նախադասություններում ***ամենուրեք*** և ***ամեն տեղ*** պարագաները հուշում են մեզ, որ զեղչված են՝ **են, էին, կային** բայերը: Երբեմն այս տիպի նախադասություններում գերադաս անդամը ունենում է դերբայական դարձվածով արտահայտված լրացում, սակայն սա հիմք չի ծառայում, որ անվանական նախադասության կազմը շեղվի. Նա մնում է այդպիսին՝ միակազմ. օրինակ՝ ***«Ամենահիմար սիրո մը ամենառամիկ վախճանին վրայեն անցած տարիներ»***: Այստեղ ***վրայեն*** տեղի պարագան վերաբերում է ***անցած*** դերբային, որը այդ կապակցության գերադաս անդամը չէ: Երբեմն լրացում ունեցող դերբայը զեղչված է լինում, բայց մտքից հասկացվում է, որ բայական լրացումը այդ զեղչված դերբային է վերաբերում. օրինակ՝ ***«Գողություն, որպիսի վիրավորանք Ալիմյանի գերդաստանի պատվին և ինքնասիրությանը»*** [4, 58]:

Այստեղ արտահայտված խնդիրները՝(պատվին, ինքնասիրությանը) վերաբերում են **հասցված** դերբային, որը զեղչված է: Այսպիսի դեպքերում ևս նախադասությունը անվանական, միակազմ է:

Անվանական նախադասության գերադաս անդամը արտահայտվում է՝

ա) **Գոյական անունով**. օրինակ՝ ***«Հոր, վերելք, ոլորք...*** **մնաց բարձունքի վերջին կատարը»** [1, 7, 7]: **«Ահա իր** ***ոտնատեղը:*** **Հողի թարմ** ***փլվածքը»*** [2, 119]: ***Մասանող լռություն:*** **Եվ հանկարծ այդ լռությունը խզեց մեծ տիկնոջ սպառնալի, խռպոտ ձայնը»** [3, 586]:

Գոյական գերադաս անդամը կարող է գործածված լինել **ահա՛, ա՛յ** բառերի հետ, որոնք մատնացույց են անում տվյալ առարկան՝ **ինչպես** և **որևէ** ձայնարկության հետ: Օրինակ՝ ***«Ահա քեզ մեղու: Մարդամեղու: Ինքնամեղու»*** [2, 440]: ***«Ա՛յ, իսկական աշխատանքի մինիստր»*** [1, 7, 580]: ***«Ահա սայլեր են դուրս հոսում շենից»*** [3, 934]:

Անվանական նախադասության գերադաս անդամը կրկնվելու դեպքում արտահայտում է խոսելու պահին առկա առարկայի նաև շատության, բազմակիության իմաստ: Օրինակ՝«***Եվ հավե՛ր, հավե՛ր, հավե՛ր... Կչկչում են, կոկռում, ծղրտում»*** [1, 7, 315]:

բ) ***Ուղղական հոլովով դրված դերանունով,*** որը կարող է գործածված լինել ***դարձյալ, միայնակ*** կամ ***ահա*** մատնացույց անող բառով: Այս դեպքերում **և**-ի

գործածությունը ինչպես դերանվան, այնպես էլ գոյականի հետ ցույց է տալիս սպասվելիք առարկայի ներկայությունը, առկայությունը: Օրինակ՝ ***«Եվ ահա նա՝ հաղթական ճարտարապետը»*** [1, 7, 234]:

գ) ***Թվականի ու գոյականի կապակցությամբ:*** Օրինակ՝***«Ահա և 1885 թվականը*** [4, 90]:

Ռուս որոշ լեզվաբաններ գտնում են, որ անվանական անդեմ նախադասությունը ոչ միայն հաստատում է առարկայի առկայությունը, այլև կարող է ժխտել որևէ բանի առկայությունը խոսելու պահին՝ դրանով հաստատելով նրա բացակայությունը: Օրինակ՝ ***«Այսպես է եղել յուրաքանչյուր լավ հայի ճակատագիրը: Ոչ գերեզման, ոչ անուն»*** [4, 90]:

Անվանական անդեմ նախադասությունները կազմությամբ լինում են **պարզ** և **բարդ:** Պարզ նախադասությունները լինում են **համառոտ** և **ընդարձակ:**

Անվանական համառոտ նախադասություններն արտահայտվում են միայն **ուղղական հոլովով** դրված **գոյականով, դերանունով** և **թվական-գոյական** կապակցությամբ: Այս նախադասություններում կարող են օգտագործված լինել նաև ձայնարկություններ: Օրինակ՝***«– Արյու՛ն, միայն արյու՛ն,–*** **բարձրաձայն շարունակեց Վասակը»** [3, 350]: ***«– Է՛, է՛, Դիշտրիա, ի՞նչ եմ ասում, որ սպանի,–*** **Խորիշան փղձկաց–** ***Վա՛յ իմ անբախտ գլխին, վա՛յ Արսենին»*** [3, 669]: ***«Ափսո՛ս Աշուշային. մենք՝ Վրաստանի հետ կորցրինք նրան... Ափսո՛ս...»*** [3, 437]: ***«Ծու՛խ, Ծու՛խ,–*** **ձայնեցին զինվորները դեպի ետ գնալով» [3, 853]:** ***«– Դադա՛ր, դադա՛ր...,–*** **գոչում էին սեպուհները՝ սրերը ճոճելով նրանց շուրջը՝ մրրկելով իրենց նժույգները:**

– Նախարարնե՛ր, նախարարնե՛ր»,– **զգուշացրին տղաները»** [3, 119]**:**

«Ողջու՛յն, ողջու՛յն»,– **ասաց Վարդանը,–** ***Սպարապե՛տ... Սպարապե՛տ... –*** **կարոտակեզ ձայներով հորձանք տվին հեծյալ մարտիկները և տարերայնորեն շրջապատեցին Վարդանին» [3, 381]:**

Կան լեզվաբաններ, որոնց կարծիքով համառոտ անվանական նախադասությունը կարող է արտահայտվել **կոչականով**, երբ այն հատուկ հնչերանգով արտահայտում է խոսողի զարմանքը, դժգոհությունը, հանդիմանանքը, հիացմունքը խոսակցի նկատմամբ: Օրինակ՝ ***«– Մա՛յր...*** **արտասանեց Սմբատը հանդիմանորեն»** [4, 27]: Այստեղ կոչականն արտահայտում է խոսողի դժգոհությունը խոսակցի, և հանդիմանանք՝ նրա նկատմամբ:

Կոչականով արտահայտված անվանական նախադասությունները միանգամայն այլ կերպ է ներկայացնում **Հ. Մխիթարյանը**: Նա նշում է.***«Մեր գրավոր խոսքի մեջ կոչական բառերով նախադասություն կազմելն արդեն սովորույթ է դարձել և քաղաքացիական իրավունք է ստացել: Այդպիսի նախադասությունները ոչ թե հրաման, կարգադրություն, կշտամբանք են արտահայտում, այլ կոչ են անում»*** [4, 159]. օրինակ՝ **Ընկեր դեպուտատնե՛ր:** Ըստ նրա՝ բոլոր կոչականները նախադասություններ են, որովհետև կոչականը հենց այն անունն է, որին դիմում են՝ մի բան ասելու, հարցնելու:

Անվանական **ընդարձակ նախադասությունների** գերադաս անդամները սո-

վորաբար ունենում են գոյականական լրացումներ՝ **որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ**, ընդ որում՝ **որոշիչ** և **հատկացուցիչ** լրացումները գերադաս անդամի նկատմամբ կարող են ունենալ և՛ նախադաս, և՛ հետադաս շարադասություն: Եթե գերադասն արտահայտված է **անձնական դերանվամբ**, ունենում է միայն բացահայտիչ լրացում, քանի որ անձնական դերանունը որոշիչ կամ հատկացուցիչ չի ունենում:

1. ***Որոշիչով ընդարձակ անվանական նախադասություններ.*** օրինակ՝ ***«Ի՜նչ կատաստրոֆիկ տեսարան»*** [1, 7, 416]: **Օ՜, ինչպիսի՜ հայացք՝** ***տխուր ու հուսահատ*** [2, 311]:
2. **Հատկացուցիչով նախադասություններ.** օրինակ՝
«Ի՜նչ բնական նայվածք՝ լեռների ու լճի» [4,10]:
3. **Բացահայտիչով նախադասություններ.** օրինակ՝ ***Արևմտահայ գրողը...՝ գաղափարի և ստեղծման ամենամեծ նահատակը*** [4, 136]:
4. ***Դերբայական դարձվածով արտահայտված լրացում***: Օրինակ՝ ***«Օ՜, Նորքում բարձրացող բարդի՝ Տերյանի նման մորմոքող»*** [4, 465]:

Ըստ երանգի, հաղորդման նպատակի՝ անվանական նախադասությունները լինում են՝ **պատմողական, բացականչական, հարցական**:

1. **Պատմողական անվանական նախադասությունների** միջոցով հեղինակները ընթերցողին են ներկայացնում գործող անձանց արտաքինը, երևույթներ, իրավիճակներ: Դրանց միջոցով տրվում են դրամատիկական երկերում գործող անձանց, շրջապատի կահավորանքի մասին ծանոթագրությունները: Օրինակ՝ ***«Դաշտերում, սև արտերի վրա բիզ-բիզ ցցված ցորենի մանր ծիլեր»*** [3, 200]: ***«Իրիկնապահ. երկարող և թանձրացող ստվերներ: Արտաշատի փողոցներում երեխաների կանչեր՝ խառնված շների հաչոցի և դարբնոցների չխկոցներին.*** **այս ամենը խաղաղ տրամադրություն էին բերում մարդուն» [3, 201]:**

Բ) **Բացականչական անվանական նախադասություններն** արտահայտում են խոսողի զգացական (հիացմունք, զարմանք, հեգնանք, բոթ) վերաբերմունքն այս կամ այն առարկայի, երևույթի նկատմամբ՝ օրինակ՝ ***Պատերազ՜մ:***

Գ) **Հարցական անվանական նախադասություններում** արտահայտվում է հարցում. օրինակ՝ ***«Ճառե՞ր, հեռագի՞ր, սու՞գ, գուցե»:***

Անվանական նախադասությունները կարող են՝

ա) հաստատել առարկայի գոյությունը խոսելու պահին. Օրինակ՝ ***«Ի՜նչ կատաստրոֆիկ տեսարան»*** [2, 416]: **«Օ՜, ինչպիսի՜ հայացք՝** ***տխուր ու հուսահատ»*** [2, 311]:

բ) մատնացույց անել առարկան, երևույթը. օրինակ՝
«Ահա և «այն բանը»... **Ծածկված բներ, տեղ-տեղ քարացած, տեղ-տեղ ցեխոտ, խոնավ խրամատներ, և ուրիշ ոչինչ»** [2, 111]:

Երբեմն ***ահա*** ցուցական վերաբերականի փոխարեն ուղղականով դրված գոյականը մատնացույց է արվում որևէ ցուցական դերանվամբ: Այս տիպի կառույցները **Ս. Գյուլբուդաղյանը** չի համարում անվանական անդեմ նախադա-

սություններ՝ նշելով, որ դրանցում առկա ***սա*** դերանունը ենթակա է [4, 145]: ***Մեր կարծիքով՝ այս կառույցները անվանական անդեմ նախադասություններ են, որոնցում սա դերանունը հանդես է գալիս ցուցական գործառույթով և իր իմաստով հավասարազոր է ահա ցուցական վերաբերականին:*** Բացի այդ՝ սրանցում քերականորեն արտահայտված ստորոգում չկա՝ մի բան, որ հաստատում է, որ սրանք անդեմ նախադասություններ են:

3) խոսողի արհամարհանքն ու հեգնանքը այն առարկայի նկատմամբ, որի մասին խոսվում է: Օրինակ՝**«Տեսա՞ք ինչեր են գուշակում դրագամիրովները:** ***Դրագամիրո՛վը, գիտնական հեղինակությունն՛ը... Ո՛չ, սիրելիս»*** [1, 7, 47],
4) արտահայտել դժգոհություն, զարմանք, վախ, երբեմն՝ զայրույթ այս կամ այն առարկայի կամ երևույթի նկատմամբ: Օրինակ՝ ***«Ա՛խ, էս մանր-մունր գործերը...»*** [2, 19]:
5) Անվանական նախադասությունը կարող է լինել նախորդ նախադասությամբ արտահայտված մտքի պարզաբանում՝ օրինակ՝ ***«Նա դեռ արյունոտ էր և լավ չէր սրբվել: Պողոսի արյունը...»*** **[1, 7, 120]:**
6) Կարող է արտահայտել խոսողի հիացմունքը, գնահատականը տվյալ առարկայի կամ երևույթի նկատմամբ. օրինակ՝ ***«Ի՜նչ մոնումենտալ,– հիացքով բացականչեց նա»*** [1, 7, 8]:

«Ա՛յ ընտիր հեծելազոր... » [3,124]:

7) Կարող է լինել նախորդ ասվածի ամփոփում, ընդհանրացում, եզրակացություն. օրինակ՝ ***«Թողեք հինը, եկեք դեպի նորը: Երկաթե ճշմարտություն»*** [1, 7, 144]:
8) Կարող են արտահայտել երևույթի պատճառ, հետևանք: Օրինակ՝ **«Ռուբենն անկյուններում պաշտպանում էր Մելիքյանին:** ***Եվ ահա պատիժը»*** [1, 7, 191]:
9) Որոշ անվանական նախադասություններ բնութագրում են հիշատակված առարկան, երևույթը, բնորոշում այն: Օրինակ՝ ***«Գնացքը տանում, աքսորում էր նրան: Կամավոր աքսոր: Ամենավատը»*** [1, 7, 166]:
10) Կան նաև ներհակական՝ մտքով իրար հակադիր, հակառակ իմաստ արտահայտող անվանական նախադասություններ: Օրինակ՝ ***«Ահագին ջանք, եռանդ, ոգևորություն, հույս և... այսպիսի անսպասելի հետևանք»*** [1, 7, 184]:

Անվանական նախադասություն չեն համարվում՝

1. Ուղիղ ձևով դրված, արտահայտված այն անունները, որոնք թվարկումներ են, ուստի չունեն հնչերանգային ավարտվածություն և ստորոգում. օրինակ՝«***Խաչը», «Պարը», «Դաշույնը»,***– **ահա բանաստեղծություններ, որոնք նման են իրար սյուժեով» [4, 143]:**

2. Երբ գոյականն անվանելով ոչ թե հաստատվում է նրա առկայությունը, այլ նշվում է, որ ինչ-որ բան է կատարվում տվյալ առարկայի հետ. օրինակ՝ ***«Կո՛ւրծքս, կո՛ւրծքս,... գլուխս, օ՜, սիրտս»*** [4, 75]:

3. Երբ խոսողը կրկնում է անունը՝ նպատակ ունենալով ընդգծել հիշատակված այս կամ այն առարկան: Օրինակ՝ «**Խորի՛ն, իսկական Հայաստան: Նրա *քաղաքներից* մինը: *Քաղաք* ՝ձեռաց շինած: Խրճիթների, մարագների ու ախոռների արանքում՝ տպարան, կոոպերատիվի էլեկտրական»** [ԵԺ, 281]:

4. Երբ ուղիղ ձևով դրված անունը նախորդ նախադասության մտքի շարունակությունն է, հեշտությամբ կարող է հանգույց ստանալ, երբեմն էլ անվանական բառակապակցությունները, լինելով նախորդում ասված մտքի շարունակությունը, որոշում են նրա որևէ անդամի ով կամ ինչ լինելը: Օրինակ՝ ***«Գյուղից շուկա մթերք բերող գյուղացին և շուկայից մթերքը տուն տանող տանտիկինը»*** [1, 7, 329]: Այստեղ ***գյուղացին, տանտիկինը*** ուղղական հոլովով դրված գոյականներ են, որոնք պարզաբանում են, թե ովքեր են նշված երկու կատեգորիայի մարդիկ: Այսպիսի կապակցություններից առաջ սովորաբար բութ է դրվում, սակայն Դեմիրճյանը վերջակետ է դրել՝ նպատակ ունենալով ընթերցողի ուշադրությունը հրավիրել այդ կապակցությանը:

5) Երբ ուղիղ ձևով արտահայտված գոյականը նախադասության որևէ նախորդ անդամի բացահայտիչ է: Օրինակ՝ **«Գասպարյանի արծվի հայացքը սլանում էր դեպի Արարատյան դաշտը: *Նոր քաղաքների ավազանը»*** [1, 258]: Այստեղ Դեմիրճյանը բացահայտիչը վերջակետով բաժանել է բացահայտյալից՝ նպատակ ունենալով ընդգծել՝ Արարատյան դաշտի նոր քաղաքների ավազան լինելու հատկանիշը:

6) Երբ այդ անունը կամ անվանական կապակցությունը տրվում է իբրև վաճառվող ապրանքի անուն. Սրանք անվանում են առարկան՝ մարդկանց ուշադրությունը հրավիրելու նպատակով: Երբ դրանց հետ պարագա է օգտագործվում, այդ դեպքում ենթադրվում է նաև ստորոգյալի զեղչում: Օրինակ՝ «***Լավ դե՛ղձն այստե՛ղ: Լավ խաղո՛ղն այստե՛ղ:*** **Խարջուն մի շահի՛, խարջու՛նմիշահի՛է»** [1, 495]:

7) Հիմնարկների ցուցակներին գրված անունները: Օրինակ՝ ***Երևանի պետական համալսարան, Միքայելյան համալսարանական հիվանդանոց, Վանաձորի բժշկական կենտրոն:***

8) Գերեզմանաքարերին գրված անունները: Օրինակ՝ **«Տապանաքարի հարավային կողմի վրա կարդացվում է. «*Աշոտ թագավոր*»** [4]: **Գերեզմանաքարին գրված է. *«Լևոն դը Լուսինյան՝ Լատինական Հայաստանի թագավոր»:***

9) Գրքերի վերնագրերը. Կարող է ստեղծագործության վերնագիրը նախադասությամբ արտահայտվել՝ ***«Ավելորդը», «Գիքորը», «Պապ թագավոր», «Մխիթար Սպարապետ», «Գևորգ Մարզպետունի»:***

10) Ուղղական հոլովով դրված անուն-ազգանունները, որոնք գործածվում են որպես կոչական: Օրինակ՝

– Կարապետյան Անի:

– Ներկա:

«Վարա՛ծ եղբայր,– **դիմեց նա ախոռապետին»** [3, 106]:

«-*Լույս,–* զայրացած դիմեց Վարաժը մյուս աղջկան...» [3,107]:

11) Ուղիղ ձևով օգտագործված բառերը, որոնք նախորդ նախադասությամբ

հիշատակված առարկայի, երևույթի մանրամասներեն՝ թվարկված իբրև ամբողջի մասեր կամ մեկնաբանում, բացատրություն. օրինակ՝ ***«Ոչ մի շարժում դեմքի, ոչ մի հայացք այսուայնկողմ՝ հրավիրելու համար մարդկանց ուշադրությունը՝ դեպի իրենց վիշտը»*** [3, 585]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլբուդաղյան Ս. Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, 213 էջ:
2. Դեմիրճյան Դ., Երկեր երկու գրքով, Երևան, 1977, 662 էջ:
3. Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1960, 432 էջ:
4. Դեմիրճյան Դ., Վարդանանք, Երևան, «Լույս» հրատ., 1987, 1002 էջ:

Безличные предложения

Айвазян Гоар

ВГУ, Армянский язык и литература, магистратура, 2-й курс

Научный руководитель:

кандидат филологических наук, доцент А. Сантоян

Резюме

Ключевые слова: *номинативные предложения, глагол-связка, психологическое подлежащее, абстрактный глагол*

Предметом исследования в данной работе являются безличные предложения, формы их (их главных членов) выражения, структурные и содержательные особенности.

Исходя из их коммуникативных целей мы выделяем повествовательные, восклицательные, вопросительные предложения, а из состава – простые и сложные.

Impersonal Sentence

Ayvazyan Gohar

VSU, Armenian language and Literature, MA, 2nd year

Academic Supervisor: A. Santoyan,

Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words. *nominative sentence, verbal connection, psychological subject, abstract verb*

The subject of this study is impersonal sentences, the forms of their (superior member) expressions, their structural and content features.

According to the purpose of communication, we distinguish several types of nominative sentences: narrative, exclamatory, and interrogative. Additionally, based on their structure, they can be classified as simple or complex.

Գոյականական բառակապակցությունները Լ. Խեչոյանի երկերում

Արփինե Ավանեսյան
Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարան,
Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Լ. Մինասյան

Հանգուցային բառեր. *Լևոն Խեչոյան, բառակապակցություն, ձևաբանական կառուցվածք, գրական լեզու, ժողովրդախոսակցական լեզու, ոճական առանձնահատկություններ, լեզվական համակարգ, արտահայտչականություն*

Ժամանակակից լեզվաբանության մեջ բառակապակցություն հասկացությունը ներկայացվում է որպես խոսքի մեջ իրարից անկախ բառերի միմյանց հետ քերականորեն կապակցվող, առարկայի և հատկանիշի միասնություն արտահայտող կապակցություն: Բառակապակցություն հասկացության սահմանումն է.

Երկու և ավելի բառերի ամեն մի կապակցություն, որի մեջ մեկ բառը գերադաս է, իսկ մյուսը կամ մյուսները ստորադասված են դրան [1]:

Բառակապկցության միավորները գտնվում են գերադասություն-ստորադասություն հարաբերության մեջ, որը արտահայտվում է նաև լրացում-լրացյալ անվանմամբ:

Բառակապակցությունները յուրահատուկ շարահյուսական կառույցներ են, որոնք նախադասության մեջ հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ, որը զուրկ է ստորոգումից:

Լեզվում բառապակցությունները լինում են **կայուն** և **ազատ**: Կայուն բառակապակցությունները մշտապես նույն կազմն ունեն, նրանց անդամները այլ բառերով փոխարինելի չեն: Կայուն բառակապակցությունները լինում են անվանողական և դարձվածային, սրանք հարաբերվում են հարադրական բարդություններին և մեր քննելիք առարկայի սահմաններից դուրս են՝ ի տարբերություն ազատ բառակապակցությունների, որի քննությանն էլ նվիրված է մեր հետազոտությունը: ***Բառակապակցություն*** տերմինը Գ. Ջահուկյանը կիրառում է խոսքիմասային մեկ արժեք ունեցող բառերի խումբ [2] իմաստով, որը, սակայն, ընդհանուր մասնագիտական գրականության մեջ բնութագրվում է կայուն որոշչով:

Մեր ուսումնասիրության նպատակն է քննել Լ. Խեչոյանի երկերի գոյականական բառակապակցությունները, որոնք իրենց արտահայտության եղանակներով և միջոցներով, լինելով ընդհանուր հայերենյան, այնուամենայնիվ ունեն ինքնատիպ առանձնահատկություններ, որոնք էլ մենք քննել ենք հընթացս՝ ներկայացնելով օրինաչափ կապակցություններին զուգահեռ հեղինակային արտահայտությունները՝ **կիրառելով համադրման և հակադրաման մեթոդաբանությունը**:

Թեմայի արդիականությունը: Լ. Խեչոյանի երկերում հանդիպող գոյականական բառակապակցությունները հանդես են գալիս նախադասությունների մեջ ինքնուրույն կերպով՝ որպես հաղորդակացական միավորներ, որոնք «երբեմն չա-

փազանց «մոդեռն» թվացող արտահայտություններ ու բառակապակցություններ, որոնք, իրականում արտացոլում են ժամանակի ճշգրիտ կերպարը» [6]: Կան ստեղծագործություններ, որոնցում նույն բառակապակցությունը մի քանի անգամ կրկնվում է որպես գեղարվեստական արտահայտչամիջոց: Այս դեպքում ազատ բառակապակցությունը հարաբերվում է կայուն բառակապակցությանը: Լինելով ազատ՝ դրանք խոսքային տվյալ միջավայրում կայուն են իրենց գործածականության մի քանի դեպքերում և ինչպես ընդհանրապես, այնպես էլ տվյալ միջավայրում դրանք անփոխարինելի են և միասին են արտահայտում այն գաղափարը, որ հեղինակը արտահայտել է կրկնության մեջ: Օրինակ «Հեծանիվ» պատմվածքում գործածված *ծաղկած ծիրանենի* արտահայտությունը գործածվել է երեք անգամ՝ որպես «ենթատեքստ ենթադրող բառակապակցություններ» [3]: Նման հեղինակային արտահայտչամիջոցների զուգորդմամբ լեզվական քննությունն էլ առնչվում է թեմայի արդիականությանը:

Ըստ կազմության բառակապակցությունները լինում են *երկանդամ* և *եռանդամ*: Բազմանդամ բառակապակցությունը արդեն ունեցած երկանդամ բառակապակցությունների ծավալումն է նորանոր լրացումներով, քանի որ քանի անդամից էլ բաղկացած լինի բառակապակցությունը, նրանց լրացյալը մեկն է: Լ. Խեչոյանի երկերին հատուկ են բազմանդամ կապակցությունները, որոնք նույնպես քննել ենք համապատասխանաբար **զուգադրության մեթոդաբանությամբ**՝ անդրադառնալով լրացումների շարադասական առանձնահատկություններին:

Ընդ որում Լ. Խեչոյանի երկերում հանդիպող բազմաբառ բառակապակցությունները մի դեպքում **բաղադրված** են, մյուս դեպքում **համակցված**: Բաղադրված կառույցներում ստորադաս անդամները լրացնում են միմյանց ենթաստորադասական հարաբերությամբ, իսկ համակցված բառակապակցություններում՝ համադաս հարաբերությամբ:

Ինչպես հայերենում, այնպես էլ Լ. Խեչոյանի երկերում անվանական բառակապակցությունները հիմնականում ձևավորում են որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ քերականական զույգերը:

1. Գոյականի լրացումը գոյականով

Ա. Ուղղական հոլովով լրացումը բառակապակցություններում մի դեպքում արտահայտում է լրացյալի հատկանիշը իր բուն նաշանակությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ փոխաբերական կիրառությամբ:

1.1. Հատուկ անունը դառնում է զբաղմունք, կոչում, պաշտոն ցույց տվող հասարակ անվան որոշիչ: Այս գործածությունը հանդիպում է բարբառային կնիք կրող ստեղծագործություններում, ինչպես՝ ***Աղաբեկ տացու, Սեթո ախպերդ, Սոնա մորս, Զեքալ ձալռ,*** որոնցում լրացյալն ազգակցական հարաբերություն արտահայտող գոյական է: Լ. Խեչոյանի երկերում հատուկ անունով են բնութագրվում նաև կենդանանիշ գոյականները, ինչպես՝ ***Կայծակ էշը***: Հասարակ և հատուկ անունների շրջունության մասին են խոսում «Խոզը» պատմվածքում գործածված

Մուկուչ հորեղբայր և ***հորեղբայր Մուկուչ*** կապակցությունները, որոնք հեղինակային խոսքում գործածվում են զուգահեռաբար: Այսպիսով հեղինակը զավեշտ է ստեղծում բառերի և բառակապակցությունների դասավորությունը ակամա, երբեմն էլ դիտավորյալ խախտելու կամ աղավաղելու միջոցով [7]:

1.2. Հասարակ անունը՝ որպես կոչում, տիտղոս, զբաղմունք և այլ կարգի առարկայացած հատկանիշ ցույց տվող բառերը ուղղական հոլովով դրվում են գոյականի վրա՝ դառնալով որոշիչ, ինչպես՝ ***արաբեկ*** արտահայտության մեջ *աղա* բառը՝ որպես կոչում արտահայտող գոյական կապակցվել է *բեկ* նույնպես կոչում արտահայտող գոյականին՝ ձևավորելով կոչական բառակապակցություն: ***Քյավթառ գոռուզին*** կապակցության մեջ բարբառային *քյավթառ* գոյականը՝ որպես հատկանիշ կապակցվել է նույնպես բարբառային *գոռուզ* անձնանիշ գոյականին: Ի տարբերություն վերջինիս՝ ***հովիվ ամուսին*** կապակցության մեջ երկու բաղադրիչներն էլ հայերեն են: Հետաքրքիր է, որ օտարաբանությամբ բնութագրվել է հայ մարդը, իսկ հայերեն բաղադրիչներով բառակապակցությամբ՝ թուրք կնոջ ամուսինը: Այսպիսով կազմվել են կապակցություններ, որոնց և՛ լրացումը, և՛ լրացյալը անձնանիշ գոյականներ են: Այսպիսի կապակցություն է նաև ***կլոր բերան Մեթոյիս*** արտահայտությունը, որտեղ անձնանիշ գոյականը բնութագրվել է իրանիշ գոյականով: Իրանիշ գոյական լրացում է նաև *մատրմ* բառը, որ ցույց է տալիս անձնանիշ գոյականի տարիքը, օրինակ՝ ***մատրմ երեխա***: Լ. Խեչոյանի երկերում հանդիպում է նաև հակառակ լրացումառություն, և անձնանիշ գոյականով բնութագրվում է իրանիշ գոյականը, ինչպես՝ ***Տեր-Հովսեփյան ազգանուն***: Այս կապակցություններում հանդիպում են նաև արտահայտություններ, որոնց մեջ իրանիշ գոյականով բնութագրվում է իրանիշ գոյականը, ինչպես՝ ***անձրև գիշերներ***: Վ. Քոսյանը նման կապակցությունների մասին նշում է. «Լրացման ու լրացյալի միջև ենթադրվում է որևէ անդամ, որը զեղչված է: Զեղչված անդամի դերն է, որ ստանձնել է ուղղականը: Այդ պատճառով էլ կարող ենք ասել, որ հիշյալ կարգի կապակցություններն ունեն եռանդամ բառակապակցության արժեք» [49]: Այս դեպքում խախտվում է ձևաբանական նորմը, որի հիմնական պատճառը լինում է զեղչումը. «Գործող այս ընդհանուր օրինաչափությանը հակասում են էական բայով կազմված բաղադրյալ անվանական ստորոգյալով բացահայտիչ, որոշիչ, երբեմն էլ ենթակա, ստորոգելի երկրորդական նախադասությունները, որոնք փոխակերպվում են առանց դերբայական դարձվածի, որպես անվանական բառակապակցություն» [8]:

Բ. Գոյականն ամենից շատ լրացումներ է ստանում սեռական հոլովով, որի քննությունն առնչվում է ընդհանրապես հոլովի իմաստի և շարահյուսական կիրառության հարաբերության հարցին: Սեռական հոլովի իմաստներն ավելի բազմազան են, քան նրա շարահյուսական կիրառությունները, ինչպես հատկացուցիչ են դառնում պատկանելության, ծագման, մասնական, հեղինակային, փոխհարաբերության, ենթակայական, խնդրային և այլ սեռականներ: Որոշիչ են դառնում

տեղի, ժամանակի, բաղկացության, նյութի, նպատակի, հատկացման, պարունակության և այլ սեռականներ. «Բայի ու իր լրացումների փոխհարաբերությունների բազմազան ու բազմաթիվ տեսակներն առկա են նաև գոյականի ու սեռական հոլովով լրացման կապակցություններում» [55]:

Սեռականով կապակցությունների բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ այն կարող է լրացնել բայական ծագում ունեցող գոյականների, ինչպես՝ ***օտարների ներկայությամբ*** կապակցության մեջ սեռականով լրացումն արտահայտում է ենթակայական իմաստ:

Լ. Խեչոյանի երկերում սեռականով լրացումը հիմնականում արտահայտում է ստացականության իմաստ՝ ցույց տալով այն առարկան, որին պատկանում է, որի ստացվածքն է լրացյալով արտահայտված առարկան, ինչպես՝ ***Միրիանի*** *հեսան*, ***Միրիանի*** *դեմքի*, *հորեղբայր* ***Դարչոյիս*** *երկու մատները, հորեղբայր* ***Մուկուչիս*** *աչքերի մեջ,* ***պապիս*** *եղբայրը:* Ստացական սեռականով կապակցությունները հեշտությամբ փոխակերպվում են անձնական դերանունների սեռական հոլովաձևերով, օրինակ՝ ***նրա*** *տուն,* ***մեկի*** *փեշից,* ***իրենց*** *բժշկին*: Նման կապակցություններում հատկուցիչը հիմնականում լինում է անձնանիշ գոյական: Անձնանիշ գոյականը կարող է նաև գործածվել համայնքի իմաստով, օրինակ՝ ***կոլտնտեսության*** *ցլիկներ*:

Ծագման սեռականով կապակցություններում հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որից ծագել, առաջացել է հատկացյալով արտահայտված առարկան, ինչպես՝ ***օձի*** *կաշի*, ***ընկնավորության*** *պատճառը* օրինակներում միմյանց են կապակցվել կենդանանիշ, իրանիշ գոյականներ:

Ենթակայական սեռականով կապակցություններ, որոնցում լրացումն արտահայտում է անձնանիշ գոյականով, ինչպես՝ ***երեխաների*** *բազմություն,* ***Մուկուչիս*** *մեղքով:*

Խնդրային սեռականով կապակցություններ, ինչպես՝ ***գյուղխորհրդի*** *նախագահ*, ***դպրոցի դեկավար***, որոնցում նույնպես առկա է երկու անձնանիշ գոյականների փոխհարաբերություն՝ չնայած առաջին բաղադրիչի իրանիշ լինելու հանգամանքին, քանի որ այն այս կապակցություններում գործածվել է անձի առումով: ***Գյուղի բարոյական նկարագրի վրա*** արտահայտության մեջ սեռի խնդրային նշանակությունը վերագրվել է իրանիշ գոյականներին: Լ. Խեչոյանի երկերում այս իմաստով է գործածվում նաև ***ցավի տեր*** կայուն կապակցությունը:

Մասնական սեռականը Լ. Խեչոյանի երկերում գործածվում է բուն, տարածական և ժամանակային իմաստներով, ինչպես՝ ***կոշիկների*** *քթեր* արտահայտության մեջ առկա է բուն մասնական հարաբերություն, իսկ ***տատիս*** *ծոց,* ***գյուղի*** *ծայրամաս,* ***գյուղխորհրդի*** *բակ,* ***հրաձգարանի*** *խաղալիքներ,* ***ջրաղացի*** *միջադեպ,* ***մեջքիդ*** *նկարը, Մուկուչս* ***ձեռքի*** *պայուսակը գցեց* կապակցություններում առկա է տեղային հարաբերություն, որը կարող է լինել նաև եռանդամ՝ արտահայտելով «մասի մասի մաս» հարաբերություն, ինչպես՝ ***Ախալքալաքի դպրոցի բակ:*** Ժամա-

նակային հարաբերությամբ է բնութագրվում ***շաբաթվա վերջ*** կապակցությունը: Տեղային հարաբերությունը կարող է երբեմն արտահայտվել նաև անձնանիշ գոյական լրացումներով, ինչպես՝ *բոլոր* ***աղջիկ ունեցողների*** *փողոցներով:*

Բաղկացության սեռականով կապակցություն են ***ցորենի*** *դաշտեր,* ***ավելուկի*** *տերևներ,* արտահայտությունները, որոնց լրացյալին բնորոշ է հոգնակի թվով արտահայտությունը:

Վերաբերության սեռական, որը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է լրացյալով արտահայտված առարկան, ինչպես՝ ***գրականության*** *դասաժամին:*

Որակի սեռականով կապակցություններ, ինչպես՝ ***տանձի*** *ծառ,* այս կապակցությունները Վ. Քոսյանն անվանում է «որակական-արդյունքային սեռական, քանի որ ցույց է տալիս այն առարկան, որի ստեղծմանը, առաջացմանն է ծառայում լրացյալով արտահայտված առարկան» [84]:

Գ. Գոյականի լրացումը մյուս թեք հոլովներով: Ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ Լ. Խեչոյանի երկերում գոյականական անդամի լրացումները հիմնականում արտահայտվում են սեռական և ուղղական հոլովներով, քանի որ դրանք ցույց են տալիս առարկայանիշ բառերին հատուկ դադարի մեջ գտնվող հարաբերություն: Մյուս թեք հոլովները՝ տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական, արտահայտում են շարժման մեջ գտնվող առարկաների հարաբերություն և հիմնականում լրացնում են բայերի: Սակայն Լ. Խեչոյանի երկերում երբեմն հանդիպում են արտահայտություններ, որոնցում գոյական գերադաս անդամին լրացնում են վերոնշյալ հոլովաձևերով արտահայտված լրացումներ, որոնց ուսումնասիրությունն ունի լրացյալի և լրացման իմաստային փոխհարաբերության բացահայտման նպատակ: Տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով արտահայտված լրացումներին բնորոշ են տվյալ լրացյալ գոյականին հարաբերակից բայի կամ ածականի և նրա լրացում կապակցություններին:

Լ. Խեչոյանի «Նամակ Երևան» հայցական հոլովով արտահայտված «որոշիչ + որշյալ» վերնագրային արժեքով[1] ստեղծագործության մեջ հանդիպում են նաև տրական և գործիական հոլովներով արտահայտված որոշիչ լրացումներ, որոնք հետադաս շարադասությամբ միաժամանակ լրացնում են *պառավ* գոյականին՝ *Իսկ ես հիշում եմ այն տունը, որտեղ վարձով էիր ապրում և պառավին՝* ***սրունքներին քարհանգուստ, վարիկոզյան կարմրակապտավուն երակներով,*** *բուխարու կրակի դեմ նստած:* Այսպես նաև տեղային հարաբերության իմաստով որոշչի օրինակ է *Մի թաղամաս այն կողմ* ***իրենց կողմերից մի պաշտոնյա*** *էր բնակվում* արտահայտությունը: Սրանցում *քարհանգուստ, պաշտոնյա* գոյականների տրա-

[1] «Սրանք ավելի շատ գործածական են վերնագրային-անվանողական նախադասություններում: Գործածության տեսակետից այս տեսակը ավելի կենսունակ է ու զարգացող» [5, 102]:

կանով և բացառականով լրացումները հետևանք են անմիջական լրացյալ բայի զեղչման, որից հետո էլ դրանք ստանձնում են դերբայների լրացյալ գոյականների լրացումների դերը: Գործիական հոլովով արտահայտված որոշիչ լրացումները Լ. Խեչոյանի երկերում հատկապես հատուկ են անձնանիշ գոյականների, ինչպես՝ «Պաղ քամի» ստեղծագործության մեջ գործիական հոլովով արտահայտված գոյականական բառակապակցությամբ են բնութագրվել *կին, մանչուկ, մուսուլման* գոյականները, օրինակ՝ *Հորեղբորս,* ***հաստ նոսր բեղերով կինը*** *գնացել էր գյուղխորհուրդ: Ուղտերի մեջքին նստած,* ***ուռած փորերով մանչուկներին*** *գրկած, անապատներում՝* ***չալմայված դեմքերով մուսուլմանների*** *հետ, սև ակնոցներն աչքերին՝ տարբեր զենքերով զինված, նեգատիվներ էր ուղարկում:* Նման կառույցներում գործիական հոլովով լրացումները հոմանիշ են լինում հարաբերական ածականներին: Սրանցում լրացումը շարահյուսական տեսակետից լիարժեք անդամ չէ, այլ իր լրացումով հանդերձ կատարում է նախադասության մեկ անդամի դեր՝ ձևավորելով անմասնատունակ կապակցություններ: Գործիական հոլովով արտահայտված որոշիչ լրացումը, սակայն, լրացնում է նաև իրանիշ գոյականների, ինչպես՝ *Միջանցքի կանաչ, մերկ պատի վրա* ***թերթի անվանումով ժամացույցն*** *էր թիթեղին ընկնող կաթիլքի նման հատու թիկթիկացնում: ....****երկլեզվով*** *լեգենդների, էպոսի* ***վերապատումներով,*** *մանուկների համար ժամանցային զվարճալի* ***պատկերներով*** *համակարգչային* ***սկավառակներ*** *թողարկել:* Այս կառույցներին բնորոշ է բազմաբաղադրիչ լինելու հատկանիշը, քանի որ գործիական հոլովով լրացումը կարիք է ունենում բնութագրվելու այլ լրացումներով՝ արտահայտված կամ ածականով, կամ գոյականի սեռական հոլովաձևով:

Լ. Խեչոյանի երկերում ներգոյական հոլովով գոյականական անդամի լրացումների չենք հանդիպել:

Գոյական անդամի այս լրացումների քննության ժամանակ ծագում է կապակցության բաղադրիչների իմաստային կապի արժեքավորման հարցը, որոնց արդյունքում պարզ է դառնում հեղինակային խոսքում գործածվող եզակի շարահյուսական արտահայտչամիջոցների միջև եղած փոխհարաբերությունները:

2. Գոյականի լրացումը ածականով: Վ. Քոսյանը ածականի՝ գոյականի լրացում դառնալը պայմանավորում է առարկաների ընդգրկվածությամբ՝ տարբերակելով ածականները՝ ըստ կապակցելիական հնարավորությունների: Լ. Խեչոյանի երկերում գործածված ածական որոշիչները ավանդական դասակարգմամբ բաժանել ենք որակական և հարաբերական խմբերի՝ հընթացս անդրադառնալով դրանց իմաստային այն կիրառություններին, որոնք հատուկ են հեղինակային խոսքին:

Առանձնացնելով ածականներով արտահայտված բառակապակցությունները՝ հանգեցինք այն եզրակացության, որ Լ. Խեչոյանի երկերում ածականներով բնութագրվում են.

1. բնության երևույթներ, ինչպես՝ ***խոշոր*** *կաթիլներ,* ***մանր*** *անձրև* և այլն,

2. վերացարկված հասկացություններ, ինչպես՝ ***արագընթաց*** *զարկ,* ***ծանր*** *աշխատանք,* ***ինքնամոռաց*** *ուշագնացություն,* ***ըղձալի*** *դատողություններ,* ***ասիական*** *ծագում,* ***մշտական*** *անփոդություն,* ***վիրաբուժական*** *միջամտություն,* ***անբնական*** *գոռոց* և այլն:
3. նյութական առարկաներ, ինչպես՝ ***թիթեղյա*** *տանիք,* ***թղթե*** *ափսե,* ***այլումինե*** *թիթեղ,* ***փայտե*** *կոճղեր* և այլն:
4. իրանիշ հասկացություններ, օրինակ՝ ***գոլազդային*** *վահանակ,* ***կեղծ*** *կնիք,* ***փակ*** *«Ուազ»,* ***անօրինական*** *զենք,* ***էլեկտրական*** *ջեռուցիչ,* ***բարակ*** *շերտեր,* ***հերմետիկ*** *թափք,* ***նուրբ*** *դիմագծեր* և այլն:
5. տեղանիշ հասկացություններ, ինչպես՝ ***գիշերային*** *սրճարան,* ***մութ*** *անկյուններ* և այլն:
6. անձնանիշ հասկացություններ, օրինակ՝ ***կիսաջարդ*** *կին,* ***գործատեր*** *հայ* և այլն:
7. կենդանանիշ հասկացություններ, ինչպես՝ ***սև*** *շուն,* ***նստակյաց*** *թռչուն* և այլն:

Լ. Խեչոյանի երկերում ածականով արտահայտված հատկանիշները երբեմն զուգորդվում են դերանուն որոշիչներին: Այստեղ հեղինակային շարադասության արտահայտություն է դառնում նման բազմաբառ որոշիչների հետադաս կիրառությունները, ինչպես՝ *Աղմուկի մեջ եմ, վնգում է ներսս* ***գվվոցն այդ դեղին***: Գունանուններով արտահայտված որոշիչները գործածվում են նաև նախադաս կիրառությամբ, դրանք երբեմն մենաբառ են լինում, երբեմն բազմաբառ, և հեղինակը իմաստի շփոթը կանխելու համար դրանք տրոհում է ստորակետով, ինչպես՝ ***նարնջագույն*** *ժիլետներով պեծկլտում էին* ***սեւ, նոր փռված նավթահոտ*** *ասֆալտի վրա:* Դերանուն + գունանուն կապակցությունները, սակայն, երբեմն հանդիպում են նաև նախադաս կիրառություններով, ինչպես՝ *....սեռը չնկատվող այս մարմնի, այս դեղինի,* ***այս դեղին*** *համի մաշկի մեջ, գվվոցն* ***այդ դեղին***: Ներկայացված օրինակում հեղինակային է ***դեղին համ*** կապակցությունը, քանի որ գունանուններով վերացական հասկացություններ չեն արտահայտվում: Բազմաբառ որոշիչներում երբեմն իրար են հաջորդում հարաբերական և որակական ածականներ, ինչպես՝ ***պատանեկան կլոր*** *հետույք, զենիթից* ***տոթազարկ դեղին*** *լույս* և այլն:

Լ. Խեչոյանը բազմակի որոշիչներ հազվադեպ է կիրառում. Դրանք ունենում են տվյալ երևույթը ինչպես բազմակողմանիորեն, այնպես էլ միաժամանակ բնութագրելու հատկանիշ, օրինակ՝ ***անալի, գունդգունդ, սառը*** *մակարոն* կամ ***կասկածելի, չհավատալու*** *բաներ,* ***փոքրիկ, պինդ*** *ստինք*

Լ. Խեչոյանի երկերում ածականները, բացի համապատասխան իմաստ ունեցող գոյականներից, կարող են կապակցվել նաև այլ գոյականների՝ փոխաբերական գործածությամբ: Դրանք ոճագիտության մեջ կոչվում են մակդիրներ: Լ. Խեչոյանի երկերին մակդիրները հատուկ չեն. պատմվածքներում բառերը հիմնականում գործածվում են ուղիղ նշանակությամբ:

Հազվադեպ հանդիպում են նաև ածականների գերադրական աստիճանով արտահայտություններ, ինչպես՝ *թաղի թափառական* ***ամենախոշոր*** *Ստեփան անունով կատուն*, որտեղ գերադրական աստիճան ածականը զուգահեռվել է սեռական, գործիական հոլովներով և հարաբերական ածական որոշիչների: Երբեմն գերադարական աստիճանով արտահայտված որոշիչ լրացումը կազմում է կայուն կապակցություն, ինչպես՝ *չնայած* ***բարձրագույն կրթություն*** *չունեմ*:

3. Գոյականի լրացումը թվականով:

Թվական անունը, իբրև առարկայի թվական հատկանիշ արտահայտող խոսքի մաս, դառնում է գոյականի լրացում: Լ. Խեչոյանի երկերում թվական լրացումով կազմված բառակապակցությունները հիմնականում հանդես են գալիս որպես շարայուսական բազմաբաղադրիչ միավորներ, որոնցում թվականը, լրացնելով առարկայանիշ բառին, նրա հետ սերտ ամբողջություն է կազմում և միասին լրացնում է երրորդ անդամին:

Լ. Խեչոյանի երկերում գործածվող թվական լրացումները կապակցվում են.

1. Ժամանակ արտահայտող գոյականների՝ կազմելով անմասնատունակ որոշիչ տարածություն արտահայտող գոյականի համար, օրինակ՝ ***երեսունվեց ժամ ճամփա*** *գնացի:* Այս իմաստով հանդիպում են կապակցություններ, որոնք կազմում են բացահայտիչ-բացահայտյալ զույգեր, օրինակ՝ *Իմ հեռանալու* ***վեցերորդ ամսին՝ գիշերվա ժամը չորսին****, վեր թռա քնից: Մի* ***վեց ժամ*** *կնստեք բաժնի խցում:* ....***վեց ամիս*** *ես աշխատել, թե* ***մեկ***: Նման կառույցներում նախադասության երկրորդ բաղադրիչում գերադաս անդամը գեղչվում է: Ժամանականիշ գոյականների հետ գործածվող թվականները հիմնականում արտահայտում են ժամերի քանակը, օրինակ՝ ***Երեք-չորս ժամից*** *միանգամից ընդհատում է աշխատանքը:* ***Երեք ժամ*** *արդեն աշխատել ենք և այլն:*

Ժամանակի իմաստով գործածված թվականներով հեղինակը զուգադրության և աստիճանավորման միջոցով հետաքրքրիր պատկեր է ստեղծել՝ ցույց տալով հերոսների հոգեկան վիճակները, ինչպես՝ առաջին աստիճանում հերոսը ներկայացնում է փոքր չափ խորհրդանշող իրողություն, օրինակ՝ *հազար ինը հարյուր յոթանասունինը թվականին, Նենեն երբ մի տարեկան էր, մսաղացի պտուտակը կուլ տվեց*: Երկրորդ աստիճանում թվականին զուգահեռ աճում է առարկայի չափը, օրինակ՝ *Գիտե՞ս, արմյան, հազար ինը հարյուր ութսունմեկ թվականին, երբ Նենեն երեք տարեկան էր, խաղալիք մեքենայի ղեկը կուլ տվեց*: Երրորդ աստիճանում արդեն հասնում է բարձրակետին, օրինակ՝ *Գիտե՞ս, արմյան, հազար ինը հարյուր իննսունմեկ թվականին, երբ Նենեն տասներեք տարեկան էր, մեր աղախնու հետ, իմ նկուղից դուրս գալը տեսավ, դռան բանալին կուլ տվեց*:

2. Դրամ նշանակող գոյականների հետ, օրինակ՝ ***քսան ռուբլով*** *գնայի նրա մոտ*:

3. Չափ ցույց տվող գոյականների, ինչպես՝ *Մարդաբոյ,* ***յոթանասուն-ութսուն կիլոգրամանոց*** *ձուկը բերում*: Այս դեպքում իրար են զուգահեռվել ածականով և

թվական բառակապակցությամբ որոշիչները, որոնցից երկրորդն ունի մեկնաբանական նշանակություն: Չափ ցույց տվող թվականներից է կոտորակային ***կես*** բառը, որով Լ. Խեչոյանի երկերում բնութագրվել է **տապոր** գոյականը, օրինակ՝ ....***կես մետրանոց տապորն*** *է շպրտում ինձ վրա:*

3. Անձնանիշ գոյականների, ինչպես՝ *Հացը հենց փողոցում են տալիս,* ***քսան հոգով:*** ***Չորս հոգով՝*** *երկուսս մի կողմում կանգնած, երկուսը՝ մյուս* և այլն:

4. Իրանիշ գոյականների, օրինակ՝ ***Երկու կանգառ*** *ենք անցնում:* ***Երկու գարեջուր*** *է վերցնում: Նինա Սերգեևնան* ***երկու ափերով երկու ստինքներին*** *է ձեռք տալիս* և այլն:

Առաջին բառը Լ. Խեչոյանի երկերում գործածվում է և՛ որպես թվական, և՛ որպես ածական: Առաջին դեպքում դրա լրացում են դառնում եզակի թվով արտահայտված գոյականներ, օրինակ՝ *Լիալուսնի ամբողջ* ***առաջին քառորդը*** *անձրևելու է: Լուսնի* ***առաջին քառորդից*** *սկսած անձրևում է քաղաքի վրա: Լիալուսնի* ***երրորդ քառորդն*** *էլ այսպես անձրևելով կանցնի:* Երկրորդ դեպքում՝ հոգնակի թվով արտահայտված, ինչպես՝ ***առաջին*** *օրերին:*

Լ. Խեչոյանի երկերում հանդիպում ենք նաև դասական այլ թվականներ, օրինակ՝ *Նենեի պառկած* ***հինգերորդ սենյակն*** *էլ կա: Արդեն կոնյակի* ***երրորդ,*** թե ***չորրորդ բաժակն*** *է խմել:* Նման կառույցներում դասական թվականները արտահայտում են ոչ միայն առարկայի հերթական համարը, այլ նաև չափը՝ նույնպես կազմելով իմաստային ամբողջություն:

Թվական լրացումով բառակապակցությունները Լ. Խեչոյանի ստեղծագործություններում բնութագրվում են շարահյուսական անխզելի դերով: Համեմատաբար սակավ գործածություն ունեն չափ միավոր գոյականների և բաշխական թվականների կապակցությունները: Թվականի և չափի միավոր գոյականի բառակապակցությունները լինում են ոչ միայն երկանդամանի այլ նաև եռանդամանի, երբ չափի միավորն ունենում է նաև այլ բնույթի լրացում: Այս դեպքում քանակական թվականը լրացական հարաբերության մեջ է գտնվում ոչ միայն չափի միավոր գոյականի, այլև այդ գոյականի լրացման ու գոյականի նկատմամբ՝ միասին վերցված:

4. Գոյականի լրացումը դերբայով:

Լ. Խեչոյանի երկերում անորոշ դերբայի լրացում են դառնում անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները, որոնց շարահյուսական-լրացական գործածության բացահայտումն ունի հեղինակի խոսքի ինչպես ընդհանուր գործածական, այնպես էլ ինքատիպ արտահայտությունները:

Գոյականի լրացումը անորոշ դերբայով: Անորոշ դերբայը Լ. Խեչոյանի երկերում լրացման դերում հանդես է գալիս ինչպես առանձին, այնպես էլ լրացումներով, ինչպես՝ ***Իմ գիրք կարդալու*** *պահին՝ Օվանեսը նույն դիրքով անշարժ էր* արտահայտության մեջ անորոշ դերբայով ձևավորված բառակապակցությամբ է բնութագրվել **պահ** գոյականը, և անորոշ դերբային են կապակցվել իմ սեռական հոլո-

վով արտահայտված ենթական, որ քերականագիտության մեջ կոչվում է կողմնակի [2] և ուղիղ խնդիրը, որը նույնպես կոչվում է կողմնակի՝ լինելով դերբայի լրացում: «***Անհանգստանալու*** *բան չկա*», ***նստելու*** *հարմարանք* արտահայտությունների մեջ էլ գոյականներին լրացրել են մենաբառ անորոշ դերբայ լրացումներ: Երկու դեպքում էլ բառակապակցություններին բնորոշ է անմասնատունակ լինելու հատկանիշը, քանի որ առանց որոշիչ լրացման որոշյալները բովանդակազուրկ կլինեն: Գոյականին լրացնող անորոշ դերբայը արտահայտվում է սեռական հոլովով: Անորոշ դերբայի սեռական հոլովով լրացման մասին հայ լեզվաբանության մեջ անդրադարձել են Վ. Քոսյանը [5, 133], Գ. Ջահուկյանը [2, 206-208]: Վերջինս դրանք դասակարգել է երկու խմբով՝ հատկացուցչային և որոշչային՝ գալով այն եզրակացության, որ վերացական գոյականներին լրացնող անորոշ դերբային հատուկ է հատկացուցչային նշանակությունը, իսկ նյութական գոյականներին լրացնող անորոշ դերբային՝ որոշչային նշանակությունը: Մեր բերած օրինակներում անորոշ դերբայներով կապակցություններին բնորոշ է որոշչային նշանակությունը, քանի որ պատասխանում է **ո՞ր** հարցին:

Խոսելու *ցանկություն չունեի: Մեջս* ***նրա հետույքին հասցնելու*** *ցանկություն էր առաջացել* արտահայտությունների մեջ, սակայն, անորոշ դերբայները պատասխանում են *ինչի՞* հարցին և կատարում հատկացուցչի գործառույթ:

Լ. Խեչոյանի պատմվածքներում հանդիպում ենք նաև *Ցանկություն չուներ հեռանալ* արտահայտությանը, որտեղ անորոշ դերբայը ուղիղ ձևով է լրացրել գոյականական անդամին՝ նրանից տրոհվելով ստորոգյալով:

Գոյականի լրացումը հարակատար դերբայով: Հարակատար դերբայը՝ որպես հետևանք դարձած գործողության գաղափար ցույց տվող բառ ունի շարահյուսական բազմազան կիրառություն, քանի որ գործողի ձևական կամ ժամանակավոր հատկանիշ ցույց տվող բառը մոտենում է հատկանիշ ցույց տվող խոսքի մասերին, մասնավորապես ածականին: Ինչպես ածականը, այնպես էլ հարակատար դերբայը կարող է հոլովվել և նաև այդպես լրացնել գոյական անդամի: Գոյականի լրացման դերում հանդես եկող հարակատար դերբայը արտահայտում է որոշչի հարաբերություն: Հարակատար դերբայով արտահատված որոշչի կիրառության ժամանակ ինքնատիպն այն է, որ այն որոշիչ է դառնում կրավորական ձևով, ներգործական սեռի բայերը որոշչի պաշտոնում հազվադեպ են գործածվում. այս դեպքում հարակատար դերբայը կորցնում է խնդրառության հատկանիշը: Վ. Քոսյանը նման կառույցներին վերագրում է կրավորականության և ներգործականության միաժամանակյա արտահայտություն, ինչպես՝ ***Գիշերվա կեսին հրավիրված պաթոլոգոանատոմը*** *գունավոր փոշիներով, օխրայով ու կապույտ մածուկներով սարքեց դատավորի դեմքը* արտահայտության մեջ կրավորական սեռի հարակատար դերբայը լրացնում է անձնանիշ *պաթոլոգոանատոմ* գոյականին՝ միաժամանակ արտահայտելով նախադասության գործողության կատարման ժամանակը:

Հարակատար դերբայով ձևավորված կրավորական սեռի բառակապակցությունը կարող է լրացնել նաև իրանիշ գոյականների, ինչպես՝ *այդ թեմայով արդեն հայտնի,* ***ձևակերպված*** *օրենքներն ու հասկացությունները նույնպես մերժում է:* ***Գշեռքի վրա դիզված*** *դատարկ պարկեր....* ***մաքուր կաշվից կարված*** *պայուսակ,* ***կրով սպիտակեցված*** *նկուղ: Շուկայում* ***շեղջերով դիզված*** *կարտոֆիլ կար:* Վերջին օրինակը հետաքրքիր է նրանով, որ դերբայն ու ստորոգյալն ունեն ընդհանուր տեղի պարագա լրացում՝ *շուկայում դիզված* և *շուկայում կար*:

Լ. Խեչոյանի երկերում հանդիպում են նաև չեզոք սեռի բայերով արտահայտված հարակատար դերբայ-որոշիչներ, օրինակ՝ ***ձյունից ցեխ դարձած*** *կավահողը....* ***Աթոռին քնած*** *Հովանը զարթնում է քնից,* ***մայրաքաղաքից Ախալքալաք եկած*** *ուսանողներս տրակտորով հասանք գյուղ,* ***մի քանի հատ մնացած*** *ծխախոտները, մեկիկ-մեկիկ հավաքում էր տուփի մեջ, մեր երկրագունդը* ***օվկիանոսում կորած*** *նավ,* ***մթան մեջ մնացած****, ծխախոտի կարմիր կրակ* և այլն: Վերջին օրինակում հարակատար դերբայով բառակապակցությունը լրացնում է **կրակ** գոյականին, որ ընդմիջարկվել է հատկացուցիչ և որոշիչ լրացումներով: Հեղինակի համար կարևոր է եղել դերբայական դարձվածով կապակցության նախադաս կիրառությունը, որի իմաստի շփոթը կանխելու համար էլ նա, կարծում ենք, կիրառել է բազմակի որոշչի շարադասության կետադրությունը և տարբեր խոսքիմասային արժեքով կապակցություն որոշիչները իրարից անջատել է ստորակետով: Ի տարբերություն այս օրինակ՝ ***վագոնների բացվող դռներից երևացող*** *մութ* արտահայտության մեջ էլ ենթակայական դերբայով ձևավորված կապակցությունները միմյանց լրացրել են ենթաստորադասական հարաբերությամբ: Չեզոք սեռի հարակատար դերբայները երբեմն լինում են նաև կրավորաձև, ինչպես՝ *այդ պահից մտանք* ***աջ կողմի լեռներում թաքնված*** *նրանց նշանառուների նշանակետերի օղակների մեջ:* Այս դեպքում դրանք հիմնականում լրացնում են անձնանիշ բայերի:

Հարակատար դերբայով ձևավորված բառակապացությունները Լ. Խեչոյանի երկերում հանդիպում են նաև հոլովված՝ կատարելով հատկացուցչի շարահյուսական պաշտոն, ինչպես՝ ***Ռադիոընդունիչի մեղեդին խառնվում էր սեղանի շուրջը թղթախաղով զբաղվածների*** *աղմուկ-աղաղակին:*

Լ. Խեչոյանի երկերում հանդիպում են նաև մենաբառ հարակատար դերբայով բառակապակցություններ, ինչպես՝ *Առաջին անգամ էինք* ***ծաղկած*** *ծիրանենի տեսնում: Էստեղ* ***ծաղկած*** *ծառերը գառների նման են:* ***Սառցակալած*** *գետինը թխկթխկացնելով.... Թաքուն նայելով* ***թաքցրած*** *բազմապատկման աղյուսակին: Շմտնի Օվանեսիս* ***կարկատած*** *շալվարի հետևը:* Վերջին օրինակներում որոշչի շարահյուսական պաշտոնով գործածվել են *թաքցրած* և *կարկատած* հարակատար դերբայները, որոնք, սակայն, զրկվել են խնդրառությունից, քանի որ խնդրի շարահյուսական պաշտոն կատարող անդամը դարձել է գերադաս: Խնդրառությունից կարող է զրկվել նաև դերբայական դարձվածով արտահայտված որոշիչ

բառակապակցությունը, ինչպես՝ ***Օվանեսի՝ կարտոֆիլի վաճառքից ուղարկած*** *փողերը տարա նրանց տուն: Երբ* ***գերի վերցրած*** *նրանց աղջկան անտառ տարանք*:

Լ. Խեչոյանի երկերում հանդիպում են նաև օրինակներ, որոնցում, սակայն, ներգործական սեռի հարակատար դերբայը չի կորցնում խնդրառությունը, ինչպես՝ ***Թաշկինակն աչքերին սեղմած*** *կանանց ու սսկված տղեկների մոտով ու խնձորի այգով անցանք:*

Լ. Խեչոյանի ոճին հատուկ է դերբայ լրացման նախադաս կիրառությունը, ինչպես՝ ***Ուշացած*** *փողկապավոր տղամարդիկ, ծաղկեփնջերով կանայք են գալիս* օրինակում նույնպես հարակատար դերբայ որոշիչը նախորդել է հարաբերական ածական որոշչին:

Գոյականի լրացումը ենթակայական դերբայով: Ենթակայական դերբայը ցույց է տալիս գործողություն կատարողի բայական հատկանիշ: Այն հարակատար դերբայի նման լրացնում է գոյականին ինչպես առանց հոլովվելու, այնպես էլ հոլովված: Գոյական լրացման դերում հանդես եկող ենթակայական դերբայը չի կորցնում խնդրառական հատկանիշը:

Լ. Խեչոյանի երկերում գործածված ենթակայական դերբայ որոշիչները, ըստ սեռային արտահայտության, լինում են.

▪ ներգործական, ինչպես՝ *չկա* ***բնությունը հավասարակշռող*** *այդպիսի ուժ,* ***այնտեղից մեզ տեսնող*** *սուր աչք,* ***հարյուր տարվա հնություն ունեցող*** *պասմություն*: Ներգործական սեռի բայերը զրկվում են ուղիղ խնդիր ստանալու հատկանիշից, եթե այն վերածվում է վերաբերության խնդրի, ինչպես՝ ***փեսացու խոյի մասին պատմող*** *այն մարդը գիտե՞ս ով էր*: Երբեմն հեղինակը չեզոք սեռի բայերը կիրառել է ներգործականության իմաստով, ինչպես՝ ***խոշոր արցունք-արցունք լացող*** *աղջկա:*

▪ չեզոք, ինչպես՝ *խոնավ* ***պեծկլտացող*** *աչքեր,* ***ուղիղ ինձ վերաբերվող*** *խոսք,* ***փողոցին զուգահեռ անցնող*** *պատ,* ***շաբաթներով չդադարող*** *բուք,* ***հեռուներից եկող*** *մի մեղեդի,* ***վերին գյուղերը գնացող*** *ավտոբուս,* ***Ախալքալաքից ժամանող*** *ավտոբուս,* ***նրանց մոտ գերի գտնվող*** *երկու տղաներից մեկը,* ***մեր ջոկատի կողքիդ կռվող*** *Մոսո*: Երբեմն դերբայը մենաբառ է լրացնում գոյական վերադիրին, ինչպես՝ ***քստքստացող*** *սապոգներ:* ***Իմ առջևից քայլող՝ մեր ջոկատի արձակագիր, իրենց մոտ գտնվող*** *մեր երկու գերիներին, նրանց հրամանատարների կրծքներից* ***աջ ու ձախկողմյա լեռների հետ գործող*** *ռադիոկապի հաղորդիչներն էին կախված* արտահայտություններում հեղինակը կիրառել է շարադասական անկանոնություններ՝ ենթակայական դերբայով լրացումը մեկ նախադաս, մեկ հետադաս կիրառելով: ***Մեզ հետ եկող՝ դիակները գննող*** *գյուղացի բժիշկ* արտահայտության մեջ հեղինակը ենթակայական դերբայով նախադաս որոշիչները ներկայացրել է որպես բացահայտիչներ՝ դրանք տրոհելով բութով:

Արտահայտության տեսակետից հետաքրքիր է *Նրա անշարժ, մոռացկոտ*

դիրքը, թափառաշրջիկ հայացքը, ***արդեն յոթերորդ օրը չդադարող գիշերվա մեջ անընդհատ ոռնացող*** *փոթորիկն ինձ համբերությունից հանում էին* նախադասությունը, որտեղ ենթակայական դերբայով արտահայտված որոշիչ դեբբայական դարձվածները հաջորդել են իրար՝ լրացնելով **փոթորիկ** գոյականին:

Լ. Խեչոյանի երկերում նույնպես ենթակայական դերբայով կազմված մի շարք որոշիչ դերբայական դարձվածներ ունեն հետադաս կիրառություն, ինչպես՝ *ոտքներիս տակ տեսնում էինք սև բզեզին՝* ***փայլող ինչպես բիբը***:

Լ. Խեչոյանի երկերում հանդիպում են նաև ենթակայական դերբայի փոխանվանական կիրառություններ, ինչպես՝ *կավահողը կպչում է* ***ճանապարհ գնացողի*** *սապոգներին ու շուտ հոգնեցնում* արտահայտության մեջ ենթակայական դերբայը հոլովվել է՝ կատարելով հատկացուցչի գործառույթ:

Գոյականի բառակապակցությունների բարդ ու բազմազան համակարգի մեջ յուրահատուկ տեղ ունեն *կապային լրացումներով կառուցվածքները*:

Լ. Խեչոյանի երկերում կենսունակ են այն կապակցությունները, որոնք կազմվում են բայական ծագում ունեցող գոյականներով և կապով: Այս դեպքում կապային լրացումը բխում է ոչ թե լրացյալի գոյականական, այլ բայական իմաստից: Իմաստային տեսակետից էլ լրացյալի և լրացման հարաբերությունները նույնն են, ինչ որ համապատասխան բայի ու իր լրացման հարաբերությունն է լինում: Բայական ծագմամբ գոյականների կապային լրացումները երկու տեսակ են լինում: Մի դեպքում լրացյալի գոյականը գործածվում է ոչ ստորոգելիական վերադիրի պաշտոնով, իսկ մյուս դեպքում այն սոտորոգելիական վերադիր է, որի մոտ կապային լրացումը կարող է մեկնաբանվել երկու կերպ՝ կամ իբրև տվյալ լրացյալ բառի գոյականական լրացում, կամ նրա մոտ հենց լրացյալի բայական իմաստի պահանջով կամ լրացյալ բառի ստորոգելիական վերադիրի պահանջով: Լ. Խեչոյանի երկերում կապային կապակցությամբ որոշիչ լրացումների օրինակները հաճախադեպ չեն: Մենք դրանցից առանձնացրել ենք ***Նրա մասնագիտության վերաբերյալ*** *շատ վատ բան է ասում* արտահայտությունը, որտեղ, կարծում ենք, մասնագիտության վերաբերյալ կապային կառույցը լրացնում է շատ վատ բան գոյական բառակապակցությանը, չնայած այն կարող է գիտակցվել նաև որպես վերաբերության խնդիր՝ այս անգամ կապակցելով ասել բային:

Լ. Խեչոյանի ստեղծագործություններում հետաքրքիր են բազմաբառ որոշիչ կապակցությունները, այսպիսի օրինակներից էլ առանձնացրել ենք *Դատավորի մեռնելու երրորդ օրվա լիալուսին գիշերը* արտահայտությունը, որտեղ գիշեր գոյականին միաժամանակ լրացրել են անորոշ դերբայի և գոյականի սեռական հոլովով արտահայտված որոշիչ լրացումներ (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1

Դերբայների շարահյուսական, մասնավորապես լրացական կիրառությունների ուսումնասիրությունը երևան է հանում բավականին բարդ պատկեր, քանի որ ժամանակակից հայերենում դերբայները գործառութային և իմաստային առանձնահատկություններով հարաբերակից են ածականներին, մակբայներին, ինչպես նաև գոյականներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, 541 էջ:
2. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, 291 էջ:
3. Գրիգորյան Ս., Հոմանիշների ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» ձմեռան հատորում, http://language.sci.am/sites/default/files/book/jahowkyanakan_entertsowmner.pdf (Հասանելի է 13. 03. 2023):
4. Խեչոյան Լ., Պատմվածքներ: https://grapaharan.org/ (Հասանելի է 08 .03. 2023):
5. Քոսյան Վ., ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 133:
6. Մուսայելյան Հ., Անկախության շրջանի հայ բանաստեղծության տիպաբանության խնդիրներ: http://www.asu.am/images/stories2/2022pdf (Հասանելի է 13.03.2023):
7. Սարգսյան Ա., Լեզվական իրողություններն իբրև զավեշտի հենք հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում http://language.sci.am/sites/default/files/book/jahukyanakan_2015.pdf (Հասանելի է 10. 03. 2023):
8. Մինասյան Շ., Ղազարյան Հ., Շարահյուսական անկանոնությունները ժամանակակից հայերենում (բարդ ստորադասական նախադասություն): http://www.asu.am/images/stories2/2022pdf (Հասանելի է 13. 03. 2023):

Именные словосочетания в произведениях Л. Хечояна

Аванесян Арпине
Университет имени Месропа Маштоца, Арцах
Армянский язык и литература, 4-й курс
Научный руководитель: Л. Минасян

Резюме

Ключевые слова: *Левон Хечоян, словосочетание, морфологическая структура, литературный язык, разговорная речь, стилистические особенности, языковая система, выразительность*

Творческий язык Левона Хечояна отличается разнообразием словосочетательных структур и морфологическим богатством, которые служат не только выразительности, но и психологической характеристике персонажей. В его произведениях широко используются именные словосочетания, состоящие из существительного и его определений (особенно прилагательных, местоименных и субстантивных), формируя своеобразный стилистический оттенок и естественное течение речи.

В литературном языке Хечояна словосочетания проявляются через сочетание разговорных и книжных пластов, отражая психологические и социальные реалии времени. Они показывают стремление автора сохранить живое звучание речи и особенности национального мышления, одновременно создавая оригинальный пример развития современного литературного языка.

Noun Phrases in the Works of L. Khechoyan

Avanesyan Arpine
Mesrop Mashtots University of Artsakh
Armenian Language and Literature, 4th year
Academic Supervisor: L. Minasyan

Summary

Key words: *Levon Khechoyan, phrase, morphological structure, literary language, colloquial language, stylistic features, linguistic system, expressiveness*

Levon Khechoyan's creative language is distinguished by the diversity of his phrasal structures and morphological richness, which serve not only expressiveness but also the psychological characterization of his characters. His works widely employ nominal phrases composed of a noun and its modifiers (especially adjectival, pronominal, and nominal ones), forming a distinctive stylistic tone and a natural flow of speech. In Khechoyan's literary language, word combinations appear through the interplay of both colloquial and literary layers, reflecting the psychological and social realities of the time. They reveal the author's aspiration to preserve the living intonation of speech and the peculiarities of national thinking, while simultaneously creating a unique model for the development of the contemporary literary language.

Նորաբանությունները Արթյուր Ռեմբոյի «Բանաստեղծություններ» ժողովածուի հայերեն թարգմանական երկում

Թադևոսյան Անժելա
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *գոյական, ածական, բայ, արմատ, ածանց, բառակազմական կաղապար*

Նորաբանությունները բառապաշարի հարստացման կարևոր միջոցներից են, որոնք անվանում են նախկինում գոյություն չունեցող առարկաներ ու հասկացություններ կամ հին բառերին նոր որակ են հաղորդում: Դրանք կազմվում են բառակազմական առկա կաղապարներով, փոխառությունների և պատճենումների միջոցով և ունեն լեզվական միավորների տնտեսման (որը կատարվում է հատկապես փոխառությունների թարգմանության ժամանակ), խոսքը հուզական ու արտահայտիչ դարձնելու միտում:

Հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ նորաբանությունը՝ որպես լեզվական միավոր, հանդիպում ենք 8-րդ դարի հեղինակ Հովհաննես Իմաստասեր Օձնեցու «Ատենաբանութիւն ժողովական» [1, 16] աշխատության մեջ՝ «նորագիւտ բան» արտահայտությամբ, իսկ «նորաբանություն» (նեոլոգիզմ) տերմինը առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց 1755 թվականին ֆրանսերենում, որտեղից էլ 1800 թվականից հետո այն փոխառվել է անգլերեն՝ «նոր բառերի օգտագործման» իմաստով [3]:

Վ. Գակը, անդրադառնալով ֆրանսիական նորաբանագիտությանը, նշում է, որ ինչպես ֆրանսերենը, այնպես էլ եվրոպական մյուս լեզուները մեծապես օգտվել են նոր բառեր ստեղծելու հնարավորությունից [4, 37-52]:

Գեղարվեստական թարգմանության տեսաբան Ա. Ֆեդորովը տալիս է թարգմանության հետևյալ սահմանումը. «Թարգմանությունը խոսքային աշխատանք է բնագրի հետ, որը կապված է երկու լեզուների առանձնահատկությունների հետ: Թարգմանել նշանակում է կարողանալ ճիշտ և ամբողջական արտահայտել այն, ինչ նախկինում արդեն արտահայտվել է մեկ այլ լեզվով» [5, 15]: Ելնելով այս սահմանումից՝ կարելի է ասել, որ թարգմանության նպատակն է փոխանցել բնագրի իմաստը և պահպանել նրա ոճական առանձնահատկությունները:

Նորաբանությունների թարգմանության հիմնական դժվարությունները կապված են նոր բառերի բառարանային գրանցում չունենալու հետ, և թարգմանիչը պետք է ինքը որոշի նոր միավորի իմաստը: Դրա համար թարգմանիչը պետք է վերլուծի նորաբանության կառուցվածքը, ուշադիր ուսումնասիրի այն համատեքստը, որում հանդիպում է բառը:

Սույն հոդվածում կուսումնասիրենք նորաբանությունները ֆրանսիացի

սիմվոլիստ գրող Արթյուր Ռեմբոյի «Բանաստեղծություններ» թարգմանական երկում: Ժողովածուի բանաստեղծությունները թարգմանվել են Ա. Հակոբյանի, Գ. Գասպարյանի, Հ. Բախչինյանի, Ա. Ալեքսանյանի կողմից[2]: Թարգմանական երկում հանդիպող նորաբանությունները հիմնականում գոյական և ածական անուններ են: Որոնողական աշխատանքի արդյունքում գտել ենք նաև բայ-նորաբանության մեկ օրինակ, որը կրավորական սեռի է՝ «Ա՛խ, հանուն այս Բանվորների հրապուրիչ՝ Բաբելոնի թագավորին **ճորտագրված**, Վեներա, քո Տարփողներին լքիր փոքր-ինչ» (Հ. Բ. 69):

Գոյական-նորաբանությունները, ըստ բառակազմական կաղապարների, բաժանվում են ածանցավոր, բարդ և բարդածանցավոր ենթատեսակների.

1. Ածանցավոր գոյական-նորաբանություններն արտահայտվել են **«արմատ + ածանց»** կաղապարով, ինչպես՝ **պպզում** նորաբանությունը «Պպզումներ» բանաստեղծության մեջ (Գ. Գ. 42): Հետաքրքիր է, որ այս արմատով կազմվել են միայն բայեր, ինչպես՝ պպզել, պպզեցնել, և կարծում ենք, որ պպզում գոյականը կազմվել է կկզում գոյականի նմանողությամբ, քանի որ **պպզել** և **կկզել** բայերը հոմանիշներ են, պարզապես նորաբանությամբ թարգմանիչ հեղինակը ցանկացել է արտահայտել բառի նոր լինելու հանգամանքը՝ կիրառական հնչյունները փոխարինելով նորովի հնչաշղթայով: «Առաջին հաղորդություն» (Հ. Բ. 55) բանաստեղծության մեջ **մեղկանք** գոյական-նորաբանությունը գործածվել է ներքին հանգ առաջացնելու համար, ինչպես՝ «Ո՞վ կպատմի **մեղկանքը**, գթությունը գարշ ու ցած և խորշանքը նրա մեջ, խեղկատակնե՛ր զազրելի»: Նորաբանությունը գործածվել է որպես ուղիղ խնդիր:

2. Բարդ գոյական-նորաբանություններն իրենց հերթին արտահայտվել են հետևյալ ենթակաղապարներով.

2.1. «**Արմատ + արմատ**», օրինակ՝ **ստեղնաշտանակ** նորաբանությունը, որն արտահայտվել է «գոյական + գոյական» ներձևաբանական հարաբերությամբ և նշանակում է «աշտանակի ճյուղավորված ձողիկներից (ստեղներից) յուրաքանչյուրը», ինչպես՝ «Բարձրադիր թաղամասն ունի անմեկնելի տեսարաններ. մի ծովածոց՝ առանց նավ ու նավակ, իր կապտա-կարկտագույն ծածկույթն է թավալում ահռելի **ստեղնաշտանակներով** բեռնված ափուղիների արանքում» (Ա. Հ. 125): **Կաթնավիշ** գոյական-նորաբանությունը գործածվել է որպես միջոցի անուղղակի խնդիր: Հաշվի առնելով *կաթ* և *ավիշ* գոյականների հատկանիշների նմանությունը՝ այդ արմատները ձուլվել են, և կազմվել է **կաթնավիշ** գոյականը, ինչպես՝ «Եվ այն օրից՝ աստղերի **կաթնավիշով** ներարկված, Ես Քերթվածի Ծովի մեջ թաթախվեցվի, լափելով Կապտությունները կանաչ» (172):

2.2. «**Արմատ + հոդակապ + արմատ**» կաղապարով նորաբանությունները հաճախադեպ են, օրինակ՝ **աստղառոսկի** նորաբանությունը՝ «Ուր **աստղառոսկու** ողբն էր տապալվում լուրթ աստիճանին» (Գ. Գ. 48): Այս նորաբանության առա-

[2] Նորաբանությունների թարգմանիչների անունները կից ներկայացվում են համապատասխան էջերի կողքին՝ ըստ անուն-ազգանունների համառոտագրության:

ջացման պատճառ կարող է լինել այն, որ աստղերը կարծես ոսկեգույն լինեն: Այստեղ հեղինակը կիրառել է անձնավորման ոճական հնարանքը: **Աստղառոսկի** նորաբանությունը գործածվել է որպես հատկացուցիչ: «Որոշիչ + որոշյալ» կաղապարով են կազմվել **ծածկանախշ** և **դյութախաղ** նորաբանությունները, ինչպես՝ «Ինձ դուր էին գալիս անմիտ նկարները, դռների **ծածկանախշերը**, շրջիկ հտպիտների զարդանկարներն ու վարագույրները, ցուցանակները, ժողովրդական քրձեղենը...» (Ա. Հ. 98), «Մի՞թե պիտ փայփայվեն արկածները գիտական **դյութախաղերի** ու շարժումները սոցիալական եղբայրության՝ որպես աստիճանական վերահաստատումն առաջնային անկեղծության...» (Ա. Հ. 130), Սրանցից **ծածկանախշը** ուղիղ խնդիր է, **դյութախաղը**՝ հատկացուցիչ:

«Գոյական + գոյական» ներձևաբանական բառաբաղադրիչների համադասական հարաբերությամբ հոմանշային զույգով կազմվել է **կողաեզր** նորաբանությունը, որն այստեղ որոշիչ է, ինչպես՝ «Ու բաց կանաչ **կողաեզրով** Աստվածաշունչն էր կարդում» (Գ. Գ. 44):

«Հատկացուցիչ + հատկացյալ» կաղապարով են կազմվել **եղեգնածաղիկ** և **ջրախուրձ** նորաբանությունները, ինչպես՝ «Ուռենիների փոշի, որ մի թև թոթվում է ցած: Վաղուց խժռված վարդագույնները **եղեգնածաղկի**» (Գ. Գ. 81), «Մայանդրոսի ոլորանների մրգաստաններում ու ծառուղիներում բազմաստեղ **ջրախրձեր** ձգում երկարացնում են մայրամուտի կանաչներն ու կարմիրները» (Ա. Հ. 130): Երկուսն էլ կիրառվել են որպես հատկացուցիչ:

Ջրային ծաղիկների շարքն է համալրում «որոշիչ + որոշյալ» կաղապարով կազմված **ջրավարդ** նորաբանությունը, ինչպես՝ «Ագաթի վրա շաղ տված դեղին ոսկու կտորներ, զմրուխտե մի գմբեթ պահող կարմրածառերի սյունաշարեր, սպիտակ կերպասի փնջեր ու սուտակե նուրբ շիվեր շրջափակում են **ջրավարդին**» (Ա. Հ. 128): Նկատի ունենանք, որ ջրավարդը իրանիշ գոյական է, հետևաբար պետք է լիներ՝ շրջափակում են ջրավարդը, բայց այս դեպքում ունենք անձի առում:

«Հատկացուցիչ + հատկացյալ» կաղապարով են արտահայտվել նաև **բևեռագիշեր, որսաբոժոժ** նորաբանությունները, ինչպես՝ «Եվ հիասքանչ Իջևանը կառուցվեց **բևեռագիշերի** ու սառույցների քառսի մեջ» (Ա. Հ. 111): «**Որսաբոժոժները** ճչանակում են կիրճերում» (Ա. Հ. 123): **Բևեռագիշեր** նորաբանությամբ ընդգծվում է գիշերվա տևականությունը, քանի որ բևեռում գիշերը տևում է մոտավորապես վեց ամիս:

3. Բարդածանցավոր գոյական-նորաբանությունները դասակարգվում են հետևյալ կաղապարներով.

3.1. «**Արմատ + արմատ + ածանց**» կաղապարով է կազմվել **անձնվիրում** նորաբանությունը, որը գործածվել է որպես պատճառի պարագա, ինչպես՝ «Երկո՛ւ սեր՝ կամ կմեռնեմ երկրային սիրուց կամ **անձնվիրումից**» (Ա. Հ. 89):

3.2. «**Արմատ + բայահիմք + ածանց**» կաղապարով է արտահայտվել **ձեռնանցք** նորաբանությունը **«Պպզումներ»** բանաստեղծության մեջ, որի բաղադրիչների միջև կա «հատկացուցիչ + հատկացյալ» հարաբերությունը, ինչպես՝ «Նա՝

մեր եղբայր Կալոտուսը, աչքը հառած նեղ **ձեռնանցքին**»: Այս նորաբանությունը կիրառվել է որպես հանգման անուղղակի խնդիր:

3.3. «**Արմատ + հոդակապ + արմատ + ածանց**», օրինակ՝ **որոմնահատիկ** նորաբանությունը, որն այստեղ հանդես է եկել ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով դերբայական դարձվածի կազմում, որտեղ կատարել է «կողմնակի ուղիղ խնդիր» լրացման դեր: Ունի «հատկացուցիչ + հատկացյալ» ներձևաբանական մասնակաղապար, ինչպես՝ «Սատանան՝ Ֆերդինանը, վազում է **որոմնահատիկ** շաղ տալով...» (Ա. Հ. 92): **Ձեռնասունություն** նորաբանությունը գործածվել է որպես ենթակա, ինչպես՝ «**Ձեռնասունությունը**, ընդսմին, հեռուն է տանում» (Ա. Հ. 85):

3.4. «**Արմատ + հոդակապ + բայահիմք + ածանց**» կաղապարով է արտահայտվել **սիրաճոճում** նորաբանությունը, որը մեջ կապի հետ ժամանակի պարագա է դարձել, ինչպես՝ «**Սիրաճոճման** մեջ տատանվում են գլուխները միալար» (Գ. Գ. 37):

3.5. «**Արմատ + ածանց + հոդակապ + արմատ**», ինչպես՝ «որոշիչ + որոշյալ» ներքերականական հարաբերությամբ է կերտվել **գալարապար** նորաբանությունը, որը նշանակում է ծանոթ ծովերի ու գիշերների գալարուն պար՝ «Աֆրիկան ու Արևմուտքը կարարվեն շուտով: Հետո **գալարապարը** ծանոթ ծովերի ու գիշերների, անարժեք քիմիա և անհնարին մեղեդիներ» (Ա. Հ. 137): Գործածվել է ենթակայի պաշտոնով:

3.6. «**Նախդիր + արմատ + հոդակապ + արմատ + ածանց**» կաղապարով են կազմվել **զարդածածկոց** և **ցայգահսկում** նորաբանությունները: **Զարդածածկոց** գոյականի առաջին բաղադրիչը գործածվել է գործիական հոլովի նշանակությամբ՝ որպես որոշիչ, իսկ նորաբանությունը գործածվել է որպես ստորոգելի, ինչպես՝ «Փոթորիկի կարմրավառ զարդածածկոցն են դարձել» (Հ. Բ. 78): **Ցայգահսկում** նորաբանությունը վերնագրում գործածվել է հոգնակի թվով, քանի որ տարբերակում է լամպերի և գորգի, ծովի, տատրակների ցայգահսկումներ: Բոլոր դեպքերում էլ կիրառվել է որպես հատկացուցիչ, ինչպես՝ «Լամպերն ու գորգերը **ցայգահսկումի** ալյաց պես են շառաչում գիշերը, նավիրանի երկայնքով ու փայտամածիշուրջը», «Ծովը **ցայգահսկումի** նույնն է, ինչ Ամելիայի ստինքները», «Գորգեղենը՝ կես բարձրությամբ, զմրուխտագույն ժանյակե թավուտներ, ուր նետվում են տատրակները **ցայգահսկումի**» (Ա. Հ. 127):

Ածական-նորաբանությունները, ըստ բառակազմական կաղապարների, բաժանվում են ածանցավոր, բարդ և բարդածանցավոր ենթատեսակների.

1. Ածանցավոր ածական-նորաբանություններից հանդիպել ենք միայն «**արմատ + ածանց + ածանց**» կաղապարով **կոպիճե** հարաբերական ածականին՝ «Մուգ կանաչն ու լաջվարդ կապույտը հեղեղում են պատկերը: Ձիերի լծարձակում **կոպիճե** նշանի մոտակայքում» (Ա. Հ. 129):

2. Բարդ ածական-նորաբանություններն արտահայտվել են հետևյալ ենթակաղապարներով.

2.1. «**Արմատ + արմատ**», ինչպես՝ **սևարծաթ** նորաբանությունը՝ կազմված «որոշիչ + որոշյալ» հարաբերությամբ, այն գործածվել է բացառական հոլովով՝ արտահայտելով համեմատության խնդրի իմաստ, ինչպես՝ «Օ՜, Ձեռքերը քո սուրբ, **սևարծաթից** էլ սև» (Գ. Գ. 50):

2.2. «**Արմատ + հոդակապ + արմատ**», օրինակ՝ **լաքահոտ** ածականը, որն արտահայտվել է «հատկացուցիչ + հատկացյալ» հարաբերությամբ: Հեղինակը *սենյակը* բնութագրել է *մրգաբույր* ու **լաքահոտ** ածականներով՝ հակադրելով մրգի բույրը լաքի հոտի հետ, ինչպես՝ «Մի գորշ, անշուք սենյակում՝ մրգաբույր ու **լաքահոտ**» (Գ. Գ. 33): «Հատկացուցիչ + հատկացյալ» կաղապարով է արտահայտվել նաև **սուտակաթույր** ածականը՝ «Լցրո՛ւ զարդասենյակները **սուտակաթույր** հրե փոշով...» (Ա. Հ. 101): **Սուտակաթույր** նորաբանության հոմանիշը կարող է լինել **բոսորակրակ** նորաբանությունը, որը կազմվել է «որոշիչ + որոշյալ» հարաբերությամբ, ինչպես՝ «Ծովը ծածանվեց՝ շառագույնի պես, ստինքներում քո **բոսորակրակ**» (Գ. Գ. 53): Մի դեպքում հեղինակը կարմիր իմաստն արտահայտում է բառակապակցությամբ (**սուտակաթույր** հուր), մյուս դեպքում՝ բառաբարդմամբ (**բոսորակրակ**): «Որոշիչ + որոշյալ» կաղապարով արտահայտվել են **կանաչաթուփ, բոցալանջ** և **վարդագես** նորաբանությունները, որոնց առաջին բաղադրիչները գույն ցույց տվող ածականներ են, ընդ որում՝ **կանաչաթուփ** ածականի առաջին բաղադրիչը ուղիղ իմաստով է գործածվել, իսկ **բոցալանջ** և **վարդագես** ածականների առաջին բաղադրիչները՝ փոխաբերական, ինչպես՝ «Ու-ն ծածանք է ծովերի՝ **կանաչաթուփ** ու անծայր» (169), «Ա-ն՝ սև, փրչոտ սեղմիրան բյուր ճանճերի բոցալանջ» (169): «Կան լուսավոր առավոտներ վարդամատն ու **վարդագես**» (186):

2.3. «**Արմատ + հոդակապ + բայահիմք**», օրինակ՝ **վարակաբեր** և **ապուրապաշտ** ածականները, որոնք արտահայտվել են «ուղիղ խնդիր + լրացյալ» կաղապարով, ինչպես՝ «Կեղտով ծածկեք **վարակաբեր** Կրծքերը ձեր անճոռնի» (Գ. Գ. 41), «Յուղոտ կրծքերն են ցուցանում՝ էակներն այդ **ապուրապաշտ**» (Գ. Գ. 45): Հեղինակը, *աղբյուրը* նմանեցնելով *մետաքսին*, ստեղծել է **մետաքսահոս** նորաբանությունը, որը նշանակում է «մետաքի նման հոսող աղբյուր», ինչպես՝ «Ամենահեղձուցիչ թավուտներից արդյոք կարձագանքեն սուրհանդակներ և անրջային գազաններ, որպեսզի մինչև աչքերս ինձ խորասուզեն **մետաքսահոս** աղբյուրի մեջ» (Ա. Հ. 129): «Միջոցի անուղղակի խնդիր + լրացյալ» հարաբերություն են արտահայտում **գրիֆազարդ** և **ձարազարդ** նորաբանությունները, ինչպես՝ «**Գրիֆազարդ** գլխաշոր, որ տատիկներն են կապում» (Հ. Բ. 35), «Օ՜ մոխրամած դեմք, **ձարազարդ** զինանիշ, բյուրեղյա ձեռքե» (Ա. Հ. 116):

2.4. «**Արմատ + արմատ + հոդակապ + արմատ**» կաղապարով է արտահայտվել **արևմտանիստ** նորաբանությունը, որն ունի «տեղի պարագա + լրացյալ» շարահյուսական կազմությունը, ինչպես՝ «**Արևմտանիստ** սուրբ Քաղաքին էլ վերջապես հասաք» (Գ. Գ. 47):

2.5. «**Արմատ + հոդակապ + արմատ + հոդակապ + արմատ**» օրինակ՝ **կապտա-կարկտագույն** նորաբանությունը, որը կիրառվել է որպես որոշիչ, ինչ-

պես՝ «Բարձրադիր թաղամասն ունի անմեկնելի տեսարաններ. մի ծովածոց՝ առանց նավ ու նավակ, իր **կապտա-կարկտագույն** ծածկույթն է թավալում ահռելի ստեղնաշտանակներով բեռնված ափուղիների արանքում» (Ա. Հ. 125):

3. Բարդածանցավոր ածական-նորաբանություններն իրենց հերթին արտահայտվել են հետևյալ ենթակաղապարներով.

3.1. «**Արմատ + արմատ + ածանց**», օրինակ՝ **ահազդային** ածականը՝ «Ահազդային զանգակը գովերգում է ժողովուրդների գաղափարները» (Ա. Հ. 124): Թվում է՝ «ահազդային զանգակը» վախ ու սարսափ պետք է ազդարարեր, բայց գովերգում է ժողովուրդների գաղափարները: Հետաքրքիր է **թատերգային** ածական-նորաբանությունը, որը պետք է լիներ թատերերգային, քանի որ *թատրոն* արմատը կիրառվում է *թատր/թատեր* տարբերակներով (հմմտ. *թատրերգ, թատերաերաժշտություն*ն), ինչպես՝ «Ոչ մի համեմատություն ձեր Ֆաքիրների ու **թատերգային** մյուս խեղկատակությունների հետ» (Ա. Հ. 115):

3.2. «**Արմատ + բայահիմք + ածանց**», օրինակ՝ **թողլքուն**, որի առաջին բաղադրիչը վերաբերական է, ինչպես՝ «Ափին՝ **թողլքուն** կառույցի ծիծաղ՝ օգոստոս ամսի» (Գ. Գ. 81):

3.3. «**Արմատ + հոդակապ + արմատ + ածանց**» կաղապարով է կազմվել **սևակաթիլ** ածական-նորաբանությունը, որն արտահայտվել է «որոշիչ + որոշյալ» հարաբերությամբ, ինչպես՝ «Երեսներից, երբ շրջվում են, թույն է քամվում **սևակաթիլ**» (Գ. Գ. 38): **Կավաքարե** նորաբանությունը կիրառվել է որպես որոշիչ, ինչպես՝ «**Կավաքարե**, ծանր երկինք կար, ջրահեղձ անտառներ» (Գ. Գ. 45):

3.4. «**Արմատ + ածանց + բայահիմք + ածանց**», օրինակ՝ **ամոթազդու** ածական-նորաբանությունը՝ «Մի հանճար հայտնվեց անպատմելի, **ամոթազդու** գեղեցկությամբ» (Ա. Հ. 114):

3.5. «**Արմատ + ածանց + հոդակապ + արմատ**», օրինակ՝ **սառցագահ** նորաբանություն, որը կազմվել է «որոշիչ + որոշյալ» ներշարահյուսական հարաբերությամբ, ինչպես՝ «Է-ն ծոցեր է մշուշի, գոլորշի է ու վրան, Արքաներ է **սառցագահ**, հովանոցներ թրթռուն» (169):

3.6. «**Արմատ + ածանց + հոդակապ + բայահիմք + ածանց**», օրինակ՝ **հեղուկաբաշխիչ** նորաբանությունը, ինչպես՝ «Երևում է **հեղուկաբաշխիչ** շարժիչով ճանապարհից անդին թումբի պես գլորվող, Հրեշավոր և անվերջ առկայծող՝ նրանց ուսման շտեմարանը» (Ա. Հ. 139):

3.7. «**Նախդիր + արմատ + հոդակապ + արմատ + ածանց**», օրինակ՝ **զարդացանցե** նորաբանությունը, որը կազմվել է «գոյական + ածական» ներձևաբանական կաղապարով, ինչպես՝ «Ես տեսնում եմ արծաթից, աչքերից ու վարսերից հյուսված **զարդացանցե** գորգի վրա բացվող մատնածաղկին» (Ա. Հ. 128):

Այսպիսով՝ ուսումնասիրված 45 նորաբանություններն էլ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, բաղադրիչների յուրօրինակ համադրումներով: Դրանք, ըստ խոսքիմասային պատկանելության, բայ, գոյականներ, ածականներ

են: Նորաբանությունների կիրառությունը բնական է ու անհրաժեշտ, քանի որ դրանք իրենց հետ բերում են նոր գաղափարներ և արժեքներ: Հայերենի բառակազմության լայն հնարավորությունները հետաքրքիր զուգորդումներով են արտահայտվում թարգմանական նորաբանություններում՝ ստեղծելով նոր բառեր, որոնց իմաստը հեշտ է կռահել՝ ելնելով բաղադրիչների իմաստներից: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ հեղինակը նորովի է անվանել մի շարք հասկացություններ և դրանց տրվող հատկանիշներ, հետևաբար նրան կարող ենք անվանել բառաստեղծ հեղինակ: Անկախ նրանից, թե հեղինակային նորաբանությունները կմտնեն բառապաշարի ակտիվ շերտ, թե ոչ, դրանց գոյությունը ընդգծում է գրողի ինքնատիպ ոճը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Լ., Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի նորաբանությունները, Սեղմագիր, Երևան, 2010, էջ 5:
2. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, Աստղիկ, 2010, 820 էջ:
3. Виды неологизмов и способы их образования. Примеры https://lektsii.net/ 2-51660.html (15.05.2023).
4. Гак В. О современной французской неологии: новые слова и словари новых слов, Ленинград, 1978, 37-52 с.
5. Федоров А. Основы общей теории перевода: лингвистический очерк. Учебное пособие, 3-е изд., Москва, Высшая школа, 1968, 395 с.

Неологизмы в армянском переводе произведения «Стихотворений» Артюра Рембо

Тадевосян Анжела
ВГУ, Армянский язык и литература, 3-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Л. Петросян

Резюме

Ключевые слова: *существительное, прилагательное, глагол, корень, суффикс, шаблон по словообразованию*

Рассмотренные примеры 45 неологизмов отличаются своим своеобразием и сочетанием словарных частиц. По своей семантической принадлежности это существительные, прилагательные и глагол. Широкие возможности армянской словообразовательной системы интересным образом отражаются в переводе неологизмов, тем самым создавая новые слова, значение которых легко предугадать по значению их словарных частиц. Несмотря на то, войдут ли эти неологизмы в активный пласт лексики или – нет, их существование подчёркивает своеобразный стиль автора.

Neologisms in the Armenian Translation of Arthur Rimbaud´s "Poems"

Tadevosyan Anzhela
VSU, Armenian Language and Literature, 3rd year
Academic Supervisor: L. Petrosyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words*: noun, adjective, verb, root, suffix, word-formation template*

The observed 45 neologisms stand out due to their originality, and comparison of word particles. According to their semantic categories, they are nouns, adjectives, and verbs. The diverse options within the Armenian word-building system are fascinatingly displayed in the translation of neologisms, where new words are created, and their meanings are easy to infer from the meanings of their components.

Գոյականի քերականական առանձնահատկությունները «Վերք Հայաստանի» պատմավեպում

Չերչինյան Թեհմինա
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *գոյական, Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, պատմավեպ*

Պատմական ողբի ժանրը հայ գրականության մեջ հայտնի է դեռ վաղ անցյալից: Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց» աշխատության վերջաբանում հայոց թագավորության և եպիսկոպոսապետության անկումը ներկայացրեց «Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, և եպիսկոպոսապետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի» վերնագրով: Խաչատուր Աբովյանը, շարունակելով հայ գրականության ավանդույթները, իր հեղինակած պատմական վեպը անվանեց «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» [2]:

«Վերք Հայաստանի» վեպի լեզվի մասին ուսումնասիրությունները հայագիտության մեջ բազմազան են. դրանց տեսական ու գործնական արժեքներին ամփոփ կերպով անդրադարձել է Լևոն Եզեկյանը «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն» մեծածավալ աշխատության մեջ [6; 60-109]:

Արդի լեզվաբանության մեջ «Վերք Հայաստանի» պատմավեպի լեզվական քննությունը հետաքրքիր է դառնում համեմատական լեզվաբանության տեսակետից: Քննելով վեպի լեզվաշխարհը ընդհանրական ուսումնասիրության եղանակներով՝ բացահայտում ենք ժամանակակից հայերենի քերականական մի շարք իրողությունների պատճառները:

Լ. Եզեկյանը, բացի վերը հիշատակված աշխատությունից, «Վերք Հայաստանի» պատմավեպը ուսումնասիրել է նաև հայ գրականության ոլորաններում՝ ներկայացնելով «Գրիգոր Նարեկացի – Խաչատուր Աբովյան աղերսները» գիտական հոդվածը [7, 49-55]:

Լեզվաբան հեղինակը, կիրառելով համադրական ոճաբանության խնդիրներից մեկը, կատարել է տարբեր ժամանակաշրջանների գրողների խոսքարվեստի լեզվաոճական համակարգի զուգադրական քննություն:

Տարբեր հատվածների համեմատական քննությունից հետո պարզ են դառնում ոչ միայն շարադրանքի ոճական-իմաստային, այլև կառուցվածքային շարահյուսական ընդհանրություններ:

Ե՛վ Նարեկացու, և՛ Աբովյանի լեզուն մի շքեղ, հուզառատ, բազմաշերտ լեզու է, որտեղ նկատելի են բանաստեղծական մտածողության անվերջ ծավալումները, հուզական բացառիկ ուժը և մանավանդ՝ անհուն երևակայությունը, որը հոգեբանական իմաստներ է հաղորդում պատկերավոր ու բազմերանգ փոխաբերություններին և լեզվի արտահայտչական այլ միջոցներին:

«Վերք Հայաստանի» վեպը աղերսներ ունի նաև Աստվածաշնչի հետ. ինչպես

Քրիստոսն էր իր աշակերտների հետ բարձրանում Գողգոթան ու միայնակ աղոթում Տիրոջը, այնպես էլ գլխավոր հերոսը՝ Աղասին է իր ընկերների հետ առանձնանում մարդկային ժխորից, ու երբ տեսնում է հայ ժողովրդի Գողգոթան՝ Մասիսը, խնդրում է իր ընկերներին իրեն միայնակ թողնել, որպեսզի ինքն իր սրտի խոսքն ասի երկնային տիրոջը: Այդ խոսքը տերունական աղոթքի պես մաքուր էր ու ջինջ՝ լցված աղերսախառն խնդրանքներով ու սրտի հեծեծանքներով:

Խաչատուր Աբովյանն ու իր հետևողները ստեղծագործելիս գավառական բարբառներ էին գործածել, որոնք հասկանալի կարող էին լինել այս կամ այն գավառի բնակիչներին [8, 23]: Այսքանով հանդերձ՝ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը ուղենիշ դարձավ հայ գրականության հետագա զարգացման համար: Խ. Աբովյանի պատգամը դաս դարձավ հայ գրողների համար. «Ձե՛զ եմ ասում՝ ձե՛զ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցեք»: Հետագայում հայ պատմագիր հեղինակները, անսալով իրենց նախահոր հորդորին, ազգապահպանման գործում կարևորեցին լեզվի անաղարտությունը, որն ակունքի պես պահվում է ժողովրդական լեզվամտածողության մեջ. «Ժողովուրդը ոչ ժլատ, բայց գեղարվեստական չափի տնտես է, դեղագործական կշեռքով կշռում ու բաշխում է ամեն մի արտահայտություն, բառ: Ժողովուրդը բնության է նման. առատ, բայց տնտեսող, իմաստուն պահեստապետ, որ հազար ու մի բարիքը պահում է գործածելու միշտ իր տեղը և իր նպատակին» [10, 12]:

Խաչատուր Աբովյանի գրական ժառանգությունը հետագա դարերում գնահատվեց հատկապես Դերենիկ Դեմիրճյանի, Ակսել Բակունցի և Եղիշե Չարենցի կողմից, ովքեր էլ ներկայացրին Աբովյանի գրական կերպարը՝ որպես իսկական հայորդի և մեծ հայրենասեր:

Ճեմարանում Դեմիրճյանը մեծ եռանդով կարդում է հայ, ռուս և համաշխարհային խոշոր գրողներին: Նրան առանձնապես հետաքրքրում է հարազատ ժողովրդի պատմական անցյալը, հայ մատենագրությունն ու պոեզիան: 19-րդ դարի գրողներից նա մի առանձին հիացմունք էր տածում դեպի Աբովյանն ու Նալբանդյանը, Պատկանյանն ու Հովհաննիսյանը [11; 12]:

Ակսել Բակունցը գորեց «Խաչատուր Աբովյան վեպը [4, 564], որտեղ ներկայացրեց գրողի կենսագրությունը՝ իբրև մաքառող հայորդու: Եղիշե Չարենցը 1987 թ. գրեց «Դեպի լյառը Մասիս» պոեմը:

Բարբառային երկերի քերականական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար նախ և առաջ պետք է քննել այդ բարբառի տարբերակիչ հատկանիշները: Քանաքեռի ենթաբարբառը Արարատյան բարբառի ենթաճյուղերից է, որը Երևանի կամ Արարատյան բարբառից տարբերվում է 5 տարբերակիչ հատկանիշներով [4, 135]: Քանաքեռի բարբառում բազմաթիվ են քերականական այն իրողությունները, որոնք զուգակցվում են հայոց լեզվի զարգացման հին շրջանի հետ, ինչպես՝ հոգնակերտների կիրառությունները, հոլովիչների և հոլովակերտների գործածությունները, հոդերի բազմիմաստությունը և այլն:

Ելնելով «Վերք Հայաստանի» վեպի լեզվական նյութի ուսումնասիրություններ-

րից՝ կարելի է ներկայացնել Քանաքեռի բարբառի ընդհանուր պատկերը, որն էլ կիմաստավորի երկի՝ օտար լեզուներով թարգմանությունները:

Աշխատանքում քերականական իրողությունները փորձել ենք ուսումնասիրել ձևաիմաստային ընդհանրության տեսակետից, ինչպես գոյականների կառուցվածքային քննությունը կատարել ենք իմաստային դաշտերում:

Գոյականները առարկա կամ առարկայացված հասկացություն ցույց տվող բառեր են, որոնք հայերենի զարգացման տարբեր շրջաններում գործածվել են իբրև թեքվող խոսքի մասի միավորներ: Գոյականների թեքումը ավանդաբար կոչվում է հոլովում, որը արդի հայերենում կատարվում է մասնիկավորման միջոցով: «Վերք Հայաստանի» պատմական վեպը Խաչատուր Աբովյանը ներկայացնում է Քանաքեռի բարբառով, որտեղ հոլովումը կատարվում է և՛ մենիմաստ, և՛ բազմիմաստ մասնիկավորմամբ:

Լ. Եզեկյանը «Վերք Հայաստանի» վեպի լեզվառճական առանձնահատկությունները քննել է «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն» աշխատության մեջ: Լեզվաբան հեղինակը գոյականների քերականական կարգերի ուսումնասիրությունը ներկայացրել է ավանդական վերլուծական եղանակով՝«Հոգնակի թվի կազմությունը» [6, 134], «Հոլովման համակարգը» [6, 142] վերնագրերով: Արդեն համակողմանի կատարված ուսումնասիրության մեջ նոր խոսք ասելու նպատակով «Վերք Հայաստանի» վեպի գոյականների քերականական առանձնահատկությունների քննությունը կատարել ենք ընդհանրական եղանակով՝ զուգադրելով հոլովի, առկայացման և թվի քերականական կարգերը անձնանիշ, իրանիշ, հատուկ և հասարակ իմաստային կարգերին: Քննությունը կատարել ենք Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության առաջաբանում ներկայացված մեթոդաբանությամբ [13, 11-37]: Գոյականների ձևաիմաստային քերականական դաշտերի ուսումնասիրությունը կատարելու համար անհրաժեշտ է առանձնացնել ութսունչորս կաղապար՝ հիմք ունենալով այն հանգամանքը, որ Արարատյան Քանաքեռի բարբառը 19-րդ դարում գոյականների կամ գոյականաբար գործածված բառերի համար տարբերակում էր յոթ հոլով, որոնք գործածվում էին և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով:

Կատարված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում գոյականները գործածվել են մի շարք ձևաիմաստային կաղապարներով[1].

1. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, անորոշ առումով – ***<u>Բարիկենդան էր</u>*** (9): ....***մեկ երկու հոգի <u>Շորացյալ ուղարկեց</u>*** (184):
2. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով,

[1] Այս դեպքում ***ձևաիմաստային*** ասելով՝ հասկանում ենք գոյականների արտահայտած ընդհանրական իմաստների և քերականական վերջավորությունների փոխհարաբերությունները:

անորոշ առումով – ....***էս ո՛չ Քրիստոս ա արել, ո՛չ Մահմեդ*** (29): ***Ինչ ասացիր, հերիք ա՝ խնամի Հարություն*** (30):

3. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, որոշյալ առումով – ***Խլղարաքիլիսեն էրվեց*** (126):
4. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, որոշյալ առումով – ....***որ աչքը չի՛ բաց արեց Մուսեն, վրա թռավ***.... (174) // ***Մուսին ուզում էր ասի*** (175), ...***էդ քո ջանը հանող Հոիփսիմեն, էդ հրեշտակն՝ ո՞վ ա*** (175):
5. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ....***հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա՝ կախ էր էլել*** (9), ***Է՛հ՝ ժամ չի՛ դառավ մեր գլխին***.... (12), ...***շատի չուխի վրա հարիր կարկատան կար*** (24):
6. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ***Ա՛խպեր՝ արածիս հլա մեկ ճար արա՛*** ....(15), ***Մարդ, որ իր տանը, իր աշխարքին մուղայթ չի կենա*** (114): ***Ամեն մարդ իր գլխի տերն ա*** (114):
7. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ***Չինն էկել՝ դիզվել, սար ու ձոր բռնել էր*** (9): ***Պարզկա գիշերը է՛նպես էր գետինը սառցրել***.... (9):
8. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ***Մտիկ էր անում, որ ժամավորը տուն գա*** (10): ***Քաջածաղիկ պատանին Վարդան՝ որ հինգ սհաթումը քառասնից ավելի մարդ կամ սպանել էր կամ յարալու արել***.... (114):
9. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, անորոշ առումով, հոգնակի թվով – ....***չունքի բոլոր աշխարհի բաներ են*** (3):
10. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, անորոշ առումով, հոգնակի թվով – ***Չէ՛, չէ՛՝ սիրելի՛ք, քանի կարանք, մեր գլուխը պահենք***.... (95):
11. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, որոշյալ առումով, հոգնակի թվով – ***Պղնձները ղլթղլթալով եփ էին գալիս*** (11), ***Ամպերն սկսեցին սարերիցը գոռալով բարձրանալ*** (114):
12. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ուղղական հոլովով, որոշյալ առումով, հոգնակի թվով – ....***էնքան պետք է մտիկ անես, որ ժամավորները***[2] ***գան*** (12): ***Աղասու ընկերքն էլ՝ մեկ տեղ թոփ էին էլել***.... (22):

---

[2] Բարիկենդանի առավոտյան նկարագրության մեջ՝ հեղինակային խոսքում ***ժամավոր*** գոյականը կիրառվել է իբրև հավաքական գոյական, որին գրական լեզվի տարբերակում բնորոշ չէ հոգնակիակերտով կիրառությունը: Լեզվական այս երևույթի կիրառությունը հատուկ չէ ժողովրդախոսակցական լեզվին, որն էլ գիտակցելով՝ Խ. Աբովյանը ***ժամավորներ*** բառաձևը կիրառել է Աղասու կողմից մեջբերված խոսքում, այսպիսով տարբերակելով հեղինակային և հերոսների ժողովրդական խոսքերը:

13. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, անորոշ առումով – ....***էքուց Ղարսա սարերումն ինձ կտեսնիս*** (174): ***Շամշադինի մովրովը*** (137), ***Անու միջումը անուշ քնած*** (124):
14. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, անորոշ առումով – ***Նազլվի սուքը*** (168), ...***հենց հասավ Մատուշկի ասած կարմունջը*** (137):
15. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ***Առավոտասհաթի ութը դեռ չէ՛ր ըլիլ***.... (12), ***Իրիգնաժամի զանգակը տվին*** (95):
16. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ....***փողատիրոնչ հոգին հետն ա դուս գալիս*** (26):
17. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ....***ո՛չ աշխարքիս սերն ու վայելչությունը***.... (2), ***սրտիս հասրաթը խոսքով հայտնեի*** (2):
18. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ....***անմեղ քոռվիս ձենը ականջումս էր*** (4):
19. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, անորոշ առումով, հոգնակի թվով – ***Գետերի, առվրների երեսները սառիցը***[3] ***մեկ զազ էկել***.... (9), ...***ձիանոնց առաջին քափ ու քրտինքները կոխած*** (94):
20. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված սեռական հոլովով, անորոշ առումով, հոգնակի թվով – ....***որ էս անօրենների ոտը խերով ըլի*** (95), ***Փիանդազը ֆառաշների փայն ա*** (94), ...***ու մեր քեղխուդեքանց քեֆին թամաշ անենք*** (32):
21. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված տրական հոլովով, որոշյալ առումով – ***Ապարանու սուքը, տարաբախտությունը էջմիածնին, Վաղարշապատին, Արմավիրին, Երասխին, Մասսին պատմի*** (127):
22. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված տրական հոլովով, որոշյալ առումով – ***Էլ ընչով էրեխին քո լեզուն սիրիլ տաս*** (3):
23. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված տրական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ....***ի՞նչ տեղ շներոց, գելերոց կըլի*** (95), ...***երբ Կյուրոս բոլոր աշխարքի տիրեց*** (1):
24. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված տրական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ....***տանը չի՛ պետք է ասած, որ չըլիմ չիմանամ***....(16), ***Ոտն օրգանգվին առավ թե չէ***.... (22), ...***նրա յարաղանին դուրբան***.... (29):

---

[3] ***Սառից*** բառաձևում առկա է համանունություն, մի դեպքում այն ***սառույց*** բառի հնչյունափոխված բարբառային տարբերակն է, մյուս դեպքում՝ ***սառը*** ածականի գոյականական կիրառությունը՝ արտահայտված բացառական հոլովաձևով:

25. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված տրական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ***կորակցիս եմ աղաչում*** (6):
26. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված տրական հոլովով, որոշյալ առումով, հոգնակի թվով – ...***քեզ էլ կպահեն***, ***նոքարներիդ էլ***, ***ձիանոցդ***[4] ***էլ*** (32), ...***Վիրգիլի, Սոֆոկլէսի գրքերը՝ էրեխեքն էլ գլխատակներին ունեին*** (2), ...***ի՞նչպես էին նրանք էն գրքերին հավանում*** (3):
27. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, անորոշ առումով –....***ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց*** (61), ***Նադր շահը դուս էկավ ու Հնդստան, Արաբստան ուտի տակը տալուց եղև***.... (63): ....***մեկ երկու հոգի Շորագյալ ուղարկեց*** (184):
28. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, անորոշ առումով – ....***ջիվան Մուսեն ո՛չ Նազլու ուներ որ դարդ անի*** (170):
29. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, որոշյալ առումով – ***Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն***.... (137), ***ամպը ուզում էին Խլղարաքիլիսեն վերև քաշեն*** (124):
30. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, որոշյալ առումով – ***Աղասուն տարան*** (56), ...***յա Մանուկին կորցնի*** (139):
31. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ....***արեգակը մեկ ջիդա բոյ էկավ*** (12), ...***որ էս օրդուս գնա ջիրիդ խաղա*** (12), ...***մեկ սառը ջուր խմացնիլ*** (27):
32. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ***Սրանց մեկ կնիկ են տալիս*** (145):
33. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ....***խուլ ձենն էր լսում*** (9), ***Քաղաքը որ մտնում եմ՝ հենց իմանաս՝ թե աշխարք սով ա ընկել*** (26):
34. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ....***որդին ես քաշում՝ ինքն ա հետը կրակն ընկնում*** (145):
35. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, անորոշ առումով, հոգնակի թվով – ....***մեր որդիքն էլ մեզ նման էշ ուտում***, ***էշ մենձանում*** (29):
36. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով, որոշյալ առումով, հոգնակի թվով – ....***առանց քեզ թիքա չեն բերանները դնիլ*** (32):
37. Հասարակ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված հայցական հոլովով,

---

[4] Այս կառույցում ***պահել*** բային են կապակցվել տարբեր արտահայտություններով տարբեր խոսքի մասեր. «եզակի անձնական դերանուն + հոգնակի անձնանիշ գոյական + հոգնակի իրանիշ գոյական», վերջինս իր նախորդների պես համաբանությամբ կիրառվել է տրական հոլովով՝ ձևավորելով տրական հոլովով արտահայտված ուղիղ խնդիր, որը գրաբարին հատուկ շարահյուսական իրողություն էր:

որոշյալ առումով, հոգնակի թվով – ....***մորքները խփում, որ հաց առնին, ուտեն*** (11):

38. Հատուկ իրանիշ գոյականներ՝ արտահայտված բացառական հոլովով, որոշյալ առումով – ....***մինչև Թիֆլիզուցը օգնություն գար*** (137), ***Գյանջուցը փախած գալիս էր*** (137):
39. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված բացառական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ***եկեղեցուց դուս էկած***.... (22), ...***ինչ բանից ա ավելի հազ անում*** (5):
40. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված բացառական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ***Մեկ օր նրանց խոսքիցը չէ՛ր դուս էկել***.... (18):
41. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված գործիական հոլովով, անորոշ առումով, եզակի թվով – ....***մառանը եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում էր*** (24), ***Կարասներով կորակ, կճճներով պանիր ու դավուրմա, աքաշներով գոխ, բոխ, ողորմակոթ, բղղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր – ծով, ի՞նչ տուն*** (24): ***Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում*** (26), ...***էդպես բանի վրա տարով էլ որ խոսաս*** (30) ....***որ սարերով, չոլերով ընկար, բանդ բոշ ա*** (30):
42. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված գործիական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ***ես իմ կարճ խելքովս էնպես եմ իմանում***.... (16):
43. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված գործիական հոլովով, որոշյալ առումով, հոգնակի թվով – ....***փանջարեքովը ու երթկովը***[5] ***ներս ածում*** (11):
44. Հատուկ անձնանիշ գոյականներ՝ արտահայտված ներգոյական հոլովով, որոշյալ առումով – ***էս օր էլ որ ողորմելիքը Թիֆլիզումը մշակություն անելիս*** (138):
45. Հասարակ իրանիշ գոյականներ՝ արտահայտված ներգոյական հոլովով, որոշյալ առումով, եզակի թվով – ***Ախր ի՞նչպես են Աստուծո սուրբ տաճարումը էնպես բաներից խաբար առնում***.... (16):

Նշված կաղապարների քննությունից պարզ է դառնում.

ա. Ուղղական հոլովով արտահայտված գոյականները, լինելով հաճախադեպ, գործածվել են բոլոր իմաստային և քերականական ձևերով՝ ձևավորելով 12 կաղապար: Ստորոգելին, կոչականը, որոշիչը «Վերք Հայաստանի» վեպում կիրառվել են անորոշ առումով, ենթական՝ և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով:

բ. Սեռական հոլովով արտահայտված գոյականները ձևավորել են անորոշ առմամբ ձևավորված բոլոր կաղապարները: Որոշյալ առումով չեն գոր-

[5] Նախադասության բազմակի գոյական անդամները թվային տեսակետից կարող են միաձև չլինել և զուգահեռաբար գործածվել եզակի և հոգնակի թվերով:

ծածվել հատուկ իրանիշ և անձնանիշ անունները և հոգնակի թվով արտահայտված հասարակ անունները: Սեռական հոլովով ձևավորվել է 8 կաղապար: Որոշիչը, կապի խնդիրը և փոխակերպված ենթական «Վերք Հայաստանի» վեպում կիրառվել են անորոշ առումով, հատկացուցիչը՝ և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, ի դեպ որոշյալության իմաստը զուգահեռաբար արտահայտվում է ***ա*** դիմորոշ հոդի գործածությամբ:

գ. Տրական հոլովով արտահայտված գոյականները ձևավորել են որոշյալ առմամբ ձևավորված կաղապարները՝ բացառությամբ հասարակ անձնանիշ որոշյալ առումով և հոգնակի թվով արտահայտված գոյականների: Անորոշ առումով չեն գործածվել հատուկ իրանիշ և անձնանիշ անունները, հոգնակի թվով արտահայտված հասարակ իրանիշ և անձնանիշ անունները, եզակի թվով արտահայտված հասարակ անձնանիշ անունները: Տրական հոլովով ձևավորվել է 6 կաղապար: Հանգման անուղղակի խնդիրը «Վերք Հայաստանի» վեպում կիրառվել է և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, տեղի պարագան՝ միայն որոշյալ առումով:

դ. Հայցական հոլովով արտահայտված գոյականները նույնպես հաճախադեպ են «Վերք Հայաստանի» վեպում, դրանք գործածվել են բոլոր իմաստային և քերականական ձևերով՝ բացառությամբ հասարակ անձնանիշ անորոշ առումով, հոգնակի թվով արտահայտված գոյականների՝ ձևավորելով 11 կաղապար: Ստորոգելին, կոչականը, որոշիչը կիրառվել են անորոշ առումով, ենթական՝ և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով: Ուղիղ խնդիրը և տեղի պարագան «Վերք Հայաստանի» վեպում կիրառվել է և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, ժամանակի, չափի, նպատակի և ձևի պարագաները՝ անորոշ առումով:

ե. Բացառական հոլովով արտահայտված գոյականները ձևավորել են 3 կաղապարներ՝ հատուկ և հասարակ իրանիշ որոշյալ առմամբ գոյականներ, հասարակ իրանիշ անորոշ առմամբ գոյականներ: Բացառական հոլովաձևով արտահայտված բառերը վեպում գործածված են եզակի թվով: Բացառական հոլովով ձևավորվել է 3 կաղապար: Տեղի պարագան «Վերք Հայաստանի» վեպում կիրառվել է և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, անջատման անուղղակի խնդիրը՝ որոշյալ առումով:

զ. Գործիական հոլովով արտահայտված գոյականները ձևավորել են 3 կաղապարներ՝ հասարակ իրանիշ գոյականները գործածվել են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով, եզակի թվով արտահայտված բառերը՝ և՛ որոշյալ, և՛ անորոշ առումներով Հիմունքի պարագան «Վերք Հայաստանի» վեպում կիրառվել է և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, պարագան՝ միայն որոշյալ առումով, իսկ միջոցի անուղղակի խնդիրը, տեղի և չափի պարագաները՝ որոշյալ առումով:

է. Ներգոյական հոլովով արտահայտված գոյականները ձևավորել են 2 կաղապարներ՝ հասարակ և հատուկ իրանիշ գոյականները գործածվել են եզակի թվով, որոշյալ առումով՝ ձևավորելով բուն տեղի պարագաներ:

Թվի քերականական կարգի՝ հոլովի և առկայացման քերականական կարգերին զուգորդումից պարզ է դառնում, որ Քանաքեռի բարբառում շարունակում են կիրառվել գրաբարից եկող անեզական և անհոգնական հատուկ անունները իրենց բուն հոլովիչ ձայնավորներով: Ուղղական հոլովով հասարակ գոյականները զուգահեռաբար գործածվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով, սեռական հոլովը հոգնակի թվով գործածվելիս հանդես է գալիս անորոշ առումով՝ ի տարբերություն տրական հոլովի: Բացառական և ներգոյական հոլովներին բնորոշ է եզակի թվով կիրառությունը, գործիական հոլովին՝ և՛ եզակի, և՛ հոգնակի:

«Վերք Հայաստանի» վեպում գոյականները և գոյականաբար գործածված բառերը գործածվել են տարբեր թվային արտահայտություններով: Գոյականների մեծ մասը զուգահեռաբար գործածվել է և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով, ինչպես՝ ***ազգ*** // ***ազգեր*** (62), ***ձեռդ*** // ***ձեռներդ*** (164), ***տղա*** // ***տղերք*** (12), սակայն կան նաև անհոգնական գոյականներ, որոնք են հատուկ անունները՝ ***Կրեսոս*** (1), ***Հայկ*** (2), ***Քուռ*** (4), ***Աղասի*** (5), վերացական գոյականները՝ ***կսկիծ*** (2), ***իշխանություն*** (1), ***քերականություն*** (5):

«Վերք Հայաստանի» վեպում կիրառված հոգնակի գոյականները դասակարգվում են երեք խմբերով.

1. ժամանակակից գրական հայերենին համարժեք, որոնց իր «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն» աշխատության մեջ անդրադարձել է Լ. Եզեկյանը՝ նշելով. «Վերք Հայաստանի» վեպում ընդհանուր առմամբ պահպանվում են Արարատյան բարբառի և գրական լեզվի հոգնակի թվի կազմության օրինաչափությունները» [6, 134]:

2. Գրաբարյան ձևեր, որոնք հանդես են եկել ուղղական և սեռական հոլովաձևերով: Գրաբարյան ձևերը հատկապես կիրառվել են հեղինակային խոսքում, դրանք տարբեր հոլովումների պատկանող բառեր են, օրինակ՝ ***շարժմունք*** (56) – ***ա*** ներդրական հոլովում, ***բարեկամք*** (45) – ***ի-ա*** վերջադրական հոլովում, ***անձինք*** (12) – ***ի-ա*** ներդրական հոլովում, ***աքանչելիք*** (15) – ***ո-ա*** վերջադրական հոլովում, ***որդիք*** (23) – ***ո*** վերջադրական հոլովում և այլն: Գրաբարյան հոգնակի սեռականով ձևերը կամ ***ի- ա,*** կամ ***ո*** վերջադրական հոլովման են պատկանում, օրինակ՝ ***ծնողաց*** (1), ***բարեկամաց*** (2), ***իշխանաց*** (2), ***հայոց*** (6), ***թոչնոց*** (56):

Գրաբարյան հոգնակի մասնիկներով է Խ. Աբովյանը ներկայացրել.

ա. ազգերի, տոհմերի անվանումները, ինչպես՝ ***Ասորիք***//***Ասորոց, Հոռվմայեցիք***//***Հոռվմայեցոց, Ռուբինյանք, Բագրատունյանք, Պարսիկք, Հոնք, Ալանացիք, Մակեդոնացիք, Հունաց, Բաբիլոնացոց*** (62), ***Լիդացվոց*** (1): Այս շարքում համաբանությամբ գրաբարյան հոգնակի ձևերով են ներկայանում ***Օսմանցիք***//***Օսմանցոց,Արաբք, Եվրոպացոց, Ռուսաց*** (63) բառաձևերը, որոնք ետգրաբարյան շրջանի փոխառություններ են:

բ. Ասծվածաշնչյան անձնանունները՝ ***Առաքյալք***, ***Մարտիրոսք***, ***Մարգրեք*** (93):

Գրաբարյան հոգնակի ուղղական-սեռական հոլովաձևերի զուգորդումը «Վերք Հայաստանի» վեպում ոճական հնարանք է՝ նկարագրելու հայոց բնաշ-

խարհը, ինչպես՝ ***Բոլոր տիեզերք, հորիզոնք երկնից, գագաթք լերանց, սահանք բարձանց սկսեցին տապալիլ*** (123):

Գրաբարյան ուղղագրությամբ ձևերը Խ. Աբովյանը ներկայացրել է գրական հնչյունային ուղղագրությամբ, ինչպես՝ ***անվանիք*** (6), ***սիրելյաց*** (11), ***Հայրենյաց*** (25), ***թագավորաց*** (37):

3. Բարբառային ձևերը կազմվել են լեզվական տարբեր կաղապարներով.

ա. «Միավանկ անհնչյունափոխ հիմք + ***ը*** գաղտնավանկ + ***ներ»*** – ***սիրտըներ***, ***հաքըներ*** (11), ***մազըները*** (11), ***ուսըներ*** (11), ***գորքըներ*** (137): Նման կաղապարով են գործածվում նաև ***մոտ, հետ*** կապերի հոգնակիները՝ ***մոտներին*** (9), ***հետըներ*** (12):

բ. «Միավանկ հնչյունափոխված հիմք + ***ը*** գաղտնավանկ + ***ներ»*** – քթըներ (11), կոըներ (151), մորըներ (11)[6]:

գ. «Բազմավանկ հնչյունափոխված հիմք + ***ը*** գաղտնավանկ + ***ներ» լեզվըներ*** (56), ***առվըներ*** (9), ***գլխըներ*** (54), ***միրքըները*** (10),***կերակըրներ*** (11):

դ. «Բազմավանկ հնչյունափոխված հիմք + ներ» ***կտրներ*** (10),***պղնձներ*** (11): Սովորաբար նման կառույցներում առկա է լինում մեկ հնչյունափոխություն, սակայն ***ճղկներ*** (9) բառաձևում առկա է երկու հնչյունափոխություն, ինչպես՝ *ճյուղ+իկ+ներ*

Օրինակները փաստում են, որ «Վերք Հայաստանի» վեպի գոյականների հոգնակի թվի կազմության ժամանակ ավելի կենսունակ է ***ներ*** վերջավորությունը: Այս շարքում բացառություն է ***տարի*** բառի հոգնակի կիրառությունը ***տարերով հաց էին կերել*** (153) արտահայտության մեջ, ուր ***ի*** վերջնահնչյունի սղումով կատարվել է երկվանկ>միավանկ անցում, և գործածվել է ***եր*** վերջավորությունը:

Գյուղաշխարհի նկարագրություններում կամ հերոսների խոսքերում Խ. Աբովյանը կիրառում է «բարբառային հիմք + գրաբարյան ***ք*** հոգնակիակերտ» կաղապարը, որը մի դեպքում գումարվում է գրաբարյան բառաձևերին՝ ստեղծելով լեզվական զուգաձևություններ, ինչպես՝ ծառայք-***ծառեքն*** (6), մարդիկ-***մարդիք***[7](16), կանայք-***կնանիք*** (43), ճամփորդք-***ճամփորթք*** (179), իսկ մյուս դեպքում վաղ աշխարհաբարյան փոխառություններին, որոնք բնականաբար գրաբարյան համարժեքներ չունեն, օրինակ՝ ***փանջարեք*** (11), ***քեղխուդեք*** (23):

Բարբառային ձևերում հաճախադեպ են բաղադրյալ հոգնակերտներով[13; 82] բառաձևերը, որոնք դասակարգվում են իմաստային հետևյալ խմբերով.

- տեղանիշ գոյականներ – ***տանըցիք***//***տանըցոց*** (45, 63), ***գեղըցոնց*** (56), ***քանաքոցիք*** (10), ***հայաստանցիք*** (39):
- անձնանիշ գոյականներ – ***տղերք*** (45), ***աղջկերք*** (20): ***Էրեխա*** գոյականի

---

[6] Կցական լեզուներում հոգնակի թվի վերջավորությունները, որպես կանոն, նախորդում են հոլովական վերջավորություններին, և հոգնակիի վերջավորությունները գումարվում են ուղղականի հիմքին. այս ձևում հոգնակիի վերջավորությունը գումարվել է սեռականի հիմքին՝ ***մայր***>***մոր***:

[7] ***Մարդիք*** բառաձևը Խ. Աբովյանը կիրառել է նաև բարդություններում, ինչպես՝ ***տղամարդիք*** (43) ***մեծամարդիք*** (157):

հոգնակի ուղղականը կազմվում է միայն -***ք*** հոգնակիակերտով՝ ***էրեխեք*** (3), սեռական հոլովի հոգնակիակերտը գումարվում է հոգնակի ուղղականին՝ ***էրեխեքանց*** (3): Նման կաղապարով է կազմվել նաև ***Դալմեքանց ձորեր*** (88) հատուկ անվան առաջին բաղադրիչը, ինչպես նաև ***սատանեքանց*** (16), ***գյուլբեքանց*** (77) բառաձևերը:

Այսպիսով «Վերք Հայաստանի» վեպում գոյականների հոգնակիի կազմության եղանակները բազմազան են, նույնիսկ նույն բառը նույն հատվածում տարբեր հոգնակիակերտներով է ներկայացնում հեղինակը, ինչպես՝ ***ընկերք***//***ընկերներ*** (120):

Փոխանվանական կիրառությամբ գործածված բառերի հոգնակին ժամանակակից հայերենի տեսանկյունից կանոնավոր է, ինչպես՝ ***էկոռներ*** (10), ***գնացռներ*** (12), ***հաքածներ*** (29):

«Վերք Հայաստանի» վեպում, բացի վերը նշված հոգնակերտներից, կիրառվել նե նաև այլ վերջավորություններ, օրինակ ***ձի*** բառի հոգնակին կազմվում է -***ան*** վերջավորությամբ, ինչպես՝ ***ձիան*** (151), վերջինիս սեռական հոլովաձևում, սակայն, գործածվում է գրաբարյան ***ց*** հոլովակերտը, ինչպես՝ ***ձիանոնց*** (153):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974:
2. Աբովյան Խ., Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի, պատմական վեպ, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 1959:
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
4. Բակունց Ա., Խաչատուր Աբովյան, Երևան, Հայպետհրատ, 1955:
5. Գյուլբուդաղյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1988:
6. Եզեկյան Լ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1990:
7. Եզեկյան Լ., Գրիգոր Նարեկացի – Խաչատուր Աբովյան աղերսները, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան-Վանաձոր, 2005:
8. Եզեկյան Լ., Ռաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975:
9. Խաչատրյան Գ., Կոչական, Լեզու և լեզվաբանություն, հանդես 1, 2006, էջ 54:
10. Խլղաթյան Ֆ., Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Երևան, «Լույս», 1988:
11. Մուրադյան Հ., Դերենիկ Դեմիրճյան, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1961:
12. Չարենց Ե., Դեպի լյառը Մասիս, Հատընտիր, Երևան, «Սովետական գրող», 1987:

13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974:
14. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972:
15. Գուրգեն Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009:

Грамматические особенности существительного в историческом романе «Раны Армении»

Черчинян Техмина
ВГУ, Армянский язык и литература, 4-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Л. Петросян

Резюме

Ключевые слова: *существительное, Хачатур Абовян, Раны Армении, исторический роман*

В романе «Раны Армении» способы образования множественного числа существительных разнообразны: одно и то же слово в одном и том же отрывке может быть представлено разными формами множественного числа. Множественное число местоименных слов в произведении соответствует нормам современного армянского языка.

Grammatical Features of the Noun in the Historical Novel "Wounds of Armenia"

Cherchinyan Tehmina
VSU, Armenian Language and Literature, 4th year
Academic Supervisor: L. Petrosyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *noun, Khachatur Abovyan, Wounds of Armenia, historical novel*

In the novel "*The Wounds of Armenia*", the ways of forming the plural of nouns are diverse; the same word in the same excerpt can be presented in different plural forms. The plural form of pronominal words in the work adhere to the norms of modern Armenian.

Ածական նորաբանությունները Հ. Սարուխանի ստեղծագործություններում

Պողոսյան Գայանե
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *արդի հայ գրականություն, նորաբանություն, ածական-նորաբանություն, ներշարահյուսական արտահայտություն*

Նորաբանությունները համալրում են լեզվի բառային կազմը և դրանով իսկ լեզվի զարգացման շարժիչ ուժերն են: Է. Աղայանի բնորոշմամբ՝ «լայն առումով նորաբանություն է կոչվում լեզվական ամեն մի նոր իրականություն կամ իրողություն: Նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն (իդիոմ), բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն» [2, 169-170]: Նորաբանությունները նա բաժանում է երկու կարգի՝ ընդհանրացնող և մեկուսացած: «Մեկուսացած նորաբանություններ են այն բոլոր բառերը, որոնք գործածվում են այս կամ այն գրվածքում, բայց կրկնվող գործածություններ չեն ունենում, հետևաբար և՝ չեն ընդհանրանում և չեն անցնում բառապաշարի գործուն շերտին»: Մեկուսացած նորաբանություններից են ստեղծագործական կամ հեղինակային նորաբանությունները [2, 170]: Լ. Եզեկյանը անհատական նորաբանությունները անվանում է նաև հեղինակային նորակազմություններ, քանի որ «սրանք ունեն միայն անհատական բնույթ և իրենց ծագումով պատկանում են միայն տվյալ հեղինակին: Նշված բառերը ստեղծվում են որոշակի շարժառիթներով և կազմվում տվյալ գրական լեզվում գործող բառակազմական միջոցներով»: Դրանք «նախ ստեղծվում են խոսքի արտահայտչականության, պատկերավորության համար, ապա՝ անշուշտ, նաև նպաստում են գրական լեզվի բառապաշարի հարստացմանը» [3, 164-165]:

Հեղինակային նորաբանություններով հարուստ է նաև արդի հայ պոեզիան, որի վառ ներկայացուցիչներից է Հրաչյա Սարուխանը՝ 20-րդ դարի 60-70-ական թվականներին գրականություն մուտք գործած լավագույն բանաստեղծներից մեկը:

Վ. Փիլոյանը Սարուխանի մասին գրում է. «Բանաստեղծության մեկ այլ առաքելություն էլ հավերժականի նորումն է, ասելիքը նոր ձևի մեջ դնելը, ասել է՝ ասելիքի նորելը: Եթե միայն ու միայն պահպանողական գիտակցենք Հր. Սարուխանին, ապա կտեսնենք նրա արվեստի միայն մի կողմը: Այնինչ կայացող ամբողջության մեջ նաև նորի համառ ու անդադրում փնտրտուքը կա՝ որպես ձևի որոնում, թեմայի գուշակություն, բառաստեղծում, վերնագրի պոետիկա...» [9, 201-202]:

Հ. Սարուխանը հեղինակել է բազմաթիվ նորակազմություններ, որոնք նորաբանություն են թե՛ բովանդակային, թե՛ ձևային առումներով, քանի որ դրանք ոչ

միայն բառաբաղադրիչների նորովի համակցումներ են, այլև նոր ժամանակների անհատի նորովի և ինքնատիպ զգայություններ:

Բառարաններով և ժամանակակից համակարգչային որոնողական ծրագրերով առանձնացնելով Հ. Սարուխանի հեղինակային նորաբանությունները[1]՝ անդրադարձել ենք դրանցից առարկայի հատկանիշ անվանող բառերին՝ ածականներին, որոնք գերակշռող են գոյական և բայ նորաբանությունների համեմատ:

Նորաբանությունների ուսումնասիրության տեսակետից կարևոր է դրանց՝ բառաբաղադրիչների հատույթավորմամբ ուսումնասիրությունը՝ հեղինակային նոր իմաստի բացահայտման տեսակետից:

Ածական-նորաբանությունները հիմնականում բաղադրյալ կազմությամբ արտահայտություններ են, որոնք դասակարգել ենք՝ ըստ ներքերականական արտահայտությունների.

1. *«Գոյական + բայահիմք»* ձևաբանական մասնակաղապարով նորաբանություններ, որոնք, ըստ ներշարահյուսական կաղապարի, ենթադասակարգվում են հետևյալ ենթախմբերով.

▪ *«Ենթակա + ստորոգյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություններ, օրինակ՝ **ունքաբաց** (զվարթերես). *Մերթ* ***ունքաբաց*** *եմ, մերթ էլ ունքամած* [8, 205]: **Աստղածավալ** (աստղերով սփռված). *Մթնեց երկինքն* ***աստղածավալ*** [8, 218]: **Ծիսահորդ** (ծեսերով լեցուն, առատ). *Ժառանգելով մեր անցյալը* ***ծիսահորդ*** *Անծիսություն սերմանեցինք ճարահատ* [8, 243]: Նախադասության գլխավոր անդամների շարահյուսական ձուլումից բառայնացել են չեզոք սեռի արտահայտություններ, որոնցից **ունքաբաց** նորաբանությունը՝ որպես ստորոգելի, վերագրվել է հեղինակին՝ լրացնելով անձնանիշ լրացյալառու ածականների շարքը: **Աստղածավալ** նորաբանությամբ բնութագրվել է **երկինք** հասկացությունը, իսկ **ծիսահորդ** նորաբանությամբ՝ **մեր անցյալ** կապակցությունը, որ նշանակում է՝ նորաբանությունները լրացրել են իրանիշ լրացյալառու ածականների շարքը:

▪ *«Ուղիղ խնդիր + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություններ, օրինակ՝ **աճյունակիր** (աճյունը կրող). *Եվ թող օրինյալ լինի հողը* ***աճյունակիր*** [8, 33]: **Մորթեկիր** (մորթի կրող). *Ծառ իմ, բեր կիսենք գալիքն իմ անցյալ: Ոչ մերկամնա, ոչ էլ* ***մորթեկիր*** [8, 160]: **Եղերաժառանգ** (սուգը ժառանգած). *Արտասահմանում՝ բոլ բարեկամներ* ***եղերաժառանգ*** *մի ամբողջ Սփյուռք* [8, 206]: **Դիմավաճառ** (երկերեսանի). *Ահ,* ***դիմավաճառ*** *փողոցներ գծուծ* [8, 206]: **Առօրյամերժ** (առօրյան մերժող). *Ահ,* ***առօրյամերժ*** *այգեստաններ* [8, 206]: **Սնատես** (սին, դատարկ բաները տեսնող). *Ու թվում էր՝ չկայի... Սնահավատ ու* ***սնատես****, Երանի դուրս չգայի* [8, 166]: Նորաբանությունն-

[1] Նորաբանությունները առանձնացրել ենք՝ ուսումնասիրելով հետևյալ բառարանները՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» [7], «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» [5], «Արդի հայերենի բացատրական բառարան» [1], «Արդի հայերենի նորաբանությունների բառարան» [4], «Նոր բառերը» [6]: Որպես ուսումնասիրության աղբյուր վերցրել ենք Հ. Սարուխանի ստեղծագործությունների հավաքական ժողովածուն [8]:

ռում սեռի խնդիր սերող հիմքեր են պահանջել **կիր, ժառանգ, վաճառ, մերժ, տես** բայահիմքերը, որոնց հիմնականում կապակցվել են իրանիշ գոյականներ: Այս շարքում բացառություն են **առօրյա** և **սին** սերող հիմքերը, որոնք, լինելով ածական, գործածվել են գոյականաբար: Նորաբանությունները այս դեպքում նույնպես բաժանվում են անձնանիշ և իրանիշ լրացյալառու խմբերի, ինչպես՝ **աճյունակիր, մորթեկիր, դիմավաճառ, առօրյամերժ** նորաբանությունները կապակցվել են իրանիշ գոյականների, իսկ **եղերաժառանգ** և **սնատես** նորաբանությունները՝ անձնանիշ, որոնցից վերջինի վերագրումը կատարվել է ստորոգելիի միջոցով, քանի որ արտահայտվել է բաղադրյալ ստորոգյալի կազմում:

▪ *«Միջոցի անուղղակի խնդիր + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություններ, օրինակ՝ **ծիրանածուփ** (ծիրանի գույնով ծփացող). ***Ծիրանածուփ*** *դրոշիդ հովանու ներքո* [8, 144]: **Անձնառատ** (մարդկանցով լի). *Չեմ երկրպագում կյանքը մեկուսի, բայց և չեմ տանում քեֆերն* ***անձնառատ*** [8, 185]: **Կապկառատ** (կապիկներով լի). *Միթե մի այլ բան չգտար, որ* ***կապկառատ*** *աշխարհում այս հրաշքվեր ինձ* [8, 203]: **Հացաշաղախ** (հացով շաղախված). *Եվ գեղջկական սեղանի մոտ* ***հացաշաղախ*** *կզրուցենք քաղաքական հրաշքներից* [8, 227]: **Քնարազարդ** (երգով զարդարված). *Շուրջը՝ թղթեր* ***քնարազարդ,*** *որ սփռել էր Մուսան իր* [8, 288]: Նորաբանություններում միջոցի խնդիր լրացում են պահանջել **ծուփ, շաղախ, զարդ** բայահիմքերը և **առատ** ածականը, որոնց լրացրել են իրանիշ հասկացություններ: Նորաբանություններով բնութագրվել են իրանիշ գոյականներ:

▪ *«Հանգման անուղղակի խնդիր + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանության մեկ օրինակի ենք հանդիպել՝ **քնակարոտ** (քնին կարոտած). *Ուսանեցի նույնիսկ մահին՝ քունս տալով անքնության* ***քնակարոտ*** *թիկնապահին* [8, 213]: Նորաբանությունը կազմվել է ածականական բառակապակցության բառայնացմամբ, որը վերագրվել է **թիկնապահ** հասկացությանը՝ լրացնելով անձնանիշ հատկանիշների շարքը:

▪ *«Ներգործող անուղղակի խնդիր + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություններ, օրինակ՝ **դեղնաբորբ** (արևից վառված). *Ու տարածվում, ու սողում է, ողողում է ավազն իր մեջ Այս* ***դեղնաբորբ,*** *որբ ափերում ջրահեղձի ճիչը վերջին* [8, 14]: Ներկայացված նորաբանության բաղադրող հիմքը կրավորական սեռի իմաստով է վերականգնվում, որի լրացնող սերող հիմքն անուղղակի կերպով է հանդես գալիս որպես այդ գործողության կատարող:

▪ *«Անջատման անուղղակի խնդիր + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություն է **լաբիրինթապուրծ** (լաբիրինթոսից պրծած, ազատված) կազմությունը. *Նաքսոսը հիշեց, կծիկի թելով* ***Լաբիրինթապուրծ*** *Թեսևսին տմարդ* [8, 296], որով բնութագրվել է անձնանիշ հատուկ գոյական:

▪ *«Ձևի պարագա + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություն է **Մասսափայլ** (Մասիսի նման փայլող) կազմությունը,

ուր հեղինակը պահպանել է սերող հիմքի ուղղագրությունը. *Հարությանդ վկան եմ* ***Մասսափայլ*** *գերբով* [8, 137]: Նորաբանությամբ բնութագրվել է **գերբ** գոյականը:

▪ *«Պատճառի պարագա + լրացյալ»* ներշարահյուսական հարաբերությամբ արտահայտված նորաբանություններ են **տենդագալար** (տենդից գալարված). *Սպիներ կան բյուր, վերքեր կան բազում, և* ***տենդագալար*** *իմ շրթունքներից արնախնի խոսքեր են վազում* [8, 102]: **Նենգացնոր** (նենգությունից ցնորված). *Իսկ Վերակացուն, այն* ***նենգացնոր*** *Մի խմիչք ուներ միայն մեղսաջուր* [8, 149]: **Ոխացնոր** (վրեժից ցնորված). *Հանուն Գահի հրում են, հրում* ***ոխացնոր*** *Հավակնորդները նախագահի* [8, 209]: Նորաբանություններում պատճառի իմաստով սերող հիմք են պահանջել **գալար, ցնոր** բայահիմքերը, որոնցով կազմվում են կրավորակերպ չեզոք սեռի բայեր: Նորաբանություններով նույնպես բնութագրվել են իրանիշ լրացյալներ:

2. *«Գոյական + գոյական»* ձևաբանական մասնակաղապարով նորաբանություններ, որոնք դասակարգվում են *«հատկացուցիչ + հատկացյալ»* ներշարահյուսական իմաստ արտահայտող կաղապարով, օրինակ՝ **թախծահամ** (թախիծի համ ունեցող). *Ինչ է ուզում այսօր այս պատանին նիհար Եվ* ***թախծահամ*** *մորմոքն այս իրական* [8, 105]: **Սարսռաբույր** (սարսուռի բույր ունեցող). ***Սարսռաբույր*** *են բողբոջ ու սաղարթ* [8, 178]: **Առասպելաշունչ** (առասպելի շունչ ունեցող). *Հեղեղել, բայց, ախ, մեզ չենք շեղել* ***Առասպելաշունչ*** *բարք ու ոճով...* [8, 300]: **Աշնանաթույր** (աշնան գույն ունեցող). *Թեև սաղարթն* ***աշնանաթույր*** *դեռ կարոտ է շող-կաթիլի* [8, 252]: Ներկայացված կաղապարով նորաբանությունները նույնպես իրանիշ լրացյալառու են, որոնցով բնութագրվել են **մորմոք, բողբոջ ու սաղարթ, բարք ու ոճ**, **սաղարթ** հասկացությունները:

3. *«Ածական + գոյական»* ձևաբանական մասնակաղապարով նորաբանություններ, որոնք բնութագրվում են *«որոշիչ + որոշյալ»* ներշարահյուսական իմաստ արտահայտող կաղապարով. **վավաշամարմին** (վավաշոտ մարմին ունեցող). *Վայ քեզ՝ Կայենիդ* ***վավաշամարմին*** [8, 206]: **Բաղձաբույր** (բաղձալի բույր ունեցող). *Ձեր պտուղները,* ***բաղձաբույր*** *սերմեր, Դեռ կճաշակեն ազգ ու ժողովուրդ* [8, 157]: Այս կաղապարով նույնպես Հ. Սարուխանը բնութագրել է հատկանուն՝ այս դեպքում աստվածաշնչյան հերոս, երկրորդ դեպքում բնութագրվել է **սերմ** իրանիշ հասկացությունը:

Նորաբանությունների մի մասն էլ բարդածանցավոր նորաբանություններն են, որոնք դասակարգվում են՝

▪ *Սկզբնաձև ունեցող նախածանցավոր բառեր*, օրինակ՝ *Երբ դողանջում էր Քարտեզագրված ինքնությունը մեր, Տքնությունը մեր* ***անքարտեզագիր*** [8, 35]: ***Անկենսատրոփ*** *կյանքիս անձավից Սրտիկս կուլար, հոգիս կաղաչեր...* [8, 202]:

▪ *Սկզբնաձև ունեցող վերջածանցավոր բառեր*, օրինակ՝ ***Արբեմոլային*** *ոգիների հետ Խավար անկյունում կնստեմ երկար* [8, 126]: *Եվ խորհուրդ տալիս՝* ***պոզուպոչավոր*** *օյիններ խաղալ համայնական* [8, 312]:

▪ *Սկզբնաձև չունեցող նախածանցավոր բառեր*, օրինակ՝ *Դագաղահար շիրմափոս՝* ***անդրնակիր****, անլուսամուտ* [8, 169]: *Թող ունկի նման* ***անայբբենատես***

անընթեռնելի կայտառքդ լսեմ [8, 476]: *Մինչ* ***ճյուղաճռճիկ*** *ճախրով ճկճկար, Խորխորատ օրվա նշույլ իսկ չկար* [8, 262]:

▪ *Սկզբնաձև չունեցող վերջածանցավոր բառեր,* օրինակ՝ ***Կաթնաշաղոտ*** *լույսի հետ Փառք տուր Աստծուն, որ դեռ կաս* [8, 200]: *Դիմակներով մոր ու մանկան* ***Քառաստինք*** *լույսի ֆոնին...* [8, 56]:

Հ. Սարուխանի նորաբանությունների մեծ մասը ածական-նորաբանություններ են, որոնք հանդես են եկել որպես անձնանիշ և իրանիշ գոյականների լրացումներ: Ածական-նորաբանությունները հանդես են եկել **«գոյական + բայահիմք», «գոյական + գոյական», «ածական + գոյական»** ներքերականական կազմությամբ: Կատարելով ձևաբանական և իմաստային քննություն՝ պարզ է դառնում, որ հեղինակը նորաբանությունները կերտել է լեզվում առկա գործուն ածանցման և բառաբարդման հիմնական սկզբունքներով:

Ածական նորաբանությունները Հ. Սարուխանի բանաստեղծություններում հանդես են եկել կապակցելիական ինքնատիպ հնարավորություններով. դրանցով բնութագրվել են ոչ միայն հասարակ գոյականներ, այլ նաև հատուկ անուններ, որոնց որոշչառությունը հատուկ է հատկապես գեղարվեստական խոսքին: Նորաբանություններով են բնութագրվել նաև ժողովրդախոսակցական արտահայտություններ, որոնք հեղինակային նոր բնորոշումներ են լեզվական ավանդական արտահայտություններին: Այսպիսով նորաբանությունների ներ և արտաքերականական հարաբերությունների լեզվական բացահայտումը պարզաբանում է այն գեղարվեստական և խոսքային իմաստը, որ հեղինակը արտահայտում է նոր կազմությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, 1616 էջ:
2. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, «ԵՊՀ» հրատ., 1984, 372էջ:
3. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, «ԵՊՀ» հրատ., 2007, 402 էջ:
4. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 2002, 492 էջ:
5. Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1969, 829 էջ:
6. Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Նոր բառեր, Ա-Գ պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 196 էջ:
7. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևան, «ԵՊՀ» հրատ., 1979, 1140 էջ:
8. Սարուխան Հր., Վախճանից էլ պարզ, Երևան, «Անտարես» հրատ., 2018, 552 էջ:
9. Փիլոյան Վ., Ակնարկներ արդի հայ գրականության, Երևան, «Լուսակն» հրատ., 2018, 408 էջ:

Прилагательные-неологизмы в работах Г. Сарухана

Погосян Гаяне
ВГУ, Армянский язык и литература, 3-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Л. Петросян

Резюме

Ключевые слова: *современная армянская литература, неологизм, прилагательное-неологизм, внутрисинтаксическое выражение*

Неологизмы и новообразованные слова дополняют словарный состав языка и, таким образом, являются движущей силой языкового развития. Неологизмами богата и современная армянская литература, одним из ярких представителей которой является Грачья Сарухан, один из лучших поэтов, вошедших в литературу в 60-70-х годах 20 века. Большинство неологизмов Г. Сарухана представляют собой прилагательные-неологизмы, которые выступали в качестве дополнений собственных и нарицательных имен существительных.

Adjective-Neologisms in the Works of H. Sarukhan

Poghosyan Gayane
VSU, Armenian Language and Literature, 3rd year
Academic Supervisor: L. Petrosyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *modern Armenian literature, neologism, adjective-neologism, intrasyntactic phrase*

Neologisms and newly formed words complement the vocabulary of the language and, thus, are the driving force of language development. Modern Armenian literature is also rich in neologisms, with one of its brightest representatives being Hrachya Sarukhan, a renowned poet who emerged in the 1960s and 1970s of the 20th century. Most of the neologisms of H. Sarukhan are adjective-neologisms, which appeared as proper and common nouns complements.

Վ. Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի երկու հրատարակությունները (զուգադիր քննություն)

Սարգսյան Անուշ
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Գ. Հովիվյան

Հանգուցային բառեր. *Վահագն Գրիգորյան, «Ժամանակի գետը», վեպ, հրատարակություն, վերահրատարակություն, շեղագիր, օրինակներ, փոփոխություն*

Վ. Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպը ինքնատիպ ստեղծագործություն է թե՛ իր բովանդակությամբ, թե՛ կառուցվածքով, թե՛ կերպարային համակարգով և թե՛ պատմագեղարվեստական նշանակությամբ: Վեպը տպագրվել է 2008 թ. «Զանգակ-97»-ում: 2009 թ. Վ. Գրիգորյանի այս ստեղծագործությունը արժանացել է պետական մրցանակի: 2017 թ. գիրքը վերահրատարակել է «Անտարես» հրատարակչատունը: Հարություն Պէրպէրյանն իր «Վահագն Գրիգորեանի Ժամանակի գետը» հոդվածում նշում է. ««Անտարես» հրատարակչատունը իր «պարտադիր ընթերցանութիւն» շարքին մեջ վերջերս վերահրատարկեց Վահագն Գրիգորեանի 1908-ին լոյս տեսած «Ժամանակի գետը» (1) հատորը, որ ամբողջութեամբ Ցեղասպանութիւնն, անոր զոհերը, անոնց եւ իրենց յաջորդներուն կեանքը, մինչեւ՝ ներկայ ժամանակները, եւ հայ-թրքական յարաբերութիւնները լայն պաստառի մը վրայ կը ներկայացնէ ու կը քննարկէ» [6]:

Կասկածելի է մեջբերման մեջ հիշատակված տարեթիվը՝ 1908 թ., քանի որ վեպը հրատարակվել է 2008-ին:

Հայ գրականության և ընդհանրապես համաշխարհային գրականության մեջ շատերն են անդրադարձել հայի կրած զրկանքների, տառապանքների, պայքարող տեսակի խնդրին: «Ցեղասպանությունը համընդհանուր ողբերգություն է ինչպես մարդու, այնպես էլ հումանիզմի առումով, և սա երկրիս վրա ապրող մեզ բոլորիս դարձնում է պատասխանատու»,– գրում է Կուպուշինսկին «Իշխանության պաթոլոգիաներ» («Patologias de poder») վերտառությամբ հոդվածում» [5, 171]:

Վ. Փիլոյանն իր «Ակնարկներ արդի հայ գրականության» աշխատության մեջ հիշատակել է հայ գրականության մեջ որոշ անդրադարձներ այս թեմային: Թուրքական գրականության մեջ էլ կան երկեր՝ գրված այս թեմայով:

Հայոց ցեղասպանությունը հայ ժողովրդի չսպիացող վերքն է, ուստի պետք է. «Հիշել զուսպ: Ապրել՝ զորանալով: Ապրել՝ անգամ նահատակվածներին ապրեցնելով: Ապրել՝ հաղթելու համար: Հաղթել՝ ապրեցնելով» [7, 78]:

Ուսումնասիրելով Վ. Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի վերաբերյալ գրված հոդվածները՝ նկատում ենք, որ գրականագետները վեպն ուսումնասիրել են տարբեր տեսանկյուններից: Նրանք անդրադարձել են վեպի գեղարվեստական հատկանիշներին, վեպի և ընթերցողի կապի բացահայտմանը, կառուցվածքային

առանձնահատկություններին, երկի մեջ երևակայության դերին, կերպարների բնավորությունների խնդրին և այլն: Ուստի մենք նպատակահարմար գտանք անդրադառնալ այս գրքի երկու հրատարակությունների համեմատությանը: Մեր խնդիրն է բացահայտել հրատարակություններում առկա տարբերությունները:

Հետազոտությունն իրականացնելու համար ուսումնասիրել, համեմատել ենք երկու գրքերը:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել և դասակարգել վեպի վերահրատարակություններում տեղ գտած տարբերությունները:

Ուսումնասիրելիս նկատել ենք, որ հակասություններ կան անգամ վավերական տվյալների մեջ, որը կարծեք թե կասկածի տակ է դնում դրանց վավերական լինելու հանգամանքը:

Հակասությունները նկատվել են ոչ միայն գրականագիտական, այլև լեզվաբանական ասպարեզներում, մասնավորապես հնչյունային, բառային, կետադրության ոլորտներում:

Առաջին հերթին հակասություններն առաջացել են շեղագիր տեքստերում: Նույն նախադասությունը կամ բառակապակցությունը մի դեպքում շեղագիր է, մյուսում՝ ոչ: «Այս շեղագիր տեքստերը 1915-ից մինչև այսօր շարունակվող տեղեկատվական պատերազմի խորհուրդ ունեն»,– գրել է Արմեն Ավանեսյանը [3]:

«Ո՛վ արդարություն, թքնեմ ես քո ճակատին», մեկ ուրիշն էլ՝ անկասկած ավելի իրատես արձանագրում է. «Սա գիրք չէ բառիս սովորական իմաստով: Ո՛չ: Սա երկարուձիգ վիրավորանք է, թուք արվեստի մռութին...» (տե՛ս Ժգ 2008, 8) մեջբերման մեջ *մեկ ուրիշն էլ՝ անկասկած ավելի իրատես, արձանագրում է՝* հատվածը առաջին հրատարակության մեջ շեղագիր չէ, մինչդեռ 2-րդ հրատարակության մեջ շեղագիր է: «Այնտեղ, որտեղ իսրայելական դեսպանություն կա, Թուրքիան կարող է համարել, որ երկրորդ դեսպանություն ունի» (տե՛ս Ժգ 2008, 19 և Ժգ2017, 19) միայն վերահրատարակության մեջ է շեղագիր: «Անհնար է, որ մեր պապերը հանցագործ եղած լինեն» (տե՛ս Ժգ 2008, 20 և Ժգ 2017, 20) նախադասությունը շեղագիր է և՛ երկրորդ, և՛առաջին հրատարակության մեջ, նույնիսկ «Անհնար է...» հատվածը շեղագիր չէ, իսկ շարունակությունը շեղագիր է:

Հաջորդ օրինակն է. «...Մարիամը դուռը, իհարկե, չէր բացում տոնականորեն պճնված գիշանգղերի առաջ...» (տե՛ս Ժգ 2008, 48 և Ժգ 2017, 49) նախադասության *«գիշանգղերի»* բառը վերահրատարակության մեջ շեղագիր է:

Գրքում հիշատակված է «Հայկական աքսոր» գրքույկը, որը շեղագիր է վերահրատարակված տարբերակում:

Վերը նշված օրինակներից եզրակացնում ենք, որ վերահրատարակված տարբերակում մի շարք տեքստեր շեղագիր են դարձել, սակայն հանդիպում ենք նաև հակառակ գործընթացին: Կան օրինակներ, որոնք, առաջին հրատարակության մեջ շեղագիր լինելով, վերահրատարակվելուց հետո գրվել են սովորական տառատեսակով: Նշենք այդպիսի օրինակներ.

1. «Թուրքերն ու հայերը միշտ ապրել են համերաշխ, առանց ազգային կրոնական հակամարտության» (տե՛ս Ժգ 2008, 98 և Ժգ 2017, 103):

2. «– 1915, մայիս, 30: Հրաման թիվ այսինչ: Ներքին գործոց և ռազմական նախարարություններին...» (տե՛ս Ժգ 2008, 104 և Ժգ 2017, 109):

3. «...հայ ժողովրդի նկատմամբ թույլ տրված անարդարությունները հարուցելու հարցը անձամբ ընկեր Ստալինն է բարձրացրել» (տե՛ս Ժգ 2008, 213 և Ժգ 2017, 224):

4. «...ուրեմն, Գարեգին Բ-ի «արտահայտությունը» (ցեղասպանությունը իրողություն է, վիճաբանության առարկա չէ, և Թուրքիան պետք է դա ընդունի)...» (տե՛ս Ժգ 2008, 369 և Ժգ 2017, 388):

5. «1890-1923 թթ. ցավառիթ պատահարները հեչ բան են հազար տարվա երջանիկ «համակեցության» կողքին» (տե՛ս նույն տեղում): Նախադասության մեջ «համակեցություն» բառը շեղագիր է:

6. «Թուրք եմ՝ ազնիվ եմ, աշխատասեր» (տե՛ս Ժգ 2008, 389 և Ժգ 2017, 410):

Նշենք շեղագիր բառակապակցություններից օրինակներ.

1) «Foyer national armenien» (տե՛ս Ժգ 2008, 116 և Ժգ 2017, 122),
2) «Թուրքիան միայն թուրքերին» (տես Ժգ 2008, 111 և Ժգ 2017, 152),
3) «20 դասակարգի զորահավաք» (տե՛ս Ժգ 2008, 141 և Ժգ 2017, 155),
4) «Ճահճային գազ և բուրումնավետ գազային նյութեր» (տե՛ս Ժգ 2008, 361 և Ժգ 2017, 381):

Համեմատելիս պարզեցինք, որ մի շարք հատվածներ բացակայում են վերահրատարակված տարբերակում: Այսպես՝

1. Վեպն սկսվում է Իոսիֆ Բրոդսկու գրքից մեջբերումով: Առաջին հրատարակության մեջ մեջբերումից առաջ գրված է վեպի վերնագիրը, վերահրատարակված տարբերակում վերնագիրը բացակայում է:

2. «Եթե մի երկու դար առաջ (խանական ժամանակներում) հինգերորդ փողոցի նշանավոր կառույցը «Տեր-Մեսրոպյան» առևտրական տունն էր, ռուսների գալուց հետո կամաց-կամաց անկում ապրած և շուրջ հարյուր տարում դարձած, ճիշտ է, դարձյալ Տեր-Մեսրոպյանների, բայց վարդապետների ու քահանաների բույն (այնտեղ ապրել է նույնիսկ մի ծայրագույն վարդապետ), իսկ խորհրդային իշխանության գալով, երբ քահանա-վարդապետներին Սիբիր քշեցին, բանվորական ակումբի պես մի բան էր, որտեղ իրենց ուրախ ժամանցն էին անցկացնում խանդավառ կոմերիտ-կոմերիտուհիները, մինչև որ հասունացան, թև առան և նույնիսկ Սիբիր թռան, դրանից հետո (անհատի պաշտամունքի պատկերազերծումից հետո) երկհարկանի այդ շինությունը փոփոխական հաջողությամբ զբաղեցնում էին թեև պետական հսկողության տակ գտնվող, այնուհանդերձ, հասարակական կոչվող տարբեր կազմակերպություններ, մինչև որ վերակառուցման շրջանում թաթը նրա վրա դրեց անունով և գործունեությամբ էլ ավելի անհասկանալի մի կազմակերպություն, համաձայն ցուցանակի՝ «Հասարակական

զարգացման կամավոր ընկերությունը» (տե՛ս Ժգ 2008, 10 և Ժգ 2017, 10):

Այս երկարաշունչ նախադասությունը կրճատվել է վերահրատարակության մեջ, և մի շարք հատվածներ դուրս են մնացել. այդ հատվածներն են. «... և շուրջ հարյուր տարում դարձած, ճիշտ է, դարձյալ Տեր-Մեսրոպյանների, բայց վարդապետների ու քահանաների բույն (այնտեղ ապրել է նույնիսկ մի ծայրագույն վարդապետ» և «...երբ քահանա-վարդապետներին Սիբիր քշեցին...»):

Իսկապես երկարաշունչ են Գրիգորյանի նախադասությունները: Մի հարցազրույցի ժամանակ նա ևս հաստատել է այդ փաստը. «Երկար եմ մտածում, երկար եմ գրում...» [1]:

3. «Բայց, իզուր չեն ասել՝ անունը տուր, փետը ձեռդ առ» (տե՛ս Ժգ 2008, 12):

4. Վեպի վերջում նշված են տարեթվեր. «2005, հունվար – 2008, հունվար» (տե՛ս Ժգ 2008, 500), որը նշանակում է, որ այդ տարիներին է ստեղծել իր վեպը:

Վ. Գրիգորյանը իր բոլոր աշխատանքների վերջում գրում է ստեղծագործությունների գրության տարեթվերը: Վերահրատարակված տարբերակում դրանք բացակայում են:

5. Գրքի վերջին էջում հայերենով և անգլերենով գրված է հեղինակի անունը, ազգանունը, ստեղծագործության վերնագիրը, ժանրը: Վերահրատարակված տարբերակում ժանրը բացակայում է («վեպ, novel») (տե՛ս Ժգ 2008, 502 և Ժգ 2017, 527):

6. Հետազոտության ընթացքում նկատվել են նաև այնպիսի օրինակներ, որ ավելացվել են վերահրատարակված տարբերակում: Նշենք այդպիսի օրինակներ.

1) Վերահրատարակված տարբերակը հանձնարարվում է որպես պարտադիր ընթերցանություն:

2) Առաջին հրատարակության մեջ գրքի վերջում նշվում է. «Հեղինակն իր երախտագիտությունն է արտահայտում Թեհրանի «Հանդես» պարբերականի գլխավոր խմբագիր Վարուժ Սուրէնեանին, բեմադրիչ Սերժ Մելիք-Հովսեփեանին և օրիորդ Մելինե Փափազեանին այս գրքի ստեղծման ընթացքում ցուցաբերած բարեկամական աջակցության համար» (տե՛ս Ժգ 2008, 501):

Հակասությունները նկատվում են նաև էջերի քանակի մեջ: 2008 թ. հրատարակված տարբերակը բաղկացած է 504 էջից, 2017 թ. վերահրատարակվածը՝ 528: Էջերի տարբերությունները առաջացել են տառաչափի փոփոխության հետևանքով, այդ տարբերությունը սկսվում է առաջին հրատարակության 31-րդ էջից, երկրորդ հրատարակության մեջ 32-րդ էջում է գրված նույն տեքստը:

Աշխատանքը իրականացնելու ընթացքում հակասություններ են նկատվել նաև ենթագլուխները միմյանցից առանձնացնող նշանների միջև. աստղանիշերը փոխարինվել են կետերով:

Վեպի վերահրատարակության մեջ կատարվել են նաև սխալների ուղղումներ, այսպես. «Այդ հազարավորների մեջ էին նաև ամուսնացած քույրերն իրենց երեխաների, սկեսուր-սկեսրայրների, քենիների, անչափահաս տեգրերի հետ»

(տե՛ս Ժգ 2008, 17), վերահրատարակված տարբերակում «քենիների» բառը փոխարինվել է «տալերի» բառով: Եվ վեպի մյուս հատվածներում «քենի» բառը փոխարինվել է «տալ»-ով:

Հանդիպում է նաև մի այնպիսի օրինակ, որի մեջ կատարվել է թվային փոփոխություն. առաջին տարբերակում. «...հունվարի երկրորդ կեսին Բաքվի ճանապարհով Սիբիր ուղևորվեց 1200 հայ սպաների շարասյունը» (տե՛ս Ժգ 2008, 205), երկրորդ տարբերակում՝ «1400 հայ սպաների շարասյունը» (տե՛ս Ժգ 2017, 216):

Վեպում կա թուրքերեն արտահայտություն, որի բացատրությունը առաջին հրատարակության մեջ տրվում է, իսկ երկրորդ հրատարակության մեջ՝ ոչ: Այդ արտահայտությունն է՝ «(Բեն յալնըզ գելդիմ... բեն յալնըզ գելդիմ*...)» (տե՛ս Ժգ 2008, 354-355), որ նշանակում է. «Ես մենակ եմ եկել» (տե՛ս նույն տեղում):

Առաջին հրատարակության գրքի կազմի վերջում գրված են հեղինակի նախորդ երկերը՝ նշված, թե ինչ լեզուներով են տպագրվել, որ գործերն են էկրանավորվել: Վերահրատարակված տարբերակում գրքի կազմի վերջում գրված է հեղինակի կենսագրությունը, և նշված են այն գրքերը, որոնք արժանացել են մրցանակի:

Գրքերը տարբերվում են նաև չափերով. երկրորդ հրատարակված գիրքը մեծ է, իսկ առաջինը՝ փոքր:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ առաջին հրատարակության գրքի կազմի վերջում տեղադրված Վ. Գրիգորյանի նկարը, որի հեղինակը Ա. Եղիազարյանն է, երկրորդ հրատարակության մեջ փոխված է նկարը:

Այսպիսով՝ գիտական աշխատանքը կատարելիս հանգեցինք մի շարք եզրակացությունների՝

ա) փոխված է գրքի կազմը,

բ) փոփոխություններ կան շեղագիր տեքստերում,

գ) մի շարք հատվածներ կրճատվել են վերահրատարակության մեջ,

դ) որոշ հատվածներ ավելացվել են վերահրատարակված տարբերակում,

ե) նկատելի են տարբերությունները էջերի քանակներում,

զ) չնայած նշյալ փոփոխություններին՝ վեպի բովանդակությունը չի փոխվում,

է) տարբերություններ են նկատվել շեղագիր տեքստերի քանակի մեջ:

Այսպես՝ առաջին հրատարակության մեջ շեղագիր տեքստերի քանակը 209 է, վերահրատարակված տարբերակում՝ 199: Նշենք, որ մի շեղագիր նախադասությունը կամ բառակապակցությունը մի քանի անգամ կրկնվում է վեպում:

Իր հարցազրույցներից մեկում հեղինակը վեպի մասին ասել է. «Նախ ասեմ «Ժամանակի գետը» երևի իմ առաջին գիրքն էր, որ ես արդեն իմ վեպը կառուցեցի կոնկրետ, որոշակի պատմական իրադարձությունների ֆոնի վրա: Սովորաբար ես գերդասում էի էսպես ասած լրիվ ազատությունը, անկախությունը, ինչպես չեմ հիշում ո՞ր անգլիացի հեղինակն էր վաղուց ասել. «Գրողը հորինում ա, բայց էնպես, որ ավելի իրական թվա, քան իրականությունը»: Ես էդ բանին էի էսպես

ասած հետևում, բայց տվյալ դեպքում «Ժամանակի գետում» հակառակ լրիվ ընթացք ընդունեց, ես պատմական իրադարձություններին անդրադարձա, մեր ժողովրդի, Հայաստանի համար շատ էական, կարևոր, և՛ երեկվա, և՛ այսօրվա, և՛ վաղվա համար կարևոր իրադարձության...» [1]:

Ճիշտ է նկատել Ժենյա Քալանթարյանը. «... 2008 թ. լույս տեսած «Ժամանակի գետը» գրքով Գրիգորյանը հարստացնում է ժամանակակից հայ արձակի ժանրային տեսականին՝ որակական նոր մակարդակով վերակենդանացնելով գեղարվեստական տարեգրության ժանրը» [8]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարձր գրականություն Արքմենիկ Նիկողոսյանի հետ: Վահագն Գրիգորյան:
2. Ավանեսյան Արմեն, Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի պոետիկայի մի քանի հարցեր, Գրականագիտական հանդես, ԻԱ, 2020-2, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, «Արմավ» հրատարակչություն, Երևան, 2020, 285 էջ:
3. Գրիգորյան Վ., Ժամանակի գետը, Երևան, «Անտարես» 2017, 528 էջ:
4. Գրիգորյան Վ., Ժամանակի գետը, Երևան, «Զանգակ-97», 2008, 504 էջ: Շարադրանքի մեջ 1-ին հրատարակությունից մեջբերումների էջերը նշվում են Ժգ 2008 հապավմամբ՝ նշելով էջը, իսկ 2-րդ հրատարակությունը՝ Ժգ 2017 հապավմամբ:
5. Մեջբերումն ըստ՝ Կարապետյան Ս., Հայոց ցեղասպանության թեման իսպանական արձակում, էջ 171: https://shia_kcenter.sci.am: Հասանելի է 03. 07. 2022 թ.:
6. Պէրպէրեան Յ.: Վահագն Գրիգորյանի Ժամանակի գետը: Ազդակ օրաթերթ, 2013, Օգոստոսի 24: https://www.aztagdaily.com: Հասանելի է 03. 07. 2022 թ.:
7. Փիլոյան Վ., Ակնարկներ արդի հայ գրականության, Երևան, «Լուսակն», 2018, էջ 78:
8. Քալանթարյան Ժ., Ապագան սկսվում է անցյալից: «Գրական թերթ», 2009, #39 (3003), էջ 6:

Две публикация романа В. Григоряна «Река времени» (параллельное исследование)

Саргсян Ануш
ВГУ, Армянский язык и литература, магистратура, 2-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Г. Овивян

Резюме

Ключевые слова: *Ваагн Григорян, «Река времени», роман, издательство, переиздание, курсир, примеры, изменение*

В отрывке сделано параллельное изучение текстов публикаций романа «Река времени» 2008 и 2017-ых годов и вынесены, выявлены и отмечены различия. В наших исследованиях мы отошли от рассмотрения художественных и исторических аспектов, сосредоточив внимание на тексте как центре романа.

Two Editions of V. Grigoryan's “The River of the Time” (Parallel Examination)

Sargsyan Anush
VSU, Armenian Language and Literature, MA, 2nd year
Academic Supervisor: G. Hovivyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summay

Key words: *Vahagn Grigoryan, «The River of the Time», novel, publication, reprint, italic, examples, change*

The excerpt presents a parallel study of the texts from the 2008 and 2017 publications of the novel *The River of the Time*, highlighting and noting the differences between them. In our research, we set aside the artistic and historical aspects, focusing instead on the text as the central element of the novel.

Վերլուծական բարդությունները արդի հայալեզու մամուլում

Սիմոնյան Աննա
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Հ. Մելքոնյան

Հանգուցային բառեր. *վերլուծական բարդություն, արդի հայալեզու մամուլ, անվանական հարադրություններ, բայական հարադրություններ, կրկնավոր հարադրություններ*

Բառապաշարի զարգացումների ուսումնասիրությունը արդի լեզվանյութում եղել և մնում է արդիական, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտելու բառապաշարի արդի պատկերը և նրա զարգացման միտումները: Եվ քանի որ հիշյալ զարգացումներն առավելագույնս արտահայտվում են հատկապես հրապարակախոսական ոճում, ուստի այդ բնույթի ուսումնասիրությունների համար նախընտրելի է դառնում մամուլի տեքստում արտահայտված լեզվանյութը, ինչն էլ մենք հաշվի ենք առել սույն ուսումնասիրության լեզվանյութն ընտրելիս:

Երկու կամ ավելի հիմնական ձևույթների հարադրությամբ, համադրությամբ, ինչպես նաև հապավույթներով կազմված բաղադրությունները, որոնք արտահայտում են մեկ հասկացություն և հիմնականում ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր [4, 232]: Բարդությունները լինում են վերլուծական (հարադրական[1]), համադրական և հապավական: Վերլուծական են այն բարդությունները, որոնց բաղադրիչները գրվում են անջատ կամ գծիկով, համադրական են այնպիսիք, որոնց բաղադրիչները գրվում են միասին, և հապավական են այն ինքնատիպ կազմությունները, որոնց բաղադրիչները ոչ թե ձևույթներ են, այլ բառերի կրճատումներ՝ հապավույթներ [3, 327]: Հատկանշական է, որ ակադեմիական հրատարակության մեջ կրկնավորները ներկայացված են որպես անվանական հարադրության տեսակ [2, 259]: Է. Աղայանը «վերլուծական բարդություններ» եզրույթի փոխարեն կիրառում է «վերլուծական բաղադրություններ»-ը՝ սրանք բաժանելով 4 խմբի՝ *հարադրական, կրկնավոր, կայուն բառակապակցություններ և հատվածական բաղադրություններ* [1, 221]:

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք ամփոփ կերպով ներկայացնել մեր հետազոտության արդյունքները, ինչի համար լեզվանյութը քաղել ենք ՀՀ պարբերականների՝ 2021 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների համարներից: Ընդգրկել ենք 4 անուն պարբերական՝ յուրաքանչյուրից հինգական օրինակով: Պարբերականներն են՝ **«Հայաստանի Հանրապետություն»**, **«Իրավունք»**, **«Առավոտ»**, **«Կրթություն»**: Արդյունքում մեր քննության դաշտում է եղել 20 համար պարբերական՝ 246 էջ ծավալով:

[1] Հոդվածում «հարադրական» և «հարադրություն» եզրույթները կիրառված են լայն՝ «վերլուծական», «վերլուծական բարդություն» իմաստներով:



Տրամագիր 1. Վերլուծական բարդությունների 3 տեսակների հաճախադեպության պատկերը

1. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանական հարադրությունները կարող են կապակցվել և՛ շաղկապների միջոցով, և՛ առանց շաղկապների: Առանց շաղկապների միանալու դեպքում սրանց բաղադրիչների միջև դրվում է միության գծիկ: Մեր ընտրանքում հանդիպել է 183 անուն վերլուծական կազմություն՝ դրսևորված 252 օրինակներով: Սրանցից 231-ը գծիկով գրվողներ են, որոնք կազմում են անվանական հարադրությունների 91,7 %-ը, իսկ մնացած 8,3 %-ը (21 օրինակ) կապակցված են համադասական շաղկապներով (*և, ու*):

1.1. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.1.1. Երկկողմ պետական, համայնքային, ազգային, լեզվական հարաբերություն արտահայտող բաղադրիչներով կազմություններ

Գծիկով գրվող անվանական հարադրություններից 54-ը ցույց են տալիս *երկկողմ պետական, ազգային, լեզվական հարաբերություն*: Սրանցից 32-ը գոյական են, 23-ը՝ ածական: **Գոյական** օրինակներից են՝ *Ավստրալիա-Մեծ Բրիտանիա-ԱՄՆ, Բաքու-Ջեյհան, Բերձոր-Քարվաճառ, Գորիս-Կապան, Գյանջա-Ղազախ-Իջևան-Դիլիջան-Հրազդան-Երևան, Երևան-Էրեբունի, Երևան-Մեղրի, Թեհրան-Բաքու-Թուրքիա-Ադրբեջան, Թուրքիա-Պակիստան-Ադրբեջան, Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան-Պակիստան* և այլն: **Ածական** օրինակներից են՝ *արցախա-ադրբեջանական, ամերիկա-ուկրաինական, ավստրո-հունգարական, արաբա-իսրայելական, թուրք-ադրբեջանական, թուրք-ազերիական, թուրք-հայկական, թուրք-հուդայական, թուրք-ռուսական, թուրք-սիրիական, հայ-ադրբեջանական, հայ-ամերիկյան, հայ-ավստրիական* և այլն:

1.1.2. Անձնանուն բաղադրիչներով կազմություններ

Անձնանուններով կազված հարադրությունները բավականին քիչ են՝ ընդամենը 5 օրինակ, և բոլորն էլ գործածվել են բառի ուղիղ ձևով: Դրանք են՝

Հովհաննես-Պողոս, Պուտին-Ալիև-Փաշինյան, Պուտին-Փաշինյան-Ալիև, Փաշին-յան-Լուկաշենկո, Փաշինյան-Պուտին:

1.1.3. Մասնագիտություններ, աստիճաններ և կոչումներ անվանող բաղադրիչներով կազմություններ

Այս խմբի բառերը կազմել են 8 օրինակ, որոնց մեջ կան թե՛ բառի ուղիղ ձևեր, թե՛ հոգնակիի կամ սեռական հոլովի բառաձևեր: Դրանք են՝ *ակադեմիկոս-քարտուղար, գրող-հրապարակախոս, դոկտոր-պրոֆեսոր, երգիչ-երգչուհիներին, ճարտարապետ-վերակազմող, բժիշկ-մասնագետների, գեներալ-լեյտենանտ, գեներալ-ֆելդմարշալ:*

1.1.4. Հոմանիշային, առնչակցական հարաբերություն ունեցող բաղադրիչներով կազմություններ

Այս շարքի բառերը բավականին շատ են՝ 29 օրինակ, որոնցից 17-ը բառի ուղիղ ձևեր են, իսկ մյուսները՝ կա՛մ հոգնակիի, կա՛մ թեք հոլովների բառաձևեր (սեռական, գործիական): Դրանցից են՝ *աճուրդ-վաճառք, արգելոց-թանգարան, արևելք-արևմուտք, արցունք-անձրևների, դիմում-հայտ, երգի-պարի, թանգարան-ինստիտուտի, խաչքար-կոթողներ, ծանոթ-բարեկամ, համալիր-կառույց, հարազատ-բարեկամ, հարավ-արևմտյան, հարավ-արևելք, հյուսիս-արևմուտք, հյուսիս-հարավ, հրշեջ-փրկարարական* և այլն:

1.1.5. Հականիշ հարաբերություն ունեցող բաղադրիչներով կազմություններ

Այս խմբի օրինակները բավականին քիչ են՝ 2 օրինակ՝ գոյականի սեռական և բացառական հոլովներով: Դրանք են՝ *հանձնման-ընդունման, քչից-շատից:*

1.2. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ

Անվանական հարադրությունների գերակշիռ մասը (91,7 %) գծիկավոր կազմություն ունի, իսկ մնացյալը՝ շաղկապավոր: Անջատ, առանց գծիկի անվանականներ չեն հանդիպել: Գծիկավորների մեջ էլ գերակշռում են գոյականները (79 %): Դերանունով կազմված անվանական հարադրություն չի հանդիպել:



Տրամագիր 2. Գծիկավոր անվանական հարադրությունների հաճախադեպությունը

1.2.1. Գոյական

Անվանական հարադրությունների մեծ մասը գոյական խոսքի մասով է արտահայտված: Շատերը կազմվել են ուղղական հոլովով և եզակի թվով, իսկ մյուսները՝ կա՛մ հոգնակի թվով, կա՛մ սեռական, բացառական, գործիական հոլովներով: Օրինակներից են՝ *ազգագրագետ-կոմպոզիտոր, ակադեմիկոս-քարտուղար, ահազանգ-բողոքները, ահազանգ-մտահոգություն, ամուրդ-վաճառք, ամիս-ամսաթիվ, անհոգություն-անձոխություն, անուն-ազգանուն, Ավստրալիա-Մեծ Բրիտանիա-ԱՄՆ, արգելոց-թանգարան, արևելք-արևմուտք, արցունք-անձրևների, ափսե-բաժակ, Բաքու-Ջեյհան, Բերձոր-Քարվաճառ, բժիշկ-մասնագետների, գեներալ-լեյտենանտ, գեներալ-ֆելդմարշալ, գյուղ-քաղաք, Գորի-Կապան, գործիք-սարքավորում, գործիք-սարքավորումներ, գրադարան-ընթերցարանի, գրող-հրապարակախոս, դասընթաց-մրցույթի* և այլն:

1.2.2. Ածական

Ածական խոսքի մասով կազմված անվանական հարադրությունները իրենց քանակով զիջում են գոյականով կազմվածներին: Սակայն այստեղ էլ տեսնում ենք, որ սրանց մեծ մասը հարաբերական ածականով է կազմվել: Օրինակներից են՝ *ազգային-ազատագրական, ազգային-դեմոկրատական, ազգային-ժողովրդավարական, ազգային-լուսավորչական, աշխատանքային-մատենագիտական, գեղարվեստա-թատերական, գեղարվեստական-կատարողական, գիտական-գիտատեխնիկական, գրադարանային-մատենագիտական, խմբակային-բազմաձայն, հասարակական-մշակութային, հասարակական-քաղաքական* և այլն:

1.2.3. Թվական

Թվականով հարադրված բարդությունները ևս քիչ են: Սրանցից հանդիպել ենք միայն քանակականների: Դրանք են՝ *երկու-երեք, մեկ-երկու, չորս-հինգ, վեց-յոթ*:

Ամփոփելով անվանական հարադրությունների բաժինը՝ կարող ենք արձանագրել, որ դրանց 95,3 %-ը երկբաղադրիչ կազմություն ունի, իսկ մնացած 4,7 %-ը՝ եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ կազմություն: Եռաբաղադրիչ կազմությամբ հանդիպում ենք 10 օրինակի, իսկ քառաբաղադրիչով՝ 1 օրինակի (Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան-Պակիստան): Ամենից ծավալունը եղել է վեցաբաղադրիչ միակ օրինակը (Գյանջա-Ղազախ-Իջևան-Դիլիջան-Հրազդան-Երևան): Եռաբաղադրիչ անվանական հարադրություններից գրանցել ենք 2 անգամ հանդիպող մի օրինակ (Հայաստան-Արցախ-Սփյուռք)՝ տարբեր ուղղագրությամբ. մեկում «*Սփյուռք*» բառը գրված է մեծատառով, մյուսում՝ փոքրատառով: Ուշագրավ է, որ երկբաղադրիչ օրինակներում հանդիպել է նաև «գոյական+հապավում» կառույցի՝ *Հայաստան-ՆԱՏՕ:*

Շաղկապով գրվող անվանական հարադրությունները կազմում են անվանական բարդությունների 8,3 %-ը միայն: Այստեղ շատ են հանդիպում «գոյական+շաղկապ+գոյական» կաղապարով կազմությունները, մինչդեռ «ածական+շաղկապ+ածական» կամ «թվական+շաղկապ+թվական» կաղապարով կազմությունները սակավադեպ են: Չի հանդիպում «դերանուն+շաղկապ+ դերանուն» կառույցը:

2. ԲԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ընտրանքում հանդիպել է 133 անուն բայական հարադրություն՝ կիրառված 420 օրինակներով: Դրանց գերակշիռ մասը՝ 97,1 %-ը (408 օրինակ), անվանաբայական հարադրություն է, իսկ մնացած 2,9 %-ը՝ զուգաբայական:

2.1. Անվանաբայական հարադրություններ

Անվանաբայական հարադրությունների մեջ ամենից շատ հանդիպում է «գոյական+բայ» կաղապարը (78 %), «ածական+բայ» կաղապարը կազմում է 7 %-ը, «մակբայ+բայ» կաղապարը՝ 15 %-ը: Հատկանշական է, որ *դերանունով, թվականով, ձայնարկությամբ* հարադրված բարդություններ չեն նկատվել: Բերենք օրինակներ՝ ըստ բառակազմական-խոսքիմասային կաղապարների.

«Գոյական+բայ» – *աչքի են ընկել, առիթ ենք ունեցել, գերի ընկած, գլուխ բերել, գլուխ չես հանում, գլուխ են խոնարհում, դաս տալով, դասեր չի քաղում, դեմ են տալիս, զանգ տուր, լույս է տեսել, լույս է ընծայել, խելքի չգաք, ծնկի բերել, ծնկի է եկել, կապ ունի, կյանք չի տա, կյանքի չի կոչվել, կոչ անել, կռիվ տալիս, կրակ են բացել, հաշվի առնելով, հանդես գալ, հանդես եկան, հաշվի առնելով, հաշվի են նստում, հարկ եղած, հարկ չի համարել, հիմք է ընդունել, հիմք է տալիս* և այլն:

Նկատենք, որ սրանց մեծ մասում գոյականը կիրառված է իր ուղիղ ձևով, իսկ թեք ձևերից հանդիպում են սեռական, բացառական կամ գործիական հոլովաձևերը:

«Մակբայ+բայ» – *առաջ է բերում, առաջ գնալ, առաջ էր քաշել, դուրս գալ, դուրս հանել, դուրս մղել, դուրս մնացին, ետ քաշել, վեր գցել, վեր է դասում, վեր էր հառնում, վեր ընկնի, վեր կացեք*:

«Ածական+բայ» – *անհետ կորած, բաց թողեց, գերծ մնա, թանկ նստեց, թույլ չեն տվել, մոտ գալ*: Ինչպես տեսնում ենք, սրանց թիվը մեծ չէ, իսկ ածականները բացառապես որակական են:



Տրամագիր 3. Անվանաբայական հարադրությունների հաճախադեպությունը՝ ըստ խոսքի մասային կաղապարների

Նկատենք, որ մակբայներով կազմված անվանաբայական հարադրությունները իրենց քանակով գերազանցում են ածականով կազմվածներին: Սրանց մեծ

մասն էլ կազմված է տեղի մակբայներով: Արձանագրենք նաև, որ 133 անուն բայական վերլուծական կազմությունների 42,1 %-ը (56 անուն) դարձվածքներ են: Դրանցից են՝

աչքի ընկնել – նկատվել, երևալ, ուշադրություն գրավել, աչք ծակել [6, 49],

առաջ գալ – ծագել, սերվել, սկիզբ առնել, գոյանալ, սկզբնավորվել [6, 61],

առաջ քաշել – մեկի պաշտոնը բարձրացնել, մեկին մի ավելի բարձր աշխատանքի նշանակել [6, 62],

գլուխ բերել – որևէ գործ հաջողությամբ ավարտել՝ վերջացնել (ՀԼԴԲ, էջ 156),

գլուխ խոնարհել – գլուխ տալ, ողջունել [6, 168],

դաս տալ – սովորեցնել, հորդորել, իր հարուստ կենսափորձը հաղորդել [6, 183],

դաս քաղել – խրատ առնել, խրատվել, օրինակ վերցնել [6, 183] *և այլն*:

2.2. Զուգաբայական հարադրություններ

Ինչպես վերը նշեցինք, զուգաբայական հարադրությունները կազմում են բայական հարադրությունների 2,9 %-ը: Դրանք են՝ *առել-տարել էր, գնացել-հասել է, եկավ-ասաց, եկել-անցել է, եղած-չեղած, խնամել-հոգալ, հավաքվել-ցրվել, հստակեցված-արձանագրված, ունենալ-չունենալ, պահել-խնամել, սրբել-տանել, տանող-կլանող*: Զուգաբայական հարադրություններից մեծ մասը հոմանիշային, առնչակից հարաբերություն ունեցող բառեր են՝ *պահել-խնամել, գնացել-հասել, խնամել-հոգալ, եկավ-ասաց, սրբել-տանել, տանող-կլանող*, իսկ մյուս մասը՝ դրական և ժխտական ձևերի համակցություններ՝ *ունենալ-չունենալ, եղած-չեղած*:

3. ԿՐԿՆԱՎՈՐ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրկնավոր հարադրությունները նույն բառի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ, ամբողջական կամ հատվածական կրկնությունն է: Կրկնավորներ են կազմվում հայերենի գրեթե բոլոր խոսքի մասերից: Հատկանշական է, որ սրանք արդի հայալեզու մամուլում բավականին քիչ են: Հանդիպել ենք 20 օրինակի միայն, այն էլ՝ անհնչյունափոխ ձևով: Դրանք գոյականով, ածականով, թվականով, դերանունով և մակբայով կազմություններ են: Հատկանշական է, որ ձայնարկությամբ կազմված կրկնավոր հարադրություն չի հանդիպել: Օրինակներն են՝ *առանձին-առանձին, կամաց-կամաց, շատ-շատ, հատ-հատ, արագ-արագ, այս-այս, շատ-շատերը, ինչ-ինչ, շատ-շատ, երբեմն-երբեմն, կաթիլ-կաթիլ, մեծ-մեծ, հատիկ-հատիկ, մեկ-մեկ, մարգիկ-մարգիկ, բուռ-բուռ*:

4. ԲԱԶՄԱԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՂ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրկնվող օրինակները հանդիպում են հատկապես անվանաբայական վերլուծականների շարքում՝ կիրառված տարբեր բառաձևերով: Օրինակ՝ *տեղի ունենալ* հարադիր բայը մեր ընտրանքում հանդիպում է 67 անգամ, ինչը կազմում է անվանաբայական հարադրությունների 16,4 %-ը, *թույլ տալը*՝ 34 անգամ՝ 8,3 %, *հանդես գալ, հաշվի առնել, ցույց տալ* հարադրությունները՝ 29 անգամ՝ 7,1 %, *դուրս գալը*՝ 26 անգամ՝ 6,3 %, *ձեռք բերելը*՝ 23 անգամ՝ 5,7 %, *կոչ անելը*՝ 13 անգամ՝ 3,1 %, *հույս հայտնելը*՝9 անգամ՝ 2,2 %, *աչքի ընկնելը*՝6 անգամ՝ 1,4 %, *ի հայտ գալը*՝5 անգամ՝ 1,2 %, *դուր գալը*՝4 անգամ՝ 0.8 %:

Նույն երևույթը նկատում ենք նաև անվանական հարադրությունների մեջ: Մի շարք հարադրություններ կրկնվում են, սակայն բոլոր դիրքերում՝ նույն ձևով՝ առանց որևէ փոփոխություն կրելու:

Տեղի ունենալ (67 օրինակ) – *տեղի են ունենում, տեղի են ունեցել, տեղի է ունենալու, տեղի է ունենում, տեղի է ունեցել, տեղի կունենա, տեղի ունեցած, տեղի ունենա, տեղի ունեցավ, տեղի ունեցող, տեղի չեն ունենում, տեղի չի ունենա, տեղի չունեցավ*:

Թույլ տալ (34 օրինակ) – *թույլ չեն տվել, թույլ է տվել, թույլ են տալիս, թույլ ենք տվել, թույլ է տալիս, թույլ է տվել, թույլ էր տվել, թույլ կտա, թույլ կտան, թույլ կտար, թույլ չեմ տա, թույլ չեն տալիս, թույլ չենք տա, թույլ չէին տա, թույլ չի տա, թույլ չի տալիս, թույլ չտալ, թույլ չտալով, թույլ տալ, թույլ տալով*:

Հանդես գալ (29 օրինակ) – *հանդես գալ, հանդես գալիս, հանդես գալով, հանդես գալու, հանդես եկա, հանդես եկած, հանդես եկան, հանդես եկավ, հանդես եկող, հանդես են գալիս, հանդես են եկել, հանդես է գալիս, հանդես են եկել, հանդես է եկել*:

Հաշվի առնել (29 օրինակ) – *հաշվի առնելով, հաշվի առնելու, հաշվի առնենք, հաշվի առնվել է, հաշվի են նստում, հաշվի ենք առնում, հաշվի չառնելով, հաշվի չենք առել, հաշվի չի առել*:

Ցույց տալ (29 օրինակ) – *ցույց են տալիս, ցույց են տվել, ցույց է տալիս, ցույց է տվել, ցույց էր տալիս, ցույց կտա, ցույց տա, ցույց տալ, ցույց տալու, ցույց տվեց, ցույց տվեցին, ցույց տվեք* և այլն:

Ամփոփելով ողջ աշխատանքի արդյունքները՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին՝

▪ Նպատակահարմար է բարդ բառերի մեր քննած տեսակը, ի հակադրություն համադրականների, անվանել «վերլուծական բարդություններ» եզրույթով, քանի որ՝ ա) այն ավելի ընդգրկուն է և ամփոփում է տեսական գրականության մեջ նշված բոլոր ենթատեսակները, բ) այն առավել ընկալելի է ընդհանուր լեզվաբանության անդրլեզվի համատեքստում: Վերլուծական բարդությունների համար ընդունելի ենք համարում 3 տեսակի առանձնացումը՝ անվանական, բայական և կրկնավոր, որոնք էլ՝ իրենց ենթատեսակներով հանդերձ, դրվել են մեր աշխատանքի կառուցվածքի հիմքում:

▪ Արդի հայալեզու մամուլի 2021-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների 20 պարբերականում հանդիպել ենք **692** վերլուծական բարդության, որից **252**-ը անվանական է (36 %), **420**-ը՝ բայական (61 %), **20**-ը՝ կրկնավոր (3 %):

▪ Օրինակները հետաքրքիր հաճախադեպության ցուցանիշներ են տալիս թե՛ բառակազմական կաղապարների, թե՛ բովանդակային տեսանկյուններից, ինչը մեկնաբանել ենք ենթաբաժին առ ենթաբաժին:

▪ Ինչ վերաբերում է օրինակների բովանդակային կողմին, ապա կարող ենք արձանագրել, որ դրանք, իհարկե, որոշ չափով պայմանավորված են եղել մեր ընտրած պարբերականների համարներին համապատասխանող արդի պատմության իրադարձություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա – Տեսական գրականություն

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984, 372 էջ:
2. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հատոր 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, 486 էջ:
3. Մելքոնյան Հ., Լեզվաբանության հիմունքներ, Վանաձոր, «ՍԻՄ» տպ., 2017, 492 էջ:
4. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004, 440 էջ:

Բ – Բառարաններ

5. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976, 1618 էջ:
6. Սուքիասյան Ա, Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975, 634 էջ:

Գ – Լեզվանյութի աղբյուրներ

1. «Առավոտ» 24. 11. 2021, N 213/6531, 8 էջ:
2. «Առավոտ» 23. 11. 2021, N 212/6530, 8 էջ:
3. «Առավոտ» 16. 09. 2021, N 166/6484, 8 էջ:
4. «Առավոտ» 29. 10. 2021, N 195/6513, 8 էջ:
5. «Առավոտ» 30. 10. 2021, N196/6514, 8 էջ:
6. «Իրավունք» 26. 10. 2021, N 114, 8 էջ:
7. «Իրավունք» 27. 10. 2021, N 115, 8 էջ:
8. «Իրավունք» 12. 11. 2021, N 122, 16 էջ:
9. «Իրավունք» 05. 11. 2021, N 119, 16 էջ:
10. «Իրավունք» 10. 09. 2021, N 96 16 էջ:
11. «Կրթություն» 06. 10. 2021, N 40-41, 22 էջ:
12. «Կրթություն» 08. 09. 2021, N 38, 32 էջ:
13. «Կրթություն» 13. 10. 2021, N 42, 16 էջ:
14. «Կրթություն» 17. 11. 2021, N 47, 16 էջ:
15. «Կրթություն» 24. 11. 2021, N 48, 16 էջ:
16. «Հայաստանի Հանրապետություն»16. 09. 2021, N 154, 8 էջ:
17. «Հայաստանի Հանրապետություն» 29. 10. 2021, N 184, 8 էջ:
18. «Հայաստանի Հանրապետություն» 30. 10. 2021, N 185, 8 էջ:
19. «Հայաստանի Հանրապետություն» 23. 11. 2021, N 201, 8 էջ:
20. «Հայաստանի Հանրապետություն» 30. 10. 2021, N 185, 8 էջ:

Аналитически сложные слова в современной армяноязычной прессе

Симонян Анна
ВГУ, Армянский язык и литература, 4-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Э. Мелконян

Резюме

Ключевые слова: *аналитически сложное слово, современная армяноязычная пресса, именные аналитические слова, глагольные аналитические слова, дублетные аналитические слова*

- В 20 периодических изданиях современной армяноязычной прессы мы обнаружили 692 аналитически сложных слов, из которых 252 были именные (36 %), 420 – глагольные (61 %), 20 – дубликации (3 %).
- Примеры дают интересные частотные показатели, как с точки зрения словообразовательных моделей, так и с точки зрения семантики, которые мы интерпретировали по подразделам.
- Что касается содержательной стороны примеров, то можно констатировать, что они были, конечно, в какой-то степени обусловлены событиями новейшей истории, соответствующими номерам выбранных нами периодических изданий.

Analytically Complex Words in Modern Armenian Press

Simonyan Anna
VSU, Armenian Language and Literature, 4th year
Academic Supervisor: H. Melkonyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

Key words: *analytical compound word, modern Armenian-language press, nominal analytical words, verbal analytical words, doublet analytical words*

- In 20 periodicals of the modern Armenian-language press, we found 692 analytical compound words, of which 252 were nominal (36 %), 420 were verbal (61 %), 20 were duplications (3 %).
- The examples show interesting frequency indicators, both in terms of word-formation patterns and in terms of semantics, which we interpreted by subsections.
- As for the content of the examples, we can state that they were, of course, to some extent due to the events of recent history, corresponding to the numbers of the periodicals we have chosen.

«Այս առաւօտուս լուսոյն» սկսվածքով հայրենի տարբերակների լեզվական քննություն

Փելեշյան Ինեսա
«ՎՊՀ» հիմնադրամ, Հայոց լեզու և գրականություն,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆեսոր Գ. Խաչատրյան

Հանգուցային բառեր. *միջին հայերեն, բառապաշարային զուգաձևություններ, քերականական ձևեր, հոլովական և խոսքի մասային տարբերություններ, բարբառային ազդեցություն, նախդրավոր կապակցություն*

Հայրենների մասին կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք մեծամասամբ բացահայտում են հայրենները գրականագիտական տեսանկյունից[1]: Կան նաև հայրենների լեզվաբանական ուսումնասիրություններ, որոնցում քննվում են տարբեր լեզվական իրողություններ[2]: Մեր աշխատանքում ևս լեզվաբանական դիտանկյունից քննել ենք «Այս առաւօտուս լուսոյն» սկսվածքով հայրենը՝ շեշտադրելով վերջինիս տարբերակների (փոփոխակների) բառապաշարի համեմատական քննությունը:

Հայրենների լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունը արդիական և կարևոր է միջին հայերենի լեզվական իրակությունների բացահայտման, ընդհանրացման և առկա տեսական նյութի ամբողջականացման դիտանկյունից:

Աշխատանքի խնդիրներն են 1. կատարել հարցի պատմության, թեմային առնչվող տեսական գրականության ուսումնասիրություն, 2. ուսումնասիրել խնդրո առարկա հայրենի 12-16-րդ դարերից մեզ ավանդված տարբերակների բառապաշարը, 3. ցույց տալ հայրենի բառապաշարում միջին հայերենին հատուկ կատարված հնչյունափոխությունները, 4. քննել հանդիպած բառապաշարային և քերականական զուգաձևությունները:

Այս շրջանի գրականության լեզուն (միջին հայերեն) խիստ անհամասեռ է և՛ հնչյունաբանությամբ, և՛ բառապաշարով, և՛ քերականությամբ: Չնայած այս անկանոնություններին՝ միջին հայերենով տարբեր ժանրերի բարձրարժեք երկեր են ստեղծվել, որոնց մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենները և՛ գեղարվեստական բարձր արժեք ներկայացնելու, և՛ միջինհայերենյան բառապաշարի անկանոնություններն ու անմիօրինակությունները բացահայտելու տեսանկյունից: Այս իմաստով հատկապես հետաքրքրական են նույն հայրենի տարբերակների բառապաշարային անկանոնությունները, որոնք պայմանավորված են տարբեր գործոն-

[1] Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Բ, Երևան, 1967, Վ. Եղիազարյան, Հայրեններ, Վանաձոր, 2007 և այլն:

[2] Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Բ, Երևան, 1967, Գ. Խաչատրյան, Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ, Երևան, 2013 և այլն:

ներով (բարբառների և խոսվածքների բազմազանություն, ստեղծագործող անհատների տարբեր բարբառակիր լինելու իրողություն և այլն/:

Նմանատիպ քննություն կատարել է Մ. Աբեղյանը՝ ուսումնասիրելով որոշ հայրենների լեզվառճական առանձնահատկությունները [1]:

Խոսելով նույն հայրենի տարբերակների և հայրենի փոփոխակների (բովանդակությամբ տարբեր) մասին՝ Մ. Աբեղյանը նշում է, որ բառապաշարային զուգաձևությունները արդյունք են բարբառների ազդեցության. «Սկզբնական երգիչը հորինել է մի բարբառով, արտագրողները գրել են այլ բարբառի ազդեցությամբ» [1, 75], հետևաբար խախտվել է գրաբարին հատուկ կանոնավոր ուղղագրությունը, իսկ այդ փոփոխություններն առաջացրել են անկանոն, անմիօրինակ բառապաշարային և քերականական նոր ձևեր (բացառությամբ, իհարկե, սխալագրությունները), որոնք կանոնիկ են դարձել հետագա գրական լեզվում կամ բարբառներում:

Աշխատանքը գերազանցապես կատարվել է համեմատական մեթոդով, որին զուգահեռ մեթոդական հիմք են ծառայել գիտական ուսումնասիրության ընդհանուր մեթոդները՝ տրամաբանական, վերլուծական, նկարագրական և այլն:

Հայագիտության մեջ միջին գրական հայերենի գոյության մասին մինչ այսօր հստակ և միասնական մոտեցում չկա: «Միջին հայերեն» եզրույթը բավականին հին ծագում ունի: Այս մասին Հրաչյա Աճառյանը գրում է. «այսօր լեզվաբանության մեջ զանազանություն է դրվում այս շրջանի (X- XVI) ժողովրդական լեզվի և արդի ժողովրդական լեզվի միջև. առաջինը կոչվում է միջին գրական հայերեն, երկրորդը՝ աշխարհաբար կամ նոր գրական հայերեն՝ հակադրությամբ գրաբարի կամ հին գրական հայերենի»[3]:

Քննության համար ընտրել ենք «**Այս առաւօտու լուսոյն**» սկսվածքով հայրենը՝ իր հինգ տարբերակներով [3, 182, 223, 286, 327, 367], որոնք ունեն բարբառային առանձնահատկություններ, քերականական ձևերի զուգաձևություններ և իմաստային որոշակի տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք քննության առարկա հայրենի տարբերակները.

1. Այս առաւօտուս լուսուն
   Գայր ջըրէն ձայնիկն զղզղուն
   Այն իմ պէօֆայ եարին
   Ձայնն անուշ էր՝ քան զամենուն
   Բարակ սիրոյ տէր մարդուն
   Ինքն ու իր եարն մէն ի քուն
   Պաք տան ու պաք առնուն,
   Ղօլ այնէն մէկալ գիշերուն [3, 327]:

2. Այս առաւօտու լուսոյն
   Գայր ջըրին ձանիկն ու ձագուն
   Այն իմ պէօֆա եարին

[3] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 2013, էջ 232:

Զայն անուշ էր՝ քան զամենուն
Բարակ սիրու տէր մարդիք
Ինքն ու իր եարըն մէն ի քուն
Պաք տան ու պաք առնուն,
Պաք պահեն մեկալ գիշերուն [3, 223]:

3. Այս առաւօտուս պահուն
Գայր ջրին ձայնիկն ու ձագուն
Այն իմ պիվէֆա եարին
Զայն անուշ էր՝ քանց զամէնուն
Բարակ սիրու տէր մարդուն
Ինքն ու իր եարըն մէն ի քուն
Պաք տան ու պաք առնուն,
Ղավլ անեն մէկալ գիշերուն [3, 367]:

4. Ան առաւօտուն լուսուն
Ձայնըն գայ գարնան ձագերուն
Ա՛յ իմ փոքրիկ ձագեր,
Զայն անուշ է քանձ ամէնուն [3, 182]:

5. Դէմ առաւօտի լուսուն
Գա ջրի ձայնիկն ու բաթուն.
Այնպէս՝ սիրո տէր մարդուն,
Ինքն ու իր եարն մէն ի քուն [3, 286]:

Նշենք, որ հայրենի երկու տարբերակները ամբողջական չեն կամ հենց այսպես էլ երգվել ու գրի են առնվել: Ինչպես հավաստում է Մ. Աբեղյանը, այս բանաստեղծությունները երգվել են հանպատրաստից. երգիչները երգել են՝ հայրենի նախնական տարբերակին ավելացնելով նոր տողեր կամ փոխելով որոշ տողեր՝ հարմարեցնելով տվյալ շրջապատի մարդկանց ցանկությանն ու տրամադրությանը [1, 86-87]: Այս հանգամանքով է պայմանավորված, որ բացի լեզվական զուգաձևություններից՝ առաջացել են նաև իմաստային տարբեր նրբերանգներ:

Խնդրո առարկա տարբերակներում զուգաձևությունները սկսվում են հենց առաջին տողից: Առաջին տարբերակում *այս առաւօտու* որոշիչ-որոշյալ կապակցության մեջ որոշյալը հոդ է կրում՝ *այս առաւօտու* **u**, իսկ երկրորդ և երրորդ տարբերակներում կիրառվել է առանց հոդի, չորրորդ տարբերակում **այս**-ի փոխարեն գործածված է **այն** ցուցական դերանունը՝ **յ**-ի անկումով՝ *ան առաւօտուն*, հինգերորդ տարբերակում այս կապակցության փոխարեն առկա է ***դէմ***+*առաւօտի* կառույցը: Հայտնի է, որ **u** հոդը ծագում է նույն արմատահնչյունից, որն ընկած է **այս**, **սա** բառերի հիմքում: **Ս** հոդը նախապես քերականական բազմիմաստությամբ արտահայտել է դիմորոշություն՝ հայր**u**=ես՝ հայրս, ցուցականություն՝ քաղաք**u**=**այս** քաղաքը, ստացականություն՝ որդի**u**=**իմ** որդին, որոշյալություն՝

մարդ**ս**=մարդ**ը**: Այս բառակապակցության մեջ հոդի կիրառությունը անհարկի է, քանի որ «.... հարաբերակից դերանվան առկայությունը հոդառու բառի հետ կարող է պահպանել **ս** հոդը, ինչը հատուկ էր հիմնականում գրաբարին, կամ դուրս մղել»[4]: Մյուս երկու տարբերակներում **ս** հոդի բացակայությունը արդարացի է, իսկ նշված տարբերակում վերջինիս կիրառությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայրենի այս տարբերակը կա՛մ կարող է լինել ամենավաղ գրվածը՝ պարունակելով գրաբարյան տարրեր, կա՛մ արտագրողի լեզվամտածողությամբ պայմանավորված՝ նրա մեջ վերականգնվել է **ս** հոդը, որը կարող է նաև բարբառային յուրահատկություն դիտվել: Ժամանակակից հայերենում նույնպես ստացական, ցուցական նշանակությունները բացառում են համապատասխան վերադիրը՝ **գիշերս** (ո՛չ *այս գիշերս*), **գիրքս** (ո՛չ *իմ գիրքս*)[5]:

Ներկայացնենք նաև խնդրո առարկա հայրենում **զ** նախդիրի և **ն**, **ը** հոդերի կիրառությունները: Գրաբարում **զ** նախդիրը, այլ կիրառություններից բացի, գործածվում էր հայցականում՝ որպես որոշյալ առման ցուցիչ՝ կազմելով բառի «որոշյալ հայցականը»: Այն պահպանվել է նաև մի քանի բարբառներում, ինչով էլ պայմանավորված՝ հայրեններում դեռևս կենսունակ է նրանց՝ վաղ գրված լինելու կամ բարբառային ազդեցության պատճառով, օրինակ՝ ***Զձեռկունքն*** *ի վերան ձրգէ Ու զանգատ անէ հին ու նոր* [3, 45], *Նա դնեմ* ***զերեստ*** *երեսիս* [3, 46]: Ավելի ուշ շրջանում հանդիպում են դեպքեր, երբ միևնույն բառաձևը միաժամանակ զուգորդվում է **զ**-ի հետ՝ սկզբից և **ն**-ի հետ՝ վերջից, ինչպես՝ ***Զծափն*** *իրար եզարկ* [3, 406], ***Զվարդն*** *հոտով ու պայծառ* [3, 253] և այլն: Սա հետևանք է այն բանի, որ **ն** հոդն ընդլայնում է իր կիրառության ոլորտները՝ դառնալով առման ցուցիչ նաև հայցականում, ինչով էլ պայմանավորված՝ **զ** նախդիրն իր դիրքերը զիջում է **ն**-ին: Այնուհետև **ն** հոդը կիրառվում է մյուս հոլովներում ևս և դառնում որոշյալ առման ցուցիչ: **Ն** հոդին հավասար՝ որոշյալ առման ցուցիչ է դառնում **ը**-ն, որն ավելանում է բաղաձայնահանգ բառերին, օրինակ՝ ***Զուրը*** *տի խմինք շահեն աչերուն* [3, 660], իսկ **ն**-ն՝ ձայնավորահանգներին՝ *Ինչ անուշ է գինի* ***ն*** [3, 692]: Նշենք, սակայն, որ հաճախ բաղաձայնահանգները նույնպես ստանում էին **ն**, ինչպես՝ *Գայր ջրրին* ***ձանիկն*** *ու ձագուն* [3, 223], *Երբ որ* ***սերն*** *վառի մարդոյն* [3, 591]: Հանդիպել են նաև դեպքեր, երբ **ը** և **ն** հոդերը կիրառվում են միաժամանակ, օրինակ՝ ***Զայնն*** *գայ զարնան ձագերուն* [3, 182], *Մերը սիրողին վայլէ,* ***գինինը*** *՝անուշ խմողաց* [3, 692]:

Հաջորդիվ ներկայացնենք **ո** և **ու** հոլովումների ընդհանրությունները: Ինչպես նշված է «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ «.... միջին հայերենում **ո** հոլովումը աստիճանաբար իր տարածման շրջանակը նեղացնում է, ընդլայնվում է **ու** հոլովման շրջանակը»: Այն բառերը, որոնք գրաբարում պատկանում էին միայն **ո** հոլովման, զուգահեռաբար սկսում են հոլովվել **ու** հոլովմամբ: Սա վերաբերում է որոշ գոյականների և հատկապես անորոշ դերբային, օրինակ՝ *այս առաւօտու լուս* ***ոյն***, այս *առաւօտուս լուս* ***ուն***,

[4] Հ. Պետրոսյան, Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, հոդային կարգ, Երևան, 1976, էջ 57-58:

[5] Ն. տ.:

սիրոյ տէր մարդուն, սիրու տէր մարդիք, մինակ կենալուս [3, 69]: Մեր քննության առարկա հայրենի տարբերակներից մեկում **լույս** բառը ընդհանրապես փոխարինած է **պահ** բառով՝ *այս առաւօտուս պահուն*:

Հաջորդ բանատողում կան հոլովական և խոսքիմասային տարբերություններ, որոնց հետևել են իմաստային որոշակի փոփոխություններ.

1. Գայր ջըրէն ձայնիկն զղզուն [3, 327]:
2. Գայր ջըրին ձանիկն ու ձագուն [3, 223]:
3. Գայր ջրին ձայնիկն ու ձագուն [3, 367]:
4. Ձայնըն գայ գարնան ձագերուն [3, 182]:
5. Գա ջրի ձայնիկն ու բաթուն [3, 286]:

Առաջին տարբերակում **ջուր** բառն արտահայտված է բացառական հոլովով և տեղի պարագայի պաշտոնով՝ **ջրէն**, իսկ հատկացուցիչ-հատկացյալ կապակցության փոխարեն կա որոշիչ-որոշյալ կապակցություն՝ ջրից գալիս էր ղզղզուն («կարկաչուն»[6]) ձայն: Բանատողի վերջին բաղադրիչն ածական է, բայց այստեղ ավելի կարևոր է հանգավորման խնդիրը, որը կարելի է լուծված համարել: Նշենք նաև, որ սեռականում և բացառականում հոդի առկայությունը վկայում է, որ հինգ տարբերակներն էլ Արևմտյան բարբառախմբի նմուշներ են:

Երկրորդ և երրորդ տարբերակներում առկա է սեռական հոլովով արտահայտված հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն՝ ջրի և ձագի (թռչուն) ձայնը:

Չորրորդ տարբերակում **ձայնիկ** բառի փոխարեն որպես ենթակա գործածվել է **ձայն** բառը, գործողությանը հաղորդվել է ներկայի գաղափար («գայ»), առկա են որոշիչ-որոշյալ՝ *գարնան ձագերուն* («թռչուններ») և հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններ՝ *ձագերուն ձայնը*:

Հինգերորդ տարբերակում **ձագուն** բառաձևը փոխված է **բաթուն** տարբերակով, որը, ըստ Ա. Մնացականյանի, հավանաբար պիտի լինի **ձագուն** [3, 286]: Միջին հայերենի բառարանում, սակայն, վկայված է **բաթ** բառը, որ նշանակում է «ջրային կենդանի» (ՄՀԲ, 105): Ենթադրում ենք, որ արտագրողը **ձագ** բառը փոխել է **բաթ**-ով՝ իմաստային նմանությամբ պայմանավորված:

Այստեղ ուշադրության է արժանի **յ** հնչյունի անկման փաստը: Ինչպես գիտենք, բառավերջի **յ** ձայնորդի անկումը միջին հայերենի ամենաընդհանրական օրինաչափություններից է, իսկ եթե որոշ դեպքերում գրության մեջ պահպանվում է, ապա միայն՝ սովորությամբ և ուղղագրական հին կանոններին հետևելու հանգամանքով պայմանավորված:

Բառավերջի **յ**-ի անկում է առկա **բէվայֆայ** («անվստահելի») (ՄՀԲ, 119) [3, 223, 327, 367] բառում, որն ունեցել է նաև **բէվաֆա** և **պէօֆա** ձևերը (ՄՀԲ, 119), որոնցից են նաև խնդրո առարկա հայրենում առկա մեզ հանդիպածները՝ **պիվէֆա** և **պէօֆայ**: Այստեղ առկա են **բ**>**պ** բաղաձայնական, **այ**>**ա**, **այ**>**է** հնչյունափոխու-

[6] Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 207: Այսուհետ՝ ՄՀԲ:

թյուններ: Նշենք նաև, որ որոշ բարբառներում **է**-ն արտասանվում է **ի**, ինչի համար էլ գրության երկու ձևերն էլ առկա են:

Ինչպես գիտենք, միջին հայերենում ձայնեղ պայթականները, կախված դիրքից, կարող են վերածվել շնչեղ խուլերի և պարզ խուլերի, օրինակ՝ **բ**էվայֆայ**պ**իվէֆա [3, 327, 367] և այլն[7]:

Այ երկբարբառի պատմական փոփոխությունը միշտ ընթացել է երկու հիմնական ուղղություններով՝ **այ**>**ա**, **այ**>**է**: Նշված օրինակում կատարվել է **այ**>**է** հնչյունափոխություն, ինչը միջին հայերենում բավական տարածված և տեղայնացված երևույթ էր, գործուն օրինաչափություն: Այդպիսի օրինակ է **ձայնիկ** [3, 327] բառը նույնպես[8], որը հայրենի տարբերակներից մեկում ներկայացված է **ձանիկ** [3, 223] ձևով, ինչպես նաև **անել** բայի հնչյունափոխված ձևերում **յ**-ի անկումը խոնարհման հարացույցում՝ **այնել-արին**, **անեմ** [2, 151] և այլն[9]:

Երկրորդ և երրորդ տարբերակներում *Զայնն անուշ էր քանց զամենուն* բանատողում **ձայն** բառը գրված է **զայն**: Կարծում ենք, որ սա ևս սխալագրության արդյունք է, քանի որ անհավանական է, որ **այն** դերանունը հայցականով ենթակայի գործառույթ կատարեր:

Չորրորդ տարբերակում առկա է կոչականի գործածություն՝ *Ա՜յ իմ փոքրիկ **ձագեր*** [3, 182], որը բացակայում է մյուս բոլոր տարբերակներում:

Տարբերակների մեջ առկա է **քան + հայցական հոլով** կապային կառույց՝ **քան զամենուն ձայն**, **քանց զամենուն ձայն, քանձ ամէնուն**: ***Քան***-ը գրաբարում համարվել է նախադրություն՝ գործածվելով «*առաւել կամ նուազ*» նշանակությամբ[10], միջին հայերենում՝ կապ՝ «*պես, նման, որպես*» նշանակությամբ (ՄՀԲ, 799], ժամանակակից հայերենում՝ կապ «*կապում է երկու առարկա՝ համեմատելով իրար հետ քանակի, որակի կամ այլ կողմից*» և շաղկապ՝ «*փոխանակ, փոխանակ որ*» *նշանակությամբ*[11]:

Միջին հայերենում գործածության մեջ է մտնում **քան** շաղկապի բարբառային **քանց** ձևը՝ նույն կիրառությամբ և իմաստով: **Քանց** և **քանձ** ձևերն առաջացել են **քան + զ** բաղադրությունից[12]. **զ** նախդիրը այնպես է ներմուծվել բառի մեջ, որ, որպես նախդիր, այլևս չի գիտակցվում, ինչի պատճառով էլ կապվող բառը նորից **զ** է ստանում: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության տվյալներով այսպիսի դեպքեր չեն հանդիպում, սակայն մեր բերած օրինա-

---

[7] Հմմտ. վարթայգոյն (վարդ) [3, 950], պնդերես-պնտերես [3, 303]:

[8] Միջնադարյան երկերի մեջ հանդիպում ենք նաև այնպիսի բառաձևերի, որոնցում **այ**-ը ակնհայտորեն երկհնչյունային կամ երկբարբառային արժեք չունի, այլ պայմանավորված է սխալագրությամբ, ինչպես՝ **վարթայգոյն** [3, 950], **պատվայկան** [3, 950], **վարթայփթիդ** [3, 950] և այլն:

[9] Հմմտ. եղբ**ա**ր < եղբայր [3, 420], **ա**նոր < այնր [3, 526], **ա**լ < այլ [3, 548] և այլն:

[10] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837, հատոր 2, էջ 977:

[11] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ, Երևան, 1969-1980, հատոր 4, էջ 706:

[12] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, հատոր 4, էջ 550:

կում **q**-ն առկա է պարզապես՝ հատկացուցչի վրա, քանի որ այստեղ զեղչված է հատկացյալը՝ **ձայն** բառը՝ *Այն իմ պէօֆա եարին Ձայն անուշ էր՝* ***քան զամենուն*** (*ձայն*): **Ամէն** որոշյալ դերանվան սեռականին ավելացել է **ն** հոդը՝ հատկացուցիչ-հատկացյալ կապակցության փոխարեն՝ ստացականության իմաստ արտահայտելու նպատակով՝ **ամենքի ձայնը-ամենքինը** (հմմտ. **իմը, քոնը** և այլն): Սա փոխանունության դրսևորում է, իսկ փոխանունությունը բառակապակցության մեկ անդամի գործածությունն է նաև մյուս անդամի փոխարեն[13]:

Չնայած այն վկայության, որ այսպիսի կապակցություններում դերանուններ չեն գործածվում [2, 463], հանդիպել ենք նաև նշված կարգի մի քանի օրինակների՝ *Քան* ***զամէնն*** *ես խիստ դու մոլոր* («Դու խիստ մոլոր ես, քան ամենքը»// «Դու ամենքից մոլոր ես») [3, 846], *Քան* ***զիս*** *փոքրիկ հաւիկ չի կա, Հաւրն զիմ դուսան չի քաշէ* [3, 89]:

Խնդրո առարկա տարբերակներում կան տողեր, որոնք առաջին երեքում նույնն են.

Ինքն ու իր եարըն մէն ի քուն
Պաք տան ու պաք առնուն

Տարբերակներից երկուսի վերջին տողերում ունենք բայական հարադրություն՝ **ղավլ անեն**, **ղոլ այնէն**, որի անվանական բաղադրիչը արաբական փոխառություն է՝ **ղաւլ՝ qavl**, նշանակում է «պայման», «խոստում»[14]: Միջին հայերենում **աւ** երկբարբառը փակ վանկում պարզվել ու վերածվել է **օ**-ի: Մյուս երկբարբառների կրած փոփոխությունների համեմատությամբ՝ այս երկբարբառի հնչյունափոխությունը ընդհանուր, միասնական բնույթ ուներ, սակայն որոշ գրիչներ **աւ**-ի փոխարեն **օ** են գրում այնպիսի բառերում, որոնցում **աւ**-ը երկբարբառ չէ, և **ւ**-ը պիտի վերածվի **վ**-ի՝ ինչպես տվյալ օրինակում:

Հայրենի տարբերակների համեմատական քննության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Միջին հայերենում տեղի են ունենում բաղաձայնների, երկբարբառների և եռաբարբառների փոփոխություններ, որոնք առկա են նաև մեր քննած օրինակներում՝ **բէվաֆա** և **պէօֆա, ձայնիկ** և **ձանիկ** և այլն:

2. Հայրենների համար խիստ կարևոր է եղել նրանց հանգավորումը, բանաստեղծության չափը և ռիթմը: Դրանք չխախտելով՝ հաճախ արտագրողները միևնույն հայրենում փոխում են բառերը կա՛մ նույն խոսքի մասին պատկանող այլ բառով, կա՛մ այլ խոսքի մասի պատկանող բառով, ինչպես՝ **լուսուն-պահուն**, **ձագուն-զղզղուն**:

3. **Ս** հոդի կիրառությունը հարաբերակից դերանվան հետ գրաբարի նմանողությամբ պահպանվել է նաև միջին հայերենում, ինչն ապացույց է այն բանի, որ միջին հայերենի կազմավորման վաղ շրջանում դեռևս տիրապետող են գրաբարյան քերականական ձևերը, այդ ձևերի ճշտման համար անհրաժեշտ է հին լեզվի

[13] Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 343:

[14] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, հատոր 3, էջ 166:

մի շարք օրինաչափություններից լիարժեք հրաժարում:

4. Միջին հայերենում շատ բառեր, որոնք գրաբարում հոլովվել են **n** հոլովմամբ, սկսում են ենթարկվել **nı** հոլովման՝ աստիճանաբար նեղացնելով **n** հոլովման պատկանող բառերի շրջանակը:

5. Հայրենները տարածվելով կրում են ժողովրդական երգերին հատուկ փոփոխություններ:

6. Ստեղծված լինելով միջին հայերենով՝ հայրեններում առկա են նաև բարբառային ձևեր, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնելու, որ հայրենները հորինվել կամ երգվել են տարբեր բարբառակիր մարդկանց կողմից, ինչով էլ պայմանավորված՝ առաջացել են միևնույն հայրենի տարբեր տարբերակներ: Մեր խնդրո առարկա հայրենի տարբերակներում առկա են միջին հայերենին հատուկ հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականական ձևերի փոփոխություններ, որոնցով պայմանավորված՝ առաջանում են իմաստային նոր նրբերանգներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկերի Հատոր Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 390 էջ:
2. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա հատոր, Երևան, 1972, 495 էջ:
3. Մնացականյան Ա., Հայրեններ, Երևան, «Նաիրի», հրատ., 1995, 1095 էջ:

Языковое исследование вариантов айрена с началом "На этом утреннем рассвете"

Пелешян Инеса
ВГУ, Армянский язык и литература, магистратура, 1-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, профессор Г. Хачатрян

Резюме

***Ключевые слова**: среднеармянский язык, лексические параллели, грамматические формы, флективные и частеречные различия, диалектное влияние, предложная связь*

Изучение языковых особенностей айренов актуально и важно для выявления, обобщения и пополнения имеющегося теоретического материала языковых реалий среднеармянского языка. В нашей работе мы изучили айрен с началом «На этом утреннем рассвете» и рассмотрели его с пятью вариантами. Сравнительным методом мы представили параллели фонетических, лексических и грамматических форм, в частности: 1. различия в частях речи: в одном айрене – существительное, в другом – прилагательное, 2. фонетические варианты слова, 3. литературные и диалектные формы предложных союзов и.т.д. Упомянутые варианты айренов отличаются друг от друга в различной степени, что отражает неравномерность и параллелизм среднеармянской лексики, обусловленные соблюдением старых орфографических правил или влиянием различных диалектов.

Linguistic Research of Hayren Variants beginning with "On this Morning Dawn"

Peleshyan Inesa
VSU, Armenian Language and Literature, MA, 1st year
Academic Supervisor: G. Khachatryan
Doctor of Philological Sciences, Professor

Summary

***Key words**: Middle Armenian language, lexical parallels, grammatical forms, inflectional and part-of-speech differences, dialectal influence, prepositional connection*

The study of the linguistic features of the hayrens is highly relevant and essential for the identification, generalization, and completion of the existing theoretical material on the linguistic realities of the Middle Armenian language. In our research, we examined the hayren titled "On This Morning Dawn" along with its five versions. We compared the phonetic, lexical, and grammatical forms using the comparative method, focusing on: 1. differences in parts of speech (for instance, a noun in one version and an adjective in another), 2. phonetic variations of words, 3. literary and dialectal forms of prepositional conjunctions, and more. The aforementioned versions of the hayrens differ to varying extents, reflecting the irregularities and parallels in the Middle Armenian vocabulary, which can be attributed to the adherence to old orthographic rules or the influence of different dialects.

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ИНОСТРАННЫЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

FOREIGN LANGUAGE AND LITERATURE

Hedges as Politeness-Regulating Devices in Hotel&Hospitality Services

Hakobyan Mariam
VSU, English Language and Literature, MA, 2nd year
Academic Supervisor: L. Vardanyan,
Ph.D. in Philology, Associate Professor

Key words: *politeness, hedges,maxim, hotel and hospitality services, ambiguity,vagueness, indirectness, pragmatic value*

The present article aims at showing the use of hedges and their different functions in hotel and hospitality reservation services from the perspective of both positive and negative politeness. As we all know, every speaker strives to avoid disagreementby making indirect statements orsugarcoating doubt, or suspicion. Herein lies the importance of hedges which, as an integral part of everyday conversation, can serve as a guarantee to show one´s commitment to a proposition or falsity. They contribute to the enhancement of comprehensibility and mutual understanding among interlocutors especially when dealing with different strategies and regulating norms of polite behavior characteristic of different cultures. The use of hedges in the process of communication contributes considerably to expressing the degree of certainty or cautiously interpreting or softly commenting on a particular situation. There exist different typesand classifications of hedges proposed bydifferent scholars. However, Lakoff was the first scholar who deeply understood the concept of "hedges" and their use in a particular language. Lakoff says, "For me, some of the most interesting questions are raised by the study of words whose meaning implicitly involves fuzziness- words whose job is to make things fuzzier or less fuzzy. I will prefer these words as ´hedges." "Hedges are a group of words whose functions are to conduct communication; the communicative function of words cannot work without context´´[7, 195-197].Based on the abovementioned statement, we caninterpret hedgesas discourse markers that adduncertainty tospeech, make it less direct, andshowthat thespeaker´s speechlackssufficient proof whichdoesn´t enable the speaker to confirm or validate the truthfulness of utterances. Over the years the study of hedges has been deepened by many scholars who studied hedges from different angles. The roleof hedges is significant as they give access to boththe speaker and the writerto acquire relevant skills to avoid disagreement even ifthey are not well-informedabout a certain conversational topic or theyintend to sugarcoat criticism when dealing with most controversialissues. It can be considered an essential aspectto be aware of the subtle differences between the semantic representation and pragmatic interpretation of hedges without which one cannot determine their functions and pragmatic value. In case of hedging inappropriately, the speaker may sound rather rude and even arrogant, which in its turn may lead to misunderstanding and give rise to arguments, sarcasm or even irony between the speaker and the hearer. It is nearly

impossible to imagine the world without hedges; hence, their proper use will greatlyfacilitate interpersonal communication among people, enabling them to sound more polite and to make a particular language much more multi-functional. All in all, using hedges will lead not only to successful communication, but will also give access to both the speaker and the writer to advance further to develop generic competencies, such as analytical, practical, critical thinking, teamwork, and interpersonal communication skills.

This article is an attempt to study hedges from the perspective of politeness by revealing their primary functions and some of their pragmatic interpretations. The analysis of the examples is primarily based on the classification of hedges proposed by Pedro Martin, the functions of languages proposed by Halliday (1994), and the pragmatic value of hedges based on those classifications. In addition, we have studied different strategies of positive and negative politeness and the Cooperative Principle proposed by Grice [5, 182-5].

According to Pedro Martin, a taxonomy of hedging devices comprises the followingstrategies: *thestrategy of indetermination*-by giving a proposition a coloring of lesser semantic, qualitative and quantitative explicitness as well as of uncertainty, vagueness and fuzziness, *thestrategy of camouflage hedging*and *thestrategy of subjectification-the* use of the first personal pronouns (I/we) followed by verbs of cognition (think, believe) or performative verbs (suppose, suggest), that can be interpreted as the writer´s signaling that what they say is just their personal/subjective opinion. In this way, both the speaker and the writer can show their respect for the reader´s and the hearer´s alternative opinions [9, 66-69].

Halliday (1994) states that language can be implemented in three different functions: ideational, interpersonal, and textual. The ideational function means that the use of a languageenhances comprehensibility, thereby making the process of organizing the speaker´s perception of the world more coherent. The interpersonal function concerns the role of participants in communication. It enables both the speaker and the hearer, the writer and the reader to show their perspectives on different topics in social interactions and show their communicative behavior byfollowing certain regulations of politeness. The textual function concerns the use of language in relation to written and oral statements in real-world situations. The role of different hedgesis significant in each function contributing much to the implementation of each of them in real-world situations and showing a remarkable range of possible ways of making contextually-based interpretations. The appropriate use of the ideational function of hedges can help the speakers modify the strength of their utterance, soften the force of the speech and express their perspectives politely even if they intend to show a certain amount of criticism. When dealing with interpersonal function, the use of hedges significantly enhances mutual understanding between the speaker and the hearer. It is nearly

impossible to imagine the process of communication without hedges, the multifunctional nature of which helps the speaker minimize the force of imposition, leave adequate leeway, mitigate the responsibility of the statement and escape conflicts. In addition, hedged opinions and statements can be used to avoid being too direct and making unduly assertions which willenable speakers to soften their speech and share assumptions with hearers. As regards the textual function of hedges, it is worth considering appropriate interpretations of written statements in real-world situations [6,179]. Hedgescan serve as essential tools in writing with the help of which writers can hedgethe statements used in their theories. On many occasions, hedge markers can be considered urgent without which the statement may sound too blunt. When dealing with hedges, there are a number of expressions the use of which in speech can give access to the speaker to use approximations in order to avoid absolute or precise statements. The main markers of approximation can be considered adverbs and prepositional constructions. They can raise vagueness in speech and make it less direct. Hedges can also be considered stance markers that enable speakers to show their attitude towards a particular situation or express their viewpoints. Put it differently, they can be considered as discourse-regulating means modifying the degree of certainty in accordance with a particular situation[3, 203-204].There are many hedges speakers often take into account when communicating with others in everyday life to downtone the intensity and assertiveness of the expressed statements. Such hedges are*: apparently, arguably, by any chance, I think, just(about), kind of, like, maybe, perhaps, presumably, probably, roughly, sort of, surely, partially, probably, usually, likely, frequently, broadly, roughly and so on [3, 223-224]. The interpersonal function of some of these hedges is analysed in the examples provided below.*

(1) Guest 1: Good evening, Simon.

Simon: Good evening, Mr&Mrs Hepworth. Have you had a good day?

Guest 2: Yes, thanks. Simon, can you recommend a good Indian restaurant?

Simon: Well, the most famous one in the city is the Majestic on Bristol Street but it gets very busy. On Friday nights you usually have to make reservations.

Guest1: I see.

Simon: But, ***in fact, I think*** *the Taj Mahal is better than the Majestic.Also, it is cheaper. And it is closer too. I´d recommend that.*

Guest 2: Sounds good. Could you make reservations for us?

Simon: You don´t ***usually*** *need reservations [10, 90].*

Example (1) is related to recommendations for places to have a meal at. The guests ask Simon about places to eat locally. While recommending famous places, Simon uses the hedge *infact* in his speech, which enables him to reduce the risk of the effect on the guests. One interesting function of the hedge *in fact* is a self-protecting function. In the dialogue, it protects the speaker from failure. Simontentatively expresses his point of

view withoutsureness. He keeps himself away from further criticism and escapes conflicts. One more interesting function of the hedge *in fact*we have revealed is thecounterbalancing function. It has a weak effect and mostly depends on the speaker´s assumption about what the hearer believes or expects to hear.However, what the speaker says, might turn into a complete failure in some cases. The speaker might not meet the hearer´s expectations. *Infact,* can also be used to downtone the force of speech and can serve as a hint. The speaker keeps the balance between what he says and the reality. In the conversation, it may have a persuasive force as well [1, 81-88]. Simon may persuade the guest to visit the Taj Mahal instead of the Majestic. As is seen from the example, *in fact* is followed by *I think* to distinguish the speaker´s attitude towards a particular situation from that of others´ opinion. It is used as a strategy of subjectivisation; hence, the speaker points out that whatever he says is just his personal opinion.Something like atentative evaluation takesplace in the conversation. Simon tentativelyevaluatesthe placethat is worth visiting without any imposition. He could have given a possible answer, like "The Taj Mahal is definitely better than the Majestic". But here, we notice that he does not give a definite answer to the guest´s direct question, but simply tries tosuggest something allowing the hearer to make other alternatives.Another hedging marker used in the conversation is*I think*. It makes the speech somewhat vague. Here *I think* possesses a softening functionthat enables the speaker to sound more polite, and not to say anything for sure through applying an avoidance-based approach. In addition, *I think*can possess a function of intensifying imprecision allowing the speaker to avoid giving exact information. The use of this hedging marker in speech contributes a lot to successful communication.There is one more hedging marker in the conversation-*usually*, which has mainly a downtoning function, with the help of which the speaker changes the tone of his speech and makes the statement less assertive. It can be considered an indefinite frequency marker showingwhat normally happens without certainty.Therefore, what the speaker is saying is related to the conventional regulations for hotel reservationswithout attaching any additional emphasis to his answer.

(2)Simon: Good evening, madam. Can I help you?

Guest: Yes, I´ve just checked in and I don´t have any local currency. Is there an ATM in the hotel?

Simon: Sorry, madam. I didn´t quite catch that. Is there a what in the hotel?

Guest: An ATM, a cash machine- somewhere I can take out some money.

Simon: Ah, now I understand. I am sorry, madam, ***I´m afraid*** *there isn´t a cash machine in the hotel but there are lots of banks on Maple Street, which isn´t far away.*

Guest: Could you show me where it is?

Simon: Sure. Let me give you a map of the city. The hotel is here. Look, I will circle it for you. Maple Street is ***about*** *five minutes´walk away [10, 18].*

As can be perceived from the example, while giving instructions to the guest, Simon uses *about*, an example of approximation, which indicates uncertainty and likelihood about a specific event. *About* fails to provide sufficient and wanted information which adds some extra uncertainty to the utterance and noticeably casts doubt on the need for giving detailed information. By using this hedging marker, the speaker tries to make sure his words are not too far away from reality since he cannot give the exact description. Besides, it softens the speaker´s speech and keeps the speaker away from being proven wrong later. Another no less important function that we notice here is tentativeness, which shows that the speaker circumspectly gives instructions without any sureness and doesn´t have any control of the situation concerning exact details. Another hedging marker used in the same conversation is *I´m afraid*. It can possess different functionsone of which is softening the speech. It regulates the speech and keeps the speaker away from making certain statements, thereby lessening the degree of certainty in the speaker´s speech. Another function is a discourse-regulating function, which gives the speaker a chance to facilitatethe structural flow of speech and reduce the risk of being criticized later. In addition, it helps the speaker sound more polite by making the statement less direct. The speaker doesn´t give anydetailedinformation; just on the contrary, he adds hesitation and uncertainty to his speech. In order to tactfully avoid giving irrelevant information, he uses *I´m afraid* in his speech, which fails to provide sufficient information and makes the speech somewhat imprecise. Here, we witness the ambiguous function of the hedge *I´m afraid*. On the one hand, it is used to minimize the impositionmaking the utterance somewhat vague; on the other hand, it makes the negative utterance sound more polite and less abrupt or unexpected.

In the process of communication, everyone tries to protect and preserve their public self-image and wants to claim for themselves. To put it differently, they want to protect their "face"(Goffman, 1967), which can be implemented in two main aspects: *negative face,* which allows both the speaker and the hearer to use different markers to act freely without having any imposition so that they can preserve their public self-image, and *positive face,* when the interactants want their self-image to be much appreciated [4, 5].P. Brown and S. Levinson distinguishtwo types of politeness: *positive* and *negative*. The former includes the strategies of noticing, attending to the hearer´s interests and wants, exaggerating, intensifying interest to hearers, using in-group identity markers, seeking agreement, avoiding disagreement, presupposing common ground, joking, presupposing S´s knowledge of and concern for H´s wants, offering, being optimistic, including both the speaker and the hearer in the activity, giving reasons, assuming reciprocity. As far as the latter is concerned, it includes the strategies of being conventionally indirect, questioning or hedging, being pessimistic and minimizing the imposition [2, 101-211]. Leech (2014) states three main observable

factors that can make the theory of politeness answerable to evidence. First, there is evidence of what people say, or less authentically what they believe they would say (or someone else would say) in a certain situation. Second, there is evidence of what context the words or utterances are spoken in. When dealing with the second factor, it is important to consider cultural differences and characteristics as well. It becomes the speaker´s responsibility to be well-informed about the main cultural differences in order to sound more polite. Third, there is a set of judgments about the degree of politeness involved; the judge can be the person interacting in a dialogue either the speaker or the hearer, or one or more third persons acting as analyst-observer [8, 53].

When analyzed from a pragmatic perspective, hedges can have adiscourse-regulating function making one´s speech more polite. The use and different functions of hedges can be associated with the Cooperative Principle (CP) proposed by Grice, especially with the notion of conversational implicature. According to Grice, the CP has four maxims: the Maxim of Quality, Quantity, Manner, and Relation [5, 182-185]. The use of the hedging markers in conversations shows that the speaker is subconsciously aware of the maxims and attempts to observe the CP. When the speaker ostensibly flouts maxims, it can lead to the realization of the infringement of the CP and the lack of cooperation between the speaker and the hearer. When dealing with the infringement of the maxim of manner in interpersonal communication, it becomes the hearer´s responsibility to guess the intended meaning. Since hedges are used for succinctness by giving as much information as the context requires; however, with the use of the hedging markers, the speaker does not necessarily flout the maxim of quantity. Contrastingly, the use of too many hedges in speech can lead to sarcasm or even irony. Hence, it is important to take into account hedges as a tool to follow the maxim of relation in communication. Hedges considerably contribute to minimizing imposition on the hearer and making the discourse easier to follow and understand. Considering the significance of hedging markers in interpersonal communication, it is worth taking into account the truthfulness of exchanged information. Another no less important maxim interlocutorscan follow is the maxim of quality. It is vitally important to take into consideration its speech-regulating functions and not to say things that one knows are false.In those cases, it will be much better to use a hedged opinion or different hedging markers in speech, with the help of which one can simply evaluate a particular situation without any unwanted imposition.

(3) David: Here is your mineral water with ice and lemon, madam.

Guest: I am sorry, I can´t drink out of that. The glass is dirty and there is lipstick around the edge. Please take it away and bring me another one.

David: I am very sorry, madam. I will replace it right away.

Guest: Thank you.

David: Here you are, madam. ***I hope*** *this glass is better for you.*

Guest: Yes, that looks a lot better, thank you [10, 54].

Example (3) includes conversational patterns between David, a barrister, and some unhappy customers. At the bar, David has to deal with complaints and apologize for mistakes. In order to avoid making an assertive statement, David uses the hedge *I hope*, which makes his speech somewhat uncertain. The hedging marker *I hope* can be considered as a marker of positive politeness [2,126]. It belongs to the strategy of indetermination, lessening the qualitative explicitness in speech. It is used to show the waiter´s optimism without sureness. David hopes that the second time the customer will find the glass clean and will not complain anymore. Here, we see the mitigating function, since *I hope*softens the speech, lessens the responsibility, and helps the speaker sound more polite. It also makes the conversation smooth without conflicts. The speaker follows the maxim of quality and doesn´t say anything which he knows might be acceptable. Based on this, we conceive one more function of the hedge *I hope* - thedistancing function. David simply keeps himself away from facts and further criticism. It allows him to protect his self against being proven wrong later.Hepresumes that the customer will be pleased and won´t complain anymore. It regulates the process of communication, weakens the force of the statement, and stands for an indirect statement.*Ihope*also carries out an evasive function enabling the speaker to avoid facing an awkward situation.

(4)Danielle: Sorry to interrupt. May I clear away your plates?

Diner 1: Yes, please do. We have finished.

Danielle: How were your main courses? Was everything OK?

Diner 2: Yes, thank you. It was all excellent.

Danielle: Would you like to see the dessert menu?

Diner 2: No, thank you. ***I think*** *we will skip dessert.*

Danielle: Can I bring you anything else? A coffee or a digestif, perhaps?

Diner 2: Could we ***just*** *have two espressos?*

Danielle: Of course [10,66].

Example (4) pervades conversation patterns between the waiter and the two diners. Danielle attends to two diners who have already finished their main courses. She has to deal with them when bringing the bill or handling payment. At first, she politely asks the diners if she can clear away their plates. Later, when the diners are asked about the dessert, the second diner uses the hedge *I think* in her speech, which reduces the imposing tone of the speech and makes it less direct. One interesting function of the hedge*I think* is the moderating function. Here in the example, it moderates the tone of the speaker´s speech making it less assertive, which, in turn, enables the speaker to avoid imposing her thoughts on the waiter.It presents the weakening of a claim through an implicit qualification of the speaker´s commitment. It is an example of negative politeness, which doesn´t meet the needs of the hearer [2, 213]. It measures the level of

the speaker´s communicative competence and leads to successful communication. In the dialogue, it is indicated that diner 2 offers alternative opinions or ideas for reference. Another hedge used in the same conversation is *just*. It is an example of negative politeness, possessing the function of minimizing imposition [2, 148-149].

From the examples analysed above, it has become apparent that hedges used in hotel and hospitality services primarily perform the functions of self-distancing, vagueness, softening, and indirect evaluation, anchoring through reflecting the speaker´s communicative intent and commitment to a particular situation the absence of which will lead to communicative breakdowns. Hedges are effective tools to express politeness serving as a guarantee for agreement and mutual understanding. Last but not least, hedges explicitly and implicitly express uncertainties and inaccuracies to shield the speaker against the threat of being proven wrong and to minimize feasible imposition on hearers.

REFERENCES

1. Aijmer K. Understanding Pragmatic Markers: A Variational Pragmatic Approach, Edinburgh, 2013, pp. 81-89.
2. Brown P., Levinson S. Politeness: Some universals in language usage, Cambridge: Cambridge University Press, 1978, pp. 101-213.
3. Carter R. McCarthy M. Cambridge Grammar of English, A Comprehensive Guide: Spoken and Written English Grammar and Usage, 2006, pp. 223-224.
4. Goffman E. Interaction ritual: essays on face-to-face behavior. Garden City, New York, 1967, p. 5.
5. Grice H. P. Logic and conversation. Syntax & Semantics 3: Speech Acts., New York: Academic Press, 1975, pp. 182-185.
6. Halliday M.A.K. An Introduction to Functional Grammar, London: Edward Arnold, 1994, p. 179.
7. Lakoff G. Hedges: A study in meaning criteria and the logic of fuzzy concepts. Chicago, 1972, pp. 195-197.
8. Leech N. G. The Pragmatics of Politeness, Oxford University Press, 2014, p. 53.
9. Martin P. The Pragmatic Rhetorical Strategy of Hedging in Academic Writing, Unversidad de la Laguna, Tenerife, file:///C:/Users/admin/Downloads/3867-Texto % 20del % 20art % C3 % ADculo-8053-1-10-20220316 % 20(1).pdf, pp. 66-69.
10. Seymour M. Hotel & Hospitality English, London, 2011, pp. 18-90.

Հեջավորումը որպես քաղաքավարությունը կարգավորող գործիք հյուրանոցային և հյուրընկալության ծառայություններում

Հակոբյան Մարիամ
«ՎՊՀ» հիմնադրամ, Անգլերեն լեզու և գրականություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Վարդանյան

Ամփոփում

Հանգուցային բառեր. *քաղաքավարություն, հեջավորում, վարքականոն, հյուրանոցային ծառայություններ, երկիմաստություն, անուղղակիություն, գործաբանական արժեք*

Հեջերի գործածությունը կարևոր է հյուրանոցային և հյուրընկալության ծառայություններում: Անգլերենում հեջերը կարող են ծառայել որպես դրական և բացասական քաղաքավարությանը նպաստող գործիքներ, որոնք օգնում են խոսողին զերծ մնալ որևէ հարցի շուրջ հստակ դիրքորոշում կամ կարծիք արտահայտելուց, նվազեցնում են հստակությունը խոսքում՝ հնարավորություն տալով ունկնդրին կողմնորոշվելու՝ առանց պարտադրելու որևէ իրավիճակի նկատմամբ զրուցակցի ունեցած սեփական կարծիքն ու վերաբերմունքը: Սույն հոդվածում փորձ է արվել վեր հանել և պարզաբանել հեջերի գործառույթները հյուրանոցային տարբեր ծառայությունների մատուցման ընթացքում:

Хеджирование как средство регулирования вежливости в гостиничных услугах

Акопян Мариам
ВГУ, Английский язык и литература, магистратура, 2-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Л. Варданян

Резюме

Ключевые слова: *вежливость, хеджирование, максима, гостиничные услуги, двусмысленность, неопределенность, прагматическая ценность*

Хеджирование играет важную роль в гостиничных услугах. В английском языке хеджи могут служить инструментами положительной и отрицательной вежливости, которые помогают собеседникам избежать недопонимания, одновременно позволяя говорящему выразить свое отношение и мнение о ситуации без какого-либо принуждения к слушателю. В данной статье мы попытались уточнить, какие функции могут выполнять хеджи в разных гостиничных услугах и обслуживании людей.

Мифологема «Изба» в контексте старообрядческой деревни и творчество Н. Клюева

Паранян Мариам
ВГУ, Русский язык и литература, 4-й курс
Научный руководитель: Э. Саакян

Ключевые слова: *новокрестьянская поэзия, Серебряный век, крестьянский быт, фольклор, деревня*

В русской культуре XIX века проявляется обостренный интерес к народному бытию и национальному русскому характеру. В этот период художественно-философская мысль обращается к русской самобытной цивилизации, в частности, к старообрядческой деревне.

Самобытным явлением в литературе этого периода становится новокрестьянская поэзия. Самыми яркими представителями новокрестьянских поэтов являются Сергей Есенин, Николай Клюев, Сергей Клычков, Александр Ширяевец, Алексей Ганин, Павел Радимов и Петр Орешин. Поэты этого течения развивали традиции крестьянской поэзии, не замыкаясь в ней. Основная тема новокрестьянской поэзии – поэтизация деревенского быта, старообрядческой деревни, воспевание разнообразия крестьянских ремесел и сельской природы. Представители новокрестьянской поэзии – поэты, вышедшие из народной среды, из деревни. Творчество новокрестьянских поэтов опиралось на фольклорную и литературную традицию XIX века. Основные мотивы – жизнь деревни, природы, взаимосвязь и сходство жизни деревни с жизнью природы.

Актуальность статьи обусловлена необходимостью изучения народных и национальных корней русской литературы, с обязательным установлением значения темы старообрядческой деревнив творческом наследии русского Серебряного века.

Целью статьи является: изучение новокрестьянской поэзии, выявление ее духовных истоков, подробное рассмотрение мифологемы «изба» в новокрестьянской поэзии, в особенности, в творчестве Н. Клюева.

Объектом исследования является творчество новокрестьянских поэтов и поэтический мир Н. Клюева, в частности.

Предметом статьи являются стихотворения новокрестьянских поэтов, поэтические циклы Н. Клюева, в которых выявляется мифологема «изба» и образ деревни.

В статье ставятся следующие задачи:

- Изучить творчество Н. Клюева и тенденции новокрестьянской поэзии.
- Раскрыть своеобразие темы патриархальной деревни и образа «избы» в творчестве Н. Клюева.

Новизна статьи: Творческий мир Н. Клюева и тема деревни исследованы в преломлении старообрядческой деревни и мифологемы «избы».

Крестьянский космос – целостная мировоззренческая и эстетическая система, сформировавшаяся в произведениях поэтов и прозаиков новокрестьянского направления. Относясь к культуре Серебряного века, привнеся в нее свои мировоззренческие и художественные взгляды, они сформировали в ней самостоятельное направление. В литературном процессе и философии 1920-1930-х годов новокрестьяне стали выразителями религиозно-мистической мысли, русского космизма, стилевых исканий Серебряного века.

Среди представителей новокрестьянской поэзии «космизм» в большей степени отразился в произведениях Сергея Есенина и Николая Клюева. В творчестве С. Есенина нашли свое отражение вековые традиции изображения космических тел. По представлению самого поэта, *«стихи его не несут ни солнечного тепла, ни холодность лунного сияния. Они лишь будят в душе потребность остановиться, осмотреться, услышать самого себя»* [5].

У С. Есенина космическая модель мира предполагает деление на небо и землю. К первому – верхнему миру – относятся небесные явления (небо, солнце, луна, звезды), ко второму ярусу – среднему – относятся земля, деревья, животные, человек, жилищные и другие строения. Эти ярусы очень тесно взаимосвязаны.

Прочитав стихотворения Сергея Есенина, становится ясно, что они наполнены лаской солнечных лучей, лунным светом и сиянием звезд. Астрономических понятий в его творчестве так много, что С. Есенина называют и «звездным», и «лунным», и «солнечным» поэтом. Вселенная поэзии Сергея Есенина противостоит обыкновенному понятию «космос». В космосе человек и Вселенная существуют порознь. В мире поэта – человек и космос неделимы.

Сергей Есенин создает свой личный поэтический миф о космосе и природе, в котором «мир и вечность» близки как «родительский очаг», холмы напоены «неизреченностью животной», а сам он выразитель и защитник этой неизреченности.

В глубине поэзии С. Есенина, внутренний космический огонь – это огонь изнутри, отражение космического пламени. Космос С. Есенина показывает на закономерность появления космической метафоры в русской поэзии тех времен. По мнению поэта, человек должен «родиться» для космоса.

Среди других представителей новокрестьянской поэзии своеобразное отношение к «избяному космосу» проявил Николай Клюев. В его понимании деревенский дом стал центром личностного бытия человека, его вторым «я», его «магнитным полем». Искусство слова, по Н. Клюеву, – это постижение, точнее, воспроизведение загадочного, неведомого, нездешнего: «*Мы любим только то, чему названья нет, // Что, кик полунамек, загадочностью мучит...»* [2].

Поэт говорил «языком народа» с целью быть услышанным и понятым. У Н. Клюева был образ крестьянской избы – это осевой образ, который является своего рода микрокосмосом, обнимающий всю полноту бытия. Изба и Вселенная

смотрятся лицом к лицу, символизируют друг друга: изба становится макрокосмосом, а Вселенная физиологизируется, представая в образах земных существ, частей тела, еды и т.п.

В поэтической системе Н. Клюева образ деревни является одним из ведущих. Его стихи связаны с фольклором и бытом северорусской деревни начала XX века, в которой выражены мечты и надежды той части крестьянства, которая торжественно воспринимала собственные обычаи, нравы, культуру, народную поэзию и природу. Этому немало способствовало крестьянское происхождение поэта, благодаря чему он увидел основы истинной нравственности, чистоты, простоты жизни, коренной мудрости.

Благодаря новокрестьянским поэтам, также и Н. Клюеву, тема города и деревни стала особенно актуальной в русской литературе XX века. В художественном мире Н. Клюева деревня имеет вполне конкретное очертание и становится обозначением реального пространства: «*Бреду к деревушке мясистый и розовый // Как к пойлу корова – всещедрый удой...*» [4]. В его произведениях деревня нередко предстает в ночное время, в часы заката и пребывает в состоянии дремоты и сна: «*Прохожу ночной деревней, // В темных избах нет огня...*» [4].

Центром – сердцем деревни является «избяная Русь». Отметим, что в поэзии Н. Клюева образ деревни формируется в тесной связи с созидательными образами хлеба, коровы (молока), что отражает народные представления о жизни в деревне.

Центральный образ поэзии Николая Алексеевича – русская изба крестьянина, а также связанный с ней мир, причем не только вещественный, но и духовный. Деревенский дом для него – не просто жилище бедняка. Особенность его творчества заключалась в высокой степени поэтизации крестьянского быта. Поэтому он называл себя «певцом олонецкой избы».

Изба наделяется мистической сущностью. Изба полна света. Н. Клюев освещает все предметы крестьянского быта. Крестьянская изба – не убогое жилище бедного горемыки, а основа мироздания, целый мир, избяной космос*: «Беседная изба – подобие вселенной: // В ней шолом– небеса, полати – Млечный Путь...»* [3; с.140]. Изба у него олицетворяется: «*Насупилась изба. И оком оловянным // Уставилось окно в капель и темноту*» [4].

Появляется и тема Востока. Нередко русская деревня окрашивается в экзотические восточные цвета. Русь для него – избяная Индия, белая Индия. Клюеву, без сомнения, были известны рассказы о поисках благодатного края, духовной и физической свободы, о походах старообрядцев вплоть до конца XIX в. Знал он также, что имеется в виду не мифическая, а реальная земля – Индия: *«Индийская земля, Египет, Палестина – / Как олово в сосуд, отлились в наши сны. / Мы братья облакам, и савана холстина – / Наш верный поводырь в обитель тишины»* [3; с.140]. Не только и не столько «мужицкий рай» предвкушал Н. Клюев в своих мечтаниях о «Белой Индии». К 1916 относятся первые его гимны Белой Индии, что входит

неотъемлемой составной частью в «избяной космос», созданный творческим воображением поэта.

Своеобразным манифестом в творчестве Н. Клюева стало стихотворение **«Рождество избы»**. Эта поэзия не просто о постройке жилья, но и о рождении «дома». Стихотворению деревенский колорит придает особая лексика. Герой стихотворения осознает, что в этом мире у всего есть душа – и у дерева, и у птицы. Стоит отметить, что Н. Клюев наделяет постройку жизнью, сравнивая ее с «избой-молодкой». В произведении воспевается честный труд и простой человек – создатель своего будущего.

Своим стихотворением «Рождество избы» Николай Клюев отдал дань русским традициям, русскому зодчеству, простому русскому человеку и, конечно же, русской избе, как колыбели жизни.

Мифологема «изба» также затрагивается в цикле стихотворений **«Избяные песни»**, воплотившие в себя идеологии крестьянства, поэзию его верований, обрядов, его связь с землей и деревенским миром. В крестьянстве заключался весь поэтический мир Николая Клюева, поэтому, чем больше государство проводило «опытов» над крестьянством, тем больше хотелось поэту защитить его, запечатлеть в своих стихах. В этом цикле всецело изображен клюевский «избяной космос».

«Избяные песни» состоят из пятнадцати стихотворений и представляют собой авторский цикл, посвященный матери поэта. В нем впервые была олицетворена концепция «избяного космоса» олонецкого художника. Черты фольклорного жанра причета: мотив осиротевшего дома, обращения к умершему («родитель», «родная»), плач по усопшему, все это сочетается с признаками литературной песни. В первых шести стихотворениях преобладает мотив сиротства сына и опустевшей избы.

В первой части поэмы **«Деревня»** внимание фокусируется на воспроизведении идеального мира крестьянской России, каким он видится в мечтах лирического героя Н. Клюева. Поэт воспроизводит красочные детали устройства этого фантастического мира, в центре которого находится излюбленный поэтом образ *«Избы с матицей пузатой, // С лежанкой-единорогом, // В углу с урожайным Богом»* [3; с. 304].

Клюевский образ деревни немыслим вне связи с образом «родимого края». Природа и человек в мирообразе деревни Н. Клюева взаимосвязаны, их существование естественно и гармонично: «*Нам любы Бухары, Алтаи, // Не тесно в родимом крае, // Шумит Куликово поле // Ковыльной залётной долей. // По Волге, по ясной Оби, // На всяком лазе, сугробе, // Рубили мы избы, детинцы, // Чтоб ели внуки гостинцы*» [3; с. 305].

В поэме Н. Клюева описание сельских красот обрывается безрадостными размышлениями о дальнейшей судьбе русской деревни, о ее будущем. Именно с этого момента происходит резкая смена настроения и начинается вторая часть произведения. Идиллическая картина первой композиционной части сменяется мрачной панорамой деревни и крестьянской России в целом, гибнущей под

натиском «железной» цивилизации города. Спокойствие и радость переходят в скорбь и тоску.

Картину гибнущей патриархальной деревни в поэме Н. Клюева дополняет тревожный образ вьюги, соотнесенный с надвигающейся неминуемой катастрофой: *«И Сибирь, и земля Карела // Чутко слушают вьюжный хор. // А вьюга скрипит заслонкой, // Чернит сажей горшки»* [3; с. 306].

Вполне закономерно и появление в поэме зловещих образов. Один из них – это «железный конь», – появившийся в деревне первый трактор. Для Н. Клюева «Железо» – это своеобразное воплощение зла, так как оно враждебно «Земле», природе, всему «патриархальному», «избяному».

В поэме «Деревня» источником всех бед является разрушение многовекового уклада жизни русской старообрядческой деревни, в утрате гармонии ее мира, что неминуемо, по мнению поэта, влечет за собой разлад уже космического масштаба. Картина нарушенной красоты естественного миропорядка деревни проявляется в том, что железная цивилизация разрушает уклад деревенской жизни, неся за собой хаос.

В финале поэмы отчетливо слышится уверенность поэта в светлое будущее русской деревни: «*Только будут, будут стократы // На Дону вишнёвые хаты, // По Сибири лодки из кедра, // Олончане песнями щедры. // Только б месяц, рядясь в дымы, // На реке бродил по налимы, // Да черёмуху в белой шали // Вечера как девку ласкали!»* [3; с. 309].

В своих произведениях Н. Клюев выступал сторонником незыблемого крестьянского быта, его патриархально-религиозных порядков, которые веками складывались в русской деревне. Это можно заметить в стихах, вошедших в сборники «Братские песни» и «Мирские думы».

Отметим, что в поэзии Н. Клюева образ деревни ассоциируется с «избяным раем», формируется в тесной связи с созидательными образами хлеба, коровы (молока). Образ деревни отражает народные представления о мужицком деревенском рае. *«Впусти их раздумьем – и въявь обретешь // Ковригу Вселенной и Месячный Нож // Нарушай ломтей, и Мирская душа // Из мякиша выйдет, крылами шурша»* [3; с. 235].

Образ деревни в поэзии Н. Клюева тесно связан с мотивом сна. Эти сюжеты и образы снов отражены в его прозе и поэтических произведениях. Так, Клюев пишет в «Гагарьей Судьбине»: *«Жизнь на родимых гнездах, под олонецкими берестяными звездами дала мне песни, строила сны «святые», непоколебимые, как сама земля»* [1]. Эта мысль отражается в поэтических образах, которые воплощены в стихотворении «Нерушимая Стена»: «*И не веткой ли Палестины // Деревенские дни цвели, // Когда ткал я пестрей ряднины // Мои думы и сны земли. // Когда пела за прялкой мама // Про лопарский олений рай // И сверчком с избяною Камой// Аукался Парагвай?»* [1].

С образом деревни (избяного рая, святой земли) неразрывно связан мотив

разрушения, гибели. Этот образ тесно перекликается с революцией Ленина. Н. Клюев видит в революции безбожие, насилие и порок. Он жалуется Максиму Горькому о том, что революция сломала деревню и ее индивидуальность. Этот мотив можно обнаружить в поэмах «Деревня» и «Погорельщина».

Гибель деревни, по мнению Н. Клюева, – это то, что происходит в настоящем, а возрождение деревни он видит в будущем через очищения и муки, подобно Христу. Он гибель деревни связывает с утратой христианских ценностей, который передал через образ «смертельной болезни Бога»: «*Переплеск, как столб комаров, // Запевает в ушах деревни; // Знать, пора крылатых китов // Родить нашей Саре древней. // Песнолиственный дуб облетел, // Рифма стала клокочуще бурна... // Кровохарканьем Бог заболел – // Оттого и Россия пурпурна*» [4].

Подводя итог, еще раз подчеркнем, что в своих стихотворениях Николай Клюев смог нарисовать перед нашими глазами картину уходящего времени и жизни. Поэт вспоминает свои родные места с трепетом и любовью, для кого-то это просто ностальгия, а у кого-то непроходящая боль.

Итак, изба в представлении Н. Клюева – это символ мироздания, подобие вселенной. В избе рождаются и умирают, любят и женятся, поют и сказки сказывают, пекут, угощают, молятся. Также изба – это крестьянская Русь, «матерь – отчизна», «матерь – земля», «мать – природа», где в гармонии должны были жить люди, звери, гады и боги, каждый зная свое место. Но жизнь была сложнее и не укладывалась в клюевские схемы.

ЛИТЕРАТУРА

1. Головкина С. Х. Образ русской деревни в поэтических текстах Н. Клюева https://kizhi.karelia.ru/library/ryabininskie-chteniya-2015/1605.html
2. Клюев Н. А. Мы любим только то, чему названия нет... https://lib.rmvoz.ru/bigzal/kluev/izbr#01
3. Клюев Н. А. Стихотворения. Поэмы. Москва: Художественная литература, 1991, - 351 с.
4. Клюев Н. А. Сборник стихотворений http://klyuev.lit-info.ru/klyuev/stihi/index.htm
5. Лирика Сергея Есенина https://zinref.ru/000_uchebniki/04600_ raznie_3/783_lekcii_raznie_17/698.htm

«Խրճիթ» դիցույթը հնաձիսական գյուղի համատեքստում և Ն. Կլյունի ստեղծագործությունները

Պարանյան Մարիամ
«ՎՊՀ» հիմնադրամ, Ռուսաց լեզու և գրականություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Հ. Սահակյան

Ամփոփում

Հանգուցային բառեր. *նոր գյուղական պոեզիա, Արծաթե դար, գյուղական կենցաղ, բանահյուսություն, գյուղ*

19-րդ դարի ռուս գրականության մեջ անդրադարձ է կատարվում ժողովրդի կյանքին և ազգային բնավորությանը: Այս տարրերը ներթափանցում են բանաստեղծության տիրույթ: Գյուղաշխարհը պատկերող բանաստեղծություններում գյուղի կյանքը հարաբերվում է (ընդգծվում են նմանություններն ու տարբերությունները) բնության տարրերին: Ն. Կլյունի երկերում գյուղը կերպավորվում է: Նրա ստեղծագործություններում պատկերվում են գյուղացու հույսերը, ապրումները, երազանքները, սովորույթները և մշակույթը. այս ամենին զուգահեռ գյուղացին դառնում է բնության անքակտելի մասնիկը: Բնության և գյուղաշխարհի համակողմանի պատկերմանը նպաստում էր հեղինակի գյուղական ծագումը:

The Mythologem "Hut" in the Context of Old-Ritual Village. Nikolay Kluev's Works

Paranyan Mariam
VSU, Chair of Russian Language and Literature, 4th year
Academic Supervisor: H. Sahakyan

Summary

Key words: *new rural poetry, Silver Age, rural life, folklore, village*

The Russian literature of the 19th century makes a reference to the people´s life and their national characteristics. These elements enter the domain of poetry. In the poems portraying countryside, the rural life is related to the elements of nature. The village is personified in N. Kluev´s poems. The peasants´ hopes, feelings, dreams, customs and culture are depicted in his works and parallel to this, the peasant becomes an indivisible part of nature. The writer´s rural origin had contributed to the comprehensive portrayal of nature and the countryside.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ

HISTORY

Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1992-2020 թթ.

Ասրիյան Աշխեն
ԱրՊՀ, Հայոց պատմություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ն. Սարուման

Հանգուցային բառեր. *Շուշի, հայաթափում, արտաքսում, ազատագրում, ժողովրդագրություն, վերաբնակեցում, բնակչության բնական աճ, բռնագաղթ, ներգաղթ*

1988 թ. Արցախյան շարժմանը նախորդած շրջանում և դրա սկզբնավորումից սկսած Ադրբեջանի իշխանությունները սկսեցին վարել քաղաքից հայերի մասսայական արտաքսման և նրանց փոխարեն ադրբեջանական բնակչությամբ Շուշին բնակեցնելու քաղաքականություն: 1979 թվականի դրությամբ Շուշիի 16019 բնակչից 2881-ը հայեր էին, 12955-ը՝ ադրբեջանցիներ: Քաղաքում ապրում էին նաև ռուսներ և ուկրաինացիներ: 1988 թ. քաղաքի հայաթափումից հետո Շուշիի բնակչության մեջ 15710-ը կազմում էին թուրք-ադրբեջանցիներ [1, 221]:

1992 թ. քաղաքի ազատագրումից հետո առաջին հերթին իրենց հայրենի օջախներ վերադարձավ բնիկ շուշեցիների մի մասը: Նրանց համար դա վերադարձ էր հայրենի քաղաք, որտեղից հեռացել էին 1988 թվականին: 1992-1993 թվականներին նկատվեց քաղաքի նախկին բռնատեղահանվածների 35-40 %-ի վերադարձ [3.32]:

Շուշիում վերաբնակվելու, տեղում բնակարան գտնելու հարցերում վերաբնակիչներին օգնություն էր ցուցաբերում քաղաքի վարչակազմը, որը ձևավորվեց քաղաքի ազատագրումից մեկ շաբաթ անց՝ Սեմյոն Բաբայանի գլխավորությամբ [2, 491]: Վարչակազմի աշխատակիցները ընդունում էին վերաբնակիչներին, ուղեկցում բնակարան, իսկ ապրելու հետ կապված բոլոր խնդիրները պետք է հոգար վերաբնակիչը [3, 47-48]: Բնիկ շուշեցիները այս առումով հաստատվում էին ոչ թե 1988 թ. իրենց պատկանած բնակարաններում, որոնք վնասվել էին, այլ ընտրում էին նոր բնակարան կամ առանձնատուն: Արդյունքում, եթե մինչև 1988 թ. հայերի մեծ մասն ապրում էր բազմաբնակարան շենքերում, ազատագրումից հետո բնիկ շուշեցիների մեծամասնությունը սկսեց ապրել առանձնատներում:

1992 թ. աշնանը վարչակազմը սկսեց սեփականության ժամանակավոր վկայականներ տրամադրել բնակարաններում ապրող վերաբնակիչներին, իսկ առանձնատներում ապրողները գրանցվեցին միայն որպես քաղաքի բնակիչ: Սա պայմանավորված էր մեծապես նրանով, որ առաջին ամիսներին բավականին դժվար էր ու նույնիսկ անհնար էր ճշտել, թե տվյալ առանձնատան չափը որքանով էր համապատասխանում վերաբնակչի կարիքներին, քանի որ ընտանիքները Շուշիում հաստատվում էին թերի կազմով: Բնակարանները այս առումով ավելի ազատ էին, հետևաբար դրանց սեփականության վկայագիր տալը ավելի հեշտ էր ստացվում:

Շուշին ազատագրումից հետո բնակեցվել է նաև Ղարաբաղի այլ շրջաններից Շուշի եկած բնակչությամբ: Սա հատկապես ավելի ընդգրկուն դարձավ 1995-1996 թվականներից: ԼՂՀ գրավված և սահմանամերձ գյուղերից Շուշիում ապաստանածների մեծամասնության համար քաղաքը միայն ժամանակավոր բնակության վայր էր: Նրանց մեծ մասը 1992 թ. Մարտակերտի շրջանից տեղահանվածներն էին, որոնցից 90 ընտանիք 1994 թ. Ջինադադարից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած գյուղերից էին: Շուշիի բնակչության թվում Հայաստանից եկած վերաբնակիչները ամենասակավ թիվն էին կազմում: Նրանց առավելագույն ներհոսքը 1995 թ. էր, երբ հաստատվեց 64 ընտանիք՝ հիմնականում Երևանից: 1996 թ. այս խումբը մեծացավ ընդհուպ մինչև 121 ընտանիք [3, 31]:

1996 թ. դրությամբ վերոնշյալ խմբերը կազմավորեցին Շուշիի բնակչության ներէթնիկ խմբերի խայտաբղետ կազմը (տե՛ս աղյուսակ Ա):

Աղյուսակ Ա

Շուշիի բնակչության ներէթնիկ խմբերը 1996 թ. դրությամբ *[3.31]*

Ներէթնիկ խումբ	*Ընտանիք*	*%*
Բնիկ շուշեցիներ	221	20,7
Ստեփանակերտցիներ	302	28,3
Բռնագաղթվածներ Ադրբեջանից	222	21,0
Տեղահանվածներ ԼՂՀ շրջաններից	200	18,7
Վերաբնակիչներ Հայաստանից	121	11,3
Ընդամենը	1066	100,00

Շուշին որպես բնակության համար հարմար վայր դիտելը տարբեր խմբերի համար ուներ իր հիմնավորումները. ստեփանակերտցիները, Ադրբեջանից բռնագաղթածները, նախկին շուշեցիները տեղափոխվում էին բնակարանային խնդիրը լուծելու, Հայաստանից վերաբնակիչները՝ սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամի ազդեցությունները մեղմելու համար: Վերոնշյալ ժամանակահատվածում մենք գործ ունենք Շուշիի վերաբնակեցման այնպիսի գործընթացի հետ, երբ այստեղ հաստատվում էին հիմնականում «արտակարգ իրավիճակում» հայտնված ընտանիքներ ու խմբեր [4, 364-365]:

Ներէթնիկ խմբերի նման բազմազանությունը, համադրվելով սոցիալական, տնտեսական, մշակութային մի շարք այլ գործոնների հետ, պայմանավորեց Շուշիի «մշակութայնացման գործընթացների» առանձնահատկությունները:

Ազատագրված քաղաքում առաջինը կայուն տնտեսական դիրք գրավեցին բնակչության գյուղատնտեսական զբաղմունքները, թեև քաղաքի աշխարհագրական դիրքն ու ռելիեֆը դրանց համար պայմաններ չէին ապահովում:

Նախորդող տասնամյակի դրությամբ, չնայած բնակիչների թիվը նոսրանում էր, սակայն քաղաքի գրեթե ամբողջ տարածքը 1996 թվականի դրությամբ բնակեցված էր: Նոսրացման հիմնական պատճառը հիմնականում այն էր, որ 1993 թվականի ամռանից Շուշիում ապաստանած տեղահանված ընտանիքները

սկսեցին վերադառնալ իրենց ազատագրված բնակավայրերը: 1994 թ. զինադադարից և հատկապես 1996 թ. ԼՂՀ-ում հողի սեփականաշնորհումից հետո Շուշիից բնակչության արտահոսքը ժամանակավորապես գերազանցեց ներհոսքին, որը շարունակվեց ընդհուպ մինչև 2000 թվականը: Այդ տարիների բնակչության արտահոսքի չափերի մասին են խոսում նաև բնակչության բնական աճի տատանումները (տե՛ս աղյուսակ Բ).

Աղյուսակ Բ

Շուշիի բնակչության բնական աճը 1993-2001թթ. [3.36].

Տարի	***Ծնունդ***	***Մահ***	***Բնական աճ***
1993	25	-	-
1994	39	29	10
1995	61	17	44
1996	58	18	40
1997	51	22	29
1998	45	15	30
1999	29	21	8
2000	55	20	35
2001	53	17	36

Շուշիի բնակչության բնական աճի ամբողջական պատկեր ունենք 1994 թ. հետո, երբ 1994-1996 թթ. ընթացքում այն աճեց մոտ 4 անգամ: 1997-2000 թթ. ընթացքում դիտվում է բնական աճի նվազում, իսկ 2000 թ. հետո և հատկապես մինչև 2005 թ. բնական աճը սկսում է արձանագրել դրական միտումներ: Հենց այդ տարիներին Շուշիի բնակչությունը հասավ ավելի քան 3100-ի (տե՛ս աղյուսակ Գ).

Աղյուսակ Գ

Շուշիի բնակչության թիվը 1996-2005 թթ.

Տարեթիվ	***1996***	***1997***	***1998***	***1999 [6.3]***	***2000***	***2001***	***2002***	***2003***	***2004***	***2005 [7.15]***
Բնակչության թիվ	3609	3609	2900	2600	2745	2893	2994	3052	3119	3191

Քաղաքի բնակչության շարունակվող բնական աճ գրանցվել է նաև 2005-2020 թթ. ընթացքում, բացառություն կազմելով 2006-2007 թթ և 2012-2014 թթ, երբ դիտվել է բնակչության բնական աճի տեմպերի կտրուկ անկում (ամենացածր ցուցանիշը՝ 11, դիտվել է 2007 թ.), որը, սակայն, 2015 թ-ից նորից սկսել է որոշակիորեն բարելավվել (տե՛ս աղյուսակ Դ).

Աղյուսակ Դ

Շուշիի բնակչության բնական աճը 2006-2019 թթ.

Տարի	*Ծնունդ*	*Մահ*	*Բնական աճ*
2006	62	34	28
2007	46	35	11
2008	80	30	50
2009	91	28	63
2010	85	45	40
2011 [8.39-40]	71	29	42
2012	79	30	49
2013	77	38	39
2014	72	36	36
2015	95	36	59
2016	94	38	56
2017	87	38	49
2018	92	29	63
2019 [10.41]	79	28	51

2005-2020 թթ. Շուշիի բնակչությունը շարունակաբար աճելով հասել է ավելի քան 4200-ի (տե՛ս աղյուսակ Ե):

Աղյուսակ Ե

Շուշիի բնակչության թիվը 2006-2020 թթ.

Տարեթիվ	*Բնակչության թիվ*	*2013*	*4,3*
2006	3,3	**2014**	4,2
2007	3,4	**2015**	4,1
2008	3,6	**2016 [9.40]**	4,1
2009	3,9	**2017**	4,2
2010	4,1	**2018**	4,2
2011 [8.37]	4,2	**2019 [11.39]**	4,2
2012	4,3	**2020 [12.41]**	4,2

Ընդհանուր առմամբ, եթե 2006 թվականին Շուշիի բնակչության թիվը կազմում էր 3300 մարդ, ապա 2010 թվականին այն կազմեց 4100, 2013 թվականին՝ 4300: 2015-2016 թթ. այն աստիճանաբար սկսել է նվազել, ապա 2017 թվականից սկսեց աճել: Գործընթացը պահպանվեց մինչև 2020 թվականը: Սակայն 44-օրյա պատերազմից հետո քաղաքը ամբողջությամբ հայաթափվեց, և Ադրբեջանը իրականացրեց Շուշիում ամեն հայկական հետք մաքրելու իր ակտիվ քաղաքականությունը:

Շուշիի ազատագրման առաջին օրվանից շուրջ 3 տասնամյակ ԼՂՀ և տեղական իշխանությունների, հայկական կազմակերպությունների և մասնավոր անձանց առաջարկած ծրագրերով առաջարկվում էին քաղաքի հայկականության, երբեմնի մշակութային նկարագրի վերականգնման և, հատկապես, քաղաքի վերաբնակեցման տարբեր եղանակներ, սակայն դրանցից և ոչ մեկը իրականություն չդարձավ կամ իրականացավ մասնակի:

Քաղաքի վերաբնակեցման և դրան հաջորդող շրջանի բնակչության տվյալները ուսումնասիրելով՝ կարելի է պնդել, որ վերաբնակեցման գործընթացի, ապա նաև բնակչության թվաքանակի ավելացման համար որևէ լուրջ քաղաքականություն չի իրականացվել:

2023 թվականի դրությամբ Շուշիում տարվում է հայկական հետքը մաքրելու ադրբեջանական ակտիվ քաղաքականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալայան Վ., Ժողովրդական գործընթացները Շուշիում 19-րդ դարից մինչև մեր օրերը, Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2021, էջ 213-226:
2. Բալայան Վ., Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, 560 էջ:
3. Գաբրիելյան Մ., Դաբաղյան Ա., Շուշին 1992-2002 թթ. Հայերի վերադարձը ազատագրված քաղաք, Երևան, 2004, 96 էջ:
4. Գաբրիելյան Մ., Վերաբնակությունը որպես հասարակական-մշակութային գործընթաց Շուշի քաղաքի օրինակով, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 360-367:
5. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 1995-1999 թթ., Ստեփանակերտ, 2000:
6. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 2000-2006 թթ., Ստեփանակերտ, 2007, 225 էջ:
7. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 2005-2011 թթ., Ստեփանակերտ, 2012, 318 էջ:
8. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 2010-2016 թթ., Ստեփանակերտ, 2017, 314 էջ:
9. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 2018 թ., Ստեփանակերտ, 2019, 311 էջ:
10. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 2019 թ., Ստեփանակերտ, 2020, 348 էջ:
11. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք 2020 թ., Ստեփանակերտ, 2021, 360 էջ:

Демографическая ситуация в Шуши 1992-2020 гг..

Асриян Ашхен
АрГУ, История Армении, магистратура, 1-й курс
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент Н. Сарумян

Резюме

Ключевые слова: *Шуши, выселение армян, депортация, освобождение, демография, переселение, естественный рост населения, депортация, иммиграция*

В статье делается попытка осветить демографическую ситуацию Шуши в период 1992-2020 гг., колебания численности населения города и выявить его влияние на процесс исторического развития города. Предпринимается попытка прокомментировать политику изменения этнического облика города Шуши в результате предпринятых властями Азербайджана, заселения города азербайджанским населением, что способствовало увеличению численности азербайджанцев в городе. Ситуация изменилась после освобождения города, когда в родной город Шуши вернулись армяне. Также показано, что в результате политики освобождения и последовавшего за этим переселения в Шуши, а затем программ, направленных на увеличение численности населения, увеличилось население Шуши. Также делается попытка показать, что после 44-дневной войны азербайджанскими властями были реализованы новые программы по заселению Шуши.

Demographic Situation in Shushi 1992-2020

Asriyan Ashkhen
ArSU, History of Armenia, MA, 1st year
Academic Supervisor: N. Saghumyan
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Shushi, eviction of Armenians, deportation, liberation, demography, resettlement, natural population growth, immigration*

The article attempts to highlight the demographic situation of Shushi in the period 1992-2020, examining fluctuations in the city´s population and their impact on the historical development of the city. It also seeks to analyze the policy of altering the ethnic composition of Shushi through the settlement of Azerbaijani populations by Azerbaijani authorities, which led to an increase in the number of Azerbaijanis in the city. The situation has changed after the liberation of the city, when Armenians returned to their hometown of Shushi. It is also shown that as a result of the policy of liberation and the subsequent resettlement to Shushi, and then programs aimed at increasing the population, the population of Shushi increased. Furthermore, it highlights that after the 44-day war, the Azerbaijani authorities implemented new programs for the settlement of Shushi.

Մխիթարյան միաբանության կրթական-ուսումնական ծրագիրը (1896-1897թթ.)

Արզանյան Հայկուշ
ԳՊՀ, Պատմություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ Ա. Պողոսյան

Հանգուցային բառեր. *Մխիթարյան միաբանություն, Մխիթար Սեբաստացի, Վենետիկ, 1717 թ., վարժարան, կրթություն, դաստիարակություն*

Մխիթարյան միաբանության նպատակն է ազգային-բարոյական և մտավոր կրթության զարգացումը, որին հասնելու միջոցը իրավմամբ դաստիարակությունն է: Դաստիարակությանը Մխիթարյանները շատ մեծ ուշադրություն էին դարձնում՝ հսկելով աշակերտների բարոյական ընթացքին, խրատելով և ուղղելով նրանց գործողությունները, խրախուսելով բարին և քաղցրությամբ շահելով նրանց սիրտը: Նմանապես ուշադրություն էր դարձվում նաև աշակերտների միշտ մաքուր լինելուն, ապահովելով նրանց կանոնավոր զբոսանքը, խաղերն ու մարզանքը:

1717 թ. Իտալիայում՝ Ադրիատիկ ծովի եզերքին՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հիմնադրվում է հայկական հոգևոր կենտրոն՝ Մխիթարյանների միաբանությունը, որն իր վրա է հրավիրում քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը:

Համաշխարհային չափորոշիչներով ստեղծված, բազմաբնագավառ հայագիտական վաստակով, հասարակական ու հոգևոր կյանքի մեծարժեք ուսումնասիրություններով, բնական գիտությունների, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության ժառանգությամբ հայրենի ժողովրդի լուսավորական և առհասարակ մշակութային զարգացման գործին մատուցած ծառայություններով այդ ուխտը ներկայացնում է որպես մի ամբողջ ակադեմիա, գիտության և մշակույթի հրաշալի խումբ, որը մեծ պատիվ է բերում այդ ամենը ծնող ազգին:

Դեռևս 17-րդ դարի վերջերին Մխիթար Սեբաստացին ծրագրում է հիմնել հոգևոր միաբանություն և դպրոց: 1701 թ. սեպտեմբերին 8-ին՝ Աստվածածնի ծննդյան տոնին, Սեբաստացին իր բոլոր աշակերտներին հրավիրում է Կապուչինների վանատուն՝ քննարկումներ անելու: Քննարկումների ընթացքում վարդապետ Սեբաստացին հայտնեց, որ ժամանակի նման հանգամանքների բերումով չի կարելի միաբանությունը հաստատել ոչ Կ.Պոլսի մեջ, և ոչ էլ Հայաստանի որևէ կողմում: Տարբեր տեղեկություններ հավաքելով, նրանք որոշում են, որ միաբանությունը պետք է հաստատել Հունաստանում՝ Մորեայի կողմերը, որ այն ժամանակ գտնվում էր Վենետիկի տիրապետության տակ [4, 73]: Խորհրդակցությունից հետո Մխիթարը հայտնում է, որ միաբանությունը հաստատված է և իրեն նվիրում է Աստվածածնին:

Վենետիկի դեսպանը, որ միաժամանակ Մորեայի կառավարիչն էր, իր հովա-

նավորության տակ է առնում Մխիթար վարդապետին: Նրա հանձնարարական-ներով տեղի իշխանները Մեթոնում տեղ են տալիս Մխիթարին և թույլատրում եկեղեցի ու մենաստան հիմնել: Գնալով աշակերտների թիվը ավելի էր մեծանում: Նա մշակում է վանական մի կանոնադրություն և իր աշակերտներից երկուսին ուղարկում Հռոմ՝ Կղեմես ԺԱ Պապի մոտ՝ այն հաստատելու համար: Սակայն ամեն ինչ այդքան էլ հեշտ չդասավորվեց: Պատճառը լատինամոլ կաթոլիկ հայերն են լինում, որոնք, նախանձից կուրացած, ամեն տեսակ ինտրիգներով ձգտում էին տապալել Մխիթարի ծրագրած գործը: Պապի կողմից վավերացումը ձգվեց մինչև 1712 թ., երբ, վերջապես, հաստատվում է Մխիթարյանց կանոնադրությունը, և ինքը՝ Մխիթարն էլ անվանվում է Աբբա: Մխիթարին հաջողվում է իր իսկ կազմած հատակագծի համաձայն մի մենաստան և մի եկեղեցի կառուցել: Դրանից հետո արդեն միաբանությունը սկսում է աշխատել խաղաղ ու շինարար կյանքով: Հազիվ այս փոքր հաջողությունը ձեռք էր բերվել, երբ մի շատ ավելի մեծ դժբախտություն է պայթում Մխիթարի գլխին: Օսմանյան Թուրքիան պատերազմ է հայտարարում Վենետիկին. օսմանցիները արշավում են Մորեայի վրա. պաշարվում է Մեթոնը. իտալացիները անկարող էին դիմադրել թուրքական զորքին և ստիպված անձնատուր են լինում: Մխիթար Սեբաստացին ստիպված թողնում է ամեն ինչ և 11 միաբանների հետ մի հին նավի մեջ են մտնում և փախչում դեպի Վենետիկ: Վենետիկ հասնելուն պես Մխիթարը դիմում է տեղի ազդեցիկ մարդկանց, որպեսզի իրեն արտոնություններ տան և հաստատեն իր միաբանությունը: Բայց ծերակույտի հաստատած օրենքը թույլ չէր տալիս, որ Վենետիկում հիմնվեն կրոնական նոր միաբանություններ: Տարբեր արգելքներ և դժվարություններ հաղթահարելուց հետո Մխիթար Սեբաստացուն հաջողվում է ստանալ ծերակույտի համաձայնությունը՝ պայմանով, որ նա պետք է իր բնակությունը հաստատեր քաղաքից դուրս, հեռու մի տեղ: Մխիթարը ընտրում է Վենետիկի արևելյան մասում գտնվող կղզիներից մեկը, որը չնայած փոքր էր, բայց մեծ հարմարություններ էր ստեղծում: Այդ կղզում մշտական բնակիչներ չկային, այն մի լքված ու վայրի տեղ էր: Կղզում կար մի խարխուլ եկեղեցի, որը Աստվածաշնչի աղքատ Ղազարոսի անունն էր կրում: Հենց այդ անունով էլ կղզին կոչվում էր Ս. Ղազար կղզի: Մխիթարը որոշում է, որ իր միաբանությունը պետք է հաստատել հենց այդտեղ և խնդրում է մեծավորներին, որ իրեն շնորհվի այդ կղզին: Ծերակույտը ընդունում է Մխիթարի խնդրանքն ու 1717 թ. հրովարտակով այդ կղզին ճանաչվում է Մխիթարյանների սեփականությունը [4, 74]: Իրեն հատուկ անսպառ եռանդով և շինարարական-կազմակերպչական տաղանդով Սեբաստացին սկսում է հարմարություններ ստեղծել, շինություններ կերտել բնակության համար: Կառուցվում է եկեղեցի և նրան առընթեր՝ դպրոց, որը համարվում է առաջին հայկական դպրոցը եվրոպական հողի վրա: Այդպես էլ սկսվում է նշանավոր Մխիթարյան միաբանության խոշոր հայանպաստ գործունեությունը, որի արդյունքները առ այսօր շոշափելի են:

Ադրիատիկի գեղատեսիլ ջրերում ծվարած այս կղզում Մխիթարը ծավալում

է լայն գործունեություն՝ աստիճանաբար մեծացնելով միաբանությունը, պատրաստելով նոր աշակերտներ: Դպրոց էին ընդունվում 12-16 տարեկան տղաներ, հիմնականում Կ. Պոլսից, մասամբ էլ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից: 1732 թ. արդեն դպրոցն ուներ երկու բաժին՝ նորընծայարանի և քահանայության: Դպրոցի առաջին ուսուցիչը եղել է ինքը՝ Մխիթարը, ապա՝ Ստեփանոս և Մատթեոս Եվդոկացիները, իսկ հետագա տարիներին՝ արդեն դպրոցի այլ շրջանավարտներ [2, 448]:

Սկզբնական շրջանում դասավանդվել են ավանդական այն բոլոր առարկաները, որոնք մշտական մասն են կազմել միջնադարյան հայկական դպրոցների ուսումնակրթական ծրագրի՝ հռետորություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն, տրամաբանություն, ուսումն սուրբ գրոց, քերականություն և այլն: Աստիճանաբար ավելի հաճախակի ու սերտորեն շփվելով եվրոպական դպրոցների գործունեության հետ, մոտիկից ծանոթանալով նրանց ծրագրերին ու համակարգերին՝ Մխիթարյանները վերակառուցում էին իրենց ուսումնական ծրագիրը և հատկապես լայն տեղ հատկացնում պատմական, աշխարհագրական, գրական, գիտական և լեզվագիտական առարկաներին: Դպրոցի սաների մատենագրական ժառանգական ուսումնասիրությունը հաստատում է, որ նրանք բազմակողմանի և հիմնավոր գիտելիքներ էին ձեռք բերում, տիրապետում բազմաթիվ լեզուների: Միաբանությունում շրջանավարտների շարքերում եղել են հմուտ պատմաբաններ, աստվածաբաններ, աշխարհագրագետներ, թարգմանիչներ և նույնիսկ մաթեմատիկոսներ, քիմիկոսներ, տնտեսագետներ, հանքաբաններ և այլն: Մխիթարյանները մեծ հաջողություններ են գրանցել գիտության տարբեր ոլորտներում և թողել հետագա սերունդներին հարուստ գրականություն: Վենետիկի Մխիթարյան միաբանները տիրապետում էին բազմաթիվ հին ու նոր լեզուների, կատարում հին աշխարհի իմաստուն մտածողների գործերի թարգմանություններ, կազմում բազմալեզու և բազմատիպ բառարաններ, հրատարակում հայ մատենագիրների գործերը, ստեղծում հայ ժողովրդի գիտական պատմությունն ու աշխարհագրությունը, պատրաստում բազմագիտակ ու հմուտ մանկավարժներ:

Միաբանությունը ունի իր վարչական մարմինը հետևյալ կերպով՝

1. Տեսուչ, ում հանձնված է վարժարանի ընդհանուր ուղղությունը:
2. Ուսումնապետ, որի պաշտոնն է ուսումնական ծրագրին և գործադրության հսկելը:
3. Մատակարար, հոգաբարձու ուտեստի, հանդերձարանի և այլի:
4. Երկրորդական պաշտոնյաներ, որոնք միանգամայն ուսուցիչ են [3, 6]:

Վարժարանն ունի նաև արտաքին ուսուցիչներ և հսկողներ, ինչպես, օրինակ, ուսուցիչներ գերմաներենի, հայերենի, իտալերենի, տոմարականության, երաժշտության, գծագրության, հայ և եվրոպական գեղագրության, մարմնամարզության և այլն: Միաբանությունն ունի մասնավոր առանձին ննջարաններ թե՛ մեծերի և թե՛ կրտսերների համար: Կա հատուկ մատուռ, ուր աշակերտները օրը

երկու անգամ հավաքվում են աղոթքի՝ առավոտյան և երեկոյան:

Միաբանությունում ուսումնական ընթացքը վեց տարի է, բացի նախապատրաստական դասերից, որը տևում է երկու տարի: Աշակերտները ստորին դասից բարձրագույն դաս անցնելու համար պետք է պարտադիր հանձնեն մասնավոր քննություններ: Տարին երեք անգամ քննություն են տալիս, Ծննդյան և Զատկի տոներին՝ գրավոր, իսկ մեծ արձակուրդից առաջ՝ գրավոր և բանավոր: Այս քննությունը տրվում է վարչական մարմինների և ուսուցիչների ներկայությամբ: Վարժարանի աշակերտները թոշակավորներ էին և անվճարներ: Թոշակավոր աշակերտները պետք է լինեին 9 տարին լրացած և ոչ ավելի, քան 14 տարեկան: Եվ եթե ուրիշ վարժարանի աշակերտ է, պետք է ունենա վկայագիր վարքի և ուսումնառության մասին: Աշակերտները, ըստ իրենց թոշակի, բաժանվում էին երեք դասակարգի՝

1. Գիշերօթիկ, որոնց տարեկան թոշակն է 30 օսմ. լիրա:
2. Կիսաթոշակ կամ Ցերեկօթիկ, տարեկան 15 օսմ. լիրա:
3. Զրիավարժ, որոնք սահմանյալ թվով են՝ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի հաշվին, որոնց ընդունելության հավանությունը կախված է Վենետիկի խնամակալությունից [3, 7]:

Աշակերտների թոշակը վճարվում էր չորս ամիսը մեկ անգամ՝ կանխիկ, այսինքն, սկզբից սեպտեմբեր, հունվար և հետո մայիս: Եթե աշակերտի թոշակը չի վճարվում սահմված ժամկետում, կամ էլ ժամկետից 15 օր հետո է վճարվել, ապա անպատճառ իր ծնողներին կվերադարձվի: Աշակերտների սահմանված թոշակից զատ՝ վճարվում է մեկանգամյա 3 օսմ. լիրա՝ իբր մուտքի ծախս: Թոշակի վրա զեղչ է լինում 20 տոկոս այն ծնողների և խնամակալների համար, ովքեր վարժարանում ունեին երկու կամ երեք տղաներ: Իսկ եթե ծնողները կամ խնամակալները իրենց երեխային վարժարանից ժամանակից շուտ էին հանում, ապա իրավունք չունեին վճարված գումարը ետ պահանջելու: Վարժարանում օգտագործվող գրքերի, թղթերի և այլի ծախսեր դրված էր ծնողների վրա, և աշակերտները իրավունք չունեին դրսից գրիչ, թուղթ և այլ իրեր տանելու դպրոց: Վարժարանը հոգում էր բժշկի և դեղերի ծախսերը՝ անցողական և թեթև հիվանդությունների դեպքում, այդ ծախսերի համար յուրաքանչյուր աշակերտ պարտական էր տարին մեկ արծաթ մէճիտ վճարել: Բայց երբ աշակերտը ունենում է ծանր հիվանդություն, որը ուղեկցվում էր բարդույթներով, բժշկի խորհրդով անմիջապես տեղյակ են պահում ծնողներին, որպեսզի տանեն իրենց զավակին [3, 8]:

Միաբանության յուրաքանչյուր անդամ պարտավոր էր կրելու վարժարանի համազգեստը, և ոչ ոք ազատ չէր այս պարտականությունից: Աշակերտը վարժարան ընդունվելուց հետո իր հետ պետք է ունենա 1 ձեռք ամենօրյա հագուստ, անկողին, ծածկոց, 2 բարձ, 4 բարձերես, 2 վերմակ, 4 սավան, 6 երեսսրբիչ: Ինչպես նաև 12 շապիկ, 12 թաշկինակ, 12 զույգ գուլպա, 2 զույգ կոշիկ, 1 զույգ հողաթափ, սանր, մկրատ և խոզանակ: Իսկ վարժարանի կողմից աշակերտները ստանում

էին երկաթե անկողին, փոքրիկ դարակ՝ կարևոր իրեր տեղավորելու համար:

Օրվա մեջ յուրաքանչյուր դասախոսություն տևում էր մեկ ժամ: Օրը չորս կամ հինգ դասախոսություն լինում է առանձին դասարաններում: Ցերեկվա ճաշից հետո աշակերտները ունենում են մեկ ու կես ժամ հանգիստ պարտեզում հսկողների ընկերակցությամբ: Հանգիստ լինում էին նաև դասախոսությունների ընթացքում: Սեպտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը աշակերտները պետք է արթնանային ժամը 6-ին, իսկ մարտի 1-ից մինչև հունիսի վերջ՝ ժամը 5:30: Իսկ արդեն երեկոյան յուրաքանչյուր աշակերտ պետք է իր անկողին գնար ժամը 8:30 կամ 9-ին:

Մխիթարյան վարժարան ծնողներից և խնամակալներից բացի, ուրիշ անձանց թույլ չի տրվում տեսակցելու աշակերտներին, եթե նրանք հավանություն չեն տվել: Տարվա մեջ աշակերտները ունենում են երեք մեծ ու փոքր արձակուրդ հետևյալ կերպով՝ դեկտեմբերի 25-ից մինչև հունվարի 8՝ տասնհինգ օր, Զատկին՝ տասնհինգ օր, Բարեկենդանի ժամանակ՝ ութ օր, և արդեն ամառային երկարամյա արձակուրդ: Սկզբի երեք արձակուրդների դեպքում վարժարանը, ըստ աշակերտի և ծնողի ցանկության, կարող է պահել աշակերտներին, մի պայմանով, որ ծնողները կամ խնամակալները պետք է օրական տասը դահեկան վճարեն: Իսկ մեծ արձակուրդին անպայման ամեն աշակերտ՝ լինի տեղացի թե դրսեցի, առանց բացառության, գնում են իրենց ծնողների կամ խնամակալների մոտ:

Վարժարանն ունի երեք հսկողներ, որոնց պարտքն է ուշադրություն դարձնել կարգապահությանը՝ սերտարանի, պարտեզի, ճաշարանի, ննջարանի և այլ պարագաների մեջ, ինչպես նաև նրանց շրջագայություններին: Հսկողները պարտավոր են միշտ թե՛ ուսման և թե՛ հանգստյան ժամերին՝ քաղաքավարի և ազնիվ վարվեն բոլոր աշակերտների հետ: Եթե տեսնում են կանոնազանցություն, կամ որևիցե ծանր հանցանք, անհապաղ պետք է տեղյակ պահեն դպրոցի գլխավոր տեսուչին, որ ժամանակին ելք գտնի [3, 12]:

Մխիթարյան միաբանության մասին շատ է խոսվել եվրոպական հեղինակների կողմից (ինչպիսիք են Սիլվեստր Սասին, Վիկտեր Լանգլուան, Ջորջ Բայրոնը, Ստենդալը, Վալտեր Սկոտը և այլք), որոնք այցելել են միաբանություն, տեսել տեղի կարգուկանոնը, մաքրությունը, աշակերտների խելքն ու պահվածքը և ոգևորված այդ ամենից՝ գրել մի շարք աշխատանքներ միաբանության մասին: Վիկտոր Լանգլուան թերևս առաջինն էր եվրոպական հայագետների մեջ, որ հատուկ հետազոտություն նվիրեց Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեությանը՝ սկսած սկզբնավորումից մինչև իր օրերը: Դրանից հետո արդեն գրվեցին բազմաթիվ աշխատություններ թե՛ հայերի և թե՛ օտարների կողմից:

Վիկտոր Լանգլուան նկարագրել է միաբանության կրոնավորների հագուստը: Հենց որ Ադրիատիկի ջրերի վրայով գոնդոլը հասնում էր Սուրբ Ղազար կղզուն, հայտնվում էր մի վանական Արևելքի հոգևորականների սև զգեստով, մեջքը սեղմված կաշվե գոտու մեջ, որից կախված էր աղոթքի համրիչը, և

ուղեկցում էր կղզու հյուրերին միաբանության տարբեր հատվածների տեսարժան վայրերը՝ եկեղեցին, գրադարանը, պատկերասրահը, տպարանն ու այգին: Քննարական պատկերներով Լանգլուան ներկայացնում է Մխիթարի հիմնած միաբանության ողջ հմայքը՝ մեծ նոճիները, ջրի ու բույսերի թափառ շրշյունը, իսկ հորիզոնում երևում է գեղեցիկ Լիդո կղզին [1, 22]:

Միաբանության այցելուների վրա մեծ տպավորություն է թողնում, երբ եկեղեցու վանականները և նորընծաները, հագած իրենց տոնական զգեստները, երգում են հին քրիստոնյա հեղինակների հոգևոր երգերը: Ունկնդրին թվում է, թե լսում է 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացու պատմության մեջ եղած գողթան երգերը ու բամբիռների ձայները: Ամեն օր Սուրբ Ղազարի միաբանները երեք անգամ գնում են եկեղեցի ժամասացության՝ առավոտյան ժամը 5-ին, կեսօրին և կեսօրից հետո: Մխիթարյան միաբանությունն ունի թատրոն ու շատ հարուստ գրադարան, որը բաղկացած է երեսուն հազար հայերեն տպագրված գրքերից:

Լանգլուան ներկայացնում է, որ այստեղ վանական կրթությունը ուներ երեք աստիճան: Առաջին աստիճանում երեխաները սովորում են մինչև 17 տարեկանը: Նրանց դասավանդում են հումանիտար առարկաներ ու եվրոպական լեզուներ, մաթեմատիկա, պատմություն և կրոն: Երկրորդ աստիճանում երիտասարդներն են, որոնք ուզում են դառնալ հոգևորական, նրանք սովորում են հռետորական արվեստ, լատիներեն, ճշգրիտ գիտություններ: Երրորդ աստիճանը նորընծաների համար է, որոնք սովորում են փիլիսոփայություն, աստվածաբանություն, հունարեն և այլն: Երրորդ աստիճանում սովորողները հանձնում են ավարտական քննություն և ստանում հոգևոր աստիճան: Բազում տարիներ միաբանությունում մնալուց հետո հոգևոր հայրերն ուղարկվում են առաքելական քարոզչության՝ նախապես աբբահորից ստանալով վարդապետի տիտղոսը [1, 25-26]:

Մխիթարյան միաբանության այգու մի հատվածում կա խաղողի այգի, որի պտուղներից միաբանները ստանում են սպիտակ գինի՝ այն պատարագի ժամանակ օգտագործելու համար, և այդ գինին ունի ազգային ու աստվածաշնչյան անուն՝ Արարատ: Լանգլուան նշում է նաև, որ եկեղեցու ավագ խորանի ետնամասում կան մի քանի համեստ շիրիմներ, որոնցում թաղված են Արևելքի ուխտավորներ, որոնք փափագել են թաղվել Արարատի խաղողի թփերի տակ, որը փոխարինել է իրենց բացակա հայրենիքին [1, 26]:

Միաբանությունում եղել է հատուկ մատյան, որտեղ իրենց տպավորությունների մասին են գրել նշանավոր այցելուները՝ թագավորներ, միապետեր, իշխաններ և այլք: Այդ մատյանում առաջին ստորագրությունը թողել է Լորդ Բայրոնը, նրանից հետո ստորագրել են Ավստրիայի կայսրերն ու կայսրուհիները, Արևմուտքի իշխաններ, զորահրամանատարներ, նշանավոր գրողներ, որոնք փառաբանել են Վենետիկի գեղեցկությունը՝ հիահրաշ պալատներով ու գաղտնախորհուրդ գոնդոլներով:

Այսպիսով, գիտությունից զատ կարևորելով նաև Մխիթարյան միաբանու-

թյան ներքին կարգ ու կանոնը, այս հոդվածում ներկայացրել եմ միաբանության 1896-1897 թվականների ուսումնական տարվա կանոնադրության, կրթության, դաստիարակության վերաբերյալ մի փոքր հատված, որոնց ուսումնասիրման ժամանակ հասկանում ենք, թե տարբեր ժամանակներում ինչպիսի ոճով, ոգևորությամբ ու մոտեցումով են դասավանդել և դասավանդվել հայ երիտասարդները օտարի հողում: Սուրբ Ղազարում դարեր ի վեր ապրել ու ստեղծագործել են հայերը: Ավելի քան 300 տարի շարունակ Մխիթարյան միաբանությունը եղել է հայ կարևորագույն կրթօջախ, որի կարևոր առաքելությունը եղել է օտար հողում հայ մանուկի հայեցի դաստիարակելը, որը նրանց մոտ հաջողված էր: Մխիթարյանների մասին կարելի է խոսել անվերջ, նրանց փառքը տարածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև Եվրոպայում և աշխարհի շատ կետերում:

Պատմության էջերը ցույց են տվել, որ հայը օտար զավթիչների դեմ հաղթանակ է տարել ոչ միայն զենքով, այլև գրչով: Թեմայի արդիականությունը այն է, որ այսօրվա երիտասարդությունը պետք է քաջատեղյակ լինի Մխիթարյան միաբանության հայանպաստ գործունեության մասին, ինչպես նաև գիտակցի, որ ազգապահպանման գլխավոր սկզբունքներից մեկը կրթության և մշակույթի զարգացումն է: Ինչպես 18-րդ դարում, այսօր էլ հայ ժողովուրդը օրհասական պահերին բանեցնում է իր խելքը: Ուստի, Մխիթարյան միաբանության գործունեությունը որպես օրինակ ունենալով՝ հայ երիտասարդն իր կյանքի ուղենիշը պետք է դարձնի ուսումնատենչությունը, ջանասիրությունը և հայրենապաշտությունը, որը բնորոշ էր Մխիթարյաններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դոլուխանյան Ա., Վիկտոր Լանգլուայի գիրքը՝ նվիրված Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2017 թ., համար 3, էջ 22, 25, 26:
2. Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, 680 էջ:
3. Ցայտարարութիւն եւ ծրագիր ուսմանց Մխիթարեան վարժարանց: Դպրոցական տարի 1896-97, Վենետիկ Ս. Ղազար, 1896, էջ 6, 8, 12:
4. Շահբազյան Պ., Մխիթար Սեբաստացի, Ս. Էջմիածին, 1977, էջ 73, 74:

Образовательная программа конгрегации Мхитарян (1896-1897 гг.)

Арзанян Айкуш
ГГУ, История, магистратура, 1-й курс
Научный руководитель: А. Погосян

Резюме

Ключевые слова: конгрегация мхитаристов, Мхитар Севастийский, Венеция, 1717 г., школа, образование, воспитание

Целью конгрегации Мхитарян является развитие национального, нравственного и интеллектуального образования, а средством достижения этого является правильное воспитание. Мхитаристы много внимания уделяли образованию, следя за нравственным курсом учеников, упрекая и исправляя их поступки, поощряя добро и покоряя их сердца добротой. Также внимание уделяется и чистоте учеников, обеспечению их регулярных прогулок, игр и тренировок.

The Educational Curriculum of the Mkhitaryan Congregation (1896-1897)

Arzanyan Haykush
GSU, History, MA, 1st year
Academic Supervisor: A. Poghosyan

Summary

Key words: Mkhitaryan congregation, Mkhitar of Sebaste, Venice, 1717, school, education, upbringing

The goal of the Mkhitaryan Congregation is the development of national moral and intellectual education, with upbringing serving as the primary means to achieve this. The Mkhitaryans placed great emphasis on nurturing their students, focusing on their moral progress, disciplining and correcting their behavior, encouraging good actions, and winning their hearts with kindness. Attention was also given to the students' cleanliness, ensuring they had regular walks, games, and exercises.

Շուշիի հայկական թատրոնի անցյալն ու ներկան

Արզումանյան Վովա
ԵԹԿՊՀ, Սցենարադրամատուրգիական արվեստ, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ արվ. գ. թ., պրոֆեսոր Ն. Սարգսյան

Ներածություն

Կրթական և մշակութային խոշոր կենտրոն հայկական Շուշին թատերարվեստի պատմության էջերում մնայուն տեղ ունի: Այստեղ բազմաթիվ ներկայացումներով հանդես են եկել հայ բեմի նշանավոր դեմքեր և նպաստել թատերական ավանդույթների սկզբնավորմանը: Շուշիում թատրոնը դիտվել է ոչ այնքան գեղարվեստական, որքան ազգային ու համամարդկային երևույթ: Դրա մասին են վկայում «Մշակ» թերթի և այլ պարբերականների հրապարակումները, թատերական գործիչների հուշագրությունները: «Խանդամիրյան» թատրոնում, որը քաղաքի մշակութային այցեքարտերից էր, բեմադրվել են հայ, ռուս և եվրոպացի հեղինակների հանրահայտ պիեսներ: Ռուսական պիեսներից մասնավորապես Պուշկինի «Ջրահարսը», «Ժլատ ասպետը», «Քարե հյուրը», Գոգոլի «Վերաքննիչը», «Ամուսնությունը», «Խելագարի նոթերը», Չեխովի «Արջը», «Առաջարկությունը», Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Օստրովսկու «Անտառը», «Անմեղ մեղավորներ» և այլ պիեսներ: Բեմադրվել են նաև Իբսենի, Դյումայի, Ջիակոմետիի, Ջուդերմանի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի, Հյուգոյի, Շեքսպիրի և այլ նշանավոր հեղինակների պիեսներ: Թատրոնը հիմնադրման օրվանից բուռն գործունեություն ծավալեց և բնակչության համար դարձավ հոգևոր սննդի հիմնական աղբյուր մինչև շենքի հրդեհման օրը: Երկար ժամանակ թատերական կյանքը քաղաքում վայրէջք է ապրել: 1992 թվականին՝ բերդաքաղաք Շուշիի ազատագրումից մի քանի տարի անց, քաղաքի վերականգնմանը զուգահեռ սկսեց թատերական նոր ալիք բարձրանալ, դրան հետևեց Սոս Սարգսյանի անվան մանկապատանեկան, Երվանդ Մանարյանի անվան տիկնիկային և Շուշիի դրամատիկական թատրոնների հիմնադրումը: Այս երեք թատրոնները գործեցին մինչև 2008 թվականը: Նույն թվականին միավորելով երեք թատրոնները՝ ստեղծվում է «Աստղիկ» մանկապատանեկան թատրոնը, որը 2009 թվականին վերանվանվեց Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոն:

Այսօր էլ Ադրբեջանի կողմից օկուպացված հայկական Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնը շարունակում է գործել արդեն շրջիկ թատրոնի կարգավիճակում ու նոր կարգախոսով՝ «Որտեղ մեր հանդիսատեսն է, այնտեղ էլ Շուշիի թատրոնն է»:

Թատերական ավանդույթների սկզբնավորումը Շուշիում

Շուշիում մինչև 1865 թվականը պրոֆեսիոնալ թատրոն չի գործել, սակայն հայ թատերական ավանդույթները Շուշիում սկզբնավորվել են 19-րդ դարի վաթսունականներին: 1865 թվականի հունիսին թատերարվեստի ականավոր գործիչներ, թիֆլիսահայ դերասաններ Գևորգ Չմշկյանը, Սեդրակ Մանդինյանը և

Միհրդատ Ամրիկյանը միասին, ներկայացումներ խաղալու նպատակով, գալիս են Շուշի [1]: Շուշիում խումբը խաղացել է Ս. Հեքիմյանի «Սամել», Հ. Կարինյանի «Վարդան Մամիկոնյան» և «Շկոլի վարժապետ» ներկայացումները զինվորական փողային նվագախմբի ուղեկցությամբ: Այսպիսով տեղի բնակչությունը հաղորդակից էր լինում բեմարվեստի նշանավորներ դեմքերի մատուցած բարձրակարգ արվեստին, գեղագիտական առումով հասնում նոր դիրքերի: Ծիսակատարություններից, քաղաքի կենցաղից ու սովորույթներից դեպի թատրոն ազդակները Շուշիի բնակչությանը հոգեհարազատ էր, չնայած կային նաև թատրոնի նկատմամբ նախապաշարումներ: Չենք կարող միանշանակ պնդել, որ մինչև Չմշկյանի Շուշի գալն այդտեղ ներկայացումներ չեն բեմադրվել, քանի որ մամուլը (այս դեպքում «Ազգագրական հանդեսը») ենթադրելի նյութ է ի ցույց դնում: Հայ ազգագրագետ Երվանդ Լալայանի խմբագրությամբ «Ազգագրական հանդեսում» կարդում ենք. «Շուշիում առաջին հայկական ներկայացումը տեղի է ունեցել դեռ վաթսունական թվականներին, երբ հայրենիք վերադարձած ուսանողները ոչ միայն տղամարդու, այլև կանանց դեր են կատարել: Այնուհետև թեմական դպրոցի ուսուցչական խումբը և շրջիկ դերասանները ներկայացումներ են տվել թեմական դպրոցի դահլիճում» [2]: Բայց միանշանակ է, որ Գ. Չմշկյանի հյուրախաղերից հետո Շուշիի մշակութային կյանքում նկատվում են շրջադարձային փոփոխություններ: Սկսում է զարգանալ թատերական գործը: 1868 թվականից սկսած Համբարձում աղա Հախումյանի տան դահլիճում, թեմական դպրոցում ու քաղաքային ակումբում բեմադրվել են նաև բարբառային ներկայացումներ:

Նշանակալից է 1882 թվականի հուլիսին հայ բեմի վարպետ, դերասան Պետրոս Ադամյանի (1849-1891) մուտքը Շուշիի թատերական դաշտ: Ադամյանի հանրահայտ դերերը՝ Կորրադոն (Ջիակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը») և Համլետը շուշեցի հանդիսատեսին էլ են տպավորել: Պետրոս Ադամյանի բեմական խաղի ականատեսն էր նաև Լեոն, որը մեծ ոգևորությամբ է գրել այդ մասին. «Դեմքերի վրա շեքսպիրյան հանճարի հրճվանքն էր դրոշմվել. Արվեստի բարձր գաղափարների ու ճաշակի հետ էր կապել Ադամյանը տեղի հանդիսատեսին: Հրաշք գործած բեմական հանճարը դարձել էր ամբողջ քաղաքի սիրելին» [3]: Բացի այդ՝ Լեոն նաև անդրադարձել է այն երևույթին, թե Շուշիում ինչ մեծ մտավոր շարժում է կենդանացրել Պ. Ադամյանը, որը երկու դյութիչ ուժ ուներ՝ բեմական արվեստ և հայոց լեզու. «Մինչև այժմ էլ թվում է, թե պահել եմ ականջներիս մեջ մեծ արվեստագետի շեշտերն ու հնչյունները» [4]: Պ. Ադամյանի խաղից հետո կարծիքներն ու տպավորությունները չուշացան: Հայ դրամատուրգ Եկատերինա Բահաթուրն առանձնահատուկ ոգևորությամբ էր գրել, որ «Ադամյանը համակում էր ամենքին, հասցնում ինքնամոռացության, հիպնոսացնում: Ամբողջ դահլիճը ցնցվեց, ամենքը ինչպես մի մարդ ոտքի կանգնեցին, մի վայրկյան կարծես քարացան: Ես ինքս մոռացա, որ թատրոնում եմ, մոռացա, որ տաժանակիր աշխատանքից փախած այդ ոճրագործը (Կորրադո.-ընդգծումը մերն է-Վ.Ա.) միմիայն հանճարեղ դերասան է...» [5]: Հարկ է նշել, որ Պ. Ադամյանի այդ անչափ կարևոր այցից հետո Շուշիում սկսեցին ավելի շատ հետաքրքվել թատերարվեստով, և սկսեցին

աշակերտական, ուսանողական և ուսուցչական սիրողական խմբակներ գործել:

1882 թվականին հյուրախաղերով Շուշի են գալիս Ստեփան և Ալմա Սաֆրազյան ամուսինները և ցուցադրում «Շուշանիկ», «Սանդուխտ կույս», «Սամվել», «Թուղթ խաղացողի կյանքը», «Խան Սարիբի վեզիրը», «Կըռթ-կըռթ» և այլն [6]: Մեկ տարի հետո՝ 1883 թվականին, Աբրահամ Տեր-Գասպարյանի և Հովհաննես Ճաղարբեկյանի նախաձեռնությամբ Շուշիում բեմադրվում են Գ. Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախը», Մ. Տեր-Գրիգորյանի «Վույ քի իմ վեչեր» և «Ո՞վ է մեղավոր» վոդևիլները, 1887-ին՝ թ. Ֆասուլաճյանի «Երկու քաղցածները» [7]: 1880-1890 թթ. կարծես առանցքային եղան քաղաքի մշակութային կյանքում: Այդ տարիներին Շուշիի թատերասեր երիտասարդությունը հաճախակի քաղաքի հայոց թեմական դպրոցի դահլիճում տարատեսակ պիեսներ էր բեմադրում («Որդիական սեր», «Խաթաբալա», «Պեպո», «Էլի մեկ զոհ», «Քանդած օջախ», «Վարդանանց պատերազմ», «Բռնի ամուսնություն», «Արշակ Երկրորդ», «Անանուն կտակ» և այլն): «90-ական թվականներին Շուշիի թատրոնի նշանակությունը մեծացել է: Որպես գաստրոլային կենտրոն այս թատրոնը դարձել է ավելի կարևոր, քան Ալեքսանդրապոլի ու Երևանի թատրոնները» [8]:

Արդեն 1900-ականներին Շուշին հայտնի դարձավ մշակութային և թատերական ուրույն դիմագծով, որին մեծապես նպաստեց 1891 թվականին կառուցված թատրոնի շենքը, որը 1905 թվականին կովկասյան թաթարների հետ ծավալված արյունալի զինված բախումների ժամանակ հրի է մատնվել: 1891-1896 թվականներին «Խանդամիրյան» թատրոնում 119 ներկայացում է ցուցադրվում, այսինքն՝ տարեկան միջին թվով 20 ներկայացում: Շենքը հրդեհվելուց հետո ներկայացումները խաղում էին հիմնականում թեմական դպրոցի դահլիճում, ռեալական դպրոցի դահլիճում, տներում: 1896 թվականից Շուշիի թատերական կյանքում հայտնվում են հայ բեմի նշանավոր դեմքեր Սիրանույշը, Հովհաննես Աբելյանը, Հովհաննես Զարիֆյանը, Գրիգոր Ավետյանը, Արուս Ոսկանյանը, Օլգա Գուլազյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց դերասանախաղով տպավորել են շուշեցի հանդիսատեսին: 1891-1905 թթ. Շուշիի հայկական թատրոնում բեմադրվում էին հայ և օտարազգի հեղինակների՝ Գ. Սունդուկյանի, Ալ. Շիրվանզադեի, Հ. Պարոնյանի, Ա. Պուշկինի, Ն. Գոգոլի, Ա. Չեխովի, Մ. Լերմոնտովի, Ալ. Օստրովսկու, Հ. Իբսենի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի և Հյուգոյի երկերը: Շեքսպիրյան պիեսները՝ «Համլետը», «Օթելլոն», «Լիր արքան» և «Վենետիկի վաճառականը» ևս բուռն արձագանք գտան հանրության շրջանում և սիրվեցին: Հայկական ներկայացումներին, ինչպես ծանոթանում ենք արխիվային նյութերից, ժամանակ առ ժամանակ ներկա էին լինում ադրբեջանցիներ, այդ թվում՝ մտավորականներ և հասարակական գործիչներ: 1893 թվականին Շուշիի թատերական կյանքում հայտնվեց հայ բեմի վարպետ Հովհաննես Աբելյանը: Դերասանուհի Վարյա Մելիքյանը դառնում է այդ շրջանի նրա խաղընկերը: Հովհաննես Աբելյանը Շուշիի թատրոնում ոչ միայն խաղում էր, այլ նաև բեմադրում: Նշանակալի են Շիրվանզադեի երկերի նրա բեմադրությունները: Աբելյանը Շուշիի թատրոնում հասցրել է բեմադրել «Ամուսինները», «Ոճրագործի ընտանիքը», «Էլի մեկ զոհը»,

«Պեպոն», «Մեծապատիվ մուրացկանները» և այլ գործեր: Հովհաննես Աբելյանի գործը Շուշիում շարունակեց դերասան ու ռեժիսոր Գևորգ Պետրոսյանը, ով 1881-82 թթ. եղել է Թիֆլիսի թատերական կոմիտեի դերասանական մշտական խմբում՝ Օրդուբադյան բեմական ազգանունով: Գ. Պետրոսյանը մի շրջանում եղել է նաև Պետրոս Ադամյանի խաղընկերը: Հայկական թատերարվեստը մասսայականացնելու համար միայնակ և խմբերով հանդես է եկել հայաշատ քաղաքներում: Գ. Պետրոսյանը Շուշիում բեմադրում է մոտ քառասուն պիես: Հատկանշական է, որ նա 1895 թվականին բեմադրում է Մ. Լերմոնտովի «Դիմակահանդեսը», ինքն էլ կատարում Արբենինի դերը: Իսկ երկու տարի հետո՝ 1897 թվականին, «Օթելլոյում» մարմնավորում է Մավրին: Գ. Պետրոսյանը ևս սեր էր վայելում շուշեցի հանդիսատեսի կողմից:

Մկրտիչ Խանդամիրյանը և «Խանդամիրյան» թատրոնը

Շուշիի «Խանդամիրյան» թատրոնի հիմնադիրն ու ղեկավարը եղել է Մկրտիչ (Նիկիտա) Խանդամիրյանը, ով մեծ ներդրում է ունեցել Շուշիում թատերական կյանքի ձևավորման գործում: Մկրտիչ Խանդամիրյանը ծնվել է 1847 թվականին, Շուշիում: Նրա նախնիները զինվորականներ ու պղնձագործներ են եղել և գաղթել են Կապանի գավառի Շահկերտ (Ղազանչի) գյուղից: Հոր՝ Աբրահամ Խանդամիրյանի թողած ժառանգությունը Մկրտիչը որոշում է թատրոնի հիմնադրման գործին ծառայեցնել: Հայրը որոշում է որդուն ուղարկել Ֆրանսիայի Մարսել քաղաք՝ շերմապահության տեխնոլոգիան սովորելու և մետաքսի արդյունաբերության աշխատանքներում մասնագիտական հմտություններ ձեռք բերելու համար: Մկրտիչ Խանդամիրյանը Մարսելից տեղափոխվում է Փարիզ և ծանոթանում ժամանակի արվեստին ու թատերական նորարարություններին: Նրան գրավում են ֆրանսիական մեծաշուք թանգարանները, որտեղ համաշխարհային նշանակություն ունեցող ցուցանմուշներ են պահվում: Նրան կլանում են ֆրանսիական գրականությունը, կերպարվեստն ու երաժշտությունը: Իսկ առ թատերարվեստ սերը նրան հետ է բերում Շուշի:

«Շուշվա թատրոնի շենքը կառուցվել է ըստ Խանդամիրյանի կազմած նախագծի և նրա անմիջական հսկողության ներքո, իր պապական տան տեղամասում, մի քանի տարվա ընթացքում: Նա, թե՛ թատրոնի շենքը նախագծելիս և թե՛ ներքին կահավորումները ստեղծելիս, լայնորեն օգտագործել է Փարիզում ձեռք բերած իր փորձը՝ հաշվի առնելով տեղի պայմաններն ու ազգային ճաշակը» [9]: «Խանդամիրյան» թատրոնն ուներ 350 տեղանոց դահլիճ, հարմարավետ բեմ, ընդարձակ ճեմասրահ, պարտեր, օթյակներ, ամֆիթատրոն: Թատրոնը լուսավորվում էր նավթե լամպերով: Վարագույրը նկարել է նկարիչ Օ. Շմեռլինգը, ով հատուկ հրավիրվել է Թիֆլիսից: Ձևավորման պատկերը եղել է հետևյալը. «Ավերակների վրա նստած, ազգային տարազով գեղեցիկ հայուհին, յոթնամյա մի երեխայի (դարձյալ ազգային տարազով) ձեռքով ցույց է տալիս հեռուն՝ Արարատյան դաշտը, այն շրջապատող բարձր լեռներով ու նրանց ստորոտում հոսող գետով: Այս պատկերային բովանդակությամբ վարագույրը մնաց միայն մեկ շաբաթ: Ցարական ոստիկանությունը պահանջում է վերացնել վարագույրը: Այն դրվում է փականքի

տակ: Շպերլինգը վերստին հրավիրվում է Շուշի, փոփոխում է վարագույրի նկարը, կնոջ փոխարեն նկարում է ծերուկ աշուղի, սազը ձեռքին» [10]: «Խանդամիրյան» թատրոնի բացման օրը՝ 1891 թվականի հուլիսի 7-ին, ինքնագործ թատերախումբը ներկայացրել է հայ գրող և դրամատուրգ, ծնունդով շուշեցի Մուրացանի «Ռուզան» պատմական դրաման: Սա կարևոր էջ է հայ թատերարվեստում: Պատմական դրաման եղավ հավաստումն այն բանի, որ հայկական շունչ, ոգի և արժանապատվություն է ապրում Շուշիում, և հայ մարդը չի կարող մոռանալ իր կենսագրությունը, որը կենսահաստատ է:

Թատերական կյանքի ձևավորման նոր շրջանը Շուշիում (1994-2020)

Արցախյան առաջին պատերազմից հետո Շուշին կրկին իր մշակութային դիմագիծը սկսեց ուրվագծել: Իրար հաջորդեցին Սոս Սարգսյանի անվան մանկապատանեկան, Երվանդ Մանարյանի անվան տիկնիկային և Շուշիի դրամատիկական թատրոնների հիմնադրումը: Ե. Մանարյանի անվան պետական տիկնիկային թատրոնում գեղարվեստական ղեկավար Կ. Մաղաքյանը բեմադրել է իր հեղինակած «Հաստ ու բարակ մի գին է», «Ադամի մեղքը» տիկնիկային և «Սպիտակ հացը» դրամատիկական ներկայացումները, Հ. Թումանյանի «Ոսկի քաղաքը», «Պոչատ աղվեսը», «Հենզելն ու Գրետելը» ստեղծագործությունները, ինչպես նաև «Երեք խոզուկները», «Թզուկի տնակը», «Ագահ փայտահատը», «Նապաստակի տնակը», «Արևիկը հասկացավ» տիկնիկային ներկայացումները: Ս. Սարգսյանի անվան մանկապատանեկան թատրոնում հիմնականում բեմադրվում էին արցախյան բարբառով ներկայացումներ, այդ թվում՝ Հովի. Թումանյանի «Գիքորը», «Տերն ու ծառան», «Բարեկենդան»: Թատրոնը մեծ ուշադրություն էր դարձնում նաև Պ. Սևակի, Վ. Տերյանի, Հ. Սահյանի, Հովի. Շիրազի, Ս. Խանյանի, Գ. Գաբրիելյանի ստեղծագործությունների բեմականացմանը: Հատկանշական է, որ թատրոնի դերասանական խմբում դպրոցականներ էին, որոնցից ոմանք հետագայում ընտրել են թատերարվեստի ուղին: Շուշիի դրամատիկական թատրոնում 2000-2006 թթ. բեմադրվել են մեկ տասնյակից ավելի դրամատիկական ներկայացումներ, հիմնականում հայ դրամատուրգ Արամաշոտ Պապայանի պիեսներից: Այս երեք թատրոններն առանձին գործեցին մինչև 2008 թվականը: Նույն թվականին թատրոնների միավորման արդյունքում ստեղծվեց «Աստղիկ» մանկապատանեկան թատրոնը, որը 2009 թվականին վերանվանվեց Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոն: Թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար նշանակվեց ԱՀ ժողովրդական արտիստ Լեոնիդ Հարությունյանը: Վերջինս դասական ստեղծագործությունների կողքին բեմադրում էր նաև ժամանակակից ստեղծագործություններ: Շուշիի թատրոնն ամուր կապեր է ստեղծում Հայաստանի գրեթե բոլոր թատրոնների հետ, հանդես են գալիս փոխադարձ հյուրախաղերով, ձևավորվում է համագործակցային ամուր շղթա. «Շուշիի թատրոնն արժանապատվորեն է ներկայացնում Արցախի թատերական արվեստը: Թատրոնը նվիրյալ անձնակազմ ունի, անխախտ ներուժ ու վճռական տրամադրվածություն» [11]:

Շուշիի թատրոնը նոր ոճով, գաղափարներով, տարատեսակ մոտեցումնե-

րով, արդիական ներկայացումների առումով երբեք չի երկմտել: Դրան մեծապես նպաստել է համաշխարհային տիկնիկային արվեստն ուսումնասիրելը: 2008-2022 թթ. Լ. Հարությունյանը բեմադրել է իր հեղինակած «Գարուն», Խ. Ասատրյանի «Գյումրեցի խուլ պառավների զրույցը», Ա. Շահինյանի «Շունն ու կատուն» (ըստ Հովհաննես Թումանյանի), Վ. Սարոյանի «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ», Գ. Սարգսյանի «Դաս կանանց», Վ. Վարդանյանի «Լուսերեսն ու Վարդերեսը», Պ. Սևակի «Եղերերգ», Ա. Եգանյանի «Ձմեռ պապն արթնացավ», Հովհ. Թումանյանի «Թռչուն ընկեցիկը», Ռ. Եսայանի «Հարության ժամանակը», Ս. Մուրադյանի «Ծպտված Ձմեռ պապն ու Ձյունանուշը», Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ», Լ. Հարությունյանի «Պարույր Սևակ-89», Ա. Էդարի «Անահիտ» (ըստ Ղ. Աղայանի հեքիաթի), Ժ. Այվազյանի «Ցեղասպանություն-100», Լ. Մկրտչյանի «Հայ մուկը» (ըստ Վ. Սարոյանի «Հայ մուկը», «Մաղադանոսի այգին», «Նարինջները» պատմվածքների), Հայկ Հրայրի «Աղոթող մեղեդիների վերադարձը», Ս. Օբրազցովի «Ոսկե ճուտիկը» պիեսները: Թատրոնում ստեղծագործել և բեմադրություններ են իրականացրել նաև այլ ռեժիսորներ: Վ. Գևորգյանը բեմադրել է Ե. Մանարյանի «Պոչատ աղվեսը» տիկնիկային, Ա. Չեխովի «Առաջարկություն», ըստ Հովհ. Թումանյանի հեքիաթների «Լինում է, չի լինում» դրամատիկական ներկայացումները: Կ. Մաղաքյանը բեմադրել է Ե. Մանարյանի «Երեք խոզուկները» տիկնիկային ներկայացումը, Է. Թաթիկյանը և Գ. Առաքելյանը «Թուխի ծննդյան տարեդարձը», «Ձնեմարդը» տիկնիկային ներկայացումները (պիեսները Է. Թաթիկյանի), Գ. Առաքելյանը Է. Թաթիկյանի «Մեր տունը» տիկնիկային ներկայացումը, ինչպես նաև Է. Թաթիկյանը բեմադրել է հեղինակային «Հրաշք N 26» թատերային անիմացիան: Ա. Գևորգյանը բեմադրել է Ա. Չեխովի «Արջը», Կ. Գրիգորյանը՝ հեղինակային «Կոմիտաս» դրամատիկական, Կ. Մաղաքյանը՝ «Արևիկը հասկացավ» տիկնիկային ներկայացումները: Այս ամենը հիմքում ունենալով՝ կարելի է փաստել, որ կայուն խաղացանկի շնորհիվ թատրոնը կարողացավ հանդիսատեսի մեծ հոսք ապահովել և թատերարվեստի էջում իր ուրույն տեղն ամրագրել: Խաղացանկային քաղաքականությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ թատրոնը միշտ պատրաստ է փոփոխությունների և նորությունների: Արցախի թատերական կյանքում ուշագրավ է նաև պոեզիայի թատրոնի ձևաչափում հանդես գալու փաստը: Լ. Հարությունյանի մտահղացումը Շուշիի թատրոնի նոր ոսկեդարում կարևոր ու գործուն միջոց դարձավ. «Ստեղծելով պոեզիայի թատրոն, ես դարձրել եմ պոեզիան հոգևոր սնունդ, որն ընդունելով՝ մարդը դառնում է հոգով ավելի պինդ, հարուստ ու վեհ, հաղթահարում է թերարժեքության զգացողությունը, ապրում լիարժեք կյանքով» [12]: Պոեզիայի թատրոնի ձևաչափում հատկանշական է «Հարության ժամանակը» բեմադրությունը՝ ըստ շուշեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանի համանուն գրքի: Ստեղծագործության հեղինակն էլ է վստահ, որ «թեև պոեզիան վերին երևույթ է և կարիք չունի որևէ արվեստի միջնորդության, բայց մեր հասարակության համար շատ օգտակար է, երբ նաև քարոզչության այդ ձևն է աշխատում, հատկապես, որ բանաստեղծությունն անմիջապես մտնում է ընթերցողի և հանդիսատեսի սիրտը» [13]:

Թատրոնի գործունեությունը 2020 թ.-ի 44-օրյա պատերազմից հետո

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով փոխվեցին թատրոնի ծրագրերը: Թատրոնը գործեց նաև 44-օրյա պատերազմի ժամանակ. ոչինչ չունենալով, խանութից փափուկ խաղալիքներ գնեցին, որոշ չափով ձևափոխելուց հետո Գյումրիում սկսեցին Արցախից տեղահանված երեխաների համար ներկայացումներ խաղալ: 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնը հայտնվել է շրջիկ թատրոնի կարգավիճակում: Չնայած դրան, արդեն հինգ խաղացանկային ներկայացում է վերականգնվել՝ «Պոչատ աղվեսը», «Հայ մուկը», «Երեք խոզուկները», «Թուխի ծննդյան տարեդարձը», «Շունն ու կատուն»՝ պրոֆեսիոնալ տիկնիկներով, իսկ մեկ նոր ներկայացում էլ՝ «Ոսկե ճուտիկը» [14], 2022 թվականին է բեմադրվել: 44-օրյա պատերազմից հետո, հյուրախաղերին զուգահեռ, Շուշիի թատրոնն առցանց ներկայացումներ է խաղացել Ռուսաստանի և Գերմանիայի հայ համայնքների երեխաների համար: Թատրոնի գործող տնօրեն Աշխեն Հարությունյանի խոսքով՝ «Առցանց ներկայացումների ցուցադրությունը կարևոր նպատակներ ունեն. որպեսզի արտերկրի երեխաները տեսնեն՝ թեև Շուշին այս պահին մերը չէ, բայց Շուշիի թատրոնը կա, ու նաև տեսնեն, թե իրենց հայրենիքում ինչ արվեստ է ստեղծվում և ինչպիսի զարգացում է ապրում, խոչընդոտներով լի արվեստի ճանապարհով կերտում իր ուղին» [15]:

Կարծում ենք՝ այսօր, թատրոնի հետագա ճանապարհն ավելի արդյունավետ դարձնելու և վերակազմակերպելու համար մեծապես կարող են նպաստել արվեստի կառավարիչները: Այդպիսով կձևավորվի համագործակցության շղթա ոչ միայն հիմնադրամների ու հասարակական կազմակերպությունների, այլև մարզային իշխանությունների, մանկական խաղալիքներ, հագուստ, քաղցրավենիք և հյութեր արտադրող ընկերությունների հետ՝ երկուստեք ապահովելով գովազդային քաղաքականություն:

Եզրակացություն

Այսօր իր պատմական հայրենիքից դուրս գտնվելով՝ Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնը առանձնահատուկ արժեք է Արցախի համար. այն Արցախ աշխարհի քաղաքակրթության ու մշակութային բազմամյա պատմության անձնագիրն է, խորհրդանիշը, արարող երակը: Թատրոնն ունի ստեղծագործական հստակ ուղենշված ճանապարհ, երիտասարդ ու եռանդուն կազմ, վերականգնված խաղացանկային ներկայացումներ: Շուշիի պետական թատրոնում տարբեր տարիների բեմադրվել են տիկնիկային, մանկապատանեկան, դրամատիկական ներկայացումներ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ թատրոնը ձեռք մեկնեց պոեզիա բեմադրելուն, որովհետև վերջինս, շնորհիվ կյանքն առավել ընդգրկուն պատկերելու հնարավորության, լիովին բավարարում է ժամանակակից հանդիսատեսի գեղագիտական պահանջները: Ժամանակակից կյանքի ինֆորմացիայի սրընթաց հոսքը հանդիսատեսի մեջ զարգացրել է կարճ ժամանակում բազմաթիվ թեմաների ընկալման ու յուրացման հատկությունը: Փորձ չի արվել քնարական ձևը դրամատիկականի կամ էպիկական ձևը քնարականի մեջ

տարրալուծելու: Շեշտը դրվել է խոսք-ներկայացման վրա. թե ի՛նչ են պատմում դերասաններն ու ինչպե՛ս են պատմում:

Թատրոնը շրջիկ կարգավիճակում նույնպես գործում է կանոնավոր ու նպատակային, քանի որ այն զուտ ստեղծագործական խնդիր կատարող չէ, այլ ինչ-որ առումով ռազմավարական, Շուշիի մշակութային պատմությունն ամրագրող ու պահպանող, փոքր երկրի արվեստի զարգացման կարևոր ազդակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 47-57:
2. Լալայան Ե., «Ազգագրական հանդես», թիվ 11, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 106:
3. Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978, էջ 6:
4. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 33:
5. Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978, էջ 7:
6. Սաֆրազյան Ստ., Մեղու Հայաստանի, Շուշի, 1882, 16 սեպտեմբերի: 7. Հարությունյան Բ., XIX-XX դարի հայ թատրոնի տարեգրություն (1801-1922), հատ. Ա, Երևան, 1980, էջ 139-140, 291:
8. Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն, 19-րդ դար (երկրորդ՝ բարեփոխված հրատարակություն), Երևան, 2010, էջ 501:
9. Խանդամիրյան Բ., Շուշի քաղաքի թատերական կյանքից, «Սովետական արվեստ», թիվ 8, Երևան, 1969, էջ 47:
10. Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978, էջ 15:
11. Արզումանյան Վ., Ճանապարհներ, որ սկսում են թատրոնից, tatron-drama.am, 04. 09. 2022:
12. Եսայան Ռ., Թատերարվեստի երախտավորը, Ստեփանակերտ, 2018, էջ 184:
13. Երիցյան Շ., Պոեզիայի թատրոնը՝ բաբախուն երակ, https://www.grakantert.am/archives/7902, 22.11.2015:
14. Արզումանյան Վ., Շուշիի թատրոնի խաղացանկը համալրվում է, vardananq.am, 18. 12. 2022:
15. Արզումանյան Վ., Մարդկային ճակատագրով Շուշիի թատրոնը, tatron-drama.am, 02. 09. 2022:

Прошлое и настоящее армянского театра Шуши

Арзуманян Вова
ЕГИТиК, сценарно-драматургическое искусство, 2-й курс
Научный руководитель:
кандидат искусствоведения, профессор Н. Саргсян

Резюме

Ключевые слова. *Арцах, Шуши, театр, репертуар, гастроли, классические произведения*

В статье представлена история создания Шушинского театра «Хандамирян», его основной репертуар, восстановление театральной жизни после первой Арцахской войны, а также создание театра, возникшего в результате объединения трех действующих в городе театров, и деятельность государственного театра имени М. Хандамиряна.

The Past and Present of the Armenian Theater of Shushi

Arzumanyan Vova
YSITC, Art of Scriptwriting and Dramatic Stage Composition, 2nd year
Academic Supervisor: N. Sargsyan,
Candidate of Art History, Professor

Summary

Key words: *Artsakh, Shushi, theater, repertoire, tours, classical works*

The article presents the history of the creation of the Shushi Theater ´Khandamiryan,´ its main repertoire, the restoration of theatrical life after the First Artsakh War, the formation of the theater through the merging of three existing theaters in the city, and the activities of the State Theater named after M. Khandamiryan.

Հայրավանք համալիրը և նրա արձանագրությունները

Բաղդասարյան Ռեգինա
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Պողոսյան

Հանգուցային բառեր. *Հայրավանք, Մեղրակ Բարխուդարյան, արձանագրություն, խաչափայտի մասունք, Մարդաղավնյաց*

Սևանի ավազանի, ինչպես նաև պատմական Հայաստանի ճարտարապետության, հոգևոր կյանքի ու նաև հասարակական հարաբերությունների վերաբերյալ բավականին ուշագրավ սկզբնաղբյուրներից մեկն էլ Հայրավանքի վանական համալիրն է: Այդ առումով առանձնակի նշանակություն ունեն նրա պատերին եղած արձանագրությունները, որոնք էլ լույս են սփռում կառույցի ստեղծման ու դրա գոյության ընթացքում տեղի ունեցած տարատեսակ գործընթացների վրա: Մեր այս հաղորդմամբ մենք փորձում ենք ի մի հավաքել վանքի մասին եղած տեղեկություններն ու դրանով իսկ այն հնարավորինս ամբողջական տեսքով հասանելի դարձնել հետազոտողներին:

Հայրավանքի պատմության բացահայտման գործում հետաքրքրությունները սկսվել են 19-րդ դարի կեսերից: Չափազանց կարևոր նշանակություն ունեն վանքի համալիրի պատերին փորագրված վիմագրությունները: Մեզ հայտնի առաջին հետազոտողը Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցն էր, որը տվել է այդ հուշարձանի տեղագրությունն ու հուշարձանն էլ ներկայացրել «Հայր Ռհանավանք» անվանումով, այնպես, ինչպես այն կոչում էին տեղի բնակիչները... «տաճար նորա փոքր և անսիուն ի կոփածոյ քարանց... » [4, 369]: Այդուհանդերձ նա իր պրպտումների արդյունքում չի հայտնաբերել ոչ մի արձանագրություն, որը նրան հնարավորություն կընձեռեր պարզել կառուցման ժամանակաշրջանը, չնայած պարզել է, որ մոտակայքում գոյություն է ունեցել խոշոր բնակավայր, «զի ավելի ընդարձակ էր տեղին՝ մինչև բավական լինել աւելի քան երկու հազար գերդաստանաց» [4, 369]:

Հայրավանքի մասին ուշագրավ տեղեկություններ է հավաքել Ղևոնդ Ալիշանը: Նա իր «Սիսական» կոթողային ուսումնասիրության մեջ իր ձեռքի տակ եղած աղբյուրների հիման վրա նշում է, որ վանքի մերձակա տարածքն ամբողջովին ծածկված էր հնամենի, այդ թվում աշխարհիկ շինությունների ավերակներով: Դրանց մոտ էր գտնվում նաև վանքը, որը եվրոպացի ուղեգիրներից մեկը ներկայացրել է «Գզըլվանք, ավերակ (Կարմիր) վանաց, որ ոչ լսի առ այլևս և թուի ինձ նոյն ընդ Այրիվանից»: Ալիշանն ավելացնում է, որ Հայրավանքի մասին հիշատակություն կա հավանաբար 1530 թվականին (ՋՀԹ) Տիվրիկ քաղաքում գրված մի ավետարանում, ըստ այդմ «Ի հայրապետութեան Տէր Գրիգորի ... յերկրիս Գեղամայ, ի սուրբ ուխտս որ կոչի Հայր Յոհան, ի դառն եւ ի նեղ ժամանակի. (յորում) եկն յերկրիս մեր Տաճիկ մի, հարկ խնդրէր, ոչ համարաւք, այլ թաւարուք, որ է հարկ բեռին»: Վանքի ու նաև վանահոր մասին գովեստի խոսքեր կան ուղեգիր

Դյուբուայի ուղեգրություններում, որն այդ կողմերում եղել էր 1834 թվականի փետրվար ամսին [1]:

Հայրավանքի մասին որոշ տեղեկություններ էլ հրապարակել էր նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը: Ըստ այդմ, տեղացիները պատմել են, որ պաշարումների ընթացքում ջրի պակասություն չզգալու ու նաև փրկվելու նպատակով գոյություն ուներ «գավիթի միջից մի ստորերկրյա անցք, որն իջնում էր մինչև լիճը» [3, 138]: Լալայանը պարզել էր, որ այդ կերպ պաշարվածները կարող էին հասնել վանքից ոչ շատ հեռու գտնվող Սպիտակ ամրոց կոչվող տարածք, որտեղ կային վտանգների ժամանակ պատսպարվելու թաքստոցներ: Բացի այդ էլ, նաև կարճ ճանապարհ էր լճից ջուր վերցնելու համար: Մեր ժամանակներում այն չի գործում:

Վանքին հարակից բնակատեղիում պեղումներ է կատարել հնագետ Հարություն Մնացականյանը: Պեղումները, որոնք իրականացվել էին 1952, 1972, 1973 թվականներին, հնարավորություն են տվել պատկերացում կազմել տարածաշրջանի վաղ ժամանակաշրջաններին վերաբերող նկարագրի վերաբերյալ: Մասնավորապես հայտնաբերվել էր հնագիտական հարուստ նյութ՝ միջին բրոնզի և երկաթի դարերի վերաբերող զարդեր, զենքեր, գործիքներ, փայլեցված անոթների մնացորդներ, կրակարաններ և այլն, որոնք վկայում են այն, որ այդտեղ գոյություն էր ունեցել բավականին զարգացած տնտեսությամբ բնորոշվող բնակավայր: Վանքի պարսպապատերից դուրս պահպանված կացարանների, ձիթհանի, տնտեսական շինությունների հետքերն ըստ էության հենց այդ բնակավայրի մնացորդներն են [6]: Այդպիսով ակնհայտ դարձավ, որ վանքի շուրջբոլորը դեռևս մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերից բնակեցված է եղել, և կյանքն այդտեղ շարունակվել ու շարունակվում է մինչ մեր ժամանակները: Հիմքեր կան ենթադրելու, որ եկեղեցու առափնյա ժայռին կառուցված կիկլոպյան ամրոցը, որը եղել է պարսպապատ բնակավայրի միջնաբերդ, վերաբերում է նույն ժամանակաշրջանին:

Ավելի ուշ այդ հուշարձանի ուսումնասիրությամբ զբաղվել է հայ նշանավոր վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը: Հենց նրան էլ հաջողվել է հայտնաբերել, արտագրել Հայրավանքի վիմագիր հուշարձանները: Դրանք հրատարակված են «Դիվան վիմագիր հուշարձանների» չորրորդ պրակում [2, 67]: Դիվանում ամփոփված է 58 արձանագրություն, որոնցից նախկինում հրատարակվել է միայն հինգը: Կարելի է արձանագրել, որ հենց այդ արձանագրությունների հիման վրա էլ հնարավորինս բացահատվում են վանական համալիրի կազմում եղած շինությունների կառուցման ու այդ իրադարձությունների հետ կապված մանրամասները:

Այս վանքը սկզբնաղբյուրներում հայտնի է եղել Հայրավանք, Այրիվանք, Հայրիվանք, Հայր Հոհանք, Հայր Հովհան, Հայր Հովհաննավանք, Հայր Հովհաննու վանք, Հայրավանք, Հայրուվանք, Հայր Օհանավանք, Հովանավանք, Մարդաղավնյաց վանք և այլ անվանումներով [9]: Այն գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիք մարզի Հայրավանք գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ Սևանա լճի առափնյա ժայռոտ հրվանդանում [7]:

Վանքը, գտնվելով հրվանդանի նեղ պարանոցում, նաև պարսպապատված է և այդպիսով ստացել էր մի անմատույց և ամրացված կառույցի նշանակություն: Պարսպից ներս գտնվող փոքրիկ բակում պահպանվել են տապանաքարեր, խաչքարեր և բուն վանքի շինությունները՝ եկեղեցին, գավիթն ու զանգակատունը [2, 67]: Հայրավանք գյուղը ըստ Էության կառուցված է հին քաղաքատեղիի վրա, որի ավերակներում նկատելի են բնակելի ու տնտեսական շինությունների մնացորդների հետքեր: Գյուղում ընդհանուր առմամբ գոյություն ունեն երեք խումբ հուշարձաններ, որոնցից մեր հետաքրքրության առարկան միայն Հայրավանքն է: Ս. Բարխուդարյանը իր իսկ հայտնաբերած վիմագրությունների ընձեռած հնարավորությունների սահմաններում բավականին մանրամասնորեն ներկայացրել է նաև վանքի տեղագրությունն ու առանձին շինությունների ճարտարապետական ձևերը:

Պատմական աղբյուրների համաձայն այս վայրը դեռևս չորրորդ դարից սրբատեղի է եղել: Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը Կեսարիայից վերադառնալիս նախ հիմնում է Գանձասարի վանքը՝ այնտեղ թողնելով Հովհաննես Մկրտչի մասունքներից, երբ հասել է Գեղամա ծովի այս վայրերը՝ նրան ուղեկցող վարդապետներից մեկը հայրապետին խնդրել է ճգնության համար իրեն այստեղ թողնել: Լուսավորիչը Քրիստոսի խաչափայտի մասունքը հանձնել է վարդապետին, որ կառուցումից հետո դրվի աղոթատանը: Չորրորդ դարի աղոթատան հիմքերը դեռ մինչ օրս պահպանված են: Մինչև իններորդ դարն ընկած ժամանակահատվածում այս վայրը համարվել է ճգնավորական կենտրոն: Իններորդ դարում արժանանում է Մարիամ իշխանուհու ուշադրությանը, որի նվիրատվություններով էլ կառուցվում է վանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցին [8]:

Եկեղեցին քառաբսիդ գմբեթավոր շենք է՝ ներսից և դրսից խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ հորինվածք՝ 6,15 մ x 7,15 մ ներքին առանցքային չափերով [7]: IX-XII դդ. վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց (Ս. Ստեփանոս) և գավիթից: Քառախորան է և ունի երկու մուտք, որոնցից մեկը հարավային է, մյուսը՝ արևմտյան: Արևմտյան մուտքը բացվում է գավիթի մեջ, և տարբեր ուսումնասիրություններ ցույց են տվել, որ այն բացվել է ավելի ուշ՝ գավթի հետ անմիջական կապ ստեղծելու նպատակով: Եկեղեցին կառուցվել է կոպտատաշ բազալտից: Ամբողջ շենքի վրա միայն անկյուններն ու այլ շաղկապող մասերն են սրբատաշ քարերով շարված [2, 67]:

Պահպանված ամենահին արձանագրությունը վերաբերում է 1211 թվականին, և դրանում էլ հիշատակություններ կան վերանորոգչական աշխատանքների մասին: Բայց դատելով շինության ճարտարապետական ու շինարարական աշխատանքների առանձնահատկություններից՝ Սեդրակ Բարխուդարյանը գտնում է, որ այն ըստ երևույթին կառուցվել է 9-10-րդ դարերում: Բացի դրանից, նա գտնում է, որ այդ նույն ժամանակաշրջանում էլ կառուցվել է գավիթը:

Համալիրի կազմում ինքնատիպ մի կառույց էլ երկսյուն գավիթն է: Այն ամբողջությամբ սրբատաշ քարերից կազմված լինելուց բացի, նաև կառուցված է երկու ամբողջական և վեց կիսաբսիդների վրա: Արձանագրություններից պարզ-

վում է, որ գավիթը կառուցվել է Ներսես և Հովասափ եղբայների կողմից, հավանաբար եկեղեցու վերանորոգումների ընթացքում [3, 138]: Ըստ Սեդրակ Բարխուդարյանի՝ այդ արձանագրությունը գտնվում է գավիթի արևմտյան պատի հարավային մասի կենտրոնում՝ արտաքուստ կազմված լինելով 5 տողերից.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ՄԵՆՔ ԵՂԲԱՐՔՍ ՆԵՐՍԷՍ և ՅՈՎԱՍԱԲ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻԱ ԵՒ ԶԳԱՎԻԹՍ: ԱՅԳԻ ԶԱՂԱՅԱՆԻ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ

ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԾԱՌԶԱՐԴԻՆ: Բ: ՆԵՐՍԻՍԻ ԵՒ :Բ: ՅՈՎԱՍԱՓԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ [2, 71]:

Սեդրակ Բարխուդարյանը, նկատի ունենալով 1211 թվականի արձանագրության մեջ այդ նույն եղբայրների կողմից եկեղեցու նորոգման մասին հիշատակությունը, իրավացիորեն գտնում է, որ այս մի արձանագրությունը պետք է գրված լիներ նրանից մի 45 տարի անց ու բացի այդ էլ, հավանաբար «շինեցաք/շինել» բառը վերաբերում է միայն գավիթին [2, 68]: Մենք մեր հերթին ենթադրում ենք, որ հնարավոր է, որ գավիթը կառուցելով, վերջնականապես ավարտվել էր վանական համալիրի շինարարությունը:

Պատմական աղբյուրներից բացի՝ վանական այս համալիրի նշանակության մասին տեղեկություններ են պարունակում նաև եկեղեցու և գավիթի պատերին եղած տարբեր արձանագրությունները: Հենց դրանց բովանդակություններից էլ հնարավոր է դառնում բացահայտել վանական համալիր այս կամ այն կառույցի նորոգումների, ինչպես նաև նոր հիմնարկումների կատարման ժամանակն ու դրանց հետ կապված այլ կարևոր մանրամասներ: 1211 թ. արձանագրությունը մատնանշում է Ներսես և Հովասափ եղբայրների կողմից եկեղեցու նորոգման փաստը: Այն փորագրված է եկեղեցու հյուսիսային և արևմտյան խաչաթևերը կազմող պատի անկյուններում, երկու սյունակով՝ դեպի հարավ և արևելք նայող երեսներին՝

Ի ԹՎ. ՀԱՅՈՑ ՈԿ «1211» ՆՈՐՈԳԵՑ ԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՌԱՋՆՈՐ- ԴՈՒ ԹԵ. ՅՈՎՍԵՓԻ և ՆԵՐՍԻՍԻ. ՄԵԾ ՍՊԱՐԱՊԵՏՆ ԲՈՒԲԱՅՆ

ՏԷՐ ԵՐԿՐԻՍ, ԵՏ ՅԱՌԻՆՋՔԶԱՅԳԻՆ ՈՍԿԵԲԱԿՍ ՈՐ Է ԱՌՈՒ ՔԱՆԱՔԵՍԱ :Բ: ԱԿՆ Զ ԱՂԱՅԻ ՆՈՐԱՇԻԿ: ՏՐ ՎԱՆԱԿԱՆ ԵՏ՝

ԶԽԱԺԼԻ ԶԱԳՆ, ՈՐ ԲԵՐԴԱԺՈՂՈՎՈՒՐԴ ՎԱՆԻՑՍ. ԿԱՐԳԵՑԱՔ Զ Յ ԱՅՏՆՈՒԹԵ ՃՐԱԳԱԼՈՅՑՆ ԵՒԸԶ Զ ԱՏԿԻ ԺԱՄՆ ԿԱՏԱՒՆ ՏԱՆ. ՈՐ ԽԱՓԱՆԷ ԿԱՄ ՅԵԿԵՂԵՑՈՅՍՀԱՆԷ ՄԱՍՆԱԿԻՑ ՅՈՒԴԱՅԻ ԵՒ

ՍԱՏԱՆԱ Ի ԼԻՑԻ ԱՄԵՆ: ՎԱՆՔԻՍ Ի Մ ՄՈՒԼՔՆ ՏՎԻՆՔ ՎԱԽՄՆ, ՈՎ ԽԱԲԱՆԻ ԱՅ. ԴԱՏԻ [2, 69]:

Եկեղեցու գմբեթը երդիկավոր է և ութանիստ, ունի շթաքարեզարդ անկյուններ՝ ներսից երեսպատված է սև և կարմիր շեղադիր տուֆաքարերով [8]: Այն այնպիսի կատարյալ ձևով են կառուցել, որ նրանից ներս մտնող արևի շողերը ներդաշնակ գեղեցկություն են հաղորդում եկեղեցու ներքնատեսքին, որը լուսավորվում է նաև խորանների և թմբուկի ճակատային նիստերին եղած մեկական պատուհաններից:

Գավիթի գմբեթը մնացած գմբեթներից ավելի բարձր է. բոլորի վրա էլ ամրացված են ձևավոր խաչեր: Բոլորն էլ 1980-ական թվականներին իրականացված վերականգնողական աշխատանքների արդյունքն են:

Եկեղեցին հայ ճարտարապետության եզակի նմուշներից է՝ բոլոր խորանների ներքին բոլորակությունը դրսևորվում է արտաքին տեսքում [6]: Բարխուդարյանն այսպես է նկարագրել «Անսովոր են նման շենքերի համար արևելյան պատի երկու անկյուններում եղած կրկնահարկ խորանները»: Կարևոր է, որ վիմագրություններում տեղեկություններ կան նաև դրանց վերաբերյալ, մասնավորապես դրանցից մեկում հիշատակված է առ այն, որ դրանք կառուցվել են Սարգսուքի և Բահրի կողմից վանքի առաջնորդ Հովասափի Ներսեսի օգնությամբ: Վերջիններս շինարարական աշխատանքներին օժանդակել են մարդկային ուժի տրամադրմամբ: Արձանագրությունը տեղակայված է եկեղեցու հարավային մուտքի գոգավոր լալավորի վրա ներքուստ, 6 տող.

ԵՍ ՍԱՐԳՍՈՒԿ ԵՒ ԲԱՀՐ ՇԻՆԵՑԱՔ :Բ: ԽՈՐԱՆ. ԵՍ ՎԱՐՀԱՄ, ՍՏԵՓԱՆՈՍ, ՄԻՈՒՆԱ, ԽԱՉԱՏՈՒՐ, ՄԽԻԹԱՐԻՉ ՏՎԱՔՅԱՒԱՆ ԶՊԱՏՈՎԻ ՏԵՂԻՆ ՅԱ- ԻԱՆԱՓՈՍ Ի ՎԱՆՔՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՈՐԱ ՅՈՎԱՍԱՓՆ ԵՒ ՆԵՐՍԵՍ ՏՎԻՆ

ՄԵՋ Ի ՄԱՐԴՆ :Ա: ԺԱՄ, Ի ՍԲ. ԽԱՉԻՆ, ՈՐ ՁԵԳԻՆ Ի ՎԱՆԻՑՍ ՀԱՆԷ ՅԱՅ ՆԶՈՎԵՍՅԻ:

Այդ նույն պատի տակ հետագայում շինվել է նաև հարթակ-բեմ՝ ժամասացության համար [2, 69]:

Գրի առնված վիմագրությունների թիվը հասնում է հիսունի: Դրանք իրենց բովանդակությամբ տարբեր են, բայց հիմնականում պարունակում են շինարարական ու նվիրատվական բնույթի տեղեկություններ: Դրանց թվում է Գեղարքունիք գավառի տեր, Զաքարյան իշխանների գործակից, սպարապետ Բուբայի վիմագիր, 1211 թ, վերաբերող նվիրատվական հիշատակարանը, որում ասվում է, որ «ետ յԱռինջք զայգին ոսկեբակս, որ :Է: առու Քանաքեռս, :Բ: Ակն ջաղաց ի Նորաշիկ....» [2, 69]: 1213 թ. վերաբերող մի վիմագրությունում հիշվում է նվիրվել Համազասպից՝ այգի, Բեշքեն և Ինանիկ (Իվանե) Օրբելյան իշխաններից՝ Բերդ գյուղի հարկի մի մասը [7]: Ընդհանուր առմամբ, վանքի պատերին եղած վիմագրությունները, որոնց մի նշանակալից մասը փորագրվել են հետագա մի քանի դարերում, մատնանշում են վանքի հանդեպ հավատացյալների շրջանում եղած հարգանքի ու ընդհանրապես վանքի վայելած մեծ հեղինակության մասին: Վանքի վայելած մեծ հեղինակության արտահայտություններն են նաև դրա հետ առնչվող բազմաթիվ ավանդություններ, որոնցից մեկը իր ժամանակին գրի էր առել կաթողիկոս Ղազար Ջահկեցին: Ըստ այդմ պատմում են, որ 1381թվականին, երբ Հայաստանով մեկ մոլեգնում էին Լենկթեմուրի արշավանքները «վանքի վանահայր Տեր Հովհանը կապում է իր մեջքին այս վանքում պահվող խաչը, այն, որ Կոթա և կամ Սևանի Ս. Նշան է կոչվում և այժմ գտնվում է Սևանի վանքում, և ոտքով վազում Սևանա ծովի երեսով»: Լենկթեմուրը զարմանում է այս հրաշքի վրա. խնդրում է վանահորը հետ դառնալ՝ խոստանալով կատարել նրա ամեն մի խնդրանք և

երբեք չվնասել նրան և նրա վանքին: Հայր Հովհանը ետ է դառնում և ցույց տալով իր մեջքին կապած խաչը՝ խնդրում է ազատել քրիստոնյա գերիներից այնքան, որքան կտեղավորվի իր փոքրիկ վանքում: Լենկթեմուրը համաձայնում է, սակայն նրա զարմանքը ավելի է սաստկանում, երբ նկատում է, որ բոլոր գերիները կարողանում են տեղավորվել այս վանքում: Կամենալով բացահայտել այս հրաշքի պատճառը՝ ինքն է մտնում եկեղեցին, և տեսնում, որ ներս մտած գերիներն աղավնի են դառնում և թռչում դեպի Սևան [3, 139]: Այս հրաշքի համար է, որ այդ ժամանակից ի վեր այն և՛ կոչվում է Հայր Հովհանի անունով «Հայրավանք», և՛ Մարդաղավնյաց վանք: Այս ավանդության մասին տեղյակ է գյուղի ցանկացած բնակիչ. նրանք այնպիսի հիացմունքով են պատմում այն, որ քեզ թվում է, թե այդ ժամանակաշրջանի վկաների հետ ես զրուցում:

Մարդաղավնյաց վանքը, ինչպես իր ժամանակի մյուս վանքերը, փակ է եղել ժողովրդի համար. պատճառն այն էր, որ վանականները չկտրվեին ճգնությունից: Վանքերի դռները տարին մեկ անգամ էին միայն բացվում ժողովրդի առաջ, և միայն տղամարդիկ իրավունք ունեին եկեղեցի մտնել: Միայն նրանց էր թույլատրվում ներս մտնել ու մասնակից լինել արարողությանը [8]: Այստեղ էր գտնվում էր խաչափայտի մասունքը, և այն պահպանվել է մինչև 19-րդ դար: Ու հայտնի է նաև, որ 12-19-րդ դարերը Հայրավանքի ծաղկուն շրջանն էր: Պատմությունը վկայում է, որ այստեղ շուրջ 500 միաբան է եղել, որոնք վանքի շրջակայքում զբաղվել են ձիթագործությամբ, որով էլ իրենց գոյությունն են ապահովվել, իսկ վանքի ներսում հիմնել են մանրանկարչության դպրոց [8]: Անտարակույս է, որ Հայրավանքի մասին արժեքավոր տեղեկություններ պետք է լինեն Սևանա վանքում պահվող կոնդակներում: Համենայնդեպս դրանցից քաղված տեղեկություններից հայտնի է դարձել, որ Մինաս կաթողիկոսը 1752 թ.և Աբրահամ Գ կաթողիկոսը 1834 թ. Հովհաննու վանքի առաջնորդ են կարգել Հովհաննես և Աբրահամ վարդապետներին [3, 138]: Վանքի ակտիվ գործունեությունն անհայտ պատճառներով ավարտվում է 19-րդ դարի կեսերին:

Գյուղի բնակիչներից շատերն այն կարծիքին են, որ Հայրավանքը լքվել է երկրաշարժի հետևանքով, և դրա ապացույցը այն է, որ հենց այդ դարում էր փլուզվել եկեղեցու գմբեթը: Այդ հանգամանքների պատճառով էլ եկեղեցին աստիճանաբար սկսել է ամայանալ, իսկ վանքի միաբանների մի մասն էլ տեղափոխվել է Էջմիածին, մյուս մասն էլ՝ Սևանա վանք (այստեղ են տեղափոխում նաև խաչափայտի մասունքը): Խորհրդային շրջանում, ի շարս պատմաճարտարապետական նշանակության այլ հուշարձանների, վերականգնողական աշխատանքներ են իրականացվում նաև Հայրավանքում:

Եկեղեցու վերականգման նախնական նախագիծը ճարտարապետներ Շ. Ազատյանի և Յու. Թամանյանի 1956 թ. կատարած չափագրության հիման վրա կազմել է ճարտարապետ Ս. Ալանակյանը: Վերականգնողական աշխատանքները կատարվել են 1977-1980 թվականներին, վերականգնող վարպետ Ցոլակ Սարգսյանի ղեկավարած քարտաշորմնադիրների բրիգադի կողմից [6]:

Վերականգնվելուց հետո մինչ այսօր եկեղեցին կանգուն է և ծառայում է

ժողովրդին: Հայրավանքը միշտ լեցուն է զբոսաշրջիկներով և ուխտավորներով: Ամեն տարի այստեղ ուխտի են գնում թե՛ գյուղի բնակիչները, և թե՛ մերձակա տարածքներերի բնակիչները: Եկեղեցում կատարվում են հարսանյաց, կնունքի արարողություններ: Եկեղեցին առավել մարդաշատ է դառնում Սուրբ Զատիկի և Վարդավառի օրերին: 2017 թ. հուլիսի 9-ին՝ Հայրավանքի ուխտի օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ի օրհնությամբ խաչափայտի մասունքները բերվեցին Հայրավանք [5]: Եվ այդ նույն ժամանակ Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Հայր Կիրակոսի և հոգևորականների նախաձեռնությամբ հիմնվում է նոր ավանդույթ, որ ամեն տարի Հայրավանքի ուխտի օրը այստեղ կբերվի խաչափայտի մասունքը: Այդ օրը ամեն տարի տարբեր վայրերից բազմաթիվ մարդիկ սկսում են այցել Հայրավանք՝ հաղորդակցվելու մասունքների օրհնաբեր զորությանը և հիանալու դարերով կանգուն մնացած եկեղեցով:

Այսպիսով ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ Հայրավանքի վանական համալիրը կարևոր նշանակություն է ունեցել պատմական Հայաստանի հոգևոր ու մշակութային կյանքում և որպես ճարտարապետական ինքնատիպ կառույց կարևոր ներդրում էր հայոց շինարարական արվեստի պատմության մեջ: Համալիրի պատերին եղած վիմագիր արձանագրությունները կարևոր նշանակություն ունեն վանքի ու նրա առանձին մասերի ստեղծման պատմության ամբողջական նկարագրի մասին պատկերացում կազմելու համար: Այդքանով հանդերձ, անշուշտ, կա Հայրավանքի պատմության՝ հատկապես նրա հոգևոր ու հասարակական նշանակության բացահայտման առումով պրպտումների անհրաժեշտություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ., Միսական, Նոր Գեղոք. Այրի վ. – Հայր Յովհան Վանք, Վենետիկ, 1893 թ. (https://digilib.aua.am/book/1346/1612/11324/Միսական):
2. Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, պրակ 4-րդ, Գեղարունիք Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, Երևան-1973, էջ 522:
3. Լալայան Ե., Ազգագրական հանդես, գիրք XXIII, Նոր-Բայազէտի Գավառ, Նշանավոր վանքեր, 1912, էջ 242:
4. Իմ բնակավայրը, Գեղարքունիք, Հայրավանք https://www.17.am/հայրավանք/, (08. 03. 2023):
5. Շահխաթունեանց Յ., Ստորագրութիւն կաթողիկե Էջմիածնի եւ հինգ գավառացն Արարատայ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, էջ 559:
6. Հայրավանք, https://hatis.am/hayravank, (08. 03. 2023):
7. Հայրավանք, http://gradaran198.blogspot.com/2017/05/blog-post.html, (08. 03. 2023):
9. Հայրավանք եկեղեցի, https://www.youtube.com/watch?v=jeRPYC-kvow, (12. 11. 2021):
9. Հայրավանք, https://hayravank.weebly.com/, (08. 03. 2023):

Комплекс Айраванк и его архитектурная структура

Багдасарян Регина
ГГУ, История, 4-й курс
Научный руководитель:
кандидат исторических наук, А. Погосян

Резюме

***Ключевые слова**: Айраванк, Седрак Бархударян, надпись, архитектура, крест-реликвия, Мардагавняц*

Айраванк оставил свой архитектурный след на средневековую армянскую культуру. Он выделялся не только своими архитектурными решениями, но и занимаемым им положением. Несмотря на то, что Айраванк был благоустроен с 12 по 19 вв., он сохранил свою культурную ценность по сей день. Айраванк является носителем древней средневековой культуры.

Hayravank Complex and its Architectural Structure

Baghdasaryan Regina
GSU, History, 4th year
Academic Supervisor: A. Poghosyan
Candidate of Historical Sciences

Summary

***Key words:** Hayravank, Sedrak Barkhudaryan, inscription, architecture, relic cross, Mardagavnyats*

Hayravank has left its architectural trace on Armenian medieval culture. It stands out not only with its architectural monuments but also with its occupied position. Though Hayravank was built between 12-19 century, it has maintained its cultural values up to this days. It is presented as a bearer of ancient medieval culture.

Արմենակ Ղազարյանի (Հրայր Դժոխք) դերակատարությունը Սասունի 1894 թվականի ապստամբության կազմակերպման գործում

Բավեյան Նարինե
ԳՊՀ, Պատմություն, 5-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. Ք. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *հայդուկային պայքար, ազատագրություն, Հրայր Դժոխք, Օսմանյան կայսրություն, Սասուն, Տալվորիկ*

Աշխատանքում ներկայացված է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի ամենակարկառուն ու խոհեմ դեմքերից մեկի՝ Հրայր Դժոխքի գործունեությունը, որն առաջիններից էր, որ իրավացիորեն գտնում էր, որ անջատումերով գործելն անհեռանկար և վտանգավոր է, և զարգացնում էր համաժողովրդական ապստամբության գաղափարը:

Թեման արդիական է, քանի որ 21-րդ դարի աշխարհաքաղաքական փոփոխություններն ու զարգացումները հայ ժողովրդի առջև անընդմեջ դնում են նոր մարտահրավերներ և պայքարի վարման ռազմավարության մշակման և կիրառման անհրաժեշտություն: Այդ առումով առաջնային է հայոց պատմության ազգային-ազատագրական պայքարի, հատկապես հայդուկային շարժման ուսումնասիրությունը, առանձին անհատների գործունեության վերհանումն ու համապատասխան դասերի քաղումը:

Աշխատանքի ուսումնասիրման առարկան Արմենակ Ղազարյանի (Հրայր Դժոխքի) գործունեությունն է:

Ուսումնասիրության նպատակն է համապատասխան աղբյուրների և գրականության ուսումնասիրության արդյունքում ներկայացնել հայդուկային շարժումը և այդ շարժման ամենակարկառուն դեմքերից մեկի՝ Հրայր Դժոխքի կյանքն ու կուսակցական, ազգային-ազատագրական գործունեությունը 1864-1894 թթ., վերջինիս ներդրումն ազգային-ազատագրական պայքարում:

Ուսումնասիրության խնդիրներն են՝ վերհանել Հրայր Դժոխքի կյանքի ուղին և նրա ակտիվ գործունեությունը Սասունի 1894 թ. ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման գործում:

Հայ ժողովրդի և հատկապես արևմտահայերի վիճակը ծանրացավ 1860-1880-ական թվականներին թանզիմաթի ժամանակահատվածում: Օսմանյան կայսրությունն օր օրի ավելի ու ավելի էր ամրապնդում իր տեսակետը, թե երկրի ապագան բոլոր մուսուլմանների միավորման և միատարր պետության ստեղծման մեջ է: Թուրքերի պետական քաղաքականություն էր դառնում Օսմանյան կայսրությունում բնակվող ոչ մահմեդական ազգերի վերացման հարցը: Նման պայմաններում, իհարկե, անհեռանկար էր դառնում արևմտահայերի գոյատևման, կյանքի ապահովման հարցը: Մյուս կողմից ծանր հարկերի պարտադրումը ժողովրդին ավելի վատ իրավիճակում դրեց: Նման անտանելի պայմաններում հայ ժողովուրդը սկսեց ազատագրման ճանապարհներ փնտրել [1, 354]: Ձևավորվեցին հայ ազգա-

յին խմբակները, ավելի ուշ՝ այդ խմբակների հիմքի վրա կուսակցությունները, վերջիններիս ձևավորման հետ էլ զարգացավ հայդուկային շարժումը:

Ազգային-ազատագրական գաղափարները հայ ժողովրդի մեջ բույն էին դրել դեռևս 1870-ական թվականներից, բայց ավելի բուռն թափ են ստանում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո [2, 134], երբ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Հայկական հարցը միջազգայնացվեց:

Հայ ժողովուրդը հույս ուներ, որ Հայկական հարցը վերջապես կլուծվի, սակայն նրանց հույսերը չարդարացան: Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ Բեռլին մեկնած պատվիրակությանն անգամ թույլ չտվեցին մասնակցել կոնգրեսին: Բեռլինից հիասթափված վերադառնալով՝ Մ. Խրիմյանը առաջ քաշեցիր «Երկաթե շերեփի»՝ զենքով Հայկական հարցը լուծելու գաղափարը: Խրիմյանն ասում էր. «Կոնգրեսի դռան վրա գրված էր՝ իրավունքը ուժովինն է, քաղաքագիտությունը գթություն չունի, իրավունքն ալ սուրի ծայրին է: Ուր զենքն է խոսողը, ուր սուրերը կշողշողան, հոն ի՞նչ գործ ունին խնդիրք և աղերսաթուղթեր» [3, 20]: Խրիմյանը ժողովրդին կոչ է անում. «Զենք առեք ու դարձյալ զենք: Ժողովուրդ, ամենից առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին ու բազուկին ուժ տուր, մարդն ինքն իրմեն պետք է աշխատի, որ փրկվի» [3, 20]:

Վերոնշյալ պայմաններից հետո սկսվում է ձևավորվել զինված պայքարի գաղափարը: Պատմական ասպարեզ են գալիս ազատագրական-հայրենասիրական խմբակներն ու կազմակերպությունները, որոնք սկսում են ակտիվ գործունեություն ծավալել ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու, ապա զինված ապստամբության միջոցով թուրքական լծից ազատագրվելու համար:

Չնայած կազմակերպություններն իրենց առջև դրված խնդիրը չկարողացան լուծել, բայց պարարտ հող հանդիսացան հայ ազգային կուսակցությունների՝ Արմենական (1885 թ., Վան), Սոցիալ-դեմոկրատական հնչակյան (1887 թ., Ժնև), Հայ հեղափոխական դաշնակցություն (1890 թ., Թիֆլիս) առաջացման և գործունեության համար: Չնայած ծրագրային և գործունեության որոշ տարբերություններին՝ ազգային կուսակցությունների գործունեության հիմքում ընկած էր Հայկական հարցի լուծումը:

Հարկ է նշել, որ քաղաքական երեք կուսակցությունները բուռն գործունեություն ծավալեցին Հայկական հարցի լուծման և Արևմտյան Հայաստանի ազատագրման համար, սակայն տվյալ ժամանակաշրջանում իրենց առջև դրված նպատակին չհասան:

Հայդուկային խմբերը ձևավորվել են դեռևս 1880-ական թվականների կեսերին, նախքան կուսակցությունների ձևավորումը, բայց նրանց ասպարեզ գալուց հետո ազատագրական շարժումը ստանում է ավելի համախմբված բնույթ: Ինչպես վերը նշվեց, երեք քաղաքական կուսակցությունները միտված էին զենքի ուժով լուծելու Հայկական հարցը և ազատագրել արևմտահայերին թուրքական լծից, սակայն նրանց գործունեությունը ձախողվեց: Միայն Հայ հեղափոխական դաշնակցությունն իր ծրագրում առաջ քաշեց պարտիզանական կռվի գաղափարը: 1891 թ. «Դրօշակ» թերթում ՀՅԴ-ն հանդես եկավ հայտարարությամբ,

որտեղ ասվում էր. «Հայ ժողովրդի կռիվը պետք է պարտիզանական կռիվ լինի, մենք մեր այժմյան դրության մեջ ուրիշ կերպ կռվել չենք կարող, կանոնավոր պատերազմ և ճակատամարտեր անհնար է մեզ համար»:

Այս որոշումը հրատարակելուց հետո պարտիզանական շարժման մեկնարկը պաշտոնապես ազդարարված էր: Սկսում են ձևավորվել ֆիդայական խմբերը, որոնց անդամները բացառապես ժողովրդի միջից դուրս եկած հայրենասեր որդիներ էին, որոնք անձնուրաց նվիրվեցին հայրենիքի ազատագրման գործին:

Ահա այսպիսի պատմական նախադրյալները հիմնաքար դարձան հայդուկային շարժման առաջացման և զարգացման համար: Առաջին հայդուկային խմբերն ի հայտ եկան Տարոնում, Սասունում, Վասպուրականում, Կեսարիայում:

Դժվար է հայդուկային պայքարը պատկերացնել առանց Հրայր Դժոխքի գործունեության: Հայդուկապետ, գաղափարախոս, ազգային նվիրյալ Հրայր Դժոխքը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազատագրական պայքարի խոշորագույն գործիչներից մեկն է, որը մինչև իր կյանքի վերջը անձնուրաց պայքարեց հայրենիքի ազատագրության համար:

Արմենակ Մամբրեի Ղազարյանը (Հրայր Դժոխք, Ուրվական[1]) ծնվել է 1864 թ. Սասնո Խուլբ գավառակի Ահարոնք գյուղում, հոգևորականի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է հոր՝ Մամբրե Ղազարյանի մոտ [4, 8]: 1880 թ. Մամբրեի ընտանիքը հարկադրված թողնում է հայրենի գյուղը և բնակվում Տարոնի Ղզլաղաճ գյուղում (1880 թ. սոսկալի բռնությունների և սովի տարի էր) [5, 14]: Արմենակը կրթությունը շարունակում է Տարոնի Ղզլաղաճ գյուղի Մշո Ս. Կարապետ վանքին կից գործող դպրոցում և Մշո հռչակավոր Միացյալ ընկերության կենտրոնական վարժարանում:

Արմենակը եղել է ուսուցիչ, քաջածանոթ էր Սասունի ու Տարոնի հայերի վիճակին: Նա ամուսնացած էր, ուներ երկու երեխա, բայց ինչպես վայել է իսկական ֆիդայուն, թողնում է ընտանիքը օրինակ ծառայելու համար և նվիրվում հայրենիքի ազատագրության գաղափարին [6, 200]:

1890 թ. հայկական ապստամբությունները զարգացան երկու ուղղությամբ.

Առաջինը ցուցական հանգամանք ունեցող շարժումներն էին, որոնք մեծ աղմուկ էին բարձրացնում, ինչպիսին էին՝ Կ.Պոլսի և Էրզրումի ցույցերը, Սարգիս Կուկունյանի արշավանքը և այլն:

Երկրորդը՝ գյուղական ըմբոստություններն իրենց անմիջական տիրողների հանդեպ, ինչպիսին էին՝ Վարդենիսի, Պերմի, Ղզլաղաճի, Ղարաչոբանի, որոնք գյուղական զանգվածների հավաքական պոռթկման դրսևորումներին էին բռնակալների դեմ:

Հրայրն ի սկզբանե որդեգրեց երկրորդ մարտավարությունը: 1886-1890 թթ. սկսեց մասնակցել այդ շարժմանը և հավատաց Երկրի բնիկ ժողովրդի հավաքա-

[1] Հրայրը ուրվական անունը ստացել է գիշերուցերեկ շրջելով Հայաստանի գավառներով մեկ և հսկել իր հիմնած հայդուկային խմբերի աշխատանքները: Նրան գրեթե ոչ ոք չէր կարողանում տեսնել: Նրա այցելության մասին իմանում էին միայն իր հեռանալուց հետո: Դրա պատճառով էլ ժողովրդի շրջանում նա ստացել էր Ուրվական մականունը:

կան ուժին: Նա ժողովրդական ասացվածքի՝ «Գյուղ կանգնի, գերան կկոտրի» հետևորդ էր: Այսինքն՝ եթե հավաքականությունը միանա, կարող է միացյալ ուժերով ըմբոստանալ և բռնակալությունը խորտակել [4, 9]:

Արմենակ Ղազարյանը հենց առաջին օրից հստակ հասկացավ և ըմբռնեց հեղափոխության շարժման նպատակը և սկսեց գործել ըստ նպատակի, այն է՝ հայ ժողովրդին ազատել թուրքական անտանելի լծից՝ վերականգնելով հայկական իշխանությունը:

19-րդ դարի վերջին հայ ազգային-ազատագրական շարժման կենտրոն է դառնում Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Բիթլիսի վիլայեթի Սասուն լեռնագավառը:

Սասունը գտնվում է Արևմտյան Հայաստանի հարավում, Տավրոսյան լեռնաշղթայի վրա, Բաթման գետի վերին հոսանքում: Նրա սահմանները հասնում են՝ արևելքից դեպի Սղերդ, արևմուտքից՝ դեպի Գենջ, հարավից՝ Տիգրանակերտի դաշտը, իսկ հյուսիսից՝ Մուշի դաշտը: Սասունում կար շուրջ 400 բնակավայր, որոնցից 250-ը հայաբնակ էր, որտեղ ապրում էին ավելի քան 50 հազար հայեր [7, 29]:

Թուրքական կառավարությունն ամեն կերպ փորձում էր սասունցիներին վերջնականապես ենթարկել իրեն, այդ նպատակով որոշում է տեղում առկա հողային-տնտեսական խնդիրները գավառի վրա հարձակման պատեհ առիթ դարձնել: Սասունցիները հրաժարվում են հարկեր վճարել՝ պատճառաբանելով, որ քրդական մշտական հարձակումների հետևանքով իրենց կացությունը ծանր է:

Թուրքական կառավարությունը սասունցիների հետագա գործողությունները ճնշելու համար ձեռնամուխ եղավ իր ճանապարհից շարժման կազմակերպիչների հեռացմանը: Իշխանությունների կողմից մայիսին ձերբակալվում է Մ. Տամատյանն ու նետվում Մուշի բանտը [8, 516]: Տամատյանի ձերբակալությունից հետո ազատագրական պայքարի գլուխ են անցնում Մեծն Մուրադը, Հրայր Դժոխքը, Գևորգ Չաուշը [9, 246]:

Հիմնական կազմակերպչական գործունեությունն իր վրա է վերցնում Հրայր Դժոխքը: Հրայրն այս շարժումների կիզակետում էր, կարելի է ասել ոգին, որը գործում էր մի կողմից Մշո դաշտում, մյուս կողմից Սասունում [4,13]:

1893 թ. նշանավորվեց Սասունի գավառ Տալվորիկի կռիվներով: Տալվորիկը գտնվում է Բուն Սասունից դեպի հարավ-արևմուտք: Այն բարձրաբերձ լեռների, անդնդախոր ձորերի աշխարհ է [7, 31]: Երբ սկսվեցին Տալվորիկի մարտերը, Հրայր Դժոխքը մասնակցում էր բոլոր կազմակերպչական աշխատանքներին: Անընդհատ շարժման մեջ էր: Գնում էր Մուշ, անցնում Սուրբ Կարապետ, Վարդան վարդապետի մոտ և կրկին վերադառնում Անտիոք՝ իշխան Գրիգորի հետ խորհրդակցելու, Ահարոնքից բերում էր վառոդի և կապարի պաշար [5, 22]:

Տալվորիկի շուրջը կենտրոնացվել էին շուրջ 5000 կառավարական կանոնավոր թուրքական զորամաս, համիդիեական ու ոստիկանական ջոկատներ: Նրանք զինված էին բազմատեսակ զենքերով՝ թրից սկսած մինչև իսկ ժամանակակից հրացաններով [6, 96]:

Երբ քրդերը պատրաստություններ էին տեսնում հարձակման համար, ամբողջ Սասունը պարզ հասկանում էր, որ կառավարությունը քրդերի ձեռքով մահացու հարված է ուզում հասցնել Սասունի կենտրոնին՝ Տալվորիկին: Նրանք հասկանում էին, որ Տալվորիկի ոչնչացումից հետո հնարավոր չէր լինի Սասունի միությունն ու ազատությունը:

Այս ամենը պարզ գիտակցում էին տալվորիկցիները, դրա համար առանց տատանումի ընտրեցին դիմադրության ճանապարհը: Նրանք սկսեցին պատրաստվել պաշտպանության:

Այս տագնապալի իրավիճակը ըմբռնում է Հրայր Դժոխքը, նա մի խումբ դաշտեցիների հետ շտապում է դեպի Տալվորիկ: Հրայրի հետ էին նաև Արաբոյի զինվորներից Գյալշո Մանուկը, Գևորգը և Ադամը. նրանք ընդամենը 12 հոգի էին:

Տալվորիկցիների և թշնամու միջև հիմնական մարտերը սկսվում են հունիսի 17-ին: Թեև, ինչպես նշվեց, հայերի կողմից կռվում էին ընդամենը 400 հոգի, բայց նրանց դիրքերն ամուր էին: Մարտերը շարունակվում են մինչև կեսօր, սակայն արդյունք չի գրանցվում: Թշնամուն երեկոյան միանում է Զիլանի շեյխը՝ իր հետ բերելով 2000 զինված խուժան: Գիշերը թշնամու միացյալ ուժերը վերջին գրոհը տվեցին և հայերն, այլևս ի զորու չլինելով պաշտպանվելու, նահանջեցին Տալվորիկից [6, 98-99]: Բայց հանձնվելը դեռ վաղաժամ էր: Հրայրը, Գևորգը և Ադամը իրենց ընկերների հետ կոչ են անում հարձակվել և Տալվորիկի ձորերը դարձնել թշնամիների գերեզմանը: Տալվորիկի կռվում Հրայրի ցուցումներով և մասնակցությամբ էր գործում Գևորգի հայդուկային ջոկատը: Երեկոյան ազատագրված էր ոչ միայն Տալվորիկը, այլև Սպիտակ սարը: Հայերը Տալվորիկի կռվում տվեցին 200 զոհ, իսկ քրդերը՝ 1000 [6, 99; 7, 76]:

Այսպիսով ակնհայտ էր, որ Արմենակ Ղազարյանի հրամանատարության տակ կռվող ֆիդայական ջոկատը վճռական դեր խաղաց Տալվորիկում հայկական ուժերի փայլուն հաղթանակի գործում [10, 320]:

Սասունի 1894 թ. ապստամբությունը հայդուկային կռիվների ամենաակնառու դրվագներից մեկն է: Պատմագրության մեջ Սասունի ապստամբությունը հայտնի է 1894 թ., բայց Սասունի դեպքերն ավելի վաղ էին սկսվել, դեռևս 1890 թվականից: 1891թ. իրադարձությունները ծավալվեցին, իսկ արդեն 1892-1893 թթ. վերածվեց թուրքերի և քրդերի կեղեքման դեմ ուղղված ընդհանուր զինված ապստամբության [4, 13]: Սասունը մասնավոր տեղ էր զբաղեցնում այդ շրջանների մեջ, քանի որ կիսանկախ վիճակում էր: Սասունն իր դիրքով ևս աչքի էր ընկնում և այդ պատճառով թուրքական կառավարության ուշադրության կենտրոնում էր, որն ամեն ճանապարհով փորձում էր Սասունը ենթարկել իրեն, ամբողջովին հաստատել իր իշխանությունը:

1890 թվականից սկսած Սասունը դառնում է թուրք և քուրդ կեղեքիչների ոտնձգությունների կենտրոն [4, 12]:

Տալվորիկի կռվից կարճ ժամանակ անց սասունցիները տեղեկություններ են ստանում, որ հակառակորդը կրկին պատրաստվում է արշավանքի, այդ նպատակով համալրում են ուժերը: 1894 թ. ամռանը փոքրիկ խմբով Տալվորիկ է ժամա-

նում Հ. Պոյաճյանը, որը պետք է կազմակերպեր ինքնապաշտպանությունը: Խորհրդակցությունից հետո որոշվում է արգելել իշխանություններին վերանորոգել Տալվորիկի բանալի հանդիսացող «Սատանի կամուրջը», որը 1891-1892 թթ. ինքնապաշտպանական մարտերի ժամանակ սասունցիները քանդել էին: Սասունցիներին հաջողվում է հասնել այնտեղ, հարձակվել աշխատանքը վերահսկող ոստիկանների վրա, դադարեցնել աշխատանքները և հեռանալ Սասունից [8, 517; 2, 243]:

Աբդուլ Համիդ 2-րդը կարգադրում է դաժանորեն ճնշել սասունցիների ըմբոստությունը: Սասունը բոլոր կողմերից հայտնվում է շրջափակման մեջ, անգամ շրջանը հայտարարվում է ռազմական գոտի:

Սասունի ապստամբությունը կազմակերպում են Հնչակյան կուսակցության անդամները և ֆիդայիները: Ստեղծված իրավիճակը լավ հասկանում էր Հրայր Դժոխքը, որը թեև մարմնով վտիտ էր, ցածրահասակ, սակայն ուներ կազմակերպչական մեծ ձիրք և մտավոր անասելի կարողություններ: Նա բոլորից լավ էր հասկանում ստեղծված իրադրությունը և փորձում իօգուտ ժողովրդի գտնել ճիշտ լուծումներ: Հրայրը ձերբակալված Մ. Տամատյանին արժանի փոխարինող էր հատկապես Դուրան-Բարձրավանդակում [10, 318]:

Ազատագրական շարժման մեջ գոյություն ունեցող երկու ուղղությունները՝ ժողովրդական-հեղափոխական և ֆիդայական-զինվորական, բավականին երկար գոյատևեցին, որոնք ուղեկցվում էին հետևորդների երբեմն համերաշխ, երբեմն անհաշտ մոտեցումներով: Առաջին ուղղության ներկայացուցիչներն էին Մ. Տամատյանը, Մ. Սարըյանը և այլք: 1890-ական թվականներից այդ ուղղության հիմնական ներկայացուցիչը Հրայրն էր [8, 563]:

Հրայրը հենց այդ ուղղությամբ էլ պատկերացնում էր Սասունի ապստամբության ընթացքը: Ըստ նրա՝ Սասունի ապստամբությունն առանց համազգային շարժման դատապարտված էր ձախողման և փոքր ֆիդայական կռիվներով հաջողության հասնել չեն կարող:

Սասունի վիճակը ծանր էր. չկար բավարար քանակությամբ զենք, ինչպես նշվեց, շրջափակման մեջ էին, ներսից օգնություն լինել չէր կարող, ուստի Հրայրը փորձեց զենք հայթայթել և հայրենասեր ֆիդայիներ հավաքագրել և բերել Սասուն [10, 320]: Դժվար էր հատկապես զենք հայթայթելու և Երկիր տեղափոխելու հարցը:

Սկսվում է Սասունի ապստամբությունը: 1894 թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 2-ը տեղի են ունենում թեժ մարտեր: Թուրքական զորքերը հյուսիսից հարձակման են անցնում Շենիկի մատույցներում և Անդոկի սարահարթում: Օգոստոսի 3-ից մարտերն ավելի թեժ են դառնում, թուրքական զորքերը ներխուժում են Շատախ, հայերը ստիպված նահանջում են Գելիեզուզան, այնուհետև՝ Անդոկի լեռներ:

Դեռ նոր էր սկսվել Սասունի ապստամբությունը, երբ Հրայրը Երկրի ծանր կացության մասին տեղեկացնելու և օգնություն բերելու համար մեկնում է Խնուս, Էրզրում, ապա Կովկաս: Սակայն նախքան մեկնելը նա նաև ամեն կերպ փորձում

էր իրավիճակի մասին տեղյակ պահել դրսի հայությանը, որպեսզի վերջիններս իրենց օգնության հասնեն [4, 16]: Հրայրը շարունակ թռուցիկներ և նամակներ է ուղղում և՛ «Հնչակ»-ին և՛ «Դրօշակ»-ին: Հատկանշական է այն փաստը, որ Հրայրի համար գոյություն ուներ միայն ազգությունը, նա չէր ընդունում կուսակցությունների մասնատվածությունը և անընդհատ քարոզում էր միասնություն [6, հ.Գ, 102]:

Զենք ձեռք բերելու և Երկիր անցկացնելու նպատակով Հրայրը լինում է նաև Կարսում: Զենքի ձեռքբերումը հիմնականում իրականացվում էր Կարսում, քանի որ այնտեղ կային ռուսական պահեստներ, և զինատար խմբերը Հրայրի հրահանգով կարողանում էին զենք հայթայթել [6, հ.Ա, 127-128]:

Հրայրը մինչ գործունեություն էր ծավալում Սասունին օգնելու համար, սասունցիները քաջաբար մարտնչում էին: Թշնամին նենգ էր. օգոստոսի 13-ին կիրառում է թնդանոթներ և կրկին հարձակման անցնում: Անհավասար պայքարը շարունակվում է ևս երկու շաբաթ: Շուրջ 2000 հայ մարտիկներին են միանում ևս 2000 բնակիչներ, որոնց թվում էին կանայք, ծերունիներ, պատանիներ:

Թուրքերը կրկին հարձակվում են, սասունցիները նահանջում են դեպի Կեփինի բարձունքներն ու Տալվորիկի կիրճերը: Թուրքերի գերազանցությունն ավելի նկատելի է դառնում, սասունցիներն այլևս չեն կարողանում պայքարել, ընկնում է Սասունը, զոհ է գնում հայ մարտիկների մեծ մասը: Գերեվարվում են Գևորգ Չաուշը, Հ.Պոյաճյանը և այլք [8, 518]:

1894 թ. հուլիսի վերջերից սկսված և մինչև նույն թվականի սեպտեմբերի սկիզբը շարունակվող Սասունի ապստամբությունն անհաջողության է մատնվում [11, 240]:

Սասունի ապստամբության ձախողումից հետո Հրայրը 1895 թ. անցնում է Կովկաս, որպեսզի անդամակցի Հայ հեղափոխական դաշնակցությանը [10, 320; 12, 351]: Չնայած Հրայրն անդամակցում էր Հնչակյան կուսակցությանը, բայց նրա կարծիքը Սասունի ապստամբության մասին այլ էր: Հրայրի համար Սասունի ապստամբությունն ազատագրական պայքար էր, ինքնապաշտպանություն, հերոսական պայքար, բայց Հնչակյան կուսակցության անդամներն այս ամենը կազմակերպել էին միայն Եվրոպայի ուշադրությունը հայերի և Հայկական հարցի վրա սևեռելու համար [12, 351]: Հրայրը Հնչակյանների այս տեսակետի կապակցությամբ գրում է. «Անգութ է Եվրոպան, ավելի արյունածարավ, քան մեր դարավոր ոսոխը, չհավատաս նրան երբեք: Նա արյան ու անմեղ զոհերի մեջ է որոնում իր շահը, մեր հույսը պետք է լինի մեզ վրա: Միայն առաջ գնալ և մեռնել սուրբ նպատակի համար, այդ է միայն մեր փառքը ու պսակը» [10, 324]:

Սասունի ապստամբության ձախողման մեջ Հրայրը նաև մեղադրում է կուսակցություններին: 1895 թ. «Դրօշակ»-ին գրեց. «Մենք՝ իբրև ժողովրդի զավակ, և ծանոթ նրա բնավորությանը, նրա հոգու տրամադրությանը, և վերջին չորս տարիների գործունեությանը, կատարելապես ապացուցում ենք, որ կուսակցությունները շատ ավելի եղան ժողովրդի հիմքը քանդողները, քան օգուտ տվողները:

Ներկա հանգամանքներում, ինչպիսին մենք՝ հայերս ենք գտնվում, անխեղճություն և մինչև անգամ դավաճանություն չէ՞ արդյոք, որ այդ կուսակցություն-

ները բաժան են գործում, այդ ընթացքը անշուշտ մեզ դիտել է տալիս, որ եսական փառքի հետևից ընկած, անձնական կրքերից կուրացած՝ ջլատում են ուժերը, հզորացնելու փոխարեն, մոռացության են մատնել ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանությանն են ծառայեցնում գործը» [10, 321]:

1890 թվականից մինչև 1895 թվականը լայն գործունեություն իրականացնելով Սասունում և Տարոնում՝ Հրայր Դժոխքն իր գործունեության սկզբից ձեռնամուխ եղավ ժողովրդի համախմբմանը և համընդհանուր զինված ապստամբության նախապատրաստմանը: Նա չէր տարանջատում կուսակցություններին, այսինքն՝ այն ժամանակահատվածում, երբ անդամակցում էր Հնչակյաններին, նաև հայտարարություններ էր անում ՀՅԴ կուսակցության պարբերականում և հակառակը: Հրայրը ճանաչում էր միայն ազգություն, նա չէր ընդունում կուսակցությունների պառակտումը, գտնում էր, որ պետք է գործել միասնական, հոգուտ հայ ժողովրդի: Դա էր նրա կարգախոսը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Դասագիրք բուհերի համար (Մ.Ա. Կատվալյան, Պ.Հ. Հովհաննիսյան, Է.Գ. Մինասյան և ուրիշներ), պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Երևան, 2012, 874 էջ:
2. Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981:
3. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995, 100 էջ:
4. Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ, Պէյրութ, 1964, 44 էջ:
5. Աւօ, Հրայր Դժոխք, Պէյրութ, 1985, 142 էջ:
6. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ա., Գ., Թեհրան, 1982, Երևան, 1990, 375 էջ:
7. Թառոյան Կ., Ժողովրդական շարժումները Սասունում 1890-1894 թթ., Երևան, 1966:
8. Հայոց պատմություն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, հ. 3, գիրք 1, 2, Երևան, 2010:
9. Մելքոնյան Ա., Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XX դ. վերջը), Երևան, 2018, 412 էջ:
10. Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս., Ինձ բահ տվեք, Երևան, 1990, 448 էջ:
11. Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնապետության դեմ (1878-1908 թթ.), Երևան, 2001, էջ 240:
12. Վրացեան Ս., Յուշապատում Հ.Յ.Դաշնակցութեան 1890-1950, Հ.Յ.Դ. Բիւրո, Բոստոն, 1950:

Действия Арменака Казаряна (Грайр Джохк) в организации Сассунского восстания 1894 года

Бавеян Нарине
ГГУ, История, 5-й
Научный руководитель:
кандидат исторических наук К. Петросян

Резюме

Ключевые слова: *гайдукская борьба, освобождение, Грайр Джохк, Османская империя, Сасун, Талворик*

В работе представлена деятельность Грайра Джохка, одного из самых вдумчивых и решительных деятелей армянской национально-освободительной борьбы конца 19 – начала 20 века. Тема актуальна, поскольку геополитические изменения и развитие событий 21 века постоянно ставят перед армянским народом новые вызовы, а также необходимость разработки и реализации стратегии борьбы. В работе подробно рассматриваются действия Грайра Джохка в Сассуне в 1894 году во время восстания, основанные на изучении соответствующих источников и литературы.

Actions of Armenak Kazaryan (Hrayr Dzhokhk) during the Organization of Sassoon Uprising of 1894

Baveyan Narine
GSU, History, 5th year
Academic Supervisor: K. Petrosyan,
Candidate of Historical Sciences

Summary

Key words: *Hayduk struggle, liberation, Hrayr Dzhokhk, Sasun, Talvorik*

The article presents the activities of Hrayr Djokhk, one of the most thoughtful and determined figures in the Armenian national liberation struggle at the end of the 19th and the beginning of the 20th centuries. The topic is relevant, as geopolitical changes and developments in the 21st century constantly present new challenges to the Armenian people, as well as the need for developing and implementing a strategy of resistance. The work provides a detailed account of Hrayr Dzhokhk´s actions in Sasun in 1894 during the uprising, based on the study of relevant sources and literature.

Տեղ գյուղում տարածված ժողովրդական երգերը

Լալաբեկյան Աստղիկ
ԳՊՀ, Պատմություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ասիստենտ Գ. Շաբունց

Հանգուցային բառեր. *ժողովրդական երգեր, գյուղատնտեսություն, հարսանիք, հյուրասիրություն, պահք, Անդրանիկ, օրորոցային երգեր*

Տեղ գյուղում տարածված են եղել բազմաթիվ ժողովրդական երգեր, որոնց տարատեսակներից են խաղիկները, տաղիկները: Դրանք իրենց բնույթով մեծ մասամբ սիրային են, ծագումով և բովանդակությամբ՝ գեղջկական, արտացոլում են հիմնականում գյուղական կյանքի պատկերներ: Մեծ մասը բաղկացած է չորս, ինչպես նաև երեք, երկու տողերից: Տարածվել են բերանացի, տարբերվել են իրենց յուրահատկությամբ և բազմազանությամբ:

Սույն թեմայով փորձել ենք դաշտային աշխատանքների միջոցով ուսումնասիրել, թե Տեղ գյուղում ինչպիսի աշխատանքային, սիրային, օրորոցային, վիճակի երգեր են տարածված եղել: Ինչպես նաև ցույց տալ, որ Տեղ գյուղն անմասն չի մնացել այլ շրջաններից, և այստեղ նույնպես տարածված են եղել տարբեր ժողովրդական երգեր, որոնք հետաքրքիր են, ծիծաղաշարժ, խորիմաստ:

Նյութի համար սկզբնաղբյուր են հանդիսացել հենց գյուղացիները, որոնք, լինելով կատարողներ և հիշելով իրենց ծնողներից լսված երգերը, հաղորդել են շատ կարևոր տեղեկություններ, որոնք բանահավաքչական աշխատանք չիրականացնելու, գրի չառնելու դեպքում կորստյան են մատնվելու:

Զանգեզուրում ժողովրդական երգերը հիմնականում գրի է առնվել Երվանդ Լալայանի կողմից: Համեմատություններ կատարելով՝ տեսնում ենք, որ տաղիկների միջև տարբերություններ կան, և կան գյուղին բնորոշ, հատուկ կողմեր:

Հայերը հնուց ի վեր զբաղվել են գյուղատնտեսությամբ, որը եղել է բնակչության հիմնական զբաղմունքն ու եկամուտի աղբյուրը: Տեղ գյուղի ռելիեֆը, կլիման պայմաններ են ստեղծել զբաղվելու երկրագործությամբ, անասնապահությամբ: Տեղ գյուղում տարվող գյուղատնտեսական աշխատանքներին նվիրվել են բազում ժողովրդական տաղիկներ, որոնք զուգակցվել են սիրային բովանդակությանը:

Հողագործությամբ զբաղվողներին մեծ ցավ էր պատճառում, երբ եղանակները անբարենպաստ, անհաջող էին և որպես բողոք հետևյալ տաղիկներն էին արտաբերում.

Ճումբուլները կուշտացալա,
Պատկերս չուրսրտակալա,
Արաշտը իրգինացալա,
Դարդերս շտացալա [1]:

Բաղումս կա բաղվանչի,
Շեվ կա, շեվի նման չի,
Թուբուն, թուբուն տուս տառնան,
Բոստանս բոստանի նման չի [2]:

Թանի ստացման ժամանակ կանայք սովորություն ունեին երգել.

Խնեցի-խնեցի հարեցի,
Յուղս պարտքս տվեցի,
Թանավ տոնս պիեցի [3]:

Տեղ գյուղացիների մեծ մասը շատ աշխատասեր է, իսկ նրանց, ովքեր անբան էին, չէին աշխատում, աղջիկ չէին տալիս, և նույնիսկ անբանների մասին երգ կար.

Անչափ օգում եմ օտել ու խմել,
Ծառի շոքումը մուշ-անուշ քոն ինել
Իսկ հիբ ըշխատանքը մետս ա կամ,
Սերտս ու հոքիս իրար ա տամ [4]:

Գոյություն ունեն տաղիկներ, որտեղ գյուղատնտեսական, ինչպես նաև այլ աշխատանքներ իրականացնելու ժամանակ կես կատակ, կես լուրջ տոնայնությամբ դիմում են իրենց սիրեցյալներին, չուզողներին:

Արևը կծացալա,
Ճումբուլները կուշտացալա,
Խաբար ըրաք իմ յարին,
Մուշտարեքը շըտացալ [5]:

Ծեր տան կողքին վար կանեմ,
Չար կռեվին քար կանեմ,
Հուվեր սիրածիս ինձանա տանի,
Ագռավը աչքը կհանի [7]:

Կութանը պատ ա եկալ,
Վեցկուն ճպատա եկալ,
Խաբար ըրաք էն յարին,
Կովերը կապ ա եկալ [6]:

Գործի-գործի գործեցեք
Ա՛յ իմ սիրուն խալի
Այն անամոթ տղաները
Նի են մտալ գորգարտելը
Փիրթում են մեր գաբի թիլը [8]:

Իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում սիրային տաղիկները, որտեղ գեղեցիկ խոսքերով, մակդիրներով, համեմատություններով ներկայացնում են իրենց սիրելիին, նրանց նկատմամբ տածած զգացմունքները: Անընդհատ խնդրում են, որ հայտնեն իր յարին, իր սիրո, սրտում լցված ցավերի մասին.

Սարի օբումը,
Լամբի շուշան թշշումա,
Իմ սիրած յարը մեջին ննջումա,
Եշում եմ եշում չեմ կշտանում [9]:

Սիրած յա՛ր, օրավ եկ,
Սերտս օգումա քեզ, շուտ ըրա եկ,
Մեր հանդերի շղաթաթաղ
Շաղավ եկ [2]:

Կետին էս ղոլը ցիլա,
Ցիլը ճիրավ լըցալա,
Խաբար ըրաք էն յարին,
Սերտս դարդավ լցալա [1]:

Ստեղեր յեր հանդերա,
Լոխ ըրծաթի բանդեր ա,
Տանակ պէրաք սերտս ճղենք,
Բուղում-բուղում դարդերա [10]:

Տաղիկներ կային տղայի և աղջկա առաջին հանդիպման, աղջկա անհամաձայնության, կամակորության կամ էլ ընդհակառակը աղջկա քաջալերական խոսքերով՝ չվախենալու, չվարանելու վերաբերյալ:

Մըն օր տեսնամ հենա Դոլունց ծորումը,
Մի աղջիկ կա կանաչ, կարմիր շորումը,
Ասեմ աղչի հովե՞ս, հի՞նչ ես, հուրա՞նց ես,
Տու մի ասի Արսեն դայու թոռնիկն ես [7]:

Ախճի, անումտ խանի,
Լեզակտ քամին տանի,
Ես ու տու նշանած պիտինք,
Իմ հեր, քու հեր՝խնամի [9]:

Կուճի ախճիկ զուլում ես,
Մազերտ աղալում ես,
Ինձ ըռնելի մետկ օնես,
Խունջիկ, մունջիկ անում ես [11]:

Ա՛յ տղա, տվարած տղա,
Սերտտ խշարած տղա,
Վախիլ մի, եկ մեր տոն,
Իմ հար ինձ քեզ կտա [10]:

Տեղ գյուղում հարսը մեծ հարգանք ուներ սկեսուրի նկատմամբ, նույնիսկ իրավունք չուներ մի կծու խոսք ասելու, բայց գյուղում տարածված է եղել այս ծիծաղաշարժ տաղիկը.

Հիբ վեր հարսին տուն բերին,
Սկեսուրին քցին հավաբուն,
Հավաբնից կալիդոր,
Իրեսը սարքին պամիդոր [11]:

Հարսին տղայի տուն տանելու ժամանակ տան մեծ տատիկը իր վերջին խոսքը, օրհնանքը, խրատը ասել է այս տաղիկով.

Էս տոնը թող շեն ինի,
Աշխարհի չափ լեն ինի,
Ամեն տարի էս վախտը,
Ուրախություն միշտ ինի:
Հարս ջան խելունք կինես,
Սկեսուրիտ հետ կառան պես,
Սկեսուրիցտ չբամբասես,
Պիրանան բառ չինես [12]:

Հարսանիքի աշխուժությունը ապահովում էր պարբաշին, որը պարելու հետ մեկտեղ երգում էր.

Հըրսանիքը իմս ինի,
Փորիս ցավը չինի,
Հըքվելու եմ, զուքվելու,
Պար եմ կալու, կիժվելու,
Պըտռելու եմ փափախս,
Ուսիս տինեմ չոմաղս [13]:

Դափ ու զուռնան չալեցինք,
Տաշի-տուշի ըրեցինք,
Տաղեր ենք խաղցնում հնազանի,
Հարսին իջեցինք հազանին,
Հարսին բոյին մեռնեմ ես,
Կուկլա բոյին մեռնեմ ես [12]:

Տեղ գյուղում ժողովուրդը հյուրասեր է, տղամարդիկ օղու, գինու հետ մեծ սեր ունեն.

Ծաղկաձորից պիրալ ենք թողլի ոչխարը,
Խորոված ի հոտն ինգալա Ղուլունց ծորը,
Հրես եկավ դասումը,
Կարմիր կինին թասումը,

Տղերք տեղ պացաք, շուրջը կինի ածենք,
Մեր թամադի կենացը խմենք:
Թամադա ջան ճառ մի՛ ասի,
Բեզարալ ենք, էլ լսելու հարկ չկա,
Մեր թամադան հարփալա,
Վեսկի վազի լոխ բոթուլները կուտրատալա:
Մեր թամադան հարփալ ա,
Վա՛յ հարփալա, կենացները խառնվալա,
Տղերք շուտ արեք, լավ կինի պիրաք,
Մեր թամադի կենացը խմենք [7]:

ԿուՀի տղա, ածի խմենք,
Նըվըսարդին պասումը [1]:

Գյուղում կա Ս. Գևորգ եկեղեցին, որը 4-5-րդ դարերից է: Տեղ գյուղացիները սովորություն են ունեցել պահել Մեծ Պահքը, Փոքր Պահքը: Մեծ պահքին նվիրվել են եկեղեցական երգեր, սովորույթի համաձայն երիտասարդ տղաները հագնում էին իրենց հագուստները, վերցնում ինքնաեռի վերին հատվածը, որը հեշտությամբ հանվում էր, սկսում զարկել, որի ընթացքում երգում էին.

Խորհուրդ մեզ ևս կանչելի,
Անպատվելի և երկրի,
Խանձալուրու պատմեցա
Օրին երգը ընգղշտաց,
Ձգեմ մաքրեմ քաղաքի:
Քրիստոս հարյալը մեռալ
Օրհնյալ ի հարություն Քրիստոսի [13]:

Խաղիկներում հիմնականում կարևորվում է մարդու տեսակը, նրա արած գործերը, ազդեցությունը այլ մարդկանց նկատմամբ, որը կարող է ունենալ դրական ու բացասական ազդեցություն [14, 184]:

Մարթու ցավում խրկելը
Մարթու հետի տիժար չի,
Ամա ցավան փրկելը
Ամեն մարթու հունար չի:

Մարթու նհետ խոսելիս
Աշկի տակավ նկատե,
– Տեսար նա դինջ ննջելիս
Նաղլըտ դաստի կըսատե:

Ծարավ մարթոն նա մին աման
Իրան տանան ճյուրածից,
Ամա քյուչում բղբղումա,–
Լոխ թող գյիդան հասածից:

Մայրերը երեխաներին քնեցնելու ժամանակ հորինել են օրորոցային երգեր, որ բալիկը լավ քնի ու շուտ մեծանա: Իսկ երբ երեխան սովից լաց էր լինում, մայրը սկսում էր կերակրել և երգել, որտեղ միաժամանակ ներկայացնում է, թե ինչ աշխատանքներ է իրականացրել, և դա է պատճառը հանդիսացել, որ ուշացրել է երեխային կերակրելը.

Պաչիկ անեմ իմ բալիս,
Որ նա քոն ինի ծընգներիս
Աչքերը խոր փակի,
Մուշ-մուշ շուտ քոն ինի
Օրոր-օրոր իմ բալիս,
Օրոր- օրոր անուշիկ,
Քոնիլ-քոնիլ իմ բալա,
Վեր տու շուտ մըծանաս [12]:

Այիտ տեմ,
Տաշտին տփեմ,
Օխտը հացը խտեմ,
Մինչև քոլը քծծեմ,
Պինի վախտին կորչեմ,
Հացին վախտին խըլըշեմ [13]:

Երեք օր Անդրանիկ զորավարը իր զորքով մնացել է Տեղ գյուղում և զորքին հաց է մատակարարել գյուղը, իսկ կանայք անընդմեջ ջուր են կրել, որ թնդանոթները չտաքանան, չխափանվեն: Ճանաչելով Անդրանիկ Օզանյանին ու ոգևորվելով նրա քաջագործություններով՝ նրան նվիրված երգ է տարածվել.

Անդրանիկը հըսալ ա Զաբուխ կյետին,
Լոխունքըդ եկաք թորքին վային:
Կեծական ուժեղ ա Անդրանիկ փաշան
Սուս ան մինչի Մարքիզ թորքը հոգի յա տամ:
Անդրանիկին անա լըղեն ճյուր տառած,
Խանչալն ա մաուզերը քուչումը յեր տառած,
Էտ շտեղ ա՞ փախճում վըխլըկոտ թորքը,
Առաջը Զաբուղն ա, քամակը՝ տժոխկը [14, 197]:

Ուսումնասիրության ընթացքում հասկացանք, որ Տեղ գյուղում ասվել են մի շարք ժողովրդական երգեր, բայց դրանց մեծ մասի չօգտագործման պատճառով մոռացվել են կամ էլ աղոտ են հիշվում: Դաշտային աշխատանքներ իրականացնելու ժամանակ, պարզեցինք, որ կան մարդիկ, որոնք իրականում տեղյակ էին ու գիտեին ժողովրդական երգեր, սակայն կորցրած լինելով իրենց զավակներին, հրաժարվեցին անձամբ կատարել, սա խոսում է այն մասին, որ գյուղում դեռևս գործում են հին նախապաշարմունքները:

Այսպիսով մեր հիմնական նպատակն էր ժողովրդական երգերի ուսումնասիրությամբ Տեղ գյուղի պատմությունը հարստացնել ազգագրական նյութերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 20. 01. 23 թ., պատմող՝ Վլադիկ Բալաչյան, ծնված 1948 թ. մարտ 20, ամուսնացած՝ 1969 թ. հունիսի 16, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
2. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 15. 01. 23 թ., պատմող՝ Անուշ Լալաբեկյան, ծնված՝ 1954 թ. նոյեմբերի 8, ամուսնացած՝ 1972 թ. սեպտեմբերի 15, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
3. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 22. 01. 23 թ., պատմող՝ Ռայա Բաբայան, ծնված՝ 1940 թ. մարտի 30, ամուսնացած՝ 1958 թ. դեկտեմբերի 14, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
4. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 15. 01. 23 թ., պատմող՝ Ալվարդ Դալիջունց, ծնված՝ 1961 թ. հոկտեմբերի 12, ամուսնացած՝ 1979 թ. օգոստոսի 26, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
5. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 20. 01. 23 թ., պատմող՝ Ռիմա Ավետյան, ծնված՝ 1943 թ. հունվարի 25, ամուսնացած՝ 1959 թ. հոկտեմբեր, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
6. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 21. 01. 23 թ., պատմող՝ Սենա Բալաչյան, ծնված՝ 1958 թ. փետրվարի 13, ամուսնացած՝ 1979 թ. օգոստոսի 26, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
7. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 23. 01. 23 թ., պատմող՝ Հրաչիկ Իսունց, ծնված՝ 1948 թ. նոյեմբերի 24, ամուսնացած՝ 1972 թ., հուլիսի 14, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
8. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 25. 01. 23 թ., պատմող՝ Ռոզա Պողոսյան, ծնված՝ 1938 թ. հունվարի 17, ամուսնացած՝ 1955 թ. սեպտեմբեր, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
9. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 24.01.23 թ., պատմող՝ Արամայիս Շեգունց, ծնված՝1937 թ. նոյեմբերի 20, ամուսնացած՝1966 թ. հունվարի16, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
10. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 17. 01. 23 թ., պատմող՝ Համեստ Գրիգորյան, ծնված՝ 1934 թ., ամուսնացած՝ 1952 թ. դեկտեմբերի 25, ծննդավայր՝ Տաթև գյուղ, ամուսնացել է՝ Տեղ գյուղ:
11. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 19. 01. 23 թ., պատմող՝Զոյա Ավանեսյան, ծնված՝ 1959 թ. փետրվարի 23, ամուսնացած՝ 1987 թ. հոկտեմբերի 21, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
12. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 19. 01. 23 թ., պատմող՝ Նինա Ավանեսյան, ծնված՝ 1956 մայիսի 1, ամուսնացած՝1973 թ. նոյեմբերի 2, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
13. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 27. 01. 23 թ., պատմող՝ Լիդա Գալստյան, ծնված՝ 1939 թ. հոկտեմբերի 5, ամուսնացած՝ 1957 թ. դեկտեմբերի 21, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
14. Սյունիքի բանահյուսություն, ՀԱԻ հրատարակչություն, Երևան, 2020:

Народные песни, распространённые в селе Тех

Лалабекян Астхик
ГГУ, История, 3-й курс
Научный руководитель:
ассистент Г. Шабунц

Резюме

Ключевые слова: *народные песни, сельское хозяйство, свадьба, гостеприимство, пост, Андраник, колыбельная*

В процессе исследования мы выяснили, что в селе Тех пели много народных песен, но большую их часть со временем либо забыли, либо помнят смутно. Во время полевых работ, стало известно, что есть люди, которые помнят и знают народные песни, но лично спеть их они отказались, потому что потеряли своих детей и им «не пристало петь». Это говорит о том, что в селе ещё сильны предрассудки. Таким образом, нашей целью было посредством изучения народных песен обогатить историю села Тех этнографическими материалами.

Folk Songs Spread Throughout the Village Tegh

Lalabekyan Astghik
GSU, History, 3rd year
Academic Supervisor: G. Shabunts
Assistant

Summary

Key words*: folk songs, agriculture, wedding, hospitality, fasting, Andranik, lullabies*

During the study, we realized that a number of folk songs were once sung in Tegh village, but most of them were either forgotten or only vaguely remembered. During the fieldwork, we discovered that there are still people who actually know these folk songs, but having lost their children, they refused to perform them personally, which indicates that old prejudices still persist in the village. Thus, our main goal was to enrich the history of Tegh village with ethnographic materials by studying folk songs.

Հնագիտական պեղումները Տաշիր-Ձորագետում. Սանահին

Ծատինյան Ալլա
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. Բ. Վարդանյան

Հանգուցային բառեր. *Լոռի, Սանահին, բնակավայր, հնագիտական պեղումներ, քարարկղային դամբարան, խաչքար, մահարձան*

Ներածություն Սանահին գյուղը գտնվում է Լոռու մարզում, որը 1963 թ. ստացել է Ալավերդի քաղաքի թաղամասի կարգավիճակ: Այն գտնվում է Դեբեդ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա [1-273]:

Սանահինի տարածքը բնակեցված է եղել պատմական տարբեր ժամանակաշրջաններում, սակայն գիտականորեն քիչ է ուսումնասիրված: Առհասարակ Սանահնի վանական համալիրի վերաբերյալ կա ավելի քան վեց տասնյակ աշխատություն՝ ճանապարհագրությունների, մենագրությունների, հոդվածների, զեկույցների, ալբոմների տեսքով, սակայն բուն թաղամասի մասին հնագիտության համատեքստում ուսումնասիրություններ դեռևս չկան:

Սանահին թաղամասի հուշարձանները՝ ինչպես հնագիտական, այնպես էլ պատմական, ընդգրկում են ժամանակագրական տարբեր փուլեր, որոնք մեծ նշանակություն ունեն ինչպես թաղամասի, այնպես էլ ամբողջ տարածաշրջանի համար: Մեր ուսումնասիրության հիմնական առանցքն են հանդիսանում հնագիտական հուշարձանները:

Ուսումնասիրության մեթոդը

Հետազոտության ընթացքում կատարվել են դաշտային հետախուզություններ, լուսանկարահանումներ: Օգտագործվել են մի շարք թանգարանների զետեղարաններում պահվող իրերի տվյալները:

Սանահինում կատարված կանոնավոր հնագիտական պեղումների պատմություն



Նկար 1. Մ. Գերասիմովի պեղած սև կճուճներից մեկի գծապատկերը (Արեշյան 1969, աղ. 2, նկ. 2)

Սանահինը բնակեցված է եղել ուշ բրոնզի դարից, ինչի մասին են վկայում կատարված հնագիտական պեղումների գտածոները:

1871 թվականին հնագետ Ալ. Երիցյանը Սանահինում պեղել է մի քանի դամբարան, որտեղից նա հայտնաբերել է խեցեղեն և բրոնզե իրեր [2, 21-22]:

1946 թվականին Մ. Մ. Գերասիմովը Սանահինում պեղում է երկու դամբարան, որոնք պարունակում էին հիմնականում մ. թ. ա. I հզ. I քառորդին բնորոշ նյութեր [3, 268-269]:

Խեցեղենը ներկայացրած է սև փայլեցրած կճուճներով: Կանթերը մեծ են և վերին մասում ունեն երկկողմանի վերադիր գնդիկներ, որոնք նմանակում են մետաղյա կանթերը (Որնակ, Էջմիածին) (նկ. 1):

Սանահինի դամբարաններից տասներկու կավանոթների, ապարանջանների, մատանիների, ասեղի և այլ առարկաների հետ միասին պեղվել է քարակղային դամբարանում գտնված բրոնզե գոտին, որը զարդարված է կենդանակերպ և երկրաչափական նախշերով (երկ.՝ 80, լայն.՝ 15 սմ, ՀՊԹ 1787): Ծայրերում արված երկու ուղղանկյուններում պատկերված են երկու զույգ ձիեր՝ կենտրոնականում բացի ձիերից կան նաև լուսնաձև եղջուրներով կենդանիներ: Այն, ըստ Ստեփան Եսայանի, պատկանում է գոտիների դասակարգման խառը տիպի զարդանախշերով բրոնզե գոտիների խմբին[27]:

Բրոնզեդարյան ժամանակաշրջանին հաջորդում է միջնադարյան ժամանակաշրջանը. այստեղ ակնհայտ երևում է, որ պատճառը ոչ թե հուշարձանների բացակայությունն է, այլ հնագիտական պեղումների բացակայությունը:

Ս. Հակոբ և Ս. Հարություն եկեղեցիների պեղումները

2019 թվականին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինտիտուտի կողմից Սանահինի վանական համալիրում՝ Սուրբ Հակոբ և Սուրբ Հարություն եկեղեցիների տարածքում, իրականացվել են հնագիտական պեղումներ (արշավախմբի ղեկավար՝ Ա. Նալբանդյան) (նկ. 2, 3)[28]:

Ս. Հակոբ եկեղեցի՝ Սուրբ Հակոբ եկեղեցին թվագրվում է 10-րդ դարով, ըստ իր ճարտարապետական հորինվածքի վերլուծության: Իր ձևով գրեթե կրկնում է Սանահինի կանգուն եկեղեցիներին՝ Ս. Ամենափրկչին և Ս. Աստվածածնին:

Ս. Հակոբ եկեղեցու պեղումների արդյունքները. Պեղումներից պարզ է դարձել, որ ողջ տարածքը՝ եկեղեցու ներսում, առկա է եղել ժամանակակից լիցք (I շերտ), լեցուն ժամանակակից կենցաղային, տնտեսական, շինարարական աղբով, գերեզմանոցային իրերով, նույնիսկ՝ հագուստով և այլն: Դրանց վրա տեղ-տեղ գոյացել են նույնատիպ լիցքով հողաթմբեր: II շերտը կավային է եղել: Այն բարձր էր եկեղեցու հիմքերից, և դրա մեջ են կատարված եղել միջնադարյան թաղումները: Սա ցույց է տալիս, որ թաղումները, որոնք հիմնականում 12-13-րդ դդ. են, ժամանակագրորեն ավելի ուշ են, քան եկեղեցին և արվել են այն ժամանակ, երբ եկեղեցու հիմքերը և գետնախարիսխը արդեն ծածկված են եղել [4, 15-20]:

---

[27] Հնագետ Ստեփան Եսայանը բրոնզե գոտիները դասակարգել է հինգ խմբի՝ 1. Երկրաչափական զարդանախշերով, 2. բջջաձև զարդանախշերով, 3. որսի և ճակատամարտի զարդանախշերով, 4. ծիսական զարդանախշերով, 5. խառը տիպի զարդանախշերով [7, 93]:

[28] Մեր շնորհակալությունն ենք հայտնում արշավախմբի ղեկավար Ա. Նալբանդյանին՝ պեղումների արդյունքների հաշվետվությանը ծանոթացնելու և տրամադրած գրականության և լուսանկարների համար:

Նկար 2. Սուրբ Հակոբ եկեղեցին (©Ծատինյան)

Նկար 3. Սուրբ Հարություն եկեղեցին (©Ծատինյան)

Հայտնաբերվել են մոտ 15 խոշոր ու մանր որմնաքարեր, որոնց թիվը եկեղեցու ներսում և տարածքում եղածների հետ հասել է շուրջ 4 տասնյակի: Դրանց հետ միասին հայտնաբերվել են խեցեղենի բեկորներ, որոնք մեծ նշանակություն ունեն: Հայտնաբերվել են նաև խաչքարերի բեկորներ (նկ. 4-6):

4

5

6

Նկարներ 4, 5, 6. Պեղումներից հայտնաբերված խաչքարների բեկորները (Նալբանդյան 2019, նկ. 35, 36, 37)

Ս. Հարություն եկեղեցին. Սբ Հարություն եկեղեցին (մատուռը) կանգուն է ամբողջությամբ, սակայն խիստ խարխլված են տանիքը և պատերի որոշ հատվածներ: Ս. Հարությունից անմիջապես հյուսիս Գ. Տուտեորդու նշանավոր խաչքարն է (նկ. 7-8), այս խաչքարը թվագրվում է 1184 թ.: Խաչքարը կանգնեցրել է Տուտեորդին իր համար՝ որպես մահարձան: Իր աչքի առաջ ունենալով կյանքից հեռանալու անխուսափելիությունը՝ նա ասել է. «*կանգնեցի զխաչս ի վերա հանգստարանի իմո՝ ակն ունելովելից ի կենցաղոյս*»: Տուտեորդին մահացել է խաչքարը կանգնեցնելուց քսան տարի անց, 1204 թվականին: Ենթադրվում է, որ Սբ Հարություն մատուռը կառուցվել է ավելի ուշ, քան կանգնեցվել է Գրիգորի խաչքարը, քանի որ ծածկում է դրա պատվանդանի զարդաքանդակի հարավային նիստը: Ուստի մատուռը թվագրվում է 12-13-րդ դդ. [5, 146-151]:

Նկարներ 7, 8. Գ. Տուտեորդու մահարձան-խաչքարի առաջամասը (©Ծատինյան)

Ս. Հարություն եկեղեցու պեղումների արդյունքները. Ս. Հարություն եկեղեցու պեղումների արդյունքում պարզ է դարձել, որ եկեղեցու մոտ կատարվել են թաղումներ: Պեղումներից պարզ է դարձել, որ եկեղեցին ունի բավականին ամուր երկաստիճան գետնախարիսխ, որին հավասար ողջ շրջակայքը պատված է տապանաքարերով: Ինչպես Ս. Հակոբ, այնպես էլ Ս. Հարություն եկեղեցիներից պեղվել են խեցեղենի բեկորներ, որոնք հիմք են հանդիսացել թվագրումը կատարելու համար (նկ. 9-11):



9

10



11

Նկար 9. Խեցանոթների հատակների նմուշներ և մեկ ոտնակ (Նալբանդյան 2019,նկ. 39),

Նկար 10. Խեցանոթների կանթերի նմուշներ (Նալբանդյան 2019),

Նկար 11. Զնարակված անոթների նմուշներ (Նալբանդյան 2019, նկ. 42).

Պատահականորեն գտնված հնագիտական առարկաներ

Սանահինում կանոնավոր պեղումների պատմությունն այսքանով սահմանափակվում է, սակայն համայնքում տարբեր տարիներին պատահականորեն գտնվել են հնագիտական իրեր, որոնց մեծ մասը հանձնվել է Հայաստանի պատմության և այլ թանգարաններին:

1990-ական թվականներին Յու. Մուրադյանը իր տնամերձ հողամասում աշխատանքների ժամանակ հայտնաբերում է հնագիտական առարկաներ, որոնք հետագայում նվիրաբերել է Գրականության և Արվեստի թանգարանին: Իրերի մեջ առկա են սպասքի, սպառազինության և զարդարանքի նմուշներ: Հիշատակելի են՝ կճուճ, քրեղան, կենդանակերպ անոթ, զենքերից՝ տեգ, դաշույն, զարդարանքներից՝ ուլունքներ, բրոնզե շտանդարտ (նկ. 12-14):

Պատահական գտնված կենդանակերպ անոթը ունի ծիսական նշանակություն, նման կերպարանքի կենդանակերպ անոթներ հնագիտական պեղումների կամ հողագործական աշխատանքներ անելու ժամանակ գտնվել է Սյունիքի մարզի Կապանի շրջանի Շիկահող գյուղից [6, 238-239]:

Անոթը նման է եղջերուի, իսկ իրանի հատվածում ունեցել է ձագարաձև անցք, որի մեջ լցրել են հատիկեղեն կամ հեղուկ նյութ: Ըստ խեթական աղբյուրների՝ այս ծիսական անոթները բացվել են գարնանը ՝ գարնան տոների ժամանակ և փակվում էր աշնանը: Ըստ կատարված այս համեմատության կարելի է ասել, որ Սանահինում պատահական գտնված ծիսական անոթը թվագրվում է մ. թ. ա 7-6-րդ դարերով: Բացի այս կրոնածիսական անոթից՝ Յ. Մուրադյանի այգուց գտնվել է բրոնզե շտանդարտ, բրոնզե դրվագված թիթեղը ներկայացնում է արեգակնային՝ երկնակենտրոն համակարգության մոդելը:

12

13

14

Նկարներ 12-14. Յ. Մուրադյանի հողամասից հայտնաբերված հնագիտական իրերը:

Ըստ Զ. Օհանյանի, 1990-ական թվականներին շինարարական աշխատանքների ժամանակ գտնվել են կարմիր գույնի խեցեղենի բեկորներ, ոսկորներ և ապարանջանի մնացորդներ: Հավանաբար այստեղ բացվել է դամբարան:

1962 թվականին Հ. Զաքարյանը գտել է հնագիտական մի քանի առարկաներ՝ ոսկորներ՝ գանգի մնացորդ, երկու դաշույն և մեկ ապարանջան: Այստեղ ևս, հավանաբար, բացվել է դամբարան: Հ. Էվոյանի վկայությամբ, Սանահինի Սաղուձոր կոչվող թաղամասում գտել են քարե գործիքներ՝ աղորիքներ, բրիչներ և այլն (նկ. 15-17):

15

16

17

Նկար 15. Հ. Էվոյանի գտած քարե գործիքները (©Ծատինյան)
Նկար 16. Հ. Էվոյանի գտած աղորիքներից մեկը (©Ծատինյան)
Նկար 17. Հ. Էվոյանի գտած աղորիքներից մեկը (©Ծատինյան)

Ըստ Հ. Էվոյանի, Սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ պատահական բացվել է դամբարան, որտեղ եղել են սև մեկ կանթանի կճուճ և գավաթ: Սանահնեցի Ն. Զաքարյանի վկայությամբ, գյուղի Վերի Միլ կոչվող թաղամասում ջրագիծը նորոգելու ժամանակ գտնում է կավե ամաններ և ոսկորներ: Սանահնեցի Լ. Էվոյանը պատմեց, որ իր եղբայրը գյուղում հողագործական աշխատանքներ կատարելու ընթացքում գտնում է կավե ամաններ՝ ափսեներ և գավաթներ, մի քանի տարի անց եղբայրը այդ նույն հողամասից գտնում է սև գույնի կավե մեծ կճուճ: Հ. Էվոյանը պատմեց, որ Սանահինի Սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ պատահական բացվել է մի դամբարան, որտեղ եղել են սև մեկ կանթանի կճուճ և մի գավաթ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ալավերդի համայնքի Սանահին թաղամասից փաստագրված տվյալները, դաշտային հետազոտության արդյունքում ամբողջացրինք Սանահին թաղամասի հարուստ հնագիտական ժառանգությունը, որը մեծ նշանակություն ունի տարածաշրջանի հնագիտության, ինչպես նաև պատմության ուսումնասիրության նշանակալի գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յարութիւնեան Իս., Սանահին. Սանահինի դիրքը և կլիման, Ազգագրական հանդես, 1898, էջ 273-274:
2. Դիվան հայ վիմագրության (ԴՀՎ), պրակ IX, Լոռու մարզ (Կազմեցին՝ Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան), ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատ., 2012:
3. Արեշյան Գ., Հնագիտական նոր հայտնագործությունները Դեբեդի ավազանում, Պատմա-բանասիրական հանդես, 1969, № 1, 269-275:
4. Նալբանդյան.Ա. Հաշվետվություն Սանահինի վանական համալիրի Ս. Հակոբ և Ս. Հարություն Տարածքի 2019 թ. պեղումներից, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ, Երևան, 2019:
5. Պետրոսյան Հ. Լ., Խաչքար, Ծագումը, Գործառույթը, Պատկերագրությունը, Իմաստաբանությունը, Երևան, 2007:
6. Խնկիկյան Օ. Ս., Զանգեզուրում հայտնաբերված ծիսական իրեր, Պատմա-բանասիրական հանդես, 1988, 1, էջ 232-241:

Археологические раскопки в Ташир-Дзорагете, Санаин

Цатинян Алла

ВГУ, История, 4-й курс

Научный руководитель:

кандидат исторических наук Б. Варданян

Резюме

Ключевые слова: *Лори, Санаин, поселение, археологические раскопки, каменная гробница, хачкар, надгробие*

Изучив документированные данные из района Санаин общины Алаверди на основе полевых исследований, мы завершили богатое археологическое наследие района Санаин, которое имеет большое значение как для региональной археологии, так и для изучения истории.

Archaeological Excavations in Tashir-Dzoraget, Sanahin

Tsatinian Alla

VSU, History, 4th year

Academic Supervisor: B. Vardanyan

Candidate of Historical Sciences

Summary

Key words*: Lori, Sanahin, settlement, archaeological excavations, stone tomb, khachkar, tombstone*

Through the study of documented data from the Sanahin district of the Alaverdi community, and based on field research, we have contributed to the rich archaeological heritage of the Sanahin district. This heritage is of great significance to both regional archaeology and the study of history.

Ջրի պաշտամունքը հայոց մեջ

Հակոբյան Լիլիթ
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Ք. Գասպարյան

Հանգուցային բառեր. *ջուր, կյանք, ավանդույթ, ծես, հուշարձան, պաշտամունքի առարկա*

Ջրի պաշտամունքը հայոց մեջ տարածված է եղել հնագույն ժամանակներից, ինչը կապված է առանց ջրի կյանքի անհնարին լինելու, ինչպես նաև ջրի բազմապիսի օգտակար հատկությունների հետ: Ջրի պաշտամունքը իր արտացոլումն է գտել ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ ծիսական համակարգում, ընդ որում և՛ մինչքրիստոնեական, և՛ քրիստոնեական շրջանում: Ջրի պաշտամունքի տարածված լինելը հատկապես նկատելի է ջրին ձոնված բազմաթիվ հուշարձաններում և նրա հետ կապված բազմաթիվ ավանդույթներում ու սովորույթներում: Ջրի պաշտամունքի մարմնավորումն է նաև կիրառական արվեստի հուշարձանների վրա հանդիպող ջրային թռչունների, օձերի, ձկների և ալիքավոր գծերի առկայությունը [7, 270]:

Թեմայի ուսումնասիրությունը կարևորվում է նախ՝ ազգային հոգևոր և նյութական մշակույթի պահպանման անհրաժեշտությամբ: Միաժամանակ՝ մի շարք ծեսերում և սովորույթներում պահպանվել են ջրի պաշտամունքի տարրեր՝ առանց դրանց վերաբերյալ հստակ պատկերացումների:

Հայոց մեջ ջրի պաշտամունքի տարածվածությունը բացատրվում է նրանով, որ այն անհրաժեշտ է եղել ոչ միայն մարդու գոյության, այլև տնտեսական ու կենցաղային մի շարք հարցեր լուծելու համար: Ժողովրդի հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունը: Առանց ջրի անհնար է երկրագործության զարգացումը, ուստի ջուրը հանդիսացել է հույսի, ուրախության, հուսահատության ու տխրության պատճառ և պաշտամունքի գլխավոր առարկա: Ջրի պաշտամունքը իր անջնջելի հետքն է թողել նաև բազմաթիվ ավանդությունների վրա, որոնք կապված են ջրի հետ: Քիչ չեն նաև այն պատմությունները, որոնցում արտացոլված են ջրի աղբյուրների համար պայքարը, վեճերը և արյունալի ընդհարումները [8, ԽԸ]:

Գրավոր աղբյուրներից մեզ հայտնի ջրապաշտամունքը ներկայանում է մինչքրիստոնեական և քրիստոնեական բովանդակությամբ: Մինչքրիստոնեական շրջանում ջուրը և կրակը համարվել են քույր ու եղբայր, իսկ արդեն քրիստոնեական շրջանում ջուրը կապվում է Քրիստոսի մկրտության հետ: Ջրապաշտության մեջ մեծ տեղ են գրավել նրա բուժիչ հատկությունները, որոնք չգիտակցվելով վերագրվել են աներևույթ զորություններին [4, 199]:

Ջրի պաշտամունքը տարածված է եղել նաև «այլևայլ ազգերի մեջ, որոնք ծո-

վերը, գետերը և աղբյուրները ճանաչել են որպես աստված կամ աստվածային» [3, 22]: Պաշտամունքի առարկա էին նաև հայոց գետերը: Ժողովրդական պատկերացումների համաձայն նրանց ջրերում ապրում էին «ջրի աղջիկները» կամ «փերիիզիները»՝ արձակ մազերով ու կիսամերկ ջրահարսերը, որոնք կարող էին հմայել երիտասարդներին: Հայերի հավատալիքներում հայտնի են նաև ջրային իգական ոգիներ, որոնք Բորչալուի և Ղազախի հավատալիքներում կոչվել են Ալ-Ալք անունով: Գետերի, լճերի և ծովերի պաշտամունքի տարածվածության մեջ մեծ դեր են խաղացել նաև դրանց մեջ ապրող կենդանիները, որոնք սնունդ են հանդիսացել [10, 36-37]:

Հեթանոսության շրջանում տարածված է եղել Ծովինար աստվածուհու պաշտամունքը, ում նաև անվանել են Նար, Նուրի (ծով եւ «նարու» – գետային ոգի բառերից): Նա ընկալվել է որպես ջրի, ծովի, անձրևի աստվածուհի, իսկ հավատալիքներում ու հեքիաթներում՝ ամպրոպային ոգի, փայլակի կամ կայծակի իգական անձնավորում, որի մասին եղած զրույցները նման են ամպրոպային դյուցազունների առասպելներին: Ծովինարը եղել է հրեղեն, ցասումնալից, ով ամպրոպի ժամանակ խաղացել է ամպերի մեջ և պատուհասող կարկուտ կամ պտղաբեր անձրև ուղարկել մարդկանց: Երաշտի ժամանակ մարդկային թափորները, ծիսական երգերի ուղեկցությամբ, մաղթանքներ էին ուղղում Ծովինարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին [6, 45]: Ծովինար աստվածուհուն նվիրված այդպիսի երգերից մի քանիսը հասել են մեզ, օրինակ.

Կարմիր գոտիկ կապել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Աջբա հուրին եկել ա,
Նուրին, Նուրին եկել ա,
Ձու բերենք թաթը դնենք,
Եղ բերենք պորտը քսենք,
Ջուր բերենք գլխին ածենք,
Երկնքի դուռը բացենք [9, 30]:

Ծովինար աստվածուհու պաշտամունքը առնչվում է նաև հայկական էպոսի հետ, որտեղ նա ներկայանում է որպես Սանասարի և Բաղդասարի մայրը [6, 45]:

Ջրի պաշտամունքը սերտորեն կապված է եղել Անահիտ աստվածուհու պաշտամունքի հետ, ընդ որում՝ ոչ միայն հայկական դիցարանում, այլև իրանական: Ուսումնասիրողներից Հ. Լոմմելը Ardwīsūr Anāhīd, Arədvī Sūrā, Anāhitā անվանման սկզբնական և ճիշտ տարբերակը համարում է Սարասվաթի անվանումը, ինչը նշանակում է «նա, ով ունի ջրեր»: Իր օրհներգում գետի աստվածուհին նկարագրվում է որպես գեղեցիկ, ուժեղ օրիորդ՝ ծածկված կուղբի մորթով, որը քշում է չորս ձիերով՝ քամի, անձրև, ամպ և ձյուն, լծված կառքը: Լինելով ջրային աստվածություն՝ նա երկրպագվում է որպես պտղաբերություն շնորհող, ով սնուցում է բերքը: Նրան ողջունում են և՛ որպես աստվածություն, և՛ որպես առասպելական

գետ՝ «այնքան մեծ, որքան այս բոլոր ջրերը, որոնք հոսում են երկրի վրա» [11]:

Ջրի պաշտամունքն առնչվել է նաև սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկի պաշտամունքի հետ: Ըստ ավանդության՝ Տարոնում ապրել է Աստղիկ անունով մի գեղեցկուհի, ով իրեն հետապնդող տղաներից խուսափելու համար գիշերներն է դուրս եկել, իսկ ցերեկը թաքնվել է: Նա սովորություն է ունեցել գիշերները լողանալ Գրգուռ գետում (Արածանի): Աստղիկին տեսնելու համար երիտասարդ տղաները կրակ են վառել մոտակա լեռների վրա, իսկ Աստղիկը դաշտը մշուշով է պատել, որից էլ գավառը ստացել է Մուշ անունը: Պատահական չէ, որ ժողովուրդը Աստղիկ աստվածուհու անունը կապել է այնպիսի ջրառատ գետի հետ, ինչպիսին Գրգուռը կամ Արածանին է [8, ԽԷ]: Աստղիկի պաշտամունքին էր նվիրված հեթանոս հայերի Վարդավառի տոնը:

Ջրի պաշտամունքը լայն տարածում է գտել նաև քրիստոնեական շրջանում: Հայոց եկեղեցին, նկատի ունենալով, որ ջրի պաշտամունքը խոր արմատներ էր ձգել ժողովրդի շրջանում, դրան տալիս է քրիստոնեական երանգ և ներառում է ծիսական համակարգում: Քրիստոնեության շրջանում ևս ջրին վերագրվել են բուժիչ, կախարդական հատկանիշներ: Ջուրը կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես Սուրբ Ծննդյան և Զատիկի ծիսակարգերում: Շատ շրջաններում, մասնավորապես՝ Բասենում, Շիրակում, Էջմիածնում, հավատում էին, որ տոնին նախորդող ճրագալույցի գիշերը բոլոր հոսող ջրերը մի քանի վայրկյան կանգ են առնում, և եթե այդ պահին որևէ իր դնեն ջրի մեջ, ապա այն կդառնա ոսկի կամ արծաթ, իսկ եթե քար դնեն, վերջինս ամեն տեսակի հիվանդություն բուժելու հատկություն կստանա: Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ Սուրբ ծննդյան գիշերը ջրի հետ անշարժանում են նաև խոտերը, օդը և ծառերը, որոնք ևս սրբազան ջրերում կարող են վերածվել ոսկու [5, 48-49]:

Ջրի պաշտամունքի լայն տարածման մասին են վկայում Հայաստանի տարբեր շրջաններում առկա հուշակոթողները՝ ձոնված ջրին կամ նրան վերագրված հատկանիշներին: Ջրի պաշտամունքի հետքեր են պահպանվել նաև հրաշագործ ձկների մասին պատմող առասպելներում: Հայոց մեջ ջրի պաշտամունքի մասին են վկայում նաև ջրակունքների կամ արհեստական ոռոգման առուների մոտ կանգնեցված ձկնակերպ «Վիշապ» կոթողները [5, 9]: Ըստ մեր նախնիների պատկերացումների՝ Վիշապ կոթողները պահպանել են սրբազան ջրերի աղբյուրները: Հետագայում այդ էակները ժողովրդական մտածողության մեջ դարձել են չար վիշապներ և զոհեր պահանջել [7, 272]: Հատկապես շատ են այն ավանդությունները, որոնք պատմում են Հայաստանի տարբեր վայրերում գտնվող աղբյուրների մասին: Դրանց մոտ բնակություն են հաստատել հայկական լեռնաշխարհի անասնապահները՝ իրենց նախիրներին և հոտերին ջրով ապահովելու համար:

Ջուրը համարվում էր սրբազան երևույթ: Այն ներկայացվում էր բարի և չար կերպարանքով: Որոշ գետերի ու աղբյուրների սուրբ ջրերը ազատում էին շատ հիվանդություններից, զավակներ ու սեր էին պարգևում, պայքարում էին միջատ-

ների ու զեռունների դեմ, չնայած կային նաև չար ուժ մարմնավորողներ, որոնցից պետք էր խուսափել հատկապես գիշերը: Աղբյուրներին ու ջրերին զոհեր էին մատուցում, ինչպես օրինակ, անալի հաց, խաշած ցորեն, զգեստի մաս, մատաղացու կենդանի և այլն [9, 36]:

Լոռիում պահպանված ջրապաշտության հետքեր են բազմաթիվ աղբյուրները, որոնց ժողովուրդը համարել է մարդկանց և կենդանիներին զանազան հիվանդություններից բժշկվելու միջոց: Օրինակ, ըստ ավանդության, Արդվի գյուղի աղբյուրի մոտ հիվանդները ուխտի են գնացել, մոմ վառել, խունկ ծխել, այդ ջրում լողացել կամ քսել վերքին, և նրանց հիվանդությունը բուժվել է: Հիվանդ կենդանիների բուժման համար այդ ջրին աղ են խառնել: Նմանատիպ աղբյուրներ կան նաև Հաղպատում, Օձունում, Մեծ Շուլավեր գյուղի մոտակայքում: Ջրի պաշտամունքի հետ է առնչվում նաև Վարդաբլուր գյուղի Սուրբ Սարգիս ուխտատեղի մոտ գտնվող Կաթնաղբյուրը: Այնտեղ ուխտի են գնացել կաթ չունեցող ծննդկան կանայք, ովքեր աղբյուրի ջուրը քսել են իրենց մարմնին, որ կարողանան կերակրել նորածնին [1, 182]:

Ջրի պաշտամունքի հետ է առնչվում նաև Գանձակի Միրզիկ գյուղում գտնվող «Խաչ-աղբյուրը», որը, ըստ ժողովրդական հավատալիքների, բուժել է մկնատամ հիվանդությունը: Հիվանդությունից ազատվելու համար երեխաներին լողացրել են ջրում և մոմեր վառել: Բանանց գյուղի սարերում գտնվող Պագերի (համբյուրների) աղբյուրի ջուրը երիտասարդացրել և սեր է ներշնչել: Այլ աղբյուրների ջրերն էլ բուժել են հոգեկան հիվանդությունները և փարատել վշտերը [9, 38]:

Ջրի պաշտամունքի հետ է առնչվում նաև բազմաթիվ տեղանուններում առկա ջուր խորհրդանշող բառարմատը, օրինակ՝ Կոտայքի շրջանի Ջրվեժ գյուղի անվան ծագման վերաբերյալ ավանդությունը պատմում է, որ այդ կողմերում մեծ երաշտ է լինում: Երկու գյուղերի ծերունիները խորհրդակցում են այդ վիճակից դուրս գալու մասին, և նրանցից մեկն առաջարկում է մոտակա սարից եկող առվի հունը լայնացնել, որ ավելացած ջուրը բավականացնի երկու գյուղերին: Ջուրը ավելանում է, բայց կրկին չի բավականացնում: Վեճը ջրի համար ավելի է թեժանում: Ծերունիներից մեկի առաջարկով որոշվում է, որ ջուրը կլինի այն գյուղինը, որից առաջինը ջրի մոտ մատաղ կանեն: Երկու գյուղերի երիտասարդները սլանում են դեպի իրենց նախիրները: Շուտով հարևան գյուղի մարդիկ վերադառնում են ոչխարը ուսերին: Այդ պահին ջրվեժցի երիտասարդներից մեկը հանում է դանակը ու ինքն իրեն մորթում, և ըստ պայմանի՝ ջրի աղբյուրը սկսում է պատկանել միայն Ջրվեժին: Այն տեղում, որտեղ ընկնում է երիտասարդը, ջրվեժցիները հուշարձան են կառուցում, իսկ երաշտի ժամանակ ուխտի գնում այդտեղ: Գյուղն այդ օրվանից սկսում է կոչվել Ջրվեժ [8, Ծ]: Այս ավանդությունը վկայում է, որ ջրին մատուցվող զոհաբերությունները բավականին հին արմատներ ունեն:

Ջրի պաշտամունքի օջախ են եղել նաև Տիգրիսի ակունքները, որ գտնվել է Շատախի Օլաման գյուղից դեպի հարավ՝ դաշտի մեջ և կրել է «Արքայության

աղբյուր» անունը: Այն պաշտամունքի առարկա է եղել ինչպես հայերի, այնպես էլ ասորիների ու քրդերի համար: Շատախի հայերը հավատում էին, որ Վարդավառի գիշերն այս աղբյուրից անմահության խնձորն է դուրս գալիս և անցնում Շատախի միջով, և եթե նկատեն խնձորը, ինչ խնդրեն, անմիջապես կկատարվի: Այս աղբյուրի ջրերը բուժիչ են համարվել նաև ոչխարների մեջ տարածված հիվանդությունների բուժման համար [2, 31-32]:

Վարագա լեռան մոտ եղել է մի հուշարձան՝ «Կաթնաղբյուր» անունով: Ավանդությունը պատմում է, որ դրա ջրում ժամանակին լողացել է Սանատրուկ արքայի շունը և բուժվել է բոր հիվանդությունից: Տեսնելով այդ՝ Սանատրուկն ինքն էլ է լողացել այդ ջրում և բուժվել բորոտությունից: Ի հիշատակ «Կաթնաղբյուրի» «հրաշագործության»՝ Սանատրուկը նրա մոտ՝ Սբ. Բարդուղիմեոսի գերեզմանի վրա, կառուցել է համանուն վանքը [8, ԾԲ]:

Մեկ այլ ավանդության համաձայն՝ մի կույր աղջիկ եղբոր հետ ոչխար է արածեցրել Բյուրակն լեռներում: Մի օր էլ, երբ նա լվացվել է տեղի բազմաթիվ աղբյուրներից մեկի ջրով, աչքերը հանկարծ լուսավորվել են: Կատարված հրաշքը պարզելու համար աղջկա ծնողները գալիս են դեպքի վայրը: Բազմաթիվ աղբյուրների միջից չկարողանալով գտնել իրեն բուժող աղբյուրը՝ աղջիկն ասում է. «Այս բյուր ակների մեջ ես ո՞նց իմանամ, թե ո՞րն էր այն ակը»: Դրանից հետո լեռների անունը մնում է Բյուրակն: Ավանդության մեջ ջրերի բուժիչ հատկության հետ կապված հնօրյա հավատալիքը զուգորդված և միահյուսված է Բյուրակնյան լեռների՝ բազմաթիվ լճակներով ու առվակներով հարուստ լինելու իրական փաստի հետ, որոնցից, ինչպես հայտնի է, իրենց սկիզբն են առել պատմական Հայաստանի մի քանի նշանավոր գետերը [8, ԾԳ]:

Սուրբ Աբրահամի վանքի մոտ եղել է մի աղբյուր, որը սուրբ է համարվել: Ավանդության համաձայն՝ Աբրահամ Խոստովանողը, վերադառնալով Խուժաստանից, վանքի տեղում մի մատուռ է կառուցել և այդտեղ ճգնավորությամբ զբաղվել: Մատուռի մոտ ջուր չի եղել, և Աբրահամը ստիպված է եղել ամեն օր գնալ հեռավոր աղբյուրից ջուր խմելու: Մի օր աղբյուրից վերադառնալիս սաստիկ շոգից նեղված նա սկսում է արտասվել: Վերադառնալով մատուռի մոտ՝ տեսնում է, որ մի աղբյուր է բխում, և լսում է մի ձայն, որն ասում էր. «Աբրահա՛մ, այս ջուրը և քո գերեզմանը թող ցավագարներին բժշկություն պարգևեն»: Աբրահամի մահից հետո նրան թաղում են մատուռի մեջ ու նոր տաճար կառուցում [2, 34], իսկ բուժիչ աղբյուրը և նրա գերեզմանը դառնում են ուխտատեղի:

Սուրբ Բարդուղիմեոսի վանքի հյուսիսային կողմում եղել է մի աղբյուր, որը սուրբ է համարվել և կոչվել է «Կաթն աղբյուր»: Բորոտություն ունեցողները աղբյուրի ջուրը քսել են իրենց մարմնին, ապա լողացել Աղբակ գետի ջրերում, և հիվանդությունը բուժվել է: Այս գետի ջրերը բուժել են նաև սակավակաթ կանանց: Նրանք Սբ. Բարդուղիմեոսի վանքից հաց են խնդրել, թրջել կաթնաղբյուրի ջրում, կերել, որպեսզի կաթը ավելանա [2, 35]:

Ջրի պաշտամունքը սերտորեն կապված է եղել բնության այլ երևույթների պաշտամունքի հետ, որի մասին վկայում են մեզ հասած բազմաթիվ ավանդությունները: Այսպես, ավանդազրույցի համաձայն Արևմտյան Հայաստանի Զագրոշ լեռները առաջ եղջերավոր հսկա վիշապներ են եղել: Զագրոշը փորձում է ուտել Տավրոսին, որի համար կռվի է ելնում նրա դեմ: Տավրոսը թեև իր մեծությամբ փոքր էր, բայց ավելի ուժեղ լինելով, այնպես է հարվածում Զագրոշի ճակատին, որ նրա եղջյուրները պոկվում են: Շշմած Զագրոշը մեջքը «դեմ է տալիս» Տավրոսի Առնոս և Արտոս եղջյուրներին: Բարկացած Տավրոսը այնպես ուժեղ է հարվածում նրան, որ մի մեծ ձոր է բացվում, որով սկսում է հոսել Զագրոշի արյունից գոյացած Զաբ գետը, որը թեև վշշում է, բայց անուշ ու անմահական ջուր ունի: Իսկ Զագրոշի փորոտիքի աղի ջրերի մի մասն էլ գնում է դեպի Վան՝ կազմելով Վանա լիճը [8, ԾԳ]: Վանա լճի հետ է կապվում նաև մի հետաքրքիր սովորություն, որը տարածված է եղել հայ նավաստիների շրջանում: Ըստ այդ սովորության՝ ընդունված էր Վանա լճի ալեկոծություն ժամանակ տարբեր իրեր գցել լճի մեջ, որ «չարը խափանվի», և լճի ալեկոծությունը դադարի [2, 34]:

Ջրի՝ բնության այլ երևույթների պաշտամունքի հետ կապի մասին է վկայում ևս մի ավանդություն. Մշո Առաքելոց վանքի մոտ գտնվող Գլխաջրիկ աղբյուրի առջև կար մի տաշտաձև քար, որին տեղացիները Տրդատի քար էին կոչում: Ըստ ավանդության՝ այս քարը Մասիս սարից գլխի վրա դրած բերել է Տրդատ թագավորը: Ջերմ ունեցողները այդ աղբյուրի ջրով լոգանք են ընդունել և բուժվել [8, ԾԳ]:

Ջրի պաշտամունքը կապված է եղել նաև քարի պաշտամունքի հետ: Դրա մասին է վկայում Հայոց Զորի Անգղ գյուղի մոտ գտնվող Անգղայ կամ Խոշաբի գետի ափին բարձրացող ժայռից բխող աղբյուրը, որը հայտնի է «Ջերմուկ» անունով: Ուխտավորները գնացել են այնտեղ, լվացվել ջրով, իրենց հագուստի կտորներից դրել ժայռի ծերպերի մեջ և փոքրիկ քարեր քսել ժայռին՝ որոշ խորհուրդ դնելով մտքերին: Եթե քարը կպել է ժայռին՝ նշանակել է, որ այդ խորհուրդը կատարվելու է [2, 34]:

Հետաքրքիր մի ավանդության համաձայն՝ երբ «բողոճ» կոչվող միջատը վնասում է գյուղացիների ցորենի արտը, մի քանի ամուրի տղամարդիկ են ուղարկվում «բողոճի ջուր» բերելու, որի աղբյուրը գտնվում էր Չարդախլու գավառում: Նրանք գնում են ուխտավայր, անխոս մոտենում «այրի առաջ թաղված ճգնավորի արցունքներից» առաջացած աղբյուրին, մոմ են վառում, աղոթում, ապա վերցնում ջուրը և տուն վերադառնում: Ողջ ճանապարհին ջուրը պետք է ցած չդնեին: Անգամ քնելիս այն գետնին չէին դնում: Հասնելով իրենց բնակավայր՝ նրանք ջուրը տանում են եկեղեցի, ապա քահանան գյուղացիների հետ գնում է արտերը և հողը ցողում այդ ջրով, որից հետո միջատները վերանում կամ հեռանում են: Այլ էր մորեխների դեպքում, որի ժամանակ ջուրը բերում էին Մասիսի լանջից՝ Սբ. Հակոբի աղբյուրից [1, 183]:

Ջուրը լայն կիրառություն է ունեցել հայ ընտանեկան-կենցաղային ծիսական համակարգում, որի որոշ տարրեր պահպանվել են մինչ օրս: Օրինակ, երկար ժամանակով հեռու ճանապարհ մեկնողի կամ որևէ փորձության ընդառաջ գնացողի ետևից ջուր են ցանում՝ ի նշան հաջողության և օրհնության: Ընդունված է նաև հանկարծակի վախեցածին ջուր խմեցնելը կամ նրա վրա ջուր ցանելը, քանի որ ժողովրդական պատկերացումների համաձայն ջուրը փարատում է վախը: Ջրի պաշտամունքի տարրեր կան նաև մահվան և հուղարկավորության ծիսական համակարգում. դիցուք՝ հանգուցյալին լողացնելու կամ դիալվացման արարողությունը, որն արտահայտում է մտերիմների սերը և հարգանքը ննջեցյալի նկատմամբ: Ժողովրդական հավատալիքի համաձայն՝ մարդը հանգուցյալ աշխարհ պետք է փոխադրվեր մաքուր: Դիալվացումն ուղեկցվում էր մի շարք բարեմաղթանքներով: Բորչալուի գավառում հանգուցյալի ոտքերը լվանալու ժամանակ բարեմաղթում էին «քարդ քաղած ըլի, հոդդ մաղած ըլի, Աջու դատի արժան ըլնես», որը նշանակում էր մահից հետո արդար դատաստանի արժանանալ: Զավախքում հանգուցյալին լողացնելուց հետո նրա ազգականները դիակի վրա մի-մի թաս ջուր էին լցնում, որպեսզի հանգուցյալը իրենց երախտիքը ընդունի և «հալալ» անի: Ջրի պաշտամունքի դրսևորում է նաև այսպես կոչված «ձեռլվացման» արարողությունը, երբ հոգեհացից առաջ հանգուցյալի հարազատի հրավերով հուղարկավորները գնում են սգատուն՝ լվացվելու և ապա հաց ուտելու [5, 50-52]:

Ջրի պաշտամունքի հետքերին առնչվում ենք նաև ամենօրյա կենցաղում: Անեծքներում, օրհնանքներում, երդումներում, մաղթանքներում մշտապես հանդիպում ենք «ջուր» բառին, որն ամեն տեղ տարբեր իմաստային նրբերանգներ ունի: Այսպես, օրհնանքներում այն խորհրդանշում է հաջողություն, երկարակեցություն, ինչպես օրինակ «Կյանքդ ջրի պես երկար լինի» կամ «Ջուրը էրթաս, ոսկի դառնաս», «Անտակ ծովին ռաստ գաս» և այլն: Անեծքներում ջրի պակասի կամ բացակայության ցանկությունը խորհրդանշում է մահ, փորձանք, տառապանքներ, ինչպես օրինակ՝ «Սատկիս, ջուր տուող մի չէլի» կամ «Ջրի կարոտով մնաս» և այլն: Շատ ասացվածքներ անգամ ձեռք են բերել դարձվածքային իմաստ [6, 47], օրինակ՝«Պղտոր ջրի մեջ ձուկ բռնել»: Շատ են նաև ջրի հետ առնչվող առածներն ու ասացվածքները. «Ջուրը մի տեղ որ շատ մնա, կհոտի», «Ջուրը փոս տեղ գյոլ կտա», «Ջրի օգուտն էլ ա շատ, վնասն էլ», «Վազող ջուրը կեղտ չի բռնե», «Անձրև օրը հավերուն ջուր տվողը շատա», «Լավություն արա, ջուրը գցի, ձուկը չիմանա, Աստված կիմանա», «Ջուրը չհասած՝ ոտները չեն հանի», «Ձուկը ջրում բազար չեն անի», «Ջուրը իր առվով կերթա», «Ջուրը գնացած ճանապարհը չի մոռանալ», «Ջրի բերածը ջուրը կտանի», «Ջրում խեղդվողը ձեռքն օձին էլ է գցում», «Ջուրն ընկածը անձրևից չի վախենա», «Ինչ աղբրից որ ջուր ես խմում, էն աղբրին քար մի գցի», «Մինչև ցամաք առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա»:

Այսպիսով, ջրի պաշտումունքը բավականին տարածված է եղել հայերի շրջանում, ինչը կապված է եղել ջրի առանձնահատկությունների, օգտակարու-

թյան և մարդկանց կենսագործունեության մեջ դրա անհրաժեշտության հետ: Ջրի պաշտամունքը տարածված է եղել ոչ միայն մինչքրիստոնեական, այլ նաև քրիստոնեական շրջանում, նախաքրիստոնեական պաշտամունքի բազմաթիվ տարրեր ներառվել են հայ առաքելական եկեղեցու ծիսակարգերում: Ամենուր հանդիպող ջրի պաշտամունքին ձոնված բազմաթիվ հուշարձանները խոսուն վկան են ջրի պաշտամունքի խիստ տարածվածության: Այժմ էլ շատ են ջրի պաշտամունքի դրսևորումները և՛ կենցաղում, և՛ առօրյա մի շարք արտահայտություններում, և՛ ծեսերում ու ավանդույթներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ազգագրական հանդես», հատոր 10, Թիֆլիս, 1903 թ., 312 էջ:
2. «Ազգագրական հանդես», հատոր 25, Թիֆլիս, 1913 թ., 239 էջ:
3. Ալիշան Ղ., Հին հավատաք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 187 էջ:
4. Բդոյան Վ., Հայ ազգագրություն համառոտ ուրվագիծ, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 1974 թ., 288 էջ:
5. Հարությունյան Ս., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի» հրատարակություն, 2001 թ., 81 էջ:
6. «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, Hayazgyan university press հրատարակություն, 2017 թ., 56 էջ:
7. «Հայ ժողովրդի պատմություն», ակադ. հրատ., հ. 1, 1971 թ., 991 էջ:
8. Ղանալանյան Ա. «Ավանդապատում», Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1969 թ., 491 էջ:
9. Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակություն, 1963 թ., 162 էջ:
10. Բդոյան Վ., Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, Հայկական ՍՍՌ ԳԱ պետական պատմական թանգարան, Աշխատություններ N 3, 1950 թ., 71 էջ:
11. M. Boyce, M. L. Chaumont, C. Bier, “ANĀHĪD,” *Encyclopædia Iranica* https://iranicaonline.org/articles/anahid (30. 12. 2012)

Поклонение воде среди армян

Акопян Лилит
ВГУ, История, 2-й курс
Научный руководитель: К. Гаспарян

Резюме

Ключевые слова: *вода, жизнь, традиция, обряд, памятник, объект поклонения*

Среди армян было довольно широко распространено поклонение воде, что было связано с особенностями воды, ее полезностью и необходимостью в жизни людей. Поклонение воде было широко распространено не только в дохристианский период, но и в христианский период, многие элементы дохристианского поклонения вошли в обряды Армянской Апостольской церкви. Многочисленные памятники, посвященные воде, встречающиеся повсеместно, красноречиво свидетельствуют о крайней распространенности поклонения водной стихии. Даже сейчас существует множество проявлений поклонения воде в быту, в ряде бытовых выражений, в обрядах и традициях.

Water Worship among Armenians

Hakobyan Lilit
VSU, History, 2nd year
Academic Supervisor: K. Gasparyan

Summary

Key words: *water, life, tradition, ritual, monument, object of worship*

The worship of water was widespread among Armenians, due to its essential characteristics, usefulness, and necessity in daily life. This practice existed both in the pre-Christian and Christian periods, with many elements of water worship being preserved and incorporated into the rituals of the Armenian Apostolic Church. The numerous monuments dedicated to water worship, found throughout the region, serve as eloquent evidence of the widespread nature of this practice. Even today, many manifestations of water worship can be observed in everyday life, including in various expressions, rituals, and traditions

1848-1850 թվականների դանիա-պրուսական պատերազմի արձագանքը «Եվրոպա» թերթում

Հայրապետյան Մելինե
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. *Շլեզվիկ-Հոլշտայն, սահմանադրություն, թագավոր, Դանիա, Պրուսիա, հակամարտություն, ռազմական գործողություններ, դքսություններ, զինադադար*

1848-1849 թվականների եվրոպական հեղափոխությունները Սկանդինավյան երկրներից Դանիայի վրա ավելի անմիջական ազդեցություն ունեցան, քան Ռեֆորմացիայից ի վեր Եվրոպայում ծավալված ցանկացած այլ շարժում: Այդ իրադարձությունները չեն վրիպել ժամանակի հայ պարբերական մամուլի ուշադրությունից: Վիեննայում Մխիթարյան միաբանության հրատարակած «Եվրոպա» քաղաքական շաբաթաթերթը եվրոպական մամուլի հրապարակումների և ստացված հեռագրական լուրերի հիման վրա արձագանքել է Շլեզվիկ-Հոլշտայնի դքսությունների շուրջ առաջացած ճգնաժամին և դրա հետևանքներին, դրսևորել անկողմնակալ դիրքորոշում:

«Եվրոպա» շաբաթաթերթը լույս է տեսել 1847-1863 թթ. Վիեննայի Մխիթարյանների նախաձեռնությամբ: Թերթն իր ընթերցողներին է ներկայացրել քաղաքական, մշակութային, ուսումնական բնույթի մեծածավալ նյութեր: 1848 թ. հունիսի 27-ի համարում «Եվրոպան» հայտարարությունների բաժնում ներկայացնում է իր որդեգրած ռազմավարությունը: Թերթն ընդգծում է, որ իր առջև խնդիր է դրել «հիմակուան Եւրոպայի խռովութիւնները, իրենց բնական՝ աղէկ կամ գէշ գունովը նկարել, որ ընթերցողները աղէկը տեսնեն ու հետեւին գէշն իմանան ու փախչին: Ասս ամէն դէպքերուն մէջ հաւատարմութիւնն ու ճշմարտութիւնը միշտ մեզի նպատակ դրած ենք, որն որ կը յուսանք որ մինչեւ հիմա պահած ենք, ասկից ետքը պահելիքներուս ալ՝ թող մեր թերթերը վկայեն» [11; 10]: Որդեգրած այս ուղեգծին Մխիթարյանները հավատարիմ մնացին 1848-1949 թթ. եվրոպական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներն ու պայքարը լուսաբանելիս:

Յուտլանդիա թերակղզու հարավում ընկած Շլեզվիգը և Հոլշտայնը գերմանական երկու հնագույն դքսություններ էին, որոնք 1460 թ. անցան դանիական Օլդենբուրգների արքայատոհմի տիրապետության տակ: Շլեզվիգը 1720 թ. ամբողջությամբ անցավ Դանիային, իսկ Հոլշտայնը մնաց մասնատված:

1840-ական թվականներին առաջացավ սկանդինավիզմ բուրժուա-ազատական շարժումը, որը հռչակեց սկանդինավյան երեք երկրների ոչ միայն պատմամշակութային, այլև քաղաքական միասնությունը: Չնայած իր հռչակած լիբերալ գաղափարներին՝ քաղաքական սկանդինավիզմը Դանիայում եկավ ծառայելու ամբողջ Շլեզվիգի բռնակցման և գերմանացիների ազգային վերամիավորման կանխման գործին [2, 119]:

Դանիայի Քրիստիան VIII թագավորի կառավարությունը դեռևս 1846 թվականին բաց նամակով հռչակեց Դանիայի և Շլեզվիգի գահին հաջորդելու ընդհանուր կարգը, ինչը հարուցեց թագավորի գերմանացի հպատակների դժգոհությունը: 1848 թ. վերջինս մահացավ, նույն թվականի հունվարին անզավակ Ֆրեդերիկ VII-ը (1848-1863), դանիական Օլդենբուրգների հնագույն ընտանիքում վերջինը, վերցրեց թագավորական և դքսական գահերը [2, 118-119]:

«Եվրոպա» թերթը այս մասին գրում է. «Յունուարի 19-ին լուրերը կը ծանուցեն թէ Քրիստիան Ը թագաւորը նոյն առտուանց 62 տարեկան վախճաներ է», ապա մանրամասնորեն ներկայացնում է թագավորի մահին հաջորդած իրադարձությունների շղթան [5, 22-23]: Թերթը մասնավորապես նշում է. «Երրորդ օրը ամսոյս 21-ին» երկրի «արդարութեան պաշտոնեան՝ Պ. Սդեման, պալատի պատշգամբից բարձր ձայնով երեք անգամ այս խոսքերն ասաց. «Քրիստիան ութերորդ թագաւորը մեռաւ, կեցցէ Ֆրեդերիկոս եօթներորդ թագաւոր»... ամեն անգամ այս խոսքերին հետևում էր հավաքված ամբոխի ձայնակցումը. «երաժշտական փողերը կը հնչեին»: Այնուհետև պատշգամբում երևաց ինքը՝ նոր թագավորը, և բարևեց ժողովրդին: Թերթը նաև հայտնում է, որ թագավորը դանիական թագը վերցնելուց հետո բաց նամակով դիմել է ժողովրդին: Նա նախ՝ վստահեցրել է, որ հաստատուն է պահելու իր հոր ընդունած կարգերն ու օրենքները, ապա հայտնել Դանիային ու Շլեզվիգ-Հոլշտայնի դքսություններին սահմանադրություն շնորհելու մտադրության մասին. «առանց մէկուն կամ մէկային իշխանութեան կամ իրաւունքներուն դպչելու» [6, 27]:

1848 թվականի մարտի 20-21-ին ոչ միայն Վիեննայից և Բեռլինից, այլև դքսություններից տագնապալի լուրեր հասան այն մասին, որ գերմանացի հայրենասերները պատրաստվում են բողոքի ելույթներ կազմակերպել [2, 120]: Այս լուրերի տպավորության տակ դանիացի լիբերալները հանրահավաք կազմակերպեցին Կոպենհագենի թատրոնում և ժողովրդական երթ իրականացրին դեպի Քրիստիանսբորգ՝ թագավորական պալատ: Վախեցած թագավորը շտապեց բավարարել ազատականների պահանջները:

«Գոբենհակի ժողովուրդը ոտք ելլելով՝ թագաւորը պաշտոնեաները փոխելու պարտաւորեցաւ»,– այս մասին գրում է թերթը: Մարտի 22-ին նոր կառավարություն ձևավորվեց: Նրանց առաջնորդները՝ աստվածաբան Դ. Մոնրադը, իրավաբան Օ. Լեմանը և հրետանու սպա Ա. Ֆ. Չերնինգը. ժողովրդին խոստացան սահմանադրական ժողով հրավիրել՝ սահմանադրություն կազմելու համար և ձեռնամուխ լինել Դանիայի ու Շլեզվիգի միացմանը: Հաջորդ համարներում «Եվրոպան» հետևողականորեն շարունակում է թեմայի շուրջ լուսաբանումները: Այսպես՝ թերթի ապրիլի 25-ի համարում կարդում ենք նախորդ ամսվա 27-ին Ֆրիդրիխ թագավորի մեկ այլ ուղերձ ժողովրդին՝ կապված Սահմանադրության շնորհման հարցի հետ, որտեղ վերջինս նշում է, որ դեռ մի քանի ամիս է, ինչ զբաղեցրել է իր հոր տեղը և մեծ պարծանք է համարում, որ հանուն իր ժողովրդի բարօրության ու խաղաղության վճռել է սահմանադրություն շնորհել նրանց, ապա, խոսքն ուղղելով գերմանաբնակ Հոլշտայնի դքսությանը, թագավորը նշում է, թե ի սկզբանե

մտադիր էր նրանց առանձին սահմանադրություն շնորհել, բայց այդ «մտածմունքը ասկից ետքը դադրած է»: Թագավորը, ինչպես շլեզվիկցիներին, այնպես և հոլշտայնցիներին խոստանում է. «Դուք Դանիայի հետ միացեալ մնալով ու ձեր անձնական գործակցութեամբը՝ազատ ազգային սահմանադրութիւն մը պիտի ունենանք, Թէպետ և մէկ կառավարութիւն, առանձին դատաստան պիտի ունենանք» [8, 71]: Ի պատասխան դքսություններում բռնկվեց հակադանիական ապստամբություն՝ Քիլի ժամանակավոր կառավարությունը՝ հանգուցյալ թագավորի մերձավորագույն ազգական, Օգոստենբուրգի դուքս Քրիստիան Ավգուստի գլխավորությամբ, հռչակեց երկու դքսությունների բաժանումը Դանիայից: Ապստամբությունը շուտով վերաճեց դանիա-գերմանական պատերազմի [2, 120]:

Թերթը այս մասին գրում է. «Շլեզվիկ-Հոլշդայնն անկախ կ՛ուզէ ըլլալ: Մարտի 24-ին առտուանց Հոլշդայնցիք գլուխ վերցուցին ու Քիլի մէջ առժամանկեայ կառավարութիւն մը դրին: Ջօրքը ամէն տեղ ժողովրդեան կողմը կ՛անցնի»: Այնուհետև թերթը արտատպում է Քիլի ժամանակավոր կառավարության ուղերձը ժողովրդին, որում վստահեցվում է, թե երկրի տերերի կամքը ազատ չէ, ու երկիրը առանց կառավարության է, ապա հայտնում են, թե թույլ չեն տալու, որ «Գերմանացւոց երկիրը Դանիացւոց հապշտակութեանը մատնուի: Մեծ վտանգները մեծ ալ որոշումներ կ՛ուզեն, սահմանները պաշտպանելու կարգաւորութիւն մը հարկաւոր է» [7, 59]:

Շուտով Դանիայի այս ներքաղաքական լարումը դադարում է Դանիայի ներքին գործ լինելուց: Շլեզվիգի և Հոլշտեյնի միավորման և դքսությունների՝ Գերմանական միության մեջ մտնելու հարցը դառնում է Գերմանիայի ազգային միավորման ծրագրի հիմնական կետերից մեկը և անընդհատ բարձրացվում ինչպես Ֆրանկֆուրտի (միութենական գերմանական) խորհրդարանի նիստերում, այնպես էլ ողջ ազգայնական գերմանական մամուլում: Հոլշտայնցիները օգնության խնդրանքով դիմեցին Գերմանական Միութենական սեյմին: Մինչ նա որոշում կընդուներ, Պրուսիայի թագավորն առանց պատերազմ հայտարարելու ապրիլի 6-ին իր զորքերը շարժեց դեպի Հոլշտայն:

«Եվրոպան» հավաստի տեղեկություններ է հաղորդում, որ Գերմանական դաշնակցության «ժողովքին մէջ խորհուրդ եղավ» ու որոշվեց, որ Պրուսիան ռազմական օգնություն պիտի ուղարկի Շլեզվիգ-Հոշտայնի դքսություններին, երբ որ Դանիան նրանց դեմ պատերազմ սկսի: «Եւ իրոք ալ գերմանացիք ասդիէն անդիէն բաւական զօրք խրկեցին» [8, 71]:

Այսպիսով, սկսվում են ռազմական գործողություններ, որոնք մեծապես վտանգում են ողջ Եվրոպայի փխրուն խաղաղությունը:

Թերթը ներկայացնում է «Ռենտսպուրկէն ստացված լուրերը», ինչից պարզ է դառնում, որ հաջողությունը սկզբնապես Դանիայի կողմն է, վերջինս հաղթությամբ առաջ է շարժվում: «Այսօր նաև Շլեզվիկ քաղաքն ալ առնուեցաւ, ու արդէն Դանիացիք 800 հոգւով ներս մտած են», գրում է թերթը և տվյալներ ներկայացնում երկու կողմի կորուստների մասին [8, 71]: Նույն համարում լուսաբանվում է նաև. «Ֆլենսպուրկի քով եղած պատեազմը», որում, ինչպես երևում է, կրկին

հաջողությունը դանիացիների կողմն է, որովհետև նրանց ռազմական նավերը անդադար կրակում են շլեզվիգյան զինվորների ուղղությամբ: Վերջիններս սաստիկ հուսահատությամբ են պատերազմում: Այդ կռվում ամենից մեծ կորուստներ կրեց նաև «Քիլերին գունդը», որը ուսանողներից էր կազմվել և որոնցից միայն 10 հոգի փրկվեցին:

Դանիայի հաղթանակները կասեցվեցին, երբ դքսություններին օգնության եկան պրուսական զորքերը: Ապրիլի 20-ից հետո կայացած կռիվներում պրուսացիները հաղթանակ տարան և ստիպեցին դանիացիներին՝ նախ լքել Կոդդորբի ամրոցը, իսկ այնուհետև՝ Շլեզվիգը: Դանիացիներն ամենուրեք պարտություն կրեցին և հարկադրված ամրացան Այլս կղզում, իսկ պրուսացիները մտան Հյուսիսային Յուտլանդիա:

«Եվրոպան» այս մասին գրում է. «Պրուսիայի յանդուգն զինուորները Կոդդորբեան ամուր բերդին վրայ յարձակեցան, ուր որ Դանիացիք աղէկ հաստատուած կեցած էին», և 4-5 ժամյա մարտերից հետո դուրս շպրտեցին դանիական բանակին: Ապա ավելացնում. «Վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Դանիացւոց զօրքը Շլեզվիկի դքսութենէն բոլորովին դուրս ելած է»,– անդրադառնում է թերթը:

Շվեդիան 1848 թ. մայիսին, առաջին անգամ գործելով սկանդինավյան համերաշխության ոգով, որոշեց պրուսական զորքերի Յուտլանդիային և կղզիներին վտանգ սպառնալու դեպքում 15.000 զինվոր ուղարկել Դանիային պաշտպանելու [3, 18-19]: Շվեդիան իր բանակն ու նավատորմը պատրաստ վիճակում պահեց ու Պրուսիային զգուշացրեց, որ Յուտլանդիան գրավելու դեպքում հանդես կգա նրա դեմ [2, 136]:

Թերթը այս մասին գրում է. «Պ. Ցաստրով՝ որն որ Շլեզվիկ-Հոլշդայնի զօրաց հատուածով մը դէպ ի Ամրհուս արշաւանք մը ըրած էր, 7000 հոգւոյ համար 14 օրուան զանազան պաշարով դէպ ի Ֆայլէ եկաւ» [10, 96]: Իսկ Բեռլինում Շվեդիայի դեսպանը պաշտոնապես տեղեկացրել է, թե իր կառավարության քայլերը միայն ինքնապաշտպանական նպատակով են [9, 91]:

«Եվրոպան» հուլիսի կեսերին հույս է հայտնում, որ մոտ օրերս որոշիչ լուրեր պիտի ստացվեն պատերազմական գործողություններից: [12, 122]:

Թերթը չի սխալվում. Անգլիայի և Ռուսաստանի ճնշման տակ Պրուսիան հարկադրված եղավ զորքերը դուրս բերել Յուտլանդիայից և շվեդական Մալմյո քաղաքում 1848 թ. օգոստոսի 26-ին յոթ ամսով զինադադար կնքել [4, 41]: Ըստ էության այս զինադադարը դավաճանություն էր դքսությունների ազատագրական շարժման նկատմամբ [1, 527]:

«Եվրոպան» անդրադարձ է կատարում այս կարևոր իրադարձությանը. «Պերլինի ազգային լրագիրը աս լուրը կու տայ որ յուլիսի 6-ին Պրուսիայի ու Դանիացւոց մէջ Շլեզվիկ-Հոլշդայնի պատերազմին վրայ երեք ամսւոան համար զինադադար եղած է» [13, 130]:

Անգլիան ու Ֆրանսիան Գերմանական դաշնությանը զգուշացնում են, որ Շլեզվիկ և Հոլշտայն հավելյալ զորք ուղարկելը կնշանակի պատերազմ հայտարարել իրենց: Թերթը տեղեկացնում է, որ «Ռուսիա թէպէտ աս յայատարարութեան

չստորագրեց, բայց ինքն ալ ասոր նման զատ յայտարարութիւն մը տուաւ Պերլին խրկեց»: Բանն այն է, որ Նիկոլայ I-ը համակրանք չուներ ազգային և ազատագրական շարժումների նկատմամբ: Նա չէր ցանկանում փոխել ուժերի հավասարակշռությունը, որը ձևավորվել էր հյուսիսային Եվրոպայի տարածաշրջանում:

Ռազմական գործողությունները, սակայն, 1849 թվականին վերսկսվում են նոր թափով: Պատերազմի հետագա ընթացքը Դանիայի համար մեծ վնասներ էր խոստանում Շլեզվիգ-Հոլշտայնցիներին. այս անգամ հաջողվել էր ստեղծել 20.000-անոց բանակ, որին օգնության հասավ դաշնակիցների երկու անգամ մեծ բանակը: Նրանց հակառակորդ դանիական ուժերը կազմում էին 41.000 զինվոր: Պրուսական ցամաքային զորքը հաջողությամբ ու մեծ ավերածություններով շարունակում էր հաղթարշավը:

Այս մասին մանրամասն շարադրում է թերթը. «Գերմանացիք արդէն Շլեզվիկի սահմանէն անդին անցնելով՝ Եիւդլանտ մտան: Իսկ Դանիացիք, որ աս տարի Շվետէն յոյս մը չունին, իրենց թէ ծովի եւ թէ ցամաքի վրայ յաղթուեալուն համար շատ գրգռուած են, ու ազգովին կը ջանան, որ նոր պատրաստութիւններով ու աւելի բազմաթիւ զօրքով գան, յաղթեն ու իրենց ազգային պատիւը տեղը բերեն» [14, 75]:

Հաջորդիվ «Եվրոպան» գրում է, որ ըստ անգլիական լրագիրների՝ պատերազմը շուտով պիտի հանգուցալուծվի: Թերթը մասնավորապես իր էջերում արտատպում է անգլիական իշխանական ձայնափողներից մեկի՝ «Կլոպ» լրագրի նորություններից որոշները. «Լորտ Բալմերսդն Շլեզվիկ-Հոլշդայնի խնդրոյն վրայ Դանիայի ու Գերմանիայի կառավարութիւններուն այլ եւ այլ առաջարկութիւններ ըրաւ»: Դանիայի դեսպանն ընդունել է այս առաջարկությունները և հավանաբար կընդունի նաև պրուսական կողմը: Ուստի թերթը հույս է հայտնում, թե այս պատերազմը, որի պատճառով «քաղաքական թշնամութիւններ ու առեւտրական վնասներ ծագեցան, շուտ մը կը վերջանայ» [10, 87]:

«Եվրոպան» 1850 թ. հունիսի 24-ի համարում գրում է՝ Դանիայի խորհրդարանում գաղտնի խորհրդակցության նստեցին: Քննարկման առարկան Շլեզվիկ-Հոլշտայնում խաղաղություն հաստատելն էր: Պատգամավորների մեջ «սաստիկ մեծ վիճաբանութիւն եղաւ»: Թերթը մեջբերում է «Պերլինի լրագրէն» լուրեր, թե գաղտնի ժողովից հետո ամսի 20-ին Դանիան «դէպ ի Պերլին սուրհանդակ մը հանեց, որն որ Պրուշին արքունեացը վերջնագիր մը կը տանի»: Դանիական դեսպանը առաջ է քաշել հաշտության առաջին պայմանը, ըստ որի՝ «Պրուշի չեզոք զօրքերը Շլեզվիկը պարպեն ու անոր տեղը Տանիմարգացի զօրք մտնէ»: Այս պայմանի կատարման դեպքում Դանիայի դեսպանը վստահեցրել է, որ Շլեզվիկ-Հոլշտայնի դքսությունները «կը խոնարհին ու կը հնազանդին» [15, 116]: Կառավարության բռնած ճամփան գոհունակությամբ ընդունեց «ատենակալաց խորհուրդը», բայց «պատգամաւորաց ժողովքին մէջ խոսակցութիւն կամ վիճաբանութիւն չէր, որչափ կռիւ, որ մինչեւ անպատեհ ու անհամ խոսքերու ալ գնաց» և որևէ էական արդյունք չտվեց:

1851 թվականի հունվարին ի վերջո ավարտվեց պատերազմը: Գերմանական

երկու մեծ տերությունները գրավեցին Հոլշտայնը, որտեղ նրանց կոմիսարները ստանձնեցին իշխանությունը, մինչդեռ Դանիան վերականգնեց վերահսկողությունը Շլեզվիգի տարածքի վրա մինչև Էյդեր [2, 120]:

Թերթն, անդրադառնալով այս իրադարձությանը, արտատպում է 1851 թվականի հունվարի 7-ի Շլեզվիգ-Հոլշտայնի բնակչությանն ուղղված հայտարարությունը. «...Գերմանիայի դաշնագրութեան ժողովքն որոշեց որ խաղաղութիւնը հաստատէ խոստանալով որ Հոլշդայնի իրաւունքն եւ երկու դքսութեան մէջ եղած հին յարաբերութիւնը պահէ» [16, 10-11]:

Այսպիսով, աղետալի պատերազմն ավարտվեց ստատուս-քվոյի պահպանմամբ, որի վերաբերյալ կնքված հաշտության պայմանագիրը Շլեզվիգ-Հոլշտայնի դքսության խնդիրը վերջնականապես չլուծեց: Հաստատված փխրուն խաղաղությունը հետագայում տեղիք տվեց նոր հակամարտության: «Եվրոպա» շաբաթաթերթը իր թղթակիցների և եվրոպական մամուլի լուրերով ճշգրիտ և անկողմնակալ ներկայացնում է Շլեզվիգ-Հոլշտայնի դքսության պատկանելության հարցով 1848-1850 թթ. տեղի ունեցած դանիա-պրուսական հակամարտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մովսիսյան Ֆ., Եվրոպական ազգային-ազատագրական շարժումները հայ պարբերական մամուլում 1848-1852 թթ, Երևան, 2004:
2. Кан А.С., История Скандинавских Стран, Москва, 1980.
3. Роотс Л.К, ., Шлезвиг-Гольштинский вопрос и политика европейских держав в 1863-1864 гг., Таллин, 1957.
4. Ротштейн Ф. А., ., Из истории прусско-германской империи. Москва, 1948.
5. «Եվրոպա» (Վիեննա),1848 թ., 8 փետրվարի, թիվ 6:
6. «Եվրոպա», 1848 թ., 15 փետրվարի, թիվ 7:
7. «Եվրոպա», 1848 թ., 4 ապրիլի, թիվ 14:
8. «Եվրոպա», 1848 թ., 25 ապրիլի, թիվ 17:
9. «Եվրոպա», 1848 թ., 23 մայիսի, թիվ 21:
10. «Եվրոպա», 1848 թ., 30 մայիսի, թիվ 22:
11. «Եվրոպա», 1848 թ., 27 հունիսի, թիվ 26:
12. «Եվրոպա», 1848 թ., 18 հուլիսի, թիվ 29:
13. «Եվրոպա»,1848 թ., 25 հուլիսի, թիվ 30:
14. «Եվրոպա», 1849 թ., 8 մայիսի, թիվ 19:
15. «Եվրոպա», 1850 թ., 27 հունիսի, թիվ 28:
16. «Եվրոպա», 1851թ., 21 հունվարի, թիվ 3:

Отклик газеты «Европа» о Датско-Прусской войне 1848-1850 гг.

Айрапетян Мелине
ВГУ, История, магистратура, 2-й курс
Научный руководитель:
доктор исторических наук, профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *Шлезвиг-Гольштейн, конституция, король, Прусия, конфликт, военные действия, герцогства, прекращение огня*

Европейские революции оказали более непосредственное влияние на Скандинавию, чем любое другое движение в Европе со времён Реформации. На страницах армянской прессы с самого начала нашли отражение как армянские, так и иностранные политические, культурные и исторические события. Газета «Европа», издаваемая Конгрегацией Мхитаристов в Вене, на основе европейских изданий и телеграфных новостей отреагировала на кризис вокруг герцогства Шлезвиг-Гольштейн и его последствия, проявив свою беспристрастную позицию.

The Response of "Europe" Daily about the Danish-Prussian War of 1848-1850

Hayrapetyan Meline
VSU, History, MA, 2nd year
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: *Schleswig-Holstein, constitution, king, Prussia, conflict, military action, duchies, ceasefire*

The European revolutions had a more direct influence on Scandinavia than any other movement in Europe since the Reformation. From the very beginning, both Armenian and foreign political, cultural, and historical events were covered in the Armenian press. The daily "*Europe*", published by the Congregation of Mechitarists in Vienna, responded to the crisis surrounding the Duchy of Schleswig-Holstein and its consequences, reflecting its impartial stance based on European publications and telegraphic news.

1967 թ. արաբա-իսրայելական «Վեցօրյա» պատերազմի արձագանքը «Ալիք» օրաթերթում

Հայրապետյան Մելինե
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. *Միջին Արևելք, ՄԱԿ, կոնֆլիկտ, Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, պատերազմ,զինադադար*

1948 թ. և 1956 թ. արաբա-իսրայելական պատերազմները այդպես էլ չլուծեցին հարևան ժողովուրդների միջև առկա հակամարտությունը: Արդյունքում 1967 թ. այն կրկին թեժացավ և հանգեցրեց կարճատև պատերազմի, որն ունեցավ աշխարհաքաղաքական կարևոր հետևանքներ: Թեհրանում գործող «Ալիք» օրաթերթը մանրամասնորեն ուսումնասիրել և օբյեկտիվորեն իր ընթերցողին է ներկայացրել կարևոր այս իրադարձությունը:

Մերձավոր Արևելքի սրացող կոնֆլիկտի մասին պարբերաբար ահազանգում է թերթը: Նա մասնավորապես գրում է, որ արաբական երկրների համար այժմ «դրված է Պաղեստինի ազատագրութեան հարցը» [4, 1]: Թերթը նաև պատմում է, որ Պաղեստինի ազատագրության կազմակերպության «ղեկավար Շուքեյրին» Ամանում հայտարարել է, թե առաջին գնդակը ինքը պիտի արձակի: «Կամ մենք պիտի լինենք կամ Իսրայելը, միջին ճամբայ չկայ»,– մեջբերում է թերթն ու հավելում, որ Հորդանանի «ամբոխը» բղավում է՝ «Պատերա՛զմ, մա՛հ Իսրայելին» [7, 1]:

Թերթի հաղորդումը հավաստի է: 1964 թ. մերձավորարևելյան թատերաբեմում հայտնված «Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը» (ՊԱԿ) իր ուրույն ապակայունացնող դերակատարությունն ունեցավ տարածաշրջանում [1, 250]:

Թերթը մեջբերում է Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդեր Նասերի մամուլի ասուլիսի կարևոր շեշտադրումները: Ըստ դրանց՝ Նասերը արձանագրել է, որ Տիրանի նեղուցը և Աքաբայի ծոցը պատկանում են Եգիպտոսին, և այժմ գոյություն ունի մեկ խնդիր՝ ազատագրել Պաղեստինը: Նասերը նաև մի հատկանշական հայտարարություն է արել, թե Աստծո կամքով Միջին Արևելքում իրավիճակը վերադարձել է 1956 թ.-ից առաջ եղած գոյավիճակին, ուստի «կ՛օգնէ նաև վերադառնալու 1948-ից առաջ եղած կացութեան», երբ Իսրայել պետություն գոյություն չուներ: Եգիպտոսի նախագահը նշում է, որ կորոշվեն պայքարի ժամանակն ու վայրը, որի արդյունքում խոստանում է «Ջնջել Իսրայէլի անկախութիւնը»: Թերթը եզրակացնում է, որ «մթագնում է Միջին Արևելքի քաղաքական կլիման, արաբները պատրաստվում են սրբազան պատերազմի» [4, 1]:

Թերթը իրավացի է: Արաբական աշխարհում գոյություն ունեցող հակասությունների պայմաններում պաղեստինցիների հարցը շահարկման առարկա դարձավ արաբական երկրների ղեկավարների համար, որի շնորհիվ վերջիններս

փորձում էին ամրապնդել իրենց դիրքերը տարածաշրջանում: Բացասական գաղափարախոսության մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում Պաղեստինի ազատագրմանն ու ազգային-ազատագրական պայքարին վերաբերող հարցերը, որոնց հաջող իրականացումը հնարավոր էր միայն արաբական աշխարհի միասնականության պայմաններում [1, 251]:

Թերթը մանրամասնում է կոնֆլիկտի շուրջ տիրող միջազգային դրությունը: Ըստ դրա՝ «ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը նիստեր է գումարում, առանց կարենալու լուծման ելք գտնել», Վաշինգտոնը և Լոնդոնը կիսով չափ լքել են Իսրայելին: Խորհրդային Միությունը շարունակում է պաշտպանել արաբական երկրներին [4, 3]: Գալով Խորհրդային Միության բռնած դիրքին՝ թերթի վերլուծականը գրում է, թե նրա նպատակն է Միջին Արևելքում երկրորդ ճակատ բացել՝ թեթևացնելու համար ամերիկյան ճնշումները Հյուսիսային Վիետնամի վրա և ջնջել ԱՄՆ-ի քաղաքական ու տնտեսական ազդեցությունը Միջին Արևելքում: Թերթը եզրակացնում է. «Համբերութիւնը հատուած Իսրայելը կարող է նետուել պատերազմի մեջ, ապաւինելով իր սեփական ուժերին» [5, 1]:

Թերթը գրում է Սիրիա-Իսրայել բախումների մասին՝ նշելով կողմերի կորուստների տվյալները: Ըստ նրա տվյալների՝ իսրայելյան 5 օդանավեր ու 2 տանկեր վնասազերծվել են. «Այս բախումների ընթացքին սպանուել են 70 իսրայէլցիներ» [3, 3]:

Թերթը չի սխալվում: 1967 թ. նախօրեին իրավիճակը սիրիա-իսրայելյան սահմանին կտրուկ վատթարացավ, ինչը, ըստ որոշ ուսումնասիրողների, պայմանավորված էր Սիրիայի ներքաղաքական անկայուն վիճակով: Բախումները նոր թափ ստացան ապրիլի 7-ից հետո, երբ խփվեց վեց սիրիական օդանավ: 1967 թ. ապրիլի 9-ից մինչև մայիսի 8-ը ընկած ժամանակահատվածում 14 ռազմական միջադեպ արձանագրվեց սիրիա-իսրայելյան սահմանի վրա [1, 252]:

Թերթը պատմում է Բրիտանիայի վարչապետ Ուիլսոնի հայտարարության մասին, ըստ որի՝ Եգիպտոսը փակել է Տիրանի նեղուցը և Աքաբայի ծոցը: Բրիտանիայի վարչապետը շեշտում է, որ միջազգային ջրերը բաց պիտի լինեն բոլոր ազգերի «նաւագնացութեան համար»: Ի պատասխան Նասերը սպառնացել է դիմել «թնդանոթի դիւանագիտութեան», ապա հավելել, որ Սուեզի ջրանցքը կփակվի բոլոր այն երկրների առաջ, որոնք կմիջամտեն արաբա-իսրայելական հակամարտությանը [6, 1]:

Թերթի հաղորդումը հավաստի է. Եգիպտոսի՝ Սինայի թերակղզում զորքերի կենտրոնացումն ու մայիսի 22-ին Տիրանի նեղուցի փակումը հանգեցրին իրավիճակի կտրուկ սրմանը՝ պատրվակ դառնալով պատերազմ սկսելու համար:

Ըստ թերթի՝ Նասերը արդեն շահել է պայքարի առաջին փուլում՝ Տիրանի նեղուցն ու Աքաբայի ծոցը փակելով և իսրայելական Էյլաթ նավահանգիստը շրջափակելով: Բանն այն է, որ ԱՄՆ-ը հայտարարել էր, թե Էյլաթի շրջափակումը չի հանդուրժի, Իորայելն իր հերթին զգուշացրել էր, որ Էյլաթի շրջափակումը կդիտարկվի որպես պատերազմի հրահրում: Բայց Նասերը հաշվի չնստեց այս հայտարարությունների հետ, ուստի, ըստ թերթի, հաղթեց պայքարի առաջին

փուլում և այժմ անցել է երկրորդ փուլին՝ Պաղեստինի ազատագրմանը և «իմպերիալիստների ստեղծած» հրեական պետությունը «լուծարքի ենթարկելուն»: Նասերը նաև հայտարարել է, որ իրենք պայքարում են ոչ միայն Իսրայելի, այլև նրա հովանավոր արևմտականների դեմ, որոնք «արհամարհում են արաբներին»: Թերթը արձանագրում է, որ Նասերի հեղինակությունը բարձրացել է արաբական ժողովուրդների մեջ «սկսած Ատլանտեան օվկիանոսից մինչև Պարսից ծոց» [5, 1]:

Պատերազմի նախօրյակին թերթը Ատրուշանյանի մակագրությամբ տպագրում է «Ո՞ւմ ձեռքում է գտնվում խաղաղութեան բանալին» վերնագրով մի վերլուծական, որտեղ նշում է, որ Միջին Արևելքի տագնապը շարունակում է ծանրանալ: Կողմերը մի կողմից զինվորական պատրաստություններ են տեսնում, մյուս կողմից դիվանագիտական ջանքեր գործադրում: Նույն համարում թերթը մանրամասնում է Իսրայելում տիրող դրությունը: Մասնավորապես գրում է, որ թեև Իսրայելում սպասողական վիճակ է միջազգային դիվանագիտության արդյունքների հարցում, սակայն միևնույն ժամանակ երկրում հայտարարվել է զորակոչ զենքի ընդունակ բոլոր քաղաքացիների համար «մինչևիսկ աղջիկները զինուորական համազգեստ են հագել», երիտասարդները խրամատներ են փորում քաղաքներում, կարգի են բերվում ՀՕՊ ապաստարանները: Մյուս կողմից, ըստ թերթի տվյալների, Իսրայելը մեծ հույսեր չի կապում ԱՄՆ-ի հետ, մասնավորապես երկրի ԱԳՆ-ն Եվրոպա ու ԱՄՆ կատարած այցերից հետո հայտարարել է «Մենք մենակ կը հակադարձենք՝ բացելու համար Աքաբայի շրջափակումը»: Թերթը հայտնում է նաև, որ Իսրայելում կազմվել է «պատերազմական կառավարութիւն», որի մեջ են մտել 1956 թ-ի պատերազմի զորավար Դայանը՝ որպես պաշտպանության նախարար և Բեգինը՝ իբրև «խորհրդական» [5, 3]:

Թերթի տեղեկատվությունը հավաստի է: 1967 թ. «վեցօրյա» պատերազմի հենց առաջին օրերին երկրի պաշտպանության նախարարի պաշտոնը ստանձնեց Մոշե Դայանը, ով 1948 թ. արաբա-իսրայելական պատերազմում Երուսաղեմի ճակատի հրամանատարն էր, իսկ 1956 թ. Սուեզի ճգնաժամի ընթացքում զբաղեցրել էր Իսրայելի պաշտպանության գլխավոր շտաբի հրամանատարի պաշտոնը: Միևնույն ժամանակ երկրի թվով 6-րդ վարչապետը դարձավ Լիկուդ կուսակցության հիմնադիր Մենահեմ Բեգինը:

Հունիսի 5-ի համարում թերթը գլխագրերով հայտնում է, որ ոչ անսպասելիորեն սկսվեց արաբա-իսրայելական պատերազմը. «Իսրայելի ռմբաձիգ օդանաւերը ռմակոծել են Գահիրեն և Եգիպտական այլ քաղաքներ», ինչպես նաև Դամասկոսը, Ամանը, Աքաբայի ծոցն ու Սուեզի ջրանցքը. Իսրայելի զինյալ ուժերը բոլոր ճակատներում առաջ են ընթանում: Թերթը նշում է, որ պատերազմի մասին լուրերը հակասական են և անորոշ: «Դեռ պարզ չէ՝ ով է գործել առաջին յարձակումը»: Հղում անելով անգլիական BBC-ին՝ թերթը հայտնում է, որ պատերազմի առաջին օրը «զգետնվել են 10 եգիպտական օդանաւեր»: Բացի այդ՝ իսրայելյան ուժերը Երուսաղեմի շրջանում «յարձակման են ենթարկել յորդանանեան ուժերին»: Հղում անելով Ռոյթըր գործակալությանը՝ թերթը հայտնում է, որ իսրայելյան ուժերը արագ ընթանում են դեպի իրենց նպատակակետը և արդեն գրավել են Ալ-Արէյշը,

որ գտնվում է սահմանից 65 կմ վրա: «Սպառուեց համբերութեան, սպասողականութեան և խոհեմութեան ժամանակաշրջանը»,– հոդվածն ավարտում է թերթը՝ հավելելով, որ հենց առաջին օրը «Իսրայելի բանակը քայքայել է նասերական Եգիպտոսը» [7, 1]:

Տեղեկատվությունը հավաստի է: Հունիսի 5-ին՝ Իսրայելի ժամանակով ժամը 7:45-ին, քաղաքացիական պաշտպանության ահազանգը Իսրայելի ամբողջ տարածքով ազդարարեց պատերազմի սկզբի մասին: Իսրայելի ռազմաօդային ուժերը սկսեցին «Ֆոկուս» գործողությունը: Մոտ 200 օդանավ սկսեցին զանգվածային գրոհը Եգիպտոսի տարածքում: Եգիպտական պաշտպանական համակարգը շատ թույլ էր, Եգիպտոսը չուներ համապատասխան հակաօդային պաշտպանության համակարգ, որպեսզի դիմագրավեր Իսրայելի ռազմաօդային հարձակումներին: Իսրայելի օդանավերի մեծ մասը գրոհի անցան Միջերկրական ծովի վրայով՝ թռչելով շատ ցածր, որպեսզի եգիպտական ռադիոլոկացիոն կայանները չորսան նրանց: Մյուս մասը թռավ Կարմիր ծովի վրայով [2, 124]:

Հունիսի 7-ի համարում թերթը գրում է, որ օրը վճռական է եղել Միջին Արևելքի ռազմաբեմում: Մասնավորապես իսրայելյան ուժերը Սինայում հասել են Սուեզի ջրանցքի արևելյան ափը և սպառնում են Պորտ-Սայիդին: Եգիպտական բարոյալքված բանակը նահանջում է՝ պաշտպանելու մայրաքաղաքը [7, 3]:

Հաղորդումը ճշմարիտ է՝ հունիսի 7-ին և 8-ին իսրայելյան ուժերը նահանջի մատնեցին եգիպտական զորքին և ընդհուպ մոտեցան Սուեզին: Այդ օրերից արդեն Սինան ամբողջությամբ գտնվում էր իսրայելցիների հսկողության ներքո [2, 131]:

Թերթը հունիսի 10-ի համարում հայտնում է, որ ՄԱԿ Անվտանգության խորհուրդը կարգադրել է հակամարտող կողմերին վայր դնել զենքն ու վերադառնալ բանակցային սեղանի շուրջ [1, 10]: Ատրուշանյանը իր ավանդական վերլուծականում գրում է, թե Իսրայելը կհամաձայնվի դադարեցնել պատերազմը պայմանով, որ նավերը ազատ ելումուտ ունենան Աքաբայի ծոցում և Տիրանի նեղուցում և երաշխիքներ, որ ՄԱԿ-ի ուժերը վերադառնալու են իսրայելա-եգիպտական սահմանները: Վերլուծաբանը հարց է առաջադրում՝ իսկ կհամաձայնվի արդյոք Նասերը այս պայմաններին, ով «Իսրայէլի ջնջման համար մագնիսացրել էր արաբական ժողովուրդը» [8, 1]:

Հաջորդ համարում թերթը տեղեկացնում է, որ Իսրայելի ՊՆ-ն հայտարարել է, թե Աքաբայի ծոցն ու Տիրանի նեղուցը բացված են, ուստի Իսրայելը հաշտության ձեռք է մեկնում հարևաններին: Արաբական երկրները, սակայն, հայտարարում են, որ չեն դադարի պայքարել Պաղեստինի ազատագրության համար: Իսկ ավելի ուշ հաղորդում է, որ Եգիպտոսը ծնկի է գալիս և ընդունում ՄԱԿ-ի զինադադարի որոշումը: Թունիսը և Մարոկկոն ետ են կանչում իրենց օժանդակ ուժերը Եգիպտոսից: Իսկ Ալժիրը վրդովված է, որ Նասերը ընդունել է զինադադարը [3, 10]:

Թերթի տեղեկատվությունը հավաստի է. 1967 թ. հունիսի 10-ին կողմերի միջև ձեռք բերվեց զինադադարի համաձայնություն՝ խնդրի վերջնական լուծումը թողնվեց հետագա բանակցություններին [2, 265]:

Պատերազմի ավարտին թերթը հայտնում է, որ Իսրայելի դրոշը ծածանվում է Հորդանան գետից մինչև Սուեզի ջրանցք: Թերթը հավելում է, որ Իսրայելը վերահսկողության տակ է վերցրել մի տարածք, որը 3,5 անգամ գերազանցում է այդ երկրի նախապատերազմյան տարածքը [3, 11]:

Տեղեկատվությունը միանգամայն հավաստի է: 1967 թ. հունիսի 5-ին սկսված և վեց օր տևած արաբա-իսրայելյան պատերազմի ավարտին Իսրայելին հաջողվեց գրավել արաբական երկրներին պատկանող ընդարձակ տարածքներ՝ մոտ 60 հազար քառ. կմ: Իսրայելը զավթեց Սինայի թերակղզին՝ դուրս գալով Սուեզի ջրանցքի արևելյան ափը, Շարմ ալ-Շեյխը, Հորդանանի ամբողջ արևմտյան մասը մինչև Հորդանան գետը, Երուսաղեմ, Բեթղեհեմ ու Նաբլուս քաղաքները, ինչպես նաև Սիրիային պատկանող Ալ-Կունեյտրան ու Գոլանի բարձունքները՝ կանգ առնելով Դամասկոսից ընդամենը 40 կմ հեռավորության վրա [1, 253]:

Թերթը մանրամասնում է նաև իսրայելական կողմի կորուստների մասին: Ըստ նրա տվյալների՝ «սպանված են 679 իսրայէլցի», որից 250-ը՝ Սինայում, 100 հոգի՝ Գազայի շրջանում, 170-ը՝ Երուսաղեմում և այլուր: Պատերազմն արժեցել է 100 միլիոն դոլլար [13, 3]:

Ըստ Իսրայելի ԱԳՆ տվյալների՝ Իսրայելն այս պատերազմում կորցրել է 779 զինծառայող: Նրանցից 338-ը զոհվել են Սինայի ճակատում, 300-ը՝ Հորդանանի ճակատում (այդ թվում՝ 183-ը՝ Երուսաղեմի համար ճակատամարտում), իսկ 141-ը՝ սիրիական ճակատում:

Թերթը տեղեկացնում է, որ պատերազմի ավարտից հետո շարունակվեցին դիվանագիտական պատերազմները ընդդեմ Իսրայելի: Մասնավորապես, ԽՍՀՄ-ը, Չեխոսլովակիան, Լեհաստանը և Հունգարիան խզեցին դիվանագիտական հարաբերությունները Իսրայելի հետ [12, 3]:

Տեղեկատվությունը հավաստի է: Հունիսի 10-ին ԽՍՀՄ-ը, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Չեխոսլովակիան և Հարավսլավիան խզում են դիվանագիտական կապերը Իսրայելի հետ (Ռումինիան ձեռնպահ մնաց նման քայլից, իսկ ԳԴՀ-ն դիվանագիտական հարաբերություններ չուներ այդ երկրի հետ):

Անդրադառնալով Եգիպտոսի ներքաղաքական դրությանը՝ թերթը պատմում է, որ «Մի քանի օրւայ մեջ ծերացած Նասերը արցունքոտ աչքերով ռադիոճառի միջոցով ներկայացնում է իր հրաժարականը», թերթը մեջբերում է Նասերի ճառը, որում նա հայտարարում է, թե ինքը մեղավոր չէ պարտության համար, բայց կրում է դրա պատասխանատվությունը և հրաժարվում պաշտոնից [10,3]: Հաջորդ համարում թերթը հայտնում է, որ ժողովուրդը և խորհրդարանը խնդրել են Նասերին վերանայել իր հրաժարականը, իսկ Զաքարիա Մոհիիդը, ում Նասերը մտադիր էր հանձնել աթոռը, չի ցանկանում վերցնել այն: Ավելի ուշ թերթը նաև հայտնում է, որ Կահիրեում կրակոցներ են հնչում, որոնք, ըստ նրա, հավանաբար նասերականների և հականասերականների միջև բախումների արդյունք են: Ստեղծված անկայուն վիճակում Նասերը «կրկին թելեվիզիոնի առջև է դուրս գալիս և յետ վերցնում իր հրաժարականը» [11, 3]:

Տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը: Հունիսի 9-ին

նախագահ Նասերը ժողովրդին ուղղված իր ուղերձում հայտարարեց իր հրաժարականի մասին և մեղադրեց արևմտյան երկրներին Իսրայելի կողմից գաղտնի կռվելու մեջ: Բայց նրան աջակցող զանգվածային ցույցերից հետո Նասերը մնաց իր պաշտոնում [2, 215]:

Այսպես, զինադադարը փաստորեն վերջ չդրեց տասնամյակներ ձգվող հակամարտությանը, այլ այն մտցրեց մի նոր փուլ: Դրա ապացույցն է պատերազմի ավարտին Իսրայելի պաշտպանության նախարար Դայանի հայտարարությունը, որ մեջբերում է թերթը: Նախարարը, մասնավորապես, հայտարարում է, թե Իսրայելը «գրաւման տակ չպիտի պահէ արաբական հողերը՝ բացառութեամբ Երուսաղեմի, որ հրեական պատմական մայրաքաղաքն է» [1, 16]: Թերթը եզրակացնում է, թե Միջին Արևելքի հետպատերազմյան «խաղաղութիւնը տակաւին լուծված չէ», և ՄԱԿ-ը իր գոյության պատմութեան մեջ առաջին անգամ «կանգնած է մի շատ աւելի լուրջ, նուրբ ու վտանգաւոր հարցի առջև» [3, 14]:

Թերթի հաղորդումը հավաստի է: Երուսաղեմի հարցում Իսրայելը անզիջում դիրքորոշում որդեգրեց և ի վերջո 1980 թ. նոյեմբերի 30-ին ընդունեց Երուսաղեմի օրենքը, որով Արևելյան Երուսաղեմը հռչակվեց Իսրայելի ինքնիշխան տարածք, իսկ ամբողջ քաղաքը՝ նրա «մեկ և անբաժան մայրաքաղաքը»:

Ուշագրավ է, որ ակտիվ ռազմական գործողությունների ավարտով չի մարում «Ալիք»-ի հետաքրքրությունը Մերձավոր Արևելքի խնդրի շուրջ: Նա հետևողականորեն լուսաբանում է նաև պատերազմին հաջորդած դիվանագիտական գործընթացները՝ դրանք ուղեկցելով տարատեսակ վերլուծություններով: Այսպես, օգոստոսյան համարներից մեկում թերթը պատմում է, որ Խարտումում տեղի է ունեցել արաբ արտաքին գործերի նախարարների համագումար: Թերթը գրում է, որ Խարտումի «դիւանագիտական շրջանակները» չեն կարծում, թե համագումարում կընդունվեն կոշտ որոշումներ ընդդեմ «մեծ կառավարութիւնների»՝ օրինակ ԱՄՆ-ի կամ Մեծ Բրիտանիայի: Սակայն նրանք գտնում են, որ համագումարը կօգնի լուծել ներքին մի շարք տարաձայնություններ, և կհստակեցվեն նրանց դիրքորոշումները [15, 3]:

Տեղեկությունը ճշգրիտ է: 1967 թ. օգոստոսի 26-ին Խարտումում կայացավ արաբական 13 երկրների արտգործնախարարների խորհրդակցություն, որտեղ հաստատվեցին Իսրայելի նկատմամբ արաբական երկրների քաղաքականության՝ 3 «ոչ»-երից բաղկացած հիմնադրույթները՝ «ոչ» Իսրայելի հետ խաղաղությանը, «ոչ» Իսրայելի ճանաչմանն ու «ոչ» Իսրայելի հետ բանակցություններին: Խորհրդակցության ընթացքում ճանաչվեց Պաղեստինի ժողովրդի՝ անկախ պետություն ստեղծելու իրավունքը [1, 255]:

Նոյեմբերի 22-ի համարում թերթը տեղեկացնում է, որ ՄԱԿ-ի «Ապահովութեան խորհուրդը» քննարկում է Միջին Արևելքի խաղաղության վերաբերյալ «ամերիկյան, բրիտանական և աֆրոասիական երկրների առաջարկ-բանաձևերը»: Թերթը մանրամասնում է այդ բանաձևերի բովանդակությունը, որը նախատեսում է. 1. Իսրայելը պիտի «պարպէ» գրաված տարածքները, 2. արաբները պիտի վերջ տան արաբա-իսրայելական պատերազմական վիճակին: Ինչպես նաև պիտի

երաշխավորվի միջազգային ջրերում ազատ երթևեկություն, և լուծվի արաբ գաղթականության խնդիրը: Թերթի խոսքերով, ըստ «կիսապաշտոնական» աղբյուրների, Իսրայելի կառավարությունը կարծում է, որ կարելի է «հարմարվել» բրիտանական բանաձևին: Հակառակ սրան՝ Սիրիան մերժողական դիրք է գրավել [1, 17]:

Թերթի տեղեկատվությունը հավաստի է: 1967 թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց հ. 242 հայտնի բանաձևը, որը, «անթույլատրելի համարելով պատերազմի միջոցով տարածքների գրավումը», կոչ արեց Իսրայելին «դուրս բերել զինված ուժերը գրավված տարածքներից» և կարևորեց «արդար և տևական խաղաղության հաստատումն ու տարածաշրջանի բոլոր պետությունների համար անվտանգության պայմանների ստեղծումը»: Հ. 242 բանաձևը նաև կողմերին կոչ էր անում հարգել տարածաշրջանի բոլոր երկրների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, ինչպես նաև նրանց՝ խաղաղ պայմաններում, անվտանգ ու միջազգայնորեն ճանաչված սահմաններում ապրելու իրավունքը [1, 256]:

Ամփոփելով՝ թերթը գրում է, որ «Տասնմեկ տարուայ ընթացքին երկրորդ անգամը լինելով», Իսրայելը հաղթականորեն կարողացավ ապահովել իր ապրելու իրավունքը, ապա եզրակացնում՝ արաբական ժողովուրդները «նաստացած վիճակի մեջ են» զգում իրենց և պիտի պատրաստվեն «վրէժխնդրութեան համար» [12, 3]:

Այսպիսով, «Վեցօրյա» պատերազմը հիմնովին խախտեց Մերձավոր Արևելքում ուժերի միջև հաստատված ռազմավարական հավասարակշռությունը՝ փոխելով տարածաշրջանի ընդհանուր քաղաքական պատկերը: Միջազգային հանրության ընդունած կարգավորման բանաձևն այդպես էլ մնաց չիրականացված, իսկ պատերազմի հետևանքներն արաբական աշխարհը «մարսում է» մինչ օրս: Պարսկահայ «Ալիք» օրաթերթը օպերատիվ կերպով իր ընթերցողին ներկայացրել է արտաքին աշխարհում, այդ թվում Մերձավոր Արևելքում կատարվող աշխարհաքաղաքական իրողությունները՝ դրսևորելով բացարձակ անկողմնակալ դիրքորոշում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2019:
2. Черчилль Р. С. Шестидневная война, Иерусалим, 1989.
3. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 9 ապրիլի, թիվ 73:
4. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 3 հունիսի, թիվ 114:
5. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 4 հունիսի, թիվ 115:
6. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 5 հունիսի, թիվ 116:
7. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 6 հունիսի, թիվ 117:
8. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 7 հունիսի, թիվ 118:
9. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 8 հունիսի, թիվ 119:
10. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 10 հունիսի, թիվ 120:

11. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 11 հունիսի, թիվ 121:
12. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 14 հունիսի, թիվ 124:
13. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 19 հունիսի, թիվ 128:
14. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 22 հունիսի, թիվ 131:
15. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 29 օգոստոսի, թիվ 188
16. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 1 նոյեմբերի, թիվ 242:
17. «Ալիք», Թեհրան, 1967 թ., 22 նոյեմբերի, թիվ 259:

Отзывы на арабо-израильскую «Шестидневную» войну в газете «Алик»

Айрапетян Мелине
ВГУ, История, магистратура, 2-й
Научный руководитель:
доктор исторических наук, профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *Средний восток, Организа́ция Объединённых На́ций, конфликт, Египет, Израиль, Иорда́ния, война, перемирие*

Арабо-израильские войны 1948 и 1956 годов не разрешили существующие проблемы между народами. В результате, в 1967 году конфликт вновь вспыхнул и привел к кратковременной войне, которая имела важные геополитические последствия. Газета *Алик*, издававшаяся в Тегеране, исследовала и объективно представила это важное событие своим читателям.

The Reaction of the Arab-Israeli "Six-Day" War in the Daily "Alik"

Hayrapetyan Meline
VSU, History, MA, 2nd year
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: *Middle East, United Nations, conflict, Egypt, Israel, Jordan, war, truce*

The Arab-Israeli wars of 1948 and 1956 did not resolve the existing issues between the nations. As a result, in 1967, the conflict flared up again and led to a short war with significant geopolitical consequences. The daily *Alik*, published in Tehran, researched and objectively presented this important event to its readers.

Բիլդերբերգի ակումբը և նավթային քաղաքականությունը Մերձավոր արևելքում

Հարությունյան Լենա
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆ. Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. *Բիլդերբերգ, գաղտնի կազմակերպություն, համաշխարհային կառավարություն, նոր համաշխարհային կարգ, Մերձավոր արևելք, նավթային գործոն*

Ժամանակակից աշխարհում համաշխարհային տիրապետության հասնելու համար օգտագործված ուժային մոտեցումները մասամբ կորցրել են իրենց նշանակությունը: Այժմ աշխարհի կառավարման գլոբալ խնդիրները լուծվում են նաև մի խումբ համախոհների օգնությամբ, ովքեր ազդեցիկ դիրքեր են զբաղեցնում համաշխարհային հիերարխիայում: Այդ մարդիկ ապահովված են հսկայական կապիտալով, թույլ են տալիս օգտագործել ֆինանսական, տնտեսական, քաղաքական, օրենսդրական, գիտական և տեխնոլոգիական, լրատվական և այլ լծակներ: Այս նպատակին հասնելու համար հաճախ օգտագործվում են նաև տարածաշրջանային վերահսկվող ռազմական հակամարտությունները: Հակամարտությունների վերահսկողությունը հաճախ իրականացվում է այնպիսի կառույցների կողմից, ինչպիսիք են Հռոմի ակումբը, Կլոր սեղանը, Եռակողմ հանձնաժողովը, 300-ի կոմիտեն, Բիլդերբերգի ակումբը և այլն:

Այդ ուղղությամբ եռանդուն գործունեություն է ծավալում հատկապես Բիլդերբերգի ակումբը: Այս ակումբը համաշխարհային գաղտնի կազմակերպություն է, որը միտումնավոր խուսափում է հանրայնությունից: Ակումբի կոնֆերանսների նիստերը միշտ եղել և մնում են հանրությանը չբացահայտված:

Բիլդերբերգի ակումբի ստեղծման նպատակների և գործունեության մասին պատմաբաններն իրենց տրամադրության տակ ունեն վաղ հանդիպումների վերաբերյալ գրառումների գանձարան, որը գտնվում է Հոլանդիայում՝ Ամստերդամի ազգային արխիվում և կառավարվում է հիսուն տարվա մուտքի կանոնով: Այն նյութեր է ընդգրկում սկսած 1952 թվականից, երբ ստեղծվեց ամերիկացիների և եվրոպացիների միջև էլիտար քննարկումների ֆորումի նախագիծը: Այդ գրառումներն առանցքային փաստաթղթեր են ավելացնում այն սակավ ապացույցներին, որոնք որոշ ժամանակ հասանելի են եղել եվրոպական և ամերիկյան կառավարական արխիվներում և խմբի նախկին անդամների անձնական փաստաթղթերում [11, 428]:

Ակումբի պաշտոնական կայքում անդրադարձ է կատարվում հանդիպման թեմաներին, բայց տեղեկատվությունը ներկայացված է հակիրճ [13]:

Ակումբի առաջին հանդիպումը տեղի է ունեցել 1954 թվականի մայիսի 29-31-

ը, հոլանդական Օստերբեկ քաղաքում՝ Բիլդերբերգ հյուրանոցում: Այստեղից էլ առաջացել է «Բիլդերբերգյան ակումբ» անվանումը: Հանդիպումները նախաձեռնել է Նիդերլանդական արքայազն Բերնհարդ Լիպպե Բիստերֆելդցին: Կազմակերպության ստեղծման նախաձեռնողներից և հիմնադիրներից է հանդիսանում ճիզվիտ քահանա Ջոզեֆ Ռեթինգերը, ով բարձրագույն աստիճանի մասոն էր [2, 145]:

Ակումբը հայտնի է նաև որպես Բիլդերբերգի խումբ և Բիլդերբերգի համաժողով, որը ոչ պաշտոնական, ամենամյա համաժողով է՝ բաղկացած 130-40 մասնակիցներից: Մասնակիցները հիմնականում ազդեցիկ մարդիկ են՝ քաղաքագետներ, բիզնեսի, բանկային գործի, համաշխարհային զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Համաժողովին կարելի է մասնակցել միայն անձնական հրավերի դեպքում:

Ակումբի ստեղծման կապակցությամբ առաջին հանդիպման պաշտոնական հայտարարություններում ասված է. «Բիլդերբերգի կոնֆերանսը ստեղծվել է Արևմտյան Եվրոպայի տասներկու երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների մի խումբ բարի կամքի տեր մարդկանց կողմից: Դրա ընդհանուր նպատակն է ուսումնասիրել Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի հարաբերությունները, որպեսզի կարծիքների ազատ և անկեղծ փոխանակման միջոցով հիմքեր դրվեն եվրոպացիների և ամերիկացիների միջև փոխըմբռնման բարելավման համար՝ ընդհանուր մտահոգության խնդիրների շուրջ» [7;7]:

Ներկայումս այս ակումբը միավորում է 383 մարդ, որից 128-ը ամերիկացի են, մյուսները եվրոպացիներ և ասիացիներ են, հիմնականում ճապոնացիներ, հարավկորեացիներ ու սինգապուրցիներ: Ակումբի մշտական անդամներն են ԱՄՆ նախկին պետքարտուղար (1973-1977), ազգային անվտանգության գծով ԱՄՆ նախագահի խորհրդական (1969-1975), Խաղաղության Նոբելյան մրցանակակիր (1973) Հենրի Քիսինջերը, ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դոնալդ Ռամսֆելդը, ամերիկյան պահուստային համակարգի կառավարիչների խորհրդի նախկին նախագահ Ալան Գրինսպին, ամերիկյան քաղաքագետ Ռիչարդ Պերլը և համաշխարհային բանկի նախկին նախագահ, ամերիկյան քաղաքագետ Պոլ Վուլֆովիցը:

Ակումբը մեծ ազդեցություն է ունենում մի շարք տնտեսական, քաղաքական գործընթացներում, հատկապես գործուն մասնակցություն է ունենում տարածաշրջանային ռազմական հակամարտություններում արևմուտքի միջամտության հարցում: Բիլդերբերգի ակումբի գործունեության մասին փաստերի և տեղեկատվության ուսումնասիրությունը հուշում է, որ ակումբի անդամների նպատակն է հասնել ամբողջական վերահսկողության համաշխարհային քաղաքական և տնտեսական գործընթացների վրա: Նպատակը ԱՄՆ-ի հովանու ներքո «նոր աշխարհակարգի» ստեղծումն է: Բիլդերբերգի ակումբի հանդիպումներում ԱՄՆ մասնակիցների թվաքանակով առաջինն է, որն արտացոլում է այդ երկրի աշ-

խարհաքաղաքական գերիշխող դերը համաշխարհային քաղաքականությունում և ՆԱՏՕ-ում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո [12, 106]:

Բիլդերբերգի ակումբը գործուն մասնակցություն է ունենում 20-րդ դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքի հակամարտություններում, ինչն ուղղակիորեն կապված է արաբական նավթի հետ: Այն վերաճեց հակասությունների ճյուղավորված և բարդ համակարգի՝ սկսած հանքարդյունաբերությունից մինչև գաղափարախոսություն, ինչպես համաշխարհային, այնպես էլ՝ տարածաշրջանային առանձին երկրների մակարդակներով:

Մերձավոր Արևելքի հակամարտությունը, որը պատեց Պաղեստինը, Աֆղանստանը, Իրանը, Իրաքը, Սաուդյան Արաբիան և Քուվեյթը, անհրաժեշտ է այնպիսի իրավիճակ ստեղծելու համար, որը կհանգեցնի նավթի միջազգայնացմանը: Դիտարկենք 1973 թվականի հակամարտությունը և դրան հաջորդած նավթային էմբարգոն, որը հանգեցրեց նավթի գների 350 տոկոս աճին: ԱՄՆ պետքարտուղար Հենրի Քիսինջերը հայտարարել է, որ եթե նավթի մատակարարման հետ կապված խնդիրներ լինեն, ամերիկյան զորքերը կարող են մտնել Մերձավոր Արևելքի երկրներ [5, 200]:

Բիլդերբերգի ակումբը սկսեց պատերազմ, որը նավթի ու գազի համար էր: Այստեղից էլ Աֆղանստանում, Իրաքում, Սուդանում և Իրանում մղվող անվերջ պատերազմները, որոնք սպառնում են Սաուդյան Արաբիային, Արաբական Միացյալ Էմիրություններին, Սիրիային և ամերիկյան մայրցամաքում նավթային երկիր Վենեսուելային: Նրանք, ովքեր վերահսկում են նավթը, վերահսկում են աշխարհը: Եվ միասնական համաշխարհային կառավարությունն օգտագործում է բոլոր հնարավոր ռեսուրսները՝ մոլորակի վրա իշխանություն հաստատելու համար [5, 11]:

Բիլդերբերգի ակումբում 1973 թվականի քննարկումներից ակումբի անդամներին մեծապես անհանգստացրել են էներգետիկ ռեսուրսների հետ կապված խնդիրները.

Ակումբի 1973 թ. մայիսի 11-13-ը տեղի ունեցած հանդիպման մասին աշխատանքային փաստաթղթից տեղեկանում ենք, որ «Վերջին երկու-երեք տարիների ընթացքում էներգետիկ խնդիրների նկատմամբ նոր վերաբերմունք է ի հայտ եկել ինչպես ակումբի ներսում, այնպես էլ ամբողջ աշխարհում, որի պատճառներից մեկը նավթ արդյունահանող երկրների կողմից էներգետիկ օրինաչափությունների վրա ուղղակիորեն ազդելն է: Թեև էներգետիկ խնդիրները դեռևս սերտորեն կապված էին տեխնիկական և տնտեսական գործոնների հետ, դրանք ավելի ու ավելի էին գունավորվում քաղաքական նկատառումներով»: «Եվրոպական համայնքն արդեն ոչ պաշտոնապես հայտնել է, որ կողմ է էներգետիկ համագործակցությանը ԱՄՆ-ի և Ճապոնիայի հետ՝ հիմնականում ներկրող երկրների միջև մատակարարումների ապարդյուն սակարկությունները վերացնելու համար, հատկապես Մերձավոր Արևելքից» [8, 14]: Ընդգծվում է՝ «Եվրոպայի կողմից Մերձա-

վոր Արևելքում որոշակի քաղաքական ներկայության հաստատման անհրաժեշտությունը» [8; 17-18]:

Համաշխարհային նավթային պաշարների 12 %-ը գտնվում է Իրաքում [14]: Նավթն Իրաքից արտահանվող հիմնական ապրանքն ու եկամտի գլխավոր աղբյուրն է: Դեռևս 1972 թ. Իրաքում տեղի ունեցավ նավթային ընկերությունների ազգայնացում: Ազգայնացման արդյունքում բռնագրավվել են մի շարք նավթային ընկերություններ: Սա նշանավորեց Իրաքի և արևմտյան երկրների (ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա) առճակատման սկիզբը [1, 373]: 1973 թ. Բիլդերբերգի ակումբի անդամների կողմից պատրաստված «Փորձ» վերջաբանը հաստատում է, որ նավթը կօգտագործվի որպես վերահսկողության զենք [5, 201]:

Ֆ. Ուիլյամ Էնգդալն իր գրքում մանրամասնում է, թե ինչ է տեղի ունեցել Բիլդերբերգի հանդիպման ժամանակ՝ 1973 թվականին Շվեդիայում: Ամերիկացի ներկայացուցիչը ուրվագծել է ՕՊԵԿ-ի երկրների (Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) նավթի գների 400 %-ով անխուսափելի բարձրացման սցենարը: Բիլդերբերգը չի կանխել նավթային ցնցումը, փոխարենը նա ծրագրել էր, թե ինչպես տնօրինել մեգա շահույթը: Հենրի Քիսինջերը դա անվանեց «նավթադոլարային հոսքերի օգտագործում»: Բիլդերբերգի ակումբի այս հանդիպմանը մասնակցել են բոլոր ազդեցիկ մարդիկ՝ խոշոր նավթային ընկերությունները և առաջատար բանկերը [6, 167-170]:

Միանգամայն հստակ էր, որ կոնցեսիաների և նավթապաշարների շահագործման կիսագաղութային մեթոդներն իրենց սպառել են: Ուստի այլ մեթոդներ են կիրառվում Իրաք ներխուժելու համար:

1991 թ. հունիսի 6-9-ը Բիլդերբերգյան հանդիպման ժամանակ ակումբի քննարկումների առարկա է դարձել «Իրաքյան սպառնալիքի» հարցը [9, 33-51]: Ակումբն իրականացնում էր նաև հակաիրաքյան քարոզչություն, ինչի արդյունքում ամերիկացիների մեծամասնությունն, ովքեր նախկինում երբևէ չէին խոսել Սադամ Հուսեյնի մասին և անորոշ գիտեին, որ Իրաքը գտնվում է Մերձավոր Արևելքում, վերածեց մարդկանց, ովքեր պահանջում էին ոչնչացնել Իրաքը [4, 244]: Դեռևս 1957 թ. Բիլդերբերգյան հանդիպման ժամանակ ստեղծվում է «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ», որի «սև քարոզչությունն» ու տեղեկատվությունը շրջանառվում է համաշխարհային մամուլով, հատկապես «իրադարձությունների սցենարները», որոնց նպատակներից մեկն էր նսեմացնել Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնին [2, 196]:

1991 թվականի Ծոցի պատերազմից հետո ԱՄՆ նախագահ Ջ. Բուշի վարչակազմը քայլեր էր ձեռնարկում Իրաքում Սադդամ Հուսեյնի վարչակարգը տապալելու ուղղությամբ և արդեն 1998 թվականին ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը ստորագրեց Իրաքի ազատագրման ակտը (Iraq Liberation Act)՝ պաշտոնապես որդեգրելով այդ երկրում ռեժիմի փոփոխությունն իրականացնելու քաղաքականությունը [1, 357]:

Արդեն 2002 թվականին Բիլդերբերգյան հանդիպումը, թեև ոչ առանց հակասությունների, որոշեց ԱՄՆ-ի կողմից Իրաք ներխուժումն ու գրավումը [10, 41-67]: Նրանց պաշտոնական հայտարարությունում ասվում է, որ «Բուշի վարչակազմի արտաքին քաղաքականությունն առաջնորդվել է ներքին նկատառումներով երկու կարևոր ուղղություններով՝ մեկը Բուշի նախորդ վարչակազմի ձախողումները չկրկնելու նրա վճռականությունն է... Բուշի՝ Իրաքի հետևից գնալու վճռականության վրա կարող է ազդել նաև իր հոր նախագահության ամենամեծ սխալը վերացնելու նրա ցանկությունը: Բուշը ստիպված է եղել փոխել իր կարծիքը ինչպես ազգաշինության, այնպես էլ Մերձավոր Արևելքի վերաբերյալ» [10, 65]:

ԱՄՆ-ի իրականացրած քաղաքականությունը Մերձավոր Արևելքում՝ տարածաշրջանում ժողովրդավարական բարենորոգումների ու տնտեսական ազատականացման իրագործումը, տեսականորեն հիմնավորվում էր այդ տարածաշրջանում ԱՄՆ-ի միջամտության անհրաժեշտությունը:

2003 թ. Իրաք ներխուժումը Միացյալ Նահանգները հիմնավորեց այն պատճառաբանությամբ, որ Իրաքը խախտում է ՄԱԿ-ի ԱԽ 1441 բանաձևի դրույթները և աշխատում է Զանգվածային ոչնչացման, մասնավորապես միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի (ԶՈԶ) ստեղծման վրա: Սակայն այդպես էլ չկարողացան հստակ ապացույցներ ներկայացնել Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի առկայության մասին [1, 357-358]: Նույն թվականի ապրիլի 10-ին ամերիկյան ցամաքային ուժերը ճնշեցին դիմադրության վերջին կետերը և վերահսկողություն հաստատեցին մայրաքաղաք Բաղդադի վրա, որտեղ որոշ ժամանակ շարունակվեցին փողոցային մարտերը: Փաստորեն, ռազմական գործողությունների 21 օրվա ընթացքում դաշինքի ուժերը վերահսկողություն հաստատեցին Իրաքի գրեթե բոլոր խոշոր քաղաքների վրա: Ս. Հուսեյնի տապալումից հետո ԱՄՆ և կոալիցիոն ուժերն իրենց ձեռքը վերցրին Իրաքի կառավարումը: Ստեղծվեց Կոալիցիոն ժամանակավոր իշխանություն (Coalition Provisional Authority), որն օժտված էր ամենալայն լիազորություններով:

Միացյալ Նահանգները ստանձնեց ռազմավարական նշանակություն ունեցող Մերձավոր Արևելքի նավթային պաշարների վերահսկողությունը՝ քաղելով ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բացառիկ օգուտներ [1, 369]:

Այսպիսով Բիլդերբերգյան ակումբի կողմից Իրաք ներխուժելու և Սադամ Հուսեյնին իշխանությունից հեռացնելու որոշումը կայացնելու համար նավթը կարևոր գործոն էր, քանի որ ոչ միայն ամերիկյան նավթային ընկերությունները սառեցվեցին գործարքներից, այլև իրաքյան նավթի արդյունահանման զգալի աճը սպառնում էր նվազեցնել նավթի գինը՝ դրանով իսկ վնասելով ամերիկյան ընկերություններին: ԱՄՆ-ի առաջատար բանկերից մեկը՝ Goldman Sachs-ը, վերահսկողություն հաստատելով Իրաքի վրա, ձեռք բերեց նաև էժան նավթի հասանելիություն: Բանկը ցանկանում է Մերձավոր Արևելքում ցանել արևմտյան ժողովրդավարության սերմերը, որպեսզի ընդլայնի իր ազդեցության գոտին [2, 69]:

Ինչպես տեսնում ենք, 1980-ականներից ի վեր, Goldman Sachs-ի բարձր պաշտոն-ներում գտնվող տղամարդիկ կանոնավոր կերպով մասնակցել են Բիլդերբերգյան համաժողովներին [12, 120]:

Այսպիսով Բիլդերբերգի ակումբի անդամները ձգտում էին կանխել մերձավո-րարևելյան նավթի վրա միանձնյա հսկողություն ունեցող «տարածաշրջանային տերության» ի հայտ գալը: Նրանք հետևելով նավթ արտադրողների և սպառող-ների միջև զարգացող առճակատմանը սպասում էին նավթարդյունաբերության միջազգայնացմանը, ինչին կհանգեցնի առճակատումը: Նման մենաշնորհը լիո-վին կբավարարի նոր աշխարհակարգին: Մասնավորապես, Միացյալ Նահանգ-ները վաղուց էական շահագրգռվածություն ուներ տեսնելու, որ Պարսից ծոցի նավթը կայուն և մեծ քանակությամբ հոսում է համաշխարհային շուկաներ: Երկար տարիներ այս հետաքրքրությունը դրդել և օգտագործվել է արդարացնելու համար ԱՄՆ-ի ներգրավվածությունը և միջամտությունը տարածաշրջանում: Սա ևս մեկ քայլ է Բիլդերբերգյան ակումբի կողմից ԱՄՆ աշխարհաքաղաքական ազդեցության ոլորտի ընդլայնման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2019:
2. Большаков В., Война миров и цивилизаций, т. 2, Москва, 2022.
3. Колеман Д., Комитет 300 Тайны мирового правительства, Москва, 2000.
4. Энгдаль У.Ф., Столетие войны англо-американская нефтяная политика и новый мировой порядок, Москва, 2014.
5. Эстулин Д., Секреты Бильдербергского клуба, Минск, 2009.
6. Bilderberg conference, Public Intelligence, 1954.
7. Bilderberg conference report, 1973.
8. Bilderberg conference report, 1991.
9. Bilderberg conference report, 2002.
10. Thomas, W., Informal Alliance: The Bilderberg Group and Transatlantic Relations during the Cold War, 1952–1968, London.
11. Zielinski A., The Bilderberg Conferences as Transnational Informal Governance Network, 2018 (Think Tanks and Global Politics), pp.107-132.
12. https://www.bilderbergmeetings.org/
13. https://www.opec.org/opec_web/en/data_graphs/330.htm

Бильдербергский клуб и нефтяная политика на Ближнем Востоке

Арутюнян Лена
ВГУ, История, магистратура, 2-й
Научный руководитель:
доктор исторических наук, профессор Ф. Мовсисян

Резюме

***Ключевые слова**: Бильдерберг, секретная организация, мировое правительство, новый мировой порядок, Ближний Восток, нефтяной фактор*

Члены Бильдербергского клуба стремились не допустить появления «региональной державы», единолично контролирующей ближневосточную нефть. Вслед за развивающимся противостоянием производителей и потребителей нефти ждали интернационализации нефтяной отрасли, которая приведет к конфронтации. Такая монополия полностью удовлетворит новый мировой порядок. В частности, Соединенные Штаты уже давно заинтересованы в том, чтобы нефть Персидского залива поступала стабильно и в больших количествах на мировые рынки. На протяжении многих лет этот интерес мотивировал и использовался для оправдания вмешательства США в регион. Это очередной шаг Бильдербергского клуба по расширению геополитической сферы влияния США.

The Bilderberg Club and Oil Politics in the Middle East

Harutyunyan Lena
VSU, History, MA, 2nd year
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

***Key words:** Bilderberg, secret organization, world government, new world order, Middle East, oil factor*

Members of the Bilderberg club sought to prevent the emergence of a "regional power" with sole control over Middle Eastern oil. Following the developing confrontation between oil producers and consumers, they were waiting for the internationalization of the oil industry, which will lead to the confrontation. Such a monopoly will fully satisfy the new world order. In particular, the United States has long had a substantial interest in seeing Gulf oil flow steadily to global markets. For many years this interest has motivated to justify US involvement and intervention in the region. This is another step by the Bilderberg Club to expand the US geopolitical sphere of influence.

Շուշիի անցումը մահմեդականների ձեռքը և դրա հետևանքները

Հովնիկյան Վիկտորյա
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Մ. Բրուտյան

Ներկայումս պատմաքաղաքական նոր իրադրության պայմաններում, երբ արցախահայությանը սպառնում է լինելիության վտանգը առավել քան երբևէ, մենք հրատապ խնդիր ենք համարում անդրադառնալ մեզ համար առանձնակի կարևորություն ունեցող Արցախի ոստան Շուշիի պատկանելիությանը, ընդգծել Շուշիի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում Շուշի բերդաքաղաքի հիմնադրման խնդրին, խնդրի մեկնաբանությանը հայ և ադրբեջանական աղբյուրներում:

Հանգուցային բառեր. *Շուշի, Փանահ, Մելիք-Շահնազար, Ադրբեջան, Արցախ, Միքայել Ռայնհարդ Հեսս*

19-րդ դարից սկսած օտար պատմագրությունը միտված է հիմնականում կրկնելու Ղարաբաղի խաների գրագիր, Միրզա Ջամալ Ջավանշիրի անհիմն պնդումը, թե իբր Շուշիի սարավանդը անբնակ է եղել, և բերդը հիմնադրել է «հնում Թուրքեստանից Դիզակ տեղափոխված սարջալու օյմակի Բահմանլի ցեղի ներկայացուցիչ Փանահ Ալին...» [3, 58]:

Այս տեսակետին հակադարձելու է գալիս Ռաֆֆին իր «Խամսայի մելիքություններ» աշխատությամբ: Ներկայացնելով Արցախի հինգ մելիքությունների պատմությունը՝ Ռաֆֆին, հերքելով Մ. Ջամալի տեսությունը, այսպես է ներկայացնում եղելությունը. «Վարանդայի Մելիք-Շահնազարը սպանելով եղբորը՝ Մելիք-Հովսեփին տիրանում է Վարանդայի իշխանությանը: Արցախի մյուս մելիքական տան ներկայացուցիչները վրդովվելով կատարվածից միահամուռ ուժերով պատերազմի են ելնում Մելիք-Շահնազարի դեմ: Մելիք-Շահնազարն էլ իր հերթին դաշնակցում է Փանահի հետ» [8, 100-101]: Փաստորեն Փանահ խանը հասավ իր ուզածին, և ատելություն սերմանեց մելիքական տների միջև, որոնք երկար դարեր անքակտելիորեն կապված էին եղել միմյանց:

Այս իրադարձությունը հետագայում մեծ արձագանքն է գտել 19-րդ դարի կեսերի հայ մամուլում. *«Շահնազար՝ Վարանդայի մէլիքը, Չարաբերդի Մէլիք Ադամին և Գիւլիստանի Մէլիք Յովսէփին մէջ եղած դաշնակցութենից վախենալով, ինքն էլ Փանահ խանին հետ մի բարեկամութիւն արաւ, նրան իր բնակատեղին Շուշուայ բերդը և իր աղջիկն էլ (Փանահի որդուն- Ա.Մ.) կնութեան տուաւ»* [4, 176]:

Ո՞վ էր այդ քոչվոր ցեղապետը, որին հաջողվում է, օգտվելով Խամսայի մելիքների երկպառակություններից, հաստատվել Արցախի սրտում՝ Շուշիում:

Ըստ Միրզա Ջամալ Ջևանշիրի՝ *«Փանահ խանի տոհմը հին ժամանակներում Թուրքեստանից եկած բահմանլի ցեղի սարջալլու ճյուղից է»* [10]: Համաձայն ադրբեջանցի պատմաբան Միրզա Ադիգյոզալ-բեկի՝ *«Փանահ խանի նախապապը՝ Փանահ-Ալի բեկը, ծագումով սարջալլու ցեղից է»* [9]: Իսկ մահմեդական մեկ այլ պատմագիր՝ Ահմեդ-բեկ Ջևանշիրը, գրում է, որ «*Փանահը սերվել է դարաբաղյան քոչվոր ցեղերից*» [5,4]: Այսպիսով, Ղարաբաղի խանության երեք պատմագիրներն էլ միանշանակ Փանահ խանին քոչվորական ծագում են վերագրում:

Ստացվում է, այդ եղբայրասպան պատերազմում հայ մելիքներից հաղթողներ և պարտվողներ չեղան, այլ օգուտ քաղեց երրորդ, օտար կողմը՝ վաչկատուն սարջալլուների ցեղապետ Փանահ խանը, որը Մելիք-Շահնազարի թողտվությամբ 1752-ին հաստատվեց Արցախի սրտում:

Հետագայում առանձին հրապարակումներում բազմաթիվ փորձեր եղան Մելիք-Շահնազարին արդարացնելու: Դրանցից է Արսեն Մելիք-Շահնազարյանի «Վարանդա՝ Արցախի սիրտը» հոդվածը, իսկ մյուս հրապարակումների հեղինակները հիմնականում կրկնում են նրա դրույթները [4, 177]:

Կարծում ենք, տեղին չէ Մելիք-Շահնազարի բացասական կերպարի ստեղծման համար Ա. Մելիք-Շահնազարյանի՝ Ռաֆֆու հասցեին հնչեցրած մեղադրանքը: Մելիք-Շահնազարը որպես ազգադավ գործիչ է ներկայացված դեռևս Ռաֆֆու երկի հրապարակումից մի քանի տասնամյակ առաջ ստեղծված Միրզա Յուսուֆ Ներսեսովի, Հակոբ Զարքարյան Շուշեցու, Սարգիս Ջալալյանի աշխատություններում: 19-րդ դարի կեսերին Արցախի պատմությանն անդրադարձած բոլոր հեղինակներն էլ Մելիք-Շահնազարին ներկայացրել են որպես հայրենադավ գործիչ: Եվ եթե Ռաֆֆուն կարելի է մի բանում «մեղադրել», ապա միայն Մելիք-Շահնազարի բացասական կերպարը մասսայականացնելու մեջ [4, 179]:

Շուշիին Փանահի ձեռքում հայտնվելը ծանր անդրադարձ ունեցավ ոչ միայն ժամանակակիցների, այլև հետագա սերունդների կյանքում:

Սակայն ցավալիորեն պիտի նշենք, որ ներկայունս ևս կան պատմաբաններ, ովքեր վկայակոչել են մահմեդական գործիչների միակողմանի տեղեկությունները, հարկ չեն համարում ներկայացնել պատմական իրականությունը:

2022 թվականի մարտին Մյունխենում լույս է տեսել Միքայել Ռայնհարդ Հեսսի (Michael Reinhard Hess) «Շուշիի ժառանգությունը. Ադրբեջանի մշակութային մայրաքաղաքի պատմությունն ու զարգացումը» գիրքը: Գիրքը նվիրված է Ադրբեջանի մշակութային մայրաքաղաք և Ղարաբաղի կենտրոն Շուշիին[1]:

---

[1] Իսկ ով է այս մեծապես անհայտ հեղինակը՝ Միքայել Ռայնհարդ Հեսսը: Միքայել Ռայնհարդ Հեսը ծնվել է 1967 թվականին Օֆենբախում: Ֆրանկֆուրտի Յոհան Վոլֆգանգ Գյոթեի համալսարանում սովորել է ժամանակակից պատմություն, հունական պատմություն, իսլամագիտություն և թուրքագիտություն: Հետագայում Բեռլինի Ազատ համալսարանում (Free University of Berlin) անցկացրել է «Իմամեդդին Նասիմիի ժառանգությունը» հետազոտությունը: Ուսումն ավարտելուց հետո ստացել է դոկտորի աստիճան:

Գերմանացի թուրքագետի՝ խնդրո առարկա քաղաքի անվանման նախընտրած ձևն անշուշտ ադրբեջանականն է, իսկ գրքում ցույց է տրվում, որ «Շուշին ադրբեջանցի ժողովրդի ժառանգությունն է ոչ միայն միջազգային իրավունքի և քաղաքական տեսակետից, այլև՝ գրական, մշակութային եւ ազգագրական հենքով» [11]:

Ըստ գրքի՝ «Ադրբեջանի մարգարիտ», «արվեստի դրոշմ» ածանցյալ անուններով հայտնի քաղաքում են ծնվել ադրբեջանցի գրողներ, բանաստեղծներ, երաժիշտներ: 19-րդ դարի վերջին ադրբեջանական մշակույթի այս օրրանում 95 բանաստեղծ ու գրող, 38 երգիչ, 22 երաժշտագետ եւ 19 գեղագիր էր բնակվում: Դրանից բացի՝ Շուշին 19-րդ դարից ի վեր միջազգային կարեւոր նշանակություն ունեցող Ղարաբաղի ադրբեջանական խանության մայրաքաղաքն էր» [11]: Շարունակության մեր հեղինակը ներկայացնում է «Շուշիի ժառանգությունը», ամփոփում է Ադրբեջանի զարգացման հիմնական փուլերը, ցույց է տալիս, թե ինչպես են մշակույթն ու քաղաքականությունը փոխներազդել: Շուշիի յուրահատուկ մշակութային և պատմական դիրքը քաղաքը բազմիցս դարձրել է քաղաքական հակամարտությունների կիզակետ:

Շուշիի պատմության ներածությունից հետո գիրքն առաջարկում է պատկերացում կազմել ադրբեջանական մշակույթի պատմության ձեռքբերումների մասին, որն անհայտ է Արեւմուտքում» [11]:

Ռայնհարդ Հեսսը, խոսելով «Շուշայում» մշակութային զարգացման մասին, տալիս է ազգությամբ ադրբեջանցի գործիչների անուններ, որոնք ապրել և ստեղծագործել են «Շուշայում». Միրզա Ջամալ Ջավանշիր Կարաբաղլին, Ֆաթմա խանիմ Կամինան, Աբդուրահիմ բեյ Հազվերդիևը և այլք:

Գրքում տեղ գտած պատմություններից ամենից շատ մեզ հետաքրքրեց Շուշի անվան ստուգաբանությունը հեղինակի կողմից *«Շուշա ամրոցի կառուցումը կապված է Ղարաբաղի խանության հիմնադիր Փանահ Ալի խանի (1748-1763) անվան հետ: Փանահ խանը սկզբում կառուցեց Բայաթ ամրոցը, իսկ հետո Շահբուլաղ ամրոցը, այնուհետև կառուցեց Փանահաբադը (Շուշան): Հետագայում իբրև խանության կենտրոն արդեն Շուշա խան Իբրահիմ խալիլը (1763-1806) տվեց Շուշա անունը համապատասխանաբար բերդին և բերդի շուրջ ստեղծված քաղաքին»* [11]:

Հեղինակը, այս երկու վարկածը ներկայացնելով իբրև բացարձակ ճշմարտություն, հավաստիացնում է, որ Շուշա բառը հայերենում հայտնի բացատրություն չունի:

Կարծում ենք, որ հեղինակը այս եզրակացությանը եկել է՝ հիմնվելով ադրբեջանական ուսումնասիրությունների վրա, հակառակ դեպքում, եթե ծանոթություն ունենար հայ պատմագրության կամ լեզվաբանության հետ, կիմանար, որ գոյություն ունեն անվան ստուգաբանության հետ կապված մեր տարբերակները:

Շուշի բերդաքաղաքի՝ մեր պատմության ու մշակույթի նվիրական ոստանի

անվան ստուգաբանության թերևս ամենաարժանահավատ տարբերակը տեղանունը Արցախի բարբառի **շոշ** («ծառի ընձյուղ», «բարձր տեղ», «բարձունք») բառից բխեցնելն է: Այս բառը հայերենի բարբառներում դրսևորվում է նաև **շուշ** («ուղիղ բարձրացած, ուղղաբերձ») և **շիշ** («ծառի կատար») ձևերով: Քանի որ Արցախի բարբառում միավանկ բառերի **ու** ձայնավորը հնչյունափոխվում և դառնում է **օ (ո)** (կուժ-**կոժ**, սուտ-**սոտ**, տուն-**տոն**, փուշ-**փօշ** և այլն), հավանաբար բառի նախնական **շուշ** տարբերակից է բարբառում առաջացել **շոշ** ձևը: Վերջինից է ակնհայտորեն բխում նաև Շուշիից ոչ հեռու գտնվող **Շոշ** գյուղի անունը: Հազարամյակներ շարունակ անառիկ ամրոց եղած, ապա ավելի ուշ շրջաններում բերդաքաղաք դարձած Շուշիի աշխարհագրական դիրքն էլ է հուշում, որ այդ անունը քաղաքը ստացել է հենց շրջակայքի վրա իշխող դիրքի պատճառով: **Շոշ, շուշ** տարբերակները «ծառի ընձյուղ», «բարձր տեղ» նշանակություններով առավելապես տարածված են Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներում, իսկ **շիշ** տարբերակը՝ Հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի տեղաբնիկ բարբառի (Ճահուկ-Վայքի միջբարբառ) խոսվածքներում՝ «ծառի կատար» նշանակությամբ: Փաստորեն, անցյալում ամրոցի կրած **Շուշի բերդ** կամ **Շոշի բերդ**, **Շոշի դալա, Շոշի սղնախ**, ինչպես նաև **Քարագլխի բերդ** անունները հավասարազոր են, քանզի բոլորն էլ ունեն «բարձունքի ամրոց» իմաստը, և դրանցում ակնհայտորեն նկատի է առնված հենց Շուշիի աշխարհագրական դիրքը: Վերջին մի քանի դարերում բերդաքաղաք դարձած Շուշին շարունակել է կրել բերդի անունը՝ սեռական հոլովով, ի դեպ՝ միջնադարյան ձեռագրերում ավանդված են քաղաքանվան ոչ միայն **ի** հոլովիչով **Շուշի**, այլև **ու** հոլովիչով **Շուշու** և **ո** հոլովիչով **Շուշոյ** ձևերը [7]:

Հեղինակը, խոսելով Շուշիի սկզբնավորման, ստեղծման մասին, ինչպես նկատեցինք, անվան ստուգաբանությունն ու պատմությունն սկսում է ընդամենը 1752 թ.-ին Փանահի կողմից այն կառուցելուց, և զուրկ համարում այն հայկական որևէ հետքից կամ ազդեցությունից, բայց մեր պատմության էջերում բազմաթիվ թվական տվյալներ և իրողություններ կապված են Արցախ աշխարհի և հենց հայապատկան Շուշիի հետ:

Գրավոր տեղեկությունը հայտնում է 13-րդ դարի հայ պատմագիր Կիրակոս Գանձակեցին: Նա նկարագրում է, թե ինչպես է Խաչենի և ողջ Արցախի Մեծ իշխան Հասան-Ջալալ Դոլան Գրիգոր Տղայի, Իշխան Դեսումի, Մարկոս վարդապետի և Գրիգոր եպիսկոպոսի հետ *«Դերբենտի դռնով, որ ճորա պահակն է»* 1251 թվականին գնացել Մեծ զորավար Բաթուի որդի Սարթախի մուտ: *«Սարթախը տարավ իր հոր մոտ, մեծարեց և նրան (Հասան Ջալալին -Բ.) տվեց իր հայրենիքներ Չարաբերդը, Ականան և Կարկառը, որ նրանից առաջ իլել էին թուրքերն ու վրացիները»* [1, 258]: Գանձակեցին ի նկատի ունի Թիֆլիսի Զաքարյան իշխաններին: Չարաբերդը Զրաբերդն է, Ականան՝ Վերին Խաչենի բերդը, իսկ Կարկառը հենց այսօրվա Շուշին է, քանի որ Կարկառ գետակի վրա Շուշիից բացի նշանակալից այլ բերդ գոյություն չի ունեցել: Ինչպես երևում է, բերդի Կարկառ (քարա-

կույտ) անունից էլ իր անունն է ստացել նրա ստորոտով հոսող գետակը, ինչպես և իշխանությունը: Մեծ իշխան Հասան Ջալալն այս երեք բերդերի համար Սարբախի հոր մոտ էր հասել, քանի որ դրանք այն առանցքային հենակետերն են, առանց որոնց նա չէր կարող տիրել Արցախ աշխարհին: Ուրեմն, միջնադարում ևս Կարկառ-Շուշին որպես պաշտպանական ամրություն կարևոր դեր ուներ Արցախի անվտանգության ապահովման խնդրում [2, 13]: Շուշիում 15-րդ դարում առկա հայկական իրականության ապացույց է 1428 թվականին գրիչ Տեր-Մանուէլի ստեղծած Ավետարանը: Հիշատակարանում գրիչը նշում է. *«արդ գրեցավ աստուածագիծ սուրբ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ և ապիկար գրչի տէր Մանաւելի, ի թվականութեանս Հայոց ՊՀԷ (1428)...ի վիճակս Ամարասաց, ի գեղս Շուշո կոչեցեալ, անդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի...»* [2, 11]: Շուրջ մեկուկես դար հետո էլ նույն Աստվածածին եկեղեցու գրչատանը գրվել է մի այլ Ավետարան: Ահա նրա հիշատակարանի համապատասխան նշումը. *«Կատարեցի... զմաքրափայլ Աւետարանս ի փառս նմանե գաւառս Վարբնթոց, ի գաւառս, որ կոչի Շուշոյ, Անդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: Գրեցաւ ի թվականութեանս ՌԻԴ» (1575)* [2, 12]:

Երևանի Մատենադարանում պահվող ձեռագիր Ավետարանի հիշատակարանում ընդօրինակողը հայտնում է. *«երեկ շահ Աբբաց տիրեց իմ Ղարաբաղին, Գանձակցի պարոն տեր-Հովհանը շատ գերիներ ազատեց, շատ գրքեր, շարակնոցներ ետ դարձրեց: Նման մի շարակնոց ես տվեցի շուշեցի տեր Ավանեսին 1607 թվականին»* [2, 13]:

Ուրեմն, Շուշին որպես բնակավայր ու մշակութային կենտրոն իր գոյությունը շարունակել է 17-րդ դարի սկզբներին ևս:

Նորից ու նորից ուսումնասիրության առնելով Շուշիի պատկանելիության հարցը՝ պատմաբանների մի մասը եկել է այն եզրակացությանը, որ Շուշիի բերդը հիմնադրվել է Ավան հարյուրապետի կողմից դեռևս 1724 թվականին, այն ժամանակ, երբ Արցախ աշխարհը դարձել էր սղնախական պայքարի անվանի կենտրոն: Այս տեսակետը առաջ է քաշել անվանի ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը [6, 16]:

Հայտնի է, որ հայոց Շուշի բերդ-քաղաքը հիմնադրվել է 1724 թվականին Ավան հարյուրապետի (յուզբաշի) կողմից, որն էլ պատմության մեջ հայտնի «Շօշի սղնախի» կամ «Շօշի դալայի» բերդ գլխավոր հրամանատարն էր և մեծ իրավունքներ ուներ մյուս սղնախների նկատմամբ: Շուշի քաղաքը իր շրջակայքով Ավան հարյուրապետի կալվածքն էր [6, 17]:

Աշոտ Աբրահամյանը արձանագրում է, որ հայ մելիքների ու հարյուրապետերի հավատարմության երդմնագիրը, որի տակ ստորագրել են Ավան և Միրզա հարյուրապետերը և 18 բարձրաստիճան այլ անձինք, գրվել է Շուշի բերդավանում, հաստատվել Գանձասարում: Իվան Կարապետի փաստաթղթերից մեկում, որը նրան են հանձնել Ավան և Միրզա հարյուրապետերը, ասված է.«Թվին

փրկչին 1724, յունվարի ամսի 12-ումն: Մենք Շօշի սղնախի ուզբաշիքս և մեր թաբուն թալեղովս, որ հազիր եարրաղովկանք՝ ես ուզբաշիյ Ավանըս, և ես ուզբաշիյ Միրզէս, մեր թաբուն թալեղօվս կանք 500 թվանկաւոր սահաբ եարաղ: Եւ էլ առանց եարաղ յազիր էլ մարդ կայ 6400, զրայ թուր և թվանկ չունենք [6, 18-19]:

Գալով Միրզա Ջամալ Ջավանշիր Կարաբաղլին, որին գերմանացի հեղինակը համարում է ազգությամբ ադրբեջանցի, ով ապրել և ստեղծագործել է «Շուշայում», ապա նա խանական իշխանության վերացումից հետո ծառայության է անցել Ղարաբաղի գավառական դատարանում, որտեղ պաշտոնավարել է մինչև 1840 թ.: Վախճանվել է 1853 թ.: Նա տիրապետել է արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, լեզգիերեն և ավարերեն լեզուներին [5, 1]:

Միրզա Ջամալ Ջևանշիրի «Ղարաբաղի պատմություն» աշխատությունը գրվել է 1847 թ. Գյուլիստանի մելիքական տան անդամ, գնդապետ Շամիրխան Մելիք Բեգլարյանի պատվերով և ներկայացվել Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին, քանի որ վերջինս «մեծ ձգտում ուներ տեղեկանալու իր ենթակայության ներքո գտնվող յուրաքանչյուր վիլայեթում տեղի ունեցած անցյալի իրադարձությունների, ինչպես նաև նախկին խաների երբեմնի իշխանության, հզորության և իրավունքների մասին» [5, 1]:

Հեղինակը աշխատության մեջ անդրադարձ է կատարում հայ մելիքական տների պատմությանը, նրանց իրավունքներին, պարտականություններին, սովորույթներին, պատմում Նադիր շահի մասին, խոսում նրա գահակալման վերջին տարիներին ստեղծված խառնակ դրության մասին՝ Խորասանի դավադրությանը: «*Խորասանի դավադրությունը գործունեության լայն ասպարեզ է բացում թյուրքական քոչվոր ջևանշիր ցեղի սարջալլու ճյուղի ցեղապետ Փանահի համար*» ասում է Միրզա Ջամալը [10]:

Աշխատությունը, չնայած որոշակի թերությունների, կարևոր սկզբնաղբյուր է Արցախի 18-րդ դարի պատմության համար:

Կարևորը այն է, որ Ռ. Հեսսի կողմից ադրբեջանցի որակվող Միրզա-Ջամալը աշխատություն է գրում Գյուլիստանի մելիքական տան անդամի պատվերով, որտեղ Փանահի, այն նույն Փանահին, որը համարվում է Շուշիի հիմադիրը, անվանում է քոչվոր:

Հաշվի առնելով առկա փաստերը՝ այսպիսով գալիս ենք այն եզրակացությանը, որ Շուշին՝ իբրև տեղանուն, բերդ, բնակավայր, գոյություն է ունեցել Փանահի՝ այս տարածքում հայտնվելուց շատ ավելի վաղ: Միքայել Ռայնհարդ Հեսսը, ում աշխատությունը մենք հոդվածին կից առանք քննության, ուսումնասիրություններ է կատարել միակողմանի տեղեկատվության հենքով՝ հերքելով և բացառելով հայկական հետքը Շուշիում, չի օգտագործել սկզբնաղբյուրներ, մի համոզմունք, որի մասին ինքն է խոսում՝ նշելով, որ իր ձեռքի տակ ունեցել է տարալեզու աղբյուրներ՝ թուրքերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, բայց ոչ մի ադրբեջաներեն սկզբնաղբյուր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Երևան, 1982, 418 էջ:
2. Կարապետյան Բ., Շուշի բերդաքաղաքը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2000, 183 էջ:
3. Հարությունյան Ա., Շուշի քաղաքի պատմագրության միտումները, ԱրՊՀ Գիտական ընթերցումներ 2017, 61 էջ:
4. Մաղալյան Ա. Վ., Արցախի մելիքությունները և մելիքական տները. 17-19-րդ դարեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2007, 177 էջ:
5. Մաղալյան Ա., Միրզա Ջամալ Ջևանշիրի «Ղարաբաղի պատմությունը»-ը որպես Արցախի 18-րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Պատմաբանա-սիրական հանդես, 2018, 17 էջ:
6. Սնյան Վ. Գ., Շուշի, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1991, 128 էջ:
7. Վարդանյան Ա., Հայահունչ և հայաշունչ Շուշի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, 2021:
8. Ռաֆֆի. Խամսայի մելիքությունները, «Մշակ», Թիֆլիս, 229 էջ:
9. Мирза Адигезаль-Бек «Карабаг-наме», 2005.
10. Мирза Джамал Джеваншир Карабагский «История Карабага», Баку, 1989
11. https://www.google.com/search?q=pacogames&rlz=1C1GGRV_enAM763AM763 &oq= %D0%B7%D1%84%D1%8B%D1%89%D0 %BF%D1%84%D1%8C%D1% 83%D1%8B&aqs=chrome.1.69i57j0i13l9.21416j0j7&sourceid=chrome&ie =UTF-8

Переход Шуши в руки мусульман и его последствия

Овникян Виктория
ВГУ, История, 3-й
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент М. Брутян

Резюме

Ключевые слова: *Шуши, Панах-хан, Мелик-Шахназар, Азербайджан, Арцах, Михаэл Рейнхард Гесс*

Начиная с XIX века в зарубежной историографии намечается тенденция приписывать строительство и заселение Шуши главным образом Панах-хану. Отмечается, что эти территории были необитаемы до того, как последние пришли и поселились здесь. В данной статье мы пытаемся опровергнуть это заблуждение и представить исторические факты о более раннем заселении Шушинского нагорья. Используя как научные исследования, так и письменные источники, мы пришли к выводу, что Шуши как топоним, крепость, поселение существовал задолго до появления Панаха в этом регионе. В статье мы также рассмотрели книгу Михаэля Рейнхарда Гессе "Наследие Шуши: история и развитие культурной столицы Азербайджана», которая, на наш взгляд, написана на основе односторонних исследований, без первоисточников.

The Relinquishment of Control over Shushi by the Muslims and its Consequences

Hovnikyan Viktorya
VSU, History, 3rd year
Academic Supervisor: M. Brutyan,
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Shushi, Panah Khan, Melik-Shahnazar, Azerbaijan, Artsakh, Michael Reinhard Hess*

Since the 19th century, foreign historiography has tended to attribute the construction and settlement of Shushi mainly to Panah Khan. noting that these areas were uninhabited before the latter came and settled here. An attempt is made in our article, to counter this misconception and present historical facts about the earlier settlement of Shushi Peninsula. using both scientific studies and written sources, we came to the conclusion that Shushi as a place name, fortress, settlement existed in these areas of panah much earlier. In the article, we also reviewed Michael Reinhard Hesse´s book "The Heritage of Shushi: History and Development of the Cultural Capital of Azerbaijan", which, in our opinion, was written on the basis of one-sided research, without primary sources.

Հելլենիստական դարաշրջանի կերպարվեստում ճակատային ոճի ծագումնաբանության հիմնախնդիրը

Ղազարյան Հերմինե
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Մելիքյան

Հանգուցային բառեր. *ճակատային ոճ, կիսադեմ դիրք, հելլենիզմ, դրամահատություն, դրամական պատկերագրություն*

Մշակույթի և դրա ոճական, գեղարվեստական տարրերի ծագումը, զարգացումը, տարածման շարժընթացները կատարվել են պատմական գործընթացների բարդ ու տևական ժամանակամիջոցում, որոշ դեպքերում կրել փոփոխություններ՝ արձանագրելով նոր որակական հատկանիշներ, ստանալով հնի ու նորի, գաղափարականի ու գեղագիտականի կերտվածք, իսկ առանձին դեպքերում էլ պահպանել են մշակութային ինքնաբավությունը: Թերևս, ճակատային ոճը դուրս էր մշակութային ինքնաբավությունից, տարածական սահմանափակվածությունից, հելլենիզմի ծավալման միջոցով այն զբաղեցրեց մեծ տարածականություն՝ յուրատիպ համակցելով հունական և արևելյան մշակույթների գեղագիտական, հոգևոր-մշակութային մոտիվները:

Հելլենիստական դարաշրջանի պաշտոնական արվեստի ոչ բոլոր ժամանակափուլերից և բնագավառներից են բավարար քանակությամբ նյութեր հասել մեզ, ինչի հետևանքով դժվար է ոչ միայն պատկերների ներկայացման ոճերի փոփոխության ժամանակագրությունը հստակեցնելը, այլև պարզելը, թե կերպարվեստի որ բնագավառում է այն սկզբնապես դրսևորվել և ինչպես կամ ինչպիսի ձևափոխություններով է այն տարածվել կերպարվեստի մյուս բնագավառներում [1, 40]:

Առավել բարդ է հելլենիստական դարաշրջանի կերպարվեստի ճակատային ոճի ծագումնաբանությունը ճշտելն ու նրա տարածման շարժընթացին հետևելը, քանի որ դրա լուծումը թաքնված է այդ դարաշրջանի զանազան տեղական մշակույթների փոխազդեցության, հսկայական տարածության վրա ցեղերի ու ժողովուրդների տեղաշարժի, առանձին հասարակությունների սոցիալ-տնտեսական, կրոնական և գաղափարական կյանքի համատեքստում [2, 125]:

Հիմնախնդրի գիտական ուսումասիրությանն առաջինը հետամուտ է եղել Մ. Ռոստովցևը՝ 1935 թ. հրատարակված «Դուրան և պարթևական արվեստի հիմնախնդիրը» ուշագրավ աշխատությամբ: Նա Դուրա Եվրոպոսի (ավերված քաղաք Եփրատի աջ ափին, Անտիոքի և Սելևկիայի միջև, Տիգրիսի վրա, հիմնադրվել է Ք. ա. 303 թ. Սելևկոս Ա-ի զորավար Նիկանորի կողմից, ներմուծվել իրանական մշակութային ոլորտ պարթևական նվաճումից հետո Ք. ա. մոտ. 113 թ.) պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի և իր ժամանակներում հայտնի այլ հուշարձանների տվյալների հիման վրա փորձել է ներկայացնել պարթևական արվեստի հիմնական ինքնատիպությունների ամբողջական պատկերը Արշակունիների արքայատան կառավարման պատմաաշխարհագրական շրջանակներում՝ նրա սկզբնավորումից մինչև անկումը:

Մ. Ռոստովցևը պարթևական կերպարվեստի հիմնարար հատկանիշն էր համարում ճակատայնությունը, կրոնականությունը, նվիրականությունը, գծայնությունը և ճշմարտացիությունը, իսկ նրա առաջացումը բացատրում էր մի կողմից՝ Կենտրոնական և Միջին Ասիայի քոչվորների արվեստի, մյուս կողմից՝ Մերձավոր Արևելքի և հունական աշխարհի գեղարվեստական ավանդույթների փոխազդեցությամբ [3, 155-304]: Հեղինակի կարծիքով պատկերների ներկայացման ճակատային ոճն առաջին անգամ երևան է եկել հարավռուսական տափաստաններում սարմատական ցեղերի հայտնվելու հետ, սակայն նրա առաջացման գործում վճռորոշ են եղել հյուսիսմիջագետքյան մշակույթից բխող և աքեմենյան արվեստի միջնորդությամբ տարածված գեղարվեստական ազդեցությունները: Ուստի հեղինակն առաջարկում է պարթևական դարաշրջանի վերաբերյալ խոսել հին ոճի վերակենդանացման, այլ ոչ թե Հունաստանի մշակութային ազդեցությամբ նորի ձևավորման մասին: Նա գեղարվեստական այս ոճի տարածման առաջնությունը վերագրում է պարթևներին, իսկ նրա տարածման կարևորագույն նախապայմանը համարում է պարթևների ազգային ինքնագիտակցության կողմից հունական արվեստի մերժումն ու հին իրանական ավանդույթներին վերադառնալը:

Հ. Սեյրիժի համոզմամբ ճակատային ոճը սկզբնավորվել է Ք. ա. I – Ք. հ. I դդ. իրանական կերպարվեստի ծիրում և այնուհետև մշակութային ազդեցության ճանապարհով տարածվել Հաթրայում, Դուրա Եվրոպոսում և Ասորիքում [4, 194-195]:

Մ. Ռոստովցևի և Հ. Սեյրիժի ժամանակակից մեկ այլ ուսումնասիրողի՝ Կ. Հոպկինսի կարծիքով ճակատային ոճը երևան է եկել սիրիա-հելլենիստական միջավայրում: Հեղինակը պատկերների ներկայացման երեք քառորդ և կիսադեմ դիրքերը որակում է իբրև հունական, իսկ ներկայացման ճակատային ոճը՝ արևելյան: Հեղինակի կարծիքով Ք. ա. III դ. առաջին քառորդի կերպարվեստում այդ երկու մոտեցումները համադրվել են, սակայն վերջնարդյունքում հաղթող է դուրս եկել արևելյան հոսանքը [5, 188]:

Իր մի քանի աշխատություններում քննարկվող գեղարվեստական ոճի ծագումնաբանության հիմնախնդրին անդրադարձել է նաև Գ. Կոշելենկոն: Նախ հեղինակն առաջարկում է Մ. Ռոստովցևի կողմից պարթևական կերպարվեստին տրված բնութագրումների շարքում առանձնացնել ճակատայնությունը՝ նշելով, որ վերը նշված առանձնահատկությունները չեն կարող միանշանակ վերագրվել պարթևական Միջագետքի կերպարվեստին: Մյուս կողմից նա ճակատային ոճի առաջացումը կապում է Եփրատի ավազանի սիրիահելլենիստական հանրության հետ: Հեղինակի համոզմամբ՝ պատկերների ներկայացման ճակատային ոճը ձևավորվել է Ք. հ. I դ. կեսերին, բայց վերջնականապես կայացել II դարի վերջերին կամ III դարի սկզբին: Այս գործընթացի առանցքը առջևում ֆիգուր պատկերելու կանոնական պահանջն էր, որը խախտում էր կոմպոզիցիայի բնական կապերը, փոխարենը կապեր հաստատում պատկերի և դիտողի միջև: Հատկապես կարևոր էր, երբ պատկերված էր աստվածություն:

Երբ քննության ենք առնում, օրինակ, արևմտյան սահմանների պարթևական

արվեստը, մասնավորապես Պալմիրայի մշակութային կոթողները, նկատում ենք մի շարք առանձնահատկություններ: Քանդակագործության մեջ շեշտը խստորեն դրվում էր կերպարների դեմքի վրա[1]:

Պատկերների ներկայացման ճակատային ոճի վերաբերյալ իր դիտարկումներում Դ. Շլյումբերժեն մասնակիորեն համաձայնում է Մ. Ռոստովցևի և Հ. Սեյրիժի հետ ճակատային ոճի խառնածին բնույթի հարցում՝ համարելով, որ այն առաջացել է հունական և արևելյան երկու՝ աքեմենյան և Կենտրոնական ու Միջին Ասիայից եկող քոչվորական ավանդույթների խառնուրդից:

Այնուհանդերձ նոր ոճի առաջացման գործում Դ. Շլյումբերժեն կարևորում է հատկապես հունական ազդեցությունը: Նրա կարծիքով կերպարվեստի ոլորտում հույներն իրենք են խախտել կիսադեմ պատկերները կարգավորող դասական կանոնները. «Հենց նրանք առաջինը մտցրին ճակատայնությունը և կիսադեմով ներկայացնելը փոխեցին երեք քառորդի, ինչը հնարավորություն ընձեռեց արտահայտելու առանձին մարդու անհատական նկարագիրն ու ապրումները, որը համապատասխանում էր հելլենիզմի գաղափարախոսության և մշակույթի ամբողջ ոգուն»: Հեղինակը ցույց է տալիս, որ պարթևական կերպարվեստի ստեղծողները եղել են ոչ թե պարթևները, այլ հույները, այլ կերպ ասած՝ հելլենականացած արևելյան վարպետները:

Դ. Շլյումբերժեն նշում է, որ հունական կերպարվեստում ճակատային ոճի ձևավորման նախադրյալը եղել է պատկերների ներկայացման կիսադեմ դիրքից երեք քառորդ դիրքին անցնելը[2]: Իսկապես հունական կերպարվեստում ճակատային դիրքը արխաիկ դարաշրջանի ուրվանկարային ոճի գեղարվեսստական էվոլյուցիայի արդյունքում ծնված պատկերագրական ձև էր: Ք. ա. V դարում հունական կերպարվեստում այդ անցումն արդեն կատարվել էր, և ճակատային դիրքով պատկերները բավական տարածված էին սափորանկարչության և քանդակագործության ասպարեզներում: Հունական արվեստում այն ուներ գեղագիտական նշանակություն[3]:

Ճակատային ոճի ծագումնաբանությանը և դրա տարածման շարժընթացի խնդրին անդրադարձել է Ա. Մելիքյանը: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, գալով այն եզրահանգմանը, որ պատկերները ճակատային դիրքով ներկայացնելու սկզբունքը բոլորովին էլ արևելյան կերպարվեստից հելլենիստական դարաշրջանին անցած և հունականության դեմ պարթևական տերության մշակութային հակազդեցության ալիքով արևելքում տարածված երևույթ չէր: Նմանապես ճիշտ չէ նաև պատկերների ներկայացման ճակատային ոճը բացառապես դասական դարաշրջանի հունական կերպարվեստի գեղարվեստական ժառանգություն համարելը:

Ա. Մելիքյանը գեղարվեստական այս տարրը հելլենիստական մշակույթի տիպական ծնունդ է համարում, որը հաջողությամբ միաձուլում էր հունական և

---

[1] Шлюмберже, Эллинизированный Восток, с.86.

[2] Schlumberger 1970, pp. 245-261.

[3] Մելիքյան Ա., Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակը, Երևան, 2017 թ., էջ 48:

հինարևելյան մշակույթների առանձին գեղարվեստական, պատկերագրական և սոցիալ-կրոնական տարրեր ու գաղափարներ, նշելով, որ դասական հունական կերպարվեստից այն յուրացրել է պատկերների գեղակերտությունը, շարժումների կանոնավորությունը, խորհրդանշանների զինանոցը: Բայց պատկերների ներկայացման երեք հիմնական դիրքերը, որոնք ձևական կատարելության էին հասցվել դասական դարաշրջանի հունական կերպարվեստում, վաղհելլենիստական դարաշրջանում դադարում են պարզապես գեղագիտական բազմազանությանը ծառայել: Դրանք վերաիմաստավորվեցին աստիճանակարգության հինարևելյան գեղարվեստական սկզբունքին համապատասխան: Ըստ այդմ՝ կիսադեմ դիրքը վերապահվեց երկրային իշխանավորներին, իսկ երեք քառորդն ու ճակատային դիրքերը դարձան հորինվածքներում նրանց երկնային հովանավորներին ներկայացնելու կանոնական ձևերը [1, 102-105]:

Ճակատային ոճի ծագումնաբանության ոճական, իմաստային փոփոխությունների խնդրին քանդակագործական նմուշներից զատ, լույս է սփռում դրամական պատկերագրությունը:

Դրամահատության ասպարեզում պատկերների ներկայացման ճակատային ոճի երկու՝ հունական և արևելյան ընկալումներն առաջին անգամ հանդիպել և համադրվել էին դեռևս Ք. ա. IV դ.՝ Աքեմենյան տերության մերձմիջերկրածովյան սատրապությունների կառավարիչների դրամահատության մեջ: Դրանց մի երեսին սատրապների գլուխները կամ ամբողջական պատկերներն են՝ պարտադիր կիսադեմ դիրքով, իսկ մյուս երեսին ճակատային կամ գրեթե ճակատային դիրքով ներկայացված են դիցերի գլուխները:

Թեև դրանց կատարողական տեխնիկան հունական է, ակնհայտ է, որ դրամների վրա դիրքերի բաշխումը սատրապների և դիցերի միջև կատարվել է հինմերձավորարևելյան ընկալմամբ: Ըստ երևույթին, արդեն Ալեքսանդրի արշավանքների ընթացքում հույն գաղութարարները արևելյան ավանդության ազդեցությամբ (չի բացառվում, որ հենց աքեմենյան սատրապական դրամների պատկերագրության տպավորությամբ) վերանայել են իրենց գեղարվեստական ընկալումներն ու հինարևելյան օրինակով բաժանել ներկայացման դիրքերը՝ կիսադեմը թողնելով մահկանացուներին (տիրակալներին), իսկ երեք քառորդ և ճակատային դիրքերը վերապահել դիցերին:

Այս անցումը սկսվում է հենց Ալեքսանդր Մակեդոնացու դրմահատության մեջ, ապա կրկնօրինակվում Սելևկյան դրամահատության մեջ, մասնավորապես սկսած Անտիոքոս I-ից, իսկ Անտիոքոս II-ի օրոք սելևկյան բրոնզե դրամների պատկերների ճակատայնությունը ստանում է համընդհանուր կիրառություն:

Անցնենք Փոքր Ասիայի հելլենիստական երկրներ, որտեղ ևս համընթաց տեղի էր ունենում պատկերների դիրքային փոփոխության գործընթաց: Այսպես, օրինակ, Ք. ա. III դ. վերջին քառորդից կապադովկիական դրամահատության մեջ ևս կանոնական է դառնում դրամների երեսին արքաների աջ կամ ձախ դարձած գլխի, իսկ դարձերեսին մարմնով երեք քառորդ, դեմքով լրիվ ձախ դարձած աստվածությունների պատկերումը:

Նմանօրինակ են նաև Ծոփքի արքաներ Արշամ II-ի, Քսերքսեսի դրամները, դիմերեսին արքայի աջ դարձած գլուխը, իսկ դարձերեսին՝ ճակատային դիրքով ներկայացված աստվածության պատկերը:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս մեզ հասած նյութերը, ճակատային ոճի տարածման ընթացքը եղել է դանդաղ ու հակասական՝ պայմանավորված հելլենիստական աշխարհի բաղադրիչ երկրների հելլենականացման աստիճանից, տեղական բնակչության մշակութային ավանդույթների կայունությունից և այլն [1, 55-64]:

Համաժամանակ ճակատային ոճը լավագույնս դրսևորվում է Կենտրոնական Ասիայում՝ Հունաբակտրիական թագավորությունում, որտեղ հայտնաբերված արվեստի նմուշների զգալի մասը գերազանցապես հունական է: Վառ օրինակներից է Այ Խանումի դամբարանում հայտնաբերված պատանու բարձրաքանդակը (Ք. ա. III-II դդ.), կերտված մաքուր ճակատային ոճով:

Այժմ կդիտարկենք նաև ճակատային ոճի դրսևորումները պարթևական կերպարվեստում, որի ակունքները պարզելու համար խիստ նշանակություն ունեն Հին Նիսայի (Միհրդատակերտ) պեղումներից հայտնաբերված արվեստի ստեղծագործությունները: Այստեղ հայտնաբերված կերպարվեստի ստեղծագործությունների մի մասը հավանաբար հայտնվել է հարկի կամ ռազմավարի ձևով, իսկ կավե մոնումենտալ քանդակները, փղոսկրե ռիտոնները, որմնանկարները տեղական արտադրության արգասիք են և որոշ չափով կրում են հելլենիստական մշակույթի ազդեցությունը: Անդրադարձ կատարելով այս խնդրին՝ Ինվերնիցին այն համարում է Պարթևստանում Արշակունիների կերպարվեստի բնութագրական գիծ [5, 194]:

Այդ նմուշներից օրինակ Միհրդատ I-ի դստեր՝ Հոդոգունեի մարմարե արձանը, որը կերտված է հելլենիստական նրբաճաշակությամբ:

Ինվերնիցին պարթևական կերպարվեստում դրանց երևան գալը բացատրում է Միհրդատ I-ի կողմից Տիգրիսի վրայի Սելևկիայի նվաճումից հետո պարթևական արքունիքի գեղագիտական ճաշակի մեջ կատարված փոփոխությամբ: Ինվերնիցին առաջարկում է Ք. ա. III-ից մինչև մեր թվականության սկզբների բուն Պարթևստանի կերպարվեստում հստակորեն սահմանազատել Արշակունիների արքայատան պաշտոնական արվեստը պարթևական ժողովրդական կամ հանրային արվեստից՝ առաջինին վերագրելով բացառապես այն, ինչ կապված էր կառավարող արքայատան հետ, իսկ երկրորդին՝ այն, ինչը որ արքունիքի քաղաքական, գաղափարական և գեղագիտական նախասիրություններից ու ճաշակից անկախ էր [5, 189-207]:

Միանգամայն իրավացի էր Դ. Շլյումբերժեն, երբ ճակատային ոճը բնավ պարթևական մշակույթի հարազատ ծնունդ չէր համարում:

Այսպիսով կարող ենք ասել, որ ճակատային ոճի կիրառությունը մեծ դրսևորում գտավ հելլենիստական աշխարհի մաս կազմող շրջաններում:

Ուշագրավ է, որ ճակատային ոճի դրսևորումները տեսնում ենք այն երկրամասերում, որոնցում փաստված է ստվարաթիվ հույն գաղթականության գոյու-

թյունը: Այս հանգամանքն ինքնին փաստում է, որ ճակատային ոճի կերտողները եղել են հույները և արևելքի հելլենականացված վարպետները: Մինչդեռ Ասիայի այն երկրներում, որտեղ հունական գաղթականությունը աննշան էր, իսկ աքեմենյան կերպարվեստի ավանդույթները՝ կենսունակ, մշակույթը, մասնավորապես կերպարվեստը շարունակում էին զարգանալ ինքնաբավ: Ասվածի վառ ապացույցներից է Պարսքի և Էլյումայիսի կերպարվեստում աքեմենյան պատկերագրության կիսադեմ ոճի գերակայությունը:

Տարածում ու մեծ կիրառություն ստանալով հույների միջոցով՝ ճակատային ոճը յուրատեսակ կերպ ընդունվեց Արևելքում՝ հարմարվելով լոկալ քաղաքական, հոգևոր-մշակութային, կրոնական առանձնահատկություններին: Ուսումնասիրության ենթարկելով վերը նշված փաստարկները՝ կարող ենք եզրակացնել, որ ճակատային ոճը համարվում է հունական և հինարևելյան մշակույթների միաձուլում, դրա գեղագիտական հիմքը դիտարկվում է որպես հունական, իսկ հոգևոր-գաղափարական տարրերը՝ արևելյան:

Իրապես ճակատային ոճի ողջ արտահայտչությունը բովանդակում էր արևելյան մտածողությունը՝ աստվածային դերի գերակայություն, դրան գերբնական և գերակա դերի վերապահում, մահկանացուներին իբրև աստվածայինի ստորադասում: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված ճակատային դիրքով պատկերվում էին դիցերի պատկերները, իսկ կիսադեմ դիրքով՝ տիրակալները: Այս գաղափարից շեղում նկատվեց Կոմմագենեի արքա Անտիոքոս I կողմից (Ք. ա. I դ.), որը խախտեց հելլենիստական դարաշրջանում ընդունված սկզբունքը՝ իրեն հավասարազոր դիտարկելով աստվածների հետ: Նեմրուդ լեռան սրբարանի սալակոթողների վրա ներկայացված է Հերակլես-Արտագնես (Վահագն)-Արեսի և Ապոլոն-Միհր-Հելիոս-Հերմեսի ձեռքը սեղմելիս: Արքան պատկերված է երեք քառորդ դիրքով, նույն մեծությամբ, ինչպես որ աստվածներն են պատկերված, ինչը ակնառու է դարձնում Անտիոքոս I հավակնությունները՝ իրեն դասելով աստվածների շարքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մելիքյան Ա., Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակը, Երևան 2017, էջ 40.
2. Фрай Р. Н. Наследие Ирана, Москва, 2002, 463 с.
3. Rostovtzeff M., Dura and the Problem of Parthian Art, YCS, Vol. V, 1935, pp. 157-304.
4. Seyrig H., Bas-reliefs monumentaux du temple de Bel a Palmyre, Syria 15, 1934, pp. 195-196.
5. Hopkins C., A Note on Frontality in near Eastern Art, Als Vol. 3, № 2, 1936, p. 188.
6. Schlumberger L, Orient hellenise. L´art grec et ses heritiers dans I´ Asie non mediterraneenne, Paris, 1970.
7. Invernizzi A., Parthian Art-Arsacid Art, Topoi 17, 2011, p.194.

Проблема генеалогии фронтального стиля в изобразительном искусстве эллинистической эпохи

Казарян Эрмине
ВГУ, История, магистратура, 1-й курс
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент А. Меликян

Резюме

Ключевые слова: *фронтальный стиль, профильное расположение, эллинизм, чеканка монетная, пиктография*

Получив широкое распространение и широкое применение через греков, фронтальный стиль по-своему был принят на востоке, адаптируясь к локальным политическим, духовно-культурным, религиозным особенностям. Фронтальный стиль представляет собой слияние греческой и древневосточной культур, эстетическую основу которого рассматривают как греческую, а духовно-идеологические элементы – восточную. Действительно, все выражение фронтального стиля содержало восточное мышление –превосходство божественной роли, придание ей сверхъестественной и приоритетной роли, подчинение смертных божественному. Именно из-за этого обстоятельства в лобном положении изображались фигуры князей, а в полусфере – правители.

The Issue of the Genealogy of the Frontal Style in the Fine Arts of the Hellenistic Era

Ghazaryan Hermine
VSU, History, MA, 1st year
Academic Supervisor: A. Melikyan,
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words*: frontal style, profile arrangement, Hellenism, coinage, coin pictography*

Being spread and used by the Greeks, the front style was adopted in a unique way in the East, adopting to the political, spiritual-culture and religious features of the country. The frontal style is a fusion of Greek and Ancient, aesthetic basis of which is Greek, and the spiritual-ideological basis is considered to be Eastern. Indeed, expressiveness of the frontal style contained the Eastern thinking – the supremacy of the divine role, giving it a supernatural and priority role, subordinating mortals to the divine. Precisely because of this circumstance, the divine figures were depicted in a frontal position, and the governor – in a half-face position.

Ղազար Ջահկեցու հայապահպան գործունեությունը

Ղազարյան Մերի
«ՎՊՀ» հիմնադրամ, «Պատմություն», 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Մ. Բրուտյան

Հանգուցային բառեր. *Ղազար Ջահկեցի, կաթողիկոս, հայապահպան գործունեություն, հրովարտակ, գրական ժառանգություն, «Երգարան»*

Հոդվածում փորձ է արվում ընդգծել Ղազար Ջահկեցու հայանպաստ գործունեությունը հայ ժողովրդի կյանքի դժվարին ժամանակաշրջաններից մեկում՝ 18-րդ դարում: Հոդվածի նպատակն է ներկայացնել Ղ. Ջահկեցուն ոչ միայն որպես հոգևոր այր, այլ նաև գրող, փիլիսոփա, ազգապահպան գործիչ, որի մասին քիչ է խոսվում:

Ղազար Ջահկեցին ծնվել է Նախիջևանի Ջահուկ գյուղաքաղաքում: Ծննդյան թվականը անհայտ է: Ըստ Ղազար Ջահկեցու աշակերտ ու կենսագիր Հովհաննես Ամասիացու՝ 16-ամյա հասակում Ղազար Ջահկեցին ընդունվել է Շատիկի անապատի դպրոցը և ուսումնառությունից հետո վանահայր Ստեփանոս Կաֆայեցու կողմից քարոզչության է ուղարկվել Ամասիա, որտեղ մնացել է մեկ տարի [8]:

Աբրահամ Կրետացու մահից հետո՝ 1737 թ.-ին, նոր կաթողիկոսի ընտրության հարցում Մայր Աթոռում ընդհանուր միաբանություն չկար: Հոգևորականության մեծ մասը հակված էր Գրիգոր Շղթայակրի կողմը, որն իր դրական հետքն էր թողել Երուսաղեմում հոգևոր առաջնորդություն իրականացնելիս և կարող էր կենդանություն հաղորդել Մայր Աթոռին: Չնայած այս հանգամանքին՝ Ղազար Ջահկեցին այդ պայքարում հաղթող դուրս եկավ՝ կաթողիկոս ընտրվելով 1737 թվի հուլիսին [4]:

Կաթողիկոսի ընտրությունը համընկավ Իրանում Նադիր շահի (1736-1747) կառավարման ժամանակներին, երբ կենտրոնացված պետության ստեղծմանն ուղղված վերջինիս քաղաքականությունն ուղեկցվում է հարկահավաքման խստացումներով ու դաժան պատիժներով: Ջահկեցին բախտ չունեցավ արժանանալու Նադիր շահի բարի հայացքին: Շահի կոշտ վերաբերմունքի պատճառը Ղազար Ջահկեցու նկատմամբ կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ եթե իր կառավարման սկզբնական շրջանում շահն իր համար հենարան էր ընտրել հայոց եկեղեցուն, ապա Ջահկեցու պաշտոնավարության շրջանում այլևս դրա կարիքը չկար: Թեև կաթողիկոսը թանկագին ընծաներ և կաշառքներ էր տալիս, բայց շարունակ ծանր տուգանքների էր ենթարկվում: Նադիր շահի պահանջով Ղազար Ջահկեցին 1744 թ.-ին այցելել է Մեշհեդ, որտեղ պարտադրվել է վճարել ծանր տուգանք:

Ղազարի ժամանակն էր, որ հայ ժողովուրդը մատնվեց Նադիրի նորանոր բռնություններին [4]:

Չնայած այս հանգամանքին՝ Ջահկեցին քաջ գիտակցում էր, որ իրանական տիրապետության շրջանում հայ ժողովրդի գոյատևման համար կարևոր նշանակություն ունեին Հայոց կաթողիկոսների կողմից իրանական իշխանությունների հետ դրական հարաբերությունների ապահովումը և շահական հրովարտակներով իրանահպատակ հայության ու հայ եկեղեցու կենսական շահերի պաշտպանությունը:Պահպանվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով ձեռք բերված 19 հրովարտակներ , որոնցից 11-ը հրապարակվել են 1740-1743 թթ. Նադիր շահի և նրա որդի ու Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայի կողմից, իսկ 8-ը՝Իբրահիմ խանիկողմից 1748-1749 թթ.: Այս հրովարտակները վկայում են կաթողիկոսի՝ հայ եկեղեցու ու հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանելու ուղղությամբ կատարած ջանքերը [7]:

Կարևոր էր հրովարտակներից առաջինը, որի համաձայն արգելում էր խոչընդոտել հայերին իրենց եկեղեցիների վերանորոգման ու նորերը կառուցելու, եկեղեցական զանգերը հնչեցնելու ու ծիսական արարողությունները նշելու հարցում: Երկրորդ հրովարտակով արգելվում էր հետ պահանջել Երևանի նահանգից արտագաղթած քոչվոր ցեղերի կողմից հայերի մոտ թողնված գույքը: Այս քոչվոր ցեղերը Երևանի նահանգից գաղթեցվել էին 1731-1732 թ.-ին Թահմասպ Միրզայի կողմից: Ի սկզբանե նրանք իրենց ունեցվածքը թողնում էին գյուղերում՝ տեղի հայերի տներում, հետ վերադառնալուն պես սկսում էին պահանջել իրենց ունեցվածքը, ինչը բնականաբար նեղություն էր պատճառում տեղի հայերին: Հաջորդ հարցը, որ բարձացվում էր հրովարտակում, իրանահպատակ հայերի ժառանգության հարցն էր: Սեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ուներ «Իմամ Ջահֆարի օրենքը», ըստ որի՝ մահմեդականացած հայերի ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջովին գրավել և նրանց զրկել ժառանգությունից: Հիշյալ օրենքի կիրառությունը մեծ դժվարություն էր պատճառում իրանահպատակ հայությանը՝ նպաստելով նրանց մահմեդականացմանն ու թույլ տալով անգամ ազգական չհանդիսացող մահմեդականացած անձանց հավակնություններ ունենալ մահացած քրիստոնյայի ունեցվածքի նկատմամբ: Հրովարտակով արգելվում է «Իմամ Ջահֆարի օրենքի» կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում:

Երրորդ հրովարտակով արգելվում է հայ եկեղեցու նվիրակներից ճանապարհները հսկող պահակային ծառայությունների կողմից հարկերի գանձումը, մի խնդիր, որին հայոց կաթողիկոսների խնդրանքով անդրադարձել են ինչպես նախորդ Սեֆյան շահերը, այնպես էլ Նադիրը՝ թույլ տալով հայ եկեղեցու ներկայացուցիչների ազատ շրջագայությունը նրանց ենթակա տարածքներում: Այս խնդրի կապակցությամբ Ղազար կաթողիկոսը համանման բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերել նաև Իբրահիմ խանից 1748 թ. [3]:

Ղազար կաթողիկոսի կողմից ձեռք բերված հրովարտակների նպատակը մեկն էր՝ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությունը մահմեդական բնակչության ու պաշտոնյաների բռնություններից և անօրինական միջամտությունից:

Չնայած ջանքերին՝ Ղազար կաթողիկոսին չի հաջողվում պահպանել բոլոր այն 7 գյուղերի (Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաջլի, Դիբաքլու և Հալաբիքենդ) պատկանելությունը Մայր Աթոռին, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը ամրագրել էր Աբրահամ Կրետացի կաթողիկոսը 1735 թ. Նադիր շահի հրովարտակով:

Ջահկեցին ազգային միասնության, եկեղեցու գաղափարական ջատագով էր. նրա գրական ժառանգության մեջ մեծ արժեք են ներկայացնում հատկապես ազգային գաղափարախոսական՝ տեսաբանական բարձր մակարդակով կատարված մշակումները [5]: Նա առաջ էր քաշում հայ ազգը բնութագրող կարևոր բնորոշիչներ՝ ընդհանուր ծագում, հայկական բնիկ տարածքի՝ հայրենիքի առկայություն, ազգային լեզու, ազգային մշակույթ, հայ եկեղեցի և հավատ, ազգային հպարտություն:

Օրինակ՝

(1) «Ազգք տոհմիւ օրինեալ» – հայերի ծագումն ընդհանուր նախահայրերից.
(2) «Երկրաւ բարեբանեալ» – Հայաստանում և նրանից դուրս ապրող հայերի խոր կապվածությունը հայ ազգի ձևավորման ու բնակության բնիկ տարածքին.
(3) «Լեզուաւ կանխազարդեալ» – հայոց լեզուն որպես հայերի ընդհանուր լեզու լինելը.
(4) «Գրով բարգաւաճեալ» – ազգային գրական-մշակութային վիթխարի ժառանգության առկայություն.
(5) «Հաւատով ազնուացեալ» – ազգային եկեզեցին ու նրա ուրույն դավանանքը՝ հայադավանությունը [1].

Ղազար Ջահկեցին հայոց լեզուն և ազգային մշակույթը չի ստորադասում հայ եկեղեցուն և քրիստոնյա հավատին, այլ դրանք բոլորը շաղկապում է հայության ընդհանուր բնութագրի մեջ:

Կ. Պոլսում 1737 թ. հրատարակված Ղազար Ջահկեցու «Երգարանը» XVII-XVIII դդ. հայազգային-եկեղեցական գաղափարախոսության հարուստ շտեմարան է, իսկական գաղափարական ուղեցույց [2]: Պաշտոնական այդ գաղափարախոսությունը քարոզում էին Ս. Էջմիածնի նվիրակները, ինչպես նաև հայ հոգևոր և աշխարհիկ մտավորականության մեծ մասը: Պետք է նշել, սակայն, որ հայկական ազգային գաղափարախոսության այն տարրերը, որոնք վերաբերում էին Հայաստանի ազատագրությանն ուանկախության հաստատմանը, ինչպես, օրինակ, «Ազատագրական լեգենդը», ելնելով անվտանգության նկատառումներից, քարոզվում էին գաղտնաբար, այլաբանորեն կամ հարաբերաբար քիչ ընդօրինակվող ձեռագրերում:

Պետականության բացակայության շրջանում եղել են աղոթքներ, երբ եկեղեցին աղոթքի տեսքով փորձել է զարթեցնել ժողովրդի մեջ արդեն վաղուց բացակայող պետականության տեսլականը.

...Մեղքերի հողմով փոշու պես ցանուցիր եղած երկրի երեսին օտարասեռ ազգերի և ցեղերի մեջ

Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի կոտրվածը դարձյալ բժշկի

Եվ հոգու գրգանքով իբրև հավը, որ ձագերին իր թևերի տակ է ժողովում, իր ամրածածուկ աջով

Վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական, բնիկ և հայրենի երկրի և գավառների մեջ.....

Անվտանգության հասկանալի նկատառումներից ելնելով՝ Ջահկեցու այս աղոթքը դուրս է մնացել «Աստուածաղերս» ժողովածուից:

Ջահկեցու «Երգարանը» ընդգրկում և քարոզում է Հայոց ազգային գաղափարախոսության պաշտոնական հետևյալ հինգ դրույթները.

1. Սուրբ էջմիածին

Գլխավոր դրույթը Ս. էջմիածնի ճանաչումն ու պաշտամունքն էր որպես հայ ազգի հոգևոր կենտրոն: Ղազար Ջահկեցին ոչ միայն Ս. Էջմիածինը դիտում է որպես ազգի հոգևոր կենտրոն, այլև հայապահպանության հզոր օջախ: Ս. էջմիածնի փառաբանմանը նվիր ված է երկու երգ *«Երգ Սրբոյն էջմիածնի»* և *«Ներբողեան ի Դէմս Սրբոյն էջմիածնի»:*

էջմիածին հարկ պետութեան

Եվ գայիսոն զօրեղութեան,

Ամուր պատուար Հաստատութեան,

Ուղղափառ աջս յոյս փրկութեան:

2. Ամենայն հայոց կաթողիկոսներ

Կաթողիկոսների պաշտամունքը և ճանաչումը որպես ազգի գլուխ և հոգևոր առաջնորդ: Հայոց պետականության բացակայության պայմաններում շատ կարևոր էր հոգևոր առաջնորդի դերը*: «Երգ մեծին Ներսէիսն Հայրապետին»,* և *«Երգ Սրբոց Հայրապետաց»:*

3. Ազգային քրիստոնյա սրբեր

Ազգային քրիստոնյա սրբերի կամ «Հայոց լուսավորիչների» գնահատում:

Օրինակ՝

«Երգ լուսաւորչացն Հայոց»

Առանձին երգեր են նվիրված Գրիգոր Լուսավորչին, Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին:

4. Հայ քրիստոնյա նահատակներ:

Օրինակ՝

«Երգ սրբոց մարտիրոսաց»

5. Հայոց թագավորներ և զորավարներ [1]:

«Երգարան»-ում թեև ավելի մեծ տեղ է հատկացված «հայկական թեմատիկային», սակայն դրա մեծագույն մասը նվիրված է հայոց եկեղեցու հայրապետներին, նշանավոր գործիչներին, սրբերին, հավատի համար նահատակված զորավարներին, Էջմիածնի եկեղեցուն և այլն [1]:

Ջահկեցու «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի» երկը կազմված է հարցուպատասխաններից (աշակերտի հարցերին պատասխանում է

վարդապետը), ընդգրկում է կրոնաաստվածաբանական ու դավանաբանական հարցերի լայն շրջանակ, որոնց հիմնավորման կամ ցուցադրման ընթացքում առատորեն օգտագործվում են նախորդ դարերի հայ մտածողների աստվածաբանական-իմաստասիրական բնույթի նյութերը:

Ջահկեցին կառուցել է էջմիածնի վանքի Վեհարանը և Ղազարապատ հյուրատունը՝ Մայր Տաճարի հարավային մասում սարկավագաց կացարանի երկհարկանի շենքի առաջին հարկում, կոչվել է նրա անունով՝ Ղազարապատ [6]:

Ղազար Ա Ջահկեցին մահացել է 1751-ի սկզբներին Վաղարշապատում: Ամփոփվել է Ս. Գայանե վանքի գավթի աջակողմում: Կաթողիկոսական աթոռին նրան հաջորդել է Մինաս Ա Ակնեցին [8]:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն եզրահանգմանը, որ Ղազար Ջահկեցու վերաբերյալ, տարածված կարծիքները, որոնց համաձայն Ջահկեցին, եղել է թույլ և տկար հոգևոր գործիչ և անձ, թյուր և անհիմն են, քանզի Ջահկեցին ըստ մեր վերլուծության ընթացքի, հանդես գալով բարդ ժամանակաշրջանում, ի հայտ բերեց հոգևոր գործչի և ազգային գաղափարախոսի լավագույն հատկանիշները: Մենք նկատեցինք, որ Ջահկեցին եղել է հայ ժողովրդի կողքին ոչ միայն գործնական քայլերով, այլ նաև գաղափարապես: Նկատելի են Ջահկեցու հայապահպան գործունեությանը միտված քայլերը, որոնք արժանի են հիշատակության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Ա., Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունը, 2020: http://go.microsoft.com/fwlink/p/?LinkId=255141
2. Ղ. Ջահկեցի, Երգարան, Կ. Պոլիս , 1737, 257 էջ:
3. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, 821 էջ:
4. Օրմանեան արք. Մ., Ազգապատում, հատոր Բ, Ս. Էջմիածին, 2001:
5. Զաքարյան Ս., Ազգի բնութագրման հարցը հայոց ինքնության քրիստոնեական հարացույցում (Գրիգոր Տաթևացի և Ղազար Ջահկեցի), Պատմություն և մշակույթ, 2020, № 1, Երևան, 2020:
6. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Ի Տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, 1873, 304 էջ:
7. Կոստիկյան Ք., Հայոց եկեղեցու շահերի և հայապահպանության համար Ջահկեցու ձեռք բերած շահական հրովարտակների մասին https://www.matenadaran.am/ftp/data/Banber18/8.Q.Kostikyan.pdf
8. «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, Ղազար Ա Ջահկեցի, 2012:

Деятельность по сохранению армянского народа Лазара Джахкеца

Казарян Мери
ВГУ, История, 3-ий курс
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент М. Брутян

Резюме

Ключевые слова: *Лазарь Джахкеци, католикос, деятельность по сохранению армянского народа,манифест, литературное наследие ,песенник*

XVIII век считается одним из самых сложных периодов в жизни армянского народа. Именно в этот период появляется фигура, деятельность которой мы рассмотрели. В статье предпринимается попытка опровергнуть ошибочное представление о том, что Лазарь Джахкеци был слабым духовным деятелем. Мы отмечаем, что любой его шаг был направлен на поднятие интересов армянского народа. Согласно нашему исследованию, Лазарь Джахкеци выявил лучшие качества духовного деятеля и национального идеолога.

The Activities of the Armenian Conservationist Lazar Jahketsi

Ghazaryan Meri
VSU, History, 3nd course
Academic Supervisor: M. Brutyan,
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words*: Lazar Jahketsi, Catholicos, Armenian preservation activities announcement, literary heritage, "Songbook of Canticles"*

The 18th century was considered to be one of the most baffling periods in the life of the Armenian people. It was during this period that the figure whose activity we have examined acted. An attempt is made in our article to object to the mistaken belief that Lazar Jahketsi was a weakling religious figure. We notice that each and every step taken by Jahketsi was aimed at bringing forward the interests of the Armenian people. In conformity with our analytical research, Lazar Jahketsi revealed the best qualities of a religiousal figure and national ideologist.

Պատրոնա-կլիենտային հարաբերությունների դերը Հռոմից կախյալ երկրների անեքսիայի գործում

Չատինյան Իրա
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, 2-կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Մելիքյան

Հանգուցային բառեր. *Հռոմ, «բարեկամ», «դաշնակից», պրինցիպատ, կայսր, կլիենտ արքա, պոսսեսիա, պրեկարիա*

1. Պատրոնատը իբրև հին ու նոր գաղութատիրության գաղափարական կրեդո

Դեռևս հռոմեական պատմագրությունը (Սալյուստիուս, Կեսար, Ստրաբոն, Պլուտարքոս և այլք) հռոմեական ծավալապաշտությունը գաղափարապես արդարացնելու նպատակով առաջ են քաշել այն դրույթը, թե Հռոմն աշխարհի քաղաքակրթության կրողն է, և նրա ազդեցության և տիրապետության հաստատումը այլ երկրների ու ժողովուրդների նկատմամբ քաղաքակրթության հաղթանակն է ընդդեմ բարբարոսության: Նրանց համար գաղափարական ուղենիշ է ծառայել Ստրաբոնի այն խիստ կանխակալ միտքը, թե «***Հայոց արքա Արտավազդը բարոքության մեջ էր այնքան ժամանակ, քանի դեռ հռոմեացիների «բարեկամն» էր***» [**14**, XI, 14.15]: Այս հայեցակարգը Թ. Մոմմզենի, Մ. Գելցերի, Պ. Կ. Սենդսի և այլոց կողմից նորից հրապարակ հանվեց XIX դ վերջերին, երբ Եվրոպայի զարգացած տերությունները սկսեցին նախապատրաստվել աշխարհի գաղութային տիրապետության վերաբաժանմանը: Մեր օրերում այն դուրս է եկել հռոմեական պատմագրության շրջանակներից, բայց շարունակում է նույն կանխակալ և միտումնավոր բնույթը: Բնավ պատահական չէ, որ աշխարհաքաղաքական ազդեցության համար մեծ տերությունների պայքարը շարունակում է ընթանալ «երրորդ աշխարհի» ժողովուրդների քաղաքակրթման ու պաշտպանության կարգախոսերով:

1958 թ. Է. Բադիանը, իր «Արտաքին կլիենտելա (Ք. ա. 264-70 թթ.)» աշխատության մեջ, արտահայտելով Հռոմեական ծավալապաշտության վերաբերյալ արևմտյան պատմագրության կանխակալ և միտումնավոր մոտեցումները, նշում է, թե Ք. ա. III դ. ի վեր «***հռոմեացիներն իրենց արտասահմանյան գործընկերներին վերաբերվել են որպես կլիենտների, եթե անգամ նրանց կոչել են «բարեկամներ» կամ «դաշնակիցներ***» [4, 113, 153-154] և որ «***արտաքին գործընկերների հետ Հռոմի հարաբերություններն առավել բարոյական և քաղաքական բնույթ են կրել, քան իրավական***» [4, 116]: Թեպետ այս տեսությունը պաշտպանել են շատ ուսումնասիրողներ [10; 15, 52-75; 12, 45-55; 20, 122], այն միանշանակ չի ընդունվել պատմագիտության մեջ [5, 333-369; 6, 1-27; 11, 13-28]: Հիմնական պատճառն այն է, որ հիշյալ տեսությունը հիմնված է ոչ թե աղբյուրագիտական տվյալների, այլ տեսական-տրամաբանական դրույթների վրա: Երկրորդ, նրանում անտեսված են Հռոմի արտաքին հարաբերություններում Ք. ա. III-I դդ. կատարված արմատական

տեղաշարժերը և Ք. ա. I – Ք. հ. I դդ. գոյություն ունեցած իրողությունները մեխանիկորեն հետադարձված են Ք. ա. III-I դդ. վրա: Երրորդ, բացի այն, որ գրավոր աղբյուրները բազմիցս են փաստում, որ «բարեկամ» և «դաշնակից» երկրների հետ Հռոմի հարաբերությունները կրել են պայմանագրային բնույթ, մեր օրերն են հասել նաև Հռոմի «բարեկամների» և «դաշնակիցների» պաշտոնական ցուցակները: Այդ ամենից հետևում է, որ Հռոմի հարաբերությունները նրա արտասահմանյան գործընկերների հետ ոչ թե բարոյական, այլ իրավաքաղաքական բնույթ են ունեցել: Ճիշտ է, գրավոր աղբյուրները չեն նշում մի դեպք, որտեղ Հռոմի հարաբերությունները «բարեկամ» կամ «դաշնակից» պետության հետ կրած լինեն իրավահավասար գործակցության բնույթ: Այդուհանդերձ, անվիճելի է, որ թագավորության դարաշրջանից ի վեր, մինչև Ք. ա. II դ. վերջերը, դրանք նման են եղել ոչ թե պատրոնի ու կլիենտի կապին, այլ հունական հեգեմոնիային, որը սովորաբար բնութագրվում է «***primus inter pares***» արտահայտությամբ: Այս ամբողջ ընթացքում «դաշնակիցներն» ու «բարեկամները» մասնակցում էին Հռոմի ծավալապաշտությանը ոչ թե հարկադրաբար, այլ՝ «***հատուցում գործընկերության դիմաց***» սկզբունքով: Միայն Երկրորդ պունիկյան պատերազմից (Ք. ա. 218-201 թթ.) հետո է, որ Հռոմը, պարտված երկրների հաշվին իր «բարեկամներին» ու «դաշնակիցներին» կատարած տարածքային նվիրատվության միջոցով հանդես է գալիս որպես նրանց բարերար: Նումիդիայի, Պերգամոնի, Հռոդոսի օրինակները ցույց են տալիս, որ «հռոմեական բարօրությունն» իսկապես եղել է և «դաշնակիցներին» տնտեսական և քաղաքական ամուր ազդեցության տակ առնելու և նախկին գործընկերային հարաբերությունը Հռոմի գերիշխանությամբ փոխարինելու մեխանիզմ: Այդուհանդերձ, դրանից հետո էլ այդ երկրների տիրակալները շարունակում էին կառավարել տեղական տոհմական իրավունքով և բնավ էլ հռոմեական կլիենտներ չէին: Պատահական չէ, որ գրավոր աղբյուրները և նույնիսկ հռոմեական ծավալապաշտության գաղափարախոս Պոլիբիուսը Հռոմի քաղաքական ազդեցությանը ենթակա արքաներին «կլիենտ» չեն կոչում: Սովորաբար Է. Բադիենի հետևորդները հղում են Սվետոնիուսի՝ Օգոստոս կայսեր կենսագրության մի հատվածին [3, II, LX][1]. որտեղ, սակայն, հեղինակը բարեկամ և դաշնակից արքաներին ոչ թե կլիենտ է անվանում, այլ ընդամենը պալատական վարվելակերպի շրջանակներում համեմատում է նրանց վերաբերմունքը պատրոնի հանդեպ կլիենտի վերաբերմունքի հետ: Դա լիովին համապատասխանում է քաղաքական իրողությանը: Բայց Տիգրան Մեծի արքունիքում վեհապետի հանդեպ կախյալ արքաների նմանատիպ վարքի մասին Պլուտարքոսի հաղորդումից հասկանալի է դառնում, որ Սվետոնիուսի ներկայացրած հարաբերությունն իր բնույթով ոչ թե զուտ հռոմեական է, այլ հատկանշական է բոլոր վեհապետություններին:

«Դաշնակից» ու «բարեկամ» արքաների հետ Հռոմի հարաբերություններն

[1] «Բարեկամ և դաշնակից արքաները.... հաճախ էին լքում իրենց թագավորությունները՝ (Օգոստոսին-Ի. Չ.) ոչ միայն Հռոմում, այլ նաև պրովինցիաներում ճամփորդելիս ամեն օր ուղեկցելու և տոգա հագած ու առանց արքայական պատվանշանների՝ ինչպես կլիենտներ, նրան սպասավորելու համար»:

այլափոխվեցին միայն Ք. ա. I դ.՝ պայմանավորված Հռոմում մոլեգնած չորս քաղաքացիական պատերազմներին «դաշնակիցների» և «բարեկամների» վերաբերմունքով: Նրանցից շատերը սխալ քաղաքական հաշվարկի պատճառով կանգնեցին հաղթողների վրեժխնդրության առաջ: Սուլլան, Կեսարը, Անտոնիուսն ու Օկտավիանուսը հիմնականում ձեռնպահ մնացին այդօրինակ դաշնակիցների (Բութանիա, Կապպադովկիա, Պոնտոս, Բոսպոր, Նումիդիա և այլք) տարածքի բռնակցումից և պահպանեցին դրանց թագավորության (***Regium***) կարգավիճակը: Այնուամենայնիվ, նրանք հասան իրենց քաղաքական հակառակորդներին աջակցած երկրների «հարկադրական անձնատվությանը» (***deditio***), որը իրավական պլանում հավասարազոր էր Հռոմից կրած պարտությանը [6, 79]: Այդպիսի երկրները հայտարարվեցին «***In juri Romani obnoxa*** – Հռոմեական իրավունքին ենթակա», այլ խոսքով՝ Հռոմի սեփականություն, որի կառավարման իրավունքը հաղթողներն իբրև նվեր (***donum***) հանձնեցին իրենց դրածոներին [7, XXXVIII. 38.4]: Վերջիններս, եթե անգամ տեղական արքայատան ներկայացուցիչ էին, այլևս տվյալ տարածքի տերերը չէին, այլ սոսկ տնօրենները, որոնց իրավունքը բխում էր միայն հռոմեական շնորհից:

2. Կախյալ արքաների հետ Հռոմի հարաբերությունների ռոմանականացումը

Ք. ա. I դ. Երկրորդ կեսին Հռոմեական Հանրապետության ներքին կյանքում կատարվող արմատական տեղաշարժերին զուգընթաց փոխվեցին նաև Հռոմի արտաքին քաղաքական մարտահրավերները: Ընդարձակվել էին կայսրության արևելյան սահմանները, Հռոմը ձեռք էր բերել նոր բարեկամներ, նոր հարևաններ և նոր թշնամի՝ ի դեմս Պարթևական տերության: Նման պայմաններում Հռոմն այլևս չբավարարվեց «դաշնակիցների» ու «բարեկամների» նկատմամբ վերահսկողության հելլենիստական մեխանիզմներով և Ք. ա. I դ. երկրորդ կեսից սկսեց կախյալ երկրների նկատմամբ իր տիրապետությունը վերաձևակերպել հռոմեական իրավունքի նորմերով:

Կախյալ արքաների հետ Հռոմի հարաբերությունների ռոմանականացման առաջին քայլը դարձավ դրանք պատրոնա-կլիենտային հարաբերությունների առանցքով և նրա նմանությամբ վերակառուցելը[2]: Իսկ դրա համար իբրև նախադրյալ ծառայեց այն հանգամանքը, որ Պրինցիպատի հաստատումից հետո կայսրերը ճանաչվեցին նախ պրովինցիական տարածքների, իսկ կարճ ժամանակ անց

[2] Հին Հռոմում կլիենտները որևէ պատրիկական տոհմից պրեկարիայի սկզբունքով հողակտոր ստացած և տվյալ տոհմի հովանավորությունն ընդունած պլեբեյներ էին: Պատրոնի և կլիենտի հարաբերությունները հիմնվում էին հավատի (***fides***) վրա և կարգավորվում jus applicacionis-ի միջոցով [16, 70]: Դրանով սահմանվում էին փոխադարձ պարտավորություններ, որոնց պահպանությանը հետևում էր դիցուհի Ֆիդեսը, իսկ դրանց խախտողը դառնում էր աստվածուհու նզովքին ենթակա (sacer) [16, 70; 8, L. 1. 4]: Պատրոնը պարտավոր էր իր կլիենտի շահերը պաշտպանել պետական հաստատություններում, իսկ կլիենտը՝ տարատեսակ աջակցություն ցուցաբերել իր հովանավորին նրա ձեռնարկումներում: Եթե կլիենտը ազատարձակ էր, պատրոնի հովանավորության հետ ընդունում էր նաև նրա տոհմական անունը (nomen):

նաև կայսրության ողջ տարածքի սեփականատերեր: Փոխարինելով հռոմեական ժողովրդին (***civitas***)՝ պրինցեպսները ժառանգեցին նաև կայսրության վարչական սահմաններից դուրս տարածվող երկրների նկատմամբ սեփականության իրավունքը [17, 233-234]: Այն վերաձևակերպվեց հռոմեական իրային իրավունքի նորմերով՝ իբրև տերություն (***dominium, proprietas***) [18, 70-75], իսկ կախյալ արքայի իշխանությունը հավասարեցվեց տիրության, վարձակալության (***possessio, precaria***)[3]: Հռոմի համար կախյալ երկրների նկատմամբ պոսսեսորական իրավունքի տարածումը խոստումնալից էր առաջին հերթին դրանց նկատմամբ երբևէ ձեռքբերված իրավունքը պաշտպանելու հեռանկարի առումով, քանի որ համաձայն իրավական այս սկզբունքի, երբևէ ձեռք բերված սեփականության իրավունքը չէր կարող խախտվել ապօրինի գործողությունների (ապստամբություն, խռովություն) կամ անիրավ ոտնձգության (օտարի հավակնություններ) պատճառով:

Կախյալ արքաների հետ կայսեր նոր իրավահարաբերությունների կառուցման գործում կիրառվում է հատկապես պրեկարիայի սկզբունքը, ըստ որի՝ սեփականատերն ինչ-որ մեկին նրա խնդրանքով հանձնում է հողային տիրույթ՝ ցանկացած ժամանակ այն հետ պահանջելու պայմանով [16, 419]: Իրային իրավունքի շրջանակներում հռոմեական իրավագետները տարբերում էին սեփականության ներսում տիրույթ վարձակալած պրեկարիստին սեփականության ծայրամասում տիրույթ ստացած պրեկարիստից. Առաջինը բոլոր դեպքերում դիտվում էր իբրև տիրույթի վարձակալ, իսկ երկրորդը կարող էր իբրև սեփականատեր հանդես գալ բոլորի հետ հարաբերություններում՝ բացի հողի իրական սեփականատիրոջից: Պրեկարիստների այդ երկու կարգավիճակները համապատասխանում են Հռոմի «դաշնակից» և «բարեկամ» արքաների իրավական տարբերությանը: Առաջինները (Կապպադովկիայի, Կիլիկիայի, Կոմմագենեի, Պոնտոսի և այլ արքաներ) նույնացվում էին ներքին պրեկարիստների հետ, որոնց նկատմամբ հռոմեական տիրապետությունը խիստ առարկայական էր: Արտաքին պրեկարիստների հետ նույնացվող «բարեկամները» (Մեծ Հայքի, Նաբաթեայի, Բոսպորի արքաներ) տնօրինում էին հռոմեական գերիշխանության ծայրամասերին և, բացի կայսրից, բոլորի հետ և բոլոր հարաբերություններում ներկայանում էին իբրև տվյալ տիրույթի սեփականատեր: Ինչպես քաղաքացիական կյանքում, նույնպես և «արտաքին վարձակալության» դեպքում կայսեր բացարձակ իրավունքն էր մնում ցանկացած պահի կախյալ արքային շնորհազրկելը և նրան տրված «տիրույթը» հետ առնելը: Այլ խոսքով՝ Ք. ա. I դ. վերջին քառորդից սկսած, կախյալ արքաները կայսրին պատկանող տարածքի կառավարիչներ էին և, հայդմ, պատասխանատու էին ոչ թե հռոմեական սենատին կամ ժողովրդին, այլ կայսրին: Այս վերջին նորամուծությունը փոխում էր նաև Հռոմի և կախյալ արքաների իրավաքաղաքական հարաբերությունը, քանի որ նրանց տնօրինած երկրների նկատմամբ գերագույն սեփականության իրավունքի հետ կայսրին էին անցնում նաև այդ սեփականության վե-

[3] Հռոմեական իրավագետները շեշտում են, որ այդ երկուսը, ձևական նմանությունից զատ, ոչ մի ընդհանրություն չունեն [17, 233-234]: Իրավական այս նորմերի մասին տե՛ս [16, 417, 419; 18, 121-122]:

բահսկողության և հովանավորության իրավունքը: Արդյունքում, Հռոմի և կախյալ երկրների միջպետական հարաբերությունները վերափոխվեցին կայսեր և կլիենտ (կախյալ) արքաների անձնական, վարձակալական կապի, իսկ նրանց քաղաքական հարաբերությունների մշակույթն էլ ձեռք է բերում պատրոնա-կլիենտային էտիկետի շատ գծեր: Այստեղ նույնպես կայսեր (պրինցեպսի) հետ կախյալ արքայի կապը սկսվում է հռոմեական գերի իշխանության (իրավ.՝ տիրապետության) տակ գտնվող երկրամասի նկատմամբ նրա հայցի բավարարմամբ [9, LXII. 5. 2-3]: Այս պարագայում էլ հռոմեական պետությունը ստանձնում էր միջազգային հարաբերություններում կախյալ արքայի պաշտպանությունն ու հովանավորությունը: Կախյալ արքան իր հերթին, ինչպես հռոմեական կլիենտը, ստացած երկրի (տիրույթի) դիմաց Հռոմին մատուցում էր նյութական, ռազմական, հոգևոր-ծիսական և քաղաքական ծառայություններ [7, XXXVIII. 38. 4]: Այս դեպքում ևս հարաբերությունների հիմքում դրված է «հավատի» սկզբունքը, որի խախտողին սպառնում են դիցական նզովքն ու հեղինազրկությունը [8, L. 1. 4]: Վերջապես, կախյալ արքաներից շատերը հռոմեական կլիենտների պես ընդունում էին իրենց իշխանություն շնորհած կայսրերի տոհմանունը [19, 207-223]: Այդուհանդերձ, քննարկվող հարաբերության քաղաքացիական և արտաքին քաղաքական դրսևորումների մեջ առկա հիմնային տարբերությունները ցույց են տալիս, որ պատրոնա-կլիենտային հարաբերության սկզբունքը միջազգային հարաբերություններ է արտաբերվել ի շահ Հռոմի կատարված էական խմբագրությամբ: Օրինակ, քաղաքացիական միջավայրում այն ձևավորվում էր կամավորության սկզբունքով, և կողմերը չէին կարող միմյանց մեղադրանք առաջադրել [16, 70]: Մինչդեռ Հռոմի հետ կախյալ արքաների կապը, եթե անգամ նախկինում այն հաստատվել էր կամավորության սկզբունքով, վերափոխվում է հարկադրանքի վրա հիմնված կապի: Քաղաքացիական հարաբերություններում պատրոնի հովանավորության և կլիենտի հավատարմության երաշխավորը համարվում էր Ֆիդես աստվածուհին, մինչդեռ արտաքին քաղաքականության ոլորտում պատժողի և բարերարի դերը վերապահվում էր կայսրին (երբեմն՝ ձևականորեն սենատին), որն իր հայեցողությամբ էր տնօրինում կախյալ արքաների կյանքն [3, XXXV] ու նրանց կառավարած երկրների իրավական կարգավիճակը [13, XXVII. 2; 9, LXII. 5. 2]: Վերջապես, քաղաքացիական հարաբերություններում կլիենտը կարող էր ունենալ մի քանի պատրոններ, մինչդեռ Հռոմի «դաշնակցի» կարգավիճակ ունեցող կլիենտ արքաները գործնականում զրկված էին միջազգային հարաբերությունների սուբյեկտ ներկայանալու իրավունքից: Այլ կերպ ասած, կախյալ երկրի նկատմամբ Հռոմի արտաքին պատրոնությունը ոչ թե բարօրություն, այլ Հռոմի գաղութային քաղաքականության ազդու գործիք էր, որը մի կողմից քայքայում, արժեզրկում էր տվյալ երկրի պետական ավանդները, տեղական արքայական իշխանությունն ու քաղաքական արժեհամակարգը, մյուս կողմից նպաստում էր հռոմեական տիրապետության գաղափարական հիմնավորմանը:

Օգոստոս կայսրն ու նրա հաջորդները հպատակ երկրների նկատմամբ իրենց իրավունքը հստակեցնելու հարցում ազդու մեխանիզմ դարձրին կլիենտ

արքաներին իշխանությամբ օժտելու գործողությունը: Այդ ծեսը գործնականում խորհրդանշում էր «հռոմեական սեփականություն» համարվող երկրների վերաբերյալ «վարձակալական պայմանագրի» կնքելը: Այդ պատճառով էլ այն պարտադիր իրականացվում էր կայսեր շնորհին արժանացած յուրաքանչյուր նոր կլիենետ արքայի հետ՝ անկախ նախորդի հետ վերջինիս ազգակցական կապից: Բայց կլիենետ արքաների ինվեստիտուրան ուներ նաև շատ ավելի հեռուն տանող ծիսական և իրավական-գաղափարական նշանակություն: Մի կողմից՝ այն կապվում էր կայսեր ուղեկից անձնական ոգու (***Genius***) կամ կայսեր գերմարդկային, աստվածային ուժի (***Numen***) երկրպագության հետ [1, 79]: Բայց մյուս կողմից՝ այն կառչում էր արևելյան այն հազարամյա պատկերացմանը, ըստ որի՝ արքայական իշխանությունը կարող է միայն աստվածատուր լինել: Այլ խոսքով, թագադրելով այս կամ այն անձին որպես կլիենետ արքա, կայսրերը հավակնում էին դառնալ տվյալ անձի և նրա ղեկավարած հանրության նկատմամբ գերագույն աստվածություն [2, 212-215]: Կայսեր արքայաստեղծ և արքայակործան ատյանի մասին գաղափարը դառնում է կլիենետ արքաների հետ նրանց հարաբերության գաղափարաբանության առանցքային դրույթը: Այդ ուղեգծից յուրաքանչյուր շեղում պաշտոնական Հռոմի կողմից գնահատվում էր իբրև ապստամբություն:

3. Կլիենետ արքաների քաղաքական քծնանքը որպես կախյալ պետությունների հոգեվարքի արտահայտություն

«Բարեկամ» և «դաշնակից» արքաների հետ հարաբերությունները ռոմանականացնելու քաղաքականության հաջողությունը տպավորիչ, բայց նաև տարաչափ էր: Օգոստոս կայսրն առաջինը Մեծ Հայքի Տիգրան III (Ք. ա. 20-8 թթ.) արքայի գահակալության պարագայում գործարկեց կլիենետ արքայի ինվեստիտուրայի ծիսահրավական մեխանիզմը: Բայց Մեծ Հայքի Տիգրան IV (Ք. ա. 8-5, Ք. ա. 1-Ք. հ. 1 թթ.) և Նաբաթեայի Արետես IV (Ք. ա. 9-Ք. հ. 40 թթ.) արքաների ինքնաթագադրման փաստերը վկայում են, որ սրանցում սուվերեն պետականության ավանդները դեռևս կենսունակ են: Տևական ռազմաքաղաքական դիմակայությունից, բայց հատկապես Մեծ Հայքի գահին իր դրածոներ Արտավազդ III-ի (2-4 թթ.) և Արիոբարզանեսի (4-6 թթ.) սպանություններից հետո Օգոստոս կայսրը համակերպվեց բարեկամ արքաների հարաբերական ինքնուրույնության հետ: Նրանց իշխանությունը ձևակերպվեց ոչ թե սովորական պոսսեսիայի օրինակով, այլ իբրև պրեկարիա: Հայդմ, այդ երկրների կլիենետ արքաները իշխանություն էին ստանում կայսրից և կատարում էին իրենց քաղաքական կարգավիճակից բխող պարտավորություններ, բայց պահպանում էին սուվերենության ինչ-ինչ տարրեր: Արտաքուստ դա արտացոլվում էր այդ երկրների կլիենետ արքաների իշխանության նշաններում. Մեծ Հայքի արքաները կլիենետ արքաների պատվանշան դարձած ապարոշի (դիադեմա) հետ շարունակում էին կրել ավանդական խույր (տիարա), իսկ Նաբաթեայի արքաները՝ պսակ:

Հռոմին հաջողվել էր երբեմնի «դաշնակից» երկրներում արքաների հաճախակի փոփոխությունների, նրանց կայսեր պաշտամունքի պարտադրման միջոցով նսեմացնել արքայական իշխանության քաղաքական արժեքը: Մյուս կողմից՝

բացելով հռոմեական էլիտայի դռները տեղական ազնվականության վերնախավի առջև, Հռոմը ստեղծել էր իր տիրապետության մեջ շահագրգիռ ամուր սոցիալական բազա: Մավրիտանիայի, Նումիդիայի, Կապպադովկիայի, Կոմմագենեի փորձը ցույց է տալիս, որ տեղական արիստոկրատիան պատրաստ է իր տնտեսական և քաղաքական խավի զարգացման հեռանկարին զոհաբերել սեփական պետությունը: Հայդմ, այդ երկրներում արքայական իշխանությունը մնում էր միայն կայսեր բարեհաճության շնորհիվ: Ընդ որում, Օգոստոսից հետո կայսրերի վերաբերմունքը դառնում էր ավելի ու ավելի քմահաճ: Նման պայմաններում կլիենտ արքաները իրենց իշխանությունը, իսկ հաճախ նույնիսկ կյանքը պահպանելու հարցում կանգնում էին բարդ մարտահրավերի առջև, այն է՝ երկրպագության և հարգանքի տուրք մատուցելով իրենց իշխանության աղբյուր կայսրին, պահպանել այդ իշխանության հեղինակությունն ու օրինականությունը: Իրականում դա անլուծելի խնդիր էր, քանի որ կայսրին աստվածային պատիվներ մատուցելն ինքնին զրոյացնում էր կլիենտ արքայի հեղինակությունը սեփական հանրության աչքին: Այդ է պատճառը, որ կլիենտ արքաները իրենց իշխանության պահպանման միակ միջոցը տեսան քաղաքական քծնանքի մեջ: Դա արտահայտվում էր նրանց կողմից հռոմեական նորաձևության ընդունման, դրամների դարձերեսին կայսեր պատկերի և «Աստված Կեսարի», «Աստված Կեսարի, Բարերարի» հատկանշական մակագրությունների զետեղմամբ, երբեմն դրամների երեսին կայսեր հետ սեփական դիմապատկերը դրոշմելով [15, 54], երևույթ, որ Ֆերգուս Միլլարը տեղին անվանել է երկմակարդակ ինքնիշխանություն [15, 52-53]: Ժամանակի ընթացքում քաղաքական քծնանքն ավելի մեծ չափեր ընդունեց՝ ներառելով կայսեր պատվին տաճարների և սրբարանների [3, II 78], նրա անունով քաղաքների կառուցումը կամ հների վերանվանումը: Ջ. Վիլկերի կարծիքով կլիենտ արքաների այդ ձեռնարկումները պաշտոնական Հռոմի կողմից չեն ուղղորդվել, այլ եղել են ինքնաբուխ: Սակայն քծնանքի, այդ թվում և քաղաքական քծնանքի առանձնահատկությունն էլ հենց այն է, որ այն միշտ ինքնաբուխ է, բայց մշտապես ընդառաջ է գնում տիրոջ ցանկությանը: Ուստի պատահական չէր, որ Հռոմի քաղաքական տիրապետության ծիրում ինչ-որ մեկի քծնանքի յուրաքանչյուր նոր և ինքնատիպ դրսևորում արագորեն ընդօրինակվում էր մյուսների կողմից: Այս երևույթը տեղական հանրությունների աչքին խորապես արժեզրկում էր արքայական իշխանությունը՝ վերջնականապես ի չիք դարձնելով Հռոմի երբեմնի գործընկերների սուվերենության վերջին հատիկները: Դրանով իսկ հող էր ստեղծվում նրանց տարածքները Հռոմեական կայսրությանը միացնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, «Արեգ» հրատ. 1997, 216 էջ:
2. Մելիքյան Ա., Արքայական ինվեստիտուրայի պատկերագրությունը հռոմեական դրամների վրա, Վանաձորի պետական համալսարանի Գիտական

տեղեկագիր, հումանիտար և հասարակական գիտություններ, 2. Վանաձոր 2022, էջ 212-242:
3. Սվետոնիոս, Տասներկու կեսարների կյանքը, «Հայաստան» հրատ., Երևան, 1986, 520 էջ:
4. Badian E., Foreign Clientelae (264-70 B.C.), Oxford, Claredon Press, 1958, 342 p.
5. Burton P., Clientela or Amicitia? Modeling Roman International Behavior in the Middle Republic (264-146 B.C.), Klio 85, February, 2003, pp. 333- 369.
6. Burton P., Friendship and Empire: Roman Diplomacy and Imperialism in the Middle Republic (353-146 B.C.), Cambridge University Pres, New York, 2011, 395 p.
7. DioCassios // Dio´s Roman History, with an English Translation by Earnest Cary, in Nine Volumes, Vol. III, London, New York, MCMXIV (1914).
8. DioCassios //Dio´s Roman History, wit an English Translation by Earnest Cary, in Nine Volumes, Vol. V, London, Cambridge, Massachusetts, MCMLV (1955).
9. DioCassios // DioCassiosDio´s Roman History, with an English Translation by Earnest Cary, in Nine Volumes, Vol. VIII, London, New York, MCMXXV (1925).
10. Errington R., The Dawn of Empire: Rome´s Rise to World Power, Ithaca, Cornell University Press, 1972, 318 p.
11. Gruen E., Herod, Rome, and the Diaspora, in: Herod and Augustus: Papers Presented at the IJS Conference, 21st–23rd June 2005, Eds. by Jacobson D., and Kokkinos N., London, 2009, pp. 13-28.
12. Hekster O., Trophy kings and Roman Power: A Roman Perspective on Client Kingdoms, in: Kingdoms and Principalities in the Roman Near East. Eds. Kaizer T. and Facella M., Stuttgart, 2010, pp. 45-55.
13. Res Gestae Divi Augusti, The Achievments of the Divine Augustus with an introduction by P.A. Brunt and J. M. Moore, Oxford University Press, 7-nd Edition, 1983.
14. Strabo // The Geogtaphy of Strabo with an English Translation by H. L. Jones, in Eight Volumes, Vol. VI, London, W. Heinemann LTD, Cambridge, Mass., Harvard University Press, MCMLXI (1961), 542 p.
15. Wilker J., Representations of Power, Empire, and Dynasty among Eastern Client Kings, In: The Social Dynamics of Roman Imperial Imagery, Edited by Amy Russell and Monica Hellström, Cambridge, Cambridge University Press,2020, pp. 52-75.
16. Бартошек М., Римское право: понятия, термины, определения. Из-во Юрид. лит., Москва, 1989, 448 с.
17. Голубцова Е. (отв. ред) Культура древнего Рима, т. I, Изд. «Наука», Москва, 1985. 432 с.
18. Иоффе О., Мусин В., Основы римского гражданского права: из-во Ленинградского ун-та. Ленинград, 1975, 156 с.
19. Сапрыкин С. Аспург, царь Боспора, Древности Боспора, 2002. № 5. с. 207-223.
20. Шифман И. Цезарь Август: Изд. «Наука», Ленинград, 1990, 224 с.

Роль патрон-клиентских отношений в аннексии зависимых от Рима стран

Чатинян Ира
ВГУ, История, 2-й
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент А. Меликян

Резюме

Ключевые слова: *Рим, «друзья», «союзники», принципат, император, царь, клиент, посессия, прекарий*

В начале эпохи принципата Рим переформулировал свои отношения с зависимыми царями в соответствии с принципами римского вещного права, чтобы ужесточить контроль над зависимыми государствами. В результате этого территория зависимых стран признавалась собственностью императора, а их цари становились клиентами-арендаторами. После этого, Рим последовательно шел по пути дискредитации царской власти в подчиненных странах, создавая тем самым условия для перехода к аннексии зависимых государств.

The Role of Patron-Client Relations in the Annexation of Roman-Dependent Countries

Chatinyan Ira
VSU, History, 2nd year
Academic Supervisor: A. Melikyan,
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Rome, "friends", "allies", principate, emperor, king, client, possession, precarium*

At the beginning of the era of the principate, Rome reformulated its relations with dependent kings in accordance with the principles of Roman real low in order to tighten control over dependent states. As a result, the territories of dependent countries were recognized as the property of the emperor, and their kings became vassal clients. Subsequently, Rome consistently pursued a policy of undermining royal power in subordinate countries in order to facilitate the annexation of dependent states.

Հայաստանի Հանրապետության իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. հունիս)

Պետրոսյան Կարեն
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Յ. Ղուլյան

Հանգուցային բառեր. *Ավետիք Սահակյան, Խորհրդարան, Կառավարություն, Օրենսդիր իշխանություն, Դաշնակցություն կուսակցություն*

Հայաստանի անկախության հռչակումից և Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո հայոց կենտրոնական ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ իշխանության մարմինների և առաջին հերթին գործադիր և օրենսդիր մարմինների ձևավորմանը: Սակայն նորահռչակ հանրապետությունում դժվարին խնդիր էին իշխանության ձևավորումը և պետականության կերտումը: 1918 թվականի հունիսի 4-ի Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո, Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ, Թիֆլիսում կազմվում է կառավարություն հետևյալ կազմով՝ Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Արամ Մանուկյան, Խաչատուր Կարճիկյան, Հովհաննես Հախվերդյան [1, 6]: Իր գոյության 2,5 տարվա ընթացքում նորահռչակ Հայաստանի Հանրապետությունը ունեցել է չորս նախագահ, որոնք բոլորն էլ Դաշնակցականներ էին՝ Հ. Քաջազնունի, Ալ. Խատիսյան, Համո Օհանջանյան, Սիմոն Վրացյան: 1918 թ. հուլիսի երկրորդ կեսին հանրապետության առաջին կառավարությունը և Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսից տեղափոխվեց մայրաքաղաք Երևան և անմիջապես անցավ գործի: Մինչ այդ արդեն պետական կառուցվածքներ ստեղծելու, կարգուկանոն հաստատելու ուղղությամբ հսկայական աշխատանք էր կատարել Արամ Մանուկյանը, որին իրավամբ համարում են Հայոց պետականության հիմնադիրը: Անհրաժեշտ էր ստեղծել պետական մեքենա, պետական իրավակարգ, հաստատել կարգուկանոն, երկիրը դուրս բերել քաոսից ու անիշխանությունից, գաղթականությանը սնունդ ու բնակարան տալ, կարգավորել պարենավորումը, ստեղծել բանակ: Հայոց պետականությունը կառուցվում էր եվրոպական քաղաքական և պետական կառուցվածքի օրինակով, իհարկե, հաշվի առնելով տեղական պայմանները և մեր ազգային առանձնահատկությունները: Պետք է հիմնվեր պառլամենտական դեմոկրատական հանրապետություն: Իսկ Հայաստանի սահմանադրության ընդունումը պետք է լիներ միայն Հայկական հարցի վերջնական լուծումից հետո, այսինքն՝ ազատ անկախ և միացյալ Հայաստանի ստեղծումից հետո միայն: Հունիսի 7-ին սկսվեցին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի շարունակական նիստերը՝ Ավ. Ահարոնյանի նախագահությամբ, որտեղ քննարկվեց Հայաստանի անդրանիկ օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորման հարցը: Երկարատև և բուռն քննարկումների արդյունքում խորհուրդը որոշեց Հովհ. Քաջազնունուն ընտրել Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ և նրան հանձնարարել կազմել ժամանակավոր կառավարություն դաշ-

նագրային սկզբունքով՝ անձերի ընտրությունը վերապահելով նրան [2, 3]: Որոշվեց նաև Հայոց ազգային կենտրոնական խորհրդին ժամանակավորապես վերապահել օրենսդիր մարմնի լիազորություններ և Թիֆլիսից տեղափոխել Երևան: Մինչ նորակազմ կառավարությունը Թիֆլիսից կժամաներ Երևան, տեղում պետական կառուցվածքներ ստեղծելու և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ հսկայական կազմակերպչական աշխատանք էին տարել Երևանի հայոց ազգային խորհուրդն ու Արամ Մանուկյանը: Հայոց ազգային խորհուրդը հուլիսի 19-ին ժամանում է Երևան: Օրակարգի հարց էր դարձել Հայաստանի Հանրապետության վերջնական ձևավորումը: Նախապես ընտրված էին 4 թեկնածուներ՝ Ա. Խատիսյան, Ա. Մանուկյան, Խաչատուր Կարճիկյան, Հովհ. Հախվերդյան: Կառավարության կառուցվածքում ներառվեց նաև արդարադատության նախարարությունը, որը ժամանակավորապես պետք է ղեկավարեր Խաչատուր Կարճիկյանը: Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդր Խատիսյանը հաստատվել էր որպես Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, սակայն նրա բացակայության պատճառով Ազգային կենտրոնական խորհրդի հուլիսի 24-ի որոշմամբ՝ վարչապետ Հովհաննես Քաջազնունին դարձյալ մեկտեղեց նաև արտաքին գործերի նախարարի գործառույթները: Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը Խորհրդարանն էր, որում ներկայացված էին երկրի հիմնական ուժերը և ազգությունները: Նաև ազատ գործելու իրավունք ունեին տարբեր կուսակցություններ, այդ թվում նաև բոլշևիկները, որոնք հիմնականում տնօրինում էին բազմաթիվ պետական հիմնարկություններ: Հայաստանի տարածքում գործող ամենաազդեցիկ քաղաքական ուժը Հ.Հ. Դաշնակցություն կուսակցությունն էր, որն էլ կրում էր անկախ հանրապետության քաղաքական ողջ պատասխանատվությունը: Քանի որ անկախության հռչակումից հետո հնարավոր չէր խորհրդարանի ընտրություններ անցկացնել, ուստի Թիֆլիսի և Երևանի Ազգային խորհուրդների խառը նիստում որոշվեց եռապատկել հայոց ազգային խորհրդի անդամների թիվը, այն հասցնելով 15-ի, բացի 3 անկուսակցականներից, հրավիրել ազգային փոքրամասնությունների՝ թուրքերի, ռուսների, եզդիների ներկայացուցիչների և կազմել Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը, բաղկացած 47 անդամներից [3, 249]: Հայաստանի խորհրդի նստաշրջանի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1918 թվականի օգոստոսի 1-ին, Երևանի քաղաքային ակումբի շենքում: Այն բացեց խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանը: Դահլիճում առանձին տեղ էր հատկացված Ամենայն Հայոց կաթողիկոսի համար: Հայաստանի խորհրդի աշխատակարգը բաղկացած էր ութ բաժիններից և 201 հոդվածներից: Խորհրդարանի հավանությանը արժանացավ Հ. Քաջազնունու կառավարության հայտագիրը: Նկատելի էր նաև այն, որ Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական քաղաքական համակարգի կայունացումը անխզելիորեն կապված էր ազգային պետականության ձևավորման և կերտման օրախնդիր հիմնահարցերի հետ: Հայտնի է, որ խորհրդարանական հանրապետությունն անխուսափելիորեն ենթադրում էր նաև այնպիսի պետական կյանքի կազմակերպում, ուր գերագույն իշխանությունը վերապահվում է ընտրովի օրենս-

դիր բարձրագույն իշխանությանը՝ խորհրդարանին: Խորհրդարանը ժողովրդի ներկայացուցչության ու կամքի դրսևորման բարձրագույն ձևն է: Նա միաժամանակ ժողովրդավարական հաստատության բարձրագույն արտահայտություն է: Եվ այս ամենի դրական կողմերից մեկն այն էր, որ խորհրդարանական այս համակարգը հանդես էր գալիս այնպիսի մի ներկայացուցչություն, որը իրականացնում էր կարգավորիչ, վերահսկիչ գործունեություն, օրենսդրական աշխատանքի ձևով: Հայաստանում խորհրդարանական համակարգի ձևավորումն ընթացել է հասարակական, քաղաքական և ազգային ծայրաստիճան բարդ պայմաններում: Այն ընթանում էր իրավական դաշտի, ինչպես նաև նրան փոխարինող օրենսդրական լիակատար բացակայության պայմաններում, որի հետևանքով ոչ մի գործնական հնարավորություն չի եղել խորհրդարանական ընտրություններ կազմակերպելու [7, 188]: Անկախ պետականության կայացման վաղ փուլում խորհրդարանական քաղքական համակարգը ձևավորվել է ավանդական լեգիտիմության սկզբունքով՝ հիմք ունենալով մինչպետական ժամանակաշրջանի ազգային-քաղաքական իրողությունները: Դրա վկայությունն է այն, որ Հայաստանի առաջին Հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմինը կազմվեց Հայոց ազգային խորհրդի մեջ մտնող կուսակցական ներկայացուցիչների թվի համամասնական եռապատկմամբ և համալրվեց անկուսակցականներով [7, 188]: Քաջ գիտակցելով, որ այն երկար կյանք չի ունենալու, նրան տրվեց ժամանակավոր անունը: Իսկ մինչ այդ օրախնդիր հրամայական հայտարարվեց պետական շինարարությունը, քանի որ «վերից վար պետք էր կառուցել պետական մեքենան: Երկիրը կատարյալ քաոսի և անիշխանության մեջ էր՝ պետք էր կարգ ու օրենք հաստատել» [4, 189]: Խորհրդի հանդիսավոր նիստի բացումը կատարեց ՀՅԴ-ական Ավետիք Սահակյանը: Նա իր բացման խոսքում ընդգծում էր, որ խորհուրդը հանդիսանալու է Հայաստանի Հանրապետության գերագույն իրավասու մարմինը [1, 53]: Օգոստոսի 1-ի խորհրդի աշխատանքներին մասնակցում էին նաև Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Պարսկաստանի և Ուկրաինայի պատվիրակները: Եվ պրակտիկան ցույց էր տալիս, որ օրենսդիր բարձրագույն իշխանությունը բրգաձև կառուցվածք ունի, և այն կառավարվում է ըստ աստիճանակարգության: Դրա արդյունքը եղավ այն, որ խորհրդարանական հանձնաժողովները կազմվեցին ոչ թե ընտրությամբ, այլ համամասնական ներկայացուցչությամբ: Այդպես ձևավորվեցին խորհրդի 14 հանձնաժողովները՝ իրենց նախագահներով: Նաև քննարկման էին դրվում քվեարկության բաց, փակ կամ առաձին դեպքերում նաև անվանական ձևերը: Քվեարկությունն անցկացվում էր ձայների պարզ մեծամասնությամբ: Հաստատվեց նաև, որ օրենսդիր նիստերը պետք է գումարել պարբերաբար՝ շաբաթը 2 անգամ: Իսկ որոշ դեպքերում նաև նախատեսվում էր հրավիրել արտակարգ նիստեր: Խորհրդի նիստերին մշտապես մասնակցում էին հասարակության ներկայացուցիչները: Օգոստոսի 1-ին «Մեր հայրենիք» օրհներգի հնչյունների ներքո շենքի գլխին բարձրացվում է եռագույնը: Այնուհետև Ավետիք Սահակյանը առաջարկում է պատգամավորներից մեկին ընտրել խորհրդի նախագահ: Հանդիսավոր բացումից հետո հրապարակում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետու-

թյան առաջին զորահանդեսը, որն ընդունեց հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանը: Հաջորդ նիստում, որը կայացավ օգոստոսի 3-ին, լսվում է Հովհաննես Քաջազնունու կառավարության հայտարարագիրը [5, 57]: Իր ելույթում վարչապետը նշում է որ ավերակների կույտի պայմաններում կառավարությունն իր աշխատանքները սկսում է զրոյից և որ իր առջև դնում է միայն լուծելի խնդիրներ: Օգոստոսի 5-ի նիստում, որն, ի դեպ, 3-րդն էր, հայտագրի առթիվ արտահայտվեցին կուսակցությունները: ՀԾԿ կուսակցությունը հիմնականում հավանություն է տալիս կառավարության որդեգրած քաղաքականությանը: Հայաստանի խորհուրդն ուներ հետևյալ հանձնաժողովները՝ ֆինանսական, օրենսդրական, ինքնավարության, խմբագրական, կարգադրիչ, դպրոցական, պարենավորման, գաղթականության, բժշկա-սանիտարական, հողային, աշխատանքի, մանդատային, Նակազի և հարցապնդումների: Սկզբնական փուլում խորհրդարանի և նրա հանձնաժողովների աշխատանքի բացերից մեկն այն էր, որ օրենսդրական նախաձեռնության իրավունքով օրինագծերը ոչ թե իրենք էին մշակում, այլ կառավարությունը [5, 57]: Այս ամենից զատ Հայաստանի խորհուրդն ուներ սովորաբար խորհրդարանների համար անսովոր, կարգադրիչ հանձնաժողով, որով իրականացվում էին կառավարչական բնույթի գործառույթներ: Պարզվում էր նաև, որ խորհուրդն ուներ ոչ միայն օրենսդիր մարմնի իրավասություններ, այլ նաև գործադիր մարմնի գործառույթներ էր իրականացնում: Այս կապակցությամբ Խոնդկարյանն իր հուշերում նշում է, որ Հայաստանի խորհուրդը շատ հաճախ հանդես էր գալիս գործադիր մարմնի դերում և իր հանձնաժողովների միջոցով տնօրինում էր վարչական բնույթի գործեր: Խորհրդարանը հաճախ օրեքների անվան տակ հրապարակում էր վարչական բնույթի գործեր: Խորհրդարանը կառավարության ներկայացրած օրինագծի հիման վրա ստեղծում է Պետական վերահսկողության մարմին: Խորհրդարանը սահմանեց նաև պատգամավորներին տրվող օրապահիկի չափը: Սահմանվում էր նաև այն, որ Հայաստանի խորհրդի անդամը չէր կարող վարել որևէ այլ պետական կամ վճարովի հասարակական պաշտոն: Սկսած սեպտեմբեր ամսից՝ նիստերը վարում էին շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում նաև հրավիրվում էին արտակարգ նիստեր: Եվ արարողակարգային տեսանկյունից նիստերը սովորաբար գումարվում էին երեկոյան ժամերին: Այսպիսով, երբ ձևավորվեց Հայաստանի խորհրդարանը, այն իր մեջ ներառում էր երկրի գերագույն ուժը: Հարկ է նաև նշել, որ Սոցիալիստ-դեմոկրատական ֆրակցիայի առաջնորդ Հայկ Ազատյանը Քաջազնունու մարտավարությունը նմանեցրեց արգահատելի ցարական վարչապետ Ստոլիպինի գործելակերպին, ըստ որի՝ պետք էր մոլորեցնել զանգվածներին՝ հրամցնելով նրանց նախ խաղաղություն, ապա բարեփոխումներ կարգախոսով: Սոցիալիստ-դեմոկրատական ֆրակցիայի միակ բոլշևիկը՝ Արշավիր Մելիքյանը, բեմ ելավ փառաբանելու համաշխարհային հեղափոխությունը և նսեմացնելու ազգային անկախության գաղափարը: Քաջազնունու ճառում չկար ոչ մի բան, որը մատնանշեր, թե Դաշնակցությունը սոցիալական կուսակցություն է: Այդ պատճառով էլ աջակողմյանները միացան կենտրոնին՝ Դաշնակցությանը, և

վստահության քվե տվեցին Քաջազնունուն: Անգամ Էսեռները և Էսդեկները դեմ չքվեարկեցին: Քանի դեռ օսմանյան բանակները լցվել էին Երևանի նահանգի մեջ, ձախակողմյան կուսակցությունները գերադասեցին ձեռնպահ մնալ, քան դեմ քվեարկել [5, 46]:

Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ենթակա էր խորհրդարանին: Խորհրդարանը ոչ միայն ընտրում էր կառավարությանը, այլև վերահսկում էր նրա ֆինանսատնտեսական գործունեությունը, վերահսկում էր պետական վերահսկիչի միջոցով: Արդի քաղաքագիտությունը համակարծիք է խորհրդարանական հանրապետությանը բնորոշ այնպիսի բնութագրիչների հարցում, ինչպիսիք են գործադիր իշխանության ձևավորումը և նրա գործունեության նկատմամբ կոլեկտիվ վերահսկողության իրականացումը [6, 13]: Այս առումով Հայաստանի խորհուրդը ընտրել էր ժողովրդավարության ուղին, քանի որ երկրի գործադիր իշխանությունը ընտրվում էր Հայաստանի խորհրդի կողմից: Աշխատակարգով նախատեսված էր նաև կառավարության վստահության քվեի, ինչպես նաև հրաժարականի հարցերի քննարկում: Դրա վառ վկայությունն այն էր, որ Հովհաննես Քաջազնունու կառավարության հայտարարագրի շուրջ կուսակցական խմբակցությունների կողմից ծավալված քննարկումներ էին, որոնց շրջանակներում կառավարությունը վստահության հարց բարձրացրեց և համապատասխան վստահության քվե ստացավ: Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական համակարգի ժողովրդավարական տարրերի թվում էր պետական վերահսկողության մարմինը: Դա վկայում է, որ երկրի օրենսդիր իշխանությունը ոչ միայն իրեն էր վերապահել պետական վերահսկչի իրավունքը, այլև գործնականորեն ամբողջ վերահսկողությունը վերցնում էր իր ձեռքը: Լիովին հստակեցրած չէին պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները: Դրա վկայություններից կարելի է համարել նաև այն, որ Հայաստանի խորհուրդը հաստատել էր կարգադրիչ հանձնաժողով, որը գործնականում իրականացնում էր կառավարչական բնույթի գործառույթներ, այլ կերպ ասած՝ փորձում էր իրականցնել նաև գործադիր իշխանության իրավասությունները: Քիչ չէին լինում նաև այն դեպքերը, երբ օրենսդիր իշխանությունը կատարում էր գործադիր իշխանության գործառույթները [7, 192]: Նույնը պետք է ասել նաև խորհրդարանական կուսակցությունների վերաբերյալ: Հայաստանի խորհրդարանական համակարգում գործում էին չորս կուսակցություններ, ՀՅԴ-ն, որը իշխող կուսակցություն էր, ՀԺԿ-ն, Էսեռները, սոցիալ-դեմոկրատները: Խորհրդարանում կուսակցություններից յուրաքանչյուրը առաջնորդվում է որոշակի քաղաքական շահերով: Հայաստանի խորհրդի ձևավորման գործում մեծ նշանակություն ունեցան հիմնականում կուսակցությունները: Ի մի բերելով այդ ամենը՝ կարող ենք ասել, որ Հայաստանի խորհուրդը երկրի օրենսդիր գերագույն իշխանությունն էր, կազմում էր կառավարություն և վերահսկում նրա գործունեությունը: Դա անվերկբա վկայում էր, որ Հայաստանում հաստատվել էր խորհրդարանական գերակայության Հանրապետություն [7, 192]: Այդ ամենով հանդերձ՝ հարկ է ընդգծել, որ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ Հայաստանի առաջին խորհրդարանը երկար գոյատևել չէր կարող: Այդ

առնչությամբ հարկ է նշել, որ Հանրապետության խորհրդարանական քաղաքական համակարգն այդպես էլ չկարողացավ մինչև վերջ արմատավորել պետական իշխանությանը բնորոշ այնպիսի համապարփակ գծեր, ինչպիսիք են իշխանության համընդհանրությունն ու թափանցիկությունը: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական կուսակցությունները գործունեության կարճատև ընթացքում չափազանց թույլ էին կատարում հատկապես ներկայացուցչական գործառույթները: Ալեքսանդր Խատիսյանի բացակայությամբ պայմանավորված, ժամանակավոր արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնում է Հովհաննես Քաջազնունին: Մոտ հինգ ամիս գտնվելով արտերկրում՝ Խատիսյանն ու նրա պատվիրակությունը Կոստանդնուպոլսում կատարում են դիվանագիտական առաքելություն հյուպատոսական ներկայացուցիչներ տեղակայելու ուղղությամբ, հատկապես այն վայրերում, որտեղ կային հայության ստվար զանգվածներ: Օրինակ, կարելի է նշել Ուկրաինայում [2, 8]: Այսպիսով, կարելի է ասել, որ Հայաստանի առաջին Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ստեղծումը կատարվեց երկրում ստեղծված իրավիճակով և դրանով պայմանավորված: Հայաստանի խորհրդարանը բովանդակում էր երկրի գերագույն իշխանությունը: Սակայն հետագայում հանգամանքների բերումով այդ իրավիճաը ենթարկվում է փոփոխության: Կարճ ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեցին իշխանության մարմիններ, ինչն ինքնին ցույց է տալիս, որ Հայաստանն արդեն կազմակերպված պետություն էր: Կառավարության գլուխ կանգնած էր նախարարների խորհրդի նախագահը կամ վարչապետը, որը համարվում հանրապետության առաջին պաշտոնատար անձը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Երևան, 1992, էջ 152:
2. Պետրոսյան Գ., Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծման պատմությունից, Երևան, 2020, էջ 11:
3. Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետությունը 1912-1920 թթ., Երևան, 2003, էջ 399:
4. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 704:
5. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, Երևան 2005, էջ 570:
6. Քաջազնունի Յովհ., Հայաստանի Հանրապետութիւն, Երևան, 1993, էջ 39:
7. Քալաշյան Ա., Հայաստանի առաջին Հանրապետության խորհուրդը և նրա առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 221:
8. Հայոց պատմություն, հատոր 4, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 773:

Формирование центральных органов власти Республики Армения (июнь 1918 г.)

Петросян Карен
ВГУ, История, магистратура, *1-й курс*
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент Ю. Гулян

Резюме

Ключевые слова: *Аветик Саакян, парламент, правительство, законодательная власть, партия Дашнакцутюн*

Создание органов законодательной и исполнительной власти Первой Республики Армения произошло в связи с создавшейся в стране ситуацией: парламент Армении содержал верховную власть страны. Однако в дальнейшем по стечению обстоятельств эта ситуация претерпевает изменения. За короткое время в Республике Армения сформировались органы власти, что само по себе показывает, что Армения уже была организованным государством. Во главе правительства стоял председатель Совета министров или премьер-министр, который считается первым должностным лицом республики.

Formation of the Central Authorities of the Republic of Armenia (June 1918)

Petrosyan Karen
VSU, History, MA, 1st year
Academic Supervisor: Yu. Ghulyan,
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words: *Avetik Sahakyan, Parliament, government, legislature, Dashnaktsutyun Party*

The establishment of the legislative and executive authorities of the First Republic of Armenia was closely tied to the situation in the country: the Parliament of Armenia held the supreme power of the state. However, over time, this situation changed due to various circumstances. Within a short period, authorities were formed in the Republic of Armenia, which in itself demonstrates that Armenia had already become an organized state. The head of the government was the Chairman of the Council of Ministers, or the Prime Minister, who is regarded as the highest official of the Republic.

Գավառի երկրագիտական թանգարանի հավաքածուներն ու ցուցադրության համառոտ նկարագիրը

Պողոսյան Լուսինե
ԳՊՀ, Պատմություն, 5-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Պողոսյան

Հանգուցային բառեր. *Երկրագիտական թանգարան, Լևոն Հայրապետյան, ցուցադրության կառուցվածք, թանգարանային առարկա, Գեղարքունիք*

Գավառի երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 1952 թվականի փետրվարին: Թանգարանը, ունենալով արդեն յոթ տասնյակ տարվա պատմություն, ներկայացնում է Սևանի ավազանի շուրջ հինգհազարամյա հարուստ պատմությունը: Գավառի երկրագիտական թանգարանի հիմնական նպատակը իր հիմնադրման առաջին օրվանից մինչ այժմ եղել է Գեղարքունյաց աշխարհի պատմությանը վերաբերող պատմամշակութային նշանակության արժեքների հավաքելը, պահպանելը և ուսումնասիրելը: Թանգարանի հիմնադիր տնօրենն է եղել Լևոն Հայրապետյանը, հայտնի է, որ նրա ընտանիքը 1830 թվականին տեղահանվել է Բայազետի Սրբահան գյուղից և բնակություն են հաստատել Սարուխանում, հետագայում այդ տոհմից Լևոն Խաչատուրի Հայրապետյանը իր ընտանիքի հետ տեղափոխվել է Նոր Բայազետ [3, 231-233]: Դեռևս 1948 թվականի հունիսին ՀԽՍՀ մինիստրների խորհրդին կից կուլտուրա հիմնարկների գործերի կոմիտեն հաստատել էր գավառագիտական թանգարանի ցուցադրության թեմատիկ պլանը, որում ընդգրկված էին պատմաազգագրություն, հեղափոխական գործիչների գործունեություն, խորհրդային իշխանության առաջին ձեռնարկումներ, տնտեսության վերակառուցում և կոլեկտիվացում, Հայրենական մեծ պատերազմ, ժողովրդական տնտեսության հնգամյա պլաններ, օգտակար հանածոներ, բուսական և կենդանական աշխարհ բաժինները [1, 95-97]: Թանգարանը կազմավորվել է՝ ունենալով շուրջ 2-3 տասնյակ թանգարանային արժեքներ: Դրա համար հատկացվել էր քաղաքի Բատիկյան փողոցի վրա գտնվող հին փոստի մեկհարկանի կառույցի չորս սենյակները: Առաջին իսկ ամիսներից ծավալված թանգարանային ակտիվ գործունեության արդյունքում աճում էր թանգարան մուտք գործող թանգարանային արժեքների քանակը: Ընդ որում՝ համալրումը կատարվում էր ոչ միայն հավաքչական աշխատանքների, նվիրատվությունների միջոցով, այլ նաև գնման եղանակով, որը մատնանշում է իշխանությունների կողմից այն որոշակիորեն կարևորելու փաստը: 1960-ական թթ. հին փոստի շենքում իրար մեջ բացվող սրահներում կազմակերպված ցուցադրությունը կազմված էր հնագիտության, միջնադարի, ազգագրության, հեղափոխության, Հայրենական պատերազմի բաժիններից, որոնցում ներկայացված էին նաև արխիվային փաստաթղթեր:

Մշակութային այս նոր օջախի հիմնումը մեծ ոգևորությամբ էր ընդունվել քաղաքում, մեծ էր հասարակության հետաքրքրությունը տարածքի պատմաազգագ-

րական նկարագիրը ներկայացնող նյութերի նկատմամբ: Թանգարանը դարձավ Նոր Բայազետ այցելած Խորհրդային Միության ազգությունների ներկայացուցիչ-ների և օտարերկրյա քաղաքացիների մշտական հաճախման վայր: 1965 թվակա-նին թանգարանի հիմնական և օժանդակ ֆոնդերում պահվում էր 680 առարկա, իսկ այցելուների թիվը հասել էր տարեկան 13 հազարի: Գործում էր գիտական խորհուրդ, որի կազմի մեջ մտնում էին տարբեր մասնագիտությունների տեր անձինք (մանկավարժ, գրող, գիտնական, պատերազմի վետերան): Թանգարանի գիտական աշխատանքների ղեկավարությունը ստանձնել է Գ. Խաչատրյանը, գիտխորհրդի անդամներն էին՝ Ս. Մնեյանը, Ա. Գուրօղլյանը, Գ. Հարությունյանը, Խ. Կնյազյանը, Ռ. Բլբուլյանը: Առանձնապես պետք է նշել խորհրդի անդամ Սա-դաթել Մնեյանի աշխատանքը: Վերջինս հասարակական կարգով ստանձնել էր էքսկուրսավարի պարտականությունը, թանգարան այցելողների համար դասա-խոսություններ էր կարդում: Գիտխորհրդի անդամ Խաչիկ Կնյազյանը քաղաքում գործող Հովի. Սարուխանյանի անվան միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ էր, որպես բանահավաք թանգարանին է հանձնում Սևանի ավազանում ստեղծված զրույցների, հեքիաթների, ավանդապատումների գրառումները [1, 95-97]: Թանգարանի կայացման գործում անգնահատելի դերակատարում ունեցան շուրջ երեք տասնյակի հասնող աշխատակիցներ: Թանգարանի կայացման, մաս-նավորապես հնագիտական հավաքածուների կազմավորման գործում ակնառու են Խորհրդային Միության հերոս, գնդապետ, հնագետ Գեղեոն Միքայելյանի (1907-1985 թթ.) ներդրումները:

1970-ականներին կարևոր խնդիր էր թանգարանին նոր շենք հատկացնելու հարցը, քանի որ գործող շենքը, որտեղ սկզբնապես հանգրվան էին գտել թանգա-րանային արժեքները, ըստ էության բոլորովին չէր համապատասխանում թանգա-րանային հավաքածուների պահպանման ու ցուցադրման պահանջներին: Թան-գարանի նոր հանգրվանը եղավ քաղխորհրդի երկհարկանի կառույցի երկրորդ հարկը (1982), որտեղ և ներկայումս էլ շարունակում է իր գոյությունը: Նոր ցու-ցադրությունը բացվեց 1982 թ. նոյեմբերի 29-ին, այնուհետև Գավառագիտական թանգարանը վերանվանվեց երկրագիտականի, և տնօրեն նշանակվեց Ավ. Դովլաթյանը [3, 231-233]:

1980-ականներին թանգարանի ցուցանմուշների քանակը հասնում էր 5000-ի: Մշակույթի նախարարությունը թանգարանին է տրամադրել տարածաշրջանի պատմությանն առնչվող բազմաթիվ արժեքավոր նյութեր: Բացի դրանից՝ մշա-կույթի նախարարությունը դրամական հատկացումներ էր կատարել գնումների միջոցով թանգարանային արժեքներ ձեռք բերելու համար: Նոր շենքում հանգրվանելուց հետո կազմակերպվեցին նոր ցուցադրություններ, որի հեղինակը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նման աշխատանքների երկարամյա փորձ ունեցող Ս. Ս. Եսայանն էր: Ցուցադրության պլանում ընդ-գրկված էր Սևանի ավազանի պատմությունը՝ նախնադարից մինչև մեր օրերը:

Այդ պլանի համաձայն, բաժիններից առաջինը վերաբերում է մեր նախնիների հիմնական զբաղմունքներին ու կենցաղավարմանը: Հիմնական ցուցանմուշների թվում են խեցեգործական տարատեսակ կավե առարկաներ՝ կճուճներ, պնակներ, քրեղաններ, վաղ մետաղագործությունը ներկայացնող նիզակների, դանակների նմուշներ, կնոջ զարդեր՝ ապարանջաններ, կրծքազարդեր և այլն, քարե գործիքներ: Բաժիններից մեկում ներկայացված են նախահեղափոխական հայ գյուղն ու գյուղացու ամենօրյա գործունեությանը վերաբերող ցուցանմուշներ՝ մասնավորապես աշխատանքային գործիքներ՝ գութանի խոփեր, արոր, կամ, եղաններ և այլն: Առանձին բաժնում ցուցադրվում են Հոկտեմբերյան հեղափոխությանը վերաբերող վավերագրեր, որոնք այցելուներին հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ տարիներին տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների ու դրանց մասնակիցների մասին: Առանձին բաժին էր կազմում խորհրդային շրջանին նվիրված ցուցասրահը, որտեղ ցուցադրվում էին ժամանակաշրջանի գործարանների արտադրանքների առաջին նմուշները: Ցուցասրահներից մեկն էլ նախատեսված է եղել ժամանակավոր ցուցահանդեսների համար. այս սրահում կազմակերպվում են նաև բազմաբնույթ ու բազմաբովանդակ միջոցառումներ, որտեղ իրենց մասնակցությունն են ցուցաբերում նաև հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտները:

1990-ական թվականներից սկսած թանգարանում ցուցադրության արդիականացման ուղղությամբ ծրագրել և իրականացվել են որոշ թեմատիկ փոփոխություններ: Հոկտեմբերյան հեղափոխության, մայիսյան ապստամբության թեմատիկան փոխարինվել է Հայաստանի առաջին հանրապետությունը 1918-20 թթ. ներկայացնող թեմատիկ ցուցադրությամբ, ավելի ծավալուն ու ամբողջական է դարձել Սևանի ավազանի հուշարձանների ցուցադրությունը, իրականացվում են ժամանակավոր ցուցահանդեսներ՝ տարածաշրջանի «խեցեղեն», «պղնձագործություն», «գորգագործություն», «փայտագործություն» խորագրերով: Նոր արժեքավոր նյութերով է համալրվել 1828-1830 թթ. ներգաղթի թեման: Հնագիտության, ազգագրության, նորագույն պատմության բաժինները համալրվում են նոր նյութերով: Ներկայումս թանգարանում կան վեց ցուցասրահներ, որտեղ ցուցադրությունը իրականացվում է ըստ ժամանակաշրջանների՝ նախնադարյան համայնական կարգերից մինչև մեր օրերը: Այցելուները ծանոթանում են մեր տարածաշրջանի պատմությանը, Գեղարքունիքի մարզի անվանի մարդկանց կենսագրությանն ու անցած ուղուն, Արցախյան հերոսամարտի մասնակիցների կենսագրությանն, ինչպես նաև մեր նախնիների սովորույթներին ու զբաղմունքներին: Կարևորված են երկրագործությունն ու անասնապահությունը ներկայացնող բաժինները՝ դրանք համալրված անհրաժեշտ ցուցանմուշներով:

Թանգարանում աշխատանքներն իրականացվում են ՀՀ մշակույթի նախարարության, Գեղարքունիքի մարզպետարանի մշակույթի բաժնի ղեկավարությամբ:

Գավառի երկրագիտական թանգարանը, ներկայացնելով տարածաշրջանի հարուստ մշակույթը, ավանդույթները, դառնում է Գեղարքունյաց աշխարհի պատմության պահպանման հիմնական երաշխիքը: Այն Գավառ քաղաքի յուրօրինակ այցեքարտն է: Քաղաքի հետ ծանոթությունը հենց այստեղից է սկսվում: Թանգարանում պահվում են հնագիտական, ազգագրական, դրամագիտական, գրավոր աղբյուրների, լուսանկարների և այլ հավաքածուներ, որոնք պատմում են Գեղարքունյաց աշխարհի և նրա մարդկանց անցյալի ու ներկայի մասին: Թանգարանում ցուցանմուշները դասակարգված են վեց ցուցասրահներում և նախասրահում: Հինգ սրահներում բացվող ցուցադրությունը հիմնական է, իսկ վեցերորդ սրահում բացվում են ժամանակավոր ցուցադրություններ, կազմակերպվում բազմաբնույթ ու բազմաբովանդակ միջոցառումներ, որտեղ իրենց մասնակցությունն են ցուցաբերում նաև հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտները, թանգարանը մեծապես նպաստում է թանգարան-դպրոց կապի պահպանմանը: Թանգարանում ցուցասրահների թեմատիկան լրացնում են գեղանկարիչ Ռոբերտ Ավետիսյանի (ՌՈ) մեծածավալ կտավները: Ցուցադրության պլանը ներառում է Սևանի ավազանի պատմությունը նախնադարից մինչև մեր օրերը: Թանգարանում պահպանվող արժեքների քանակը հասնում է մոտ 9346-ի, սակայն մշտական ցուցադրության մեջ օգտագործվում են 1580-ը, իսկ մնացած ցուցանմուշները պահվում են ֆոնդերում: Ֆոնդերում պահվող առարկաները, ենթարկվելով հաշվառման և անցնելով համապատասխան մշակում, ձեռք են բերում գիտական կարգավիճակ: Թանգարանում տեղ գտնող առարկաները նախապես ուսումնասիրվում են, ապա գրանցվում համապատասխան բաժնի մատյաններում, այնուհետև բաժնի մատյաններից անցկացվում են մայր մատյան: Թանգարանում եղած նմուշները հիմնականում նվիրատվության արդյունք են, իսկ որոշները նաև գնվել են, դրանց մեծ մասը թանգարանում է հայտնվել բնակչության կողմից իրականացված ոչ նպատակային հավաքչական աշխատանքների արդյունքում:

Թանգարանային առարկաների դասակարգումը կատարվում է չորս հիմնական բաժիններում՝

- Հնագիտական բաժին
- Ազգագրության բաժին
- Նոր-նորագույն պատմության բաժին
- Դրամագիտության բաժին

Հնագիտության բաժնում հավաքածուների քանակը կազմում է շուրջ 827: Այս բաժնում ընդգրկված են տարածաշրջանի դամբարանադաշտերից (Լճաշեն, Հացառատ, Նորատուս) պեղված խեցեղենը (սափորներ, քրեղաններ, անոթներ և այլն) բրոնզե պերճանքի առարկաներ և աշխատանքային գործիքներ (ոսկորից հերյուն, բրոնզից դանակներ, դաշույններ և այլ):

Ազգագրության բաժնում տեղ է գտել մոտ 2631 նմուշ: Հավաքածուն ընդգրկում է կենցաղային տարատեսակ առարկաներ, աշխատանքային գործիքներ,

որոնք պատկերացում են տալիս մեր նախնիների առօրյայում կենցաղավարած առարկաների, օգտագործած աշխատանքային գործիքների մասին և այլն: Հավաքածուի կազմում պահվում են տարածաշրջանի մշակույթը, կենցաղը և կիրառական-գեղազարդման արվեստը ներկայացնող թանգարանային արժեքներ:

Ցուցադրությունը թեմատիկ բնույթի է, և այդ առումով էլ ցուցասրահներում տարանջատված են տարածաշրջանի հայոց հոգևոր ու տնտեսական մշակույթը ներկայացնող ցուցադրական համալիրները: Այդ հատվածում համապատասխան ցուցանմուշներով տարանջատված են հասարկության տարբեր շերտերին բնորոշ կենցաղային միջավայրերը՝ այդ թվում ներկայացված է նաև գյուղական տան մանրակերտային ներքնատեսքը, որն իր կահավորանքով այցելուին տեղափոխում է 19-րդ դար: Եվ ահա սրա հակառակ կողմում ներկայացվում է հասարակ, աշխատավոր նոր բայազետցու կենցաղը՝ տիպիկ հին հայկական օջախ, թոնրով, քուրսիով ու հնամաշ կահույքով: Թանգարանում պայմանականորեն այդ սրահներին տվել են «Հարուստի տուն» և «Աղքատի տուն» անվանումները:

Նոր-նորագույն պատմության բաժնում կա շուրջ 4320 նմուշ: Այս բաժնում ընդգրկված են անվանի մարդկանց արխիվային նյութեր՝ անձնական իրեր, լուսանկարներ, փաստաթղթեր, քարտեզներ: Ցուցադրված են Նոր Բայազետում տպարանում լույս տեսած թերթերը: Տպագրատունը Նոր Բայազետում հիմնադրվել է 1921 թվականի հունիսին: Հիմնադիր տնօրեն է եղել Շամխալ Վարդանի Մանուչարյանը: Տպարանի կազմավորման առաջին տարում լույս է տեսել «Ռանչպար» մեկ ութերորդ ստանդարտ ծավալով թերթը: 1934 թվականից լույս են տեսել «Կոլխոզ ուղի», «Հարվածային անասնապահ» և «Բոլշևիկյան ուղի» թերթերը [6, 16]:

Առանձին ստենդով ցուցադրվում են Մեծ եղեռնից մազապուրծ եղած և Նոր Բայազետում հաստատված ընտանիքների լուսանկարները, Արևմտյան Հայաստանից բերված մասունքներ:

Այս սրահում առանձին հատված նվիրվում է քաղաքի անվանի մարդկանց, մասնավորապես ցուցադրվում է Գավառի պետական համալսարանի հիմնադիր-ռեկտոր, փիլիսոփա, վաստակավոր մանկավարժ Հրանտ Հակոբյանի անձնական արխիվը:

Դրամագիտության բաժին: Այս բաժնում ընդգրկված են 18-20-րդ դարի կոպեկներ, 19-20-րդ դարերի թղթադրամներ, թվով 558-ը:

Օժանդակ ֆոնդ, որտեղ ընդգրկված են լուսանկարներ, թերթեր, բրոշյուրներ և այլն, թվով՝ 1010:

Հարկ է նշել, որ թանգարանում ամեն տարի կազմակերպում են ժամանակավոր ցուցադրություններ, որտեղ ցուցադրվում են ֆոնդերում պահվող հավաքածուները:

Թանգարանում պահպանվում են այնպիսի հազվագյուտ նմուշներ, ինչպիսիք են Ռուսա արքայի սեպագիր արձանագրությունը քաղաքի հիմնադրման մասին, Ք. ա 3-րդ հազարամյակի խեցեղենը, Արտաշիսյան սահմանաքարեր Ք. ա

2-րդ դար/ արամեատառ արձանագրությամբ: Թանգարանում կան կիրառական արվեստի նմուշներ, ձեռագործ գորգեր, կարպետներ, փռվածքներ, որոնք մեր տեղացի վարպետների ձեռքի և մտքի արգասիքն են: Թանգարանի գլխավոր այցեքարտն է համարվում մեր քաղաքի հիմնադրման մասին սեպագիր արձանագրությունը: Վանի թագավորության արքա Ռուսա Առաջինի կողմից Գավառի Բերդի գլուխ («Դարի գլուխ»/«Բերդագլուխ») ամրոցում թողած սեպագիր արձանագրությունը վկայում է Գավառնի՝ Խալդ աստծո քաղաքի կառուցման մասին: Այդ սեպագիր արձանագրությունը թվագրվում է մ. թ. ա. 732 թվ.: Արձանագրությունը 1927 թվականին հայտնաբերել է մեծանուն հնագետ Թադևոս Ավդալբեգյանը: Ըստ Ավդալբեգյանի նկարագրության՝ «Դարագլուխ» բնակատեղին ժամանակի ընթացքում վերածվել է գերեզմանոցի և երբ նրանք անցել են շիրմաքարերի մոտով, Թադևոս Ավդալբեգյանի որդին՝ Մարտիկը, գետնի վրա մի շիրմաքար է նկատում, մատնացույց անելով այն, ասում է, որ «վրան գծեր կան, բայց հայերեն չեն»: Ավդալբեգյանի համար պարզ էր, որ գործ ունի մի ուշագրավ սեպագիր արձանագրության հետ [2, 203-219]: Հայր և որդի Ավդալբեգյանների կողմից հայտնաբերված արձանագրությունը հայտնվում է ուսումնասիրողների հետաքրքրության կիզակետում: Հատկապես ուշագրավ է անվանի լեզվաբան Գ. Ղափանցյանի «Նոր Բայազետի սեպագիր արձանագրություն» աշխատությունը, որում հանգամանալից ներկայացվում է արձանագրության թարգմանությունը: Սեպագիրը փորագրված է խորանարդաձև բազալտե քարի վրա, ընդգրկում է քարի երկու կողմերը և բաղկացած է ութ տողից, որի բովանդակությունը հետևյալն է՝

1. Աստված Խալդուն մեծին: Ռուսան
2. Սարդուրիյի որդին ասում է. թագավորին Վելիքուխի
3. նվաճեցի, ստրուկ դարձրի, երկիրն ու վայրը ենթարկեցի
4. կառավարիչ այնտեղ կարգեցի, խալդական դռները
5. պալատը խախտված վերակառուցեցի, հաստատեցի, անվանելով
6. Խալդո քաղաք, Բիայնային մեծ
7. երկրին ամբողջ ի շնորհս, Ռուսայի-Սարդուրիի որդու համար
8. թագավորի հզոր, որը Բիայնական թագավոր է գրված [5, 27-28]:

Երկրագիտական թանգարանում բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Արտաշեսյան սահմանաքարերը: Թանգարանում պահպանվում են այդպիսի երկու սահմանաքար: Արամեատառ արձանագրություններից մեկը հայտնաբերվել է Սարուխան գյուղում 2001 թվականին, թանգարան է հանձնել հայ-իտալական հնագիտական արշավախումբը, իսկ մյուս սահմանաքարը հայտնաբերվել է Լանջաղբյուրից: Սահմանաքարը պատահմամբ գտել են տեղի բնակիչները «Գևոյի արտ» կոչվող տարածքից: Այն թվագրվում է մոտ մ. թ. ա. 2-րդ դարի առաջին կեսին: Սա առհավատչյան է այն բանի, որ խնդրո առարկա տարածաշրջանը Արտաշիսյան արքայատոմի դարաշրջանում Հայոց թագավորության անբաժան մասն է հանդիսացել:

Թանգարանի նախասրահում և առանձին սրահներում ցուցադրվում է գորգերի հարուստ հավաքածուն: Գորգագործական մշակույթը դեռևս վաղ ժամանակներից վկայված է եղել Սևանի ավազանում, այդ թվում Գեղարքունյաց աշխարհում: Այս տարածաշրջանը նշանավորվում է գորգագործական մշակույթի ինքնատիպ պատմությամբ: Այդ մասին վկայություններ կան հայոց միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներում ու մանրանկարներում, տարածաշրջանի գորգագործական մշակույթի մասին որոշակի պատկերացում են հաղորդում Նորատուսի հայտնի տապանաքարերի գորգապատկերները [7, 46]: Գեղարքունյաց գորգագործական մշակույթի վերաբերյալ առանձնակի կարևորություն և հետաքրքրություն են ներկայացնում Ա. Տեր-Մարկարովի կատարած դիտարկումները (1880-90-ական թթ.), ըստ նրա տեղեկությունների՝ գորգագործական հայտնի կենտրոն է եղել Գյոզալդարան (ներկայումս Վարդենիկ), որտեղ վկայվում են գործվածքի բազում տեսակներ՝ գորգեր, կարպետներ, իսկ տներում եղել են հատուկ պահոցներ՝ ծալքեր, որտեղ պահել են գորգեր և տարատեսակ գործվածքներ [10, 107-117]: Գեղարքունյաց գորգագործական մշակույթի՝ գորգերի տեսակների, գործման ոլորտների, գեղազարդման յուրահատկությունների վերաբերյալ բավականաչափ կարևոր աղբյուր են հանդիսանում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցի տեղեկությունները: Ըստ հեղինակի տեղեկությունների՝ Նոր Բայազետում գորգը կազմել է հարսանյաց արարողության և հարսի օժիտի անբաժան մաս [9, 465]: 20-րդ դարի սկզբին խնդրո առարկա տարածաշրջանում գորգագործության առաջընթացը խթանելու համար մի շարք միջոցառումներ էին ձեռնարկվում մասնավորապես տեղական բրդի հումքը գորգագործության զարգացմանը ուղղելու համար: Այս առումով խոշոր ձեռքբերում էր 1901 թվականին Նոր Բայազետում ստեղծված ընկերությունը, որը հիմնում է գորգագործական մանուֆակտուրաներ՝ բրդի պաշարները օգտագործելու և գորգագործությունը զարգացնելու նպատակով [8, 190]: Թանգարանում պահվող հավաքածուի կազմում կան հայոց գորգերի բոլոր խմբերին վերաբերող նմուշներ ու դրանք հետազոտողների համար հարուստ սկզբնաղբյուրներ են տարածաշրջանի գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթների, գորգերի տիպերի բացահայտման համար:

Ընդ որում՝ հավաքածուն բավականին հարուստ է՝ այն պարունակում է 65 միավոր գորգ, 104 կարպետ, 37 ջեջիմ, 17 խուրջին և այլ նմուշներ [4, 175-179]: Դրանց մեծ մասը ձեռք է բերվել 1980-ականների երկրորդ կեսին: Այս հավաքածուի և ընդհանրապես Գավառի թանգարանում պահվող հավաքածուների կարևորությունը հատկապես այն է, որ դրանք այս կամ այն չափով ներկայացնում են նաև պատմական Կոգովիտ գավառի պատմամշակութային ավանդույթները, ավելին, դրանց մի մասը իրենց հետ բերել են այստեղ հաստատված բայազետցիները:

Այսպիսով, Գավառի երկրագիտական թանգարանը, ուր ամփոփված է Սևանի ավազանի շուրջ հինգհազարամյա պատմությունը, Գավառ քաղաքի մշա-

կութային կարևորագույն կենտրոններից մեկն է: Թանգարանների դերը չափազանց մեծ է ազգային ինքնության պահպանման գործում, իսկ երկրագիտական թանգարանները հավաքելով, պահպանելով և լուսաբանելով տեղի բնակչության պատմությունը, կենցաղը, մշակույթը, դառնում են տարածաշրջանային պատմության պահպանման կարևոր գործոններից մեկը: Գեղարքունյաց աշխարհի պատմության օթևան հանդիսացող թանգարանն իր ողջ գոյության ընթացքում շնորհակալ աշխատանք է կատարել՝ նորբայազետցիներին ծանոթացնելով իրենց պատմության ակունքներին: Այսինքն՝ երկրագիտական թանգարանը կատարում է մի շատ կարևոր խնդիր ևս. այն է՝ խնդրո առարկա տարածաշրջանի բնակչության պատմական հիշողության վերականգնման և տարածաշրջանային պատմությունն անհետ կորստի մատնվելու վտանգից փրկելու խնդիրը: Այս առումով հատկապես կարևոր են թանգարանում մշտական և ժամանակավոր բացվող ցուցադրությունները, որոնք նվիրվում են անվանի նորբայազետցիների կյանքին և գործին: Գավառի երկրագիտական թանգարանում հանգրվան գտած նմուշները, անշուշտ, ունեն պատմամշակութային մեծ արժեք, և թանգարանն էլ իր գոյությամբ ծառայում է սերունդներին՝ դառնալով կապող օղակ տարածաշրջանի պատմության և նրանց միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Դ., Դարյան Վ., Հայրենագիտական ժողովածու, Երևան, «Հայաստան» հրատ., 1975, 149 էջ:
2. Ավդալբեգյան Թ., Նոր Բայազետի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, Երևան, Հայպոլիգրաֆ հրատ. № 2, 1927, 17 էջ:
3. Հարությունյան Վլ., Քյավառ, Երևան, «Զանգակ» հրատ., 2001, 646 էջ:
4. Հովեյան Հ., Իմ Պայազատը, Երևան, «Մուղնի» հրատ., 2013, 259 էջ:
5. Ղափանցյան Գր., Նոր Բայազետի սեպագիր արձանագրությունը, Տեղեկագիր գիտության և արվեստի, Երևան, Հայպոլիգրաֆ հրատ. № 4, 1930, 44 էջ:
6. Մանուչարյան Շ., Հարվածային տպագրիչ, Տպագրատան գործը Նոր Բայազետում, Երևան, 1935, էջ 16:
7. Մկրտչյանի արխիվ, Գեղարքունիքի գիտարշավ 1986-87,տետր 3, էջ 46:
8. Պողոսյան Ա. Ա., Մկրտչյան Տ. Վ, Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ավանդույթների մասին/ Գիտական հոդվածների ժողովածու, ԳՊՀ, Երևան,«Իրավունք» հրատ., 2011, 666 էջ:
9. Սմբատեանց Մեսրոպ արքեպիսկոպոս, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» հրատ., 1895, 843 էջ:
10. Тер-Маркаров А. Село Газалдара .СМОМПК, вып.17: Тифлис, 1893. 107-117 с.

Коллекции гаварского геологического музея и краткое описание экспозиций

Погосян Лусине
ГГУ, История, 5-й
Научный руководитель:
кандидат исторических наук А. Погосян

Резюме

Ключевые слова: *геологический музей, Левон Айрапетян, экспозиционная структура, музейный предмет, Гегаркуник*

В данной работе представлена краткая история основания геологического музея города Гавар, краткое описание коллекций и структура выставки. Геологический музей Гавара, представляющий богатую культуру и традиции региона, является важной гарантией сохранения истории Гегаркуникской области. Существующая коллекция позволяет изучить и раскрыть историко-этнографический профиль Гегаркуникской области.

Collections of the Gavar Geological Museum and a Brief Description of the Exhibits

Poghosyan Lusine
GSU, History, 5th year
Academic Supervisor: A. Poghosyan
Candidate of Historical Sciences

Summary

Key words: *Geological museum, Levon Hayrapetyan, exhibition´s structure, exhibition artifact, Gegharkunik*

This article provides a brief history of the founding of the Geological Museum in Gavar, a short description of its collections, and an overview of the exhibition´s structure. The Gavar geological museum, presenting the rich culture and traditions of the region, is an essential guarantee for preserving the history of the Gegharkunik region. The existing collection makes it possible to explore and open up the historical and ethnographic profile of the Gegharkunik region.

Մասոնությունը Հյուսիսային Ամերիկայում

Զիլավյան Գայանե
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆ. Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. *Անկախության համար պատերազմ, մասոնություն, Հյուսիսային Ամերիկա, օթյակներ*

Ամերիկյան գաղութներում մասոնության ծագումը արժանի է հատուկ ուշադրության, քանի որ դրա տարածումը և զարգացումը սերտորեն կապված են նոր պետության ստեղծման հետ:

Պատմաբանների մեծ մասը, ովքեր ուսումնասիրել են Ամերիկյան հեղափոխական պատերազմը, բաժանվել են երկու հակադիր ճամբարների: Նրանցից ոմանք, ոչ շատերը, պատերազմը դիտում են բացառապես որպես «մասոնական իրադարձություն»՝ շարժում, որը մտահղացվել, կազմակերպվել և իրականացվել է մասոնների կողմից՝ ըստ մանրակրկիտ մշակված ծրագրի: Այս տեսակետը կիսող պատմաբանները սովորաբար որպես ապացույց բերում են մասոնների երկար ցուցակը: Նրանց կարծիքով՝ ամերիկյան գաղութներում ընթացած պայքարը իրականացրել են մասոնական օթյակները, թղթակցային կամ կապի կոմիտեները, «Ազատության զավակներ» գաղտնի կազմակերպությունները: Իրենց առաջ քաշած տեսակետը հիմնավորելու համար նրանք վկայակոչում են գաղտնի ընկերությունների և կազմակերպությունների գործունեությունը, պատերազմին երկու կողմից մասնակցած մեծ թվով մասոն զինվորականներին:

Մյուս կողմից ավանդապաշտ պատմաբանների մեծ մասը հիմնականում խուսափում է այս հակամարտությունում մասոնների դերի հարցից: Նրանք պարբերաբար վկայակոչում են այնպիսի փիլիսոփաների, ինչպիսիք են Դ. Հյումը, Ջ. Լոկը, Ա. Սմիթը և տասնյոթերորդ դարի ֆրանսիացի մտածողները, սակայն անտեսում են մասոնական միջավայրը, որը հիմք է պատրաստել այս գաղափարների համար, սնուցել և հանրահռչակել է դրանք:

Մասոն պատմաբաններից մեկը գրել է. «...Մասոնությունը շատ ավելի մեծ ազդեցություն է ունեցել այս (ամերիկյան) կառավարության ձևավորման և զարգացման վրա, քան իշխանության որևէ այլ ինստիտուտի: Ո՛չ պատմաբանները, ո՛չ եղբայրության անդամները առաջին սահմանադրական կոնվենցիայի ժամանակներից ի վեր չեն հասկացել, թե ինչի է Միացյալ Նահանգները պարտական մասոնությանը և ինչ մեծ դեր է նա խաղացել ազգի ծնունդի և քաղաքակրթության հիմքերի ձևավորման գործում...» [1, 226]:

Մասոնությունը Ամերիկա է ներթափանցել Անգլիայից: Ըստ որոշ ուսումնասիրողների՝ առաջին մասոնները կամ նրանց նախատիպը հայտնվեց Նոր աշխարհում դեռևս 1607 թ.՝ անգլիացի նավապետ Ջոն Սմիթի հետ [2] լոնդոնյան ընկերության արտոնագրով այստեղ եկած պուրիտանների հետ: Նրանք Վիրջինիա-

յում՝ Ջեյմս գետի ափին հիմնեցին գաղութ՝ Ջեյմսթաուն անվամբ՝ ուղղելով իրենց ջանքերը ինչ-որ իդեալական հասարակության ստեղծմանը [1, 215]:

Մասոնության հետազոտողներ Մայքլ Բեյջենթը և Ռիչարդ Լին այն կարծիքին են, որ չի կարելի անտեսել Նոր աշխարհում մասոնության տարածման գործում ռոզենկրոյցների գործունեությունը:

Տասնյոթերորդ դարասկզբին ռոզենկրոյցները քաջատեղյակ էին Ամերիկայի ներուժին՝ իրականացնելու իդեալական հասարակության ստեղծման իրենց գաղափարները, որոնցով առատ էին նրանց աշխատանքները: Ուստի շատ հավանական է, որ ռոզենկրոյցները բազմաթիվ գերմանացիների թվում վտարանդվեցին ամերիկյան մայրցամաք՝ իրենց հետ բերելով համապատասխան գաղափարախոսությունը: Դա հասկացան նաև «Անտեսանելի քոլեջի» գաղտնի ընկերության անդամները, ովքեր հետագայում ստեղծեցին «Լոնդոնի թագավորական ընկերությունը»: Չափազանց զարմանալի կլիներ, եթե նրանց գաղափարներից մեկի ճանապարհը չանցներ Ատլանտյան օվկիանոսով: Ամեն դեպքում, մասոնության փոխպատվաստումն Ամերիկա, անկախ նրանից, թե որտեղ և երբ է դա տեղի ունեցել, անխուսափելի էր: Միայն թե ոչ ոք չէր կարող կանխատեսել, թե ինչ ահռելի դեր է խաղալու այն մոտ ապագայում:

Նոր Անգլիայի, Նոր Շոտլանդիայի և բրիտանական գաղութների այլ տարածքներում սեփական պետականության հիմքերի զարգացման գործում առանձնահատուկ դեր խաղաց Արևմտյան Եվրոպայի կաթոլիկ երկրներից բողոքական բնակչության զանգվածային արտագաղթը: Թոմաս Փեյնը պնդում էր, որ «Ամերիկայի հայրենիքը Եվրոպան է, ոչ թե Անգլիան» [2]:

Ըստ Հարոլդ Վան Բուրեն Վուրիսի՝ կան հինգ չհաստատված «լեգենդներ», որոնք նշում են 1606, 1658, 1670, 1715 և 1720 թվականները՝ որպես մասոնների՝ ամերիկյան մայրցամաքում հաստատման հիշատակում: 1827 թ. Աննապոլիսի հովտում հայտնաբերվել է քարե կոթող, որի վրա փորագրված է տարեթիվ (1606 թ. սեպտեմբերի 6) և կարկին ու անկյունակ հիշեցնող պատկեր: 1658 թ. Հոլանդիայից տասնհինգ հրեական ընտանիքներ եկան Նյուպորտ՝ Ռոդ Այլենդ նահանգ: Մորդեհայ Կամպանելլը և խմբի մյուս անդամները պնդում էին, որ մասոններ են: Քարոզիչ Էլիոթը 1670 թ. Անգլիայից ուղարկել է մասոնական խորհրդանիշների տուփ Չարլսթոն՝ Հարավային Կարոլինա: Հղում է արվում 1715 թ. թվագրված նամակին, որը գրել է թագավորական հարկահավաք Ջոն Մուրը, որը եկել է Անգլիայից 1680 թ.: Նամակում ասվում է, որ ձմեռը երկար էր և ձանձրալի, բացառությամբ «մի քանի երեկոների, որոնք անցկացրեցի իմ մասոն եղբայրների հետ տոնախմբությունների ժամանակ»: Պատմություն կա մասոնական օթյակի հանդիպման մասին՝ 1720 թ. Մասաչուսեթսի Քինգս Չեյպս մատուռում [3, 7]:

Ինչ վերաբերում է փաստագրված տվյալներին, ապա առաջին մասոնը, ով հաստատվել է ամերիկյան գաղութներում, Ջոն Սքինն է: Նրա անունը ավելացվել է Աբերդինի թիվ 1 օթյակի եղբայրների ցուցակում 1670 թ., իսկ 1682 թ. նա գաղթել

է Հյուսիսային Ամերիկա: Ջ. Սքինը բնակություն հաստատեց Նյու Ջերսիում, որտեղ հետագայում դարձավ փոխքաղաքապետ: Այնուամենայնիվ, իր հետ բերած մասոնությունը Նյու Ջերսիում հայտնվեց վակուումում: Չկային եղբայրներ, որոնց հետ նա կարող էր շփվել, չկար կառույց, որտեղ նա կարող էր անդամագրվել: Նա էլ իր կազմակերպությունը չի ստեղծել: Համենայն դեպս, դրա փաստաթղթային ապացույցը չկա [3, 4]: Ջ. Սքինը մասոն է դարձել Ամերիկա մեկնելուց առաջ:

Առաջին ամերիկացի վերաբնակիչը, ով ընդունվեց եղբայրության մեջ, Ջոնաթան Բելչերն էր, ով 1704 թ. Անգլիա կատարած այցի ժամանակ դարձավ մասոնական օթյակի անդամ: Մեկ տարի անց Ջ. Բելչերը վերադարձավ գաղութներ, դարձավ բարգավաճ վաճառական և 1730 թ. նշանակվեց Մասաչուսեթսի և Նյու Հեմփշիրի նահանգապետ [3, 8-9; 1, 230]:

Հավանաբար, այդ օրերին շատ մարդիկ կային, ովքեր նման էին Ջ.Սքինին և Ջ. Բելչերին, նրանք, ովքեր արդեն մասոն էին գաղութներ գաղթելու ժամանակ, կամ նրանք, ովքեր միացան մասոնական օթյակներին Անգլիա կատարած այցելությունների ժամանակ: Պահպանվել է նույնիսկ 1719 թ. փաստաթուղթ, որտեղ նշվում է «Մասոն» անունով նավը, որը ծովափնյա ճանապարհորդություններ է իրականացրել Ամերիկայի ափերի մոտ [1, 230]:

Ամերիկայի ամենավաղ օթյակներից շատերը, ներառյալ, հավանաբար, այն օթյակները, որոնց մասին ոչ մի փաստաթուղթ չկա, մասոնների լեզվով ասած, «անկանոն» են եղել: «Կանոնավոր» դառնալու համար օթյակը պետք է դառնար «լիազորված», այսինքն՝ արտոնագիր ստանար բարձրագույն մարմնից՝ Անգլիայի Մեծ օթյակից, կամ, այսպես ասած, մայր օթյակից: Այսպես, օրինակ, Անգլիայի Մեծ օթյակը նման արտոնագրեր տրամադրեց իր սեփական մասնաճյուղերին կամ ամերիկյան գաղութներում գտնվող նոր օթյակներին:

Ամերիկայում առաջին պաշտոնապես լիազորված օթյակը Բոստոնի Սբ. Յոհան օթյակն է, որը հիմնադրվել է 1733 թ. և արտոնագիր է ստացել Անգլիայի Մեծ օթյակի կողմից: Այս օթյակի հիմնադիրը Հենրի Փրայսն էր, ում Լոնդոնի Մեծ օթյակը շնորհեց Գավառային Օթյակի Մեծ Վարպետի տիտղոս: Նրա օգնականն էր Էնդրյու Բելչերը՝ Ջոնաթան Բելչերի որդին:

Հյուսիսային Ամերիկայի գաղութներում մասոնության տարածման գործում կարևոր դեր է խաղացել Լոնդոնի Մեծ օթյակը: Ջոն Ինթեյի «Սահմանադրություն» գրքում, որը հրատարակվել է 1756 թ., հիշատակվում են մի քանի գավառական մեծ վարպետների անուններ, որոնք լիազորված են աշխատել օվկիանոսից այն կողմ: Նրանց թվում առաջինը Դենիել Քոքսն է [2]:

Հյուսիսային Ամերիկայում Գավառային մեծ վարպետի տիտղոսն առաջին անգամ Նորֆոլկի դուքսը 1730 թ. հունիսի 24-ին շնորհեց Նյու Ջերսիի նահանգապետի որդուն՝ Դենիել Քոքսին, ով ապրում էր Անգլիայում: Նա դարձավ Նյու Յորքի, Նյու Ջերսիի և Փենսիլվանիայի Գավառային Մեծ Վարպետ: Լոնդոնի Մեծ օթյակի կանոնադրությունը, որը նրան հաստատում էր այս կոչմանը, գործնական

նշանակություն չուներ, սակայն ոչ մի տեղ չեն պահպանվել Դ. Քոքսի փաստացի գործունեության հետքեր՝ որպես ամերիկյան մասոնության ղեկավար: 1731թ. նա ներկա է գտնվել Լոնդոնի Մեծ օթյակի հանդիպմանը, որտեղ նրա՝ «Հյուսիսային Ամերիկայի գավառական մեծ վարպետի» պատվին կենաց են խմել:

Ավելի լուրջ նշանակություն են ունեցել 1733 և 1734 թվականներին Հենրի Փրայսին շնորհված պարգևագրերը: 1733 թ. նրան շնորհվել է՝ «Նոր Անգլիայի և նրան պատկանող բոլոր տիրույթների և տարածքների Գավառային Մեծ Վարպետի» կոչումը, իսկ 1734 թ.՝ «Ամբողջ Ամերիկայի մեծ վարպետի»:

Երկու նամակ է պահպանվել, որոնք մասոն Բ. Ֆրանկլինը գրել է Հ. Փրայսին այն բանից հետո, երբ նա իմացել է նշանակման մասին: Դրանցից մեկում, որը պաշտոնական բնույթ է կրում, նա խնդրում է, որ Հ. Փրայսի ստացած նամակների պատճենները ուղարկվեն Ֆիլադելֆիա և հաստատեն Փենսիլվանիայի մասոնների արտոնությունները, մեկ այլ մասնավոր նամակում նա խնդրում էր նրան անձամբ գալ Ֆիլադելֆիա, որտեղ մի քանի «կեղծ և ապստամբ եղբայրներ» պատրաստվում էին հիմնել իրենց առանձին օթյակը՝ ի դեմս «ճշմարիտ եղբայրների»: «Գիլդիան,– գրել է Բ. Ֆրանկլինը,– կկորցնի իր ողջ հեղինակությունը մեր մեջ, եթե իսկական եղբայրները որևէ աջակցություն չստանան և չտարբերվեն մյուսներից բավական հեղինակավոր այդ իշխանության համար» [4, 308; 5, 246]:

1731 թ. Մեծ օթյակը միջոցներ հավաքեց Վիրջինիայի Օգլթորփ գաղութում գտնվող իր եղբայրների համար, թեև այնտեղ օթյակների գոյության մասին ոչ մի փաստաթղթային ապացույց չկա, լինի դա կանոնավոր, թե անկանոն: Փաստաթղթային հիմնավորում ունեն Ջորջիա գավառի Սավաննայի և Հարավային Քարոլինա գավառի Չարլսթոնի օթյակները, որոնք երկուսն էլ կրում են նույն անվանումը՝ «Սողոմոնի օթյակ» [3, 7]: 1733-1737 թթ. Անգլիայի Մեծ օթյակը արտոնագրեր շնորհեց Մասաչուսեթսի, Նյու Յորքի, Փենսիլվանիայի և Հարավային Կարոլինայի Գավառային Մեծ Օթյակներին [6, 110]: Վիրջինիայի մասին փաստաթղթեր չկան, բայց հավանաբար եղել են օթյակներ, որոնք լիազորված են եղել ոչ միայն Անգլիայի Մեծ օթյակի կողմից, այլև Նյու Յորքի Մեծ օթյակի կողմից, որը դավանում էր մասոնական յակոբիտական համակարգը [7, 180; 1, 231]:

1743 թ. Անգլիայի Մեծ Օթյակը բոստոնցի Թոմաս Օքսնարդին նշանակեց Հյուսիսային Ամերիկայի Գավառական Մեծ Վարպետ:

Սուրբ Յոհանի օթյակը իր ենթակայության տակ պահում էր քառասունից ավելի մասոնական օթյակներ: 1750 թ. Բոստոնում, բացի սուրբ Յոհանի օթյակից, գործում էին ևս երկու այլ օթյակներ: Սրանք, ինչպես նաև սուրբ Յոհանի օթյակը, հավաքվում էին «Խաղողի ողկույզ» պանդոկում:

1752 թ. ստեղծվեց ևս մեկ օթյակ, որը «կանոնավոր» չէր և չուներ Անգլիայի Մեծ Օթյակի արտոնագիրը: Նոր օթյակի անդամները հավաքվում էին «Կանաչ վիշապ» պանդոկում, որը 1764 թ. վերանվանվեց Մասոնների տուն [6, 116]:

Սուրբ Յոհանի օթյակի մասոնները դժգոհում էին «ոչ կանոնավոր» օթյակի գործունեությունից, բայց շուտով խնդիրը կարգավորվեց: Նոր օթյակը արտոնա-

գիր ստացավ, սակայն ոչ թե Անգլիայի Մեծ Օթյակից, այլ Շոտլանդիայի Մեծ Օթյակից: Նոր օթյակը հավատարմագրված դարձավ միայն 1756 թ. հետո, երբ բրիտանական զորքերը սկսեցին Ամերիկա գալ՝ իրենց հետ բերելով գնդերի օթյակները, որոնք ունեին Իռլանդիայի Մեծ Օթյակի և Շոտլանդիայի Մեծ Օթյակի արտոնագրերը:

«Ոչ կանոնավոր» օթյակը պաշտոնապես գրանցվեց որպես սուրբ Անդրեի օթյակ: Շուտով նոր օթյակը սկսեց արտոնագրեր տալ նորաստեղծ այլ օթյակների և խնդիր դրեց իրեն շնորհել Գավառային Մեծ Օթյակի կարգավիճակ, որը գործելու էր Շոտլանդիայի Մեծ Օթյակի ենթակայության տակ: 1760 թ. այդ պահանջը բավարարվեց, և Բոստոնում միաժամանակ սկսեցին գործել երկու Գավառային Մեծ Օթյակներ: Նրանցից սուրբ Յոհանի օթյակը գործում էր Անգլիայի Մեծ Օթյակի, իսկ սուրբ Անդրեի օթյակը՝ Շոտլանդիայի Մեծ Օթյակի հովանու տակ:

1753 թվականը ամերիկյան մասոնության համար նշանավորվեց մի քանի իրադարձություններով. փոխարինելով Ֆրենսիս Ջոելեթին՝ Ջեյմս Հարիսոնը դարձավ Նյու Յորքի Գավառային Մեծ Վարպետ, Վիրջինիայի գավառի Նորֆոլկի օթյակը արտոնագիր ստացավ Անգլիայի Մեծ օթյակից:

Թոմաս Օքսնարդի մահից հետո՝ 1755 թ., Ջերեմի Գրիդլին դարձավ Գավառային Մեծ Վարպետ: Նրա իշխանությունը տարածվում էր Ֆիլադելֆիայում, Նյու Հեմփշիրում, Հարավային Քարոլինայում, Նյուֆաունդլենդում, Մերիլենդում և Քոննեքթիքուտում: Ֆրեդերիկսբուրգի օթյակի դեկտեմբերի 22-ի արձանագրությունը վկայում է, որ այդ օրը տեղի է ունեցել Թագավորական Կամարի աստիճանի ամենավաղ ձեռնադրումը [7, 182]: 1755 թ. Ջ. Գրիդլիին շնորհված արտոնագրում ասվում էր, որ նրա իշխանությունը սահմանափակված է Հարավային Ամերիկայի այն տարածքներում, որտեղ Գավառային Մեծ Վարպետ նշանակված չէր:

1755 թ. Ֆիլադելֆիայում տեղի ունեցավ մասոնական տան լուսավորման տոնակատարություն: «Աստվածային ծառայությունը լսելու համար» օթյակից շարժվող հանրային երթին մասնակցում էին ինքը՝ նահանգապետը և Փենսիլվանիայի երեք օթյակների 127 անդամներ, այդ թվում՝ Բենջամին Ֆրանկլինը՝ «Մեծ Օթյակի Մեծ Վարպետի տեղակալը» [5, 248]:

1767 թ. Ջ. Գրիդլին մահացավ, իսկ հաջորդ տարի նրա փոխարեն օթյակի վարպետ ընտրվեց Ջոն Ռոուն: Նրա նախաձեռնությամբ քայլեր ձեռնարկվեցին Շոտլանդիայի Մեծ Օթյակի հովանու ներքո Գավառային Մեծ Օթյակ ստեղծելու ուղղությամբ: Կազմվեց հանրագիր, որը ստորագրեցին սուրբ Անդրեի օթյակի Վարպետները և Վերակացուները, ինչպես նաև բրիտանական բանակի գնդերին կցված երեք օթյակ:

1769 թ. հանրագրի համաձայն՝ Շոտլանդական Մեծ օթյակի հովանու ներքո Բոստոնում ստեղծվեց Գավառային Մեծ Օթյակ: Դրան հետևեց հրամանագիր՝ Ջոզեֆ Ուորրենին Նոր Անգլիայի և նրա հարակից հարյուր մղոն հեռավորության տարածքի Մեծ Վարպետ նշանակելու մասին: Չնայած դրան՝ սուրբ Անդրեի օթյակը շարունակեց փաստացի մնալ Գավառային Մեծ Օթյակ:

1769 թ. օգոստոսի 28-ին սուրբ Անդրեի Օթյակի բաժանմունքն իրեն հայտարարեց Թագավորական Կամարի Օթյակ, անցկացրեց հիմնադիր ժողով: 1772 թ. մարտի 3-ի շոտլանդական արտոնագրով Ջոզեֆ Ուորրենը նշանակվեց Ամերիկյան մայրցամաքի Մեծ Վարպետ [7, 183]:

Անկախության համար պատերազմի սկզբում Հյուսիսային Ամերիկայում գործող մասոնական օթյակների թիվն անցնում էր հարյուրը: Դրանց զուգահեռ գործում էին ութ Մեծ Օթյակներ, որից երկուսը Մասաչուսեթսում, մեկական՝ Փենսիլվանիայում, Նյու Յորքում, Վիրջինիայում, Ջորջիայում, Հյուսիսային ու Հարավային Քարոլինաներում [5, 250]:

Գաղութներում մասոնականության տարածմանը զուգահեռ՝ գրեթե բացառապես Անգլիայի Մեծ օթյակի աջակցությամբ, տեղի ունեցավ ևս մեկ գործընթաց, որը շատ ավելի ուժեղ ազդեցություն ունեցավ ամերիկյան պատմության վրա: 1732 թ. սկսած մասոնությունը սկսեց տարածվել բրիտանական բանակում՝ գնդի օթյակների տեսքով: Շատ հաճախ գնդի հրամանատարը հանդես էր գալիս որպես օթյակի առաջին վարպետ, իսկ հետո այդ պաշտոնում նրան փոխարինում էին այլ սպաներ: Գնդային օթյակները հսկայական ազդեցություն ունեցան ամբողջ բանակի վրա: Նրանք կարծիքների և տրամադրությունների փոխանակման հաղորդակցման ուղիներ էին ստեղծում: Ճիշտ այնպես, ինչպես քաղաքացիական օթյակները միավորում էին տարբեր ծագում ունեցող մարդկանց՝ տարբեր սոցիալական շերտերի, զինվորական օթյակները միավորում էին սպաներին ու շարքայիններին, ենթականերին ու վերադասին: Այս առնչությամբ Հ. Փոուլ Ջեֆֆերսը՝ «Ֆրանկմասոններն Ամերիկայում» գրքի հեղինակը, նշում է. «Ուր էլ որ բրիտանական բանակը գնում էր, մասոնությունն ուղեկցում էր նրան գնդային օթյակների տեսքով» [8, 15]:

Ամերիկյան մայրցամաքում գտնվող բրիտանական բանակում առաջին օթյակը կազմակերպվել է 1732 թ. 1-ին հետևակային գնդում (հետագայում թագավորական շոտլանդական գունդ): 1735 թ. արդեն կար հինգ այդպիսի օթյակ, իսկ 1755 թ.՝ քսանինը: Մասոնական սեփական օթյակներ ունեցող ստորաբաժանումներից էին թագավորական նորթումբերլենդյան և շոտլանդական հրացանաձիգները, Դորսեթի գունդը և շատ այլ նշանավոր ստորաբաժանումներ [8, 16]:

Բրիտանական բանակում այդքան տարածված մասոնությունը ներթափանցեց գաղութային պաշտոնյաների, ինչպես նաև նրանց ղեկավարած հաստատությունների մեջ: Ամերիկացի հրամանատարներն ու պաշտոնյաներն օգտագործում էին բոլոր հնարավորությունները ոչ միայն զինակից եղբայրների, այլև մասոնական եղբայրության մեջ միավորվելու համար: Հաղորդակցությունները խրախուսվում էին կանոնավոր բրիտանական զորքերի և գաղութներում նրանց գործընկերների միջև: Օթյակները բարգավաճում էին, իսկ մասոնական կոչումներն աջ ու ձախ բաժանվում: Այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք են Ի. Փաթնամը, Բ. Առնոլդը, Ջ. Ֆրայը, Հ. Մերսերը, Ջ. Նիքսոնը, Դ. Վուսթերը և, իհարկե, ինքը՝ Ջ. Վաշինգտոնը, ավելիին հասան, քան ռազմական փառքը: Նրանք նույնպես, եթե

նախկինում եղբայրության մեջ չեն եղել, ընդունվել են մասոնական օթյակներ: Եվ նույնիսկ նրանք, ովքեր ուղղակի մասոն չեն դարձել, մշտապես ենթարկվել են նրանց ազդեցությանը:

Բանակը շատ ավելի հզոր ազդեցություն գործեց: Մայրցամաքային գծում բոլոր գաղութների զորքերը միասին կռվեցին ընդհանուր նպատակի համար: Նրանք հարյուրավոր մղոններ ուս ուսի քայլեցին մի գաղութից մյուսը: Նրանք երկար ամիսներ անցկացրին միասին կայազորային ծառայության և ձմեռային կացարաններում: Որպես զինակից եղբայրներ՝ նրանք հաճախակի փոխանակում էին կարծիքներ և գաղափարներ: Որպես մասոններ՝ նրանք սովորեցին իմանալ, վստահել և սիրել միմյանց: Ջ. Վաշինգտոնը և նրա մասոն գեներալները խրախուսում էին ռազմական օթյակների կազմակերպումը: Հեղափոխության ժամանակ ռազմական օթյակների թիվն ավելացավ մոտ հիսունով, որոնցից տասը հիմնվել են Ջ. Վաշինգտոնի ենթակա մայրցամաքային բանակում [9, 16]:

Այսպիսով, մասոնությունը ներթափանցեց ամբողջ գաղութային վարչակազմ, հասարակության ու մշակույթի մեջ: Դա վերաբերում է ոչ միայն բուն մասոնությանը, այսինքն՝ ծեսերին, ավանդույթներին, հնարավորություններին և արտոնություններին, այլ նաև մթնոլորտին, մտածելակերպին, հայացքների և արժեքների հիերարխիային, որոնց համար մասոնությունը չափազանց արդյունավետ միջոց էր տարածման համար: Այն ժամանակվա մասոնությունը դարձավ եռանդուն իդեալիզմի տուն, որն ինքնին վարակիչ էր: Գաղութարարներից շատերը, ինչպես նաև անգլիացի զինվորները չէին կարդացել Ջ. Լոկ, Դ. Հյում, Վոլտեր, Դ. Դիդրո կամ Ժ. Ժ. Ռուսո: Սակայն օթյակների համակարգի միջոցով այս մտածողների հետ կապված փիլիսոփայական գաղափարները հասանելի դարձան բոլորին: Հենց օթյակների միջոցով «սովորական» գաղութաբնակները իմացան այնպիսի վեհ հասկացությունների մասին, ինչպիսիք են «մարդու իրավունքները»: Օթյակների միջոցով նրանք ծանոթացան հասարակության բարելավման գաղափարներին: Նոր աշխարհը կարծես դատարկ թերթ լիներ, սոցիալական փորձերի մի տեսակ լաբորատորիա, որտեղ մասոնության կողմից ուսուցանվող սկզբունքները կարող էին կիրառվել:

Մասոնություն ուսումնասիրող պատմաբաններից Նեիլ Յորքն իր «Ֆրանկմասոնները և ամերիկյան հեղափոխությունը» գրքում գրում է, որ ոմանք ֆրանկմասոնությունը տեսնում էին որպես այդ դարաշրջանի «ինտելեկտուալ հեղափոխության գլխավոր հրահրողը» և «նրա քաղաքական հեղափոխությունների հոգևոր հայրը»: «Ֆրանկմասոնները մարդկանց մի սահմանափակ, բայց շատ նշանավոր դասի մեջ առաջացրին ամերիկյան միասնության զգացում, առանց որի ամերիկյան ազատությունը չէր կարող զարգանալ, առանց որի չէր լինի Միացյալ Նահանգները» [8, 23]:

Պանդոկներում պարբերաբար տեղի էին ունենում մասոնական մտերմիկ քննարկումներ, որոնք ազդեցիկ էին հասարակական կարծիք ձևավորելու համար: Հայտնի է, որ շատ մասոնական խմբեր և անհատներ ակտիվ քաղաքական

քարոզչություն էին իրականացնում դրոշմահարկի ընդունման և Լեքսինգթոնում տեղի ունեցած ճակատամարտի միջև ընկած ժամանակահատվածում:

Մասոնագետ Ջեյմս Դ. Քարթերը՝ «Կրթությունը և մասոնությունը Տեխասում մինչև 1846 թ.» գրքի հեղինակը, նշում է, որ մասոնական սկզբունքները, ներառյալ կրոնական հանդուրժողականությունը, խոսքի ազատությունը, օրենքի հավասար և արդար պատիժները, կարելի է գտնել ԱՄՆ Սահմանադրության առաջին տասը փոփոխություններում: Մասոնությունը իսկապես համաժամանակյա էր նոր հանրապետության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների իդեալների հետ [8, 29]:

Այսպիսով մասոնները խանդավառությամբ միացան Ամերիկայի անկախության համար մղվող պայքարին, ուստի շատ կարևոր է հեղափոխական պատերազմի ժամանակ մասոնների գործունեության խորը գիտակցումը: Նույնիսկ նրանք, ովքեր մասոնական օթյակների անդամներ չէին, որպես քաղաքացիներ, մասոնական ուսմունքների ազդեցության տակ ակտիվ են եղել ազատության համար պայքարի յուրաքանչյուր փուլում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бейджент М., Ли. Р. Храм и ложа. От тамплиеров до масонства, пер. с англ., Москва, 2006, 352 с.
2. Киясов С. Е. Масоны Северо-Американских колоний накануне войны за независимость. Известия Саратовского университета. Новая серия, том 8, История. Международные отношения, Саратов: изд.-во Саратовского университета, 2008, вып. 2.
3. Гарольд В. В. Масонство в Северной Америке, пер. с англ., Москва, 1997, 147 с.
4. Большая энциклопедия. Масоны, Москва, 2007, том 2, 344 с.
5. Масонство в его прошлом и настоящем. Под ред. С. П. Мельгунова и Н. П. Сидирова, Москва, 1914, том 2, 266 с.
6. Մովսիսյան Ֆ., Մասոնները և ամերիկյան հեղափոխությունը, հ.1., Երևան, 2015, 743 էջ:
7. Уайт А. Новая энциклопедия масонство (великого искусства каменщиков и родственных таинств: их ритуалов, литературы и истории), Санкт-Петербург, Москва, Краснодар, 2003, 480 с.
8. Ortega D. P. Freemasonry in America, University Cuenca, 2010, 113 p.
9. Mors S. Freemasonry in the American Revolution. Washington: The masonic service association of the United States, 1924, 135 p.

Масонство в Северной Америке

Джилавян Гаяне
ВГУ, История, магистратура, 2-й курс
Научный руководитель:
доктор исторических наук, профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *война за независимость, масонство, Северная Америка, ложи*

К 1720-м годам масонство проникло в колониальную администрацию, общество и культуру Северной Америки. Это касается не только самого масонства, то есть ритуалов и возможностей, но и атмосферы, мировоззрения и ценностей. Большинство колонистов и английских солдат не читали Дж. Локка, Д. Юма, Вольтера и Д. Дидро. Однако через ложи философские идеи этих мыслителей стали доступны каждому. Колонии под влиянием масонских лож принимали активное участие на всех этапах борьбы за свободу.

Freemasonry in North America

Jilavyan Gayane
VSU, History, MA, 2nd year
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: *war for Independence, freemasonry, North America, lodges*

By the 1720s, Freemasonry permeated North American colonial administration, society, and culture. This applies not only to freemasonry itself, i.e. the rituals and opportunities, but also to the atmosphere, mindset and values. Most of the colonists and English soldiers had not read J. Locke, D. Hume, Voltaire or D. Diderot. However, through the lodges, the philosophical ideas of these thinkers became available to everyone. The colonies, under the influence of masonic lodges, took an active part in every phase of the struggle for freedom.

Ավգուստո Պինոչետ: Վերելքն ու անկումը

Վարդանյան Վարդուհի
«ՎՊՀ» հիմնադրամ, Պատմություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ս. Աղաջանյան

Հանգուցային բառեր. *հեղաշրջում, բարեփոխումներ, Սալվադոր Այյենդե, հանրաքվե, դիկտատոր, բռնապետ,Սանտյագո Լա Մոդենա, Չիլի*

Հոդվածի սահմաններում քննության են առնված Չիլիի պետական և ռազմական գործիչ Ավգուստո Պինոչետի կյանքը, նրա իրականացրած քայլերը իշխանության գալու համար, ինչպես նաև նրա տնտեսական բարեփոխումները: Ինչպես Պինոչետն է ասում, առանց նրա գիտության պետության մեջ մի տերև անգամ շարժվել չէր կարող: Հեղաշրջման միջոցով եկավ իշխանության, սակայն հենց ժողովրդի դժգոհությունն էլ ստիպեց նրան թողնել իշխանությունը և հեռանալ:

Նախաբան: Ավգուստո Պինոչետը չիլիական պետական և ռազմական գործիչ էր, գեներալ-կապիտան, իշխանության գլուխ կանգնեց զինվորական հեղաշրջման արդյունքում, ԱՄՆ-ի կառավարության օժանդակությամբ տապալելով նախագահ Սալվադոր Այյենդեի սոցիալիստական կառավարությունը: Չիլիի բռնապետն էր, զինված ուժերի գերագույն հրամանատարը: Չիլիում տիրում էր բռնապետություն, ոչ ոք առանց կառավարության թույլտվության ոչ մի քայլ անել չէր կարող, և հենց այս շրջանում էր, որ երկրում սկսեց բնակչության թվաքանակը պակասել՝ կապված տիրող դասակարգի քաղաքականության հետ:

Նպատակ և արդիականություն: Ուսումնասիրել Ավգուստո Պինոչետի կյանքը, զինվորական կարիերան, նրա կատարած բարեփոխումները տնտեսության մեջ: Արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Պինոչետի կառավարումից այդքան էլ երկար ժամանակ չի անցել, բայց հիմա էլ երկրներ կան, որ դեռ տիրում է բռնապետական կառավարումը: Ինչպես այն ժամանակ, հիմա ևս ժողովուրդը պարտավոր է ենթարկվել տիրող կառավարության կանոններին:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Պինոչետի գործունեության ընթացքում կատարած բարեփոխումների ուսումնասիրությամբ զբաղվել են ռուսական, իսպանական, հայկական արևմտյան ներկայացուցիչները: Խնդրո առարկա հարցին անդրադարձել են ժամանակի լրատվամիջոցները, ամսագրերը, ինչպես նաև առանձին հեղինակներ՝ Шевелев В., Утро Августо Пиночета, Тарасов А., Хватит врать о Пиночете, Правда о Чили, Кангас С., Чикагские мальчуки и чилииское экономическое чуда Архувная:

20-րդ դարի ամենախիստ քաղաքական գործիչներից մեկը, մարդ, որի կառավարման շրջանը շատերը սարսափով են հիշում: Գեներալ, գլխավոր հրամանատար Ավգուստո Պինոչետը ծնվել է 1915 թ. նոյեմբերի 25-ին Չիլիի խոշորագույն քաղաքներից մեկում՝ Վալպարիսոյում: Տասնյոթ տարեկան հասակում սկսել է ռազմական արվեստով զբաղվել: 1930-ականներին նա արդեն իսկ սպայական կո-

չումներ ուներ: 1948 թ. Պինոչետն ընդունվեց հետևակային ակադեմիա, որը ավարտելուց հետո ծառայության անցավ չիլիական բանակում: 1956 թ. նա ուղևորվեց Էկվադոր: Մեկ տարի անց նա վերադարձավ Չիլի և շարունակեց ծառայությունը: 1968 թ. Պինոչետը ստացավ գեներալի կոչում, ինչպես նաև դարձավ Տազարասա նահանգի նահանգապետ: 1969 թ. նրան շնորհվեց բրիգադի գեներալի, իսկ 1971թ.՝ դիվիզիայի գեներալի կոչում [1]: 1970 թ. աշնանը Չիլիում ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանության եկավ սոցիալիստ Սալվադոր Այլենդեն: Պինոչետը, ով Այլենդեի վաղեմի ընկերն էր, նոր իշխանության մեջ բարձր ռազմական պաշտոններ սկսեց զբաղեցնել: Մասնավորապես 1972 թ. նա ցամաքային զորքերի հրամանատարն էր: Մեկ տարի անց Պինոչետը կարողացավ իր պաշտոնից հեռացնել բանակի հրամանատար Կառլ Պրատսին: Հետագայում Պրատսն իր հուշերում գրում էր, որ իր հեռանալը ռազմական հեղաշրջման նախորյակին դավաճանական քայլ էր: Այլենդեի քաղաքականության հետևանքով չիլիական տնտեսությունը վտանգի եզրին հայտնվեց [2]:

1973 թ. սեպտեմբերի 11-ին Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյի Լա Մոդենա նախագահական պալատը շրջափակեց ռազմական մեքենաներով և սկսեց ռմբակոծվել ուղղաթիռներից: Ընդամենը մի քանի ժամվա ընթացքում զինուժերի ղեկավարները նախագահական պալատը զավթեցին և ինքնահռչակ խունտան՝ գեներալ Ավգուստո Պինոչետի գլխավորությամբ, սահմանեց արտակարգ դրություն: Այն հայտարարեց վեց կուսակցությունից բաղկացած ղեկավարող ժողովրդական միասնություն կոալիցիան անօրինական ու արձակեց պառլամենտը: Ժողովրդավարական եղանակով ընտրված նախագահ Սալվադոր Ալենդեն հասցրել էր իր վերջին ուղերձը հղել ժողովրդին, որում պնդում էր, որ իր հավատարմությունը Չիլիի ժողովրդին նա վկայելու է իր կյանքով և հավատ էր տարածում ժողովրդի շրջանում: Այլենդեիին չհասցրեցին ձերբակալել, նա արդեն ինքնասպան էր եղել [3]: Պինոչետը ընդամենն ամիսներ առաջ էր ստանձնել բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը՝ փոխարինելով սահմանադրությունը պաշտպանող գեներալ Պրաթսին, ով հրաժարական էր տվել: Ձևավորվեց զինվորականների խումբ, որի կազմում էին Պինոչետը, Խոսե Մերինոն, գեներալ Գուստավո Լի Գուսմանը և գեներալ Սեզան Մենդուլան: Հեղաշրջումից կարճ ժամանակ անց Պինոչետը հավաստիացրեց, որ զինված ուժերը հավատարիմ են մնացել իրենց մասնագիտական պարտքին, և միայն երկրում տիրող իրավիճակն է ստիպել նրանց իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Եվ հենց հանգստություն ձեռք բերվի և տնտեսությունը դուրս բերվի այս ծանր վիճակից, բանակը կվերադառնա զորանոց: Գեներալը նույնիսկ վերջնաժամկետ է սահմանել այդ նպատակների իրականացման համար՝ մոտ քսան տարի, որից հետո Չիլին կվերադառնա ժողովրդավարության: 1974 թ. ամռանն ընդունվեց օրենք, որով Պինոչետը հռչակվեց իշխանության գերագույն կրողը: Նա օժտված էր լայն լիազորություններով, ներառյալ միանձնյա կատավարումը, ցանկացած օրենք հաստատելու կամ չեղյալ հայտարարելու, դատավորներ նշանակելու և ազատելու իրավունք: Նրա իշխանությունը չէր սահմանափակվում ո՛չ խորհրդարանի, ո՛չ էլ քաղաքական կուսակցությունների կողմից

[4]: 1973 թ սեպտեմբերի 21–ին նախագահի հրամանագրի համաձայն, Չիլիի Ազգային կոնգրեսը լուծարվեց: Պինոչետը հայտարարեց «Մեր բոլոր թշնամիներից գլխավորն ու ամենավտանգավորը կոմունիստական կուսակցությունն է: Մենք պետք է քանդենք այն հիմա, մինչդեռ այն վերակազմավորվում է ամբողջ երկրում: Եթե մեզ չհաջողվի, նա մեզ վաղ թե ուշ կկործանի»: Քաղաքացիական դատարանների փոխարինելու համար ստեղծվեցին ռազմական տրիբունալներ, խոշտանգումների գաղտնի կենտրոններ և մի քանի համակենտրոնացման ճամբարներ քաղբանտարկյալների համար: Իրականացվել են ռեժիմի ամենավտանգավոր հակառակորդների մահապատիժները Սանտյագո մարզադաշտում: Պինոչետը չէր դադարում կրկնել, որ «Չիլին տերերի երկիր է, ոչ թե պրոլետարների»: Նրա շուրջը ձևավորվեց չիլիացի տնտեսագետների խումբ, որոնցից շատերը սովորել էին Չիկագոյում: 1978 թ. հունվարին նա անցկացրեց հանրաքվե և ստացավ ձայների 75 %-ը: Դիտորդները դա անվանեցին մեծ քաղաքական հաղթանակ Պինոչետի համար, որի քարոզչությունը հմտորեն շահագործում էր չիլիացիների հակամերիկյան աջակցությունը, նրանց հավատարմությունը այնպիսի արժեքների, ինչպիսիք են ազգի արժանապատվությունը և ինքնիշխանությունը [5]:

1978 թ. Չիլիի խոշորագույն՝ Չուկիկամատա պղնձի հանքում աշխատավորները բողոք բարձրացրին աշխատավարձերի բարձրացման պահանջով: Սակայն շուտով նրանց բողոքը լռեցվեց ռազմական բռնությամբ, հանքը շրջափակվեց բանակայիններով, գործադուլի կազմակերպիչները հայտարարվեցին կոմունիստներ և չեզոքացվեցին: Օգտագործելով համաշխարհային ֆեդերացիայի կողմից չիլիական ապրանքների բոյկոտի սպառնալիքը՝ խունտան գնաց զիջումների և թույլատրեց արհմիությունների գործունեությունը, թեև շատ խիստ պայմաններով, օրինակ՝ երեսուն օրվա գործադուլից հետո աշխատողներին կարելի էր փոխարինել, իսկ վաթսուն օրից ավելի գործադուլը համարժեք էր լինելու աշխատանքից դուրս գալուն [6]:

1983 թ. Աշխատավորների ազգային կոմիտեի ղեկավար դարձած Դոդոլֆո Սեգելի գլխավորությամբ հայտարարված գործադուլից չորս օր առաջ հանքերը շրջափակվեցին: Փողոցային գործողությունների բռնի ճնշումը ստիպեց աշխատավորներին, քաղաքացիական խմբերին և արդեն ներգրավված քաղաքական կուսակցություններին վերանայել իրենց ռազմավարությունը: Պինոչետը փորձեց մեղմացնել ժողովրդական բողոքը՝ երկխոսության պատրանք ստեղծելով և նշանակելով ներքին գործերի նախարարի, ով պետք է բանակցեր Դաշինքի հետ: Իրականում թավշյա ձեռնոցի տակ երկաթյա բռունցքն էր, բանակցությունների մասին խոսելու հաջորդ ցույցերը ցրեց ոչ թե ոստիկանությունը, այլ բանակը, որի արդյունքում զոհվեց 26 ցուցարար [7]:

1980 թ. օգոստոսին սահմանադրության նախագծի շուրջ անցկացվեց հանրաքվե: Կողմ՝ ձայների 67 %-ը, դեմ՝ 30 %-ը: 1981 թ. մարտից սահմանադրությունն ուժի մեջ մտավ, Պինոչետը առանց ընտրության հռչակվեց ութ տարի նախագահ՝ ևս ութ տարի վերընտրվելու իրավունքով: Սակայն կան կարծիքներ, որ այս և նախորդ հանրաքվեները կեղծված են եղել, քանի որ շատ վայրերում ընտրողների

թիվը գերազանցել է բնակչության թվին: Պինոչետը լիովին ներդրել էր ազատ շուկայական քաղաքականությունը, վերադարձրել էր ազգայնացված ընկերությունները նախկին բաժնետերերին և վաճառել էր բոլոր պետական ձեռնարկությունները՝ ներգրավելով այդքան ցանկալի արտաքին ներդրումներ, վերադարձել էր հողային ռեֆորմի արդյունքում խոշոր հողատերերից փոխհատուցմամբ վերցված և վերաբաշխված հողերը նախկին խոշոր կալվածատերերին: Բնակարանային բարեփոխումների արդյունքում մայրաքաղաք Սանտյագոյի հատակագիծը փոխվեց, ստեղծվեցին ծայրամասային թաղամասեր, որտեղ վերաբնակեցվեցին աղքատ խավի մարդիկ՝ ստեղծելով հարուստ և միջին խավին պատկանող «կենտրոնական վակուում»: Տեղի ունեցավ կապիտալի և հարստության աննախադեպ կենտրոնացում մի քանի մասնավոր ընկերությունների ձեռքում: Առաջին տասը տարիները թողեցին տնտեսական «բումի» տպավորություն, սակայն ազատ շուկայական հարաբերությունները ներխուժել էին ոչ միայն տնտեսական ոլորտ, այլև սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության և մշակութային ոլորտներ: Պետական հիվանդանոցների մեծ մասը մասնավորեցվեց, խոշորագույն համալսարանները զրկվեցին պետական ֆինանսավորումից: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի համատեքստում Չիլիի ազատ շուկայական տնտեսությունը, որը մեծապես կախված էր համաշխարհային շուկայից, նույնպես տուժեց. ոչ միայն փոքր, այլև միջին բազմաթիվ ձեռնարկություններ սնանկացան [8]: Գործազուրկների մակարդակը 1983 թ. հասավ պաշտոնապես 30 տոկոսի: Աղքատության մակարդակը նույնպես սկսեց բարձրանալ, ինչն իր ազդեցությունը ունեցավ նաև հասարակության քաղաքական ակտիվացման վրա: Չիլիի ժողովուրդը կարծես արթնացավ լեթարգիկ քնից: Վերակտիվացան նաև կուսակցությունները, այդ թվում՝ ընդհատակ անցած ձախական ուժերը: Պինոչետի տարիներին երկիրը հարկադրաբար լքել է շուրջ 1 միլիոն մարդ, մեծամասնությունը՝ ձախական հայացքների տեր [9]:

Չիլիի հանրությունը գիտակցում էր, որ պարտիզանական զինված պայքարով հնարավոր չէր վերականգնել սահմանադրական կարգը: Փողոցային ցույցերը նույնպես արդյունավետ չէին. Պինոչետը կարողանում էր դրանք բռնությամբ ցրել և պառակտել ցուցարարներին: Պինոչետն անդրդվելի էր, նրա հեգեմոնիան ավելի ու ավելի էր զորեղանում հատկապես ընդդիմության շրջանում զինված պայքարի, իր դեմ մահափորձի, ոստիկանական ուժերի վրա հարձակումների համատեքստում: Պինոչետը նման միջավայրում իրեն զգում էր ինչպես «ձուկը ջրում», սա նրան առիթ էր տալիս գործի դնել բանակը, սահմանել պարեկային ժամեր, սահմանափակել քաղաքացիների իրավունքները, բարձրացնել սեփական հեղինակությունը որպես «երկիրը ծայրահեղ հեղափոխականների և ահաբեկիչների քաոսից» ազատող փրկիչ [10]: Քաղաքական համախմբման հարցում մեծ դեր կատարեց նաև կաթոլիկ եկեղեցին, որը թեև Սալվադոր Ալենդեի սոցիալիստական կառավարության խիստ քննադատն էր, սակայն չէր կարող հանդուրժել Պինոչետի ռեպրեսիվ իշխանությունն ու վայրագությունները: Լինելով միակ հաստատությունը, որը Պինոչետն ի վիճակի չէր ոչնչացնել, կաթոլիկ եկեղեցին իր

հովանու ներքո պաշտպանում էր հալածյալներին: Մեծ դեր կատարեցին կանանց կազմակերպությունները, որոնք սկզբում զբաղվում էին սոցիալական և մարդու իրավունքների խնդիրներով, այնուհետև սկսեցին առաջ քաշել կոնկրետ կանանց իրավունքների հարցեր: Մինչև 1986 թ. Չիլիի հանրությունը համախմբվել էր և պատրաստ էր մղել ժողովրդավարության վերականգնման սոցիալական շարժումը [11]: 1986 թ. սեպտեմբերի 7-ին «Մանուել Ռոդրիգեսի անվան հայրենասիրական ճակատը» կազմակերպության կողմից մահափորձ իրականացվեց Պինոչետի նկատմամբ: Դրա մասնակիցները իրենց պատրաստվածության դասընթացներն անցել էին Մոսկվայում՝ Չիլիի կոմունիստական կուսակցության ղեկավարների անվտանգությունն ապահովելու ծրագրի շրջանակներում: Սակայն զենքը խափանված էր: Սկզբում նռնակները չկրակեցին, սակայն երկրորդ փորձից հետո նռնակը կոտրեց ավտոմեքենայի ապակին, բայց չպայթեց: Այդ հարձակման ընթացքում զոհվեց գեներալի հինգ թիկնապահ: Հետագայում Պինոչետն ասել էր, որ Աստված է փրկել իրեն, որպեսզի նա կարողանա կրկին շարունակել պայքարը հանուն հայրենիքի: Չիլիի կուսակցական և քաղաքացիական ուժերը գիտակցում էին, որ ասիմետրիկ այդ պայքարում խաղի կանոնները վերահսկում էր դիկտատորը, ուստի պետք է փնտրեին այդ ասիմետրիան հաղթահարելու ուղիներ: Ընտրացուցակներ չկային, խունտան 1987 թ. ընդունեց օրենքներ՝ ի պատրաստություն հանրաքվեի: Հայտարարվեց ընտրողների ցուցակագրումը: Խունտայի ընդունած օրենքները հատուկ բյուրոկրատական դժվարություններ էին նախատեսում և ապա խրախուսում ցուցակագրումը: Արագ գրանցվում էին Պինոչետի աջակցողները, իսկ հատկապես աղքատ խավի համար ընտրական ցուցակներում ներգրավվելը խիստ դժվար էր՝ քվեարկողի քարտ ստանալու համար պահանջվող ֆինանսական և ժամանակային ռեսուրսների պատճառով: Խունտան նաև ընդունեց նախագահական հանրաքվեին հաջորդող խորհրդարանական ընտրություններ անցկացնելու և կուսակցություններին օրինականացնելու վերաբերյալ օրենքներ՝ կրկին խիստ սահմանափակումներով: Նախ, ընտրությունների համար կուսակցությունները գրանցելու ժամկետները շատ սեղմ էին, կուսակցության անդամությունը պետք է փաստվեր հանրայնացված անուն-ազգանուններով և հասցեներով: Խիստ ռեպրեսիվ դիկտատուրայում մարդիկ պարզապես չունեին նման քաջություն, բացի այդ՝ շարունակում էր գործել դասակարգային պայքարի մասին հիշատակող կուսակցությունների գրանցման արգելքը [12]:

Համակարգի ներսում խաղի կանոններից դուրս աշխատելու առաջին ուղին դա էր՝ փոխել ընտրացուցակների հետ կապված Պինոչետի պլանները: Ընդամենը մեկ տարվա ընթացքում կամավորները դռնեդուռ այցելությունների միջոցով կարողացան ապահովել, որ ընտրացուցակներում ընդգրկվի ևս 4 միլիոն չիլիացի: Քվեարկելու իրավունք ունեցող բնակչության 90 % արդեն ընտրացուցակներում էր: Համակարգի ներսում խաղի կանոններից դուրս աշխատելու մյուս ուղին խունտայի ընդունած ընտրական կիսաազատ նոր կանոնակարգերից օգտվելն էր, համաձայն որոնց՝ քվեարկությունը բաց էր, իսկ կուսակցությունների ներկայացուցիչներին թույլատրվում էր դիտարկել ընտրությունները: Պինոչետի կեղծած

նախորդ երկու ընտրություններում նման ազատություններ չկային: Ուստի կուսակցական և քաղաքացիական ուժերը համախմբվեցին և ապահովեցին ընտրատարածքների 10 տոկոսի դիտարկում, ինչը ենթադրում էր 22.000 ընտրատարածքից բաց եղանակով նետվող քվեների տեղում ամփոփում և փոխանցում Սանտյագոյում գտնվող կենտրոնին: Սա քվեների հաշվարկման այլընտրանքային համակարգ էր, որը վիճակագրական ճշգրտության սկզբունքով էր մշակվել, որպեսզի ապահովի իրենց հաշվարկների ճշմարտացիությունը: Վերջապես մեծ դերակատարում ունեցավ հեռուստատեսությունը, որը մինչև այդ գտնվում էր վարչախմբի լիակատար վերահսկողության ներքո, սակայն ձևական ազատություն ցույց տալու նպատակով Պինոչետը թույլատրել էր հանրաքվեին նախորդող մեկ ամսվա ընթացքում 15-ական րոպե տրամադրել հանրաքվեին կողմ կամ դեմ քվեարկելու օգտին: Պինոչետը կարծում էր, թե իր գովքն անող պետական գովազդների կողքին ժողովրդական շարժումները և գովազդները չէին կարող ազդեցություն ունենալ, մասնավանդ որ դրանք պետք է գրաքննվեին նախքան հեռարձակվելը: Այս հարցում նույնպես նա սխալվում էր, ժողովրդական շարժումը կարողացել էր ներգրավել հատուկ մասնագետների, որոնք ազդեցիկ կերպով ներկայացնում էին այն պայծառ և ազատ ապագան, որը սպասվում էր Չիլիին առանց Պինոչետի: Այլընտրանքային այս տեսլականը նույնպես տրամադրում էր կոլեկտիվ գործողության: Հանրաքվեն նշանակված էր 1988 թ. հոկտեմբերի 5-ին: Օրեր առաջ Պինոչետը հազարավոր բանակայինների հրահանգել էր դուրս գալ փողոցներ: Բացի ահի մթնոլորտ ստեղծելուց՝ նա պլանավորում էր սադրել բախումներ, որի արդյունքում զինուժը պիտի միջամտեր, արդյունքում՝ քաղաքացիական վերահսկողություն հնարավոր չէր լինելու իրականացնել, քառսային իրավիճակում Պինոչետը հռչակելու էր սեփական հաղթանակը: Այս ամենը կանխելու նպատակով Մոնիկա Հիմենեզը տեղեկացրեց օտարերկրյա դեսպանություններին, որ ընտրությունների արդյունքները վարչախումբը կարող է փորձել գողանալ՝ արտակարգ դրություն հրահրելով և ռազմական միջամտությամբ: Միացյալ Նահանգների պետդեպարտամենտը հաղորդագրություն ուղարկեց Չիլիի արտաքին գործերի նախարարություն, որ նման սցենարի դեպքում իրենք չէին ճանաչի հանրաքվեի արդյունքները [13]:

Հանրաքվեի օրը 22.000 ընտրատարածքներում ընթացող զուգահեռ հաշվարկի արդյունքները պարբերաբար ուղարկվում էին Սանտյագո, համակարգչային ծրագրի միջոցով դրանք ամբողջացվում էին և հաղորդվում միակ կիսաազատ հեռուստաալիքի՝ կաթոլիկ եկեղեցու հեռուստաալիքով: Ակնհայտ էր, որ «ոչը» գերազանցում էր: Երեկոյան Պինոչետը հրահանգեց ոստիկանությանը ճնշել քաղաքի փողոցներում տոնական տրամադրությունները՝ նախադրյալներ ստեղծելով հանրաքվեի արդյունքների խողոթյուրելու համար: Ոստիկանությունը հրաժարվեց դա անել: Մինչ այդ իր սեփական հեռուստաալիքով հանրաքվեի արդյունքների մասին կարճատև հաղորդում տրվեց, ժողովուրդը «ընտրել է» Պինոչետին, որին հաջորդեց ամերիկյան սերիալների ցուցադրությունը:

Կաթոլիկ եկեղեցու հեռուստաալիքով հաղորդվում էր ճիշտ հակառակը [14]:

Զայրացած Պինոչեը արագ ստորագրեց կառավարությունը ցրելու հրամանագիր, նա այնուհետև իր մոտ հրավիրեց խունտայի մյուս երեք գեներալներին: Նախագահական պալատի ճանապարհին լրագրողների հարցին գեներալներից մեկն ընդունեց, որ «ոչի» քվեները գերազանցում են: Պինոչետը պահանջեց զինուժի մոբիլիզացում, ինչին գեներալները ընդդիմացան: Այնուհետև պահանջեց, որ նրանք հայտարարություն ստորագրեն, որ փոխանցում են որոշումների կայացման ողջ լիազորությունը միայն իրեն: Սա կատաղեցրեց Պինոչետի գործընկերներին, գեներալներից մեկը Պինոչետի աչքի առաջ պատռեց հայտարարությունների տեքստը: Պինոչետը մնացել էր միայնակ: Թեև Պինոչետը շարունակեց ևս մեկ տարի ղեկավարել բանակը, նրա գերիշխանությունը քայքայվել էր: Չիլիում պատրաստվում էին ժողովրդավարական ընտրությունների. դեռևս պետք է հաղթահարել 1980 թ. դրակոնյան սահմանադրությունը, երկրում զանգվածային բռնություններն ու ռեպրեսիաները դադարել էին: Այնուամենայնիվ, Պինոչետի անկումից հետո նրա ներդրած տնտեսական համակարգը չփոխվեց, երկրի կատավարումը ստանձնած կենտրոնամետ և աջական ուժերը շարունակեցին ազատ շուկայական տնտեսության քաղաքականությունը [15]:

Եզրահանգում: Ուսումնասիրելով 20-րդ դարի ամենասարսափելի բռնապետերից մեկի՝ Ավգուստո Պինոչետի գործունեությունը՝ պետք է փաստել, որ նա ռազմական հեղաշրջման շնորհիվ եկավ իշխանության Չիլիում և ռազմական ամենասարսափելի ռեժիմը հաստատեց երկրում: Նրա կառավարման շրջանը շատերը սառսափով են հիշում, մարդ, որի կառավարման շրջանում Սանտյագոյի մարզադաշտերում գնդակահարվում էին այլախոհները կամ էլ անհետ կորչում համակենտրոնացման ճամբարներում: Նրա կառավարման շրջանում պետության պլանային տնտեսությունը վերակազմավորվեց և դրվեց շուկայական հարաբերությունների նորացման ճանապարհին:

Պինոչետը փորձում էր, ինչպես ինքն է նշում, Չիլին դարձնել տերերի երկիր, ոչ թե պրոլետարների: Նրա կատարած բարեփոխումները հանգեցրին կենսաթոշակային համակարգի փոփոխության, որը վճարովի համակարգից վերածվեց կուտակայինի: Պինոչետի իշխանության գալուց հետո օրենք ընդունվեց այն մասին, որ այնուհետև ինքն է իշխանության բարձրագույն կրողն ու օժտված է անսահմանափակ լիազորություններով, և հաճախ նշում էր, որ Չիլիում անգամ մի տերև չի շարժվի, եթե ինքը չկամենա: Պինոչետը ստեղծեց գաղտնի ոստիկանություն, որը գաղտնի հայտնաբերում էր քաղաքական ընդդիմադիրներին և ոչնչացնում: Նրա կատարած փոփոխությունները տնտեսական ոլորտում սկզբում առաջընթաց գրանցեցին: Տնտեսական ցուցանիշը աճում էր, սակայն քաղաքական տեռորի պայմաններում: Այնուհետև, երբ երկիրը հայտնվեց տնտեսական ճգնաժամի մեջ, սկսեց աճել գործազուրկների թիվը, երկրում սկսվեց դժգոհության ալիք բարձրանալ, իսկ առաջին լուրջ ընդվզումը Չիլիական հանքավայրերում էր: Երբ սկսեցին գործադուլը, բանվորներին սկսեց միանալ ժողովուրդը և փողոց դուրս գալ՝ փորձելով այդպես հասկացնել իշխող կառավարությանը իրենց դժգոհությունը: Սրան կառավարությունը պատասխանեց ուժով, որը ուղեկցվում էին

ձերբակալություններով և զոհերով: Աղքատության մակարդակը ևս սկսեց բարձրանալ, ինչն էլ իր ազդեցությունը ունեցավ հասարակության ակտիվության վրա: Վերակտիվացան նաև կուսակցությունները և կանգնեցին ժողովրդի կողքին:

Պետք է նշենք, որ Պինոչետի կառավարման շրջանում տնտեսության մեջ որոշակի դրական տեղաշարժեր եղան, բարեփոխումները երկիրը զարգացման տարան, բայց սրան զուգահեռ երկրում տիրող բռնությունները ժողովրդի մոտ տիրող վախը տարավ Պինոչետի իշխանության տապալման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://www.britannica.com (Համացանցից դուրս է բերվել 21. 09. 2022):
2. Шевелев В. Утро Августо Пиночете Правда о Чили, 2006, 17-18 с.
3. https://www.globalsecurity.org (Համացանցից դուրս է բերվել 14. 09. 2022):
4. Шевелев В. Утро Августо Пиночете. Правда о Чили, 2006, 20-21 с.
5. https://hetq.am/hy/article (Համացանցից դուրս է բերվել 22. 09. 2022):
6. https://www.azatutyun.am (Հանացանցից դուրս է բերվել 25. 09. 2022):
7. Тарасов А. Хватит врать о Пиночете Правда о Чили, 2006, 36-37 с.
8. Тарасов А. Хватит врать о Пиночете Правда о Чили, 2006, 38-39 с.
9. https://en.m.wikipedia.org (Համացանցից դուրս է բերվել 26. 09. 2022):
10. https://www.amnesty.org (Համացանցից դուրս է բերվել 28. 09. 2022):
11. Кангас С. Чикагские мальчуки и чилииское экономическое чуда, 2006, 33-34 с.
12. John R. Bawden, The Pinochet Generation: The Chilean Military in the Twentieth Century, 2021, pp. 163-164.
13. John R. Bawden, The Pinochet Generation: The Chilean Military in the Twentieth Century, 2021, pp. 167-168.
14. John R. Bawden, The Pinochet Generation: The Chilean Military in the Twentieth Century, 2021, pp. 69-172.
15. Тарасов А. Хватит врать о Пиночете. Правда о Чили, 2006, 40-42 с.

Взлёт и падение Августо Пиночета

Варданян Вардуи
ВГУ, История, магистратура, 2-й курс
Научный руководитель:
кандидат исторических наук, доцент С. Агаджанян

Резюме

Ключевые слова: *революция, преобразования, Сальвадор Альенде, референдум, Диктатор Сантяго ла Модена, Чили*

В данной статье рассматривается жизнь чилийского политического и военного деятеля Августо Пиночета, его операции по приходу к власти, а также его экономические реформы. Как Пиночет сам сказал: «Ни один лист не шелестит в этой стране, если я не двигаю им». Через революционные действия он пришел к власти, но позже заявил, что отказался от полномочий и ушел в ответ на жалобы народа.

Augusto Pinochet: The Rise and Fall

Vardanyan Varduhi
VSU, History, MA, 2nd year
Academic Supervisor: S. Aghajanyan,
Candidate of Historical Sciences, Associate Professor

Summary

Key words*: revolution, reformations, Salvador Allende, referendum, dictator, tyrant, Santiago la Modena, Chile*

This article examines the life of the Chilean political and military figure Augusto Pinochet, focusing on the operations he carried out to come to power, as well as his economic reforms. As Pinochet famously stated, 'Not a single leaf moves in this country if I´m not the one moving it.' Through revolutionary means, he rose to power, but later claimed that he had abdicated his authority and left in response to the people's complaints.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЮРИСПРУДЕНЦИЯ

JURISPRUDENCE

Համակարգչային հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական ասպեկտները

Ասլիկյան Անի
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիա,
«Իրավագիտություն», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ իր. գ. թ., դոցենտ Գ. Իսրայելյան

Հանգուցային բառեր. *կիբերհանցավորություն, հեռահաղորդակցային ցանցեր, տեղեկատվական անվտանգություն, ՀՀ քրեական նոր օրենսգիրք*

Ներածություն

Հանցավորությունը պատմականորեն փոփոխվող երևույթ է, այսինքն՝ կապված հասարակական փոփոխություններով, նրա սոցիալ-բարոյական, գաղափարախոսական, գիտատեխնիկական և այլ գործոններով, հանցավորությունը որակապես և քանակապես փոփոխվում է: Դրա հետ մեկտեղ տեղի է ունենում հանցավոր վարքագծի որոշ տեսակների վերացում և նոր տեսակների ծագում:

Յուրաքանչյուր զարգացում առաջ է քաշում որոշակի հետևանքներ: Բացառություն չէ նաև համացանցը: Սկզբնական շրջանում այն նախատեսված էր դրական նպատակներով օգտագործման համար, սակայն կիբերտարածության հսկայական ներուժը սկսվեց նույնպես օգտագործվել ժամանակակից հանցագործություններ կատարելու համար: Կիբերհանցագործությունները տեղեկատվական, ցանցային և գլոբալ բնույթ են կրում, խիստ անկանխատեսելի են՝ համեմատած «ավանդական» հանցագործությունների հետ:

Նմանօրինակ հանցագործությունների առաջին դեպքերը գրանցվել են նույնիսկ ինտերնետի տարածումից առաջ, քանի որ անձնական տվյալների հափշտակությունը միշտ եղել է տարբեր տեսակի խարդախների հետաքրքրության առարկա:

Ներկայումս քննարկվող երևույթի դեմ պայքարը տարվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակում: Աշխարհի գրեթե բոլոր պետությունները ներգրավված են կիբերհանցավորության դեմ պայքարում: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Տեղական մակարդակում կիբերհանցավորության դեմ պայքարի զինանոցի գլխավոր իրավական գործիքը դրա համար պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերն են: Հայտնի է, որ 2022 թվականից գործում է ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որի համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ներկայացնել կիբերհանցավորության ծագումը, դրա քրեականացման նախադրյալները, պայքարի միջազգային իրավական միջոցները և ՀՀ քրեական օրենսգրքում զետեղված հիմնական հանցակազմերը:

Հիմնական հետազոտությունը

Կիբերհանցավորության ծագումը, դրա քրեականացման նախադրյալները և պայքարի միջազգային իրավական միջոցները

Համակարգչային-տեղեկատվական առաջընթացի ամենամեծ ձեռքբերումը համացանցի ստեղծումն էր, որը, ինչպես նշում էր «գլոբալ գյուղ» եզրույթի հեղինակ, կանադացի հայտնի փիլիսոփա Մարշալ Մաքլուհանը, «մարդկանց միջև անտեսում է բոլոր սահմանները՝ տարածություն, ժամանակ, մշակույթ, ավանդույթ, աշխարհայացք և այլն, որի արդյունքում աշխարհն այնքան է սեղմվում, որ կարծես դառնում է մի ամբողջ գլոբալ գյուղ» [2, 6]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց մարդիկ սովորել են մեծապես վստահել համակարգչային համակարգերին, քանի որ դրանք դարձել են կառավարությունների, կազմակերպությունների և անհատների առօրյա գործունեության կարևոր մասը: Արդյունքում մարդիկ տեղեկատվական համակարգերին զետեղել են չափազանց կարևոր և արժեքավոր տեղեկատվություն, իսկ արժեքավոր օբյեկտները միշտ էլ եղել են հանցագործների թիրախում:

Կիբերհանցագործությունը հանցավոր գործունեություն է, որի ընթացքում օգտագործվում են համակարգիչ, համակարգչային համակարգ կամ ցանցային սարք կամ հարձակվում են դրանց վրա: Կիբերհարձակումների մեծ մասն իրականացվում է կիբերհանցագործների կամ հաքերների կողմից՝ ֆինանսական շահի համար: Այնուամենայնիվ, կիբերհարձակումների նպատակը կարող է լինել նաև համակարգիչների կամ ցանցերի անջատումը՝ անձնական կամ քաղաքական պատճառներով:

Նշվածից բխում է՝ կիբերհանցագործությունների պատմությունն ու էվոլյուցիան համընկնում է Համացանցի զարգացմանը: Առաջին դրսևորումներից մեկը տեղական տեղեկատվական ցանցերի հակերությունն էր: Իսկ ահա կիբերհանցավորության առաջին զանգվածային դրսևորումը 1988 թվականին էր՝ Մորիսի որդի կամ համացանցային որդի տարածման միջոցով: Որպեսզի թաքցնի իր ներկայությունը համակարգչում, որդը օգտագործում էր հետևյալ հնարքը. այն հեռացնում էր իր կատարած ֆայլը, փոխում էր իր գործունեության անվանումը Unix shell և ամեն երեք րոպեն մեկ ճյուղավորվում էր: Դա առաջին վիրուսն էր, որ գրավեց զանգվածային լրատվական միջոցների ուշադրությունը, և այն նաև առաջին դեպքն էր, երբ 1986 թվականի Computer Fraud and Abuse Act կոչվող հոդվածը կիրառվեց դատարանում: Մորիսի որդի հասցրած վնասը գնահատվեց մոտ 96,5 միլիոն ԱՄՆ դոլար [1]:

Կիբերհանցագործությունների հաջորդ ալիքը բարձրացավ 90-ականներին և համընկավ վեբ բրաուզերների զարգացման հետ: Այն ժամանակ վեբ բրաուզերների թիվը շատ ավելի մեծ էր, քան այսօր, և նրանցից շատերը խոցելի էին վիրուսների նկատմամբ: Վիրուսները փոխանցվում էին ինտերնետ կապի միջոցով, երբ օգտատերը այցելում էր կասկածելի կայքեր: Հաճախ համակարգիչը ավելի դան-

դաղ էր աշխատում, թռուցիկ գովազդները հայտնվում էին անսպասելիորեն՝ ծածկելով էկրանը կամ վերահղելով անձին դեպի պոռնկագրական կայքեր [1]:

2000-ականների սկզբին կիբերհանցագործությունների զանգվածային աճը խթանվեց սոցիալական մեդիայի ծագմամբ և զարգացմամբ: Ցանցում բազմաթիվ անձնական տեղեկություններ հրապարակելով կամավոր կերպով՝ մարդիկ հեշտ զոհ դարձան հաքերների համար, ովքեր գողանում էին անձնական տվյալները, մուտք էին գործում բանկային հաշիվներ և կարող էին տարբեր ֆինանսական խարդախություններ կատարել [1]:

Ներկայումս կիբերհանցագործությունը դարձել է համաշխարհային քրեական արդյունաբերություն՝ տարեկան մոտ մեկուկես միլիարդ դոլարի շրջանառությամբ: Կիբերհանցագործները միավորվում են խմբավորումների մեջ, օգտագործում ժամանակակից SS տեխնոլոգիաներ՝ մեծացնելով իրենց ներկայությունը համացանցում [1]:

Կիբերհանցագործությունների խնդիրը վերաճել է համաշխարհային մասշտաբի: ՄԱԿ-ի X Կոնգրեսի հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի մասին զեկույցի համաձայն, «կիբերհանցագործություն» եզրույթը ծածկում է ցանկացած հանցագործություն, որը կարող է իրականացվել համակարգչային համակարգի կամ ցանցի միջոցով, համակարգչային համակարգի կամ ցանցի դեմ: Այսպիսով, էլեկտրոնային միջավայրում կատարված ցանկացած հանցագործություն կարող է վերագրվել կիբերհանցագործություններին:

«Կիբերհանցավորություն» տերմինը ներկայումս հաճախակի օգտագործվում է «Համակարգչային հանցավորություն» տերմինին զուգակցելով, երբեմն դրանք գործածվում են որպես հոմանիշներ: Իրականում դրանք հոմանիշներ չեն: Անգլերենում «cybercrime» տերմինը ավելի լայն հասկացություն է, քան համակարգչային հանցավորությունը (computer crime), որն իրենից ներկայացնում է զուտ տեղեկատվության ոլորտի հանցավորություն, իսկ կիբեր հանցավորությունը կապված է ինչպես համակարգիչների օգտագործման, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների և գլոբալ ցանցերի հետ: Միաժամանակ համակարգչային հանցավորությունն այն հանցագործություններն են, որոնք կատարվում են կամ համակարգիչների կամ համակարգչային տեղեկությունների դեմ: Այսպես, ամերիկացի հետազոտողներ Սյուզան Բռեննները և Մարկ Գուդմանը նախապատվությունը տալիս են «Կիբերհանցավորություն» տերմինին, քանի որ այն ընդգրկում է բոլոր ավանդական հանցագործությունները, որոնք կատարվում են համակարգիչների օգնությամբ (գողություն, խարդախություն, շորթում), այնպես էլ այն հանցագործությունները, որի օբյեկտն են համակարգչային համակարգերը, ծրագրերը և տվյալները [3, 139–223]: Հենց այս տերմինն էլ կիրառվել է միջազգային օրենսդրությունում:

«Կիբեռհանցավորությունների մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան

(այսուհետ՝ Կոնվենցիա) պարունակում է խնդրո առարկային վերաբերվող սահմանումներ, տալիս է որոշակի տեսակի կիբերհանցագործությունների բնութագիրը, անդրադառնում է պատասխանատվությանը և պատժամիջոցներ սահմանելուն, միջազգային համագործակցությանը և հանձմանը առնչվող սկզբունքներին:

Կոնվենցիայում խոսվում է համակարգչային հանցագործությունների չորս տեսակի մասին՝ դրանք սահմանելով որպես համակարգչային տվյալների և համակարգերի գաղտնիության, ամբողջականության և մատչելիության դեմ ուղղված հանցագործություններ.

1. Անօրինական մուտք՝ միտումնավոր և անօրեն կերպով ամբողջությամբ կամ մասամբ համակարգչային համակարգ մուտք գործելը (հոդված 2),

2. Անօրինական կերպով հաղորդակցություն գաղտնի որսալը՝ միտումնավոր և անօրեն կերպով տեխնիկական միջոցներով գաղտնի որսալու համակարգչային համակարգ մտնող, համակարգից դուրս եկող և համակարգի մեջ գտնվող համակարգչային տվյալների ոչ հրապարակավ փոխանցումները, ներառյալ համակարգչային համակարգից էլեկտրամագնիսական արտահոսքը, որը փոխանցում է նման համակարգչային տվյալներ (հոդված 3),

3. Միջամտություն տվյալների մեջ՝ միտումնավոր և անօրեն կերպով համակարգչային տվյալները վնասելը, ոչնչացնելը, փչացնելը, փոփոխելը կամ արգելելը (հոդված 4),

4. Համակարգի աղավաղում՝ միտումնավոր և անօրեն կերպով համակարգչային համակարգի աշխատանքը լուրջ խոչընդոտելը՝ համակարգչային տվյալներ մտցնելով, փոխանցելով, վնասելով, ոչնչացնելով, փչացնելով, փոփոխելով կամ արգելելով (հոդված 5):

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թ. փետրվարի 1-ին:

Կիբերհանցավորության դեմ պայքարի հայրենական քրեաիրավական միջոցները

Կոնվենցիայի 2-6-րդ հոդվածները կողմերին պարտավորեցնում են ընդունել այնպիսի օրենսդրական միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրությամբ որպես քրեական հանցագործություն սահմանելու որոշակի արարքներ: Ստանձնած պարտավորությունների համաձայն, Հայաստանի Հանրապետությունը քրեականացրել է համապատասխան արարքները, և դրանք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխով՝

1) համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանցներ թափանցելը (հոդված 359),
2) համակարգչային տվյալը փոփոխելը (հոդված 360),
3) համակարգչային սաբոտաժը (նենգադուլը) (հոդված 361),
4) համակարգչային տվյալներն ապօրինի որսալը կամ դրանց տիրանալը (հոդված 362),

5) հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցների ապօրինի շրջանառությունը (հոդված 363),
6) համակարգչային կեղծիք (հոդված 364),
7) համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցը շահագործելու կանոնները կամ պահանջները խախտելը (հոդված 365):

Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են, և այդպիսիք են հանդիսանում համակարգչային համակարգը և համակարգչային տվյալները պաշտպանող հասարակական հարաբերությունները: Քննարկվող գլխում ներառված հանցագործությունների լրացուցիչ օբյեկտ կարող է հանդիսանալ անձի կամ կազմակերպության իրավունքները, ազատություններին կամ օրինական շահերը, հասարակության կամպետության օրինական շահերը, անձանց անձնական տվյալները, սեփականությունը, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանող հասարակական հարաբերությունները:

Համընկնում են նաև սուբյեկտները և որպես այդպիսին հանդես է գալիս 16 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձը, առանձին դեպքերում հատուկ սուբյեկտ օրինակ հանցանք կատարելը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: Քրեական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել նաև իրավաբանական անձը:

Քննարկվող գլխում տեղ գտած հանցագործությունները միմյանցից տարբերվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով, ինչը մեկնաբանված է ստորև[1]:

1. Համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով և բնութագրվում է որպես համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը՝ առանց թույլտվության մուտք գործելը, որը կատարվել է օրենքի կամ պայմանագրի կամ իրավաչափ այլ հիմքի ուժով նման իրավունք չունեցող անձի կողմից և անզգուշությամբ առաջացրել է համակարգչային տվյալի ոչնչացում, փոփոխություն, վնասում, աղավաղում, ուղեփակում (մեկուսացում), պատճենահանում, խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ էական վնաս:

Հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ակտիվ վարքով, որի էությունը հանցավորի կողմից համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելն է, այսինքն՝ առանց թույլտվության մուտք գործելը: Համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց մուտք գործելը պարտադիր չէ, որ իրականացվի գրավոր կամ լիազորագրով

[1] Ներկայացված են միայն հիմնական հանցակազմերը:

թույլտվություն ստանալու դեպքում: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ եթե համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցն օգտագործում են տարբեր անձինք, օրինակ՝ ընտանիքի անդամներ, նույն աշխատասենյակում աշխատող անձինք, և նրանք չեն իրականացրել իրենց անձնական տեղեկատվությունը պաշտպանելու կամ առանձնացնելու հետ կախված գործողություններ, ապա այն դիտելը, ուսումնասիրելը կամ այլ եղանակով ներթափանցելը չի համարվի ապօրինի կամ առանց թույլտվության, քանի որ նման թույլտվություն ստանալն ինքնին չէր նախատեսվում: Պաշտպանվող համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց մուտք գործելը պետք է լինի ոչ իրավաչափ՝ առանց թույլտվության: Ներթափանցումը պետք է ուղեկցվի պաշտպանիչ համակարգի խախտմամբ: Պահպանվող համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվությունների թափանցելը կարող է իրականացվել ամենատարբեր եղանակներով:

ՀՀ քր. օր.-ի 359-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը ձևակերպված է նյութական հանցակազմով և որպես հետևանք նախատեսված են հետևյալները՝ համակարգչային տվյալի ոչնչացում, համակարգչային տվյալի փոփոխություն, համակարգչային տվյալի վնասում, համակարգչային տվյալի աղավաղում, համակարգչային տվյալի ուղեփակում (մեկուսացում), համակարգչային տվյալի պատճենահանում, խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ էական վնաս:

Թվարկված հետևանքները երկընտրելի են և որևէ մեկի առաջացումը բավարար է հանցագործությունն ավարտված ճանաչելու համար:

Սուբյեկտիվ կողմից տվյալ հանցակազմը բնութագրվում է անզգուշությամբ: Այն դեպքերում, երբ հոդվածում թվարկված հետևանքների նկատմամբ հանցավորը դիտավորություն է դրսևորում, արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխում նախատեսված այլ հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներով:

2. Համակարգչային տվյալը փոփոխելը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածով և բնութագրվում է որպես համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության փոփոխելը, որը վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է գործողություններով, որոնց էությունը համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության փոփոխելն է:

Համակարգչային տվյալը փոփոխելը նույնպես նյութական հանցակազմով

հանցագործություն է: Այն պետք է վնաս պատճառի անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Հետևաբար համակարգչային տվյալի փոփոխելու օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև հանցավոր արարքի և վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի:

3. Համակարգչային սաբոտաժը (նենգադուլը) նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով և բնութագրվում է որպես համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության ոչնչացնելը, վնասելը, աղավաղելը կամ ուղեփակելը (մեկուսացնելը):

Այս հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է համակարգչային սաբոտաժով (նենգադուլով), որն իրականացվում է ակտիվ գործողություններով, որոնց էությունը այն է, որ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության ոչնչացվում, վնասվում, աղավաղվում կամ ուղեփակվում (մեկուսացվում) է:

Համակարգչային սաբոտաժի հանցակազմը ձևական է, և չի պահանջում որոշակի հետևանքների պարտադիր առաջացում: Այն ավարտված է համարվում համակարգչային տվյալը ոչնչացնելու, վնասելու, աղավաղելու կամ ուղեփակելու (մեկուսացնելու) պահից:

Սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

4. Համակարգչային տվյալները որսալը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով և բնութագրվում է որպես համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող ընդհանուր օգտագործման համար չնախատեսված տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության որսալը կամ դրան տիրանալը, որը կատարվել է այդ տվյալն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակով:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ակտիվ գործողություններով, որոնց էությունը համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող ընդհանուր օգտագործման համար չնախատեսված տվյալը առանց

օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության որսալը կամ դրան տիրանալն է:

Սուբյեկտիվ կողմից արարքը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Պարտադիր հատկանիշ է նպատակը՝ նշված գործողությունները կատարվում են տվյալն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակով:

5. Հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցների ապօրինի շրջանառությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով և բնութագրվում է որպես համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելու կամ համակարգչային տվյալը ոչնչացնելու, վնասելու, աղավաղելու կամ ուղեփակելու (մեկուսացնելու) կամ դրանք ապօրինի որսալու կամ դրան ապօրինի տիրանալու համար նախատեսված հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ կամ հատուկ հարուցիչով ծրագիր արտադրելը, պատրաստելը, մշակելը, ներմուծելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ արտահանելը՝ դա օգտագործելու կամ իրացնելու նպատակով, կամ այդպիսի ծրագրային կամ գործիքային միջոցը կամ ծրագիրն իրացնելը կամ օգտագործելը:

Օբյեկտիվ կողմը նկարագրված է երկընտրելի գործողություններով և դրանցից որևէ մեկի կատարումը բավարար է հանցագործությունն ավարտված ճանաչելու համար:

Սուբյեկտիվ կողմից արարքը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Պարտադիր հատկանիշ է հանդիսանում նաև համակարգչային նպատակը:

6. Համակարգչային կեղծիքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածով և բնութագրվում է որպես իրավաբանական հետևանքներ առաջացնելու նպատակով համակարգչային տվյալ ապօրինի մտցնելը, փոփոխելը, ջնջելը կամ այդ տվյալի հասանելիությունն ուղեփակելը (մեկուսացնելը), որը հանգեցրել է ոչ հավաստի տվյալի ստեղծման:

Այս հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է համակարգչային տվյալ ապօրինի մտցնելով, փոփոխելով, ջնջելով կամ այդ տվյալի հասանելիությունն ուղեփակելով (մեկուսացնելով): Նշված գործողությունները պետք է հանգեցնեն ոչ հավաստի տվյալի ստեղծման: Քննարկվող հանցագործության իմաստով թվարկված բոլոր գործողությունները պետք է լինեն ապօրինի:

Օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև հանցավոր արարքի և վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

Համակարգչային կեղծիքի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ և հատուկ՝ իրավաբանական հետևանքներ առաջացնելու նպատակով:

6. Համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային

ցանցը շահագործելու կանոնները կամ պահանջները խախտելը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածով և բնութագրվում է որպես համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցը շահագործելու կանոն կամ պահանջ խախտելն այն անձի կողմից, որն այդ համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց մուտք գործելու թույլտվություն ունի, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող, օրենքով պահպանվող տվյալի փոփոխություն, պատճենահանում, ոչնչացում, վնասում կամ ուղեփակում (մեկուսացում) կամ համակարգչային սարքավորման աշխատանքի խաթարում:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ակտիվ գործողություններով, որոնց էությունը համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցը շահագործելու կանոն կամ պահանջ խախտելն է:

Սա նյութական հանցակազմով հանցագործություն է: Օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև հանցավոր արարքի և վրա հասած հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է անզգուշությամբ:

Եզրակացություն

Կիբերհանցավորության դեմ պայքարը տարվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակում: Աշխարհի գրեթե բոլոր պետությունները ներգրավված են կիբերհանցավորության դեմ պայքարում: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Տեղական մակարդակում կիբերհանցավորության դեմ պայքարի զինանոցի գլխավոր իրավական գործիքը 2022 թվականից գործող ՀՀ քրեական նոր օրենսգիրքն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յուջին Սպաֆորդի կողմից անցկացրած Մորիսի որդի անալիզի զեկույցը http://www.textfiles.com/100/tr823.txt
2. McLuhan, Marshall, Understanding Media (Gingko press), 2003.
3. Marc D Goodman, Susan W. Brenner, The Emerging Consensus on Criminal Conduct in Cyberspace, International Journal of Law and Information Technology, Volume 10, Issue 2, Summer, 2002, pp. 139-223.
4. Маршалл М., Галактика Гутенберга. Становление человека печатаюшего: Академический проект, 2005, 496 с.

Уголовные аспекты борьбы с компьютерными преступлениями

Асликян Ани
Академия Образовательного Комплекса Полиции РА,
Юриспруденция, 4-й курс
Научный руководитель:
кандидат юридических наук, доцент Г. Исраелян

Резюме

Ключевые слова: *киберпреступность, телекоммуникационные сети, информационная безопасность, новый уголовный кодекс РА*

Киберпреступность является актуальной проблемой, которая затрагивает различные слои и структуры, развивается с каждым годом и становится более сложной в плане разрешения и уменьшения ее прогрессии, наказуемости киберпреступников. Она наносит огромные ущербы экономике, финансовым активам компаний, физическим лицам. Высокая социальная опасность киберпреступности объясняется ее транснациональным и организованным характером, поэтому ни одно государство сегодня не способно активно противодействовать этой угрозе самостоятельно, в связи с чем неотложной является потребность активизации международного сотрудничества.

Criminal Aspects of the Fight Against Computer Crime

Aslikyan Ani
Academy of Police Educational Complex of RA,
Jurisprudence, 4th year
Academic Supervisor: G. Israelyan
PhD in Law, Associate Professor

Summary

Key words*: cybercrime, telecommunication networks, information security, new criminal code of RA*

Cybercrime is an urgent problem that affects various layers and structures, develops every year and becomes more difficult in terms of resolving and reducing its progression, punishability of cybercriminals. It causes enormous damage to the economy, financial assets of companies, and individuals. The high social danger of cybercrime is explained by its transnational and organized nature, therefore, no state today is able to actively counteract this threat on its own, so the need to intensify international cooperation is urgent.

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակի մասին

Բաղալյան Լարիսա
ԳՊՀ, Իրավագիտություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ իր. գ. դ., դոցենտ Ռ. Հակոբյան

Հանգուցային բառեր. *Ազգային ժողով, օրենսդիր իշխանություն, պատգամավոր, սահմանադրական կարգավիճակ, մանդատ, կանոնակարգ, մշտական հանձնաժողով*

Հոդվածը նվիրված է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակին: Պատմական ու համեմատաիրավական վերլուծության մեթոդներով ներկայացվում է պատգամավորի սահմանադրական ինստիտուտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, ուսումնասիրվում են պատգամավորի թեկնածուին ներկայացվող պահանջները: Հոդվածում առաջարկվում է բարձրացնել պատգամավորի կրթական ցենզը՝ պահանջելով բարձրագույն կրթության պարտադիր առկայություն, ինչպես նաև ավելացնել տարիքային ցենզը հինգ տարով, որպեսզի թեկնածուն լինի առնվազն երեսուն տարեկան և ունենա աշխատանքային փորձ, արդյունքում՝ որոշակի կենսափորձ և աշխատանքային ստաժ ունեցող անձինք կընտրվեն պատգամավոր և օրենսդիր մարմնում լիարժեք կիրականացնեն իրենց գործառույթները:

ՀՀ օրենսդիր, ներկայացուցչական մարմինը Ազգային ժողովն է, որի ընդունած օրենքները պարտադիր են կատարման համար հանրապետության ողջ տարածքում: Ազգային ժողովի լիազորությունները և պատգամավորի կարգավիճակը սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ: Միաժամանակ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի երկրորդ գլուխը և «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքն ամրագրում են Ազգային ժողովի պատգամավորի իրավական կարգավիճակը:

Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակը պայմանավորված է խորհրդարանում նրա՝ մշտական հիմունքներով աշխատելու հանգամանքով, որի ուժով պատգամավորը հանդիսանում է հանրապետության ողջ ժողովրդի ներկայացուցիչը օրենսդիր մարմնում: Սահմանադրության համաձայն՝ նա օժտված է ազատ մանդատով, որը համարվում է անհամատեղելի պետական իշխանության այլ մարմիններում պաշտոն զբաղեցնելու հետ:

Ազգային ժողովի պատգամավորները Հայաստանի Հանրապետության ողջ բնակչության ներկայացուցիչն են և իրականացնում են օրենսդիր գործառույթ, միաժամանակ վերահսկողություն են իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ:

Օրինաստեղծ գործունեությունից զատ, Ազգային ժողովն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հասարակական և պետական կյանքին վերաբե-

րող առավել կարևոր խնդիրների քննարկումներ, կազմակերպում հանրային լսումներ, զբաղվում պառլամենտական դիվանագիտությամբ: Պատգամավորները, մասնակցելով հանրապետության օրենսդիր մարմնի աշխատանքներին, լուծում են համապետական նշանակության խնդիրները:

Ազգային ժողովի պատգամավորն ազատ է իր պառլամենտական գործունեության ուղղվածության, օրենսդիր մարմնում բնակչության կամքի արտահայտման ձևերի ու մեթոդների ընտրության հարցում: Սահմանադրությունը չի բովանդակում հրամայական մանդատի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ընտրողների պատվիրանները պատգամավորին, նրա հետկանչը, ինչպես նաև պատգամավորի հաշվետվությունը նրան առաջադրած քաղաքական կուսակցությունների և դաշինքների, ինչպես նաև ընտրողների առջև: Սահմանադրությունն Ազգային ժողովի պատգամավորին պարտավորեցնում է խորհրդարանական գործունեության ընթացքում առաջնորդվել իր խղճով և համոզմունքներով (հոդված 94):

Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրական կարգավիճակի պարտադիր տարր է այն, որ նա չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից [1]: Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե թեկնածուի գրանցման համար մշտապես բնակվելու մասին տեղեկանքը ստանալու նպատակով լիազոր մարմնին դիմում տալու օրվան նախորդող 1461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով գործուղվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:

Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների կողմից տրված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ):

Ազգային ժողովի պատգամավորի մանդատի՝ պետական ապարատում պաշտոն զբաղեցնելու և այլ վճարովի գործունեությամբ զբաղվելու սահմանադրական արգելքը նպատակ ունի կանխել պատգամավորի ծանրաբեռնվածությունը և ապահովել մշտական հիմունքներով նրա արդյունավետ խորհրդարանական գործունեությունը: Պաշտոնների համատեղման արգելումը բխում է իշխանությունների բաժանման սկզբունքից, որի էությունը օրենսդիր և գործադիր իշխանությունների՝ միևնույն մարմնի կամ անձի ձեռքում կենտրոնացման արգելումն է: Սահմանադրության 94-րդ հոդվածը Ազգային ժողովի պատգամավորին պարտավորեցնում է իր գործունեության ընթացքում ազատորեն առաջնորդվել «իր խղճով և համոզմունքներով»: Սակայն, կարո՞ղ է արդյոք Ազգային ժողովի պատգամավորը լինել բացարձակ ազատ և իր գործունեությունն իրականացնել միայն իր հայեցողությամբ, առանց կողմնակի ազդեցության: Իհարկե՝, ոչ: Նման եզրահանգման համար կան մի շարք պատճառներ:

Նախ՝ համամասնական ընտրակարգի պայմաններում կուսակցական ցուցակներում ընդգրկված պատգամավորների ընտրությունն ապահովում են համապատասխան կուսակցությունները և ընտրական միավորումները (կուսակցությունների դաշինքները): Հետևաբար, Ազգային ժողովում ձևավորված նույնանուն խմբակցություններում ընդգրկված պատգամավորներն իրենց խորհրդարանական գործունեության ընթացքում պարտավոր են կատարել տվյալ կուսակցության ցուցումներն ու հանձնարարությունները: Եթե պատգամավորն անհամաձայնություն դրսևորի իր կուսակցության քաղաքական ծրագրերի հետ, կարող է դուրս գալ խմբակցությունից: Այս առումով կա իրավունքի բաց, համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորը խորհրդարանում հանդես է գալիս անկախ պատգամավորի կարգավիճակով: Արդյո՞ք սա ճիշտ կարգավորում է: Սահմանադրությունը չի տալիս այս հարցի պատասխանը:

Երկրորդ՝ գործող Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից, որոնք ընտրվում են համամասնական ընտրակարգով [1, 35]: Մինչդեռ 2017 թ.-ի ընտրություններին ՀՀ ընտրական օրենսգիրքը շարունակեց պահպանել Ազգային ժողովի ընտրության ընթացքում մեծամասնական ընտրական համակարգի բնորոշ հատկանիշներ՝ թույլատրելով ընտրություններին մասնակցող կուսակցություններին պատգամավորական թեկնածուների համապետական ցուցակի հետ միասին առաջադրելու տարածքային ընտրական ցուցակներ՝ այսպես կոչված՝ «վարկանիշային ցուցակներ»՝ յուրաքանչյուր ընտրատարածքում քվեարկություն կազմակերպելու համար: Խնդիրն այն էր, որ կուսակցության տարածքային ընտրական ցուցակում թույլատրվում էր ընդգրկել ոչ պակաս, քան հինգ թեկնածու, իսկ այդ ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվը սահմանում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ ընտրությունները նշանակելուց հետո 10 օրվա ընթացքում: Հետևաբար, տարածքային ընտրական ցուցակներով ընտրված պատգամա-

վորները, որոնք ընտրվում էին տվյալ ընտրատարածքի բնակչության կողմից, ամենից առաջ հանդիսանում էին տվյալ ընտրատարածքի բնակչության ներկայացուցիչներն Ազգային ժողովում: Սակայն հետո այս խառը մոդելը փոխվեց, և ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանվեց համամասնական ընտրակարգը:

Երրորդ. այն, որ Սահմանադրությունն Ազգային ժողովի պատգամավորի համար չի ճանաչում հրամայական մանդատը, որի պատճառով բացակայում է նաև ընտրողների կողմից նրան հետ կանչելու իրավունքը, դեռևս նրան չի ազատում ընտրողների պահանջներին ականջալուր լինելու, պոզիտիվ սահմանադրական պարտականությունից, քանի որ պատգամավորի մանդատի ճակատագիրը, վերջին հաշվով, վճռվում է նրա ընտրողի կամարտահայտությամբ [2]:

Չորրորդ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի բովանդակում այնպիսի նորմեր, որոնք պարտավորեցնեն Ազգային ժողովի պատգամավորին՝ կապ պահպանելու իր ընտրողների հետ, լսելու նրանց խնդիրների և առաջարկությունների մասին, ինչը նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում (2-րդ հոդվածի 11-րդ մաս և 9-րդ հոդված): Հետևաբար, նրանցից քչերն են կանոնավոր կերպով հանդիպումներ ունենում իրենց ընտրողների հետ, կատարում ընդունելություն, տեղեկություններ հաղորդում իրենց գործունեության մասին և նրանց առաջարկությունները ներկայացնում Ազգային ժողովին: Ավելին, ելնելով այն հանգամանքից, որ Ազգային ժողովի պատգամավորը, այնուամենայնիվ, պարբերաբար հանդիպումներ է ունենում ընտրողների հետ, ընդունելություն է կազմակերպում ավելի շատ քվեներ ստացած ընտրատարածքում, ուսումնասիրում և սահմանված կարգով ընթացք է տալիս ընտրողներից ստացած առաջարկություններն ու դիմումները, գործընթացն արդյունավետ իրականացնելու համար վերը նշված օրենքը (9-րդ հոդվ.) [3] պարտավորեցնում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ պատգամավորական խմբակցության կամ անհատ պատգամավորի պահանջով, ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել դիմողին՝ քաղաքացիների ընդունելության և նրանց հետ հանդիպելու համար:

Որոշ առանձնահատկություն ունի պատգամավորի հրաժարական տալու կարգը: Կանոնակարգի 157-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորն իր հրաժարականի մասին դիմումը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, որն էլ առաջիկա նիստում Ազգային ժողովին տեղեկացնում է այդ մասին: Եթե նիստում հրաժարականը հրապարակվելը մեկ շաբաթվա ընթացքում իր գրավոր դիմումով պատգամավորը հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նիստում Ազգային ժողովի նախագահը: Արձանագրության հրապարակման պահից հրաժարականը համարվում է ընդունված [3]:

Գտնում ենք, որ նպատակահարմար է սահմանել նորմ, ըստ որի՝ Ազգային ժողովը պետք է մանրամասն քննության առնի պատգամավորի հրաժարականի յուրաքանչյուր դեպք և պարզի հրաժարականի իրական հիմքերն ու դրդապատճառները: Ամենևին, բացառված չէ, որ պատգամավորի հրաժարականը կապված լինի պատգամավորական լիազորությունների կատարման կապակցությամբ նրա նկատմամբ կիրառված արտաքին ճնշումների և հետապնդումների հետ: Նման դեպքերում Ազգային ժողովը պետք է ոչ միայն չընդունի պատգամավորի հրաժարականը, այլև ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ նրա գործունեության համար նորմալ պայմաններ ապահովելու և մեղավորին պատասխանատվության ենթարկելու համար:

Կանոնակարգն ավելի մանրամասն կարգավորում է պատգամավորական լիազորությունների դադարման գործընթացը՝ մեկ օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից պատգամավորի անհարգելի բացակայության դեպքում (158-րդ հոդվ.) [3]: Պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Աժ խորհուրդը դիմում է Սահմանադրական դատարան, ինչպես նաև Սահմանադրական դատարան կարող է դիմել պատգամավորների մեկ հինգերորդը: Սակայն, պետք է նշել, որ Կանոնակարգի այդ նորմում սահմանված կառուցակարգերն արդյունավետ չեն գործում: Խորհրդարանում կան ոչ քիչ թվով պատգամավորներ, որոնք հազվադեպ են ներկայանում Ազգային ժողովի նիստերին: Սակայն Հանրապետության օրենսդիր մարմնի գործունեության շուրջ երեսուն տարիների ընթացքում դեռևս որևէ պատգամավորի լիազորություն չի դադարեցվել որևէ օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու համար: Աժ 2002 թ. կանոնակարգով Ազգային ժողովի կամ մշտական հանձնաժողովների նիստերից անհարգելի բացակայության համար պատգամավորին աշխատավարձը չէին վճարում, որը նույնպես արդյունավետ միջոց չէր երկրի օրենսդիր մարմնում կարգապահության ապահովման համար, քանզի բացակայող պատգամավորները, որպես կանոն, նյութապես ապահովված են: Գործող Կանոնակարգը նույնպես պահպանել է այդ «պատժամիջոցի» կիրառումը (158-րդ հոդվ.) [1]: Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինը գործում է մշտական հիմունքներով, այսինքն՝ պատգամավորները քաղաքական պաշտոնյաներ են և պարտավոր են սահմանված ժամկետում ներկայանալ աշխատանքի և աշխատել օրենքով նախատեսված ժամաքանակի սահմաններում, թեև նրանց աշխատանքը նորմավորված չէ: Պատգամավորի կարգավիճակն ընդգրկում է նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, որի իրացմանն է ուղղված նրա գործունեությունը: Հանդես գալով որպես ժողովրդի ներկայացուցիչ՝ պատգամավորը պարտավոր է մասնակցել Ազգային ժողովի նիստերին և զբաղվել օրինաստեղծ գործունեությամբ: Այդ իմաստով նրա լիազորություններն ածանցված են Ազգային ժողովի լիազորություններից և պետք է նպատակաուղղված լինեն օրենքների առավել որակյալ նա-

խագծերի նախապատրաստմանը, քննարկմանն ու ընդունմանը: Պատգամավորն իրավունք ունի մասնակցելու հանձնաժողովում իր օրենսդրական նախաձեռնության քննարկմանը: Նա անձամբ զեկուցում է և՛ գլխադասային հանձնաժողովում, և՛ Ազգային ժողովի նիստերում: Պատգամավորի հաջորդ կարևոր լիազորությունը Կառավարությանը գրավոր և բանավոր հարցերով դիմելու իրավունքն է [1, 41]: Հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստում վարչապետը և կառավարության անդամները ներկայանում են Ազգային ժողով և պատասխանում պատգամավորների բանավոր հարցերին:

Դրա հետ մեկտեղ, Ազգային ժողովի նիստում կառավարությանը բանավոր ձևով դիմելու կարգը չի սահմանափակում պատգամավորի իրավունքը ցանկացած ժամանակ նաև ուղղակի գրավոր դիմել կառավարությանը և օրենքով սահմանված կարգով ստանալ իր հարցի պատասխանը:

Սակայն, կարծում ենք, որ կառավարությանը պատգամավորների կողմից հարցեր տալը (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր)՝ ինչպես Աժ նիստերում, այնպես էլ նրանից դուրս, Ազգային ժողովի կողմից կառավարության նկատմամբ իրականացվող վերահսկողության ոչ արդյունավետ միջոց է: Այն ունի զուտ բարոյական բնույթ, որովհետև Ազգային ժողովն այդ կապակցությամբ չի ընդունում իրավական հետևանքներ ունեցող որոշումներ, որոնց հիման վրա հնարավոր լիներ պատասխանատվության ենթարկել իր գործունեության մեջ թերացած կառավարության անդամին:

Օրենսդրության ոլորտում առկա այդ բացը որոշ չափով լրացնելու ակնկալիքով 2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում Երկրի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածը լրացվեց հարցապնդման ինստիտուտի վերաբերյալ նոր դրույթով: Ըստ այդ նորմի՝ խմբակցությունները և պատգամավորական խմբերը իրավունք ստացան հարցապնդումներով դիմելու կառավարությանը: Ընդ որում, «Հարցապնդումները ներկայացվում են գրավոր և քննարկումից առնվազն տասն օր առաջ» [1, 171]:

Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում էր Ազգային ժողովի 2002 թ. կանոնակարգ օրենքով: Ըստ Կանոնակարգի 105-րդ հոդվածի՝ «Հարցապնդումը Կառավարության իրավասությանը վերապահված որոշակի հարցի վերաբերյալ խմբակցության կամ պատգամավորական խմբի կողմից կառավարությանն ուղղված գրավոր հարցումն է, որը կարող է քննարկվել Ազգային ժողովում, և որի վերաբերյալ Ազգային ժողովը կարող է կայացնել որոշում» [1, 178]:

Հարցապնդումը հանձնվում էր Աժ աշխատակազմ, որը նույն օրն այն ուղարկում էր Կառավարություն: Հարցապնդմանը կից կարող էին ներկայացնել դրան առնչվող տեղեկանքներ, եզրակացություններ, տեղեկատվական ու վերլուծական այլ նյութեր:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պատգամավորին

իրավունք է վերապահում նաև պահանջելու հրավիրել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ (100-րդ հոդվ. 1-ին մաս) [1, 176-178], անվստահություն հայտնել վարչապետին (115-րդ հոդվ. 1-ին մաս) [1, 181], ընդգրկվել Ազգային ժողովի կողմից կազմված հանձնաժողովներում (106-րդ, 107-րդ, 108-րդ հոդվածներ [1, 178-179]), հանդես գալ ելույթներով, հարցեր տալ ելույթ ունեցողներին, մասնակցել կառավարության դռնբաց նիստերին և իրականացնել իր կարգավիճակից բխող այլ լիազորություններ: Պատգամավորներն Ազգային ժողովում և համապատասխան հանձնաժողովում, որի անդամն են իրենք, քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ ունեն վճռական ձայնի իրավունք:

Ազգային ժողովի մարմինների համակարգում առանձնակի կարևորություն ունեն մշտական հանձնաժողովները: Դրանք կազմված են պատգամավորներից և կոչված են օգնելու Ազգային ժողովի՝ իր լիազորությունների իրականացման գործում:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնական ներկայացուցչության սկզբունքի հիման վրա: Այսինքն՝ հանձնաժողովի կազմը պետք է արտահայտի Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի թվական հարաբերակցությանը (մեծ թիվ ունեցողներից շատ, քիչ ունեցողներից պակաս սկզբունքով): Սահմանադրության 106-րդ հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև նույնպես բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Ուսումնասիրելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակը՝ կարծում ենք, որ հասարակության անդամների իրավագիտակցության բարձր մակարդակ ունենալը կնպաստի ձևավորելու գիտակից և պահանջատեր օրենսդիր մարմին: Միաժամանակ, կարծում ենք, որ ՀՀ-ում կայանալիք սահմանադրական փոփոխությունների արդյունքում կխստացվեն պատգամավորի թեկնածուին առաջադրվող պահանջները: Այսպես՝ առաջարկում ենք նախատեսել, որ.

1. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուն պետք է ոչ միայն պարզապես տիրապետի հայերենին, այլև ունենա բարձրագույն կրթություն:

Մեր խորին համոզմամբ, Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու, ինչպես նաև ՀՀ նախագահի, վարչապետի, նախարարների թեկնածուներ պետք է դառնան միայն բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Անընդունելի ենք համարում բարձրագույն կրթություն պահանջել քաղաքացիական ծառայողից, բայց ոչ բարձրաստիճան քաղաքական պաշտոնյաների թեկնածուներից,

2. պատգամավորի տարիքային ցենզը՝ 25 տարեկանը պետք է վերանայվի, և պատգամավորի թեկնածու պետք է դառնա առնվազն 30 տարեկան անձը, ով ունի որոշակի կենսափորձ, աշխատանքային ստաժ:

Եթե անձը 18 տարեկանում ավարտել է դպրոցը, ընդունվել բուհ և ստացել է բարձրագույն կրթություն երկաստիճան կրթական համակարգում՝ սովորելով բակալավրիատում և մագիստրատուրայում 6 տարի, ապա նա արդեն իսկ դառնում է 24 տարեկան: Իսկ եթե խոսքը արական սեռի անձի մասին է, ով 2 տարի ծառայել է զինված ուժերում, ապա նա արդեն 26 տարեկան է: Ստացվում է, որ ընդհանրապես աշխատանքային փորձ չունեցող անձը կարող է հայտնվել համամասնական ցուցակում և ընտրվել պատգամավոր: Ուստի, առաջարկում ենք 5 տարով ավելացնել նվազագույն թույլատրելի տարիքային ցենզը՝ հասցնելով 30-ի, որը համարում ենք ընդունելի: Այս տարիքը լավագույն մեկնարկային շեմն է, որին հասած անձը բարոյական և իրավական առումներով, իր քաղաքական և ընդհանուր աշխարհայացքային հասունության աստիճանով իրավունք ունի դառնալու օրենսդիր մարմնի անդամ:

Այսպիսով, առաջարկում ենք, որպես պարտադիր պայմաններ, պատգամավորի թեկնածուից պահանջել բարձրագույն կրթության և աշխատանքային ստաժի առկայություն, 30 տարեկանը լրացած լինելու փաստ: Միայն այս կերպ կարելի է արգելափակել համապատասխան գիտելիքներ, կարողություններ և փորձ չունեցող անձանց մուտքը հայրենի խորհրդարան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06. 12. 2015, www.arlis.am
2. Հակոբյան Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը ՀՀ-ում, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2007:
3. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք // www.arlis.am:

Конституционно-правовой статус депутата национального собрания РА

Бадалян Лариса
ГУГ, Юриспруденция, 3-й курс
Научный руководитель:
кандидат юридических наук, доцент Р. Акопян

Резюме

Ключевые слова: *Национальное Собрание, законодательная власть, депутат, конституционный статус, мандат, регламент, постоянная комиссия*

Статья посвящена конституционно-правовому статусу депутата Национального Собрания РА. Методами исторического и сравнительно-правового анализа, автор представляет развитие конституционного института депутата в Республике Армения, изучает требования, предъявляемые к кандидату в депутаты. В статье предлагается повысить образовательный ценз депутата, требуя высшего образования, повышения возрастного ценза на пять лет, чтобы кандидату было не менее тридцати лет и он имел опыт работы, а также считается необходимым в обязательном порядке проверить психическое здоровье кандидата в депутаты, чтобы он смог эффективно осуществить функции члена законодательного органа.

Constitutional and Legal Status of a Deputy of the National Assembly of the Republic of Armenia

Badalyan Larisa
GSU, Jurisprudence, 3rd year
Academic Supervisor: R. Hakobyan
PhD in Law, Associate Professor

Summary

Key words: *National Assembly, legislative power, deputy, constitutional status, mandate, regulations, standing committee*

The article is devoted to the constitutional and legal status of a deputy of the National Assembly of the Republic of Armenia. Methods of historical and comparative legal analysis represent the development of the constitutional institution of a deputy in the Republic of Armenia, the requirements for a candidate for deputy are being studied. The article proposes to increase the educational qualification of a deputy, demanding to increase the qualification of having an education for 5 (five) years so that the candidate is at least thirty years old and has work experience. It is also considered necessary to check the mental health of a candidate for deputy, his functions, mechanisms for their implementation.

Վիկտիմ վարքագիծը՝ որպես բռնությամբ ուղեկցվող հանցագործությունների աճմանը նպաստող գործոն

Մանասարյան Լիլիթ
ԳՊՀ, Իրավագիտություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ իր. գ. դ., դոցենտ Ռ. Հակոբյան

Հանգուցային բառեր. *վիկտիմ, վիկտիմոլոգիա, զոհ, բռնություն, ընտանեկան բռնություն, թրաֆիքինգ, սադրող վարքագիծ, թեթևամտություն, հանցագործություն, հանցավորություն*

Ժողովրդական ասացվածքների մեջ դարերի փորձ և ճշմարտություն կա, համաձայն որի՝ «Պառկած շանը քար չեն գցի», «Տանդ դուռը փակ պահի՛ր, հարևանիդ էլ գող մի՛ ասա», «Մատդ մեղվի փեթակը մի՛ տար»: Սրանք խոսուն նկարագրություններ են զոհի կողմից հանցագործության դրդելու՝ երբեմն գիտակցված, իսկ ավելի հաճախ՝ իրավիճակը ճիշտ ու ժամանակին չկողմնորոշվելու պահվածքի մասին: Նման դեպքերն ուսումնասիրվում են վիկտիմոլիգիայի կողմից: Վիկտիմոլոգիան գիտություն է զոհի մասին: Այն կանխարգելման նպատակով ուսումնասիրում է զոհի անձը, հոգեբանական ասպեկտները և վարքային առանձնահատկությունները: Վիկտիմությունն այնպիսի վարքագծի տեսակ է, որի դեպքում անձը ցուցաբերում է անկարողություն, խուսափելու այն վտանգից, որից խուսափելն օբյեկտիվորեն հնարավոր է: Ինչպես նաև վիկտիմությունը մարդու ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական այնպիսի հատկանիշներն են, որոնց արդյունքում մարդը կարող է հանցագործության զոհ դառնալ: Անհատական վիկտիմություն ասելով հասկանում ենք անձի ընդունակությունը՝ ձևավորելու այնպիսի նպաստավոր պայմաններ կամ ակտիվորեն նպաստելու այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հանգեցնում են հանցագործության: Հարկ ենք համարում նշել, որ մեզնից յուրաքանչյուրը կարող է նախապես ծրագրված հանցագործության զոհի կարգավիճակում հայտնվել, սակայն կան իրավիճակներ, երբ զոհի գործողությունները շարժառիթ են հանդիսանում և որոշիչ դեր ունենում հանցագործությունների կատարման հարցում: Օրինակ շքեղ զարդերով կամ գայթակղիչ, բաց հագուստով, երեկոյան ժամերին փողոցում շրջելը կարող է հանցանք կատարելուն հակված անձի համար խթան հանդիսանալ:

Մարդու վարքագիծը բնությունից օժտված կարող է լինել վիկտիմ, այսինքն՝ ռիսկային, անզգույշ, թեթևամիտ, չմտածված, սադրիչ կամ իր իսկ համար շատ վտանգավոր հատկանիշներով [1, 145-152]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր հանցագործությունների զոհերը սովորաբար տարբեր բնութագրական հատկանիշներ են ունենում: Օրինակ՝ սպանության զոհին բնութագրական է անզգուշությունը, ուժեղ հակումը ռիսկի նկատմամբ, կոնֆլիկտայնությունը, հակվածությունն ագրեսիայի նկատմամբ, եսակենտրոնությունը, սպիրտային խմիչքների չարաշահումը:

Խաբեբայությունների (խարդախություն) զոհերը չափազանց դյուրահավատ

են, անձեռնհաս, մի շարք դեպքերում՝ ազահ, կամ էլ ունենում են նյութական դժվարություններ:

Մարդիկ, ովքեր գիտակցորեն կամ անգիտակցորեն ընտրում են զոհի սոցիալական դերը, անօգնականության դիրքորոշում ունեն: Նրանց ինքնագնահատականը ցածր է, վախեցած են, ունեն զոհային կարծրատիպերի յուրացման բարձր պատրաստակամություն [2, 64]: Նրանք անընդհատ ներգրավվում են ամենատարբեր քրեածին իրավիճակներում և, կարեկցանք, աջակցություն ստանալու ենթագիտակցական նպատակ ունեն, ինչը բավարարում են՝ զոհ դառնալով:

Առհասարակ գերակայում է այն մոտեցումը, որ հանցավորության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը կանխարգելումն է: Հանցագործությունների թվի նվազեցումը հնարավոր է նաև վիկտիմածին պատճառների և վիկտիմային նախատրամադրվածության վերացման ճանապարհով: Գրեթե միշտ հանցագործության կենտրոնական կերպարը հանցանք կատարած անձն է, այսինքն՝ հանցանքը անմիջականորեն կապված է եղել հանցանք կատարած անձի հետ: Սակայն հետագայում տեսաբանների ուշադրությունը բևեռացվել է նաև հանցագործության մեջ զոհի դերին: Որոշ հանցագործություններ կարող են և տեղի չունենալ, եթե պոտենցիալ զոհը կոնկրետ իրավիճակում անհրաժեշտ շրջահայացություն և ճիշտ վարքագիծ դրսևորի հնարավոր ոտնձգությունից խուսափելու համար: Հարկ է նշել, որ զոհի պահվածքը և հոգեբանական այլ առանձնահատկությունները ոչ մի դեպքում արդարացում չեն հանցանք կատարած անձի համար և, միևնույն է, անձը պատասխանատվություն է կրում իր կատարած հանցանքի համար:

Որպես վիկտիմ վարքագծի հետևանք կարող են լինել բռնությունները, թրաֆիքինգը, ոտնձգությունները մարդու իրավունքների և ազատությունների դեմ:

Հատկանշական է, որ ժամանակակից աշխարհում գոյություն չունի «հանցագործության զոհ» հասկացության ընդունելի սահմանում, ըստ այդմ մենք կփորձենք տալ «հանցագործության զոհ» հասկացության սահմանումը. հանցագործության զոհն այն անձն է, ով օբյեկտիվ հանգամանքների բերումով կամ հանցագործի սուբյեկտիվ ցանկությամբ՝ հակահիրավական արարքի արդյունքում կորցնում է իր համար նշանակություն ունեցող արժեքները և կրում է ֆիզիկական, բարոյական կամ նյութական վնաս:

Վերջին շրջանում առավել քննարկվող թեմաներից է ընտանեկան բռնությունը, որտեղ հիմնականում զոհի դերը պատկանում է կնոջը: Հաճախ կինը, չհասկանալով իր նկատմամբ առաջացած դաժանության ծագումը, սկսում է մեղադրել ինքն իրեն՝ իր մեջ փնտրելով բռնության պատճառները: Ընտանեկան բռնության պայմաններում կնոջ մոտ կա նաև ամուսնու կողմից բռնության կիրառման գիտակցական ընդունում, որ տղամարդը, իր բնույթով և սոցիալական դերով, հակված է վիրավորանքի և իր զուգընկերոջը վախի մեջ պահելու, և, հետևաբար, պետք է հանգիստ և «փիլիսոփայորեն» նայել բռնությանը: Կինզոհերը չունեն հստակ պատկերացումներ այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվեն ուրիշներին, նրանք չգիտեն, թե որտեղ են ավարտվում իրենց հոգե-

բանական և սկսվում զուգընկերոջ անձնական սահմանները, նրանք ուշադրություն չեն դարձնում իրենց զգացմունքներին և կարիքներին: Շատերի մոտ կա այնպիսի թյուր կարծիք, որ հանցագործությունը միայն կողոպուտն է կամ սպանությունը, իսկ զոհն այն մարդն է, ումից գողանում են, կամ ում սպանել են: Սակայն, ինչպես տեսնում ենք, հանցագործության զոհ դառնում է նաև այն կինը, ով նույնիսկ չի գիտակցում, որ զոհ է դարձել իր «ընտանիքում»: Բռնությունը կարող է պատճառ դառնալ ողբերգության: Օրինակ՝ ընտանիքում ամուսնու պարբերական հակահիրավական կամ հակաբարոյական վարքագծի արդյունքում, որն ուղեկցվում է վիճաբանություններով, ծեծկռտուքով, վիրավորանքներով, հնարավոր է հանգեցնել ծանր մարմնական վնասվածքներ պատճառելուն, ընդհուպ մինչև սպանության:

Ընտանիքում բռնության առկայությունն է հիմնականում կանխատեսում, թե ապագայում այդ երեխան կշարունակի բռնության ենթարկվել կամ ինքը բռնաբար կդառնա: Երեխաները, ովքեր ենթարկվում են ընտանեկան բռնության, շուտ են սովորում՝ ինչպես բռնության միջոցով անձնական հարաբերություններում իշխանություն ձեռք բերել: Այսպիսով, կարելի է հասկանալ, թե ինչպիսի սարսափելի երևույթ է բռնությունը, որը եթե անգամ չվերաճի հանցագործության, ապա միանշանակ որոշիչ կլինի երեխայի թե՛ ներկայի, թե՛ ապագայի վրա:

Բռնության դրսևորում է նաև թրաֆիքինգը: Թրաֆիքինգը ժամանակակից ստրկության տեսակ է, մարդու սեռական կամ աշխատանքային շահագործում, որի համար կիրառվում են խաբեությունը, սպառնալիքը և բազմաթիվ այլ միջոցներ: Մարդկանց շահագործման խնդիրը դարձել է մտահոգության առարկա ողջ քաղաքակիրթ հասարակության համար: Մարդկանց թրաֆիքինգը բաղկացած է երեք հիմնական բաղադրատարրերից՝ գործողություն, միջոց, նպատակ:

Գործողություններ են, օրինակ, մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, թաքցնելը:

Միջոցներ են՝ ուժի սպառնալիքը, բռնությունը, վիճակի խոցելիությունից օգտվելը և այլն: Նպատակներն են՝ շահագործումը, որը նվազագույնը ներառում է այլ անձանց հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները անհատույց ստանալը, սեռական շահագործման ենթարկելը և այլն:

Թրաֆիքինգը ֆինանսական տեսակետից բավականին շահութաբեր է: Համարվում է ամենաարագ աճող հանցավոր բիզնեսն աշխարհում: Թմրավաճառքին հաջորդելով՝ համարվում է երկրորդ շահութաբեր հանցավոր բիզնեսը: Թրաֆիքինգը իր մեջ ներառում է աշխատանք բռնի ուժով, այսինքն, երբ ուղղակիորեն տնօրինում են մարդուն, ինչպես նաև սեռական բռնություն, ովքեր հիմնականում ծառայում են հենց թրաֆիքինգի կազմակերպիչներին [3]:

Վերադառնալով վիկտիմ վարքագծին, հարկ ենք համարում քննարկել հետևյալ հարցը. միևնույն իրադրության մեջ արդյո՞ք բոլորը կդառնան հանցագործության զոհ, թե՞ ոչ: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է դիտարկել վիկտիմ վարքագծի դրսևորումները: Դրանք են՝ սադրող վարքագիծ, թեթևամիտ, չեզոք:

Սադրիչ վարքագծի հիմքում ընկած են հակաբարոյական, հակահիրավական գործողությունները, որոնց նպատակն է անձին դրդել հանցագործության:

Թեթևամիտ վարքագիծը նպաստում է հանցավորի մոտ արդեն իսկ առկա հակահասարակական դիրքորոշման իրագործմանը:

Եվ չեզոք վարքագիծ, որի դեպքում հանցագործությունը կատարվում է միայն հանցավորի քրեական դիրքորոշման պատճառով:

Ելնելով վերոնշյալներից՝ կարող ենք եզրակացնել, որ ոչ բոլոր դեպքերում կարող են հանցագործության զոհ դառնալ բոլորը, այսինքն՝ մի դեպքում հանցագործությունը կարող է հրահրված լինել, մյուս դեպքում՝ չմտածված վարքագծի արդյունք, իսկ մեկ այլ դեպքում՝ պարզապես հանցավորի որևէ կամայական գործողության հետևանք:

Ինչպես նշվեց, ընտանիքում զոհի դերը, որպես կանոն, պատկանում է կնոջը և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ է նախ հասկանալ՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ընտանեկան բռնություն ասվածը: Ընտանեկան բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Հիշյալ գործողությունների իրականացման դեմ պայքարում առաջարկում ենք հետևյալը: Եթե հստակ տեղեկացված ենք, որ որևէ ընտանիքում առկա է չեզոք դրսևորմամբ վիկտիմ վարքագծով պայմանավորված բռնություն, առաջարկում ենք հոգեբանական գործողություններով տուժող անձին բացատրել, որ դա բնական, նորմալ երևույթ չէ ընտանիքում, և բռնությունը խիստ արգելված է օրենքով: Բացատրել անձին իր իրավունքները, մասնավորապես այն, որ կարելի է բռնությունը կանխարգելելու համար դիմել այն մարմիններին, որոնք զբաղվում են դրա դեմ պայքարով: Այդ մարմիններն են՝ ոստիկանությունը, առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը, խնամակալության և հոգաբարձության մարմինները, ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները [3]: Թեև ոստիկանությունը արտահայտում է իր պատրաստակամությունը՝ օգնելու բռնության զոհերին, այնուամենայնիվ, ո՛չ ոստիկանությունը, ո՛չ այլ ոք ի զորու չեն օգնել անձին, եթե ինքը չբարձրաձայնի իր նկատմամբ իրականացվող ոտնձգության մասին:

Ինչ վերաբերում է թրաֆիքինգին, ապա առաջարկում ենք, առաջինը՝ ձեռնարկել կամ ամրապնդել, օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը, իհարկե, չխախտելով անձանց ազատ տեղաշարժման իրավունքը: Երկրորդը՝ ոչ ոքի չպետք է վստահել անձնագիրը, և հատուկ նշանակության այլ փաստաթղթեր, ինչպես նաև խուսափել օտար երկրում անծանոթ մարդկանց հետ ծանոթություններից:

Խնդիրը ավելի է բարդանում, երբ անձը իր սադրող, թեթևամիտ, չեզոք վարքագծի հետևանքով դառնում է հանցագործության զոհ: Նման դեպքերում, մեր կարծիքով, նախաքննության մարմինները պետք է առավել ուշադրություն դարձնեն տվյալ հանցագործության ենթադրյալ զոհի հոգեբանությանը, քան հենց հանցանք կատարող անձին: Համաձայն հայտնի ասածվածքներից մեկի՝ «Առանց

կրակ ծուխ չի լինում», հետևաբար մեծ է հավանականությունը, որ ենթադրյալ զոհը ոչ միայն չի փորձել խուսափել հանցանքից կամ կանխել այն, այլև նպաստել է դրան:

Ասվածը կամբողջացենք հետևյալով. մեզանից յուրաքանչյուրը կարող է դիտավորյալ հանցագործության զոհ դառնալ, սակայն եթե մենք ունենք գոնե մի փոքր հնարավորություն կանխել այն կամ դրա շարունակականությունը, ապա անմիջապես պետք է օգտագործել այդ հնարավորությունը՝ փրկելով մեզ, մեր հարազատներին ծանոթ կամ անծանոթ մարդկանց: Իսկ այն անձինք, որոնց դրսևորած վարքագիծը նպաստում է հանցագործությունների աճմանը, ապա նրանք պետք է հասկանան, որ նրանց կողմից կատարված ցանկացած արարք, պատճառ կարող է դառնալ մեկ այլ անձի ճակատագրի խեղման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Ք. Անձի զոհայնությունը որպես միջառարկայական ուսումնասիրության հիմնախնդիր, Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր, Երևան, «Ասողիկ» հրատ., 2016, էջ 145-152: http://www.ysu.am
2. Բռնության և զոհի հոգեբանություն. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2016, էջ 64:
3. «Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, Գլուխ 3, հոդված 13:

Поведение жертвы как фактор, способствующий увеличению насильственных нападений

Санасарян Лилит

ГУГ, Юриспруденция, 3-й курс

Научный руководитель:

кандидат юридических наук, доцент Р. Акопян

Резюме

Ключевые слова: *жертва, виктимология, потерпевший, насилие, насилие в семье, торговля людьми, провокационное поведение, легкомыслие, преступление, преступность*

В статье говорится о факторе, который косвенно способствует росту преступлений (речь идет о виктимном поведении).

Нередки случаи, когда потерпевший понимает свое преимущество перед лицом с точки зрения закона и прибегает к недопустимым и предосудительным действиям, понимая, что от его действий зависит дальнейшая судьба человека. Научные анализы утверждают, что довольно часто, особенно в случае преступле-

ний против личности, потерпевший оказывает определенное влияние и ускоряет преступную деятельность.

Конечно, разумные подозрения и критическое мышление уберегут вас от того, чтобы стать жертвой преступления, но это не значит впадать в крайности и быть крайне подозрительным. Однако каждое решение должно основываться на разумности и наличии необходимых и достаточных оснований. В статье рассматриваются возможные действия, как преднамеренные, так и неосторожные, которые являются фактором, способствующим росту преступности и лежащим в основе виктимного поведения.

Victim Behavior as a Factor Contributing to the Increase of Violent Attacks

Sanasaryan Lilit
GSU, Jurisprudence,
Academic Supervisor: R. Hakobyan
PhD in Law, Associate Professor

Summary

Key words: *victim, victimology, victim, violence, domestic violence, trafficking, provocative behavior, frivolity, crime, criminality*

The article refers to the factor that indirectly contributes to the increase in crimes (it is about victim behavior).

There are instances where a victim becomes aware of their legal advantage over the perpetrator and resorts to unacceptable and reprehensible actions, realizing that the future fate of the person may depend on their actions. Scientific analyses suggest that, particularly in cases of crimes against individuals, the victim may have a certain level of influence, often accelerating criminal activity.

Of course, reasonable suspicions and critical thinking will prevent you from becoming a victim of crime, but this does not imply going to extremes and being highly suspicious. Every decision should be grounded in reasonableness and based on the presence of necessary and sufficient grounds. This paper examines the potential actions, both intentional and negligent, that contribute to an increase in crime and underlie victim behavior.

Կալանքը որպես խափանման միջոց ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի

Մարգսյան Արա
ԱրՊՀ, Իրավագիտություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Լ. Սուլեյմանյան

Հանգուցային բառեր. *կալանք, խափանման միջոց, մեղադրյալ, դատարան, նախադեպ, հանցանք*

Քրեական դատավարության բնականոն ընթացքն ապահովելու համար օրենսդիրը սահմանել է դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ խափանման միջոցներ կիրառելը: Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ՝ նոր օրենսգիրք) ընդունումը պայմանավորված էր քրեադատավարական ոլորտում հասարակական հարաբերությունների զարգացմամբ: Նոր օրենսգրքում էական փոփոխությունների են ենթարկվել մի շարք ինստիտուտներ, այդ թվում՝ կալանքի ինստիտուտը: Կալանքը ամենախիստ խափանման միջոցն է, որը սահմանափակում է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները: Այդ իսկ պատճառով այն կիրառվում է այն դեպքում, երբ մյուս խափանման միջոցները չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: Միաժամանակ կալանքի չկիրառելը կամ ոչ ժամանակին կիրառելը կարող է հանգեցնել հանցավորի կողմից նոր հանցագործությունների կատարմանը կամ վարույթի խոչընդոտելուն:

Կալանքը մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրելը գործնականում շարունակում է մնալ արդիական: Արդիականությունը պայմանավորված է ինչպես կալանքի՝ խափանման միջոցներից ամենախիստը լինելով, այնպես էլ նրանով, որ առանձին դեպքերում կրում է շարունակական բնույթ, և գործնականում լինում են դեպքեր, երբ մինչև դատավճռի կայացումը սահմանափակվում են անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, քանի որ վերջինիս նկատմամբ կիրառված է լինում կալանքը:

Ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի 115 հոդվածի 1-ին մասի՝ խափանման միջոցներն են կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները: Եթե նախկինում կալանքն օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելն էր [1], ապա նոր օրենսգրքով **կալանքը դատարանի որոշմամբ մեղադրյալին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ազատությունից զրկելն է՝ օրենքով և դատարանի այդ որոշմամբ սահմանված ժամկետով** [2]**:** Սույն փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող գործողությունները բերվել են դատարանի տիրույթ:

Հարկ է նշել, որ դատական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը յու-

բաքանչյուր անգամ քննարկման առարկա է դարձնում խափանման այլ միջոցների կիրառման հնարավորությունը և հանգելով դրանց անհնարինությանը՝ ընտրում է կալանքը: Նոր օրենսգրքով սահմանվել է հստակ պահանջն առ այն, որ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար:

Հատկանշական է այն փաստը, որ սույն խափանման միջոցի կիրառման, հետագայում դրա փոփոխման հիմքում օրենսդիրը դրել է դրա պիտանիությունը, այսինքն՝ իր առջև դրված նպատակին հասնելու գործոնը: Այս դրույթը ամրագրված է սկզբունքների մակարդակով, այն է՝ մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց, կամ կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինվել այլ՝ առավել պիտանի խափանման միջոցով [3]: Կալանքը որպես խափանման միջոց չի կիրառվում այն դեպքում, երբ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նախատեսված չէ, սակայն բացառություն է այն հանգամանքը, երբ մեղադրյալը խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները [4]: Օրենսդիրը ամրագրել է, որ կալանքի ժամկետը երկարաձգելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված **պատշաճ ջանասիրությունը (due diligence)**, ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը: Սույն դրույթն առաջին անգամ արձանագրել է Վճռաբեկ դատարանը [5]: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի կալանքի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտություն, նրա կողմից գործադրվող ջանքերը և դրա հիման վրա բավարար փաստերի ներքո հիմնավորի նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը:

«ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է [6], որ ողջամիտ կասկածի պահպանումը, որ ձերբակալվածը հանցագործություն է կատարել, պարտադիր պայման է կալանքի շարունակման օրինականության համար, սակայն ժամանակի ընթացքում դա այլևս բավարար չէ, և այնուհետև դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական իշխանությունների կողմից ներկայացված այլ հիմքերը շարունակում են արդարացնել ազատությունից զրկելը: Այն դեպքում, երբ նման հիմքերը եղել են «համապատասխան» և «բավարար», դատարանը պետք է նաև համոզվի, որ ազգային իշխանությունները **«առանձնահատուկ ջանասիրություն»** են ցուցաբերել վարույթն իրականացնելիս:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանին ուղղված քննիչի միջնորդության մեջ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ պետք է հիմնավորվեն տվյալ խափանման միջոցի կիրառման

իրավաչափության պայմանները, որոնք ենթակա են քննության դատարանի կողմից:

Հարկ է նշել, որ կալանքի ժամկետները ևս կրճատվել են՝ ի համեմատ նախկին իրավակարգավորումների: Այդ ժամկետները դասակարգվել են ըստ հանցագործությունների տեսակների: Անձին կարելի է կալանքի տակ պահել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար, և քանի դեռ առկա են անձին կալանքի տակ պահելու հիմքերը, սակայն ամեն դեպքում այդ ժամկետը չի կարող գերազանցել կալանքի տակ պահելու համար սահմանված առավելագույն ժամկետները: Մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետներն են [7].

- 4 ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում,
- 6 ամիս՝ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում,
- 10 ամիս՝ ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում,
- 12 ամիս՝ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում:

Ըստ իս՝ արդարացի է նման իրավական նորամուծությունը, որով վարույթն իրականացնող մարմինն օրենսդրորեն զրկվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով անընդհատ կալանքի միջնորդություններ ներկայացնել դատարան, և նման պահանջը ստիպում է այդ մարմիններին արագ ու պատշաճ քննություն կատարել նման վարույթներով:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասը [8] սահմանում է՝ կալանքից ազատված անձը չի կարող կրկին կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել **նոր էական հանգամանքներ**, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին: Կարևոր է այն հանգամանքը, որ կալանքից ազատված անձին նորից կալանավորելու դեպքում նրան կալանքի տակ պահելու առավելագույն թույլատրելի ժամկետը որոշելիս հաշվարկվում է մինչև կալանքից ազատվելը կալանքի տակ նրա եղած ժամանակը: Սա ևս մեկ երաշխիք է՝ անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության ու վարույթն իրականացնող մարմնի կողմից իրավունքների չարաշահումը բացառելու համար:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման վիճակագրությանը: ՀՀ-ում 2021 թվականի ընթացքում ներկայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 1283 միջնորդություն, որից 1030-ը բավարարվել է (այսինքն՝ ներկայացված միջնորդությունների 80,28 %-ը բավարարվել է): Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունների քանակը կազմել է 2363, 2018 թվականին՝ 1866, 2019 թվականին այդ միջնորդություններն աճել են շուրջ 118-ով՝ հասնելով 1984-ի, 2020-ին՝ 1905, իսկ 2021-ին արձանագրվել է նվազում՝ 622-ով [9]:

Կարող ենք փաստել, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու քանակի նվազումը պայմանավորված է քրեադատավարական օրենսդրության կատարելագործմամբ, դրա կիրառման վերաբերյալ Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշների՝ ՀՀ դատարանների կողմից ուշադրություն կենտրոնում պահելով:

Անդրադառնանք դատական նախադեպերին, որոնք առանցքային նշանակություն ունեն կալանքի վերաբերյալ իրավական դրույթների մեկնաբանման ու իրավակիրառ պրակտիկայի համար: ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1421 որոշմամբ արձանագրել է [10], որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ժամանակ դատարանի կողմից առանց մեղադրյալի և /կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և ընտրված կալանքը հիմնավոր համարելու հարցի քննությունը չի սահմանափակում անձին՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը՝ դատական բողոքարկման (ստուգման) ձևով դրսևորվելու դեպքում: Փաստորեն առկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (ստուգման) օրենսդրական երաշխիքներ: Մեկ այլ որոշման մեջ Սահմանադրական դատարանը արձանագրեց [11], որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում **դատարանները չեն կարող գնահատել մեղադրանքի ապացուցվածությունը**, սակայն պարտավոր են կալանքը ընտրելու հարցը լուծելիս ստուգել մեղադրյալին ներկայացված **մեղադրանքի օրինականությունը:**

Տիգրան Վահրադյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը արձանագրել է [12], որ առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը ձեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչդեռ խափանման միջոցը կիրառման նպատակով տարբերվում է պատժից: Հետևաբար՝ անձին կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված համարելը նրա **անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի խախտում է**:

Վճռաբեկ դատարանը մեկ այլ գործով իր որոշման մեջ սահմանել է կալանքի իրավաչափության գնահատման ևս մեկ չափանիշ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը [13]: Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի է քրեական վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման: Այսինքն՝ անձի ազատությունը սահ-

մանափակելը կհամարվի օրինական և հիմնավորված միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության ու քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում:

Եվրոպական դատարանի կայուն իրավաբանությամբ՝ հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ [14]: Այս դիրքորոշումը դատարանը հայտնել է Հայաստանի դեմ կայացված վճիռներից մեկում: Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն ամրագրել է, որ ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որն արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը: Հանցագործություն կատարած լինելու կասկածը պետք է հիմնված լինի **ողջամիտ հիմքերի** վրա, ինչն էական նշանակություն ունի անձին կամայական ձերբակալումից կամ կալանավորումից պաշտպանելու համար: Այն հանգամանքը, որ ողջամիտ կասկածը հիմնվել է պաշտոնատար անձի բարեխիղճ կամ անկեղծ հավատամքի վրա, բավարար չէ: **Ողջամիտ կասկածը հիմնավորելու համար պետք է առկա լինեն փաստեր կամ տեղեկություններ, որոնք կբավարարեն օբյեկտիվ դիտորդին, որ անձը կարող էր կատարած լինել ենթադրյալ կոնկրետ հանցագործությունը:** Հետախուզական ծառայության օպերատիվ տեղեկությունը առանց որևէ հայտարարության, տեղեկության կամ կոնկրետ բողոքի չի կարող համարվել բավարար՝ հիմնավորելու կասկածի ողջամտությունը: Դատարանն արձանագրել է, որ նման հայտարարությունները պետք է ուղեկցվեն այլ օժանդակ ապացույցներով կամ փաստերով կամ տեղեկությամբ [15]:

Եվրոպական դատարանը արձանագրել է, որ չնայած անձին ազատազրկելու համար **ողջամիտ կասկածի** առկայությունը ազատազրկման պարտադիր պայման է, որոշ ժամանակ անց դա բավարար չէ: Ցանկացած ժամանակահատվածով անձի ազատազրկման հիմնավորվածությունը՝ անկախ դրա տևողությունից, պետք է համոզիչ կերպով ցուցադրվի [16]: Միաժամանակ, ի լրումն ներպետական դատարանների կողմից վերաբերելի և բավարար հիմնավորումների ներկայացման, ներպետական իրավասու մարմինները պարտավոր են ցուցաբերել **հատուկ ջանասիրություն** քննության իրականացման առնչությամբ:

Կալանքի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս [17], որ ներպետական դատարանների կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը բավարարելիս բացակայում են հիմնավոր և բավարար պատճառները («հիմնավոր կասկած»), դիմումատուի արդարացումից հետո կալանավորման համար ոչ նյութական վնասի հատուցում չտրամադրելը [18], կալանավորման օրինականությունը, անորոշ ժամկետով կալանավորման ժամկետը երկարացնելու հիմքերի բացակայությունը[19] և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ կալանքը որպես խափանման միջոց ենթարկվել է արմատական փոփոխությունների: Օրենսդրի կողմից լրացվել են նախկին իրավակարգավորումների բացեր և դրանք համապատասխանեցվել միջազգային չափանիշներին՝ հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների վրա: Խափանման նոր միջոցների նախատեսումը (տնային կալանք, վարչական հսկողություն), ինչպես նաև կալանքի կիրառումը դատարանի տիրույթ բերելը դրական ազդեցություն կունենա, և կալանավորումների թիվը Հայաստանում կկրճատվի: Մեր կարծիքով կալանքը որպես խափանման միջոց պետք է կիրառվի բացառիկ դեպքերում և խիստ անհրաժեշտության պայմաններում՝ որպես ծայրահեղ և վերջին միջոց՝ վարույթի բնականոն ընթացքն ու մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու համար: Դատարանը պետք է մեղադրյալի կողմից կոնկրետ հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը գնահատի ու հիմնավորի կոնկրետ փաստերի և տեղեկությունների հիման վրա, խափանման միջոց կիրառելիս և դրա ժամկետը երկարացնելիս ապահովի որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը: Կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման միջնորդությունը քննելիս պետք է հաշվի առնվի դրա կիրառման հիմքերը, անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, հիմնավորվի կոնկրետ գործով ձեռք բերված փաստերով, թույլատրելի և վերաբերելի ապացույցներով՝ անհիմն կալանքի դեպքերը բացառելու, մեղադրյալի իրավունքներն ու ազատությունները և օրինական շահերը պաշտպանելու համար:

ՕԳՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 1998 թ., փոփոխություններն ու լրացումները 2020 թ.-ի դրությամբ, հոդված 137:

[2] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թ., փոփոխություններն ու լրացումները 2022 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ, հոդված 118:

[3] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թ., փոփոխություններն ու լրացումները 2022 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ, հոդված 29:

[4] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թ., փոփոխություններն ու լրացումները 2022 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ, հոդված 118:

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը ԱՎԴ/0022/06/08 մասին, 31. 10. 2008 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=48339:

[6] ՄԻԵԴ, ՄքԿեյնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 18984/91, կետ 44, 27. 09. 1995:

[7] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թ., փոփոխություններն ու լրացումները 2022 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ, հոդված 119:

[8] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թ., փոփոխություններն ու լրացումները 2022 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ, հոդված 121:
[9] Տե՛ս Տարեկան հաղորդում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության,մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2021, https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf:
[10] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 26. 06. 2018, https://www.arlis.am/documentview.aspx?docid=123660:
[11] Տե՛ս Վաչագան Ղազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 16. 04. 2019, https://www.concourt.am/decision/decisions/sdv-1453.pdf:
[12] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործով թիվ ԼԴ/0197/06/08 գործով, 26. 12. 2008, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=50502:
[13] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ԵԿԴ/0503/06/10 մասին, 22. 12. 2011 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=77186:
[14] Տե՛ս ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 33376/07, կետ 91, 26.06.2012:
[15] ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի, գանգատ թիվ 26772/95, § 155, 157, 06. 04. 2000:
[16] Տե՛ս ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի, § 153, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի, 5826/03, § 140, 22. 05. 2012:
[17] Տե՛ս ՄԻԵԴ, Ղավալյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 50423/08, 22. 10. 2020:
[18] Տե՛ս ՄԻԵԴ, Նորիկ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 63106/12, 22. 10. 2020:
[19] Տե՛ս ՄԻԵԴ, Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 13610/12, 15. 06. 2021:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Քրեական դատավարություն, ընդհանուր մաս, Ս. Դիլբանդյան, Երևան, 2006:
2. Курс Уголовного процесса, под редакции Л. В. Головко, Москва, 2017.
3. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2015:

4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, Հռոմ, 1950:
5. ԱՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2008, փոփոխություններն ու լրացումները 2020 թ.-ի դրությամբ:
6. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 1998, փոփոխություններն ու լրացումները 2020 թ.-ի դրությամբ:
7. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021թ., փոփոխություններն ու լրացումները 2022 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ,
8. ՄԻԵԴ, ՄքԿեյնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 18984/91, 27. 09. 1995:
9. ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 33376/07, 26. 06. 2012:
10. ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի, գանգատ թիվ 26772/95, § 155, 157, 06. 04. 2000:
11. ՄԻԵԴ, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի, գանգատ թիվ 5826/03, 22. 05. 2012:
12. ՄԻԵԴ, Ղավալյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 50423/08, 22. 10. 2020:
13. ՄԻԵԴ, Նորիկ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 63106/12, 22. 10. 2020:
14. ՄԻԵԴ, Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 13610/12, 15. 06. 2021:
15. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 26. 06. 2018: https://www.arlis.am/documentview.aspx?docid=123660,
16. Վաչագան Ղազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 16. 04. 2019, https://www.concourt.am/decision/decisions/sdv-1453.pdf:
17. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործով թիվ ԼԴ/0197/06/08 գործով, 26. 12. 2008, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=50502:
18. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ԵԿԴ/0503/06/10 մասին, 22. 12. 2011, https://www.arlis.am/documentview.aspx?docID=77186:
19. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը ԱՎԴ/0022/06/08 մասին, 31. 10. 2008, https://www.arlis.am/documentview.aspx?docID=48339:
20. Տարեկան հաղորդում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան, 2021: https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf:

Заключение под стражу как мера пресечения по новому уголовно-процессуальному кодексу

Саргсян Ара
АрГУ, Юриспруденция, 2-й курс
Научный руководитель: Л. Сулейманян

Резюме

Ключевые слова: *арест, мера пресечения, обвиняемый, суд, прецедент, преступление*

Меры пресечения являются одним из важнейших уголовно-процессуальных институтов. Наиболее суровым из них является задержание под стражу, которое налагается на обвиняемого, ограничивая его конституционные права и свободы. С принятием нового уголовно-процессуального кодекса правовые нормы, касающиеся задержания, претерпели существенные изменения.

В данной работе были изучены положения о заключении под стражу, их изменения, позиции судов Республики Армения при рассмотрении ходатайств о заключении под стражу, а также прецедентные решения Европейского суда по правам человека.

Detention as a Preventive Measure under the New Code of Criminal Procedure

Sargsyan Ara
Ar SU, Jurisprudence, 2nd year
Academic Supervisor: L. Suleimanyan

Summary

Key words*: arrest, preventive measure, accused, court, precedent, crime*

Measures of restraint are one of the most important criminal procedure institutions. The most severe of these is detention, which is imposed on the accused, limiting his constitutional rights and freedoms. With the adoption of the new Code of Criminal Procedure, the legal provisions relating to detention have undergone significant changes.

In this work, the provisions on detention, their changes, the positions of the courts of the Republic of Armenia when considering applications for detention, as well as the precedent decisions of the European Court of Human Rights have been studied.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMICS

Պետական պարտքի առաջացման պատճառները և արդյունավետ կառավարման հիմնահարցերը

Աբրահամյան Ռոզա
ԳՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Գ. Խաչատրյան

Հանգուցային բառեր. *պետական պարտք, պետական պարտքի կառավարում, եկամուտ, ծախս, դեֆիցիտ*

Պետական պարտքի արդյունավետ կառավարման հիմնահարցերն արդիական են տնտեսության զարգացման համար: Հատկապես կարևորվում են արտաքին պետական պարտքի կառավարման խնդիրները և դրանց կարգավորման հնարավոր ուղիները: Բյուջետային կարգավորման կարևորագույն պայման է պետական պարտքի ռազմավարության իրագործմանը նպաստող քաղաքականությունը:

Պետական պարտքի առաջացման գործընթացն անմիջականորեն կապված է հասարակության և պետության բնականոն զարգացման և ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետ:

Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական պարտքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով: Պետության առջև ծառացած ռազմավարական կարևոր խնդիր է պետական պարտքի արդյունավետ կառավարման գործընթացի կազմակերպումը:

Արտաքին պարտքը կարող է առաջանալ երկու հիմնական պատճառով. առաջինը՝ օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից միջոցների ուղղակի փոխառությունների հետևանքով և երկրորդը՝ օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, պետություններին պետական արժեթղթերի վաճառման ճանապարհով: Պետական պարտքի սպասարկման համար ծախսերի կատարման անհրաժեշտությունը պետությանը հարկադրում է տնտեսական և սոցիալական զարգացման կարիքների բավարարման փոխարեն նշանակալի բյուջետային միջոցներ հատկացնել այդ նպատակին, ինչպես նաև ապագա սերունդների վրա ավելցուկային պարտքային բեռ փոխանցել: Պետական պարտքի կառուցվածքի ձևավորման խնդիրների հանդեպ պատշաճ ուշադրության բացակայությունը բարձրացնում է պետության՝ վարկատուներից ֆինանսական ու նաև քաղաքական կախվածության մեջ հայտնվելու հավանականությունը:

Արտաքին պետական պարտքի կառավարման քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1. արտաքին փոխառությունների շուկա բարենպաստ պայմաններով հաստատուն, մշտական մուտքի ապահովումը,

2. վերաֆինանսավորման նպատակով ներգրավվող արտաքին փոխառությունների ծավալների աճը,

3. միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հանդեպ ունեցած պարտավորությունների էական կրճատումը:

Պետական պարտքի կառավարման համատեքստում 2022-2026 թթ. ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման ծրագրի նպատակադրումներին համահունչ, միջնաժամկետում կշարունակվի սահուն հարկաբյուջետային միավորումը՝ պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ և Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշների նվազմամբ՝ ապահովելով մինչև 2026 թ. 60 % սահմանային շեմից ցածր Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը: Պետական պարտքի կառավարման շրջանակներում կարևորվում է պետական պարտքի արժութային բաղադրիչը, քանի որ ազգային արժույթի շարունակական դևալվացիան անխուսափելիորեն հանգեցնում է հենց պարտքի և նրա սպասարկման թանկացմանը:

Արտաքին պարտքը հաստատագրվում, մարվում և սպասարկվում է արտասահմանյան արժույթով, ուստի ՀՆԱ-ի ծավալից ու աճի տեմպերից բացի, երկրի վճարունակության կարևոր ցուցանիշ է ապրանքների և ծառայությունների արտահանումը:

Անդրադառնանք 2019-2021 թվականների համար պետական պարտքի վերլուծությանը:



Գծապատկեր 1. ՀՀ պետական և ՀՀ կառավարության պարտքի ցուցանիշները 2019-2021 թվականներին, մլրդ դրամ

Ինչպես ակնհայտ է դառնում գծապատկեր 1-ից, 2020 թ. ՀՀ պետական պարտքը կազմել է 4,164.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 652.2 մլրդ դրամով (647.2 մլն ԱՄՆ դոլարով) կամ 18.6 %-ով, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտքի ծավալն աճել է 646.6 մլրդ դրամով (676.6 մլն ԱՄՆ դոլարով) կամ 19.7 %-ով:

Ընդ որում, 2020 թվականին արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի աճ՝ պայմանավորված պետական բյուջեով նախատեսված, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումների և ռազմական գործողությունների հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի կարիքով:

Նկատենք, որ 2021 թվականին ՀՀ պետական պարտքը կազմել է 4,429.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 265.3 մլրդ դրամով (1,257.2 մլն ԱՄՆ դոլարով) կամ 6.4 %-ով, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտքի ծավալն

աճել է 285.9 մլրդ դրամով (1,259.4 մլն ԱՄՆ դոլարով) կամ 7.3 %-ով:

Դիտարկենք ՀՀ պետական պարտք, ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշնե-րի շարժընթացը (դինամիկան):



Գծապատկեր 2. ՀՀ պետական պարտք, ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշների շարժընթացը 2000-2021 թվականներին

ՀՀ պետական պարտքի ցուցանիշը դրսևորել է աճի միտում, ընդ որում ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականի դրությամբ կազմել է 63.4 %՝ նվազելով նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ, ինչը հիմնականում պայմանավորված է անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ աճով՝ 13.0 %, մինչդեռ պարտքն աճել է 6.4 %-ով:

Աղյուսակ 1.

ՀՀ կառավարության պարտքը 2021-2023 թվականներին, մլրդ դրամ

	31. 12. 2021 թ.	*31. 12. 2022 թ.*	*31. 12. 2023 թ.*
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	4.210	4.158	4.645
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ին կատմամբ	60.3	50.1	49.8

Համեմատականներ անցկացնելով ՀՀ կառավարության պարտքի ցուցանիշ-ների միջև՝ նկատելի է պարտքի ավելացման միտում:

Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվական-ների ռազմավարական ծրագրով կանխատեսվում էր, որ ՀՀ կառավարության պարտքը 2021 թվականի տարեվերջին պետք է կազմեր 4,286.3 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 62.3 %-ը: Սակայն, 2021 թվականին Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3 %, որը ցածր է ՀՀ կառավարության պարտքի կառավար-ման 2022-2024 թվականների ռազմավարական ծրագրի կանխատեսումային ցու-ցանիշից 2 տոկոսային կետով:

Դիտարկենք 2018-2023 թվականների պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և պակասուրդի մակարդակները:



Գծապատկեր 3. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը 2018-2023 թվականներին, մլրդ դրամ

Նկատենք, որ ՀՀ պետական բյուջեների ամենամեծ դեֆիցիտը գրանցվել է 2020 թվականին, որը բացատրվում է համավարակի և պատերազմի առկայությամբ:

2023 թվականին ավելացել են պետական բյուջեի ծախսերը, որը բացատրվում է նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, առողջապահության ու կրթությանը և այլ բնագավառներին հատկացվող գումարների ավելացմամբ:

Նշենք, որ պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2023 թվականին կկազմի 3.1 %: Ինչպես 2023-2025 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրում, ՀՀ 2023 թ. բյուջեում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից):

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է շուրջ 295.2 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից [1]:

Անդրադառնանք պետական պարտքի կառավարման 2023-2025 թվականների ռազմավարությանը:

2023-2025 թվականների ռազմավարությունում նշվում են մի քանի մակրոտնտեսական զարգացումներ ու կանխատեսումներ, որոնցից են.

- 2021 թ. մեկնարկած տնտեսության վերականգնողական աճի բարձր տեմպերը շարունակվեցին նաև 2022 թ. տարեսկզբին, սակայն փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների բացասական ազդեցություններով պայմանավորված՝ տնտեության աճի տեմպերը դանդաղեցին, և հունվար-մարտին գրանցվեց 8.6 % աճ:
- ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսված տնտեսության և տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված քաղաքականությունների և դրանցից բխող միջոցառումների պայմաններում, միջնաժամկետում թիրախավորվում է 7 % տնտեսական աճ, ինչը համահունչ է նպատակադրած տնտեսական աճի թիրախին:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն [2]:

ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների վերանայված ծրագրում ՀՀ կառավարությունը ծրագրում է իրականացնել պետական բյուջեի եկամուտների քաղաքականության միջոցառումներ, որոնք ներառում են հարկային օրենսդրությունը և հարկային վարչարարությունը: Հարկային օրենսդրության միջոցառումները ներառում են եկամտային հարկի դրույքաչափի

աստիճանական նվազում՝ տարեկան 1.0 տոկոսային կետով մինչև 2023 թվականը, ինչպես նաև ակցիզային հարկերի բեռի բարձրացումը: Առաջին միջոցառման (նախկինում շահութահարկի դրույքաչափի նվազեցման հետ միասին) նպատակը արտահանելի հատվածի և երկարաժամկետ տնտեսական աճի խթանումն է, իսկ երկրորդինը՝ տնտեսության վրա նվազագույն խեղաթյուրող ազդեցություններով լրացուցիչ հարկային եկամուտների գեներացումը, որոնք հեռանկարում թույլ կտան նվազեցնել պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Հարկային օրենսդրության միջոցառումների զուտ ազդեցությունը հարկային եկամուտների վրա դրական է գնահատվում 2022 թվականին և բացասական՝ 2023 թվականին:

Հատկանշական է, որՀՀ կառավարությունը պարտքի բեռի նվազեցման վերանայված ծրագրի իրականացման համար, հարկաբյուջետային կանոններին համահունչ, ծրագրում է 2023-2026 թթ. նվազեցնել պետական բյուջեի ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ում շուրջ 1.6 տոկոսային կետով մինչև 2026 թվականը: Միաժամանակ, նախատեսվում է ընթացիկ ծախսերի կշռի նվազեցմանը զուգահեռ մեծացնել տնտեսության երկարաժամկետ աճին նպաստող կապիտալ ծախսերի կշիռը՝ մինչև 2026 թվականը հասցնելով դրանք ՀՆԱ-ի 7.1 %-ին (ընդհանուր առմամբ բարձրացնելով ՀՆԱ-ի 2.7 տոկոսային կետի չափով 2022 թ.-ի համեմատ), ինչը հնարավորություն կտա տնտեսական աճի արագացման շնորհիվ նվազեցնել կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը [3]:

Խնդրո առարկայի ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ

1. արտաքին պարտքի ձևով միջոցների ներգրավումը հնարավորություն է ընձեռում ավելի մեծ ներդրումներ կատարել, քան թույլ են տալիս երկրի ներքին հնարավորությունները՝ նպատակ ունենալով խթանելու ազգային տնտեսության աշխուժացումը, հիմքեր ստեղծելու հետագայում ներքին արտադրության և արտահանման աճի համար,

2. այդուհանդերձ՝ պետական պարտքի արժութային բաղադրիչը երկրի բյուջետային համակարգի համար առավել վտանգավոր է, քանի որ ազգային արժույթի շարունակական դևալվացիան անխուսափելիորեն բերում է հենց պարտքի և նրա սպասարկման թանկացմանը,

3. ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսություններում տեղի են ունեցել տնտեսական աճի էական դանդաղումներ՝ պայմանավորված համաշխարհային արժեշղթաների խաթարումներով, ճգնաժամով, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, որն իր անմիջական ազդեցությունն է ունենում Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի վրա,

4. COVID-19 համավարակի հետևանքները դեռևս ամբողջությամբ չհաղթահարած աշխարհը ներկայումս բախվել է ռուս-ուկրաինական հակամարտության շուրջ առաջացած աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին, ինչի բացասական հետևանքներն արդեն տեսանելի են ոչ միայն տածաշրջանում, այլ նաև ամբողջ աշխարհում,

5. 2023 թվականին ավելացել են ՀՀ պետական բյուջեի ծախսերը, որը բացատրվում է նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, առողջապահությանն ու կրթությանը և այլ բնագավառներին հատկացվող գումարների ավելացմամբ,

6. Հայաստանի Հանրապետությունը պետական պարտքի կառավարման ուղղությամբ առաջնորդվում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թթ. ռազմավարական, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թթ. վերանայված ծրագրերով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկում ենք.

1. Բարձրացնել բյուջետային կարգապահությունը, ուշադրությունը սևեռել ինչպես ընտրվող ծրագրերի, այնպես էլ կատարվող ծախսերի արդյունավետության վրա,

2. Մշակել պարտքի կառավարման այնպիսի ռազմավարություն, որը չի սահմանափակի տնտեսական աճը, վերջինս էլ կնվազեցնի փոխարժեքի արժեզրկման ռիսկերը,

3. Վարկային նոր համաձայնագրերի հիմքում դնել ներգրավված միջոցների օգտագործման արդյունքը գնահատող հստակ չափանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատել այդ միջոցների արդյունավետությունը ոլորտի զարգացման ուղղությամբ, համեմատել դրանք փոխառությունների գծով կատարված ծախսերի հետ,

4. ՀՀ արտաքին փոխառություններն ուղղել տնտեսության առավել արտադրողական ոլորտներ՝ ստեղծելով ներքին արտադրության և արտահանման հետագա աճի անհրաժեշտ հիմքեր, որն էլ թույլ կտա ժամանակին և ամբողջական ծավալով սպասարկել արտաքին պարտավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, https://www.minfin.am/hy, (հասանելի է՝ 09. 01. 2023):
2. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների ռազմավարական ծրագիր, https://www.minfin.am/hy/page/partqi_razmavartyun/, (հասանելի է՝ 09. 01. 2023):
3. Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների վերանայված ծրագիր, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV73-6817-ACFF-CBF2/1010.2.pdf, (Հասանելի է՝ 09. 01. 2023):
4. Բայադյան Ա. Հ., Մարկոսյան Հ. Ա., Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:
5. Заяц Н. Е., Фисенко М. К. Теория финансов, Минск, 1998, 186 с.

Причины роста государственного долга и основные вопросы эффективного управления

Абраамян Роза
ГГУ, Финансы (по отраслям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Г. Хачатрян

Резюме

***Ключевые слова**: государственный долг, управление государственным долгом, доходы, расходы, дефицит*

Вопросы государственного долга актуальны на всех этапах экономического развития. Особое значение имеют проблемы управления внешним государственным долгом и возможности их регулирования и совершенствования. Государственный долг может быть вызван войнами, экономическим спадом, снижением налогов и другими причинами. В целях снижения долгового бремени правительства РА, правительство планирует реализовать доходную политику государственного бюджета и меры по сокращению текущих расходов государственного бюджета в ВВП.

Reasons for Increasing Public Debt and the Main Issues of Effective Governance

Abrahamyan Roza
GSU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: G. Khachatryan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

***Key words**: public debt, public debt management, income, expenditure, deficit*

Public debt issues are relevant at all stages of economic development. Of particular importance are the problems of managing external public debt and the possibility of their regulation and improvement. Government debt can be caused by wars, economic recession, tax cuts, and other causes. In order to reduce the debt burden of the government of the Republic of Armenia, the government plans to implement a revenue policy of the state budget and measures to reduce the current expenditures of the state budget in terms of GDP.

Գյուղատնտեսության ոլորտի արդի մարտահրավերները Արցախի Հանրապետությունում

Ավետիսյան Իրինա
ԱրՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝տ. գ. թ., դոցենտ Ե. Հայրիյան

Հանգուցային բառեր. *գյուղատնտեսություն, գյուղատնտեսական արտադրանք, պետական աջակցություն, ծրագրեր*

Գյուղատնտեսության ոլորտը անկախացումից ի վեր համարվում է Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը: Տարիների ընթացքում ԱՀ կառավարության կողմից միջոցառումներ են ձեռնարկվել և շարունակվում են իրագործվել բազմաթիվ ծրագրեր գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու համար: 1985 թ. ԼՂԻՄ-ում կային 33 կոլտնտեսություն, 40 խորհրդային տնտեսություններ (սովխոզներ) և 6 միջտնտեսային ձեռնարկություններ: Տնտեսությունների հետագա խոշորացումն ու մասնագիտացումը, ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը, արտադրության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը կարճ ժամանակամիջոցում ապահովեցին բուսաբուծական ու անասնապահական արտադրության կայուն աճ: Գյուղատնտեսության զարգացման տեմպերը առավել բարձր էին 70-80 թվականներին, առանձնապես 80-90 թթ.: Հանրապետությունում (նախկին ԼՂԻՄ-ի տարածքում) 1971-1980 թթ. հացահատիկի միջին տարեկան արտադրությունը կազմել է 51.8 հազ. տոննա, իսկ 1981-90 թթ.՝ 62.8 տոննա, խաղողինը՝ համապատասխանաբար 83.9 հազ. տոննա և 101.4 հազ. տոննա, մսի արտադրությունը՝ 10 հազ. և 10.2 հազ. տոննա, կաթինը՝ 43.9 հազ. և 52.4 հազ. տոննա, ձվինը՝ 26 մլն և 27.8 մլն հատ: Նշված աճը հիմնականում տեղի է ունեցել ինտենսիվ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ու անասունների մթերատվության բարձրացման հաշվին: Այսպես, հացահատիկի և մի շարք մշակաբույսերի բերքի աճը լիովին տեղի են ունեցել բերքատվության հաշվին, քանի որ 1971-1985 թթ. խաղողագործության զարգացման հետևանքով նրանց ցանքատարածությունները կրճատվել են 30-50 %: Հացահատիկի մեկ հեկտարի միջին տարեկան բերքատվությունը 9.4 ց (1961-1970 թթ.) բարձրացել և 1971-1980 թթ. կազմել է 14.9 ց, իսկ 1981-1990 թթ.՝ 22 ց, բանջարեղենի բերքատվությունը՝ համապատասխանաբար 98.5 ց, 123 ց և 133.3 ց, խաղողինը՝ 44.1 ց, 84.5 ց, 73.3 ց: Հացահատիկի արտադրության մակարդակը եղել է. 1988 թ.՝ 107.8 հազ. տոննա, իսկ 1990 թ.՝ 95.3 հազ. տոննա, մեկ հեկտարի բերքատվությունը՝ համապատասխանաբար 27.3 ց և 25.8 ց: Հանրապետության տնտեսությունների երկու երրորդը ունեին խաղողի այգիներ: Նրանց դրամական եկամուտի 40-50 %-ը (բուսաբուծություն՝ 90 %-ը) ստացվել է խաղողագործությունից: Խաղողագործության շահույթը փակում էր մնացած ճյուղերի վնասը [5]: Ինչպես երևում է, գյուղատնտեսությունը այդ ժամանակշրջանում ցուցաբերել էր բա-

վականին բարձր ցուցանիշներ և մինչ այսօր այն ԱՀ –ի տնտեսության առանցքային ճյուղերց մեկն է:

Վերջին հինգ տարիների ընթացքում գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշը անկման միտում է դրսևորել: Դրա հիմնական պատճառներն էին բնական աղետները, 2016 թ. ապրիլյան պատերազմը, համավարակը և 2020 թ. 44-օրյա պատերազմը:

Ստորև ներկայացված է ԱՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2015-2021թթ.:



Գծապատկեր 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում, % [2]

Նախ 2020 թ.-ին 2015 թ.-ի համեմատությամբ ԱՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժնի կրճատումը պայմանավորված է բուսաբուծության համախառն արտադրանքի շուրջ 43,3 % կրճատումով: Այս ցուցանիշի վրա ազդել է բուսաբուծության գլխավոր արտադրանքի՝ հացահատիկի բերքատվության և համախառն բերքի կրճատումը: Ինչ վերաբերում է 2021 թ. խիստ ցածր ցուցանիշին, ապա այստեղ գլխավոր գործոնը պատերազմն է:

Պապերազմի հետևանքը հատկապես տեսանելի է 2021թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշում: Բացարձակ արտահայտությամբ այն կազմել է 30310,8 մլն դրամ, որը 2.5 անգամ զիջում է 2015 թ. նույն ցուցանիշին: Վերջին յոթ տարիների ընթացքում ԱՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 18,6 տոկոսային կետով:

Պատերազմի հետևանքով ամենամեծ անկումը գրանցվել է գյուղատնտեսության ոլորտում, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ադրբեջանի

կողմից բռնազավթված տարածքներում են մնացել Արցախի վարելահողերի մոտ 75 տոկոսը, արոտավայրերի 85 տոկոսը, պտղատու այգիների զգալի մասը, ինչպես նաև ոռոգովի տարածքների մոտ 90 տոկոսը: Ավելի քան 50 տոկոսով կրճատվել է նաև անասնագլխաքանակը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2020 թվականի համեմատ իրական արտահայտությամբ նվազել է 51.1 տոկոսով [6]:

Արցախի Հանրապետությունում մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունը հիմնականում ուղղված էր տարածքների համաչափ զարգացմանն ու գյուղատնտեսության ինտենսիվության մակարդակի բարձրացմանը, պարենային անվտանգության ապահովմանը: Արցախի Հանրապետությունում պարենային ինքնաբավության խնդիր առկա էր նաև Արցախյան երրորդ պատերազմին նախորդած ժամանակահատվածում: Հանրապետությունն ինքնաբավ էր միայն հացահատիկով, ինչպես նաև թռչնաբուծության արդյունքում ստացված ձվի արտադրանքով: Արցախում տարեկան արտադրվում էր միջինը 100-120 հազար տոննա հացահատիկ, որի 60-70 տոկոսը իրացվում էր Հայաստանի Հանրապետությունում՝ ներքին սպառման պահանջարկը որոշակիորեն ապահովելու նպատակով: Մնացած 30-40 տոկոսը բավարարում էր Արցախի բնակչության պահանջարկը [7]: Պարենային անվտանգության խնդիրն ավելի է կարևորվել պատերազմից հետո, հացահատիկայինների՝ 2021 թվականի բերքատվության ու ստացված բերքի ցուցանիշներն ինքնին վկայում են, որ առկա է հացահատիկի ինքնաբավության խնդիր, հետևաբար ներմուծման անհաժեշտություն կար:

Հաշվի առնելով ԱՀ գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկությունները, կարևորվում է գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցությունն ու պետական կարգավորման գործիքների կիրառումը: Այդ նպատակով ԱՀ կառավարության կողմից 2006 թվականի հունվարի 24-ին հիմնադրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը, որը իր լայնածավալ գործունեությունը վերսկսեց 2007 թվականի վերջից՝ նոր թափ հաղորդելով գյուղատնտեսության զարգացման տեմպերին: ԱՀ ԳԳԱՀ-ի նպատակն է երկրի գյուղատնտեսական նշանակության հողերի լրիվ օգտագործման ապավովումը, զբաղվածության բարձրացումն ու գյուղատնտեսությունում նոր տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը:

2020 թ. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացվել էր 8 մլրդ 327 մլն 546,7 հազ. դրամ:

Գյուղոլորտի հատկացումների կատարողականը կազմել է 87,4 տոկոս: Մի շարք ծրագրեր չեղարկվել կամ մասնակիորեն են իրականացվել՝ պատերազմով ու համավարակով պայմանավորված: «Աջակցություն գյուղի և գյուղատնեսության աջակցության հիմնադրամին» ծրագրի իրականացման համար նախատեսված էր 1 մլրդ 5 մլն դրամ, սակայն աշնանացան սերմերի արժեքի փոխհատուցման և երաշտից տուժած հողօգտագործողներին աջակցության նպատակով կա-

տարվել է հաստատված պլանի ճշգրտում, որի արդյունքում ծրագրի կատարմանը հատկացվել է 1 մլրդ 776 մլն 193,8 հազ դրամ:

Պետական աջակցության մոտ 643 հեկտարի վրա կատարվել է բանջարեղենի և կարտոֆիլի մշակություն: Բերքահավաքը հիմնականում իրականացվել է, սակայն պատերազմական գործողությունների հետևանքով բանջարեղենի մշակման տարածքները ընկել են Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչպես նաև բռնազավթված տարածքներում է մնացել ջերմատնային տնտեսությունների մի մասը:

Պատերազմի հետևանքով կորցնելով ենթակառուցվածքներ, գյուղատնտեսական նշանակության հողեր և տնտեսական նշանակության օբյեկտներ՝ ԱՀ-ում գրանցվեց 22,4 % տնտեսական անկում:

Տեղական հումքով գյուղատնտեսական արտադրանք արտադրելը տարիներ շարունակ խրախուսվում էր նաև պետության կողմից՝ հարկային արտոնությունների տրամադրման միջոցով:

ԱԱՀ օրենքի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանք արտադրողից ձեռք բերված հումքի բազայի վրա գյուղատնտեսական մթերքների ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող վերամշակումը և վերամշակողի կողմից իրացումը ազատված է ԱԱՀ-ից: Հաշվի առնելով հետպատերազմյան շրջանում հացահատիկի պակասուրդը և նպատակ ունենալով կանխել հացի ու լավաշի գների բարձրացումը՝ 2022 թ.-ի մայիսին օրենքում կատարվել է փոփոխություն. ըստ որի՝ այդ արտոնությունը գործում է ոչ միայն տեղական, այլ նաև ներմուծված հումքով արտադրված հացի ու լավաշի օտարման դեպքում: Պատերազմի հետևանքով մեծապես տուժել է նաև գյուղատնտեսական հումքի վերամշակումը, այժմ գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մի մասը գործունեություն չի իրականացնում, մյուս մասն էլ գործում է ոչ լիարժեքորեն:

Գյուղատնտեսության զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ են նաև մի շարք գործոններ՝ ֆինանսներ, գյուղատնտեսական տեխնիկա, պարարտանյութեր, համապատասխան դեղամիջոցներ, ցանքատարածությունների ջրարբիացում: ԱՀ գյուղնախարարության կողմից այդ ուղղությամբ իրականացվող կարևոր քայլերից են գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ծրագրերը: 2021 թ.-ին հիմնադրամը տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացրել է 8248163.6 հազար դրամի չափով աջակցություն: Աջակցության կեսից ավելին՝ 53 տոկոսը, ուղղվել է հողագործության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Գծապատկեր 2. ԱՀ գյուղատնտեսության աջակցման ծրագրերի կառուցվածքը, 2021 թ., % [4]

Հողագործությունը ԱՀ-ի համար մնում է գյուղատնտեսության այն առանցքային ենթաճյուղը, որի զարգացումից է մեծապես կախված գյուղատնտեսության, մասամբ նաև տնտեսության կայունությունը: Այդ ուղղությամբ պետական աջակցության իրականացումը նպատակ ունի ապահովել հողակտորների լրիվ օգտագործում, որը կապահովի ինչպես գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճ, այնպես էլ զբաղվածության, ուստի նաև բնակչության եկամուտների մակարդակի աճ: Դրանով իսկ գյուղատնտեսության զարգացման համար ավելի ամուր հիմքեր կստեղծվեն, քանի որ գյուղական վայրերի սոցիալական զարգացման դանդաղ տեմպերը միշտ էլ արգելակում են գյուղանտեսության նորմալ զարգացումը:



Գծապատկեր 3. ԱՀ գյուղատնտեսության աջակցության ծրագրերի աղբյուրների կառուցվածքը, 2021 թ., % [4]

2021 թ. հիմնադրամի կողմից իրականացված աջակցության գերակշիռ մաս են կազմում փոխառությունների տրամադրումը, անհատույց աջակցությունը և ուղղակի առքուվաճառքը:

2021 թ. պետական աջակցությամբ Արցախում հիմնվել են 75 հա նոր և հատապտղատու այգիներ, արձանագրվել է անասնագլխաքանակի աճ՝ 12-30 տոկոսով: Իրականացվել են բազմաթիվ օժանդակության ծրագրեր՝ աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմերի արժեքների փոխհատուցում, ջեռուցվող և չջեռուցվող ջերմոցներին անհատույց աջակցության տրամադրում, տոհմային անասնագլխաքանակի ներկրման դիմաց կենդանու արժեքի 50 տոկոսի սուբսիդավորում, անասնաշենքերի արդիականացման ծախսերի զգալի մասի փոխհատուցում, դրամաշնորհային նախագծի իրագործում և բազում այլ ծրագրեր:

2020 թ.-ից տնտեսությունը փորձում էր որոշակիորեն կարգավորվել, սակայն 2022 թվականի դեկտեմբերի 12-ին Արցախի շրջափակումը վերականգնվող տնտեսությանը մեծ վնասներ հասցրեց: Դեկտեմբերի 12-ից դադարեցվեց ապրանքների (սնունդ, տնտեսական ապրանքներ, դեղամիջոցներ, վառելիք, շինանյութ և այլն) ներկրումը Արցախ: Մինչ շրջափակումը Արցախ էր ներկրվում օրա-

կան շուրջ 400 տոննա բեռ: Այս ամենը հարված հասցրեց տնտեսության բոլոր ճյուղերին, ընդհուպ մինչև գյուղատնտեսություն: Գյուղատնտեսության ոլորտում սերմերի բացակայության, վառելիքի սղության պատճառով հետաձգվում են գյուղատնտեսական աշխատանքները: Շրջափակման յուրաքանչյուր օր խիստ բացասական է ազդում գյուղատնտեսական ցանքատարածությունների աշխատանքների վրա: Նման պայմաններում հաջորդ տարի ԱՀ-ն կունենա ավելի քիչ գյուղատնտեսական արտադրանք, քան նախորդ տարի էր:

Չնայած ստեղծված պայմաններին, պետությունը փորձում է աջակցել հողօգտագործողներին: Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ «Արցախի Հանրապետությունում ցանքաշրջանառության խթանման ծրագրի» շրջանակներում 2023 թվականի բերքի տակ գարնանացանի կազմակերպման նպատակով՝ արժեքի մասնակի սուբսիդավորմամբ, որպես պետական աջակցություն, կտրամադրվեն բանջարաբոստանային և գարնանացան մշակաբույսերի սերմեր: Ինչպես նաև գարնանացանի աշխատանքների կազմակերպման համար կիրականացվի անհրաժեշտ դիզելային վառելիքի կտրոնների տրամադրման գործընթացը:

Չնայած Արցախի Հանրապետությունն ունի հնարավոր բարենպաստ պայմաններ գյուղատնտեսության զարգացման համար, այնուամենայնիվ կախվածության մեջ է ՀՀ-ից ներկրվող գյուղատնտեսական արտադրանքից: Ինչպես նշվել է, ԱՀ գյուղի և գյուղատնտեսության հիմնադրամը իրականացրել է մի շարք ծրագրեր. վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում, տնկիների, մի շարք բուսաբուծական ապրանքների տրամադրում: Բուսաբուծության ոլորտում ջերմոցային տնտեսությունների զարգացմանը ուղղված ծրագրերը միաժամանակ կարող են լուծել երկու խնդիր՝ զբաղվածության և պարենային ինքնաբավության հիմնախնդիրները: Պետական նպատակային ծրագրերը և գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող աջակցությունը շարունակաբար աճում է, սակայն այդ քաղաքականությունը հաճախ չի հասնում առաջադրված նպատակին: Պետք է անընդհատ իրականացնել մոնիթորինգներ, հատկապես ապաշրջափակումից հետո և հիմա, երբ այսօրվա գյուղատնտեսական ապրանքների առաջարկը բավականին ցածր է: Պետք է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնց միջոցով փորձենք իրացնել հայրենական արտադրանքը և ապահովել ներքին շուկայի պահանջարկը և կանխենք պարենային հիմախնդիրը: Միաժամանակ պետք է իրականացնել գյուղատնտեսության համապատասխան դասընթացներ տնտեսվարողների շրջանակում՝ նպաստելով արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, գյուղատնտեսության ներկայիս զարգացման համար առկա են հետևյալ մարտահրավերները՝

- նպատակային ծրագրերի ճկուն և արդյունավետ օգտագործումը,
- էքստենսիվ գյուղատնտեսության աճի ռազմավարությունից անցումը ինտենսիվ գյուղատնտեսության ռազմավարությանը,
- միջազգային փորձի տեղայնացումը,
- համապատասխան մասնագետների ներգրավումը,

- նորագույն տեխնոլոգիաների և կառավարման համակարգի կիրառում,
- նոր սարքավորումների ֆինանսավորման աղբյուրներ,
- գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձր ցուցանիշների ապահովում:

Փաստորեն ներկա պահին մարտահրավերները առկա են ու գյուղատնտեսության ոլորտում պետական կարգավորման լծակների արդյունավետության մակարդակը պետք է բարձրացնել, որպեսզի գյուղատնտեսության աջակցության ծրագրերը լինեն ուղղորդված, հատուկ նպատակին ծառայող: Ներկա պահին, այս բարդ ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում նպատակային ծրագրերի արդյունավետ իրականացման տեսանկյունից կարևորվում է պետական վերահսկողություն խստացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգային ժողով. ԱՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին. 19 մայիսի 2022 թ.:
2. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն, Գլխավոր էջ (stat-nkr.am)
3. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն. ԱՀ վիճակագրական տարեգիրք, 2021, http://stat-nkr.am/files/yearbooks/2021/Taregirq_2021_kr.pdf:
4. ԱՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, 2021 թ. Տարեկան հաշվետվություն, 2021 (agrofund.am):
5. Գյուղատնտեսության զարգացման պայմաններն ու նախադրյալները ԼՂՀ-ում Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (nkr.am):
6. Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում են մնացել Արցախի վարելահողերի մոտ 75 %-ը, արոտավայրերի 85 %-ը, պտղատու այգիների զգալի մասը, ոռոգովի տարածքների մոտ 90 %-ը. նախարար – Լուրեր Հայաստանից – Թերթ.am (tert.am):
7. Գյուղատնտեսությունը՝ Արցախի պարենային ինքնաբավության ապահովման հնարավորություն (artsakhtert.com):
8. https://tax.nk.am/index.php?name=static&id=185
9. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Գլխավոր (nkr.am):
10. Արցախի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում շարունակվում են 2020 թ. պետբյուջեի կատարողականների քննարկումները (nankr.am):

Современные вызовы сельского хозяйства в Республике Арцах

Авестисян Ирина
АрГУ, Финансы (по отраслям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Е. Айриян

Резюме

***Ключевые слова**: сельское хозяйство, сельскохозяйственная продукция, государственная поддержка, программы*

С момента обретения независимости, сельскохозяйственный сектор считается одним из стратегических направлений развития экономики Республики Арцах. На протяжении многих лет правительство Республики Арцах предпринимало меры и продолжает реализовывать многочисленные программы для развития сельскохозяйственного сектора. Эти программы направлены на пропорциональное развитие территорий и повышение уровня интенсивности сельского хозяйства, обеспечение продовольственной безопасности. Однако из-за войны и блокады сельскохозяйственный сектор столкнулся с рядом проблем.

Modern Challenges of Agriculture in the Republic of Artsakh

Avetisyan Irina
ASU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: E. Hayriyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

***Key words**: agriculture, agricultural products, government support, programs*

Since gaining an independence, the agricultural sector has been considered one of the strategic directions of the development of the economy of the Republic of Artsakh. For many years, the Government of the Republic of Artsakh has taken measures and continues to implement numerous programs for the development of the agricultural sector. These programs aim to proportionally develop territories and increase the level of intensity of agriculture, ensuring food security. However, due to the war and the blockade, the agricultural sector faced a number of problems.

Հարկային քաղաքականության դրսևորման առանձնահատկությունները ԱՀ հետպատերազմյան տնտեսությունում

Գաբրիելյան Մերի
ԱրՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝տ. գ. թ., դոցենտ Ե. Հայրիյան

Հանգուցային բառեր. *հարկ, հարկային համակարգ, հարկային եկամուտներ, միջպետական վարկ, հարկային արտոնություն, ՀՆԱ*

Ցանկացած պետության գոյության, տնտեսական և սոցիալական բարգավաճման ճանապարհին հասարակության զարգացման հիմնական պայմաններից մեկը հարկային քաղաքականությունն է: Արցախի պարագայում դեռևս անկախացման ժամանակահատվածում մեծ աշխատանքներ էին կատարվում արդյունավետ հարկային քաղաքականության մշակման և հարկային հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Անկախության հռչակումից հետո Արցախի Հանրապետությունում ձևավորվեց ինքնուրույն հարկային համակարգ, որը Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հետ ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: ՀՀ և ԱՀ հարկային համակարգերն ունեն հարկման սկզբունքների, հարկման ոլորտում կիրառվող մեթոդների, օրենսդրահիրավական հիմքերի և հարկային վարչարարության կազմակերպման մի շարք ընդհանրություններ, բայց և քիչ չեն տարբերությունները, որոնք դրսևորվում են հարկերի դրույքաչափերում, սահմանված հարկատեսակների կառուցվածքում, հարկերի գանձման և հարկային պարտավորությունների կատարման կանոնակարգերում, հարկային արտոնությունների տրամադրման ընթացակարգերում, ինչպես նաև հարկային վարչարարության գործելաձևերում: Այսինքն, թեկուզև Արցախի Հանրապետությունում իրականացվում է ինքնուրույն հարկաբյուջետային քաղաքականություն, սակայն Արցախի Հանրապետությունը ինտեգրված է Հայաստանի Հանրապետությանը, ընդունում է ՀՀ-ում գործող նորմերը և տեղայնացնում այն:

Արցախի Հանրապետության պետական բյուջեի եկամուտները կազմված են սեփական եկամուտներից և Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող միջպետական վարկից: Վերջինիս տրամադրման հիմնական նպատակը աջակցելն է Արցախի տնտեսության զարգացմանը:

Գծապատկեր 1-ում ներկայացված են ԱՀ պետական բյուջեի եկամուտների դինամիկան 2017-2021 թթ.: 2017-2021 թթ. ընկած ժամանակահատվածում պետական բյուջեի կառուցվածքում սեփական եկամուտները իրենց ամենամեծ արժեքային ցուցանիշն ունեցել են 2019 թ.՝ պայմանավորված նրանով, որ տնտեսությունը այդ ժամանակահատվածում բավականին կայունացել էր, և հարկային եկամուտները աճել էին, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրված միջպետական վարկը՝ 2021թ., ընդհանուր առմամբ, միջինում սեփական եկամուտները դիտարկվող ժամանակահատվածում աճել են 3,78 %-ով, իսկ միջ-

պետական վարկը՝ 24,4 %-ով: Այսինքն՝ 2017-2021 թթ. միջպետական վարկը միջինում աճել էր ավելի բարձր տեմպերով, քան սեփական եկամուտները, ինչը պայմանավորված էր 2020 թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմով և կորոնավիրուսի առաջացմամբ, որոնք երկու տնտեսությունների համար էլ ունեցան աղետալի հետևանքներ:



Գծապատկեր 1. ԱՀ պետական բյուջեի եկամուտների դինամիկան 2017-2021 թթ. (մլն ՀՀ դրամ)[6]

Պետական բյուջեի սեփական եկամուտների կառուցվածքում 2017-2021 թթ. գերակշռում են հարկային եկամուտները:

ԱՀ պետական բյուջեի հարկային եկամուտների դինամիկան 2017-2021 թթ. (մլն ՀՀ դրամ) ունի հետևյալ պատկերը *(տե՛ս գծապատկեր 2-ում)*:



Գծապատկեր 2. ԱՀ պետական բյուջեի հարկային եկամուտների դինամիկան 2017-2021 թթ. (մլն ՀՀ դրամ)[7, 144-146]

Արցախի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտները 2017-2019 թթ. աճել են, ընդ որում 2017 թ. հարկային եկամուտները 2018 թ-ի համեմատ աճել են 35 %-ով, իսկ 2019 թ. 2018 թ.-ի համեմատ՝ 10,6 %-ով: 2019-2021 թթ. հարկային եկամուտները նվազել են միջինում 24 %-ով, ինչը պայմանավորված էր կառավարության կողմից սահմանված արտոնություններով և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմով:

2017-2021 թթ. ընթացքում առանձին հարկատեսակների տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում ներկայացված են գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Առանձին հարկատեսակների տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում (2017-2021 թթ.) [7, 145-146]

2017-2021 թթ. ԱՀ պետական բյուջեի կառուցվածքում ամենաշատ հարկային եկամուտները ապահովվել են ավելացված արժեքի հարկի գծով, ընդ որում 2017-2018 թթ. ԱԱՀ-ի գծով ԱՀ պետական բյուջեի մուտքերում 2018-2019 թթ. համեմատ դիտվում է աճ, որը պայմանավորված էր հանքարդյունաբերության, շինարարության, էներգետիկայի և ծառայությունների մատուցման ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից բյուջե վճարված գումարների աճով: 2019 թ. ԱԱՀ-ի գծով ԱՀ պետական բյուջեի մուտքերում դիտվում է նվազում, որը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից բյուջե վճարված գումարների նվազմամբ:

2017-2021 թթ. ընթացքում պետական բյուջեի եկամուտների կազմում ակցիզային հարկի գծով 2017-2019 թթ. դիտվում է անընդհատ աճ, իսկ հաջորդ տարիներին՝ նվազում:

2017-2021 թթ. ընկած ժամանակահատվածում 2017-2019 թթ. եկամտային հարկի գծով մուտքերը աճել են, ինչը պայմանավորված էր նրանով, որ հանքարդյունաբերության, ծառայությունների մատուցման, հեռահաղորդակցության, էներգետիկայի և բանկային ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից հայտարարագրված եկամտային հարկով հարկվող եկամուտները աճել են, ինչպես նաև «Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակներում ստվերային աշխատավարձերի ֆոնդերի վերհանման և չձևակերպված վարձու աշխատողների հայտնաբերման ուղղությամբ հարկային մարմնի կողմից իրականացվող հետևողական վարչարարության ծրագրի իրականացմամբ:

Դիտարկվող ժամանակահատվածում ԱՀ պետական բյուջեի եկամուտներում 2017-2019 թթ. շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերը զգալի աճել են, ինչը պայմանավորված է հանքարդյունաբերության, բանկային ծառայությունների մատուցման, հեռահաղորդակցության և էներգետիկայի ոլորտներում գործող հարկ վճարողների կողմից մուտքագրված գումարների աճով: 2020 թվականի շահութահարկի գծով ստացված քիչ եկամուտները պայմանավորված են այն հանգամանքով, որ մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ 10 % դրույքաչափով շահութահարկով հարկվող գործունեություն իրականացնողներն ազատված էին շահութահարկի վճարումից:

Այս տարիների ընթացքում 2017-2019 թթ. առևտրի հարկի գծով պետական բյուջեի մուտքերում դիտվում է աճ, ինչը պայմանավորված է «Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգով» և իրացման շրջանառությունների աճով: Բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքի վրա իրենց ազդեցությունն են ունեցել նաև մյուս փոխարինող հարկերը, ինչպես նաև մյուս բոլոր հարկային եկամուտները:

Արցախի Հանրապետությունում անկախության հռչակումից ի վեր իրականացվում է ճկուն հարկային քաղաքականություն, տնտեսության զարգացման ռազմավարության դրույթներին համապատասխան: Արցախում հարկային քաղաքականության դրսևորման առանձնահատկությունն այն է, որ կատարվող

իրադարձություններին զուգընթաց ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ, և անհրաժեշտ է իրավիճակին համահունչ ճիշտ և արագ որոշումներ ընդունել: Այդ թվում՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում հարկային վարչարարության արդյունավետ իրականացման արդյունքում, տնտեսվարող սուբյեկտներին արտոնություններ տրամադրելով, կարողացան, չնայած հարկային եկամուտների նվազմանը, որոշ չափով ապահովել տնտեսության աշխուժացում:

Կառավարության կողմից պատերազմական և հետպատերազմական ժամանակաշրջանի համար սահմանած հարկային արտոնությունների թվին են դասվում՝ հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հարկային մարմիններ չներկայացման կամ ուշ ներկայացման համար, հարկային հաշիվների դուրս չգրման կամ ուշ դուրսգրման համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն չկիրառելը, ինչպես նաև հարկային եկամուտները, պետական տուրքերը, օրենսդրությամբ սահմանված կանխավճարները չվճարելու կամ ուշ վճարելու համար տույժեր չհաշվարկելը: Հարկ վճարողների կողմից ԱՀ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին ապրանքների անհատույց (նվիրատվությամբ) մատակարարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) առևտրի հարկից [1]:

Վերջին իրադարձությունները նոր մարտահրավերներ են նետում հարկային քաղաքականության վրա, և արդյունքում ԱՀ հարկային քաղաքականությունը ենթադրում է ավելի ճկուն մեխանիզմների կիրառում:

Արցախը Հայաստանին կապող միակ մայրուղու՝ Ադրբեջանի կողմից փակվելու հետևանքով հարկ վճարողների մի մասը ստիպված դադարեցրել է իր գործունեությունը կամ աշխատում է մասնակիորեն, սակայն նրանք դեկտեմբեր ամսում շարունակել են բարեխղճորեն կատարել իրենց հարկային պարտավորությունները, ինչի արդյունքում նախնական տվյալներով պետական բյուջե են մուտքագրվել 46,726.4 մլն դրամ հարկային եկամուտներ և տուրքեր, որից 36,639.0 մլն դրամը կամ 78.4 տոկոսն ապահովվել է խոշոր հարկ վճարողների հաշվին [8]:

Այս ժամանակահատվածում հարկային քաղաքականության դրսևորումներից են Ադրբեջանի կողմից ԱՀ շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման նպատակով ԱՀ կառավարության կողմից ընդունված 2 որոշումները՝ միանվագ աջակցության և միանվագ դրամաշնորհի տրամադրման մասով: Տնտեսության առավելապես տուժած ոլորտներում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերին (բացառությամբ արտոնագրային վճար վճարողների) տրամադրվում է աջակցություն 136 000 դրամի չափով, իսկ արտոնագրային վճար վճարող անձանց՝ 68 000 դրամի չափով: Միանվագ դրամաշնորհի ծրագրով յուրաքանչյուր աշխատողի հաշվարկով տրամադրվում է առավելագույնը 136 000 դրամի և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով, իսկ հարկ վճարողների կողմից հաշվարկված գումարները դրանից պակաս լինելու դեպքերում՝ եկամուտների փաստացի մեծության չափով:

Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման

համար բազմաթիվ խնդիրների հետ միասին անհրաժեշտ է լուծել հարկային հարաբերությունների կատարելագործման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները, որոնք, ըստ էության, կայանում են ՀՆԱ-ի նկատմամբ հարկային մուտքերի տեսակարար կշռի բարձրացման, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատման և հարկային վարչարարության կատարելագործման մեջ [5]:

Արցախի Հանրապետությունում հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության դինամիկան 2017-2021 թթ. ունի հետևյալ տեսքը (տե՛ս գծապատկեր 4-ում):



Գծապատկեր 4. Հարկային եկամուտներ/ՀՆԱ-ի դինամիկան 2017-2021 թթ. (%)

2017-2021 թթ. ընկած ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում հարկային եկամուտ / համախառն ներքին արդյունք հարաբերակցությունը 2017-2020 թթ. աճել է, ընդ որում 2018 թ.-ին աճել է 2,6 % –ով, իսկ 2018 և 2019 թթ.՝ քիչ տարբերությամբ: 2021 թ.-ին այս հարաբերակցությունը նվազել է 3,5 % –ով, հարկային եկամուտների ցածր մակարդակի պատճառով:

Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարված անուղղակի և ուղղակի հարկերի դինամիկան 2016-2020 թթ. (հազար ՀՀ դրամ) ներկայացված է գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. ԱՀ պետական բյուջե վճարված անուղղակի և ուղղակի հարկերի դինամիկան 2016-2020 թթ., հազար ՀՀ դրամ

2016-2020 թթ. ընթացքում ԱՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերը յուրաքանչյուր տարի գերազանցում են անուղղակի հարկերին: Այստեղից կարելի է ենթադրել, որ հարկային քաղաքականությունը ուղղված է անուղղակի հարկերը նվազեցնելուն և ուղղակի հարկերը ավելացնելուն:

Չնայած իրականացված հարկային բարեփոխումներին, դեռևս առկա են որոշակի խնդիրներ՝ օրենսդրական և վարչարարական դաշտում: Օրենսդրական դաշտում խնդիրները կապված են հարկային օրենսդրության հաճախակի փոփոխություններով, որոնք անորոշություն են առաջացնում տնտեսվարող սուբյեկտի մոտ, ինչը բացասաբար է ազդում ընդհանուր տնտեսության վրա: Հարկային վարչարարություն մասով խնդիրները կապված են ստվերային տնտեսության առա-

ջացման հետ, որի ձևավորման հիմնական պատճառներն են՝ տնտեսության չփաստաթղթավորված գործարքների առկայությունը, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտմամբ իրականացվող գործարքների առկայությունը, չձևակերպված վարձու աշխատողների առկայությունը: Այս խնդիրներից են հարկային պարտավորությունների կուտակումը, հարկային համակարգում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունը, հարկ վճարողների՝ իրենց պարտականությունների և իրավունքների իրազեկվածության ոչ բարձր մակարդակը, ինչպես նաև հասարակության թույլ ներգրավվածությունը պետական ծրագրերում:

Տնտեսության զարգացման նոր մարտահրավերները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել: Այս առումով նախատեսվում է հասարակության լայն շերտերի ներգրավմամբ հարկային օրենսգրքի մշակումը, որը կարևոր ներդրում կլինի տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավման ու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Պատերազմական գործողություններով պայմանավորված հարկային արտոնություններ սահմանելու մասին» Արցախի Հանրապետության օրենք, 2021 թ. փետրվարի 11:
2. Գրիգորյան Կ. Կ., Հարկային իրավունքի հիմունքներ, Երևան, 2007, 103 էջ:
3. Թադևոսյան Ա., ՀՀ և ԼՂՀ հարկային համակարգերի փոխգործակցության արդյունավետության բարձրացման ուղիները:
4. Հարությունյան Վ. Լ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը, Երևան, 2003, 333 էջ:
5. Հարությունյան Տ., Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:
6. https://minfin-nkr.am
7. http://www.stat-nkr.am/hy/2010-11-24-11-18-12/2022
8. https://www.tax.nk.am

Особенности проявления налоговой политики в послевоенной экономике Республики Арцах

Габриелян Мери
АрГУ, Финансы (по отраслям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Е. Айриян

Резюме

Ключевые слова: *налог, налоговая система, налоговые доходы, межгосударственный кредит, налоговая льгота, ВВП*

С момента провозглашения независимости в Республике Арцах осуществляется гибкая налоговая политика. В послевоенный период путем предоставления льгот хозяйствующим субъектам удалось в определенной мере обеспечить оживление экономики. Однако последние события ставят перед налоговой политикой новые вызовы, в результате чего налоговая политика Республики Арцах предполагает использование более гибких механизмов.

The Features of Tax Policy in the Post-War Economy of the Republic of Artsakh

Gabrielyan Meri
ASU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: E. Hayriyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *tax, tax system, tax revenue, interstate loan, tax priviliges, GDP*

Since the independence declaration in the Republic of Artsakh, a flexible tax policy has been implemented. In the post-war period, by providing privileges to business entities, it was possible, despite the decrease in their own incomes, to ensure the revival of the economy. However, the recent events pose new challenges to the tax policy, and as a result, the tax policy of the Artsakh Republic implies the use of more flexible mechanisms.

Արտահանման պետական աջակցման քաղաքականության վերլուծությունը դրամի արժևորման արդի պայմաններում ՀՀ-ում

Գոգչյան Մոնիկա
«ՎՊՀ» հիմնադրամ, Կառավարում, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Բարսեղյան

Հանգուցային բառեր. *ՀՀ արտահանում, արտահանման կառուցվածք, արտահանման առաջանցիկ ոլորտներ, արտահանման խթանման ուղիներ, դրամի արժևորում, հարկային արտոնություններ*

Ներածություն

2022 թ.-ին արտահանման աճի տեմպը ցուցաբերել է անկանխատեսելի տատանումներ, ինչը առավել մեծ հարված է հասցրել արտահանողներին: ՌԴ-ի և Ուկրաինայի միջև հակամարտության արդյունքում նախորդ տարում ռուբլու, եվրոյի, դոլարի նկատմամբ դրամի արժևորման բացասական հետևանքները իրենց ուղիղ ազդեցությունն են ունեցել արտահանման ոլորտի վրա:

Այսօր մեր տնտեսությունը կրում է դրամի արժևորման բացասական հետևանքները նապահովագրված չէ անցանկալի դրսևորումներից, քանի որ ռուս-ուկրաինական պատերազմը շարունակվում է, իսկ արտարժույթը ՀՀ դրամի նկատմամբ շարունակում է ցուցաբերել ոչ կայուն ցուցանիշներ: Նման հիմնախնդիրների ուսումնասիրմանն է միտված սույն հոդվածը, որով և հիմնավորվել է հոդվածի հրատապությունը և առաջնահերթությունը:

ՀՀ արտահանման քաղաքականության տեսամեթոդական հիմքերը

Ապրանքների և ծառայությունների արտահանումը յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար ունի անվիճելի կարևորություն: Արտահանումը ՀՆԱ-ի մի մասն է, հետևաբար դրա աճը ուղղակիորեն մեծացնում է ՀՆԱ-ի ծավալը: Փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների համար արտահանումը արտարժութային եկամուտների աղբյուր է, որը կարևոր դերակատարում է ստանում տնտեսության արտաքին կայունության ապահովման առումով: Արտահանման միջոցով երկրները հնարավորություն են ստանում դուրս գալ արտաքին՝ ավելի մեծ շուկաներ: Սակայն այն տնտեսությունները, որոնք բնութագրվում են ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման մեծ ծավալներով, զգալի կախվածություն ունեն արտաքին շուկաներից, ուստի այնտեղ տեղի ունեցող ցնցումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ այդ տնտեսությունների վրա: Նշված խնդիրը կարող է լուծում ունենալ, եթե ապահովվի արտահանման կառուցվածքի և ուղղությունների դիվերսիֆիկացիա: Զուտ արտահանման մեծությունը ունի ուղղակի ազդեցություն ՀՆԱ-ի վրա, հետևաբար արտահանման ծավալների աճն արդեն դրական երևույթ է տնտեսության համար: Մյուս կողմից՝ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումը կարևորվում է երկրի արտարժութային եկամուտների ապահովման տեսանկյունից: Այսպես՝ արտահանողները, վաճառելով ապրանքը արտերկրում, ձեռք են բերում արտարժույթ, որը ներքին տնտեսությունում

փոխարինում են դրամով՝ հետագա արտադրության կազմակերպման ծախսերը հոգալու համար: Արդյունքում ներքին տնտեսությունում ձևավորվում է արտարժույթի պաշար, որը կարող է օգտագործվել ինչպես ներմուծված ապրանքների դիմաց վճարումներ կատարելու, այնպես էլ ֆինանսական համակարգի կայունության ապահովման, արտաքին պարտքի սպասարկման և այլ կարևոր նպատակների համար: Ելնելով վերոհիշյալից՝ այսօր երկրների մեծ մասը վարում է արտահանման խթանմանը միտված քաղաքականություն [1, 1]:

ՀՀ արտահանման քաղաքականության կառուցվածքային փոփոխությունները դրամի արժևորման արդի փուլում 2022-2023 (առաջին եռամսյակ) թթ.

Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպը 2022 թ. վերջին ամիսներին շարունակ դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: Արտահանման ծավալների ամենաբարձր աճը գրանցվել է սեպտեմբերին՝ կազմելով 158.1 %, որից հետո աճի տեմպը դանդաղել է՝ դեկտեմբերին կազմելով 90.2 %: Արտահանման ծավալների ամենացածր աճը գրանցվել է մարտին՝ կազմելով 5,3 %: Նախորդ տարի Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալը $ 5 մլրդ 360 մլն է եղել, 2021-ի համեմատ 77.7 %-ով ավելի: Իսկ ներմուծումը կազմել է $ 8 մլրդ 768 մլն, 2021-ի համեմատ 63.5 %-ով ավելի: Համեմատության համար դիտարկենք 2020-2023 (առաջին եռամսյակ) թթ. Արտահանման միտումները:



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2020	22.4	3.7	-4.1	-29.5	-8.3	0.1	-5.2	-2	6.8	-2.1	-19.1	8.7
2021	-7.6	-0.1	19.9	64.5	37.9	32	24.9	14.9	6.8	15.7	43	14.3
2022	51.9	30.4	5.3	21.9	33.9	69.8	84.5	107.5	158.1	139.2	104.8	90.2
2023	14.8	11.3	14									

Գծապատկեր 1. ՀՀ արտահանման միտումները, (%) 2020-2023 (առաջին եռամսյակ) թթ.

Արտահանման ամենամեծ ծավալները շարունակում են արձանագրվել Ռուսաստանի ուղղությամբ: Վերոնշյալ ժամանակահատվածում Հայաստանից Ռուսաստան արտահանման ծավալներն աճել են 136.82 %-ով կամ $811.54 մլն-ով և կազմել $1.405 մլրդ: Ռուսաստանին է բաժին ընկնում արտահանման ծավալի 40.03 %-ը: Երկրորդը ԱՄԷ-ն է՝ $278.97 մլն դոլար, 7.95 %: Եռյակը եզրափակում է Չինաստանը՝ 269.0 մլն դոլար կամ 7.67 %: Չորրորդ հորիզոնականում Շվեյցարիան է՝ $194.69 մլն, կամ 5.55 %: Բուլղարիան հինգերորդն է՝ $187.31 մլն կամ 5.34 %: Վեցերորդ տեղում Իրաքն է՝ $168.65 մլն կամ 4.81 %: Յոթերորդը Նիդերլանդներն է՝ $163.48 մլն կամ 4.66 %: Ութերորդ հորիզոնականում Վրաստանն է՝ $122.45 մլն կամ 3.49 %: Իններորդն Իրանն է՝ $84.65 մլն կամ 2.41 %: Տասնյակը եզրափակում է Գերմանիան՝ $80.95 մլն կամ 2.31 %:

Բացի նշված երկրները՝ այլ երկրներ ևս որոշակիորեն նպաստել են արտահանման աճին, սակայն ավելի համեստ կշռով: Այդ երկրների թվում են օրինակ Բելգիան, Իտալիան, Լեհաստանը և այլն: Որոշ երկրների պարագայում էլ բացասական միտումներ են գրանցվել, ինչպես օրինակ Կանադայի, Կորեայի Հանրապետության և Չեխիայի դեպքում: Սակայն քանի որ այս երկրները մեծ կշիռ չունեն ՀՀ-ի արտահանման կազմում, նրանց ուղղությամբ գրանցված անկումները «ճակատագրական» չեն եղել ՀՀ արտահանման համար:

2023 թ.-ի հունվարին Հայաստանի ամենամեծ արտահանումը բաժին է ընկել Ռուսաստանին՝ $ 354 մլն 925 001, ինչը 5,2 անգամ ավելի է նախորդ տարվա հունվարի համեմատ: Ծավալով երկրորդ տեղում դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանումն է: Հունվարին արտահանվել է $46 մլն 563 000 ապրանք, ինչը 14,1 անգամ գերազանցում է նախորդ տարվա հունվարի համեմատ: Բացի այդ, խոշոր արտահանում կատարվել է դեպի Չինաստան՝ $40 մլն 458 004 չափով՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճելով 12 %-ով: Հայաստանից արտահանման մեծ ծավալ է իրականացվել նաև Նիդեռլանդներ՝ $30 մլն 175 հազար, 2022 թ.-ի հունվարի համեմատ ցուցանիշն աճել է 29,5 %-ով: Իրաք արտահանումն աճել է 25,5 %-ով՝ կազմելով $19 մլն 563 005: Դեպի հարևան Վրաստան արտահանումը 2023 թ.-ի հունվարին կրճատվել է 11,5 %-ով՝ կազմելով $6,591,009:



Գծապատկեր 2. Նշված երկրների հիմնական տեսակարար կշիռը ՀՀ արտահանման կառուցվածքում, %, 2021 թ.



Գծապատկեր 3. Նշված երկրների հիմնական տեսակարար կշիռը ՀՀ արտահանման կառուցվածքում, %, 2022 թ.

Ինչպես տեսնում ենք, միայն առաջին հինգ երկրներին բաժին է հասնում ՀՀ արտահանման մոտ 60 %-ը, որը ցույց է տալիս, որ արտահանումն, ըստ երկրների, շարունակում է ոչ դիվերսիֆիկացված մնալ:

Նույն պատկերն է նաև ըստ ապրանքների բաժանումը, որտեղ հաստատուն դիրքերում է մնում հանքահումքը: Արտահանման 19 %-ը կազմել է հանքահումքը, 16.4 %-ը՝ պատրաստի սնունդը: 2022 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալներով՝ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքա-

խմբի արտահանման շուրջ 3.1 անգամ աճով, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 18.5 %, ինչպես նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 12 անգամ աճով, որը 20.8 % նպաստում է ունեցել արտահանման աճին: Այս երկու ապրանքախմբերի բարձր աճերը, ինչպես նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 5.6 անգամ աճը (նպաստումը՝ 6.3 %) պայմանավորված են վերարտահանմամբ: Նշանակալի են եղել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 16,4 % և 8,6 % [9]:



Գծապատկեր 4. ՀՀ արտահանումը 2021թթ. ըստ ապրանքախմբերի



Գծապատկեր 5. ՀՀ արտահանումը 2022 թթ. ըստ ապրանքախմբերի

Երկկողմանի փոխարժեքներ: ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 2022 թ.-ին արժևորվել է, սակայն տարեկան արդյունքներով էապես արժևորվել է 2021 թ.-ի համեմատ: ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022 թ.-ին արժևորվել է շուրջ 15.6 %-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 29.4 %-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպն ավելի ցածր է եղել՝ կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 5.5 %: Դրամի արժևորումը բնականաբար իր բացասական ազդեցությունն է թողել առևտրային հաշվեկշռի վրա: Պահուստները հոկտեմբերին նվազել են 92 միլիոն ԱՄՆ դոլարով՝ հասնելով $ 3.67 մլրդ.՝ ապահովելով 4.9 ամսվա ներմուծման ծածկույթ:



Գծապատկեր 6. Անվանական փոխարժեքի միտումները և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ/դոլար)



Գծապատկեր 7. Անվանական փոխարժեքի միտումները և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ/եվրո)



Գծապատկեր 8. Անվանական փոխարժեքի միտումները և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ/ռուբլի)

2023 թ.-ի առաջին եռամսյակում ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպը շարունակում է արագանալ: Հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 23.9 %-ով, եվրոյի նկատմամբ՝ 29.5 %-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 7.0 %-ով: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը խորացել է, սակայն ՌԴ ռուբլու նկատմամբ ընդհակառակը՝ մեղմվել է: Միևնույն ժամանակ, ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է արժևորվել նախորդ ամիսների համեմատ (հունվարին միջին փոխարժեքը կազմել է 5.7 դրամ մեկ ռուբլու համար, իսկ մարտին հասել է 5.1 դրամի), ինչը կարող է լրացուցիչ բացասական ազդեցություն ունենալ ՌԴ-ում ՀՀ ապրանքների մրցունակության վրա [7]:

Արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման արտոնությունները ՀՀ-ում

ՀՀ-ն 2015 թ.-ին հունվարի 2-ից պաշտոնապես հանդիսանում է ԵԱՏՄ անդամ և կիրառում է ԵԱՏՄ նորմատիվ իրավական բազայի դրույթները՝ մաքսասակագնային և սակագնային կարգավորման մասով: ՀՀ-ն ապրանքների ներմուծման ժամանակ կիրառվում է ԵԱՏՄ միասնական սակագինը, Պայմանագրին կից 4-րդ հավելվածում ՀՀ տնտեսության մի շարք զգայուն ապրանքների համար ՀՀ կողմից անցումային շրջանում կիրառվում են ԵԱՏՄ մաքսային սակագներից տարբերվող մաքսատուրքերի դրույքաչափեր: 2003 թ.-ի փետրվարի 5-ին ՀՀ-ն պաշտոնապես հանդիսանում է ԱՀԿ 145-րդ անդամ: Որպես ԱՀԿ անդամ՝ ՀՀ-ն օգտվում է առավել բարենպաստ ռեժիմից ԱՀԿ անդամ բոլոր երկրների հետ հարաբերություններում: ՀՀ-ն ունի ազատ առևտրի ռեժիմ Ուկրաինայի, Մոլդովայի, Տաջիկստանի, Վրաստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի հետ: ԵԱՏՄ ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, ԻԻՀ միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիրը ստորագրվել է մայիսի 17-ին Աստանայում և ուժի մեջ է մտել 2019 թ.-ի հոկտեմբերի 27-ից: Համաձայն «ԵԱՏՄ մասին» 2014 թ.-ի մայիսի 29-ի պայմանագրի 36-րդ հոդվածի՝ զարգացող և առավել թույլ զարգացած երկրների տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով ԵԱՏՄ անդամ երկրները կարող են տրամադրել սակագնային արտոնություններ՝ ԵԱՏՄ սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների և առավել թույլ զարգացած երկրներից ծագում ունեցող ապրանքների նկատմամբ՝ միակողմանի հիմքով: Զարգացող երկրների ծագում ունեցող արտոնյալ ապրանքների համար ԵԱՏՄ մաքսային տարածք: Մի քանի զարգացած երկրներ՝ ԱՄՆ-ն, Կանադան, Շվեյցարիան, Ճապոնիան և Նորվեգիան, ՀՀ-ին տրամադրում են արտոնությունների ընդհանրացվածված համակարգից օգտվելու հնարավորություն: ՀՀ-ն կայուն զարգացման և արդյունավետ կառավարման համար ԵՄ երկրների կողմից տրամադրվում է արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ, որը թույլ է տալիս եվրոպական շուկա մի շարք ապրանքատեսակներ արտահանել զրոյական կամ ցածր մաքսատուրքի դրույքաչափերով: 2018 թ.-ի հունվարի 1-ից գործում է «Registered EXporter System» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակ-

ներում ապրանքների ծագման ինքնահավաստագրման նոր էլեկտրոնային համակարգը: ՀՀ-ից ապրանքներ արտահանելիս համապատասխան երկրի կողմից տրամադրվող արտոնություններից օգտվելու նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրամադրվում են ապրանքների ծագման երկրի որոշման հաստատող հավաստագրեր: ՀՀ-ն ԱՊՀ անդամ երկիր է 1992 թ.-ի փետրվարի 18-ից և կիրառում է ԱՊՀ նորմատիվ իրավական բազայի դրույթները՝ մաքսասակագնային և սակագնային կարգավորման մասով: 2011թ.-ի հոկտեմբերին նոր ազատ առևտրի համաձայնագիր ստորագրվեց ԱՊՀ 11 վարչապետներից 8-ի կողմից՝ Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, ՌԴ, Տաջիկստան և Ուկրաինա պետերբուրգյան հանդիպման ժամանակ: 2013 թվականի դրությամբ այն վավերացվեց Ուկրաինայի, Ռուսաստանի, Բելառուսի, Մոլդովայի և ՀՀ-ի կողմից և ուժի մեջ մտավ միայն այդ երկրների միջև: Ազատ առևտրի պայմանագիրը մի շարք ապրանքների համար վերացրեց արտահանման և ներմուծման մաքսատուրքերը, բայց այն պարունակում էր նաև մի շարք բացառություններ, որոնք ի վերջո նույնպես պետք է վերացվեին: Պայմանագիր ստորագրվեց նաև արտարժույթի կարգավորման և վերահսկման հիմնական սկզբունքների հիման վրա ԱՊՀ նույն 2011 թվականի հանդիպման ժամանակ [8]:

Արտահանման առաջանցիկ աճի հնարավորություն ունեցող ոլորտները ՀՀ-ում

Հայտնի է, որ ՀՀ ներքին շուկան շատ սահմանափակ է, հետևաբար ՀՀ տնտեսությունը չի կարող երկարատև զարգացում ունենալ՝ բավարարելով մեծամասշտաբ ներքին պահանջարկը: Փոխարենը՝ արտաքին պահանջարկը Հայաստանի համար գրեթե անսահմանափակ մեծություն է և կարող է տնտեսության հետագա զարգացման շարժիչ ուժ դառնալ: Ուստի պատրաստի արտադրանքի արտահանումը կարող է ՀՀ հետագա տնտեսական զարգացման գրավականը դառնալ: Ուստի հարկ ենք համարում քննարկել արտահանման աճի ընդլայնման հնարավորությունները՝ ճիշտ թիրախավորման պարագայում: Բնական է, որ պետությունը չի կարող խթանել տնտեսության բոլոր ճյուղերի արտահանումը: Առավել խելամիտ կլինի բացահայտել համեմատական կամ մրցակցային առավելություն ունեցող ճյուղերը, գնահատել դրանց արտահանման հնարավորությունները, որից հետո էլ անցնել արտահանման խրախուսման ռազմավարությանը:

Անդրադառնանք ՀՀ-ում արտահանման ներուժ ունեցող ոլորտներին՝ առաջարկելով յուրաքանչյուրի արտահանման և տնտեսական աճի փոխկապվածության համար անհրաժեշտ մեխանիզմներ:

Միջին և բարձր տեխնոլոգիատարության: ՀՀ արտահանման տվյալները ցույց են տալիս, որ այս ոլորտի արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը ողջ արտահանման մեջ դիտարկվող ժամանակահատվածում նվազել է, ինչը մեր կողմից դիտվում է որպես բացասական երևույթ: 2000 թ. ՀՀ-ում ռազմավարական ուղղություն հռչակվեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ անցում կատարելով դեպի գիտելիքահենք տնտեսություն: Սինգապուրի և այլ երկրների փորձը վկայում է, որ ՏՏ ոլորտի հիման վրա զարգացումը կարող է

նպաստել տնտեսության թռիչքաձև զարգացմանը: Ուստի այժմ ՀՀ-ում ՏՏ ոլորտի զարգացումը առաջնայիններից մեկը հռչակելը, եթե ոչ բավարար, ապա գոնե անհրաժեշտ պայման է համաշխարհային տնտեսական զարգացումներին համընթաց քայլելու համար:

ՏՏ ոլորտն արագ փոփոխվող ոլորտ է, ուստի ոլորտի մասնագիտական կրթության առումով պետք է ապահովել անհրաժեշտ ճկունություն՝ այդ փոփոխություններին արձագանքելու համար: Ճիշտ է՝ ներկայումս որոշակի քայլեր արվում են այդ ուղղությամբ, սակայն դրանք դեռևս բավարար չեն: Հնդկաստանը, Իռլանդիան և Իսրայելը արագ են զարգացել ծրագրավորման և ՏՏ ծառայությունների ոլորտում: Ընդ որում, այս 3 երկրների արագ աճի հիմքում ընկած էր նույն գծապատկերը. օգտագործում էին երկրի առավելությունները (էժան աշխատուժ, անգլիախոսություն, տաղանդի առկայություն և այլն), օտարերկրյա ներդրումներ էին ներգրավում, ուժերը կենտրոնացնում էին նպատակային խմբերի վրա: ՀՀ-ն ևս կարող է կիրառել զարգացման այս մոդելը՝ հաշվի առնելով մեր երկրում ՏՏ ոլորտի առանձնահատկությունները: Մասնավորապես, ոլորտին առնչվող կարևոր խնդիր է այն, որ արտադրված բարձր տեխնոլոգիական արտադրանքը գրեթե ամբողջությամբ արտահանվում է, ինչի արդյունքում էլ ՀՀ-ում այս ոլորտի զարգացումը դեռևս չի տալիս ակնկալվող դրական արդյունք տնտեսության մյուս ոլորտների զարգացման համար: Տնտեսական աճին նպաստելու առումով կարող ենք ասել, որ ոլորտի արտադրանքի արտահանման աճը կնպաստի ակնկալվող տնտեսական աճի ձեռքբերմանը:

Հանքահումքային արդյունաբերություն: Ռեսուրսատար հաջորդ ենթաճյուղը հանքահումքային արդյունաբերությունն է, որի արտահանումը (ներառյալ՝ մետաղական չվերամշակված հանքաքարը) կազմում է ամբողջ արտահանման զգալի մասը: Ներկայումս նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրները հրաժարվում են հումքի ուղղակի արտահանումից: ՀՀ-ի համար առավել ևս հումքային ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը չի կարող նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը: Որոշ տնտեսագետներ պնդում են, որ ոչ մի վատ բան չկա ռեսուրսների արտահանման մեջ և բերում են փաստարկներ, որ այնպիսի երկրներ, ինչպիսիք են, օրինակ ՌԴ-ն և ԱՄՆ-ը, ևս արտահանում են ռեսուրսներ: Սակայն Ռուսաստանի և ԱՄՆ-ի ռեսուրսներով հարուստ լինելու հանգամանքը համեմատելի չէ ՀՀ-ի նման ռեսուրսներով ոչ հարուստ երկիր լինելու հանգամանքին: Եթե նրանք կարող են իրենց թույլ տալ արտահանել ռեսուրսներ, ապա մեր ռեսուրսների առկա պաշարները մեզ նման «ճոխություն» չեն կարող թույլ տալ: Բացի այդ, ռեսուրսների միջազգային գները ենթակա են խիստ տատանումների, ինչը բավականին մեղմ է պատրաստի արտադրանքի պարագայում, և, հետևաբար, եթե մեր արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն ռեսուրսները, ապա մեր տնտեսությունը, ըստ էության, կախված է, այդ գների «քմահաճույքներից»: Ներկայումս ՀՀ-ում հանքահումքային ապրանքների արտահանումը կազմում է ՀՀ ողջ արտահանման մոտ 50 %-ը: Հետևապես՝ ռեսուրսների համաշխարհային գների տատանումը շատ

ցավալի հետևանքներ կարող է ունենալ ՀՀ-ի համար: Ընդ որում, համաշխարհային տնտեսությունում ներկայումս մեծ արագությամբ զարգանում է արտադրության և արտահանման մի ուղղություն, որը կոչվում է ներարտադրական առևտուր: Այսինքն՝ զարգացած երկրներն իրենց կողմից ստեղծվող պատրաստի արտադրանքի միջանկյալ փուլերից որևէ մեկը արտապատվիրում են որևէ զարգացող երկրի, օրինակ՝ այն պատճառով, որ տվյալ փուլը առավել աշխատատար է, իսկ զարգացող երկրներում աշխատուժն առավել էժան է: Ուստի ՀՀ-ն կարող է առկա ռեսուրսները հասցնել վերամշակման որոշակի փուլի, հետո միայն դրանք արտահանել: Այս պարագայում ստեղծված ավելացված արժեքը կլինի առավել բարձր, որն էլ կնպաստի տնտեսության հետագա զարգացմանը, ինչը չի կարելի ասել այն դեպքի համար, երբ պարզապես արդյունահանվում և արտահանվում է հումքը (այս իրավիճակում տնտեսության զարգացում տեղի չի ունենում, կամ գոնե նվազ չափով է տեղի ունենում): Այդ իսկ պատճառով էլ հանքահումքային արդյունաբերության արտադրանքի արտահանումը անհրաժեշտության դեպում պետք է պետության կողմից սահմանափակվի, նույնիսկ բավականին բարձր մաքսերի կիրառմամբ հումքի այն տեսակների նկատմամբ, որոնք երկրի ներսում վերամշակելու իրատեսական հնարավորություններ ունեն: Դա նշանակում է, որ պետք է հրաժարվել արտահանման մոտ 50 %-ն ապահովող մասից, սակայն պետք է հաշվի առնել, որ չարտահանված հումքային ռեսուրսներով կարելի է տեղում պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն նախաձեռնել:

Հանքահումքային արտադրանքի արտահանման սահմանափակման տեսանկյունից կարևորում ենք նաև պեռլիտի արտահանումը (ինչպես գիտենք՝ ՀՀ-ն ունի պեռլիտի զգալի պաշարներ), քանզի այս ապարը հնարավոր է կիրառել ամենատարբեր արտադրություններում՝ սկսած շինարարականից մինչև կենցաղային սնունդ ու բժշկություն: Այսպիսով, լայն հնարավորություն է ընձեռվում պեռլիտի արդյունահանման արդյունքում տնտեսության բազմաթիվ ոլորտների զարգացման համար: ՀՀ-ն, ունենալով բնական քարանյութերի բավական պաշարներ, կարող է դառնալ նաև բնական քարանյութերից արտադրվող բազմազան այլ արտադրատեսակների՝ տուֆաքարերից, բազալտից, գունավոր մետաղներից, գրանիտից արտադրված սալիկներից, ինչպես նաև պեմզայից արտադրվող նյութերի արտահահանող: Վերոնշյալ փոփոխությունները կնշանակեն արտահանման կառուցվածքի որակական բարելավում: Իհարկե, կարիք չկա սահմանափակել հանքահումքի բոլոր տեսակների արտահանումը: Այսօր ՀՀ-ում հազվագյուտ մետաղական տարրերը (ռենիում, թելուր, սելեն, ինդիում և այլն) հիմնականում չեն արդյունահանվում, քանզի բացակայում են երկրում դրանց կիրառման արտադրական ոլորտները, այնինչ դրանք շատ թանկ արժեն և համաշխարհային շուկայում առկա է բավականին մեծ պահանջարկ հատկապես զարգացած երկրների կողմից (դրանք օգտագործվում են հիմնականում գիտափորձերում): Իսկ ՀՀ-ում կիրառման նման հնարավորություններն առաջիկայում այնքան էլ իրատեսական չեն: Հետևաբար, հազվագյուտ մետաղների առկա պաշարների մի

մասի արտահանման հեռանկարը կարող է ոլորտ բերել զգալի օտարերկրյա ներդրումներ՝ նախաձեռնելով արդյունահանման աշխատանքներ, ինչն էլ անուղղակիորեն կհանգեցնի հարակից արտադրությունների զարգացմանը:

Ադամանդագործության և ոսկերչության ոլորտը: Անդրադառնալով ադամանդագործության և ոսկերչության ոլորտին՝ պետք է նշել, որ այստեղ մասնագիտացումը պետք է ընթանա առավելապես ոսկերչական իրերի, քան ադամանդի վերամշակման արտադրությունում, քանի որ չնայած այն հանգամանքին, որ վերամշակված ադամանդի արտահանման արժեքը մեծ է, սակայն դրանում ներառված է նաև դրա ներմուծման ոչ փոքր արժեքը, իսկ իրականում հավելյալ արժեքը, որ ստեղծվում է ադամանդիվերամշակման պարագայում, էականորեն զիջում է ոսկերչական իրերի արտադրության արդյունքում ստեղծվող հավելյալ արժեքին: Ոսկերչական իրերի արտահանումը ընդլայնելու և նաև ոսկու փոշու արտահանումը պատրաստի արտադրանքի արտահանմամբ փոխարինելու համար անհրաժեշտ է ստեղծել այս ճյուղի զարգացման բարենպաստ միջավայր: Այդ առումով ճյուղի համար հատկապես կարևոր նշանակություն ունի ապրանքային հայտնի նշանի բացակայության խնդրի լուծումը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ՀՀ ձեռնարկությունների համար հիմնախնդիրների լուծման հեռանկարային տարբերակ կարող է լինել արտասահմանյան ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը: Սրանից բացի՝ կարելի է ոսկերչության ոլորտի արտահանման և արտադրության միջև ամուր կապ ստեղծելու նպատակով կիրառել աշխարհում բազմիցս օգտագործվող մոդելը ոսկերչական կլաստերի հիմնումը: Շատ երկրներում ոսկերչական կլաստերները հիմնվում են ոսկու հանքերի հարևանությամբ գտնվող տարածքներում, որտեղ և տեղափոխվում են բնակվելու ոսկերիչները:

Գյուղմթերքի արտադրություն: Գյուղմթերքի արտադրության և սննդարդյունաբերության ոլորտների համեմատական և մրցակցային առավելություններից մեկը էկոլոգիապես մաքուր արտադրանքի թողարկումն է: ՀՀ գյուղատնտեսական արտադրանքը զարգացող (Հնդկաստան, ՌԴ և այլն) և մի շարք զարգացած երկրների (օրինակ՝ ԱՄՆ) կողմից արտադրվող գենոմոդիֆիկացված արտադրանքների համեմատությամբ կարելի է համարել էկոլոգիապես մաքուր, որի համաշխարհային պահանջարկը մեծ է: Այս առավելությունը լիովին օգտագործելու, ինչպես նաև այս առավելության կորստին նպաստող հանգամանքները, ինչպիսիք են հանքերի շահագործումը, բաց պոչամբարների առկայությունը և այլն, նվազեցնելու պարագայում կկարողանանք գյուղմթերքի համաշխարհային շուկայում գրավել ուրույն տեղ: Սակայն անհրաժեշտ է, որ այս ամենին զուգահեռ իրականացվի նաև գյուղմթերքի վերամշակման ոլորտների զարգացում ինչպես արտադրության, այնպես էլ արտահանման ուղղությամբ: Ինչպես գիտենք, ՀՀ-ում առկա է գյուղատնտեսական հողերի թերզբաղվածություն, հետևաբար լրիվ իրատեսական է գետնախնձորի, մասուրի ու թեյի վարդի պլանտացիաներ ստեղծելու գաղափարը, առավել ևս, որ նշված մշակաբույսերի աճեցումը հնարավորություն կտա զարգացնելու նաև դրանց հետ առնչվող շատ հարակից ճյուղեր:

Հարկ է անդրադառնալ նաև հայկական մշակույթի անբաժան մաս կազմող գինեգործության ոլորտին: Ոլորտի հետագա զարգացման հիմնաքարեր կարող են հանդիսանալ առկա պատմությունն ու ավանդույթները, խաղողի աճեցման համար բարենպաստ բնակլիմայական պայմանները, ինչպես նաև տեղական յուրահատուկ խաղողի սորտերի առկայությունը: Որպես արտահանման թիրախային շուկաներ՝ կարող են հանդիսանալ ՌԴ-ն և Չինաստանը՝ հիմք ընդունելով դրանց բնակչության մեծ թվաքանակը, ինչպես նաև մեծաքանակ հայկական սփյուռք ունեցող երկրները: Ինչ վերաբերում է օղու արտադրության ոլորտի զարգացմանը, նշենք, որ վերջին շրջանում ՀՀ-ում աստիճանաբար տարածում է ստանում ոչ ավանդական մրգային օղիների արտադրությունը, ինչպիսիք են դեղձի, վայրի տանձի, մամուխի, հոնի և այլ տեսակների օղիները:

Պատրաստի հագուստի արտադրություն: ՀՀ-ում պատրաստի հագուստի արտադրությունը զարգացման զգալի հեռանկար ունի: Գործող ընկերություններից շատերը ամբողջությամբ արտահանում են իրենց արտադրանքը: Դրանց թվում են տղամարդու վերնաշապիկ արտադրող «ԻՏԱՐ», Ախուրյանի «Հագուստ», մանկական հագուստի գծով մասնագիտացած «ԴԱՎ-ԳԱՐ» և այլ ձեռնարկություններ: Ի դեպ՝ հարկ է նշել, որ 2011 թ. հունվարից ՀՀ-ում իր մասնաճյուղն է բացել աշխարհահռչակ «Իկոնոկլաստ» ընկերությունը, որի արտադրանքը հիմնականում արտահանվում է: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ ոլորտի ձեռնարկությունները բաժանվում են երկու խմբի՝ արտերկրյա ընկերություններին կարի ծառայություն մատուցողներ, և սեփական արտադրանք թողարկողներ: Արտերկրյա ընկերություններին կարի ծառայություն մատուցող ընկերությունների թիրախում հիմնականում իտալական, գերմանական, ամերիկյան և ռուսական շուկաներից արտապատվիրումների հավաքագրումն է:

Հաջորդ կարևոր ուղղությունը կոշկեղենի և կաշվե իրերի արտադրությունն է: Ոլորտի հիմնախնդիրներից է տեղական չվերամշակված կաշվե հումքը բավական մատչելի գնով Թուրքիա արտահանելուն զուգահեռ արտերկրից զգալիորեն թանկ հումք ներմուծելու միտումը: Թերևս խնդրի լուծում կարող է հանդիսանալ կաշվե հումքի վերամշակման արտադրության հիմնումը երկրում, սակայն դրա արդյունավետ գործունեությունը կասկածի տակ կլինի այնքան ժամանակ, քանի դեռ շուկայի արտադրողների մեջ գերակշռում են փոքր արտադրողները: Ուստի այստեղ ևս ճիշտ կլինի պետական ոչ պարտադրողական քաղաքականության միջոցով խթանել առավելապես միջին ու խոշոր ընկերությունների ստեղծումը: Բացի այդ՝ արտաքին շուկաներում առավել ուրույն տեղ գրավելու համար անհրաժեշտ է ստեղծել և առաջ մղել վստահելի ապրանքային նշան: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ոլորտի համեմատական և մրցակցային առավելությունները ճիշտ օգտագործելու և մարքեթինգային ճիշտ քաղաքականության վարման պարագայում կարելի է հասնել այս ոլորտի արտադրանքի արտահանման և արտադրության միջև երկկողմանի փոխկապվածության[3,208-264]:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարելի է հանդես գալ մի շարք առաջարկություններով.

- անհրաժեշտ է օտարերկրյա շուկաների մասին տրամադրել տեղեկատվություն արտահանող ընկերություններին, որպեսզի նրանք կարողանան ճիշտ կողմնորոշվել յուրաքանչյուր ապրանքային հոսքի ուղղության, արտահանելի երկրների ցանկի որոշման, արտադրանքի որակի միջազգային պահանջվող ստանդարտներին համապատասխանեցման, բրենդինգի կառավարման հարցերում,
- ուսունասիրելով Հայաստանի տնտեսական կառուցվածքը՝ անհրաժեշտ է մշակել ռազմավարություն՝ ՀՀ արտահանումը դիվերսիֆիկացնելու և նրա կշիռը ՀՆԱ-ում մեծացնելու համար,
- ՀՀ-ում իրականացնել ոսկերչական կլաստերի հիմնում: Շատ երկրներում ոսկերչական կլաստերները հիմնվում են ոսկու հանքերի հարևանությամբ գտնվող տարածքներում, որտեղ և տեղափոխվում են բնակվելու ոսկերիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀտնտեսության արտահանելի հատվածի միտումներն ու զարգացումները», «Լույս» հիմադրամ, Երևան, 2019 թ. սեպտեմբերի 13 (12էջ):
2. Լիլիթ Նորայրի Սարգսյան, Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները ՀՀ-ում, Երևան, 2019, 319 էջ:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին:
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին:
5. https://armstat.am/
6. https://www.mineconomy.am/
7. https://www.arlis.am/
8. https://hetq.am/

Анализ государственной политики поддержки экспорта в текущих условиях стабильности драма в РА

Гогчян Моника
ВГУ, Менеджмент, 3-й
Научный руководитель:
кандидат экономических наук доцент Н. Барсегян

Резюме

Ключевые слова: *экспорт РА, структура экспорта, авансовый объем экспорта, пути стимулирования экспорта, повышение курса валюты*

Экспорт товаров и услуг имеет неоспоримое значение для экономического развития каждой страны. Для стран с компактными открытыми экономиками экспорт является источником валютных поступлений, что особенно важно с точки зрения внешней экономической стабильности. Благодаря экспорту, страны получают возможность выходить на большие рынки, что частично решает проблему небольшой экономики. На данный момент объемы торговли Армении (РА) с регионом относительно стабильны, но ограничены. Это связано с двусторонней блокадой границ Армении, что, естественно, имеет негативные последствия, в первую очередь из-за чрезвычайно высоких транспортных расходов. Экспорт остается не диверсифицированным, и только пять стран составляют более 60% экспорта Армении.

The Analysis of the State Export Support Policy Under the Current Conditions of Dram Stability in RA

Gogchyan Monika
VSU, Management, 3rd year
Academic Supervisor: N. Barseghyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *RA export, structure of export, advanced amount of export, ways of promotion of export, currency increase*

The export of goods and services is of indisputable importance for the economic development of every country. For countries with compact, open economies, exports serve as a source of foreign exchange earnings, which is particularly significant from the perspective of external economic stability. Through exports, countries gain the opportunity to access larger markets, which helps alleviate the challenges posed by small economies. Currently, trade volumes between Armenia (RA) and the region are relatively stable but limited. This is due to the bilateral blockade of Armenia's borders, which naturally has negative consequences, particularly the extremely high transportation costs. Exports remain undiversified, with only five countries accounting for more than 60% of Armenia's exports.

Արցախի Հանրապետության վարկային շուկայի վերլուծությունը 2017-2022 թթ.

Գրիգորյան Լարիսա
ԱրՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Ավանեսյան

Հանգուցային բառեր. *վարկային ներդրումներ, վարկային պորտֆել, ԱՀ վարկային շուկա, ՀՆԱ, առևտրային բանկ, վարկատու կազմակերպություններ*

Շուկայական տնտեսության ներկայիս տնտեսվարման պայմաններում ցանկացած տնտեսության զարգացման անուղղակի կարգավորման գործիքը վարկերն են: Վարկերը տնտեսության մեջ լրացուցիչ իրացվելիության միջոց են և կատարում են ՀՆԱ-ի ստեղծման գործընթացում կարևոր դեր: Վարկը՝ որպես խնայողությունները ներդրումների վերածելու ձև, իրացվում է մի շարք գործառույթների միջոցով՝ միջոցների վերաբաշխում, շրջանառության ծախքերի տնտեսում, կապիտալի կենտրոնացման գործընթացի և գիտատեխնիկական առաջընթացի արագացում, ապրանքաշրջանառության սպասարկում [1,24-25]:

Յուրաքանչյուր երկրում վարկային շուկայի վիճակը կախված է երկու հիմնական գործոններից՝ տնտեսության վիճակից և դրամավարկային կարգավորող մարմնի՝ Կենտրոնական բանկի քաղաքականությունից: Տնտեսության աշխուժացումը մեծացնում է վարկերի պահանջարկը, իսկ Կենտրոնական բանկի տոկոսադրույքի նվազումը հանգեցնում է վարկերի տոկոսադրույքների նվազմանը: Զարգացման ընթացքում ԱՀ տնտեսությունը հաղթահարել է ազատագրական պայքարի կործանարար հետևանքները սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: ԱՀ-ում անկախության հռչակումից հետո իրականացվում է անկախ հարկաբյուջետային քաղաքականություն, իսկ առանձին դրամավարկային քաղաքականություն չի իրականացվում. ԱՀ տնտեսությունն իր վրա է կրում ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: ԱՀ տնտեսության զարգացման գործում առանձնակի և կարևոր դեր ունեցավ բանկային համակարգը. վերջինիս կողմից տնտեսությանը ներարկված վարկային ռեսուրսները արդյունավետ ազդեցություն ունեցան ԱՀ-ում տնտեսական աճի բարձր տեմպերի արձանագրման գործընթացում: ԱՀ-ում գործող վարկատու կազմակերպությունների մեծամասնությունը ՀՀ-ում գործող վարկատուների մասնաճյուղերն են: ԱՀ-ում վարկերը տրամադրվում են ԱՀ-ում գործող ՀՀ բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների և գրավատների կողմից: Բացառություն է կազմում միայն «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, որը միակ գլխամասային վարկային կազմակերպությունն է ԱՀ-ում:

2017-2022 թթ. ընկած ժամանակահատվածում առևտրային բանկերի վարկային պորտֆելի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է գծապատկեր 1-ում: Առևտրային բանկերի վարկերի գերակշիռ մասը կազմում են ստանդարտ վարկերը: Ստանդարտ վարկերը 2017-2019 թթ. ընկած ժամանակահատվածում

ընդհանուրի նկատմամբ կազմում են ավելի քան 99 %, երկարաձգված և ժամկետանց վարկերը չնչին մաս՝ մինչև 0,4 %: Պատկերն այլ է 2020-2022 թթ. ընկած ժամանակահատվածի համար. ստանդարտ վարկերը նվազեցին մինչև 84,9 %, իսկ երկարաձգված և ժամկետանց վարկերի ծավալն ընդհանուրի նկատմամբ աճեց՝ 2022 թ. համապատասխանաբար կազմելով 9,5 % և 5,6 % ընդհանուրի նկատմամբ:



Գծապատկեր 1. Առևտրային բանկերի վարկերի կառուցվածքը ԱՀ-ում 2017-2022 թթ. (մլն ՀՀ դրամ) [4]

2017-2021թթ. ընկած ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից ԱՀ-ում ըստ տնտեսության հատվածների վարկային ներդրումների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է գծապատկեր 2-ում: ԱՀ-ում տրամադրվող վարկերի 99,9 % ռեզիդենտներին տրված վարկերն են: 2017 թ. մինչև 2020 թ. վարկային ներդրումները ԱՀ-ում շարունակում էին աճել, 2022 թ. այն կազմել է 49701,5 մլն ՀՀ դրամ, որը. ի համեմատ 2020 թ., նվազել է 4,2 անգամ: Վարկավորման ծավալի այսպիսի կտրուկ նվազումը պայմանավորված է նրանով, որ 2020 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետության հանդեպ սանձազերծված պատերազմից հետո հանրապետությունում գործող վարկատու կազմակերպությունները դադարեցրել էին վարկերի տրամադրման գործընթացը, որն էլ պայմանավորված էր վարկային ռիսկի բարձր մակարդակով:



Գծապատկեր 2. Առևտրային բանկերի կողմից ԱՀ-ում տրամադրված վարկերը ըստ տնտեսության հատվածների՝ ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին 2017-2021 թթ. (մլն ՀՀ դրամ) [4]

Վարկային շուկայի քանակական արտահայտությունն իր էությամբ դրսևորվում է երկրի տնտեսության չափման հիմնական գործիքի՝ ՀՆԱ-ի հետ համադրմամբ, այսինքն՝ տնտեսությանը տրամադրված վարկեր /ՀՆԱ ցուցանիշի միջոցով, որի վերաբերյալ 2017-2021 թթ. ընկած ժամանակահատվածի տեղեկատվությունը ներկայացված է գծապատկեր 3-ում: Այս ցուցանիշը բանկային հատվածում մինչև 2020 թ. աճել է և 2020 թ. վերջին կազմել է 76,1 %, իսկ 2021 թ. կտրուկ նվազել և կազմել է 24,96 %: 2020 թ. ոչ բանկային հատվածի վարկային ներդրումները աճել են 4,5 %-ով, իսկ 2021 թ. նախորդ տարվա համեմատ աճել են 15,9 %-ով: 2021 թ. համաճարակի և պատերազմի հետևանքով զգալի իջել է բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման ծավալը, որը վկայում է այն մասին, որ բանկերի վարկային պոտենցիալը արդյունավետ չի օգտագործվում արտադրության աճի ֆինանսավորման գործում, որն էլ յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման կարևոր գործոն է: Չնայած 2020 թ. պատերազմին այդ տարում վարկավորման ծավալը աճել էր 2019 թ. համեմատ, սրա պատճառն այն էր, որ մինչ պատերազմը երկրում նախագահական ընտրությունների նախընտրական շրջան էր, և քաղաքական գործիչները փորձում էին բանկերի կողմից վարկերի տրամադրման ապահովման հաշվին ժողովրդի մոտ վստահություն առաջացնել:



Գծապատկեր 3. Բանկային և ոչ բանկային հատվածի վարկային ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը ԱՀ-ում 2017-2021 թթ. (մլն ՀՀ դրամ)[4]

2017-2022 թթ. առևտրային բանկերի ԱՀ-ում տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքի վերաբերյալ տվյալները ներկայացված են գծապատկեր 4-ում: Վարկային ներդրումների կազմում գերակշռում են այլ ճյուղերը, որոնք կազմում են վարկային պորտֆելի 80 %-ից ավելին 2017-2019 թթ. ընկած ժամանակահատվածում: Այլ ճյուղերի մեջ էլ գերակշռում են սպառողական և հիփոթեքային վարկերը, ինչը փաստում է, որ վարկային ներդրումների հիմնական մասը ուղղվում է սպառմանը: Չնայած 2020-2021 թթ. վարկային շուկայում տիրող պասսիվությանը՝ այլ ճյուղերի տեսակարար կշիռը նվազեց ավելի մեծ չափով՝ ի համեմատ նախորդ տարիների՝ 2021 թ. կազմելով 61,4 %: 2020 թ. ճյուղային կառուցվածքում նախորդ տարիների նկատմամբ համեմատական աճ գրանցեց արդյունաբերությունը՝ 27,5 %, իսկ արդեն 2021 թ. աճ դիտվեց շինարարության ոլորտի վարկավորման մեջ՝ կազմելով 10,4 %, որը 2020 թ. համեմատ 7,4 անգամ ավել է: Շինարարության ոլորտում վարկային ներդրումների աճը պայմանավորված է 2020 թ. ԱՀ դեմ սանձազերված պատերազմի արդյունքում տարածքի 75 % բռնազավթման և այդ տարածքի բնակչության տեղահանմանը, որոնց համար պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կառուցվում են բնակելի ենթակառուցվածքներ:



Գծապատկեր 4. Առևտրային բանկերի տրամադրած վարկերի ճյուղային կառուցվածքը ԱՀ-ում 2017-2021 թթ. (ընդամենի նկատմամբ, %) [4]

Այսպիսով՝ չնայած անկախության հռչակումից ի վեր ԱՀ-ում իրականացված տնտեսական բարեփոխումները կրում էին շարունակական բնույթ, և դրա ապացույցն էին հանդիսանում ԱՀ տնտեսությունում արձանագրված բարձր տնտեսական աճի տեմպերը, 2020 թ. սեպտեմբերին Արցախի Հանրապետության հանդեպ սանձազերծված պատերազմից հետո ԱՀ տնտեսությունն կանգնեց սկզբունքորեն այլ հրամայականի առջև: Հանրապետությունում գործող վարկատու կազմակերպությունները խուսափեցին վարկ տրամադրելուց՝ հաշվի առնելով հետպատերազմյան իրողություններում ձևավորված վարկային ռիսկի բարձր մակարդակը, որը պայմանավորված էր ինչպես վարկի վերադարձելիության, վարկի ոչ նպատակային օգտագործման, այնպես էլ քաղաքական դաշտում առկա անընդհատ աճող անորոշության հետ: ԱՀ-ում տրամադրված վարկային պորտֆելի գերակշիռ մասը բաժին է ընկնում Արցախբանկ ՓԲԸ-ին: ԱՀ տարածքում տրամադրված վարկեր/ընդհանուր վարկային պորտֆել տեսակարար կշռի առավելագույն ցուցանիշը պատկանում է Արցախբանկ ՓԲԸ-ին [2, 279]: Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև նպատակ ունենալով սոցիալական աջակցություն ցուցաբերել Արցախի Հանրապետության բնակչությանը՝ ԱՀ կառավարության կողմից որոշում կայացվեց, համաձայն որի՝ ֆինանսական աջակցության մեխանիզմներ մշակվեցին վարկառուների տարբեր խմբերի համար: Մշակվել և գործի է դրվել ԱՀ կառավարության «Պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիր»-ը [3]: Ծրագրով սահմանված են սպառողական, հիփոթեքային և բիզնես վարկեր ունեցող վարկառուների վարկային պարտավորությունների՝ պետության կողմից մարման մեխանիզմներ: 2021 թվականի մարտ ամսին կայացված ԱՀ կառավարության որոշումը դրական ազդեցություն ունեցավ գործող վարկային պորտֆելի վերադարձելիության գործընթացի վրա, սակայն հանրապետությունում 2021 թվականի երկրորդ կիսամյակից սկսած վարկային ծառայությունների առաջարկի աճ տեղի չունեցավ:

ԱՀ վարկային շուկայում առանձնահատուկ դեր ունեն նաև տեղական «Արցախի ներդրումային հիմնադրամը» և «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը», որոնք 2007 թվականից ի վեր ներգրավված են ֆինանսական աջակցության տարբեր ծրագրերում՝ նպաստելով հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նշված հիմնադրամները, որոնք գրանցում չեն ստացել ՀՀ Կենտրոնական բանկում, տրամադրում են փոխառություններ, որոնք կարևոր դերակատարություն ունեն ԱՀ վարկային շուկայում: Այսպես, 2020 թ. և 2021 թ. Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից տրամադրվել են համապատասխանաբար 67,772,508 և 40,854,274 հազար դրամի չափով փոխառություններ [7], իսկ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից՝ 3,820,745,3 և 4,811,070,6 հազար դրամի չափով փոխառություններ [8]: Տրված փո-

խառությունների կարևորությունը բազմապատկվել է հետպատերազմյան ժամանակահատվածում:

Վարկային ծառայությունների հասանելիության մակարդակը պատերազմից հետո գտնվում է զրոյական մակարդակի վրա: 2021 թվականի երրորդ եռամսյակից սկսած ԱՀ-ում բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից սկսեցին տրամադրվել միայն ոսկու գրավով և ավանդի գրավով ապահովված սպառողական վարկեր: Նշված վարկատեսակների տրամադրումը պայմանավորված էր վերջիններիս՝ համեմատաբար ցածր ռիսկային համարվելու հանգամանքով: Հանրապետությունում գործող վարկային կազմակերպություններից է «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ն [5], որն իր գործունեությունը հիմնականում իրականացնում է Արցախի Հանրապետության տարածքում, ընկերության միակ բաժնետերը Արցախի ներդրումային հիմնադրամն է, որի միջոցով իրականացվում է պետական աջակցության քաղաքականությունը՝ մասնակիորեն սուբսիդավորելով հիփոթեքային վարկերի տոկոսադրույքները, մասնակիորեն սուբսիդավորելով նախնական մուծումները՝ անտոկոս վարկերի տեսքով, գյուղական բնակավայրերի բնակչությանը վարկեր տրամադրելով և այլ եղանակներով [6]: Վարկային կազմակերպությունը տրամադրում է սպառողական, հիփոթեքային ու բիզնես վարկեր Արցախի Հանրապետության տարածքում: Չնայած վարկային ռիսկի ձևավորված բարձր մակարդակին՝ ընկերության կողմից որոշում կայացվեց շարունակել վարկային ծառայությունների մատուցումը՝ հանրապետությունում վարկավորման գործընթացին աջակցելու նպատակով: Բացի նշվածից, ընկերության կողմից տրամադրվող վարկերի ձևակերպման գործընթացը էականորեն պարզեցվել է, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնել վարկային ծառայություններից օգտվողների շրջանակը:

2022 թ. դեկտեմբերի 12-ին ադրբեջանական կողմը բնապահպանական կեղծ պատրվակով փակել է Լաչինի միջանցքը, որն Արցախը Հայաստանի և արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհն է, և որը առաջացրել է մի շարք խնդիրներ Արցախում: ԱՀ-ում դադարել է ֆինանսական հոսքը, խաթարվել է տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը, ինչն էլ անդրադարձել է վարկերի վերադարձելիության վրա: Շրջափակման արդյունքում տնտեսության տարբեր ոլորտներում՝ գյուղատնտեսություն, արտադրական ոլորտ, էներգետիկ ոլորտ, ի հայտ եկած մի շարք հիմնախնդիրները վկայում են այն մասին, որ ԱՀ-ում վարկային շուկայի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրներից մեկը վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի համակարգի թերզարգացվածությունն է: Եվ չնայած այն հանգամանքին, որ ներկայումս տնտեսության զարգացման կարևոր լծակներից մեկը վարկավորումն է, բայց այս պահին օբյեկտիվ իրականությամբ պայմանավորված դիտվում է վարկավորման պասսիվ դիրքորոշում: Իհարկե, հետագա զարգացման նկատառումներից ելնելով՝ տնտեսության գործունեության նկատմամբ նվազագույն պահանջը Արցախում վարկավորման գործընթացի արդյունավետ կազմակերպումն է:

Այսպիսով՝ ԱՀ-ն ունի միասնական դրամավարկային քաղաքականություն ՀՀ-ի հետ, այսինքն՝ վարկավորման գործընթացը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: Հատկապես 2020 թ. պատերազմից հետո մարտահրավերներ կան ֆինանսական ծառայությունների հասանելիության՝ մասնավորապես վարկային ծառայությունների առումով: Վարկային ծառայությունների հասանելիության հիմնախնդիրների հաղթահարման նպատակով անհրաժեշտ է, որ ԱՀ-ում գործող վարկատու կազմակերպությունները աջակցեն վարկավորման գործընթացի անընդհատության ապահովմանը, քանզի վարկավորման բացակայության դեպքում կփլուզվի երկրի ամբողջ տնտեսական համակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սահակյան Ռ., Մխիթարյան Ա., Վարկի մենեջմենթ, Երևան, «Լիմուշ» ՍՊԸ, 2013, 255 էջ:
2. Հայրիյան Եվ., Ֆինանսական ծառայությունների հասանելիության արդի հիմնախնդիրները ԱՀ-ում, Գիտական Արցախ, 2021, 3 (10), էջ 276-284:
3. ԱՀ կառավարության որոշում, «2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը հաստատելու մասին», 2021 թ., մարտի 17, N222-Ն:
4. http://www.stat-nkr.am/, 2017-2022 թթ. Արցախի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն:
5. https://fides.am/
6. http://www.aif.am/
7. http://www.auditpro.am/, հաճախորդներ, հաշվետվություն, Արցախի ներդրումային հիմնադրամ, 2021:
8. http://www.agrofund.am/, 2020 թ., 2021 թ.հաշվետվություններ:

Анализ кредитного рынка Республики Арцах в 2017-2022 гг.

Григорян Лариса
АрГУ, Финансы (по отрослям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Н. Аванесян

Резюме

Ключевые слова: *кредитные вложения, кредитный портфель, кредитный рынок РА, ВВП, коммерческий банк, кредитные организации*

Кредитный рынок Республики Арцах в разные периоды имел разный уровень развития, целью статьи является анализ кредитного рынка РА за период 2017-2022 гг. Эффективная деятельность кредитного института в экономике является одним из залогов стабильного развития финансовой системы. Являясь одним из важных стимулов развития экономики, обеспечивание непрерывности кредитования в стране, которая в 2017-2022 гг. показала положительную динамику, будет способствовать преодолению вызовов экономики РА в послевоенный период.

The Analysis of the Credit Market of the Republic of Artsakh in 2017-2022

Grigorian Larisa
ASU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: N. Avanesyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words*: credit investments, credit portfolio, credit market of the Republic of Artsakh, GDP, commercial bank, lending organization*

The credit market of the Republic of Artsakh had different levels of development in different periods, the purpose of the article is the analysis of the credit market of RA for the period 2017-2022. The effective activity of the credit institution in the economy is one of the keys to the stable development of the financial system. Being one of the important incentives for the development of the economy, ensuring the continuity of credit in the country, which in 2017-2022 showed positive dynamics, will contribute to overcoming the challenges of the RA economy in the post-war period.

ՀՀ ներդրումային ֆոնդերի գործունեության ընդհանուր բնութագիրը արդի ժամանակաշրջանում

Թաիրյան Աննա
ԱրՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն.Ավանեսյան

Հանգուցային բառեր. *ներդրումային ֆոնդ, ՀՀ ֆինանսական համակարգ, ներդրումային պորտֆել, ՀՆԱ, իրացվելիություն, ակտիվներ, պարտավորություններ, սեփական կապիտալ*

Հայաստանը Հարավային Կովկասում գտնվող զարգացող երկիր է, որը ունի շուրջ 3 միլիոն բնակչություն: Չնայած վերջին պատերազմի մարտահրավերներին և շարունակվող քաղաքական լարվածությանը, Հայաստանն ունի զարգացող շուկայական տնտեսություն, որն առաջարկում է մի շարք ներդրումային հնարավորություններ: Հայաստանում ներդրումներ կատարելու համար հարմար ոլորտներից են.

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Առողջապահություն,
- Գյուղատնտեսություն,
- Էներգետիկ ոլորտ,
- Զբոսաշրջություն,
- Լեռնահանքային արդյունաբերություն [3]:

Ներդրումային ֆոնդերը, որոնք նաև հայտնի են որպես կոլեկտիվ ներդրումային ինստիտուտներ, կարևոր ներդրումային միջոց են ինչպես անհատ, այնպես էլ ինստիտուցիոնալ ներդրողների համար: Կոլեկտիվ ներդրումային ինստիտուտը ստեղծվում է կոլեկտիվ ներդրումային գործունեություն իրականացնելու համար, որի էությունն է ներգրավել բազմաթիվ ներդրողների միջոցները և միասնաբար ներդնել դրանք տարբեր ակտիվներում և այդ միջոցով վաստակել շահույթ ներդրողների համար՝ յուրաքանչյուրին իր ներդրած մասնաբաժնին համապատասխան, ինչպես նաև հնարավորություն տալ մանր ներդրողներին, ովքեր բավականին ֆինանսական գիտելիքներ չունեն, իրականացնել ներդրումային գործունեություն:

ՀՀ-ում կոլեկտիվ ներդրումների համակարգը ներառում է ՀՀ տարածքում գործող ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերը, ներդրումային ֆոնդերի կառավարիչներին և պահառուներին, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի գործունեության ենթակառուցվածքի մեջ ներգրավված այլ անձանց [2]:

ՀՀ ներդրումային ֆոնդերը կողմնորոշված են դեպի ներդրողների լայն շրջանակները, որոնց հնարավորությունները ֆոնդային շուկաներում արդյունավետ ներդրումներ կատարելու տեսանկյունից խիստ սահմանափակ են: Դրանց էությունը մանր ներդրողների մուտքը ֆինանսական շուկա առավել հարմար դարձնելն է:

ՀՀ ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են՝

- «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով,
- «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
- այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով [1]:

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ներդրումային ֆոնդերի

- ընդհանուր ակտիվները կազմում են 78 652,1 մլն դրամ (2017-2022 թթ. ժամանակահատվածում աճել է 22,26 %-ով),
- ընդհանուր պարտավորությունները կազմում են 56 078,1 մլն դրամ (2017-2022 թթ. ժամանակահատվածում աճել է 2,89 %-ով),
- ընդհանուր կապիտալը կազմում է 22 573,9 մլն դրամ (2017-2022 թթ. ժամանակահատվածում աճել է 129,64 %-ով) [2]:
-



Նկար 1. ՀՀ ներդրումային ֆոնդերի ֆինանսական ցուցանիշները 2017-2022 թթ. ժամանակահատվածում (մլն դրամ) [2]

Covid-19 համավարակի և ԱՀ-ում պատերազմական գործողությունների արդյունքում նվազել են ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվները, պարտավորությունները և կապիտալը համապատասխանաբար 13,3 %, 13,2 % և 14,3 % (նկ. 1):

Ստորև ներկայացվում է ՀՀ ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների դինամիկան 2005-2021թթ. ժամանակահատվածում:



Նկար 2. ՀՀ ֆինանսական համակարգի համախառն ակտիվների դինամիկան 2005-2021թթ. ժամանակահատվածում (մլն դրամ) [2]

ՀՀ ֆինանսական համակարգում քիչ է ներդրումային և ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը. յուրաքանչյուրի ակտիվները կազմում են ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 0,79 %-ը: Ընդ որում, ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 83.5 %-ը: Սա նշանակում է, որ

ՀՀ Կենտրոնական բանկը պետք է վարի ներդրումային ֆոնդերի մասնաբաժնի ավելացմանը ուղղված քաղաքականություն, քանի որ դրանք յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման կարևոր գործիքներից են:



Նկար 3. ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվների հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2017-2021 թթ. ժամանակահատվածում [2] [4]

Նկար 3-ում ներկայացված է 2017-2021 թթ. ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվների մասնաբաժինը ՀՆԱ-ում: Ինչպես երևում է, ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվները կազմում են ՀՆԱ-ի շատ քիչ մասը, ինչը պայմանավորված է ՀՀ ֆինանսական համակարգում տվյալ ինստիտուտի թույլ զարգացվածությամբ:

ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ուսումնասիրվող ժամանակաշրջանում տատանվել է՝ 2020 թվականին գրանցելով ամենաբարձր ցուցանիշը՝ 1.25 %, իսկ 2018 թ.-ին՝ նվազագույնը՝ 0.94 %: 2018 թ. Անկումը պայմանավորված է հիմնականում ՀՀ-ում հեղափոխության արդյունքում երկրում առաջացած քաղաքական անկայուն վիճակով: Իսկ երբ 2019-2020 թթ. դիտվում էր աճի և կայունացման միտում, Covid-19 համավարակի և արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքում տվյալ ցուցանիշը կտրուկ նվազել է:

Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ Հայաստանում ներդրումներ կատարելն իր ռիսկերն է պարունակում: Ահա գործոններ, որոնք ազդեցություն ունեն ներդրումային ֆոնդերի ներդրումային գործունեության վրա.

- Քաղաքական անկայունություն,
- Տնտեսական անկայունություն,
- Արժութային ռիսկ,
- Կոռուպցիա,
- Իրավական համակարգ:

Չնայած այս ռիսկերին, Հայաստանը նաև հնարավորություններ է ներկայացնում ներդրողների համար, ինչպիսիք են հմուտ և կրթված աշխատուժը, ռազմավարական դիրքը Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում և աճող տեխնոլոգիական ոլորտը: Այդ իսկ պատճառով հայկական ներդրումային ընկերությունները գրավիչ են ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրողների համար:

Ներդրումային գործունեությունը կապված է մեծ ռիսկերի հետ: Ուստի այն մինիմալացնելու նպատակով կարևոր է ճիշտ կառավարել: Ներդրումային ռիսկերի կառավարումը ցանկացած ներդրումային ռազմավարության կարևոր մասն է: Ռիսկի կառավարման արդյունավետ միջոցներից է ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացումը: Լավ դիվերսիֆիկացված պորտֆելը կարող է օգնել նվազեցնել ռիսկը և երկարաժամկետ հեռանկարում ավելացնել եկամտաբերությունը:

Ընկերության ներդրումային պորտֆելի կառուցվածքը ներկայացնենք «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ներդրումային ընկերության օրինակով:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» (C-QUADRAT Ampega Asset Management Armenia) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (C-QUADRAT Investment AG) և գերմանական «Ամպեգա ասեթ մենեջմենթ» (Ampega Asset Management GmbH)՝ «Տալանքս ԱԳ գրուփի» (Talanx AG Group) անդամ ընկերության համատեղ ձեռնարկությունն է՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է ՀՀ Կենտրոնական բանկը [5]:

Ֆոնդի եկամտաբերությունը 2019-2021 թթ. կազմել է.

- 2019 թ.՝ 2,84 %,
- 2020 թ.՝ 12,68 %,
- 2021թ.՝ 2 %,
- 2022 թ.՝ -7,90 % [5]:

Չնայած այն հանգամանքին, որ երկրում տարածվում էր Covid-19 համավարակը, դիտարկվող ներդրումային ֆոնդի եկամտաբերությունը աճել է 9,84 տոկոսային կետով:



Նկար 4. «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդի ակտիվների կառուցվածքը 2019-2021 թթ. ժամանակահատվածում [6]

Ինչպես երևում է նկար 4-ից, «Ցե Կվադրատ Ամպեգա Ցե Քյու Արմենիա Գրոութֆոնդ» ներդրումային ընկերության ակտիվների գերակշիռ մասը պարտատոմսերն են: Պարտատոմսերի մասնաբաժինը 2019 թ. կազմել է 36,14 %, 2020 թ.՝ 48,14 %, իսկ 2021թ.՝ 43,75 %: Ընդ որում 2019-2021թթ. պարտատոմսերի բաժինը ակտիվների կազմում աճել է 772,22 %-ով: Պարտատոմսերի գերակշիռ մասը կազմում են պետական պարտատոմսերը (մասնաբաժինը 2019 թ. կազմել է 64,46 %, 2020 թ.՝ 71,09 %, 2021թ.՝ 76,26 %), քանի որ դրանք համարվում են համեմատաբար ապահով և կայուն ներդրումային տարբերակ: Դրա պատճառներն են.

- Ցածր ռիսկ,
- Կայուն եկամուտ,
- Իրացվելիություն:

Ֆոնդի պորտֆելի կառուցվածքը 2022 դեկտեմբերի 30-ի դրությամբ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Նկար 5. «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդի պորտֆելի կառուցվածքը ըստ արժույթի [5]

Նկար 5-ում ներկայացված տվյալները ներկայացնում են տարբեր արժույթների տոկոսային բաշխումը ներդրումային ֆոնդի պորտֆելում:

Ամենամեծ բաժինն ընկնում է ՀՀ դրամին. այն կազմում է պորտֆելի 71,9 %-ը: Ներդրումային ընկերությունները նախապատվությունը տալիս են հայկական դրամով ներդրումներ կատարելուն արժութային ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով: Բացի դրանից, հայկական դրամը օժտված է առավել բարձր իրացվելիությամբ, քան արտարժույթը: Հարկ է նշել, որ ներդրումային ընկերությունները միասնական արժույթով ներդրումներ չեն կատարում բարձր ռիսկայնության պատճառով:



Նկար 6. «Յե-Քյու Արմենիա Գրոուբ» ներդրումային ֆոնդի պորտֆելի կառուցվածքը ըստ տարածաշրջանի [5]

Նկար 6-ից կարելի է եզրակացնել, որ ֆոնդը, չնայած այն հանգամանքին, որ գործում է ՀՀ-ում, ներդրումներ է կատարում նաև այլ երկրներում, մասնավորապես՝ հյուսիսամերիկյան, եվրոպական, ասիական երկրներում և այլն: Տարածաշրջաններում կատարված ներդրումների մասնաբաժինը կազմում է համապատասխանաբար19,66 %, 4,34 %, 2,42 %, իսկ ՀՀ-ում՝ 73,39 %:

Ներդրումների մեծ մասը կենտրոնացված է ՀՀ-ում, իսկ երկրորդ տեղում գտնվում է Հյուսիսային Ամերիկան: Հյուսիսային Ամերիկայի երկրները ունեն ուժեղ ֆինանսական հատված և հանդիսանում են աշխարհի խոշորագույն և ամենահաջողակ ընկերություններից շատերի տունը: Քաղաքական կայունությունը, ուժեղ օրենքի գերակայությունը և լավ զարգացած ֆինանսական շուկաները այն գործոններ են, որոնք հյուսիսամերիկյան երկրները դարձնում են գրավիչ ներդրումային ուղղություն:

Այսպիսով՝ ներդրումային ֆոնդերը կարևոր դեր ունեն յուրաքանչյուր երկրի տնտեսությունում՝ հանդիսանալով ռազմավարական ներդրումների ֆինանսավորման աղբյուր, խթանելով տնտեսական աճը և ստեղծելով աշխատատեղեր: Սակայն տվյալ ոլորտը ՀՀ-ում դեռ գտնվում է զարգացման փուլում: Դրա մասին է վկայում ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը: Այնուամենայնիվ՝ չնայած դժվար ժամանակաշրջանի ՀՀ ներդրումային ֆոնդերի ակտիվները, պարտավորությունները, ինչպես նաև սեփական կապիտալը ուսումնասիրվող 2017-2021 թթ. ժամանակահատվածում գրանցել են աճի միտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենք «Ներդրումային ֆոնդերի մասին», 2010, դեկտեմբերի 22, ՀՕ-245-Ն:
2. ՀՀ Կենտրոնական բանկի կայքէջ. https://www.cba.am/AM/SitePages/Default.aspx
3. Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի կայքէջ. https://anif.am/am/
4. ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայքէջ. https://armstat.am/am/
5. «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ներդրումային ընկերության կայքէջ. http://www.c-quadrat-ampega.am/am
6. «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ներդրումային ընկերության 2019 թ., 2020 թ., 2021 թ. հաշվետվություններ

Общая характеристика деятельности инвестиционных фондов РА в настоящее время

Таирян Анна
АрГУ, Финансы (по отрослям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Н. Аванесян

Резюме

Ключевые слова: *инвестиционный фонд, финансовая система РА, инвестиционный портфель, ВВП, ликвидность, активы, обязательства, собственный капитал*

Целью инвестиционных фондов является привлечение средств ряда инвесторов и их совместное инвестирование в различные активы, а также предоставление возможности мелким инвесторам, не имеющим достаточных финансовых знаний, осуществлять инвестиционную деятельность. В результате проведенного анализа можно утверждать, что на деятельность действующих в Армении инвестиционных фондов нестабильная политическая ситуация, пандемия Covid-19 и военные действия в АР оказали негативное влияние. Несмотря на это, финансовые показатели инвестиционных фондов РА в 2017-2022 гг. показали положительную динамику.

General Characteristics of the Activity of RA Investment Funds at the Modern Period

Tairyan Anna
ASU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: N. Avanesyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words*: investment fund, financial system of RA, investment portfolio, GDP, liquidity, assets, liabilities, equity capital*

The purpose of investment funds is to attract funds from a number of investors and jointly invest them in various assets, as well as to enable small investors who don't have sufficient financial knowledge to carry out investment activities. As a result of the analysis, it can be claimed that the unstable political situation, the Covid-19 pandemic and the war operations in Artsakh had negative impact on the activities of investment funds operating in Armenia. Despite this, the financial indicators of the RA investment funds (in 2017-2022) showed positive dynamics.

Վարքագծային տնտեսագիտության առանցքային հասկացությունների ազդեցությունը սպառողական վարքագծի փոփոխության վրա: Համապարփակ մոդել

Խաչատրյան Մերի
ԳՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ս. Ամիրխանյան

Հանգուցային բառեր. *սպառողական վարքագիծ, վարքագծային տնտեսագիտություն, homo-economicus, IKEA էֆեկտ, սակավություն, վերջնաժամկետներ, տնտեսական որոշումներ, մարքեթինգային ռազմավարություն*

Դասական տնտեսագիտությունը և դրա հիմքում ընկած ռացիոնալ homo-economicus-ի վերաբերյալ ենթադրություններն ու ձևավորված պատկերացումներն արդեն վաղուց վիճարկվում և կասկածի տակ են դրվում այն ծանրակշիռ ապացույցների պատճառով, որոնք բազմիցս ցույց են տվել, որ մարդու վարքագիծը, եթե ոչ միշտ, ապա շատ հաճախ պայմանավորված է հուզական և հոգեբանական գործոններով: Աշխատանքի նպատակն է բացահայտել այն ուղիները, որոնցով այդ ոչ տնտեսական գործոններն ազդում են մարդկանց տնտեսական որոշումների կայացման վրա, մշակել համապարփակ պարզ մոդել, որը կարող է կիրառվել սպառողների մոտ ցանկալի վարքագծի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման, դրա ճիշտ գործիքակազմի ընտրության նպատակով:

Վերը նշված հարցերը վարքագծային տնտեսագիտության ուսումնասիրության առարկա են: Վարքագծային տնտեսագիտությունը տնտեսագիտության առանձին ոլորտ է, որը միավորում է ավանդական (դասական) տնտեսագիտության և հոգեբանության ու այլ հասարակական գիտությունների տարրեր՝ հնարավորություն տալով ավելի լավ հասկանալ տնտեսական որոշումների կայացման մարդկանց վարքագիծը [1]:

Homo-economicus-ի տեսությունը ենթադրում է, որ անհատները բնորոշվում են որպես ռացիոնալ էակներ, ովքեր ձգտում են առավելագույնի հասցնել բարիքների օգտակար հատկությունների յուրացումը: Այնուամենայնիվ, վարքագծային տնտեսագիտության բազմաթիվ ուսումնասիրություններ վիճարկել են այս մոտեցումը՝ ցույց տալով, որ իրական կյանքում անհատների որոշումների կայացման վրա հաճախ ազդում են մի շարք գործոններ, որոնք դուրս են ռացիոնալությունից և սեփական շահերի գիտակցման շրջանակներից. հուզական, հոգեբանական գործոնները, սոցիալական նորմերը, միջավայրի սահմանափակ ճանաչողական կարողությունները կարող են ազդել անհատի որոշումների և վարքի վրա:

Ասվածի վառ օրինակներից մեկն է Դանիել Կանեմանի և Ամոս Տվերսկիի "Prospect Theory: An Analysis of Decision under Risk" հոդվածում նշված «խուսափում կորստից» (loss aversion) ֆենոմենը: Համաձայն հեռանկարային մտածողության տեսության՝ մարդիկ փորձում են հնարավորինս խուսափել այնպիսի երևույթներից, որոնք կարող են հանգեցնել կորուստների, ուստի ավելի հավանա-

կան է, որ նրանք չեն դիմի ռիսկի՝ այդպիսով հաճախ կայացնելով ոչ օպտիմալ որոշումներ և շեղվելով ռացիոնալ որոշումների կայացման գործընթացից [2]:

Հարց է ծագում՝ ինչպե՞ս կարելի է կառավարել որոշումների կայացման գործընթացները և դրսևորել մեզ համար (ձեռնարկության տեսակետից) առավել նպաստավոր վարքագիծ: Առաջարկվող լուծումներից մեկը տեղեկացվածության բարձրացումն է. մարդիկ կարող են կայացնել իրենց համար առավել շահավետ որոշումներ, եթե տիրապետում են բավարար տեղեկության: Այլ մեթոդներ են ֆինանսական վերլուծաբանների օգնությանը դիմելը, սեփական ծախսերի ու եկամուտների վերլուծությունը և այլն [3]:

Վերոնշյալները, թեկուզև հնարավոր, բայց երկարատև ջանքեր, ֆինանսական ռեսուրսներ և էմոցիոնալ հասունություն պահանջող գործիքներ են և քչերին են հասանելի, ուստի մարդկանց՝ էմոցիոնալ որոշումներ կայացնելու փաստը կարելի է օգտագործել ձեռնարկատիրական գործունեության տարբեր ոլորտներում՝ բիզնեսի համար շահավետ եղանակներով:

Ինչպե՞ս է կարելի օգտագործել մարդկանց՝ ռացիոնալ որոշումներ կայացնելու փաստը՝ հօգուտ բիզնեսի և մարքեթինգային նպատակների իրագործման: Այս հարցին պատասխանելու համար մշակել ենք 4 մասից բաղկացած պարզ մոդել, որը հնարավորություն կտա ազդել մարդկանց վարքագծի վրա:



Նկար 1. Սպառողների որոշումների կայացման վրա ազդելու քառակողմ մոտեցման մոդել

Դյուրինություն

Սպառողների որոշումների կայացման վրա ազդելու քառակողմ մոտեցման մոդելի այս մասի էությունը մարդկանց համար իրենց վարքագծի փոփոխության գործընթացը հեշտացնելն է: Այստեղ ներկայացվում են եղանակներ, որոնք այնպես են վերափոխում միջավայրը, որ սպառողները կարողանան հեշտությամբ որդեգրել նոր վարքագիծ: Մարդկային վարքագծի փոփոխությունը հեշտ դարձնելու ռազմավարությունները հետևյալն են.

- փոփոխել նախնական իրավիճակը (նախնական իրավիճակն այն իրավիճակն է, որը տեղի կունենա, եթե ոչ մի որոշում չկայացվի),

- պարզեցնել հաղորդագրությունը,
- նվազեցնել խոչընդոտների ազդեցությունը,
- բարձրացնել խոչընդոտների ազդեցությունը:

Փոփոխել նախնական իրավիճակը: Մարդկանց համար իրենց վարքագծի դյուրինությունն ապահովելու առաջին գործիքը նախնական իրավիճակը մեզ համար նպաստավոր կերպով փոփոխելն է: Ասվածն ավելի պարզ դարձնելու համար դիտարկենք մահից հետո օրգանների դոնորների վիճակագրությունը:

Իսպանիայում օրենքով սահմանված է, որ մահվանից հետո օրգանները պետք է հանձնվեն փոխպատվաստման համար: 2021 թվականին Իսպանիայի բնակչությունը կազմել է 46,75 մլն մարդ. 1մլն բնակչի հաշվով օրգանների դոնորների ցուցանիշը 40,73 է: Գերմանիայում նման օրենք չկա, և նույն ժամանակահատվածի համար այնտեղ մահից հետո դոնոր են դարձել 1 մլն մարդու հաշվով 11,05 մարդ, չնայած որ Գերմանիայի բնակչությունը 2021 թվականին կազմել է 84,3 միլիոն մարդ [4, 5]: Վերոնշյալ թվերը ցույց են տալիս, թե նախնական իրավիճակն ինչպես կարող է ազդել մարդկանց վարքագծի վրա. Իսպանիայում, որտեղ մահվանից հետո օրգանները ավտոմատ կերպով փոխպատվաստման են հանձնվում, մարդիկ հակված են դոնոր դառնալու, և քչերն են հայտնել իրենց բացասական դիրքորոշման մասին, նրանց համար առավել հեշտ է թողնել ամեն ինչ այնպես, ինչպես կա: Եթե նշված օրենքը փոփոխվի, համապատասխանաբար կփոխվի նաև մարդկանց վարքագիծն այդ հարցի վերաբերյալ:

Պարզեցնել հաղորդագրությունը: Վարքագծի վրա ազդելու հերթական եղանակը հաղորդագրությունները, գաղափարը փոխանցելու ուղիները հնարավորինս պարզ դարձնելն է: Կոմպլեքս կամ խճճված հաղորդագրությունները հաճախ կարող են ճնշող լինել և շփոթության պատճառ հանդիսանալ՝ այդպիսով հանգեցնելով մարդկանց կողմից դրանց անտեսման: Մյուս կողմից, պարզ և կոկիկ հաղորդագրությունները մեծ շանսեր ունեն ուշադրություն գրավելու և իրենց հիմքում ընկած տեղեկությունը թիրախային լսարանին ամբողջությամբ փոխանցելու [6, 7]:

Նվազեցնել խոչընդոտների ազդեցությունը: Վարքագծային փոփոխության կարելի է հասնել՝ նվազեցնելով կամ իսպառ վերացնելով ցանկալի վարքագիծը խոչընդոտող կամ դժվարացնող գործոնները: Որպես օրինակ կարելի է դիտարկել ծխախոտի այլընտրանքների կիրառման ազդեցությունը ծխողների քանակի վրա: Բազմաթիվ երկրներում նախաձեռնվել են մի շարք ծրագրեր ծխախոտի այլընտրանքների հասանելիությունը մեծացնելու համար: Այդպիսի այլընտրանքներ են էլեկտրոնային ծխախոտը կամ նիկոտինային մաստակները: Այս պարագայում ցանկալի վարքագիծը ծխախոտը թողնելն է, բայց դրան խոչընդոտում է մարդկանց՝ նիկոտինի հանդեպ կախվածությունը, ուստի ծխախոտի փոխարինիչները բավարարում են նիկոտին ստանալու ցանկությունը՝ միաժամանակ օրգանիզմին հասցվող վնասը հասցնելով նվազագույնի:

Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի (National Bureau of

Economic Research) ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վերջերս էլեկտրոնային ծխախոտի լայն տարածումը բնակչության շրջանում պայմանավորված է ավանդական ծխախոտ օգտագործողների թվաքանակով, ովքեր ցանկանում են թողնել ծխելը: Հետազոտության հեղինակները դա կապում են այն փաստի հետ, որ էլեկտրոնային ծխախոտը նվազեցնում է ծխախոտը ամբողջությամբ թողնելու մտքի առաջացրած սթրեսը՝ հանդիսանալով ծխելուց ոչ շատ տարբեր հնարավորություն [8]:

Այս օրինակն ընդգծում է վարքագծի փոփոխության մեջ խոչընդոտների նվազեցման կարևորությունը. անհատներին տրամադրելով ավելի հեշտ և հարմար տարբերակներ՝ նրանց համար ավելի հեշտ է դառնում փոփոխություններ կատարել, որոնք չեն հակասում իրենց արժեքներին և նպատակներին:

<u>Բարձրացնել խոչընդոտների ազդեցությունը:</u> Վարքագծի փոփոխության մեկ այլ ազդեցիկ գործոն է վարքագծի դրսևորման խոչընդոտների քանակն ավելացնելը կամ դրանց ազդեցությունը մեծացնելը: Հիմնական գաղափարը որևէ գործողություն ավելի բարդ դարձնելու մեջ է:

Ասվածի պատկերավոր օրինակ է դեղերի չարաշահման վրա դեղահաբերի փաթեթավորման ազդեցության վերլուծությունը: Սրվակով փաթեթավորմամբ շատ ավելի հեշտ է մի քանի հաբ միանգամից ընդունել, իսկ հատ առ հատ փաթեթավորման դեպքում, հավանականությունը, որ մարդիկ մի քանի հաբ կընդունեն, անհամեմատ փոքրանում է: Սուրբի Շահի, Ջոն Գալդոյի, Էլիզաբեթ Կոքսի և այլոց “Impact of Bubble Packaging on Adherence to Long-Term Oral Medications Used to Prevent Cardiovascular Disease” համատեղ հոդվածում բերված տվյալների համաձայն՝ լրիվ նույն պայմաններում գտնվող մարդկանցից պատշաճ կերպով դեղահաբեր ընդունողների քանակը մոտ 83.78 % է, եթե դեղահաբերը հատ առ հատ փաթեթավորմամբ են, իսկ սրվակով փաթեթավորմամբ դեղահաբեր ընդունողներից 78.67 %-ն է ընդունում ճիշտ քանակի դեղեր, ընդ որում առաջին դեպքում սխալ կերպով ընդունողները դեղահաբերն ընդունում են պակաս քանակով, իսկ երկրորդ դեպքում՝ ավել [9]:

Գրավչություն

Առաջարկվող մոդելի այս մասը նպատակ ունի օգտագործել մարդկանց ոչ ռացիոնալ լինելու փաստը, հուզական և հոգեբանական առանձնահատկությունները: Հետևյալ գործիքները կարող են նպաստել վարքագծի արագ և մեզ համար ցանկալի արդյունքով վարքագծային փոփոխությանը:

<u>Ակներևություն:</u> Մարքեթինգի գրավիչ մասի առանցքային գաղափարներից մեկը արտադրանքի ակներև լինելն ու մյուսներից առանձնանալն է: Սպառողի ուշադրությունը կարող է գրավել այն արտադրանքը, որը նկատելն ավելի հեշտ է: Մալազիայի տեխնոլոգիական համալսարանն անցկացրել էր էքսպերիմենտ, որը մանրամասն ներկայացված է “Journal of Telecommunication, Electronic and Computer Engineering” ամսագրի “Eye Tracking Application on Emotion Analysis for Marketing Strategy” հետազոտության մեջ: Էքսպերիմենտն իրականացվել է իրա-

կանությանը հնարավորինս մոտ պայմաններում: Գործընթացին մասնակցել են 9 մարդ: Փորձի էությունը կայանում էր հետևյալում. 5 նկարներ պատկերվում են Tobii TX300 էկրանի վրա՝ յուրաքանչյուր նկարը 4 րոպեով: Նկարներն ընտրված էին՝ արտացոլելու մարդկանց տեսողական ուշադրության վրա ազդող տարբեր պարամետրեր, ինչպես՝ դարակների վրա ապրանքի դիրքը, գինը, դիզայնը, փաթեթավորումը և չափերը: Կախված այն բանից, թե մարդիկ քանի վայրկյան են ուշադրություն դարձրել այդ պարամետրերից յուրաքանչյուրին, կարելի է եզրակացնել, թե դրանցից որոնք են առավել նպաստավոր մեզ համար ցանկալի վարքագիծ ձևավորելու գործում: Աչքերի շարժումները, հայացքի՝ ապրանքի վրա կենտրոնացած լինելու ժամանակը չափվել է Tobii Studio 3.4.1 համակարգով: Այն հետազոտություն իրականացնողներին հնարավորություն է տվել վերլուծել տեսողական ազդակների մի շարք կոմպոնենտներ:

Նկար 2. Ուսումնասիրվող դարակների դիրքը բնորոշող գույները

Դարակներից յուրաքանչյուրը ներկայացված է առանձին գույնով, ստորև ներկայացված են ցուցանիշները, որոնք որոշում են ամենաշատը ուշադրություն գրված դարակի համարը:



Գծապատկեր 1. Դարակներից յուրաքանչյուրի գրված ուշադրության տնտողությունը, վրկ

Ինչպես երևում է գծապատկերից՝ մարդկանց ուշադրությունն առավել շատ գրավել է 3-րդ՝ մարդու միջին հասակին համապատասխանող դարակը:

Խրախուսանք: Խրախուսանքները պարգևատրումներ են, որոնք անհատներին ուղղորդում են կատարել որոշակի գործողություններ կամ դրսևորել տնտեսական որոշակի վարքագիծ: Այդ համատեքստում վառ օրինակ է վիճակախաղը (լոտոն): Վիճակախաղերը սովորաբար առաջարկում են խոշոր ֆինանսական շահում, որը մարդկանց համար խիստ գայթակղիչ է: Միաժամանակ, պատահականության գործոնը վիճակախաղում ստեղծում է ոգևորվածության, անկանխատեսելիության զգացում, որը ևս կարող է հսկայական խթան հանդիսանալ վիճակախաղի տոմսեր գնելու հարցում: Խրախուսանքի հոգեբանական ազդեցությունը վիճակախաղի օրինակում մարդկանց՝ հարստության, ուժի և սուր զգացողությունների ձգտելու ցանկությունը որպես գործիք օգտագործելու մեջ է: Համաձայն “Journal of Political Economy” ամսագրում հրապարակված “The Effect of Incentives on Consumer Behavior: Evidence from the Field” հոդվածում ներկայացված ուսումնասիրության՝ Փենսիլվանիայի համալսարանն անցկացրել էր հետազոտություն. առողջ սննդի վաճառքն աճել է մոտ 43.5 %-ով այն բանից հետո, երբ կազմակերպությունն առաջարկել է վիճակախաղի նվեր տոմսեր՝ ամեն անգամ գնում կատարելիս [10]:

IKEA էֆֆեկտ: IKEA էֆեկտը ֆենոմեն է, որը հանդես է գալիս այն ժամանակ, երբ անհատը էլ ավելի է արժևորում իրը, ապրանքը, որովհետև ներգրավված է եղել դրա ստեղծման գործընթացում: IKEA էֆեկտի էությունն առաջին անգամ

ներկայացվել է Մայքլ Նորթոնի, Դանիել Մոքընի և Դէն Արիելիի 2012 թվականին հրատարակած հոդվածում: Հոդվածը հրապարակվել է "Journal of Consumer Psychology" ամսագրում և բացահայտում է այն կապը, որն առաջանում է առարկայի վրա մարդու գործադրած ջանքերի և այդ առարկային տված նրա գնահատականի միջև [11]:

Ասվածի հայտնի օրինակ է կահույքագործական IKEA կազմակերպության քաղաքականությունը, որի շնորհիվ էլ այս էֆեկտն ստացել է իր անվանումը: Կազմակերպությունը հայտնի է իր՝ կահույքի վերջնական պատրաստման գործընթացին գնորդին ներգրավելու առաջարկով հանդես գալով, և հետազոտությունը ցույց է տվել, որ գնորդներն առավել շատ են արժևորում նման կահույքը:

Մեկ այլ հետազոտություն (Դոուն Լեռմանի հոդվածը՝ հրապարակված 2013 թվականին "Journal of Marketing" ամսագրում) ցույց է տվել, որ IKEA էֆեկտը տարածվում է նաև սննդի վրա: Հետազոտության մասնակիցներն, ովքեր իրենք են մասնակցել իրենց սննդի պատրաստմանը, այն որակել են ավելի համեղ, քան այդ գործընթացին չմասնակցածները [12]:

Այս հետազոտությունները ցույց են տալիս IKEA էֆեկտի կարևորությունը, արդիականությունը և վարքագծի փոփոխության վրա ունեցած զգալի ազդեցությունը: Հաճախորդներին արտադրանքի ստեղծման գործընթացի մեջ ներգրավելը կարող է ստեղծել մեծ էմոցիոնալ կախվածություն սպառողի և ապրանքի միջև՝ միաժամանակ մեծացնելով վաճառքների ծավալները և հաճախորդների բավարարվածությունը:

<u>Սակավություն</u>: Սակավությունը հոգեբանական ֆենոմեն է, որը վերաբերում է սահմանափակ հասանելիությամբ կոնկրետ ռեսուրսի կամ ապրանքի, որը, գրեթե միշտ, համարվում է թանկարժեք: Սակավության այս ընկալումը ապրանքներն ու ռեսուրսները դարձնում է առավել ցանկալի, քանի որ մարդիկ մեծ ցանկություն են ունենում ձեռք բերել այդ բարիքները, քանի դեռ դրանք չեն կորել կամ սպառվել:

Այս ֆենոմենի հիմնական պատճառները հետևյալն են.

- *Կորցնելու վախ*: Մարդիկ չեն ցանկանում կորցնել սահմանափակ քանակությամբ ցանկալի ապրանքը ձեռք բերելու հնարավորությունը:
- *Հավելյալ արժեք*: Սակավությունն ավելացնում է ապրանքի արժեքը, քանի որ մարդիկ սակավ ապրանքները համարում են առավել որակյալ ու թանկարժեք:
- *Ուշադրության գրավում*: Սակավությունը մեծացնում է ապրանքի հանդեպ հետաքրքրությունն ու գրավում է մեծ ուշադրություն. այն ևս ավելացնում է ապրանքի արժեքը:

Այս հարցի վերաբերյալ որակյալ հետազոտություն է "The Psychology of Scarcity: Why Having Too Little Means So Much" հոդվածը:

Ժամանակավրեպություն

Ժամանակավրեպության հայեցակարգը տնտեսագիտության մեջ կարևոր

ասպեկտ է, քանի որ կարող է էականորեն ազդել մարդկանց վարքի վրա՝ ֆինանսական գործունեության և սպառման հետ կապված տարբեր որոշումներում: Գաղափարն այն է, որ ճիշտ պահին ճիշտ առաջարկով հանդես գալը (օրինակ՝ զեղչ առաջարկելը կամ նոր արտադրանքով հանդես գալը) կարող է մեծապես ազդել սպառողի ընկալման և որոշումների կայացման գործընթացի վրա:

«Ժամանակը փող է» հասկացությունը վաղուց է արմատավորվել բիզնեսի աշխարհում, և նույնը վերաբերում է սպառման հոգեբանությանը: Հասկանալով ժամանակի գործոնի կարևորությունը՝ կազմակերպություններն ու մարքեթոլոգները կարող են արդյունավետորեն օգտագործել այդ գիտելիքները սպառողների վարքագիծն իրենց օգտին ծառայեցնելու և իրենց վաճառքները խթանելու համար: Ճիշտ ժամանակին որոշումների կայացման հայեցակարգը կիրառելի է և՛ բիզնեսի, և՛ անձնական ֆինանսների կառավարման գործում:

<u>Ներկայի գերակայություն:</u> Ժամանակավրեպության դրսևորման ձևերից մեկը ներկայի գերակայությունն է. մարդիկ հակված են առաջնահերթություն տալու կարճաժամկետ շահին՝ երկարաժամկետի հետ համեմատած: Սա կարող է հանգեցնել վարքային այնպիսի արդյունքների, ինչպիսիք են խնայողությունների կամ ներդրումների ծավալների նվազումը, ակնթարթային հաճույք պատճառող երևույթներին նախապատվություն տալը:

Ներկայի գերակայության վերաբերյալ ամենահայտնի փորձը «մարշմելլոուի էքսպերիմենտն» է: Հետազոտության ընթացքում երեխաներին առաջարկել են ուտել մեկ մարշմելոու ակնթարթորեն կամ սպասել որոշ ժամանակ և ստանալ երկուսը: Արդյունքները ցույց են տվել, որ այն երեխաները, ովքեր կարողացել են սպասել, հետագա կյանքում գրանցել են առավել մեծ հաջողություններ: Հետազոտությունը ցույց է տալիս երկարաժամկետ շահը հաշվի առնելու կարևորությունը, և թե ինչ ազդեցություն կարող է ունենալ այս ֆենոմենը որոշումների կայացման գործընթացի վրա [13]:

<u>Վերջնաժամկետներ</u>: Վերջնաժամկետները ժամանակի հստակ սահմանված կետեր են, որոնց լրանալու պահին այս կամ այն հանձնարարությունը պետք է կատարված լինի: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջնաժամկետները մեծ ազդեցություն ունեն մարդկային վարքագծի փոփոխությունների վրա՝ հանձնարարությունը կատարելու մոտիվացիայի և կենտրոնացվածության մեծացման շնորհիվ:

Վերջնաժամկետների կարևորության ուսումնասիրման օրինակ է Արիելիի, Պրելեկի 2006 թվականին կատարած հետազոտությունը (հրապարակվել է “Journal of Marketing Science” ամսագրում): Հետազոտությունը ցույց է տվել, որ վերջնաժամկետներ սահմանելը կարող է ազդել հանձնարարությունը կատարելու հավանականության մեծացման վրա:

Շուկայագիտության մեջ այս գործոնը կարող է կիրառվել մի քանի եղանակներով: Ամենատարածված եղանակներից մեկը հրատապության տպավորություն ստեղծելն է՝ առաջարկելով զեղչի կամ սահմանափակ քանակությամբ ապրանք

ձեռք բերելու վերջնաժամկետ: Մեկ այլ եղանակ է որևէ ծառայության բաժանորդագրության համար վերջնաժամկետ սահմանելը [14]:

Հրահանգներ: Ճիշտ ժամանակին տրված հրահանգները կարող են հեշտությամբ ազդել որոշումների կայացման գործընթացի վրա: Ասվածի լավ օրինակ է McDonald՛s ընկերության նախաձեռնած արշավը: Պատվերի համար վճարում կատարելիս վճարումն ընդունող սարքի վրա հայտնվում է կազմակերպության կողմից հովանավորվող բարեգործական նախաձեռնություններից մեկին նվիրատվություն անելու կոչ: Հրահանգի հետևում եղած գաղափարը հետևյալն է. երբ հաճախորդներն արդեն իսկ վճարում կատարելու գործընթացի մեջ են, նրանց համար ավելի հեշտ է դառնում փոքր քանակով գումար նվիրաբերելը, հատկապես՝ վճարային քարտն իրենց ձեռքում լինելու պարագայում [15]:

Սոցիալական գործոններ

Վարքագծի փոփոխության մոդելի վերջին՝ սոցիալական հատվածը վերաբերում է վարքագծի փոփոխության այն ուղիներին, որոնք ազդվում են հասարակական նորմերից:

Սոցիալական նորմեր: Սրանք չգրված օրենքներ և սպասումներ են՝ տրված հասարակության կողմից, որոնք որոշում են մարդկանց գործողություններն ու որոշումները: Տնտեսական որոշումները, սովորաբար, այս կերպ էլ կայացվում են, քանի որ մարդիկ ձգտում են արդարացնել այլոց սպասելիքները: Օրինակ՝ Շենի, Պետրիի և Ուիլլեռի՝ 2010 թվականին “Psychological Science” ամսագրում հրապարակած ուսումնասիրության մեջ պարզել են, որ մարդիկ առավել հակված են բարեգործական ծրագրերին նվիրաբերություն կատարել, եթե վստահ են, որ նույն գործողությունը կատարել են նաև իրենց մտերիմները կամ շրջապատի անդամները:

Փոխադարձություն: Երևույթի գաղափարը այն է, որ մարդիկ մոտիվացված են փոխհատուցել նրանց, ովքեր օգնել են իրենց անցյալում: Օրինակ՝ Անդերսոնի և Սիմեստեռի հետազոտության համաձայն՝ այն հաճախորդները, ովքեր նախկինում հատուկ առաջարկ են ստացել կազմակերպության կողմից, առավել հակված են կրկին գնում կատարելու այդ կազմակերպությունից:

«Սուրհանդակի էֆեկտ»: Սա վերաբերում է առավել վստահելի, հարիզմատիկ անձի ունեցած ազդեցությանն այլոց վրա: Մարկետոլոգներն օգտվում են այս մեթոդից՝ դիմելով ինֆլուենսերների, հայտնի անձանց՝ գովազդելու իրենց արտադրանքը:

Այսպիսով՝ սպառողների որոշումների կայացման վրա ազդելու քառակողմ մոտեցման մոդելն իրենից ներկայացնում է սպառողական վարքագիծն հասկանալու, վերլուծելու և վերափոխելու արդյունավետ գործիք: Մոդելը կարող է կիրառվել արտադրանքի պլանավորման, մարքեթինգային ռազմավարության մշակման, ծառայությունների որակյալ մատուցման և ձեռնարկատիրական գործունեության այլ համատեքստերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Thaler R. H. Misbehaving: The Making of Behavioral Economics, W. W. Norton & Company, 2015.
2. Kahneman D., Tversky A., Prospect Theory: An Analysis of Decision under Risk, Econometrica, 1979.
3. Thaler R. H., Sunstein C. R. Nudge: Improving Decisions About Health, Wealth, and Happiness, Penguin Books, 2008.
4. Գերմանիայի Դաշնության Առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջ – https://gesund.bund.de/en/organ-donation#the-organ-donation-process (հասանելի է 01. 02. 2023):
5. Statista վիճակագրական տվյալների վերլուծության հարթակի պաշտոնական կայքէջ – https://www.statista.com/statistics/761322/organ-donors-in-spain/ (հասանելի է 01. 02. 2023)
6. Lleras S. P., Rensink, R. A., Clark, J. J., Chastain, G. The Attentional Capture of Irrelevant Events, 2002.
7. Kahneman D. Thinking, Fast and Slow, Macmillan Publishers, 2011.
8. Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի պաշտոնական կայքէջ – https://www.nber.org/papers/w24212
9. Shah S., Galdo J., Cox E. D., Moreno M. A, Young, H. N. Impact of Bubble Packaging on Adherence to Long-Term Oral Medications Used to Prevent Cardiovascular Disease, J Pharm Technol, pp. 114–120, 2017.
10. Knittel J., List A. The Effect of Incentives on Consumer Behavior: Evidence from the Field, Journal of Political Economy, 2009.
11. Norton M. I., Mochon D., Ariely D. The IKEA Effect: When Labor Leads to Love, Journal of Consumer Psychology, 2012.
12. Lerman D. I Made It Myself: The IKEA Effect in the Manufacturing of Products and Brands, Journal of Marketing Research, 2013.
13. Mischel W. Delay of Gratification in Children, Science, 1972.
14. Wiltermuth S. T., Galinsky A. D. The Effect of Deadlines on Consumer Decision Making, Journal of Consumer Research, 2009.
15. Jefferies, Nudging Healthy Choices: A Field Study of Consumer Response to Prompts in a Supermarket Setting, International Journal of Behavioral Nutrition and Physical Activity, 2015.

Влияние ключевых концепций поведенческой экономики на изменение поведения потребителей. Комплексная модель

Хачатрян Мэри
ГГУ, Финансы (по отраслям), 2-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук доцент Н. Барсегян

Резюме

Ключевые слова: *потребительское поведение, поведенческая экономика, homo-economicus, эффект IKEA, дефицит, дедлайны, экономические решения, маркетинговая стратегия.*

Классическая экономика и лежащие в ее основе предположения, а также предвзятые представления о рациональном homo-economicus уже давно поставлены под сомнение и подвергаются сомнению в силу подавляющего числа доказательств, которые неоднократно показывают, что поведение человека часто, если не всегда, определяется эмоциональными и психологическими факторами. Цель данной работы – определить, каким образом эти неэкономические факторы влияют на принятие людьми экономических решений, и разработать комплексную и простую модель, которая может быть использована для целей разработки политики, направленной на формирование желаемого поведения у потребителей и выбор правильных инструментов для этого.

The Impact of Key Concepts of Behavioral Economics on Consumer Behavior Change. Comprehensive Model

Khachatryan Meri
GSU, Finance (by sector), 2nd year
Academic Supervisor: S. Amirkhanyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *consumer behavior, behavioral economics, homoeconomics, IKEA effect, scarcity, deadlines, economic decisions, marketing strategy*

Classical economics and its underlying assumptions, as well as preconceived notions of the rational homo-economicus, have been challenged and questioned for a long time by overwhelming evidence that repeatedly shows that human behavior is often, if not always, driven by emotional and psychological factors. The goal of this work is to identify the ways in which these non-economic factors influence people's economic decision-making and to develop a comprehensive and simple model that can be utilized for the purpose of policy development, aimed at forming desired behavior among consumers and selecting the right tools.

ԱՀ գյուղատնտեսության արդի մարտահրավերները

Կարապետյան Աննա
ԱրՊՀ,, Կառավարում (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ԱրՊՀ դասախոս Մ. Խաչատրյան

Հանգուցային բառեր. *պարենային անվտանգություն, ագրոպարենային ոլորտի հիմնախնդիրներ, ինտենսիվ գյուղատնտեսություն, պետական աջակցություն*

Գյուղատնտեսության և գյուղերի զարգացումը կարևորվում է ամբողջ աշխարհում, մեր պարագայում՝ առավել ևս, քանզի գյուղատնտեսությունը՝ լինելով համակարգաստեղծ ճյուղ, ռազմավարական նշանակություն ունի երկրի տնտեսական անվտանգության տեսանկյունից, զբաղվածության ապահովման, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում: Ոլորտի զարգացումը նպաստում է ինչպես սննդի և թեթև արդյունաբերության, այնպես էլ ոլորտը սպասարկող արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը:

Ագրոպարենային համակարգը տարիներ ի վեր ԱՀ տնտեսության զարգացման գործում կարևոր դեր է ունեցել: Դեռևս 2001 թ. գյուղատնտեսությունը ԱՀ-ում հռչակվել էր տնտեսության զարգացման ռազմավարական ճյուղ:

2020 թ. տեղի ունեցած պատերազմը աղետալի հետևանքներ է թողել Արցախի տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության վրա: Այն ուղղակի բացասական հետևանք ունի արդյունքային ցուցանիշների վրա, քանի որ մեծ չափերի են հասնում գյուղատնտեսական հողերի, տեխնիկայի և սպասարկող ենթակառուցվածքների կորուստները:

Մինչ պատերազմը ունեցել ենք գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճ 2017-2019 թթ-ին. ցավոք այդ տարիների համախառն արտադրանքի 40-45 %-ը ապահովվել է ներկայումս Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող շրջանների կողմից՝ Հադրութ, Քաշաթաղ ու Շահումյան:

2022 թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2019 թ. համեմատ նվազել է 42 %-ով, սակայն 2021թ. նկատմամբ աճել է 27 %-ով (գրաֆիկ 1) [3]:



Գրաֆիկ 1. Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալները 2010-2022 թթ.

2017 թ. ԱՀ-ում գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 28 տոկոս, իսկ 2022 թ. այդ ցուցանիշը նվազելէ 13,7 տոկոսային կետով և կազմել է 14,3 տոկոս (գրաֆիկ 2) [7]:



Գրաֆիկ 2. ԱՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2017-2022 թթ.

Հետպատերազմյա ժամանակաշրջանում տարածքային կորուստները շատ մեծ են գյուղատնտեսության համար: ԱՀ գյուղատնտեսության նախարարությունը իրականացրել է գյուղատնտեության ոլորտի հիմնական ցուցանիշների գնահատում 2020 թ. տարեվերջին, ըստ որի՝ ընդհանուր գյուղատնտեսական նշանակության տարածքները նվազել են 82 %-ով, 580 000 հեկտարից դառնալով մոտ 105 000 հա, արոտավայրերը՝ 84 %-ով, վարելահողերը՝ 75 %-ով, խոտհարքերը՝ 92 %-ով, բազմամյա տնկարկները՝ 65 %-ով: Իսկ 3600 հա գյուղատնտեսական նշանակության տարածքները գտնվում են հակառակորդի դիտարկման տակ և մշակության համար վտանգավոր են (գրաֆիկ 3) [2]:



Գրաֆիկ 3. ԱՀ գյուղատնտեսական հողատարածքները

Հաջորդ մեծ կորուստը գյուղատնտեսական տեխնիկան է: Պատերազմի հետևանքով ԱՀ-ն կորցրել է գյուղատնտեսական տեխիկայի կեսը (49.9 %): Նախկինում 100 հա հողատարածքին բաժին էր ընկնում 2.5 միավոր տեխնիկա: Իսկ 2020 թ. այդ ցուցանիշը կազմում է 6,7 (գյուղատնտեսական նշանակության հողատարածքները՝ բացառությամբ արոտների ՝ 48958 հա, տեխնիկա ՝ 3302 միավոր):

Պատերազմի հետևանքով Արցախում առկա անասնագլխաքանակը կրճատվել է ավելի քան 50 տոկոսով:

Տուժել են նաև բազմամյա տնկարկների տարածությունները:



Գրաֆիկ 4. Բազմամյա տնկարկների տարածություններ 2020 թ. և 2021 թ.

Փաստորեն կորցրել ենք բազմամյա տնկարկների տարածքի կեսից ավելին՝ մոտ 57 %-ը: Ընդ որում ձիթենու և խառը պտղատու այգիների տարածությունները ամբողջությամբ, խաղողայգիների 42 %-ը, արևելյան խուրմայի տարածքների 87 %-ը, ընկուզավորների 83 %-ը, նռան այգիների 68 %-ը (որից մոտ 183 հա, այսինքն 17 %-ը գտնվում է չեզոք, մշակության համար վտանգավոր գոտում):

Սակայն բոստանային մշակաբույսերի հիմնական մասը մշակվում էր Քաշաթաղի շրջանում: Ցանքատարածությունների 80 %-ը կենտրոնացած էր Քաշաթաղի, Հադրութի ու Շահումյանի շրջաններում, ինչը ապահովում էր համախառն բերքի 63-67 %-ը:

Մասնավորապես, եթե նախկինում Արցախը հացահատիկային մշակբույսերի բերքի արտադրության մասով գերակատարում էր 1 բնակչի հաշվով նախանաշված շեմը՝ ստացված բերքի մի մասը արտահանելով Հայաստանի Հանրապետություն, ապա հիմա արտահանում չի նախատեսվում. առկա ամբողջ ներուժն առաջիկայում ուղղված կլինի տեղի բնակչության կարիքների ապահովմանը:

2020 թ.պատերազմից հետո, ներքին ու արտաքին մարտահրավերներին դիմակայելու և փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու համար ԱՀ գյուղի ու գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվել են գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագրեր, որոնց նպատակն է երկրի գյուղատնտեսական նշանակության հողերի լրիվ օգտագործման ապահո-

վումը, գյուղական վայրերում աղքատության կրճատումը, զբաղվածության բարձրացումն ու գյուղատնտեսությունում նոր տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը:

2012-2022 թթ. ընթացքում հիմնադրամը իրականացրել է հետևյալ աջակցության ծրագրերը.

- Հողագործության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
- Անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
- Մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
- Գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
- հիմնադրամին 100 % բաժնեմասով պատկանող ընկերությունների միջոցով գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ծրագիր (այս ծրագիրը գործել է 2012-2017թթ. ընթացքում),
- այլ ծրագրեր [4]:

2022 թ. Հիմնադրամը տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացրել է 6.126.700,2 հազար դրամի չափով աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ նվազել 26 %-ով, իսկ 2021 թ. կազմել է 8.248.163,6 հազար դրամ:



Գրաֆիկ 5. 2022 թ. աջակցության կառուցվածքը

2012-2022 թթ. ընթացքում տրամադրված աջակցության ընդհանուր գումարը կազմել է 91.138.448,0 հազար դրամ, որի գերակշիռ մասը՝ 50.5 տոկոսը, կազմում են փոխառությունները:



Գրաֆիկ 6. 2012-2022 թթ. տրամադրված աջակցության ծավալը:

Նկատելի է, որ աջակցության ամենամեծ ծավալը՝ շուրջ 20 տոկոս, դիտարկվել է 2017 թ., ինչը պայմանավորված էր ապրիլյան քառօրյա պատերազմի հասցված վնասներով պայմանավորված ծրագրերի իրականացմամբ:

2012-2022 թթ. ընթացքում տրամադրված աջակցության գրեթե կեսը՝ 47.4 տոկոսը կամ 43.205.254,3 հազար դրամ, տրամադրվել է հողագործության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրերին:

Հողագործությունը ԱՀ-ի համար գյուղատնտեսության այն առանցքային ենթաճյուղն է, որի զարգացումից է մեծապես կախված գյուղատնտեսության, մասամբ նաև տնտեսության կայունությունը: Այդ ուղղությամբ պետական աջակցության իրականացումը նպատակ ունի ապահովել հողակտորների լրիվ օգտագործում, որը կապահովի ինչպես գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճ, այնպես էլ զբաղվածության, ուստի նաև բնակչության եկամուտների մակարդակի աճ: Դրանով իսկ գյուղատնտեսության զարգացման համար ավելի ամուր հիմքեր կստեղծվեն, քանի որ գյուղական վայրերի սոցիալական զարգացման դանդաղ տեմպերը միշտ էլ արգելակում են գյուղանտեսության նորմալ զարգացումը:



Գրաֆիկ 7. «Հողագործության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրերին» հատկացվող գումարների դինամիկան 2012-2022 թթ.

Հիմնադրամը 2022 թ. իրականացրել է մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աջակցության ծրագրերը հետևյալ 2 ուղղություններով.

▪ անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների մատուցման ապահովմանն ուղղված աջակցության ծրագիր /գյուղտեխնիկա և տեխնիկայի վերանորոգում (տրամադրել է 476.066,4 հազար դրամի փոխառություն],

▪ մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների որակական չափանիշների բարելավմանն ուղղված աջակցության ծրագիր /լիզինգ/: Լիզինգի շրջանակում ԱՀ ԳԳԱՀ–ի կողմից ձեռք են բերվում տարբեր տեսակի գյուղատնտեսական տեխնիկա, սարքավորումներ, մասնավորապես՝ կոմբայններ, տրակտորներ և ֆինանսական վարձակալությամբ /լիզինգով/ տրամադրվում շահառուներին: Ծրագրի շրջանակում Հիմնադրամի կողմից ձեռքբերված գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալությանը տրամադրվել է 124.362,8 հազար դրամ:

Անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրերի շրջանակներում 2022 թ. հիմնադրամը իրականացրել է 1.243.989,3 հազար դրամի աջակցություն [1]:



Գրաֆիկ 8. Անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրերին ուղղված գումարները 2012-2022 թթ.

2015-2022 թթ. անասնապահության ոլորտին տրամադրվող աջակցության գումարները աճման դիտում են ցուցաբերել:

Գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աջակցության ծրագրի շրջանակում 2022 թ. Հիմնադրամը իրականացրել է 762,980.5 հազար դրամի աջակցություն, որից.

- 277.958,0 հազար դրամը՝ փոխառություններ,
- 105.473,5 հազար դրամը՝ առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում:

Գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աջակցության ծրագրի շրջանակում առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման նպատակով Հիմնադրամը տրամադրել է 300,000.0 հազար դրամի չափով երաշխավորագրեր:

Տեսանելի է, որ աջակցության ավելի քան 58 տոկոսը՝ 8 182 512,4 հազար դրամ, տրամադրվել է ապրիլյան քառօրյա պատերազմից հետո:



Գրաֆիկ 9. Գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աջակցության ծրագրի շրջանակում տրամադրված գումարները

Չնայած իրականացվել են բազմաթիվ ռազմավարական ծրագրեր՝ պարենային անվտանգության խնդրի լուծման համար, այնուամենայնիվ, այսօր Արցախը կանգնած է հումանիտար աղետի շեմին: 2022 թ. դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը փակել է Արցախը Հայաստանին կապող միակ ցամաքային ճանապարհը: Եվ շրջափակման ժամանակ ավելի վառ արտահայտվեցին գյուղատնտեսական խնդիրները, քանի որ Արցախը, չնայած ունի համապատասխան ներուժ, գյուղատնտեսական մթերքների մեծ մասը ներկրում է Հայաստանից:

Խնդիրները բազմաթիվ են:

Բոլոր տեսակի ապրանքատեսակների պակաս կա, որոշներն էլ շուկայում ընդհանրապես չկան: Բանջարեղենի և մրգի խանութները փակ են: Պետք է նշենք, որ դա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ վարելահողերի և պտղատու այգիների զգալի մասը մնացել է թշնամու վերահսկողության տակ անցած տարածքներում: Իհարկե, գյուղերում կան և մրգի, և բանջարեղենի որոշակի պաշարներ, բայց դա չի կարող բավարարել 120 հազար բնակչության պահանջարկը [8]:

Գյուղատնտեսական աշխատանքներն ընթանում են նախատեսվածից զգալիորեն քիչ ծավալներով, իսկ որոշ դեպքերում էլ դադարեցված են:

Բուսաբուծության ոլորտում բախվել ենք գարնանացան մշակաբույսերի սերմերի, պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, իսկ անասնա-

բուծության ոլորտում՝ հատիկային և խտացրած կերերի ներկրման հետ կապված խնդիրների հետ:

Վարելահողերը գարնանացան հացահատիկային, բանջարաբոստանային, ընդեղեն, կերային և յուղատու մշակաբույսերով զբաղեցնելու համար օգտագործվել են պահուստային պաշարների, ինչպես նաև Արցախում գործող ագրոմարկետներում առկա սերմերի մնացորդները: Նույն կերպ է լուծվելու նաև այդ աշխատանքների համար անհրաժեշտ վառելիքի խնդիրը [5]:

Արցախում առկա ջերմոցային տնտեսությունների մակերեսները սահմանափակ են: Առկա է նաև այլ խոչընդոտ. Արցախում կառուցված ջերմոցների գերակշիռ մասը չջեռուցվող է, այսինքն՝ նախատեսված չէ ձմռանը բանջարեղեն աճեցնելու համար: Դրանք զբաղեցված են կանաչեղենով, որը վաճառվում է տեղական շուկայում: Ջերմոցների այն փոքր մասը, որը հագեցված է ժամանակակից ջեռուցման համակարգերով, թշնամու սադրիչ գործողությունների հետևանքով թիրախավորված է, քանի որ էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման խնդիրների պատճառով մշտական և կայուն ջեռուցման ապահովման անհնարինության պայմաններում է գտնվում, ինչը չի կարող բացասաբար չանդրադառնալ բերքատվության վրա: Նաև այդ խնդիրների պատճառով է, որ ջերմատնային տնտեսությամբ զբաղվողները չեն ցանկանում իրենց չջեռուցվող ջերմոցները կահավորել ջեռուցման արդի համակարգերով՝ մտավախություն ունենալով, որ գազի խափանումների հետևանքով ցանված մշակաբույսերի սածիլները կամ բերքը կցրտահարվեն [6]:

Խոչընդոտներ կան ջերմոցաշինության բնագավառում, քանի որ կառուցման համար անհրաժեշտ նյութերը մեծամասամբ ներկրվում են, ինչն այս իրավիճակում անհնար է:

Այս ընթացքում բավականին տուժել է նաև անասնաբուծության ճյուղը. անասնակերի պակասի պատճառով ֆերմերները ժամանակից շուտ են իրականացնում կենդանիների մորթը: Բացի այդ, շուկայում տավարի մսի պակաս է նկատվում, որը առաջացել է պատերազմից հետո՝ արոտավայրերի և անասնագլխաքանակի կորստի պատճառով: Արդյունքում անասնագլխաքանակը կկրճատվի, որի հետևանքով կկրճատվի նաև կաթնամթերքը: Սա կհանգեցնի մսամթերքի ու կաթնամթերքի դեֆիցիտի, որի հետևանքով կդիտվի գնաճ:

Վիճակը հատկապես կրիտիկական է խոզաբուծության և թռչնաբուծության ուղղություններում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ կենդանատեսակները սնվում են բացառապես հատիկային կերով, ապա նաև այն փաստով, որ 2023 թվականի հունվար ամսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, խոզերի գլխաքանակն աճել է շուրջ 30 տոկոսով, այսինքն՝ կերի պահանջարկն աճել է [5]:

Այս ամենը կհանգեցնի գյուղատնտեսական համախառն արտադրանքի անկման, որի հետևանքով կնվազի նաև ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը:

Արցախի Հանրապետությունում նվազագույն սպառողական զամբյուղի ար-

ժեքը 2023 թ. մայիսի 2-ի դրությամբ կազմել է 81 416.3 դրամ, ինչը ցածր է 2023 թ. մարտի 31-ին հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից (82 269.7 դրամ) 1.0 տոկոսով և գերազանցում է նախորդ տարվա մայիսի 2-ի դրությամբ հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (71 555.4 դրամ) 13.8 տոկոսով: Սպառողական զամբյուղը իր մեջ ներառում է՝ հացամթերք, մսամթերք, կաթնամթերք, կարտոֆիլ, բանջարեղեն, միրգ, շաքար, ձու, բուսական յուղ, մարգարին, ձուկ [9]: Իսկ պարենային զամբյուղի արժեքը 2023 թ. մայիսի 2-ի դրությամբ կազմել է 45 997,9 դրամ: Պարենամթերքների հիմնական մասը քաղաքացիներին տրամադրվում է կտրոններով, սակայն նույնիսկ այդ պարենամթերքների մասով մենք չունենք ինքնաբավություն և ներկրում ենք:

Պարենային խնդիրների լուծման նպատակով իրականացվում են հետևյալ ծրագրերը.

▪ Գարնանացանի իրականացման համար փետրվարի 1-ից տրամադրվում են սերմեր, դիզվառելիք: Նախկինում ծրագրից օգտվելու համար պարտադիր պահանջ էր 0,5 հեկտար հողատարածքի առկայությունը, ներկայում այդ թիվը նվազեցվել է՝ կազմելով 0,1 հեկտար: Ուստի սկսած 1000 քառակուսի մետր տարածքից, հողօգտագործողները կարող են օգտվել ծրագրերից: Խոսքը վերաբերում է բանջարաբոստանային մշակաբույսերին: Գարնանացանի մյուս մշակաբույսերի դեպքում ծրագրով ավելի մեծ հողատարածքներ են պահանջվում:

▪ Դիզվառելիք և բենզին է տրամադրվում այն ջերմոցներին, որոնք ջեռուցվում են և ունեին գեներատորներ:

▪ Ջեռուցվող ջերմատնային տնտեսություններում բանջարեղենի և ծաղկի արտադրությամբ զբաղվողներին տրամադրվում է բույսերի համար անհրաժեշտ օրգանական պարարտանյութ:

▪ Անասնաբուծության զարգացմանն ուղղված կգործեն նույն ծրագրերը, ինչ նախորդ տարիներին՝ որոշ պայմանների ու կետերի վերանայմամբ [8]:

Աշխատանքի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

▪ Առաջնահերթ անհրաժեշտ է ապահովել պարենային անվտանգությունը: Պարենային անվտանգությունը կենսական նշանակություն ունի մարդու հիմնական կարիքները բավարարելու, առողջության և սնուցման խթանման, տնտեսական և սոցիալական կայունության ապահովման, կայուն զարգացման խթանման, ճկունություն ստեղծելու և գլոբալ կայունությանը նպաստելու համար: Այն պահանջում է բազմաչափ մոտեցումներ, այդ թվում՝ կայուն գյուղատնտեսական պրակտիկա, ռեսուրսների արդար հասանելիություն, սոցիալական ապահովության ցանցեր և միջազգային համագործակցություն՝ սննդամթերքի արտադրության, բաշխման և հասանելիության հետ կապված բարդ մարտահրավերների լուծման համար: Անհրաժեշտ է մի շարք պարենամթերքների մասով ապահովել լիարժեք ինքնաբավություն (հացահատիկի, բանջարեղենի, կարտոֆիլի, որոշ մրգերի ու կաթնամթերքի տեսականու առումով):

▪ Տարածքների կորստից հետո պետք է զբաղվել ինտենսիվ գյուղատնտեսու-

թյամբ՝ այսինքն միավոր հեկտարից ավելի շատ բերք ստանալ, ինչին կնպաստի ոռոգման համակարգի զարգացումը: Օրինակ՝ եթե նախկինում ցորենի մի քանի հազար հեկտար ցանքատարածություններ ունեինք, ու միջինը ստանում էինք 15-18 ցենտներ բերք հեկտարից, հիմա պիտի կարողանանք այդ ցուցանիշները հասցնել մինչև 40-50 ցենտների: Ժամանակակից գյուղատնտեսությունը դա թույլ է տալիս: Պարզապես պետք է հողօգտագործողներին հող մշակելու կուլտուրա սովորեցնել՝ ճիշտ պարարտացում, ճիշտ սերմերի ընտրություն, ցանքի ճիշտ ժամանակահատված և ցանքաշրջանառություն:

▪ Գյուղական բնակչության զբաղվածության ապահովման գործում կարևոր է մանր գյուղացիական տնտեսությունների միավորման արդյունքում միջին և խոշոր գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների ստեղծումը, քանի որ նրանց չնչին մասն է վարում շահութաբեր տնտեսություն և բարձր տնտեսական արդյունավետության պետք է հասնեն ռեսուրսային պոտենցիալի դեֆիցիտի պայմաններում:

▪ Անհրաժեշտ է ուժեղացնել ինֆորմացիոն-տեղեկատվական բազան: Մեծ բաց է առկա տեղեկատվական ոլորտում. չկա տեղեկատվական կենտրոն, և գյուղացիական տնտեսությունները տեղյակ չեն շուկայական միտումներից և չեն կողմնորոշվում՝ ինչ կարելի է արտադրել հաջորդ տարում: Եթե տվյալ տարում, որոշակի խնդիրներով պայմանավորված, այս կամ այն արտադրանքը ունենում է բարձր շուկայական գին, տնտեսավարող սուբյեկտները մեծամասամբ հաջորդ տարի արտադրում են հենց այդ արտադրանքը, արդյունքում բնական է, որ շուկայական կառուցակարգերով ձևավորվող հաջորդ տարվա գները էապես ցածր են լինելու նախորդ տարվա նկատմամբ՝ պայմանավորված շուկայական առաջարկի բարձր մակարդակով: Տեղեկատվության պակասով պայմանավորված կրճատվում են նաև գյուղատնտեսական արտադրանքը. պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմերի ոչ ճիշտ օգտագործումը հանգեցնում է նախատեսված արդյունքի թերկատարման և կորուստների, որից էլ ելնելով՝ տնտեսավարող սուբյեկտները հրաժարվում են ոլորտում նմանատիպ գործունեություն ծավալելուց: Տեղեկատվական-ուսուցողական կենտրոնների ստեղծումը հնարավորություն կտա բացահայտել իրական պահանջարկը՝ շուկայի համակարգված ուսումնասիրությունների իրականացման շնորհիվ: Բացի այդ՝ գյուղատնտեսական աշխատանքը, որի գծով բազային գիտելիքների տրամադրումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը, որակի բարելավմանը և կորուստների կրճատմանը:

▪ Կարևոր է նաև լուծել գյուղատնտեսական արտադրանքների իրացման հարցը: Իրացման խնդիրը, որը վերջին տարիներին գլխավոր խնդիրներից է եղել, լրջորեն խոչընդոտում է գյուղատնտեսության ոլորտի դինամիկ զարգացմանը: Նշվածը վերաբերում է նաև արտահանմանը, որովհետև արտահանման մեծ ներուժ ունեցող արտադրանքների արտահանման ծավալների ավելացմանը շարունակում են լրջորեն խոչընդոտել շուկայական ենթակառուցվածքների անկատարությունը, լոգիստիկ և տարբեր այլ խնդիրները: Շրջափակման պայմանե-

ռում տեղական շուկայում գնող-իրացնող շղթայի օղակների անկատարության և թերզարգացվածության գործոնով, ինչպես նաև վերավաճառողների ինստիտուտի բարձիթողի վիճակով պայմանավորված՝ լուրջ խնդիրներ են առաջանում նաև տեղական շուկայում: Արդյունքում՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսավարող սուբյեկտները չափազանց բարձր ռիսկային ոլորտում բարձր ինքնարժեքով արտադրում են արտադրանք և մեծամասամբ իրացնում են վերավաճառողներին, որոնք, շահույթի բարձր մակարդակ ապահովելով, գործնականում ապահովում են ավելի բարձր արդյունավետություն, քան բուն արտադրողը, որովհետև շուկան գրեթե չի կարգավորվում: Խնդրի լուծում կարող է հանդիսանալ գյուղերում համապատասխան պահեստների ստեղծումը, որտեղ կհավաքագրվի գյուղատնտեսական արտադրանքը՝ նախօրոք սահմանված գներով, և կմատակարարվի համապատասխան վերավաճառողներին:

▪ Օգտագործելով թվային տեխնոլոգիաները և կիրառելով խելացի գյուղատնտեսական պրակտիկա՝ ֆերմերները կարող են հասնել ավելի բարձր արտադրողականության, օպտիմալացնել ռեսուրսների օգտագործումը, նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և բարձրացնել ընդհանուր կայունությունը գյուղատնտեսության մեջ: Այնուամենայնիվ, կարևոր է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասանելիությունը, գնային մատչելիությունը և տեխնիկական հմտությունների անհրաժեշտությունը այս տեխնոլոգիաները կիրառելիս, հատկապես փոքր և ռեսուրսներով սահմանափակ գյուղատնտեսական գործառնություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Մ., Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը և դրանց արդյունքները, Գիտական Արցախ, 2022, 174-187 էջեր:
2. Խաչատրյան Մ., Պատերազմի հետևանքով ԱՀ ագրոպարենային համակարգի կորուստները և պետական ծրագրերը, Բանբեր ՀՊՏՀ, 2022, 95-111 էջեր:
3. ԱՀ ԱՎԾ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը (2023 թ. հունվար) http://stat-nkr.am/hy/component/content/article/758-2017-10-24-13-13-06
4. ԱՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, 2020 թ. Տարեկան հաշվետվություն http://agrofund.am/2020-2/
5. ԱՀ Գյուղատնտեսության նախարարություն http://minagro.nkr.am/
6. ԱՀ ինքնաբավության ապահովման հնարավորություն (29. 10. 2021) https://www.artsakhtert.com/arm/index.php/economy/item/
7. ԱՀ համախառն ներքին արդյունքը (2022 թ. հունվար-դեկտեմբեր) http://stat-nkr.am/hy/component/content/article/757-2017-10-24-08-37-23
8. ԱՀ շրջափակումը 2022-2023 թթ. https://www.artsakhpress.am/arm/news/economy/
9. Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2022 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ (09. 01. 2023) http://stat-nkr.am/hy/2010-11-24-10-40-02/1446-30-2022

Текущие проблемы сельского хозяйства Арцаха

Карапетян Анна
АрГУ, Менеджмент (по отраслям), 3-й курс
Научный руководитель:
преподаватель АрГУ М. Хачатрян

Резюме

Ключевые слова: *продовольственная безопасность, проблемы агропродовольственной сферы, интенсивное сельское хозяйство, государственная поддержка*

Цель статьи – изучить актуальные проблемы сельского хозяйства Республики Арцах, структуру и эффективность программ государственной поддержки. В соответствии с этим, в статье была проанализирована динамика основных показателей, характеризующих сферу в довоенный, послевоенный периоды и период блокады, а также бвла представлена программа деятельности фонда содействия сельскому хозяйству. Учитывая вызовы, возникшие в агропродовольственной сфере, предлагается уделить большое внимание интенсивному развитию сельского хозяйства, применению научных подходов.

Current Challenges of Artsakh Agriculture

Karapetyan Anna
ASU, Management (by sector), 3rd year
Academic Supervisor: M. Khachatryan.
ASU Lector

Summary

Key words: *food security, problems of the agro-food sector, intensive agriculture, state support*

The purpose of the article is to study the current problems of agriculture in the Republic of Artsakh, the structure and effectiveness of state support programs. In accordance with this, the following tasks were considered in the article: to analyze the dynamics of the main indicators characterizing the sphere in the pre-war, post-war period and the period of the blockade, also to represent the programs of the Artsakh Agricultural Assistance Fund. Taking into account the challenges that have arisen in the agri-food sector, it is proposed to pay great attention to the intensive development of agriculture, the application of scientific approaches to agriculture.

ՓՄՁ զարգացման հեռանկարները գործարար միջավայրի բարելավման համատեքստում

Հովհաննիսյան Արեգա
ԳՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Գ. Խաչատրյան

Հանգուցային բառեր. *գործարար միջավայր, փոքր և միջին ձեռնարկություն, միջին ամսական անվանական աշխատավարձ, համախառն ավելացված արժեք*

Գործարար միջավայրի բարելավումը այսօր դարձել է ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային տնտեսության արդիական խնդիրը, որն էլ նպաստում է միջազգային շուկայում մրցունակ դիրքերի նվաճմանը:

Գործարարությունը, օժտված լինելով այնպիսի հատկանիշներով, ինչպիսիքն են՝ կայունությունը, որոշակիությունը և բարդությունը, ձեռնարկությանը շրջապատող արտաքին և ներքին գործոնների ամբողջությունն է, տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրական ունակությունների դրսևորման վարքագիծը: Այս ոլորտում առկա են մի շարք խոչընդոտներ, ինչպիսիքն են՝ երկրի ռիսկայնությունը, քաղաքական դրությունը, դատական համակարգը, հարկային համակարգի կայունությունը, ներդրողների շահերի պաշտպանությունը, մակրոտնտեսական քաղաքականության և տնտեսության դիվերսիֆիկացման ներդաշնակեցումը և այլն: Հաշվի առնելով առկա գործոնները՝ Համաշխարհային բանկի հրապարակած «Գործարարություն 2020» (Doing Business) զեկույցում Հայաստանի՝ 190 տնտեսությունների շարքում նախորդ տարվա 41-րդի համեմատ 47-րդ տեղը զբաղեցրած ցուցանիշը վկայում է այն փաստի մասին, որ Հայաստանը, ցավոք սրտի, զիջում է հարևան երկրներին՝ բացառություն կազմելով միայն Իրանը, որը 127-րդ հորիզոնականում է [2]:

Հարկ է ընդգծել, որ Doing Business-ը դիտարկում է տեղական փոքր և միջին ձեռնարկությունները և չափում կանոնները, որոնք ազդում են դրանց վրա իրենց կյանքի ցիկլի ընթացքում: Տվյալ պարագայում ուշագրավ է այն հանգամանքը, որ որևէ երկրում գործարար միջավայրում առկա հիմնախնդիրների բացահայտումները պահանջում են հատուկ ուշադրություն դարձնել հենց փոքր և միջին ձեռնարկատիրությանը և վերջինիս զարգացման հնարավորություններին. բացահայտ ընդունելի փաստ է այն, որ ՓՄՁ զարգացումը երկրի տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկն է, որը սերտորեն առնչվում է գործարարության հետ՝ ստեղծելով սոցիալ-տնտեսական ռազմավարական այնպիսի նպաստավոր պայմաններ, ինչպիսիքն են՝ տնտեսական աճի ցուցանիշների կայունացում, աղքատության մակարդակի նվազում, գործազրկության մակարդակի նվազում, գիտատեխնիկական աճի խթանում և մի շարք սոցիալական խնդիրների լուծում:

Աղյուսակ 1.

Միկրո, փոքր և միջին կազմակերպությունների սահմանումը Հայաստանի Հանրապետությունում [6]

ՓՄՁ դասակարգում	Վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը	Կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը
Գերփոքր	Մինչև 9	<100 մլն ՀՀ դրամ	<100 մլն ՀՀ դրամ
Փոքր	10-49	<500 մլն ՀՀ դրամ	<500 մլն ՀՀ դրամ
Միջին	50-249	<1.5 մլրդ ՀՀ դրամ	<1.0 մլրդ ՀՀ դրամ

Սահմանման տարբեր մոտեցումներից ելնելով՝ անդրադարձ կատարենք ՓՄՁ սուբյեկտների վարչական նպատակներով դասակարգմանը՝ համաձայն վերոնշյալ չափանիշների, ըստ որի՝ ՀՀ-ում ՓՄՁ սահմանումը աշխատողների միջին ցուցակային թվաքանակի մասով համապատասխանեցվել է Եվրամիության անդամ երկրներում գործող ՓՄՁ սահմանման հետ, որը արտացոլված է աղյուսակ 1-ում:



Գծապատկեր 1. Տնտեսավարողների քանակն ըստ տնտեսական գործունեության տեսակների ու տնտեսավարողների չափերի, 2021 թ., մարդ [3]

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ զարգացման արդյունավետությունը գնահատող առանցքային ցուցանիշներից է տնտեսավարողների քանակն ըստ տնտեսական գործունեության տեսակների և ըստ ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի: Գծապատկեր 1-ի ցուցանիշները փաստում են, որ 2021 թվականին գերփոքր կազմակերպությունում տնտեսավարողների քանակը հասել է ամենաբարձր ցուցանիշին մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 49 364 մարդ: Համաձայն

ՓՄՁ վիճակագրական տվյալների՝ պարզ է դառնում, որ միջին ձեռնարկությունը գրանցել է իր առաջանցիկ ցուցանիշը մշակող արդյունաբերության ոլորտում՝ 209 աշխատող, իսկ փոքր ձեռնարկությունում մեծածախ և մանրածախ առևտրում աշխատողների թվով նախորդ տարվա համեմատ ցուցանիշը աճել է 64-ով՝ 1051 աշխատողից հասնելով 1115-ի [3]:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր երկրի համար առաջնային խնդիրներից է տարածքային համաչափ սոցիալ-տնտեսական զարգացումը, որում իր մեծ ավանդն ունի հենց ՓՄՁ զարգացումը: Այս համատեքստում անդրադարձ կատարենք ՓՄՁ զարգացման գնահատականին հենց Հայաստանի տարածքային մակարդակով, որն էլ կփաստի ՀՀ Կառավարության կողմից իրականացվելիք քայլերի և վերջիններիս քաղաքականությունների համակցման անհրաժեշտության մասին:

Գծապատկեր 2-ի տվյալներն ուսումնասիրելով՝ ակնհայտ է դառնում, որ Հայաստանում առկա է տարածքային զարգացման անհամաչափություն: Աշխատողների համակենտրոնացումը դեպի Երևան՝ 51 %, առնչվում է այնպիսի հիմնախնդրի հետ, ինչպիսին է մարզերում ձեռնարկատիրական հմտությունների ցածր մակարդակը, ինչպես նաև խորհրդատվական, ներդրումային ծրագրերի ապակենտրոնացումը մեկ վայրում՝ մայրաքաղաքում:



Գծապատկեր 2. Տնտեսավարողների քանակի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2021թ. [3]

Մնացած մարզերում վերոնշյալ ցուցանիշը ունի նվազման միտում, Գեղարքունիքի մարզում 9, իսկ Լոռու, Արմավիրի և Արարատի մարզերում համապատասխանաբար հավասար 6-ական տոկոսային նիշեր: Տնտեսավարողների քանակով վատթարագույն վիճակը Վայոց ձորի մարզում է՝ 2 տոկոս:

ՓՄՁ-ն, ընդգրկելով տնտեսության բազմաբնույթ և նեղ շրջանակներ, հնարավորություն է տալիս սոցիալական ոլորտի բարելավմանը, այդ թվում ապահո-

վում է զբաղվածությունը համեմատաբար սոցիալական անկայուն խավերի համար: Ուստի, վերոնշյալ ոլորտում վարձու աշխատողների թվաքանակը իր ամենամեծ ցուցանիշն է գրանցել միջին ձեռնարկությունում՝ Երևան քաղաքում, իսկ հետո Կոտայքի մարզում՝ 7042 մարդ: Նկատենք նաև, որ 2020 թվականին վարձու աշխատողների թվաքանակը և՛ փոքր, և՛ միջին ձեռնարկություններում ընդունել է գրեթե հավասար ցուցանիշներ, իսկ 2021 թվականին այս ցուցանիշով փոքր ձեռնարկությունը ունեցել է բավականին մեծ աճ՝ 74 712 մարդ 69 107-ի նկատմամբ:



Գծապատկեր 3. Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ու ՓՄՁ տնտեսավարողների չափերի, 2021թ. [3]

Վերոնշյալ ուսումնասիրվող հանգամանքները կախված են մի շարք գործոններից, ինչպիսին է հենց աշխատավարձի մակարդակը: Ուսումնասիրելով միջին ամսական անվանական աշխատավարձը ըստ ՀՀ տարածքային ընդգրկման և ՓՄՁ տնտեսավարողների չափերի (գծապատկեր 3), նկատելի է, որ միջին ձեռնարկությունում վերոնշյալ ցուցանիշով Սյունիքի մարզը գերազանցել է Երևան քաղաքին՝ գրանցելով 368303 դրամ՝ հաշվի առնելով, որ հենց այստեղ է գտնվում ՀՀ առաջատար հանքարդյունահանող ընկերությունը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է փոքր ձեռնարկությունում և Տավուշի մարզում՝ 100692 դրամ, որն էլ պայմանավորված է հիմնականում սահմանային լարված դրությամբ, ուստի աշխատողների՝ աշխատելու նկատմամբ ցածր շահադրդմամբ: Այս առումով առավելագույն աշխատավարձը գրանցվել է տեղեկատվություն և կապ բնագավառում, իսկ նվազագույնը՝ կացության և սննդի հանրային կազմակերպման ոլորտում:

Ընդհանուր առմամբ ՓՄՁ ոլորտը իր ազդեցիկ լծակն ունի նաև ՀՆԱ ցուցանիշների նկատմամբ: Հիմք ընդունելով ՀՀ ԱՎԿ վիճակագրական հրապարակում-

ների ցուցանիշները՝ հարկ է ընդգծել, որ 2021 թվականին ՀՆԱ-ում համախառն ավելացված արժեքի մասնաբաժնի և՛ առավելագույն, և՛ նվազագույն ցուցանիշները գրանցված են փոքր ձեռնարկությունում՝ համապատասխանաբար արդյունաբերության ոլորտը 3.3 % և առևտրի ոլորտը՝ 1.4 % [3]:

Վերոգրյալ խնդիրներին և ցուցանիշներին համապատասխան, կարող ենք հանգել այն փաստին, որ ՓՄՁ ոլորտի զարգացումը բավարար չէ արդյունավետություն ապահովելու համար: Տարածքային համաչափ զարգացման համատեքստում էական է յուրաքանչյուր չափի կազմակերպության գոյությունը յուրաքանչյուր տարածաշրջանում, ինչպես նաև պետության կողմից այնպիսի սահուն քաղաքականության իրականացում, որը հնարավորություն կտա բոլոր մարզերում ապահովել կյանքի որակի նույնատիպ մակարդակ ՓՄՁ արդյունավետ և համաչափ զարգացմամբ [1]:

Գծապատկեր 4. SWOT վերլուծություն ՓՄՁ ոլորտում[1]

Գծապատկեր 4-ում արտացոլված վ----------1երլուծական և համեմատական առավելությունները բնութագրում են փոքր և միջին ձեռնարկատիրությանը՝ գործարարության ոլորտում խոշոր ձեռնարկության բնութագրիչ առանձնահատկությունների նկատմամբ:

Այս բնագավառում իր ուրույն և բացառիկ դերն ունի ոչ միայն ՀՀ էկոնոմի-

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

կայի նախարարությունը, այլև ՀՀ ֆինանսների նախարարությունը, ինչպես նաև այլ լիազորված մարմիններ՝ յուրաքանչյուրն օժտված լինելով իրեն բնորոշ կարգավորիչ գործիքակազմով:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը մշակել է ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը, որի համաձայն՝ նպատակը Հայաստանի Հանրապետության ՓՄՁ-ների համար բարենպաստ միջավայրի ստեղծումն է՝ ձեռնակատիրական հմտությունների զարգացման, գաղափարների իրագործման, մրցունակության բարձրացման միջոցով, որը հնարավորություն կտա նաև ապահովել ՓՄՁ-ների համար ներքին և արտաքին շուկաների հասանելիությունը: Արդյունքում աճելով ՓՄՁ արտադրողականությունը՝ նախատեսվում է 2024 թվականին մեկ զբաղվածի կողմից ստեղծված ավելացված արժեքը հասնել 12 մլն ՀՀ դրամ, որը հանդիսանում է 2018 թվականի համապատասխան ցուցանիշի կրկնապատիկը: Ռազմավարության թիրախային գործունեության արդյունքում կաճի տարեկան միջինում 2,5 %-ով [6]:

Ըստ ֆինանսների նախարարության կողմից մշակած հաշվետվության՝ նախատեսվում է գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին 200 գործարար ուսուցողական, 30 ֆինանսական և ներդրումային աջակցության տրամադրում [4]:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը 2021-2026 թվականներին կազմել է հնգամյա ծրագիր, ըստ որի՝ նախատեսվում է 2026 թվականին ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում նախկին 39,7 տոկոսի փոխարեն հասնել 55 տոկոսի: Վերջինիս տարբեր ոլորտների աջակցության ծրագրի բյուջեն կազմում է 160,1 մլն դրամ [5]:

Անհրաժեշտ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում 2002 թվականից ի վեր գործում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը», որի շնորհիվ թե՛ սկսնակ, թե՛ գործող ՓՄՁ-երը մտնում են մրցակցային շուկա և գրանցում գերազանց ցուցանիշներ՝ ՓՄՁ ԶԱԿ-ի շնորհիվ ստանալով ֆինանսական աջակցություն և միջազգային համագործակցության հնարավորություն, ինչպես նաև ձեռք բերելով նորանոր և ոլորտին բնորոշ մրցունակ հմտություններ: Ծրագրերի միջազգայնացման գործընթացում դեռևս նկատվում է առկա հնարավորությունների պակաս՝ սահմանափակվելով եվրոպական տարածաշրջանով, չնայած որն ունի տարածքային ընդլայնման պոտենցիալ մեծ հնարավորություններ [7]: Հիմք ընդունելով վերը կատարված վերլուծությունները գործարարության և ՓՄՁ բնագավառների վերաբերյալ և առկա հիմնախնդիրները ոլորտում՝ առաջարկում ենք՝

- փոքր և միջին կազմակերպությունների համար պարբերաբար կազմակերպել տեղեկատվական, խոհրդատվական սեմինարներ, որպեսզի վերջիններս սեփական իրավունքների, պարտականությունների, ինչպես նաև սահմանված արտոնությունների մասին տեղեկացված լինեն,
- մենեջմենթի որակավորման ցածր աստիճանի պարագայում մասնագիտական գրականության թարգմանության անհրաժեշտություն է առաջանում,
- պետության կողմից մարզերում, հատկապես սահմանամերձ բնակավայրե-

րում, տարածքային համաչափ գործարարության զարգացմանը խթանող որոշակի և Երևանի նկատմամբ համեմատական արտոնությունների սահմանում:

Այսպիսով համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ-ն գործում է տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում՝ ապահովելով գործարարության ոլորտում արդյունավետ ցուցանիշների կայունությունը և պարարտ հող նախապատրաստում մրցակցային շուկայական հարաբերություններում:

ՓՄՁ-ն, լինելով ճկուն նոր աշխատատեղերի ստեղծման գործում, հնարավորինս չափ մեղմելով լարվածությունը աշխատաշուկայում, հնարավորություն է ընձեռում մրցակցության վրա հիմնված այնպիսի մասնավոր հատվածի ստեղծում, որն էլ իր հերթին կապահովի կայուն տնտեսական աճ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալստյան Գ., Բաղալյան Գ., Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հնարավորությունները ՀՀ մարզերում և Երևանում, ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր, բաժանմունք 2-րդ, Երևան, 2021, էջ 297:
2. «Գործարարություն 2020» զեկույց, URL: www.worldbank.org (հասանելի է 20. 01. 2023):
3. ՓՄՁ վիճակագրական ցուցանիշներ, URL: www.armstat.am (հասանելի է 19. 01. 2023):
4. Ֆինանսների նախարարության կողմից մշակած հաշվետվության, URL: www.minfin.am (հասանելի է 24. 01. 2023):
5. Հայաստանի Հանրապետության կառավարության զարգացման հնգամյա ծրագիր, URL: www.gov.am (հասանելի է 24. 01. 2023):
6. ՓՄՁ կազմակերպությունների սահմանումը Հայաստանի Հանրապետությունում, URL: www.mineconomy.am (հասանելի է 04. 05. 2023):
7. Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, URL: www.smednc.am (հասանելի է 04. 05. 2023):

Перспективы развития МСП в контексте улучшения деловой среды

Оганнисян Арега
ГГУ, Финансы (по отраслям), 3-й курс
Научный руководитель: Г. Хачатрян,
кандидат экономических наук, доцент

Резюме

Ключевые слова: *бизнес-среда, малое и среднее предприятие, среднемесячная номинальная заработная плата, валовая добавленная стоимость*

Развитие МСП и совершенствование предпринимательства являются приоритетными задачами, стоящими перед страной. В статье были освещены существующие проблемы в вышеуказанной сфере, проведены соответствующие факторные анализы и даны рекомендации, придающие первостепенное значение сбалансированному территориальному развитию.

SME Development Prospects in the Context of Business Environment Improvement

Hovhannisyan Arega
GSU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: G. Khachatryan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *business environment, small and medium enterprises, average monthly nominal wages, gross value added*

The development of SMEs and the improvement of entrepreneurship are priority tasks facing the country. Therefore, the article highlighted the existing problems in the above-mentioned area, carried out appropriate factor analyzes and made recommendations that attach paramount importance to balanced territorial development.

ՀՀ բանկային համակարգի գործունեության ընդհանուր վերլուծությունը

Ղահրամանյան Աննա
ԱրՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Ավանեսյան

Հանգուցային բառեր. *ՀՀ բանկային համակարգ, ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթ, ՀՀ ՀՆԱ, ՀՀ բանկային համակարգի կայունության ցուցանիշները*

Բանկային համակարգը այս կամ այն երկրում պատմականորեն ձևավորված և օրենսդրորեն ամրագրված տարբեր տեսակի փոխկապակցված բանկերի և այլ վարկային կազմակերպությունների ամբողջություն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային համակարգի շրջանակներում: Բանկային համակարգը երկրի ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասն է, ֆինանսական համակարգի հանգուցային օղակը [1, 12]:

Հայտնի է, որ Հայաստանի տնտեսական համակարգում առավել զարգացածը համարվում է ֆինանսականը հատկապես բանկայինը, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Դրա մասին փաստում է այն, որ ՀՀ բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին կազմում է ավելի քան 105 %: ՀՀ բանկային համակարգը ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 84 %-ը, ուստի կարևոր է դրա ֆինանսական վիճակի և զարգացման միտումների ուսումնասիրությունը: ՀՀ բանկային համակարգը երկմակարդակ բանկային համակարգ է, որն ընդգրկում է ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը, նրանց մասնաճյուղերը, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները (կետերը), ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները [2]:

2023 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում է 18 առևտրային բանկ՝ 548 մասնաճյուղերով [4]: ՀՀ բանկային համակարգում գործող բանկերը ունիվերսալ բանկեր են, այսինքն՝ իրականացնում են օրենսդրությամբ նախատեսված բոլոր տեսակի բանկային գործառնությունները:

ՀՀ առևտրային բանկերի և բանկային համակարգի վերլուծության և ներկայացման նպատակով ուսումնասիրվել, հաշվարկվել և վեր են լուծվել մի շարք ցուցանիշներ: Այդ ցուցանիշների մեջ առավել կարևորներից են ՀՀ առևտրային բանկերի 2021-2022 թթ. հիմնական հաշվեկշռային ցուցանիշները:

Ըստ յուրաքանչյուր բանկի՝ նշված ցուցանիշները 2021 և 2022 թթ. համար գրաֆիկական տեսքով ներկայացված են գծապատկերներ 1-ում և 2-ում [4]:



Գծապատկեր 1. ՀՀ առևտրային բանկերի ակտիվները, պարտավորությունները, կապիտալը և շահույթը 2021 թ. (միլիոն դրամ)



Գծապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի ակտիվները, պարտավորությունները, կապիտալը և շահույթը 2022 թ. (միլիոն դրամ)

Ուսումնասիրելով այդ ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ 2022 թ. գրանցվել է բոլոր ցուցանիշների կտրուկ աճ: Ակտիվների և պարտավորությունների չափով առաջատար է Արդշինբանկը, որի ակտիվները կազմել են ՀՀ բանկային համակարգի ակտիվների 18,5 %-ը (1556786,6 մլն ՀՀ դրամ), իսկ պարտավորությունները՝ 19 %-ը (1411223,2 մլն ՀՀ դրամ): Ըստ կապիտալի մեծության՝ առաջատարն Ամերիաբանկն է, որի կապիտալը կազմում է ՀՀ բանկային համակարգի կապիտալի 13 %-ը (172051,5 մլն ՀՀ դրամ): 2022 թ. Ամենամեծ շահույթը գրանցել է Արդշինբանկը, շահույթը կազմել է ավելի քան 62213,1մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով ավելի քան 4,5 անգամ: Արդշինբանկի գրանցած շահույթը կազմել է ՀՀ բանկային համակարգի շահույթի 23,6 %-ը: Տարին վնասով է փակել միայն «ՎՏԲ Հայաստան» բանկը:

Ընդհանուր բանկային համակարգի ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի աճը գրաֆիկորեն ներկայացված է գծապատկեր 3-ում: Ընդհանուր շահույթը կազմել է 263 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատու-

թյամբ ավելանալով ավելի քան 4 անգամ: Շահույթի նման աննախադեպ աճը հիմնականում պայմանավորված է ոչ տոկոսային եկամուտների (մասնավորապես, արտարժույթի առքուվաճառքից գոյացած եկամտից) զգալի աճով:



Գծապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի փոփոխությունը 2021-2022 թթ. (միլիոն դրամ)

Դեռևս այս տարվա երկրորդ եռամսյակից հետո արդեն պարզ էր, որ հայաստանյան բանկերը 2022 թվականը ռեկորդային շահույթով են փակելու: Ինչպես Հայաստանում գրանցվող երկնիշ տնտեսական աճը, այնպես էլ բանկերի շահույթի ռեկորդային այս ցուցանիշը առաջին հերթին պայմանավորված է ոչ ռեզիդենտներին մատուցված ծառայություններով:

2022 թվականի ընթացքում հայաստանյան բանկերը նաև իրենց ծառայություններն են թանկացրել, մասնավորապես՝ միջազգային դրամական փոխանցումների ոլորտում, ինչը ևս լրացուցիչ եկամուտների աղբյուր է եղել նրանց համար: Ընդ որում՝ փոխանցումների միջնորդավճարների բարձրացումը բանկերում բացատրում էին այն ռիսկով, որ արևմուտքի պատժամիջոցներից հետո ռուսաստանցիները հայկական բանկերը կարող են օգտագործել փողերի լվացման համար: Սակայն, հատկանշական է, որ այս ծառայությունները ոչ միայն օտար-

երկրացիների համար են թանկացել, այլև Հայաստանի քաղաքացիների:

Հաճախորդների հանդեպ պարտավորությունների բարձր աճը բացատրվում է ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանից, Ուկրաինայից և, մասամբ, Բելառուսից Հայաստան ժամանած ռելոկանտների կողմից բազմաթիվ հաշիվների բացմամբ, որոնք երկիր են տեղափոխել իրենց կապիտալներն ու բիզնեսը: Հենց մեծ թվով ռելոկանտների (մոտ 100 հազար մարդ) ներկայությունն է հայկական բանկինգի առաջնահերթությունները ավանդական վարկավորումից «տեղափոխել» քարտային և արժութային գործառնությունների: Ընդ որում, վերջիններիս հաշվին, փոխարժեքի բարձր փոփոխականության ֆոնին, Հայաստանի ֆինանսական հատվածը սկսել է ստանալ գերշահույթ, որը միաժամանակ ապահովվել է ոչ ռեզիդենտների համար սահմանված քարտերի և հաշիվների բացման բարձր սակագներից ստացված եկամուտներով, ինչպես նաև ֆինանսական գործարքների գծով միջնորդավճարների ընդհանուր աճով:

Պատկերն ավելի պարզ դարձնելու և անցած տարիների ցուցանիշների հետ համեմատելու նպատակով համադրենք և ներկայացնենք նաև 2018-2022 թթ. բանկային համակարգի նույն ցուցանիշները (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի փոփոխությունը 2018-2022 թթ. (միլիոն դրամ)

Կարելի է նկատել, որ ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի ցուցանիշները շարունակաբար աճում են: Շահույթը աճել է 2018 և 2019 թթ., ինչը հիմնականում պայմանավորված էր վարկավորման ծավալների և, հետևաբար, նաև զուտ տոկոսային եկամուտների աճով, ինչպես նաև արժեզրկման կորուստների նվազմամբ: Սակայն շահույթը անկում է ապրել 2020 թ. պայմանավորված ՀՀ կառավարության հայտարարած արտակարգ դրությամբ՝ կապված Covid-19 համավարակի տարածման կանխարգելման, ինչպես նաև Արցախյան պատերազմով և դրա հետևանքներով, չնայած տվյալ տարում, ի տարբերություն մյուս տարվա, բոլոր բանկերը տարին ավարտել են շահույթով: 2021 և 2022 թթ. շահույթը սկսել է կտրուկ աճ ապրել՝ 2022 թ. հասնելով ռեկորդային մակարդակի, ինչը պայմանավորված էր զուտ տոկոսային եկամուտների զգալի աճով:

Բանկային համակարգի վերլուծության նպատակով դիտարկենք նաև 2022 թ. ընդունված ավանդները և տրված վարկերը: Համադրենք այդ տվյալները 2021 թ. նույն ցուցանիշների հետ: Նկատվում է ինչպես ավանդների, այնպես էլ վարկերի ծավալի զգայուն աճ, ընդ որում ավանդների աճը զգալիորեն գերազանցում է վարկերի աճը:

Ավանդների ծավալի աճի ցուցանիշը վերջին 5 տարիների արձանագրված ամենաբարձր ցուցանիշն է և փաստում է ՀՀ բանկային համակարգի նկատմամբ վստահության բարձրացման մասին: Այն կազմել է 5122,6 մլրդ ՀՀ դրամ: Ավանդների ծավալով առաջատար է Արդշինբանկը, ում կողմից ներգրավված ավանդները կազմել են նրա պարտավորությունների ավելի քան 67 %-ը: Ներգրավված ավանդների 72 %-ը ապահովվել է ռեզիդենտների, իսկ մնացած 28 %-ը՝ ոչ ռեզիդենտների կողմից: Ոչ ռեզիդենտներն իրենց ֆինանսական միջոցների հիմնական հատվածը՝ ավելի քան 80 %-ը, նախընտրել են բանկերում որպես ավանդներ դնել արտարժույթով: Ի տարբերություն ոչ ռեզիդենտների, ռեզիդենտներն իրենց միջոցների կեսից ավելին գերադասել են ներդնել ազգային արժույթով, ինչը փաստում է ազգային արժույթի նկատմամբ ռեզիդենտների կողմից վստահության մասին:

2022 թ. տրամադրված վարկերի մեծությունը կազմել է 4475,3 մլրդ ՀՀ դրամ: Տրամադրված վարկերի ծավալով առաջատար է Ամերիաբանկը, ում կողմից տրամադրված վարկերի մասնաբաժինը նրա ակտիվների կազմում 58 % է: Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2022 թ.-ին վարկային պորտֆելի ամենամեծ մասը բաժին է ընկել տնային տնտեսություններին: Բացասական դինամիկա է նկատվել բիզնես ոլորտին տրամադրված վարկերի մեջ: Առավել մեծ թափով են աճել դրամով տրված վարկերը, վարկերի դոլարիզացիայի մակարդակը նվազել է [6]:

ՀՀ բանկային համակարգի կայունության աստիճանի բնորոշման համար օգտագործվում են ՀՀ բանկային համակարգի իրացվելիության և կապիտալի համարժեքության նորմատիվները (գծապատկեր 5) [5]: ՀՀ ԿԲ-ի կողմից օրենսդրորեն ամրագրված են նշված նորմատիվների նվազագույն սահմանաչափերը՝

Ն1.2 նորմատիվի նվազագույն սահմանաչափը՝ 12 %, Ն2.1 նորմատիվը՝ 15 %, Ն2.2՝ 60 % [3]: Ցուցանիշների դինամիկայից ակնհայտ է, որ ՀՀ բանկային համակարգի նորմատիվները ոչ միայն համապատասխանում, այլ նաև գերազանցում են ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն սահմանաչափերը, ինչը վկայում է բանկային համակարգի կայունության, վճարունակության, իրացվելիության և հուսալիության մասին: Ելնելով ներկայացված տվյալներից՝ կարող ենք պնդել, որ 2020 թ. բոլոր նորմատիվների չափերը նվազել են՝ կապված Covid-19 համավարակի և Արցախյան պատերազմի ու դրա հետևանքների հետ:



Գծապատկեր 5. Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները 2018-2022 թթ.

Բանկային համակարգի զարգացումը կարելի է գնահատել՝ օգտագործելով նաև այլ ցուցանիշներ: Այդ ցուցանիշները հնարավորություն են տալիս բացահայտելու երկրի բանկային համակարգի զարգացման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև նրա գործունեության որոշ համակարգային ռիսկերը: Դինամիկայի մեջ այս ցուցանիշները կարող են վկայել բանկային հատվածում բացասական երևույթների, կայուն զարգացման նվազման մասին: Վերոնշյալ ցուցանիշներից որոշները ներկայացված են աղյուսակ 1-ում [5, 7]:

Աղյուսակի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ ցուցանիշները հիմնականում դրսևորում են աճի միտում: Բանկային համակարգի ակտիվների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ վկայում է երկրի տնտեսության մեջ բանկային համակարգի մասնակցության աստիճանի, դերի մասին. ինչքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան մեծ տեսակարար կշիռ ունի բանկային համակարգը երկրի տնտեսության զարգացման գործում: Նշված ցուցանիշը նվազել է միայն 2021 թ., չնայած նրան, որ այդ թվականին աճել են և՛ բանկային համակարգի ակտիվները,

և՛ ՀՀ ՀՆԱ-ն, մինչդեռ ՀՆԱ-ն ցուցաբերել է ավելի մեծ աճի տեմպ, քան ակտիվները՝ այդպիսով նվազեցնելով տվյալ ցուցանիշը: 2020 թ. նկատվել է այդ ցուցանիշի կտրուկ աճ, ինչը հետևանք էր ՀՆԱ-ի նվազման (կապված Covid-19 համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների հետ) և բանկային ակտիվների աճի: Համեմատելով տվյալ ցուցանիշը այլ երկրների նույն ցուցանիշների հետ՝ կարող ենք նկատել, որ ի համեմատ ԱՊՀ այլ երկրների, ՀՀ-ում այդ ցուցանիշը գտնվում է բավականին բարձր մակարդակի վրա, ինչից հետևում է, որ ՀՀ բանկային համակարգը մեծ մասնաբաժին ունի ՀՀ ՀՆԱ-ի մեջ: Դրա մասին վկայում է այն փաստը, որ 2021 թ. Ռուսաստանում այդ ցուցանիշը կազմել է մոտ 90 %, Ղազախստանում՝ 46 %, Ադրբեջանում՝ մոտ 60 %, Բելառուսում՝ 54 %, մինչդեռ Հայաստանում այն կազմել է 101,5 %: Մեր տարածաշրջանում այս ցուցանիշը ի համեմատ ՀՀ-ի բարձր է Վրաստանում և կազմում է 115 %:

Աղյուսակ 1.

ՀՀ բանկային համակարգի զարգացման գնահատման ցուցանիշները 2018-2021թթ.

	2018 թ.	*2019 թ.*	*2020 թ.*	*2021 թ.*
Բանկային համակարգի ակտիվներ (պասիվներ)/ՀՆԱ	83,1 %	89,0 %	108,2 %	101,5 %
Բանկային համակարգի վարկեր/ ՀՆԱ	48,9 %	52,1 %	63,2 %	53,0 %
Բանկային համակարգի ընդհանուր շահույթ /ՀՆԱ	1,1 %	1,2 %	1,1 %	1,2 %
Բանկային համակարգի կապիտալ/ ՀՆԱ	12,5 %	12,9 %	14,5 %	13,5 %
Բանկային համակարգի շահութաբերությունը (ROAE)	8,36 %	9,46 %	6,99 %	7,1 %

Բանկային համակարգի վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին ցուցաբերել է նույն աճի միտումը, ինչ որ բանկային համակարգի ակտիվների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ: Բանկային համակարգի ընդհանուր շահույթի հարաբերությունը ՀՆԱ-ին հիմնականում պահպանվել է նույն մակարդակի վրա 2018-2021 թթ.: Բանկային համակարգի կապիտալի հարաբերակցությունը ՀՆԱ-ին շարունակական աճ է գրանցել ներկայացված 4 տարիների ընթացքում: Բանկային համակարգի շահութաբերությունը շարունակական աճ էր ցուցաբերում մինչև 2020 թ., 2020 թ. տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված այդ ցուցանիշը նվազել է, սակայն 2021 թ. նորից աճի փուլ անցնելով, 2022 թ. ռեկորդային աճ գրացնել, ինչը հիմնականում պայմանավորված էր բանկերի շահույթի կտրուկ աճով՝ կապված զուտ տոկոսային եկամուտների աճի հետ:

Մեր կարծիքով բանկային համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է.

- երկրի առևտրային բանկերի կողմից հավասարակշռված և ողջամիտ

մոտեցումների կիրառումը հաշվեկշռի, կապիտալի, մասնաբաժինների բաշխման և ռիսկերի կառավարման գործընթացներում, քանզի պահպանվող աշխարհաքաղաքական անորոշության պայմաններում համակարգային (ցիկլային) ռիսկերի նյութականացման հավանականությունը շարունակում է բարձր մնալ,

- ՀՀ ԿԲ-ի կողմից գործողությունների իրականացում՝ ուղղված ՀՀ տնտեսության իրական հատվածի և բանկային համակարգի միջև կապի ուժեղացմանը և ամրապնդմանը, որը ներկայումս բավականին թույլ է,
- հաշվի առնելով, որ բանկերի կապիտալիզացիայի մակարդակը բավարար է տնտեսության վարկավորման բնական աճ ապահովելու համար, ՀՀ ԿԲ-ի համար նպատակահարմար է կիրառել մակրոպրուդենսացիոն գործիքներ՝ ուղղված բանկային համակարգի անվտանգության մակարդակը բարձրացնելուն և վարկավորման շարունակական բնույթի պահպանմանը, ինչը սթրեսային իրավիճակներում տնտեսության համար առանցքային նշանակություն ունի:

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգը ՀՀ տնտեսական համակարգի առավել զարգացած, կայուն և հուսալի բաղկացուցիչ մասն է: Քննարկված ցուցանիշների դինամիկայից կարելի է եզրակացնել, որ ՀՀ բանկային համակարգը վերջին 5 տարիների ընթացքում բավականին բարձր աճի տեմպ է գրանցել՝ բացառությամբ 2020 թ. անկմանը, ինչը հիմնականում կապված է համավարակի տարածման և Արցախյան պատերազմի հետևանքների հետ: Հակառակ դրան՝ 2022 թ. գրանցվել է ռեկորդային աճ, որը արդյունք է եղել ռուս-ուկրաինական պատերազմի հետ կապված դեպի Հայաստան արտասահմանցիների հոսքի աճի: 2022 թ. բանկային համակարգի աճի մասին փաստում են վերը ներկայացված բոլոր ցուցանիշները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսյան Ն. Հ., Բանկային գործնեության հիմունքներ, Ստեփանակերտ, ԱրՊՀ, 2021, 155 էջ:
2. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, Երևան,1996:
3. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2՝ հաստատված ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 09. 02. 2007 թ. թիվ 39 որոշմամբ:
4. ՀՀ առևտրային բանկերի 2022 թ. 4-րդ եռամսյակի հաշվետվություններ https://www.cba.am/am/sitepages/fscfobanks.aspx
5. https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx?fbclid=IwAR1VewmViuaK6bmZeaRvksWxT28fchuBzui9V-TtMgSOeinCcilaobCr4Q8
6. https://www.cba.am/Storage/AM/downloads/finstability/Presentation-2022.4.pdf
7. https://armstat.am/am/?nid=12&id=01001

Общий анализ деятельности банковской системы Армении

Каграманян Анна
АрГУ, Финансы (по отрослям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Н. Аванесян

Резюме

***Ключевые слова**: банковская система Армении, чистая прибыль коммерческих банков Армении, ВВП Армении, показатели стабильности банковской системы Армении*

В статье представлена банковская система Армении, изучены и проанализированы показатели ее стабильности, а также основные балансовые показатели коммерческих банков страны. В результате исследования выявлено, что банковская система Армении вполне стабильна, а показатели возросли особенно в 2022 году в связи с русско-украинской войной.

General Analysis of the Activity of the Banking System of Armenia

Ghahramanyan Anna
ASU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: N. Avanesyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

***Key words**: banking system of Armenia, net profit of commercial banks of Armenia, GDP of Armenia, indicators of stability of the banking system of Armenia*

The article presents the banking system of Armenia, examining the indicators of its stability, as well as analyzing the main balance sheet indicators of the country´s commercial banks. The study revealed that Armenia´s banking system is quite stable, with key indicators showing significant growth, particularly in 2022, as a result of the Russian-Ukrainian war.

Արցախի տնտեսության իրավիճակային վերլուծությունը և մարտահրավերները

Մովսեսյան Սվետլանա
ԱրՊՀ, Տնտեսագիտություն, կառավարում (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ռ. Մանգասարյան

Հանգուցային բառեր. *ԱՀ տնտեսություն, Արցախյան հակամարտություն, տնտեսական անվտանգություն, ՀՆԱ, շրջափակում, պարենային ինքնաբավություն*

Հոդվածում դիտարկվում են ԱՀ ընդհանուր տնտեսությունը, 44-օրյա պատերազմի տնտեսական հետևանքները և շրջափակման հետևանքով առկա սոցիալ-տնտեսական խնդիրները: Աշխատանքի նպատակն է Արցախի տնտեսության ընդհանուր գնահատումը՝ մինչպատերազմյան և հետպատերազմյան ժամանակահատվածում, ներկայիս իրավիճակի ներկայացումը, սպառնալիքների վերհանումը և մեղմացման հնարավոր ուղիների առաջադրումը:

Արցախի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի ինչպես գործնական, այնպես էլ գիտական նշանակություն, մանավանդ որ արդի պայմաններում հանրապետությունում հարցը էական է ինչպես տնտեսական անվտանգության, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

ԱՀ սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների համակողմանի և լիարժեք ուսումնասիրումն առանց անցյալի պատճառակցական կապերի դիտարկման, հնարավոր չէ, քանզի կուտակված խնդիրներից շատերի ըմբռնման և լուծման բանալին «թաքնված» է պատմության ոչ վաղ անցյալում: Պետականության կերտման ճանապարհին հայկական երկու պետություններին բաժին ընկած փորձությունները և դրանց հաղթահարման ընթացքում սխալները, բացթողումները, չիրականացված բազում հնարավորությունները զգալի ազդեցություն են թողել ներկա խնդիրների գոյացման վրա: Բացի այդ՝ դրանք դարձան նաև տնտեսական և քաղաքական լուրջ բանավեճերի առարկա՝ խոչընդոտելով միասնական ջանքերով լուծում գտնելու և գործելու հնարավորությունները:

Ցավոք, ԱՀ հակամարտությունը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տրանսպորտային, էներգետիկ և տնտեսական շրջափակումը, ինչպես նաև շուկայական տնտեսությանն անցնելուն միտված ինստիտուցիոնալ վերափոխումներն անբարենպաստ եղան Հանրապետության համար՝ իրենց գոյությամբ պայմանավորելով նոր հիմնախնդիրների առաջացումը:

Հանրապետությունում շուկայական հարաբերություններին անցման առաջին տարիները ուղեկցվեցին ոչ միայն պատերազմով և նրա ծանր հետևանքներով, այլ նաև պետության կառավարման փորձի իսպառ բացակայությամբ,

առևտրատնտեսական նախկին կապերի կորստով, շրջափակմամբ, սննդամթերքի, առաջին անհրաժեշտության ապրանքների, էլեկտրականության և վառելիքի պակասով, փախստականների աննախադեպ ներհոսքով, ինչին դիմակայելու ոչ բավարար փորձ և ոչ էլ հնարավորություններ ուներ երկիրը: Ծանր պայմանները հարուցեցին նաև զանգվածային արտագաղթ: Վերջինիս պատճառով ԱՀ բնակչությունը զգալիորեն կրճատվեց, իսկ արտագաղթածների զգալի մասը հետագայում չվերադարձավ Արցախ:

Երկրում օրհասական պատերազմին դիմակայելու և սոցիալական աղետը կանխելու անհրաժեշտությունը երկրորդ պլան մղեց քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումները: Արդյունքում ԱՀ տնտեսությունը խոցելի էր արտաքին ու ներքին մարտահրավերների նկատմամբ:

Հատկանշական է, որ անկախության առաջին տարիների ձախողումները զգալիորեն կրճատեցին նաև տնտեսության ծավալները, մյուս կողմից՝ դրանք մեծապես կանխորոշեցին երկրի տնտեսական համակարգի երկարաժամկետ զարգացումը՝ լրջորեն սահմանափակելով իրականացվող բարեփոխումների ազդեցությունն ու արդյունավետությունը: ԱՀ տնտեսության բարեփոխումները որոշակի առումով չեն ունեցել այն ուղղվածությունը, ինչը հեռանկարում կարող էր ապահովել տեխնոլոգիապես զարգացած տնտեսության ձևավորում: Իրականացված վերափոխումների պատկերը հետևյալն էր.

- արդյունավետ չի օգտագործվել տնտեսության ներուժը, որի հետևանքով մի շարք ոլորտներում արձանագրվել են կորուստներ,
- անհրաժեշտ մակարդակի վրա չեն գտնվել ռեսուրսների ուղղորդվածությունը դեպի իրական հատված,
- առկա էր որակյալ աշխատուժի զգալի արտահոսք,
- չի իրականացվել տնտեսության արդյունավետ կառուցվածքային փոփոխություն,
- սոցիալական բևեռացվածությունը հասել էր մեծ աստիճանի,
- տնտեսությունում բարձր էր մոնոպոլացման մակարդակը,
- առկա է տնտեսական և քաղաքական համակարգերի ոչ արդյունավետ հակակշռում, ցածր է ինստիտուցիոնալ համակարգի կայացման և արդյունավետ գործունեության մակարդակը:

Չնայած վերոնշյալին՝ ԱՀ տնտեսութունը շուկայական բարեփոխումների՝ հատկապես ֆիսկալ քաղաքականության արդյունքում, արձանագրել է նաև շոշափելի հաջողություններ: ԱՀ-ում վերջին 10 տարիներին (մինչև 2020 թ.) ապահովվել է տնտեսական աճ, որի միջին տարեկան ցուցանիշը կազմել է մոտ 10 %: 2019 թ. հունվարի դրությամբ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ԱՀ-ում կազմել է 2 մլն 307,6 հազ ՀՀ դրամ, որը մոտ 3 անգամ գերազանցում էր 2009 թ-ի մակարդակը [2, 3]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսության զարգացման գործում նաև շատ մեծ դեր են ունեցել և շարունակում են ունենալ

արտասահմանից ստացվող տրանսֆերտները: Այդուհանդերձ, չնայած նշյալ ձեռքբերումներին, երկրում տնտեսական աճը ապահովվում էր հիմնականում առանց տնտեսության արդյունավետ և հեռանկարային ոլորտների զարգացման, մասնավորապես, հանքարդյունաբերության հաշվին: Այդ առումով, արդի պայմաններում անհրաժեշտություն էր առաջանում տնտեսական աճի ապահովման նոր ուղիների ներդրման, որը պետք է ուղղված լինի տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և արտահանելի հատվածի զարգացմանը: 2020 թ. համավարակը, այնուհետև պատերազմը խաթարեցին ԱՀ-ում տնտեսական կայուն աճը, զգալի էին կորուստները ինչպես սոցիալ-տնտեսական ոլորտում, այնպես էլ մյուս բնագավառներում:

Դիտարկումները փաստում են, որ պատերազմի արդյունքներն ու նոյեմբերի 9-ին ստորագրված համաձայնագիրը հայկական երկու պետությունների համար նոր սոցիալ-տնտեսական խնդիրներ են առաջացրել՝ կապված ծախսված միջոցների, տուժած ենթակառուցվածքների վերականգնումների, ինչպես նաև համաձայնագրի դրույթների ապահովման հետ: Պատերազմի հետևանքով թշնամու վերահսկողության տակ է անցել 110 համայնք, որի հետևանքով ունենք ավելի քան 31 220 տեղահանված անձ: Համաձայն ԱՀ Պետական Եկամուտների Կոմիտեի հրապարակած տվյալների՝ 521 տնտեսվարող սուբեկտ զրկվել է իր բիզնեսից: Բարեբախտաբար, ամբողջովին կամ մասնակիորեն Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած շրջանները բնութագրվում են արդյունաբերական արտադրանքի թողարկման անհամեմատ համեստ կարողություններով: Մասնավորապես՝ հակառակորդին անցած Հադրութի (2.9 %), Շահումյանի (1.4 %) և Քաշաթաղի (8.1 %) շրջանները միասին թողարկում էին ընդամենը 12.5 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, իսկ մասնակիորեն կորսված Մարտունու, Ասկերանի և Շուշիի շրջաններում արդյունաբերական արտադրանքի զումարային ծավալը շուրջ 9,8 մլրդ դրամ է (գծապատկեր 1):

Թիրախային գոտում էր հատկապես գյուղատնտեսությունը. գյուղատնտեսական տարածքների մոտ 82 տոկոսով կրճատումը, տեխնիկայի 50 տոկոսի կորուստը, անասնագլխաքանակի 60 տոկոսով նվազումը մեծապես վնասեցին ԱՀ ագրոպարենային համակարգը [2]: Ակնհայտ է, որ նման կորուստները անդրադառնալու են նաև հետպատերազմյան ժամանակահատվածին՝ հանգեցնելով գյուղատնտեսական համախառն արտադրանքի զգալի կրճատմանը. 2021 թ. բացարձակ արտահայտությամբ վերջինս կազմել է 30310,8 մլն դրամ, ինչը 2019 թ. նկատմամբ նվազել է 2,3 անգամ, ընդ որում բուսաբուծության ոլորտի համախառն արտադրանքի նվազման տեմպերը 2 անգամ գերազանցում են անասնաբուծության ոլորտի համախառն արտադրանքի ծավալները (գծապատկեր 2):



	Ստեփանակերտ	Ասկերան	Հադրութ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ	Ընդհանուր
2021	32247.6	5763	0	46238.2	2519.8	6.1	0	729.3	87504
2020	32520.3	5585.2	2825.3	48359.6	3429.2	1436.9	708.4	8328.3	103203.2
2019	79597.5	5146.2	2689.4	55458.6	4565	1735.7	778.5	5018.9	164999.8

Գծապատկեր 1. ԱՀ արդյունաբերական արտադրանքի ծավալները ըստ շրջանների, 2019-2021թ.թ. [2]



Գծապատկեր 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները [2]

Այսպես, 2020 թ. ԱՀ-ում համախառն ներքին արդյունքը կազմել էր 270.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 342.5 մլրդ դրամի դիմաց՝ հանգեցնելով 22.4 տոկոս տնտեսական անկման, որի շուրջ 9.2 տոկոսային կետը կազմում է արդյունաբերությունը՝ ներառյալ էներգետիկան, 6.4 տոկոսային կետը՝ առևտուրը և ծառայությունները, 2.4 տոկոսային կետը՝ շինարարությունը և 2.1 տոկոսային կետը՝ գյուղատնտեսությունը [2]: 2021 թ. տնտեսական անկումը կազմել է 12,7 %, իսկ 2022 թ. 2021թ. ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ դիտվել է 12,2 % աճ: ԱՀ-ում տնտեսական աճի և հարկերի իրական աճի փոփոխությունները 2012-2022 թթ. տրվում է գծապատկեր 3-ում[1]:



	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Հարկերի իրական աճի տեմպը %	10.7	0.1	14.7	9.8	-2.2	22.7	34.5	10.7	-19.3	-28.3	36.5
տնտեսական աճ %	9.9	9.3	8.9	9.1	9.2	15.6	11.9	10.3	-22.4	-12.7	12.2

Գծապատկեր 3. Տնտեսական աճի դինամիկան ԱՀ-ում 2012-2022 թ.[2]:

[1] ԱՀ վիճակագրական տարեգրքեր, 2009-2020 թթ.

Ընդգծենք, որ մարդկային և նյութական կորուստներով պայմանավորված՝ Արցախի Հանրապետությունը զրկվել է նախկին տնտեսական ներուժից՝ պարփակվելով հետագա զարգացման համար չափազանց սահմանափակ հնարավորությունների տիրույթում: Ակնհայտ է, որ սոցիալական նոր լարվածությունը առաջացնում է նոր խնդիրներ, որոնց թվում են՝

- տեղահանված բնակչության հիմնահարցերի լուծումը,
- սոցիալական աջակցության կարիք ունի բնակչության ճնշող մեծամասնությունը, իսկ արդյունավետ սոցիալական քաղաքականություն իրականացնելու տնտեսական հնարավորությունները կրճատվել են,
- սոցիալական լարվածության տեսակետից դրությունը բարդացնում է նաև այն, որ պետությունը շարունակում է հավակնել սոցիալական դաշտում գլխավոր «գործող անձի» դերին, իսկ բնակչությունն առաջվա նման պետությունից սպասում է համընդհանուր պարտականությունների կատարում, որն իրական չէ,
- լրջորեն վտանգվել է միջին խավը՝ ժողովրդավարության ու քաղաքացիական հասարակության և կայուն զարգացման խթանիչ ուժը:

Վերոնշյալը պահանջում էր բնակչության սոցիալական ապահովության նոր կառուցակարգերի ստեղծում, ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի առկայություն, ոլորտի կառավարման համակարգի որոշակի տեխնիկական զինում և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայություն: Ծրագրերը կարևորվում են բնակչությանը սոցիալական աջակցություն տրամադրելու և եկամուտների անհավասարությունը մեղմելու հարցում: Ավելին, սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական նպատակը պետք է դառնա պետության կողմից հասարակության ամենալայն շրջանների կենսապայմանների բարելավումը, սոցիալական ռիսկերի կառավարումը, նվազեցումը և կանխարգելումը:

Հանրապետությունում տնտեսական իրավիճակը ավելի վատթարացավ 2022 թ. դեկտեմբերի 12-ից սկսած, երբ Արցախը, հայտնվելով շրջափակման մեջ, հենվել է միայն ներքին շուկայի վրա, որը ունի ոչ բավարար ինքնաբավության մակարդակ: Խաթարվել են տնտեսական բոլոր օրինաչափությունները, ունենք սպառող տնտեսություն, ինչը ավելի խոցելի է դարձնում արտաքին և ներքին մարտահրավերի դիմաց: Բավականին խոցելի ոլորտներ են զբոսաշրջությունը, շինարարությունը, տրանսպորտային ծառայությունները, գյուղատնտեսությունը: Երկրում դիտվում է էներգետիկ ճգնաժամ: Վերլուծությունները ցույց են տալիս, որ շրջափակման պայմաններում 755 տնտեսվարող սուբյեկտ (ընդհանուրի 17,7 %-ը) աշխատելու անհնարինության պատճառով կասեցրել է իր գործունեությունը, իսկ մնացած տնտեսվարողները գործում են մասնակի ծավալով կամ պետական աջակցությամբ: Արդյունքում 16,3 հազար մարդ կորցրել է աշխատանքը և հիմնական եկամտի աղբյուրը [1]:

Դիտարկումները փաստում են, որ ԱՀ պարենային նվազագույն զամբյուղում

ներառված առաջին անհրաժեշտության մթերքներից Արցախը ինքնաբավ էր միայն հացահատիկային մշակաբույսերի մասով, իսկ մնացած պարենամթերքների մասով՝ կենդանական (միս, կաթնամթերք, ձու, ձուկ) և բուսական ծագման (մակարոնեղեն, ձավարեղեն, ընդեղեն, կարտոֆիլ, բանջարեղեն, մրգեր, շաքար, բուսական յուղ), տարբեր տարիների ունեցել է ինքնաբավության ցածր մակարդակ, և պահանջարկը բավարարել է ներմուծման միջոցով: Արցախի Հանրապետությունը, ունենալով բոլոր բարենպաստ պայմանները գյուղատնտեսության զարգացման համար, այնուամենայնիվ մեծ կախվածության մեջ է ՀՀ-ից ներկրվող գյուղատնտեսական ապրանքներից: Պարենային համակարգի նման ճեղքվածքը լուրջ սպառնալիք է նաև ազգային անվտանգության տեսանկյունից:

Արցախի տնտեսության վրա ծանր հետևանքներ է թողնում հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքների դադարեցումը: «Բեյզ Մեթըլս» ընկերությունը հանրապետության խոշոր հարկատուն է, որն ապահովում է պետբյուջեի 20 % մուտքերը և շուրջ 2000 աշխատատեղ: Նախնական տվյալներով 2023 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե է մուտքագրվել 4,023.9 մլն դրամ հարկային եկամուտներ և տուրքեր, որը պլանավորված 5,300.0 մլն դրամ ցուցանիշի նկատմամբ կազմել է 75.9 տոկոս կամ պակաս 1,276.1 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 18.6 տոկոսով, կամ պակաս է հավաքագրվել 922.2 մլն դրամ [4]: Պետբյուջեի ճեղքվածքն անխուսափելի է:

Այսպիսով՝ ստեղծված «տնտեսական անջատումը» հանգեցնում է՝ ապրանքաշրջանառության դադարեցման, արտադրության ծավալների անկման, պարենային ապրանքների դեֆիցիտի, գործազրկության աճի, ինֆլյացիայի, աղքատության, էներգետիկ համակարգի ճգնաժամի, ֆինանսական անկայունության, հարկային եկամուտների նվազման, պետբյուջեի ճեղքվածքի և մի շարք այլ խնդիրների:

Վերոնշյալ խնդիրների լուծումը պահանջում է ՀՆԱ-ի կայուն աճի ապահովում տնտեսության ճյուղերի համաչափ զարգացման միջոցով, որի համար առաջարկում ենք՝

- արտաքին աշխարհի հետ մատակարարման շղթայի և տրանսպորտային կապվածության անխափանության և անվտանգության ապահովում,
- պարենային և ոչ պարենային ապրանքների ռազմավարական պահուստների ստեղծում՝ այդ թվում ցանքատարածությունների և վարելահողերի մակերեսների ընդլայնման միջոցով,
- տնտեսության մոբիլիզացիոն և պետության տարածքային զարգացման քաղաքականությունների փոխկապվածության ապահովում: Սրա շրջանակում կարևորվում էր տարածքային միավորներում արտադրական կողմնորոշմամբ ձեռնարկությունների բաշխվածության մեծացումը,
- հիմնական արտադրությունների, վառելիքաէներգետիկ պաշարների պահուստավորում,

▪ բնական, ֆինանսական, մարդկային, տեխնիկական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում: Որպես կարևոր նախապայման՝ անհրաժեշտ է իրականացնել հիշյալ ռեսուրսների մանրակրկիտ հաշվառում,

▪ տնտեսության կառավարման նոր մոդելի ձևավորում: Այն ենթադրում է նոր տիպի տնտեսական հարաբերություններ, որոնց պայմաններում երկրի բոլոր ռեսուրսները պետք է ուղղվեն մեկ կամ մի քանի առաջնահերթ նպատակների իրագործման՝ չբացառելով այլ ճյուղերից ռեսուրսների ներգրավումը և այլ ճյուղերի շահերի ստորադասումն ընտրված առաջնահերթություններին,

▪ տնտեսության կառավարման նոր մոդելի պայմաններում անհրաժեշտ է ձևավորել պետական պլանավորման, մասնավորապես տնտեսության ընթացիկ և ռազմավարական պլանավորման մարմին, որն իրատեսորեն կկազմակերպի տնտեսության յուրաքանչյուր ճյուղի ռիթմիկ կենսագործունեության համար պահանջվող ռեսուրսների տեղաբաշխումը և կզբաղվի ռազմավարական բնույթի կանխատեսումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արցախի կառավարության տեղեկագիր թիվ 47 /շրջափակման 93-րդ օր/ 10-13. 03. 2023 թ. դրությամբ, URL:https://mailchi.mp/df59ed44669e/day93am?fbclid=IwAR1igY6Sin60bZdrnhIi76YrqSkAP5Sdb3btX_EdFx4H92sZ7SODWfjiODM
2. Արցախի վիճակագրական տարեգրքեր (2017-2022 թթ.):
3. Լեռնային Ղարաբաղի հանրապետության վիճակագրական տարեգրքեր (մինչև 2016 թ.):
4. 2023 թվականի հունվար-փետրվար ամիսների հարկային եկամուտների և տուրքերի ամփոփ ցուցանիշներ https://www.tax.nk.am/index.php?name=&op=view&id=1885 (01. 03. 2023 թ.)

Ситуационный анализ и вызовы экономики Арцаха

Мовсесян Светлана
АрГУ, Экономика, менеджмент (по отраслям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Р. Манагсарян

Резюме

Ключевые слова: *экономика Арцаха, Арцахский конфликт, экономическая безопасность, ВВП, блокада, продовольственное самообеспечение*

В статье рассматривается общая экономика Арцаха, экономические последствия 44-дневной войны и социально-экономические проблемы, вызванные блокадой. Целью работы является общая оценка экономики Арцаха в довоенный и послевоенный период, представление текущей ситуации, выделение угроз и предложение возможных путей смягчения.

Situational Analysis and Challenges of the Artsakh Economy

Movsesyan Svetlana
ASU, Economics, Management (by sector), 3rd year
Academic Supervisor: R. Mangasaryan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words: *economy of Artsakh, Artsakh conflict, economic security, GDP, blockade, food self-sufficiency*

The article deals with the general economic issues of Artsakh, the economic consequences of the 44-day war and the socio-economic problems caused by the blockade. The purpose of the work is a general assessment of the economy of Artsakh in the pre-war and post-war period, presenting the current situation, highlighting threats and suggesting possible ways to mitigate.

.

Օնլայն բանկինգի դերը ժամանակակից աշխարհում. դրա զարգացման դինամիկան ՀՀ-ում

Վահանյան Մարիամ
ԱրՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝տ. գ. թ., դոցենտ Ն.Ավանեսյան

Հանգուցային բառեր. *օնլայն բանկինգ, ինտերնետ բանկինգ, մոբայլ բանկինգ, ինտերնետ, ծառայություն, օգտատեր, առևտրային բանկ*

Գիտության ժամանակակից նվաճումներն ու տեխնոլոգիական մտքի շարունակական ձեռքբերումները ստեղծում են լրացուցիչ հնարավորություններ և մարտահրավերներ կենսագործունեության բոլոր ոլորտների համար: Արմատական փոխակերպումների են ենթարկվում շուկայական տնտեսության մասնակիցների գործունեության սկզբունքները, լայն իմաստով՝ նաև ողջ տնտեսությունը: Այսօրվա աշխարհը լուրջ փոփոխությունների է ենթարկվում, և դրան մեծապես նպաստում է տեղեկատվական տեխնոլոգիաների համատարած զարգացումը: Վերջին 10 տարիների ընթացքում համաշխարհային ինտերնետից օգտվողների թիվը աճել է՝ կազմելով այսօր երկրի ամբողջ բնակչության 64,4 տոկոսը, որը տարեկան աճում է 1,9 տոկոսով [4]: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման, կյանքի բարձր տեմպերի, հաճախորդների անընդհատ աճող կարիքների դարաշրջանում փոխվում են նաև ֆինանսական ծառայություններ մատուցողների նկատմամբ պահանջները: Այժմ բանկի հաճախորդի համար կարևոր է, թե ինչ ձևով, որ ժամին և որտեղ կարող է կապ հաստատել իր բանկի հետ:

Վերջին տարիները նշանավորվել են շուկայում առաջարկվող էլեկտրոնային բանկային տեխնոլոգիաների թվի արագ աճով: Սա ինտերնետի միջոցով վճարումների, դեբետային քարտերի, բանկային տերմինալների, բանկային ապրանքների, բանկային աշխատավարձի քարտերի ուղղակի փոխանցման էլեկտրոնային համակարգ է:

Ինտերնետ բանկինգը էլեկտրոնային առևտրի ամենատարածված տեսակն է աշխարհում: Էլեկտրոնային առևտուրն ավելի լայն հայեցակարգ է, որը տնտեսական գործունեության ոլորտ է, ներառյալ բոլոր ֆինանսական և առևտրային գործարքները, որոնք իրականացվում են համակարգչային ցանցերի միջոցով: Օնլայն բանկինգը հաճախորդներին առաջարկում է գրեթե բոլոր ծառայությունները, որոնք ավանդաբար հասանելի են տեղական մասնաճյուղի միջոցով, ներառյալ ավանդները, փոխանցումները և հաշիվների առցանց վճարումները: Գործնականում յուրաքանչյուր բանկային հաստատություն ունի օնլայն բանկինգի որոշակի ձև, որը հասանելի է ինչպես վեբ տարբերակներում, այնպես էլ բջջային հավելվածների միջոցով:

Թ. Բ. Ռուբինշտեյնը և Օ. Վ. Միրոշկինան իրենց գիտական աշխատություններից մեկում նշում են, որ բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն տա-

լիս է հետևյալ սահմանումը. էլեկտրոնային բանկինգը ներառում է աննշան ծավալով և մանրածախ բանկային պրոդուկտների, ինչպես նաև ծառայությունների մատուցում բանկի էլեկտրոնային ուղիներով, զգալի ծավալով էլեկտրոնային վճարումների և այլ մեծածախ «էլեկտրոնային բանկային ծառայությունների» մատուցում [1, 390]: Իր հերթին Վ. Լ. Դոստովն իր հրապարակման մեջ մատնանշում է. «Ինտերնետ համակարգի ստեղծած այս բոլոր նորարարական առավելությունները թույլ են տվել մի շարք առաջատար բանկերի զգալիորեն ընդլայնել էլեկտրոնային վճարման միջոցները՝ գործարքների ծախսերը նվազեցնելու, նրանց մրցունակությունը ուժեղացնելու և եկամուտի նոր աղբյուրներ ստեղծելու նպատակով: Էլեկտրոնային բանկային ծառայությունների ոլորտում համագործակցության գործընթացը, բնականաբար, հանգեցրեց ռազմավարական բանկային դաշինքների ձևավորմանը, որոնցից խոշորագույններն են «Integrion»-ը (18 բանկերի դաշինք), «MFSDC»-ն և «First Global Commerce»-ը: Տնտեսական աճի արագ տեմպը և վաճառքի նոր ուղիների ստեղծումը թելադրում են տնտեսության ֆինանսական հատվածի գործունեության պայմանները» [2, 53-55]: Յուրաքանչյուր նոր երևույթի ի հայտ գալը իր հետ առաջ է քաշում դրական ու բացասական կողմեր: Նույնը կարելի է դիտարկել օնլայն բանկինգի դեպքում:

Աղյուսակ 1

Օնլայն բանկինգի առավելություններն ու թերությունները

Օնլայն բանկինգի առավելությունները	*Օնլայն բանկինգի թերություններ*
▪ Բարձր անվտանգություն ▪ Առավելագույն հարմարավետություն ▪ Հնարավորությունների լայն դաշտ ▪ Ժամանակի խնայում ▪ Լավագույն ավանդային առաջարկներ ▪ Միջնորդավճարների փոքր բաժին ▪ Փաստաթղթերի մոնիթորինգ ▪ Տեղեկատվության հասանելիություն ▪ Հաշվի հետևում և մնացորդի ստուգում ▪ Հաշիվների վճարում և լիցքավորում ▪ Լրացուցիչ ծառայություններ (խորհրդատվություն):	▪ **Ինտերնետի պահանջ** ▪ **Ինտերնետ խարդախություն** ▪ Մեծ քանակությամբ կանխիկ միջոցների անհասանելիություն ▪ Համակարգային ձախողումների հետևանքով դրամական փոխանցումների հետաձգում ▪ SMS հաստատման հետ կապված խնդիրներ, երբ հարցումը կատարվում է այլ երկրից ▪ Բարձր ռիսկերի առկայություն

Բանկային կառավարման հետ կապված առաջին ծրագրերը անհատական համակարգիչների միջոցով իրականացվեցին արևմտյան բանկերի կողմից դեռևս 1980-ականներին: Ավանդատուներին հնարավորություն տրվեց ստուգել իրենց հաշիվները՝ հեռախոսով կապվելով բանկի համակարգչի հետ (Home banking): Ինտերնետի տարածումը թույլ է տվել աշխարհի առաջատար բանկերին ներդնել տեղեկատվության հասանելիության համակարգեր: Այնուհետև գործարքների հետ կապված 1995 թվականին ԱՄՆ-ում ստեղծվեց աշխարհում առաջին վիրտուալ բանկը՝ Security First Network Bank-ը: Այս բանկի ստեղծման հիմնական

պատճառն այն էր, որ ԱՄՆ-ում այլ նահանգներում բանկերի կողմից մասնաճյուղեր բացելու սահմանափակում կար:

Ֆիքսված բանկերի հետ մեկտեղ, որոնք մատուցում են ինտերնետ-բանկինգի ծառայություն, Արևմուտքում հաջողությամբ աշխատում են վիրտուալ բանկերը և առցանց վարկային ընկերությունները՝ կազմակերպություններ, որոնց բոլոր բանկային գործարքները կատարվում են Ինտերնետի միջոցով: Վիրտուալ բանկերի համար հաճախորդների ձեռքբերման և պահպանման արժեքը բավականին բարձր է: Բանկերի խնդիրն է օգտվողներին տեղեկատվության ստացման փուլից տեղափոխել էլեկտրոնային գործարքների իրականացման փուլ:

Եվրոպայում առաջին վիրտուալ բանկը եղել է Advance Bank-ը՝ Դրեզդենի բանկային խմբի (Գերմանիա) դուստր ձեռնարկությունը, որն իր գործունեությունը սկսել է 1996 թվականին:

Օնլայն բանկինգը, որպես ծառայությունների տեսակ, չնայած որոշակի դժվարություններին, բավականին արագ զարգանում է. չէ՞ որ ավանդական բանկերի կողմից լուրջ մրցակցության պայմաններում օնլայն-բանկերը ստիպված են առաջարկել ավելի բարձր տոկոս՝ տարեկան մինչև 4 % այն դեպքում, երբ ավանդական բանկերը հազվադեպ են ներկայացնում ավելի քան 0,5-0,6 % [3, 11-18]:

Բանկային ինտերնետային ծառայություններն առավել լայնորեն տարածված են Սկանդինավյան երկրներում՝ Նորվեգիա, Շվեդիա, որտեղ դրանք տրամադրվում են բանկերի 95 % -ի կողմից և օգտագործվում են հաճախորդների 80 %-ի կողմից: Նախքան ՀՀ առևտրային բանկերի օնլայն բանկինգին անդրադառնալը նշենք, որ 2023 թվականի հունվարի դրությամբ ՀՀ-ում ինտերնետից օգտվում է բնակչության 76,51 տոկոսը, որը համաշխարհային մակարդակով զբաղեցնում է 85-րդ հորիզոնականը, իսկ ինտերնետի միջին արագությունը գնահատվում է 73,55 մբիթ/վրկ [5]:

Ըստ ուսումնասիրությունների՝ ՀՀ առևտրային բանկերը սկզբում ներդրել և առաջարկել են հիմնականում հեռախոս բանկինգը, հաջորդիվ՝ ինտերնետ բանկինգը և վերջում՝ մոբայլ բանկինգը, որը նկարագրում է ինտերնետ բանկինգի էվոլյուցիան:

Հեռախոսային բանկինգը սպասարկման գործառույթ է, որն առաջարկում են շատ բանկային հաստատություններ: Գործընթացը ներառում է սենսորային հեռախոսի ստեղնաշարի օգտագործումը բանկային մի շարք գործառույթներ կատարելու համար: Ավանդական բանկերի հետ մեկտեղ հեռախոսային բանկինգը լայնորեն օգտագործվում է նաև ***առցանց բանկային*** հաստատությունների կողմից, ներառյալ այն բանկերը, որոնք բիզնես են վարում հիմնականում հեռախոսային տեխնոլոգիաների կիրառմամբ: Հայաստանի 18 բանկերից 2-ն են առաջարկում այս ծառայությունը՝ Ամերիա բանկը և ՎՏԲ բանկը: Ամերիա բանկում հեռախոսային բանկինգը կատարվում է «Zangi» ծրագրի միջոցով: Բանկը հաղորդագրու-

թյամբ ուղարկում է հեռախոսային ծառայությունից օգտվելու գաղտնաբառը, որը հեռախոսազանգի ժամանակ նույնականացման հիմքն է հանդիսանում:

Սրանից հետո ինտերնետ բանկինգի կիրառությունը մեծ թափ ստացավ, որը կիրառելի էր սկզբում միայն բրաուզերների միջոցով՝ հիմնականում համակարգիչներից, որը հետագայում զարգացավ մինչև մոբայլ բանկինգը՝ կիրառվելով հեռախոսային ծրագրերի միջոցով:

ՀՀ-ում գործող 18 առևտրային բանկերից 16-ը՝ բացի Ֆասթ բանկ ՓԲԸ-ից ու Մելլաթ բանկ ՓԲԸ-ից, մատուցում են մոբայլ բանկինգ ծառայությունը, որոնցից առաջինը ունի ներդրած դեռևս միայն ինտերնետ բանկինգ:

Ամբողջ աշխարհում գործող առևտրային բանկերն առաջարկում են ավելի քան 250 տարբեր բանկային ծառայություններ ու ապրանքներ, որոնցից ինտերնետ բանկինգի միջոցով հաճախորդը կարող է կատարել որոշները՝ կախված իրեն սպասարկող բանկի պայմաններից, օրինակ՝

- դիտել ընթացիկ ու քարտային հաշիվների մուտքագրումները/ելքագրումները,
- կատարել դրանց միջև փոխանցումներ,
- կատարել այլ բանկեր փոխանցումներ,
- դիտել ավանդների և վարկերի ընթացիկ կարգավիճակը,
- կատարել վերջիններիս հետ գործողություններ՝ մարումներ, հավելումներ,
- կատարել կոմունալ վճարումներ,
- արտարժույթի փոխանակում և այլն:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ-ում գործող առևտրային բանկերից 17-ը ներդրել են ինտերնետ բանկինգ՝ տարբեր մակարդակներով: Դրանք տարբերվում են առաջարկվող ծառայությունների ծավալով, դրանց սակագներով, մատչելիությամբ, դիզայնով, մատուցած ծառայությունների որակով և ամենակարևորը՝ անվտանգությամբ: ՀՀ-ում գործող մոբայլ բանկին ծառայություն մատուցող բանկերից յուրօրինակ տարբերակ է առաջարկում ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ-ը: ՎՏԲ Հայաստան բանկն ընդլայնել է հեռահար բանկային գործունեության սահմանները՝ ներդնելով նոր, մատչելի ծառայություն՝ «Վիդեոբանկինգ» ֆիզիկական անձանց համար**:** Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է Skype տեսազանգի միջոցով զանգահարել բանկի Կոնտակտային Կենտրոն և հանձնել համապատասխան անձը հաստատող փաստաթուղթ: Ժամանակակից աշխարհում շատերին կթվա, թե մոբայլ և ինտերնետ բանկինգի առկայության դեպքում անհիմն է դրա օգտագործումը, բայց դեռ կան մարդիկ, որոնք դժվարանում են օգտվել նորագույն տեխնոլոգիաներից: ՎՏԲ բանկն, ի համեմատ այլ բանկերի, օնլայն հարթակում մատուցում է սակավ ծառայություններ և չնայած դրան՝ բանկը գործարկել է Հայաստանում առաջին չատ-բոտը՝ Facebook Messenger-ի միջոցով բանկային գործարքների իրականացման համար: Շարունակելով տարբերվող ծառայությունների շարքը՝ բանկը մշակել է «Բանկն աշխատավայրում» ծրագիրը, որի շրջանա-

կում բանկի բարձրակարգ մասնագետը այցելում է օգտատիրոջ կազմակերպություն, տրամադրում անհատական խորհրդատվություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տեղում ընդունում վարկային հայտեր:

2018 թվականին Ամերիա բանկը ներդրել է նոր «Ամերիա Բիզնես» թվային հարթակը, որը համալրել է ԱՁ-ն օնլայն գրանցելու հնարավորությամբ, և այս պահին Ամերիա բանկի մանրածախ հաճախորդների բազան արդեն գերազանցում է 370 հազար հաճախորդը [6]:

2022 թվականի սկզբից մինչ այժմ ավանդների գծով բանկը ունեցել է մոտ 10 տոկոս աճ, իսկ վարկային պորտֆելի գծով՝ մոտ 20 տոկոս աճ: Քարտային գործարքների գծով և՛քանակով, և՛արժեքային արտահայտությամբ 2022 թվականի սկզբից մոտ 70 տոկոս աճ է գրանցվել: Ինտերնետ-բանկ համակարգով իրականացվող գործարքների ծավալը 4-րդ տարին անընդմեջ նախորդ տարվա համեմատ կրկնապատկվում է: Եթե 2019 թվականին մոտ 1.2 միլիոն գործարքներ են իրականացվել ինտերնետ-բանկ համակարգով, 2022 թվականին թիվը մոտ 10 միլիոն է [6]:

«Ամերիա Բիզնես»-ը ներառում է սքորինգի և մեքենայական ուսուցման վրա հիմնված օնլայն վարկավորման, SME Tablet, հաշիվ բացելու, անվճար օնլայն/մոբայլ բանկին ու բիզնես քարտ ստանալու և մի շարք այլ ծառայություններ: Դրանց ներդրումը դրական ազդեցություն է ունեցել բանկում մանրածախ բիզնես հաճախորդների ցուցանիշների վրա: Մասնավորապես՝ օնլայն/մոբայլ բանկինգ համակարգի օգտատերերի քանակը վերջին երեք տարում աճել է 3,5 անգամ, Ամերիա բանկի մանրածախ բիզնես վարկերի 73 տոկոսը հաստատվում է օնլայն [6]:

Ավտոմատ հաստատմամբ վարկավորման վրա մեծապես ազդեցություն ունեցավ հարկային շրջանառության վերաբերյալ տվյալների ստացումը, որը Հայաստանում աննախադեպ է, իսկ աշխարհում շատ քիչ բանկեր կան, որոնք կարող են ավտոմատ վարկեր հաստատել հարկային շրջանառության հիման վրա: Սա Ամերիաբանկի և պետական համակարգի առաջին հաջողված փորձն է «Ամերիա Բիզնես» թվային հարթակի շրջանակում:

Հաջողության հասած ինտերնետ բանկինգի օրինակներից է նաև Ինեկոբանկ ՓԲԸ-ի ինտերնետ բանկինգը: Բանկը առաջարկում է ոչ միայն ինտերնետ բանկինգ, մոբայլ բանկինգ, այլ նաև InecoPay ծառայությունը: Հայաստանյան բանկային համակարգում բացառիկ վճարային լուծում է, որը հնարավորություն է ընձեռում անհպում վճարումներ կատարել անմիջապես սմարթֆոնով՝ QR-ի միջոցով, և համակարգից կարելի է օգտվել InecoMobile բջջային հավելվածի միջոցով:

2018 թվականից Ինեկոմոբայլ հավելվածը հնարավորություն է ընձեռում InecoPay վճարներ կատարել՝ կցելով այլ բանկերի կողմից թողարկված ArCa, Master, Visa տեսակի վճարային քարտերը (չնայած խոսքը գնում է ոչ թե կից

օնլայն դրամապանակի մասին, այլ հենց մոբայլ բանկինգի): Նույն հնարավորությունը ընձեռում են նաև ԱԿԲԱ Բանկ ՓԲԸ-ի և Արարատ Բանկ ՓԲԸ-ի կողմից վերաթարմացված մոբայլ բանկինգները, մինչդեռ IDBank կողմից ներդրվել է idram բազմաֆունկցիոնալ օնլայն դրամապանակը: Բայց բոլոր դեպքերում կցված քարտերից կատարված գործաքները կատարվում են պարտադիր միջնորդավճարների գանձմամբ:

Ինեկոբանկի առանձնահատկություններից է համարվում նաև 1 CLICK օնլայն վարկը՝ առանց եկամուտը հաստատող փաստաթղթի, երաշխավորի կամ գրավի: Պարզապես պետք է մուտք գործել InecoMobile և InecoOnline համակարգեր, ***sprintonline.am*** հարթակ և ստանալ անհատական վարկային սահմանաչափի առաջարկը: Նմանատիպ ծառայություն է առաջարկում նաև Էվոկաբանկ ՓԲԸ-ը իր EvocaTouch հավելվածով մատուցվող SingleTouch-ի միջոցով: Վարկից, 2019 թվականի նոյեմբերի դրությամբ, օգտվել էր արդեն 55000 մարդ [7]:

Չնայած այս զարգացման նկատառումներին՝ ՀՀ ֆինասականան շուկայում առևտրային բանկերի ինտերնետ բանկինգի զարգացման համար առկա են որոշ հիմնախնդիրներ, որոնց շարքում առանձնացվում են գործող վճարային համակարգերը՝ իրենց հավելվածներով (Tellcell Wallet, Idram,Easy Wallet): Սրանց միջոցով կատարում են գրեթե բոլոր այն գործողությունները, որոնք գործում են ինտերնետ/մոբայլ բանկինգի շրջանակում: Հավելվածներում հնարավոր է հեշտությամբ կցել բոլոր բանկերի վճարային քարտերը մեկտեղ: Բայց այս խնդիրը շրջանցել է IDBank-ը, քանի որ նա Հայաստանում առաջատար fintech հարթակն է, որը համատեղում է ինչպես էլեկտրոնային դրամապանակը, այնպես էլ բանկային փորձը մեկ հավելվածում՝ 2018 թվականից կիրառելով Idram հավելվածը:

Հետազոտությունն ավելի ամբողջական տեսքի բերելու համար մեր կողմից իրականացվել է սոցհարցում տարբեր առևտրային բանկերի ինտերնետ բանկինգի ծառայություններից օգտվողների շրջանում: Կատարելով անդրադարձ թիրախային խմբերին՝ պետք է նշել, որ ՀՀ-ում և ԱՀ-ում օնլայն բանկինգից օգտվողների գերակշիռ մասը կազմում են 18-30 տարեկան անձինք, այնուհետև 31-49 և ամենաչհետաքրքրված մասը կազմում է 50 և բարձր տարիքային խումբը: Հարցմանը մասնակցել են 200 անձինք. ՀՀ-ից և ԱՀ-ից 100-ական մարդիկ: Տարիքային հարաբերակցությունը այսպիսին է. 73 %, 17 %, 10 %: Պատճառը այս անհամամասնության ժամանակակից նոր տեխնոլոգիաներից ու համացանցից օգտվելու դժվարությունն է, որը փաստում են 50 և ավելի տարիքային խմբի անձինք, և նրանց կողմից գերադասելի է օգտվել բանկային ծառայությունից հենց բանկային մասնաճյուղերից: Հարցվողների 61 %-ը օգտվում են օնլայն բանկինգից արդեն 1 տարուց ավել, 8,5 %-ը՝ դեռ 1 տարի, 30,4 %-ը՝ մի քանի ամիս: Ողջունելի է այս ցուցանիշը և կարելի է ճշգրիտ համարել հետազոտությունը, քանի որ հարցվողների կեսից ավելին վաղուց է օգտվում օնլայն բանկինգից:

Կարևոր տեղ է զբաղեցնում հարցման մեջ այն հարցը, թե քանի բանկի ծա-

ռայությունից են օգտվում հարցվողները: 40,9 %-ը պատասխանել է, որ օգտվում է 1, 41,6 %-ը՝ 2, 17,4 %-ը՝ 2-ից ավել բանկի ծառայությունից: Հատկանշական է, որ հաճախորդը, լինելով արդեն 1 բանկի օգտատեր, չի հրաժարվում օգտվել այլ բանկերից և դրան հաջորդում է այն հարցը, թե որ բանկից են օգտվում հարցվողները: Նախ նշենք, որ հարցվողների 25 %-ը չի օգտվում օնլայն բանկինգից բացարձակապես: Հարցին, թե որ բանկից են օգտվում, ավելի շատ առաջատար դիրք է գրավում Ամերիաբանկը՝ կազմելով հարցվողների 18 %-ը: Դրան զուգահեռ գնահատվել է նրանց կողմից օգտագործվող բանկ(եր)ի օնլայն բանկինգի մատուցած ծառայությունների որակն ու մատչելիությունը ըստ 3 մակարդակի՝ բավարար, միջին, լավ: Արդյունքում լավ մակարդակում առաջատարը Ամերիա Բանկն է՝ 18 %: Այս 2 հարցերը ըստ փոխկապվածության պետք է համապատասխանեին իրար, այլապես կստացվի այնպես, որ օգտատերը օգտվում է մեկ բանկից, իսկ գոհ է մեկ այլ բանկի օնլայն բանկինգից: 2-րդ տեղը Հայբիզնես բանկն է, որի օգտվողների թիվը կազմում է 16 % և ըստ մակարդակների՝ 12 %: Տվյալ դեպքում դիտարկվում է անհամապատասխանություն. հաճախորդը օգտվում է բանկից, բայց ավելի շատ գոհ է մեկ այլ բանկի օնլայն բանկինգից: 3-րդ տեղը Արցախբանկն է, համապատասխանաբար՝ 15,5 % և 5,5 %: Այս բանկին, ըստ մակարդակի, վերագրվել է «բավարար» մակարդակը՝ 8 %, ինչը այլ բանկերի դեպքում բացառվել է: Այնուհետև ԱյԴի բանկը՝ 14 % և 10 %, ԱկբաԿրեդիտԱգրիկոլ-Բանկը՝ 11,5 % և 7 %, Ինեկոբանկը՝ 8 % և 5,5 %, Արդշինբանկը՝ 6 % և 3 %, Կոնվերս և ՎՏԲ Հայաստան բանկերը՝ 5,5 % և 4 %, Հայէկոնոմ բանկը՝ 3 % և 1 %, Էվոկա բանկը՝ 2,5 % և 2,5 %, Յունիբանկը՝ 1,5 % և 1 %, Էյչ-Էս-բի-սի բանկը՝ 0,5 % և 1,5 %: Այսքանից կարելի է եզրակացնել, որ ամենաբարենպաստ պայմաններում գտնվում է Ամերիաբանկը՝ ունենալով օգտվողների մեծ շրջանակ, ինչպես նաև որպես մատչելիություն և բարձր որակ ապահովող բանկ:

Հարցման մեջ անդրադարձ ենք կատարել նաև այն հարցին, թե ինչ նպատակ է հետապնդում տվյալ բանկի օնլայն բանկինգից օգտվելը: Ստորև ներկայացնենք արդյունքները.

- Քարտային ու բանկային հաշիվների դիտում – 82,6 %,
- Կոմունալ կամ բջջային օպերատորների վճարումներ – ընտրել է 58,3 %,
- ներբանկային, միջբանկային փոխանցումներ – 56,9 %,
- վարկերի մարումներ, ավանդների համալրումներ – 22,2 %,
- պետական, հարկային վճարներ – 10,4 %,
- վարկերի, ավանդների առցանց հայտեր – 5,6 %:

Ըստ արդյունքների կարելի է ասել, որ օգտատերերի գերակշիռ մասը բացի հաշիվներ դիտելուց, հետաքրքրված է նաև այլ ծառայություններով:

Հաջորդ կարևոր հարցը Cashback-ների մասին է. Արդյոք գիտեն մարդիկ, թե ինչ է դա, կարևորում են դրա առկայությունը բանկ ընտրելիս: 64,9 %-ը կարևորում է դա, 15,5 %-ը՝ ոչ, իսկ 19,6 %-ը անգամ չգիտի, թե ինչ է դա: Cashback-ը

բոնուս չէ և ոչ էլ՝ պայմանական միավոր. Այլ իրական գումար է, որը ստանում ենք յուրաքանչյուր կատարած գործարքից: Սա համարվում է բանկի կողմից կիրառվող քաղաքականություն՝ նպատակ ունենալով ներգրավել ավելի շատ պոտենցիալ հաճախորդներ:

Եվ, վերջապես, այն հարցին, թե բանկ ընտրելիս ինչքանով եք հաշվի առնում ինտերնետ բանկինգի առկայությունը ու դրա որակը, պատասխանները հետևյալն էին.

- 48,3 % – շատ եմ ուշադրություն դարձնում,
- 37,4 % – որոշ չափով եմ ուշադրություն դարձնում,
- 14,3 % – ուշադրություն չեմ դարձնում:

Այս տոկոսային միավորները, անշուշտ, ցույց չեն տալիս ՀՀ և ԱՀ ողջ բանկային համակարգի կողմից ներդրված օնլայն բանկինգ ծառայության մակարդակը, բայց սա նույնպես կազմում է դրա մի մասը:

Այսպիսով՝ ՀՀ-ում և Հ-ում ինտերնետային բանկինգը զարգանում է արագ տեմպերով: Ապագայում ինտերնետային բանկինգը իր արժանի տեղը կզբաղեցնի դրամական շրջանառության մեջ՝ հաշվի առնելով ինտերնետի միջոցով հաշիվները կառավարելու հարմարավետությունը: Կարևոր է ներառել հեռավոր բանկային ծառայության զարգացման ռազմավարությունը բանկի բիզնեսի զարգացման առաջնահերթ ուղղությունների ցանկում: Եվ դա արդարացված կլինի, քանի որ ինտերնետային բանկինգը առանցքային ծառայություն է, որի որակը որոշիչ կլինի հաճախորդների համար բանկ ընտրելու որոշում կայացնելիս: Որքան լայն է ինտերնետային բանկային համակարգի ֆունկցիոնալությունը, այնքան ավելի ամբողջական և պահանջված է նման համակարգը: Ինտերնետային բանկային գործունեության ապագան կապված է մանրածախ բանկային ծառայությունների զարգացման հետ: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ առաջնահերթություն կլինի հայրենական խոշոր բանկերի համար, որոնք արդեն հաջողությամբ յուրացնում են ինտերնետ-տարածքները, ավելացնում մատուցվող ծառայությունների քանակը և բարձրացնում սպասարկման մակարդակը: ՀՀ-ում ինտերնետային բանկային համակարգը հսկայական ներուժ ունի հետագա զարգացման համար՝ օգտագործելով համաշխարհային ցանցի հնարավորությունները: ՀՀ բանկերի կողմից ներդրված բանկային վերջին տեխնոլոգիաների օգտագործումը ազդում է ոչ միայն բանկային հատվածի ներքին զարգացման վրա, այլև միջազգային ասպարեզում Հայաստանի բանկային համակարգի դիրքավորման վրա: Բայց չնայած այս բոլոր առավելություններին, ինտերնետային բանկային գործունեության խնդրահարույց կողմեր կան, ինչպիսիք են՝ անվտանգությունը, վիրտուալությունը կամ վերացականությունը, էլեկտրոնային փողի նկատմամբ թերահավատությունը, բնակչության ցածր մշակութային մակարդակը նոր տեխնոլոգիաների հետ աշխատելիս:

Դրանք կարելի է լուծել հետևյալ ձևով.

- Հաճախորդների վստահության բարձրացում, բանկի նկատմամբ վստահության բարձրացում,
- ծառայության ընկալման բարելավում. այլ կերպ ասած՝ բանկային ծառայության հոգեբանական ասոցիացիայի ստեղծում՝ շոշափելի և հեշտ ընկալելի առարկաների՝ գովազդի օգտագործման միջոցով,
- բոլոր առկա տեղեկատվության կանոնավոր գնահատում և դրա պաշտպանության համար գաղտնի առանձնացում,
- աշխատողների մասնագիտական զարգացում,
- անվտանգության քաղաքականության խախտման յուրաքանչյուր դեպքում ծառայողական հետաքննության անցկացում:

Այդուհանդերձ, օնլայն բանկինգի նկատմամբ պահանջարկը ժամանակի ընթացքում կաճի՝ դառնալով մարդու միջոցների կառավարման այն յուրօրինակ գործիքներից մեկը, որը կխնայի չվերականգնվող ռեսուրսը՝ ժամանակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинштейн Т. Б., Мирошкина О. В. Развитие банковской системы и инновационные банковские продукты, Москва: Гелиос АРВ, 2015.
2. Достов В. Л. Организация операций с электронными деньгами: общие и частные проблемы реализации. Расчеты и операционная работа в коммерческом банке, 2013.
3. Гаврилова О. А., Нестеренко Т. В., Кортунова В. С. Интернет-банкинг как инновационный вид финансовых отношений // Вестник Волгоградскогого сударственного университета. 2010.
4. https://datareportal.com/reports/digital-2023-global-overview-report
5. https://datareportal.com/reports/digital-2022-armenia?rq=armenia % 20
6. https://www.fintech.am/2022/10/27/
7. https://banks.am/am/news/fintech/18169

Роль интернет-банкинга в современном мире: динамика его развития в РА

Ваганян Мариам
АрГУ, Финансы (по отрослям), 3-й курс
Научный руководитель:
кандидат экономических наук, доцент Н. Аванесян

Резюме

Ключевые слова: *онлайн-банкинг, интернет-банкинг, мобильный банкинг, интернет, сервис, пользователь, коммерческий банк*

Современность банковской системы измеряется ее цифровизацией. В статье рассматривается интернет-банкинг, его основные цели и задачи. Рассматривается развитие интернет-банкинга рубежом в мире и РА. Рассматриваются услуги, предоставляемые интернет-банкингом, его преимущества и недостатки. Чтобы узнать его уровень в Армении, был проведен социальный опрос, и в заключении были даны предложения по преодолению существующих проблем.

The Role of Online Banking in the Modern World: Dynamics of its Development in RA

Vahanyan Mariam
ASU, Finance (by sector), 3rd year
Academic Supervisor: N. Avanesyan
Candidate of Economic Sciences, Associate Professor

Summary

Key words*: online banking, internet banking, mobile banking, internet, service, user, commercial bank*

The modernity of the banking system is measured by its digitalization. The article deals with Internet banking, its main goals and objectives. The development of Internet banking in the world and in RA is considered. The services provided by Internet banking, its advantages and disadvantages are considered. A social survey was conducted in order to find out its level in Armenia. As a result, different suggestions were made to overcome the existing problems.

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ИНФОРМАТИКА И МАТЕМАТИКА

INFORMATICS AND MATHEMATICS

Քննության կամ ստուգարքի հայտի ավտոմատ ստեղծում

Աղաբաբյան Անգելինա
ԱրՊՀ, Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Վ. Առստամյան

Հանգուցային բառեր. *տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինֆորմատիկա, C++ ծրագրավորման լեզու, ավտոմատ, կառուցվածք, ֆունկցիա*

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է մի շարք աշխատանքների ավտոմատացման: Դա էլ իր հերթին հանգեցրել է այնպիսի գիտության զարգացմանը, ինչպիսին է ինֆորմատիկան: Ինֆորմատիկան գիտություն է, որն ուսումնասիրում է տեղեկատվության հատկությունները, ինչպես նաև տեխնիկական միջոցների միջոցով տեղեկատվության ներկայացման, կուտակման, մշակման և փոխանցման եղանակները [2, 14]: Ինֆորմատիկայի դերը ժամանակակից աշխարհում անընդհատ մեծանում է:

Մարդիկ տեղեկատվական տեխնոլոգիաների հետ առնչվում են ամեն օր՝ հաճախ անգամ չգիտակցելով դա: Օրինակ, համալսարաններում քննաշրջանի ընթացքում դեկանատի աշխատակիցները յուրաքանչյուր առարկայի համար տպում են հայտեր՝ ուսանողների քննություններն ու ստուգարքները հանձնելու համար: Դեկանատի աշխատակիցների աշխատանքը հեշտացնելու և ժամանակ խնայելու համար կարելի է կազմել ծրագիր, որն ավտոմատ կստեղծի հայտեր յուրաքանչյուր խմբի բոլոր առարկաների համար՝ նշելով ստուգման ձևը (ստուգարք, քննություն), ինչպես նաև կդասավորի ուսանողների անունները այբբենական կարգով:

Ծրագրի իրականացման համար կօգտագործվի C++ ծրագրավորման լեզուն:

C++-ը օբյեկտ կողմնորոշված ծրագրավորման լեզու է, որը հեշտացնում և ընդարձակում է լայնածավալ ծրագրերի կոդավորումը: Լինելով ցածր մակարդակի ծրագրավորման լեզու՝ C++-ը կարող է ստեղծել շատ արդյունավետ, բարձր արագությամբ ծրագրեր [3, 14-15]:

Ծրագիրը գրելուց առաջ նախ պետք է կազմել բլոկ սխեման: Տվյալ ծրագրի համար այն կունենա հետևյալ տեսքը.



Նկար 1. Ծրագրի բլոկ սխեմա

Ծրագրի իրականացման համար ստեղծվել են երկու կառուցվածք: Կառուցվածքներն օգտագործվում են string և int տվյալների տիպերը տրամաբանորեն համատեղելու և ճիշտ այնպես, ինչպես զանգվածները՝ տարբեր տեսակի տվյալներ խմբավորելու համար: Խմբերի groups կառուցվածքը սահմանվում է հետևյալ կերպ.

```
struct groups
{
stringgroupName;
intcolStudents;
stringstudentsName[50];
};
```

Նույն կերպ կլինի նաև առարկաների subjects կառուցվածքը.

```
structsubjects
{
stringsubName;
stringprof;
};
```

studentsName զանգվածն ըստ ուսանողների ազգանունների դասավորելու համար ընտրվել է արագ տեսակավորում՝ quicksort, որի ալգորիթմի համառոտ նկարագրությունը տրված է ստորև.

- ընտրել տարր, որը կոչվում է առանցք,
- համեմատել բոլոր մյուս տարրերը առանցքի հետ, համեմատության հիման վրա բազմությունը բաժանել երեքի՝ առանցքից «փոքր», «հավասար» և «մեծ», դասավորել դրանք փոքր-հավասար-մեծ կարգով,
- կրկնել ռեկուրսիվ «փոքր»-ի և «մեծ»-ի համար:

Օգտագործելով ֆունկցիաները՝ կարելի է ծրագիրը բաժանել առանձին հատվածների՝ հնարավորություն ստանալով արդեն պատրաստի ծրագրի մասերը օգտագործել այլ ծրագրերի մեջ: Ֆունկցիան հրամանների հաջորդականություն է, որոնք աշխատեցվում են, երբ ֆունկցիան կանչվում է ծրագրի որևէ մասից [1, 41]:

quicksort ֆունկցիան ունի հետևյալ շարահյուսությունը.

```
void quickSort(string arr[], int left, int right) {
 int i = left, j = right;
 string tmp;
 string pivot = arr[(left + right) / 2];
 while (i <= j) {
 while (arr[i] < pivot)
 i++;
 while (arr[j] > pivot)
 j--;
 if (i <= j) {
 tmp = arr[i];
```

```
arr[i] = arr[j];
arr[j] = tmp;
i++;
j--;
}
};
if (left < j)
quickSort(arr, left, j);
if (i < right)
quickSort(arr, i, right);
}
```

Առհասարակ ֆունկցիաները սկսվում են տիպով, սակայն լինում են դեպքեր, երբ դրանք չպետք է արժեք վերադարձնեն: Այդ դեպքում օգտագործում են void տիպը [3, 46]: quicksort ֆունկցիան նույնպես void տիպի է, քանի որ նրա գործառույթը միայն զանգվածը տեսակավորելն է: quicksort մեթոդի բարդությունը այն է, որ այն անկայուն է: Տեսակավորումն օգտագործում է լրացուցիչ հիշողություն, քանի որ ռեկուրսիայի մոտավոր խորությունը O(logn) է, և ռեկուրսիվ ենթականչերն ամեն անգամ ավելացնում են ստեկ:

Զանգվածների մեջ տվյալների ավելացման համար օգտագործվում է ifstream ֆունկցիան, որը ստանում է 2 փոփոխական՝ սիմվոլային տարրեր պարունակող զանգվածների ցուցիչներ և զանգվածի տարրերի քանակ, և հերթականությամբ մուտքագրում է զանգվածի բոլոր տարրերը:

Խմբի (առարկայի) ստուգման ձևի ընտրության համարը որոշելու ֆունկցիան ստանում է չորս պարամետր՝ զանգվածի ցուցիչ և երեք ամբողջաթվային փոփոխականներ, որոնք վերագրված են խմբերի (առարկաների) ստուգման ձևերի անուններին: while օպերատորի օգնությամբ կրկնվում է տվյալների ցուցադրումը էկրանին՝ մինչև հայտի վերջնական ստացումը:

```
while (true)
{
cout<<"Ընտրեք ստուգման ձևը:\n0 – ստուգարք\n1 – քննություն\n: ";
cin>>tmp;
if(tmp) typeVed = "քննություն";
else typeVed = "ստուգարք";
}
```

cout օպերատորն օգտագործվել է օգտագործողի հետ երկխոսության և ելքային հայտի ցուցադրումն ապահովելու համար:

Բոլոր մուտքային տվյալները կարդացվում են ֆայլից: Ֆայլը պարունակում է խմբերի քանակը, նրանց անունները, դասավանդվող առարկաները և այդ առարկաների ստուգման ձևը (քննություն/ստուգարք): Տվյալների յուրաքանչյուր բլոկ լրացվում է համապատասխան զանգվածում:

```
SS3 խումբը հաջողությամբ պահպանված է:
Ֆիզ2 խումբը հաջողությամբ պահպանված է:
Մաթ1 խումբը հաջողությամբ պահպանված է:
Ֆիզիկա առարկան հաջողությամբ պահպանված է:
Ինֆորմատիկա առարկան հաջողությամբ պահպանված է:
Ծրագրավորման հիմունքներ առարկան հաջողությամբ պահպանված է:
Դիսկրետ մաթեմատիկա առարկան հաջողությամբ պահպանված է:

Ընտրեք ստուգման ձևը:
0 - ստուգարք
1 - քննություն
: 1

Քննություն տվող խմբերը:
0 - SS3
1 - Ֆիզ2
2 - Մաթ1

Ընտրեք քննություն տվող խումբը:
: 0

SS3 խմբի քննական առարկաները:
0 - Ինֆորմատիկա
1 - Ծրագրավորման հիմունքներ

Ընտրեք քննական առարկան:
: 1
```

Նկար 2. Խմբի (առարկայի) ստուգման ձևի ընտրությունը

Անհրաժեշտ տվյալների ընտրությունից հետո էկրանին կցուցադրվի հայտը:



Նկար 3. Քննական հայտի վերջնական տեսքը

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն արդի աշխարհում բերել է մի շարք գործընթացների ավտոմատացման և դարձել մարդկանց կյանքի անբաժան մասը: Դրանք մեծ հաշվով օգտագործվում են մարդկանց համար հոգնեցուցիչ և ծանրաբեռնված աշխատանքը հեշտացնելու նպատակով: Նույն նպատակին է միտված նաև այս աշխատանքը: Հոդվածում իրականացվել է վերլուծական աշխատանք, որի կատարման արդյունքում ստեղծվել է ծրագիր, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնելու քննության կամ ստուգարքի հայտի ստեղծումը՝ հեշտացնելով դեկանատի աշխատակիցների աշխատանքը և որոշ չափով խնայելով նրանց ժամանակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Ռ. Հ., Կարապետյան Ս. Գ., C++-ի հիմունքները, Երևան, 2005, 133 էջ:
2. Дэвис, Стефан, C++ для «чайников», 4-е издание, пер. с англ., Москва: Издательский дом «Вильяме», 2003, 336 с.
3. Ляхович В. Ф., Молодцов В. А., Рыжикова Н. Б. Основы информатики, Москва: КНОРУС, 2016, 348 с.

Автоматическое создание экзаменационной или зачетной ведомости

Агабабян Ангелина
АрГУ, Информационные технологии, 3-й курс
Научный руководитель:
кандидат математических наук, доцент В. Арстамян

Резюме

Ключевые слова: *информационные технологии, информатика, язык программирования C++, автомат, структура, функция*

Развитие информационных технологий в современном мире привело к автоматизации ряда процессов и стало неотъемлемой частью жизни людей. В статье проведена аналитическая работа, в результате которой создана программа, позволяющая автоматизировать создание экзаменационной/зачетной ведомости, облегчая работу сотрудников деканата с экономией их времени.

Automatic Creation of an Examination or Test Sheet

Aghababyan Angelina
ASU, Information Technology, 3rd year
Academic Supervisor: V. Arstamyan,
Candidate of Mathematical Sciences, Associate Professor

Summary

Key words: *information technology, computer science, C++ programming language, automatic, structure, function*

The advancement of information technology in the contemporary world has resulted in the automation of various processes and has become an integral aspect of everyday life. The article presents an analytical study, culminating in the development of a program designed to automate the creation of examination or test sheets, thereby streamlining the workflow of dean's office personnel and, to a certain extent, saving valuable time.

Պարենային ապրանքների կտրոնային համակարգի ծրագրի մշակում

Աղաբեկյան Լիլիթ, Թահիրյան Մարիա
ԱրՊՀ, Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 3-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Վ. Առստամյան

Հանգուցային բառեր. *տվյալներ, ավտոմատացում, տվյալների բազա, ծրագիր, ինֆորմացիա, ինտերֆեյս, ֆիլտրում*

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելու պատճառով անհրաժեշտություն առաջացավ ներդնել կտրոնային համակարգ, ինչը հնարավորություն կտա առավելագույնս համաչափ բաշխել առկա պարենային ապրանքները: Հաշվի առնելով մթերքների սղությունը, դրանց հավասարաչափ բաշխումը մարդկանց միջև դարձել էր կարևոր խնդիր: Այս համակարգը ԱՀ բնակչության տվյալների հավաքագրման և անվտանգ պահպանման համար ևս ունեցավ մեծ նշանակություն:

Ներկայումս մեծածավալ տվյալների հետ աշխատելու համար օգտագործվում են տվյալների բազաները, որոնք ավելի հեշտ և հարմար են դարձնում տվյալների հետ հետագա աշխատանքը, հնարավորություն են տալիս հեշտությամբ փնտրել ու գտնել անհրաժեշտ տվյալները, եղած տվյալների հիման վրա կազմել հաշվետվություններ, ինչպես նաև ապահովում են տվյալների անվտանգությունը:

Տվյալ ծրագիրն իր մեջ ներառում է.

1. Անձանց մասին տվյալներ,
2. Անձի տվյալների ավտոմատ ստացում, եթե նա առկա է համակարգում, հակառակ դեպքում՝ անձին ավելացնելու հնարավորություն,
3. Առկա տվյալների հիման վրա հաշվետվությունների կազմում,
4. Անհրաժեշտ քանակով ստացականների տրամադրման հնարավորություն:

Տվյալներն ինտերֆեյսում ներկայացվում են աղյուսակների ձևով, որն ավելի հեշտ է դարձնում տվյալների որոնումը՝ կատարելով համապատասխան ֆիլտրում:

Ծրագիրն իրականացվել է C# ծրագրավորման լեզվով [2, 3]: C#-ը ժամանակակից, օբյեկտ կողմնորոշված ծրագրավորման վրա հիմնված և տիպերի համար անվտանգ ծրագրավորման լեզու է: C#-ը ծրագրավորողներին թույլ է տալիս ստեղծել մի շարք անվտանգ, ապահով և հուսալի հավելվածներ, որոնք աշխատում են .NET-ում:

Տվյալների պահպանման համար օգտագործվել է MS SQL SERVER 2018 տվյալների բազաների ղեկավարման համակարգը, իսկ տվյալների հետ աշխատելու համար օգտագործվել է Entity Framework 6 [5]: Մարդկանց տվյալների մոդելը ունի հետևյալ տեսքը.

```
public class Human
```

```
{
public int Id { get; set; }
public string Firstname{ get; set; }
public string Lastname{ get; set; }
public string Middlename{ get; set; }
public DateTime? Birthday { get; set; }
public string SocialCard{ get; set; }
public string IdentifyNumber{ get; set; }
}
```

Տվյալների բազայում անձանց և ստացականների կապը ներկայացվում է հետևյալ տեսքով.



Նկար 1. Անձինք և Ստացականներ աղյուսակների միջև կապը

Յուրաքանչյուր օգտատեր, որպեսզի կարողանա մուտք գործել համակարգ և օգտվել ծրագրից, անհրաժեշտ է, որ գրանցված լինի համակարգում: Ծրագիր մուտք գործելու համար անհրաժեշտ է 420 մուտքագրել ծածկանունը և ծածկագիրը: Համակարգ մուտք գործելու էջն ունի հետևյալ տեսքը.



Նկար 2. Մուտք գործել համակարգ

Օգտատերերը հասանելի կլինեն այն տվյալներին և գործողություններին, որոնք համապատասխանեցված են իրենց դերերին: Համակարգում առկա դերերն են՝ ադմինիստրատոր, աշխատակից, օպերատոր:

Համակարգի առանցքային փուլերից է անձի տվյալների ավելացումը. այն ունի հետևյալ տեսքը.



Նկար 3. Անձի տվյալների ավելացում

Մուտքագրելով ՀԾՀ կամ Անձնագիր/ID/Ծննդյան վկայական դաշտերից որևէ մեկը, անձի տվյալները համակարգում լինելու դեպքում հնարավորություն է

տրվում փնտրում կատարելով ստանալ այդ տվյալները, հակառակ դեպքում անհրաժեշտություն է առաջանում լրացնել այդ տվյալները:

Անձի տվյալները հնարավոր է նաև փոփոխել կամ ջնջել:

Անձանց մուտքագրումը կատարվելու է օպերատորների կողմից, օպերատորին հասանելի կլինեն միայն վերջին մուտքագրած անձի տվյալները հետևյալ տեսքով.



Նկար 4. Անձի տվյալների դիտումը ավելացնելուց հետո

Օպերատորը կունենա փնտրման հնարավորություն ըստ մեկ անձի տվյալների, համոզվելու համար, որ տվյալ անձը համակարգում առկա է.

Նկար 5. Ֆիլտրում ըստ մեկ անհատի

Անձի տվյալները ավելացնելուց հետո հաջորդ փուլը ստացականի ստեղծումն է: Ստացական կարելի է ստեղծել և՛ ըստ անհատի, և՛ ըստ համայնքի: Ըստ անհատի ստացականի ստեղծման ինտերֆեյսը հետևյալն է.



Նկար 6. Ըստ անհատի ստացականի ավելացում

Ստացական ավելացնելու համար պետք է կատարել փնտրում ըստ նշված դաշտերի (Հանրային ծառայությունների համարանիշ կամ անձը հաստատող փաստաթուղթ): Ավելորդ հերթերից խուսափելու համար անձը կարող է մոտենալ շտաբին՝ միաժամանակ վերցնելով նաև ընտանիքի անդամների անձնագրերը, տվյալ անձը համակարգում նշանակվում է որպես պատասխանատու անձ: Պատասխանատու անձին նշելուց հետո ստացականը արտահանվում է և տպվում, պատասխանատու անձը ստորագրում է հատկացված մասում և մոտենում հաջորդ օպերատորին, ով արդեն հանձնում է կտրոնները ըստ ստացականում գրանցված մարդկանց քանակի:

Ըստ համայնքի ստացականի ավելացումը ունի հետևյալ տեսքը.



Նկար 7. Ըստ համայնքի ստացականի ավելացում

Կատարվում է փնտրում ըստ շրջանի և համայնքի, կազմվում են ստացականները, արտահանվում, իսկ հետո կտրոնները տրամադրվում են համայնքապետին, ինչից հետո համայնքապետը կտրոնները բաժանում է համայնքի անձանց:

Այսպիսով, տվյալ համակարգը կարելի է օգտագործել պարենային ապրանքների հավասարաչափ բաշխման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկյան Մ. Գ., Տվյալների բազաների համակարգերի ներածություն, Երևան, 2005:
2. Б. Ватсон, C# 4.0 на примерах (C# 4.0. How-To), Моксва, 2014, 608 с.
3. Т. Нэш, «C# ускоренный курс для профессионалов», Москва, 2010, 588 с.
4. Ш. Герберт, C# 4.0. Полное руководство, Москва: Вильямс, 2015, 670 с.
5. Ицик Бен-Ган, Microsoft SQL Server 2008, Петербург, 2009, 430 с.

Разработка продовольственной купоновой программы

Агабекян Лилит, Таирян Мария

АрГУ, Информационные технологии, 3-й курс

Научный руководитель:

кандидат математических наук, доцент В. Арстамян,

Резюме

Ключевые слова: *данные, автоматизация, база данных, программа, информация, интерфейс, фильтрация*

В связи с блокировкой Азербайджаном единственной дороги, соединяющей Арцах с Арменией, возникла необходимость введения талонной системы, которая позволит максимально пропорциональное распределение доступных продуктов питания. Учитывая дефицит товаров и продовольствия, важным вопросом стало их равномерное распределение среди населения. Кроме того, данная система имеет важное значение для сбора и безопасного хранения данных о населении Арцаха.

Development of Food Coupon Program

Aghabekyan Lilit, Tairyan Maria

ASU, Information Technology, 3rd year

Academic Supervisor: V. Arstamyan,

Candidate of Mathematical Sciences, Associate Professor

Summary

Key words: *data, automation, database, program, information, interface, filtration*

Due to the blockade by Azerbaijan of the only road connecting Artsakh with Armenia, the need arose to implement a coupon system, which would ensure the most proportional distribution of available food products. Given the shortage of goods and food, the issue of fair and even distribution among the population became critical. Furthermore, this system plays an important role in the collection and secure storage of data about the population of Artsakh.

Ոչ ստանդարտ տեքստային խնդիրները թվաբանական մեթոդով լուծելու մասին

Ավթյան Լուսինե
ԱրՊՀ, Մաթեմատիկա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.-մ. գ. թ., դոցենտ Գ.Պետրոսյան

Հանգուցային բառեր. *շարժում, սկզբնական արագություն, անցած ճանապարհ, հեռավորություն, ժամանակ*

Մաթեմատիկայի դպրոցական դասագրքերում զետեղված խնդիրները, որպես կանոն, նպատակաուղղված են տվյալ թեմայի տեսական նյութի յուրացմանը: Սահմանափակվելով միայն դասագրքում ընդգրկված խնդիրներով՝ սովորողների մոտ կարող են ձևավորվել միայն սերտողական բնույթի գիտելիքներ: Այդ պատճառով կարելի է երբեմն աշակերտների հետ լուծել հետաքրքիր և ավելի բարդ խնդիրներ, որի հիմնական նպատակն է խթանել սովորողի մտավոր ունակությունների զարգացումը, բարձրակարգ մտածողության ձևավորումը, սովորեցնել հստակ ձևակերպել մտքերը, կատարել գրագետ դատողություններ:

Մաթեմատիկական կրթությունը և մաթեմատիկական մտածելակերպն անհրաժեշտ են գրեթե բոլոր բնագավառներում: Դպրոցականների մտավոր կարողություններն ու նախասիրությունները, ինչպես նաև մաթեմատիկական մտածողության տարրերը հիմնականում ձևավորվում են միջին դպրոցում: Այդ շրջանում աշակերտները կարողանում են ինքնուրույն դատողություններ անել, նկատել որոշակի օրինաչափություններ, որոնել խնդիրների լուծման նոր, ոչ ստանդարտ եղանակներ: Մաթեմատիկայի դասընթացի ուսուցման գործընթացում ընդգծված տեղ է հատկացվում տեքստային խնդիրների լուծմանը: Մաթեմատիկական խնդիրներն ունեն ուսուցողական, գործնական և դաստիարակչական նշանակություն: Նրանք զարգացնում են սովորողների ալգորիթմական, տրամաբանական մտածողությունը, մշակում մաթեմատիկան կիրառելու գործնական հմտություններ: Խնդիրների լուծումը նրանց մղում է ստեղծագործական աշխատանքի:

Եթե խնդրի լուծման ընթացք ասելով հասկանում ենք խնդիրը ստանալուց մինչև այն լրիվությամբ լուծելու պրոցեսը, ապա այդ ընթացքը կազմված է մի շարք փուլերից:

Տեքստային խնդիրների լուծման ընթացքը կարելի է պայմանականորեն տրոհել հետևյալ փուլերին.

1. Խնդրի բովանդակության վերլուծություն, համառոտագրում, լուծման պլանի կազմում: Այս փուլում պարզաբանվում է, թե ինչ տվյալներ են հայտնի խնդրի պայմանում, ինչ կապ կա տվյալների, ինչպես նաև դրանց և անհայտ մեծության միջև: Խնդրի վերլուծությունը կարելի է կատարել կամ վերլուծական (հարցից դեպի տվյալներ), կամ համադրական (տվյալներից դեպի հարց) եղանակով:

2. Խնդրի սխեմատիկական գրառում:

3. Խնդրի լուծման եղանակի ընտրություն: Տարբերակում են խնդիրների լուծման հետևյակ եղանակները.

ա) գործնական կամ առարկայական: Այս եղանակից օգտվում են ցածր դասարաններում,

բ) թվաբանական եղանակ: Այս եղանակով խնդիրների լուծումը կարող է գրառվել տարբեր ձևերով.

- գրառվում են կատարվող գործողություններն առանց մեկնաբանությունների,
- գրառվում են գործողությունները մեկնաբանություններով,
- գրառվում են առաջադրվող հարցերը և կատարվող գործողությունները:

գ) Հանրահաշվական եղանակ: Հավասարում կազմելու եղանակով խնդիրը լուծելու համար պետք է ճիշտ ընտրել անհայտը և կապեր ստեղծել տվյալների և անհայտի միջև:

4. Խնդրի լուծում:

5. Խնդրի լուծման ստուգում: Ստուգել խնդրի լուծումը, նշանակում է իմանալ՝ այն ճիշտ է լուծված, թե ոչ: Խնդիրների լուծման ստուգման համար մեթոդիկայում ընդունված են հետևյալ եղանակները.

- տարբեր եղանակներով խնդրի լուծում,
- տրված խնդրի հակադարձի կազմում և լուծում,
- խնդրի լուծման արդյունքում ստացած և պայմանում տրված թվերի միջև համապատասխանության ստեղծում,
- որոնելի մեծության թվային արժեքի սահմանների մոտավոր որոշում:

6. Խնդրի ուսումնասիրություն

7. Խնդրի պատասխանի ձևակերպում:

8. Խնդրի լուծման վերլուծություն:

Խնդրի լուծման համար արդյունավետ եղանակ ընտրելու համար անհրաժեշտ է կատարել խնդրի բովանդակության ճիշտ վերլուծություն:

Շարժման վերաբերյալ տեքստային խնդիրները միջին և բարձր դասարաններում, որպես կանոն, լուծում են հանրահաշվական եղանակով՝ նախապես ընտրելով անհայտ մեծությունը և կապեր ստեղծելով տվյալների և անհայտի միջև: Այդ կերպ ներկայացվում է կիրառական բնույթի խնդիրների բերումը գծային կամ քառակուսային հավասարումների, որով և կարևորվում է հավասարումների լուծման իմացությունը: Սակայն պետք է աշակերտների մոտ ամրապնդել նաև տեքստային խնդիրների լուծման տարրական դպրոցից հայտնի թվաբանական եղանակը, քանի որ որոշ խնդիրների լուծման համար այդ եղանակը առավել արդյունավետ է:

Դիտարկենք այդպիսի մի խնդիր:

Խնդիր: A և B կետերից, որոնց հեռավորությունը 105 կմ է, երկու հեծանվորդ շարժվեցին միմյանց ընդառաջ և հանդիպելով շարժումը սկսելուց 1 ժամ 45 րոպե

հետո, յուրաքանչյուրը շարժումը շարունակեց առանց կանգ առնելու՝ իր ուղղությամբ:

Նրանց հանդիպումից 3 րոպե անց առաջին հեծանվորդը, որը շարժվում էր 40 կմ/ժ արագությամբ, հանդիպեց երրորդ հեծանվորդին, ով նույն ճանապարհով շարժվում էր նրան ընդառաջ: Այնուհետև երրորդ հեծանվորդը շարունակեց ճանապարհը նույն ուղությամբ առանց կանգ առնելու և հասավ երկրորդ հեծանվորդին C կետում, որտեղ առաջին և երկրորդ հեծանվորդները կհանդիպեին, եթե առաջինի արագությունը լիներ 20 կմ/ժ–ով պակաս, իսկ երկրորդինը՝ 2 կմ/ժ-ով ավել սկզբնական արագությունից: Որքա՞ն է երրորդ հեծանվորդի արագությունը [3, 160]:

Լուծում: Թվում է, թե այս խնդիրը պետք է լուծել հավասարում կազմելով, սակայն հավասարում կազմելը արդյունք չի տա: Ավելին, կբարդացնի գործը: Խնդիրը կարելի է հեշտությամբ լուծել թվաբանական մեթոդով:

Խնդիրը ուշադիր կարդալով և վերլուծելով՝ այն կարելի է տրոհել մի քանի առանձին մասերի: Առաջին մասն այն է, որ A և B կետերից, որոնց միջև հեռավորությունը 105 կմ է, երկու հեծանվորդ շարժվել են միմյանց ընդառաջ և հանդիպել շարժումը սկսելուց 1 ժ 45 ր հետո, և առանց կանգ առնելու շարունակել են իրենց ճանապարհը: Այս մասը սխեմատիկորեն պատկերված է սխեմա 1-ում:



Սխեմա 1

Այս սխեմայի M կետը ցույց է տալիս երկու հեծանվորդների հանդիպման կետը: Եթե հայտնի լիներ այս հեծանվորդների արագությունները, ապա կկարողանայինք որոշել M կետի տեղը՝ իմանալով AM և BM հեռավորությունները:

Այնուհետև շարունակելով ուսումնասիրել խնդիրը՝ տեսնում ենք, որ առաջին հեծանվորդի արագությունը 40 կմ/ժ է: Հետևաբար կարող ենք գտնել AM ճանապարհը, որը առաջին հեծանվորդը անցել է 1ժ 45ր ժամանակահատվածում.

$S = V * T$ բանաձևից $AM = 40 * 1\frac{3}{4} = 70$ (կմ):

Այժմ հնարավոր է դառնում գտնել երկրորդ հեծանվորդի արագությունը:

Իմանալով, որ AB ճանապարհը 105 կմ է, կարող ենք գտնել նաև BM հեռավորությունը.

BM=105-70=35(կմ):

Քանի որ երկրորդ հեծանվորդը MB ճանապարհը անցել է 1ժ 45ր ընթացքում, ապա նրա արագությունը կլինի. $35:1\frac{3}{4}=20$ (կմ/ժ):

Այսպիսով մենք արդեն գիտենք ինչպես հեծանվորդների արագությունները, այնպես էլ մինչև M կետում հանդիպելը նրանց անցած ճանապարհները:

Այժմ անդրադարձ կատարենք խնդրի երկրորդ մասին: Երկրորդ մասն այն է, որ առաջին հեծանվորդը երկրորդ հեծանվորդի հետ հանդիպելուց 3 րոպե հետո D կետում հանդիպել է երրորդ հեծանվորդին, ով նույն ճանապարհով շարժվում էր նրան ընդառաջ: Այս մասը սխեմատիկորեն պատկերված է սխեմա 2-ում:



Սխեմա 2

Այս սխեմայում D կետը ցույց է տալիս, թե որտեղ հանդիպեցին առաջին և երրորդ հեծանվորդները:

Հաշվի առնելով, որ առաջին հեծանվորդի համար M կետից D կետը հասնելը տևել է 3 րոպե (3 ր=$\frac{1}{20}$ժ), և նրա արագությունը 40 կմ/ժ է, կարող ենք գտնել MD հեռավորությունը.

$MD = 40 \cdot \frac{1}{20} = 2$ (կմ):

Այժմ անցում կատարենք խնդրի հաջորդ փուլին. երրորդ հեծանվորդը, D կետում հանդիպելով առաջին հեծանվորդին, շարունակել է ճանապարհը նույն ուղղությամբ և հանդիպել է երկրորդ հեծանվորդին C կետում: Այս մասը սխեմատիկորեն պատկերված է սխեմա 3-ում:



Սխեմա 3

Առայժմ շատ քիչ տվյալներ կան այս փուլի մասին: Սակայն խնդրում պարզաբանված է, որ C-ն այն կետն է, որտեղ կհանդիպեին առաջին և երկրորդ հեծանվորդները, եթե առաջինի արագությունը լիներ 20 կմ/ժ–ով պակաս, իսկ երկրորդինը՝ 2 կմ/ժ-ով ավել սկզբնական արագությունից: Քանի որ առաջին երկու հեծանվորդների արագությունները արդեն հայտնի են, ապա հնարավոր է գտնել նաև նրանց փոփոխված արագությունները: Այսպես.
առաջինի արագությունը կլինի 40-20=20 (կմ/ժ), իսկ երկրորդի արագությունը՝ 20+2=22 (կմ/ժ):

Այս արագություններով նրանք կհանդիպեն 105:(20+22)=2,5 (ժ) հետո և, հետևաբար, C կետը գտնվում է A-ից 20*2,5=50 (կմ) կամ առաջին հանդիպման կետից MC-ին հավասար՝ 70-50=20 (կմ) հեռավորության վրա: Այս մասը սխեմատիկորեն պատկերված է սխեմա 4-ում:



Սխեմա 4

Անդրադարձ կատարելով խնդրի պայմանին՝ ստանում ենք հետևյալ օժանդակ խնդիրը. «Երկրորդ հեծանվորդը, որի արագությունը 20 կմ/ժ է, դուրս է եկել M կետից: Նրանից 3 րոպե հետո M կետից 2 կմ հեռավորության վրա գտնվող D կետից նույն ուղղությամբ դուրս է եկել երրորդ հեծանվորդը, ով հանդիպել է երկրորդին M կետից 20 կմ հեռավորության վրա գտնվող C կետում: Ինչքա՞ն է երրորդ հեծանվորդի արագությունը»:

Այժմ արդեն ունենք բավականաչափ տվյալներ խնդիրը վերջնական լուծելու համար: Իրոք, 3 րոպեում երկրորդ հեծանվորդը անցավ MK ճանապարհը, որը հավասար է 20*$\frac{1}{20}$ = 1 (կմ), հետևաբար նրան մնում է անցնելու 20-1=19 (կմ), որն էլ նա կանցնի 19/20=$\frac{19}{20}$ (ժ) ժամանակահատվածում:

Այս ընթացքում երրորդ հեծանվորդը պետք է անցնի CD ճանապարհը, որը հավասար է 20+2=22 կմ, ուստի երրորդ հեծանվորդի արագությունն է.
22/$\frac{19}{20}$ = 23$\frac{3}{19}$ (կմ/ժ):

Ինչպես տեսնում եք, խնդիրն ամբողջությամբ լուծված է, և ոչ մի հավասարում կազմելու անհրաժեշտություն չեղավ:

Դիտարկված խնդրի լուծման արդյունքում պարզ է դառնում, որ խնդրի լուծման ընթացքում անհրաժեշտ է ուղղորդվել հետևյալ կետերով.

ա) եթե խնդիրը կարելի է տրոհել այնպիսի մասերի, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է առանձին, համեմատաբար դյուրին խնդիր, ապա պետք է այդ մասերը առանձնացնել որպես ենթախնդիրներ: Դրանք լուծելուց հետո պետք է ձևափոխել սկզբնական խնդիրը՝ հաշվի առնելով ենթախնդիրների լուծման ընթացքում ստացված արդյունքները: Որպես կանոն՝ այդպիսի ձևափոխություններից հետո սկզբնական խնդիրը բերվում է ավելի պարզ խնդրի;

բ) սովորաբար խնդրի պայմանները տրվում են խնդրի պահանջները բավարարելու համար: Դրա համար պետք է ուշադիր լինել, որպեսզի խնդրի բոլոր տվյալները լրիվությամբ օգտագործվեն;

գ) խնդրի լուծման եղանակը որոնելու համար պետք է այն խորապես ուսումնասիրել և համադրել մինչ այդ լուծված խնդիրների հետ: Դրա համար բարդ խնդիրը լուծելուց առաջ նպատակահարմար է մեր կողմից լուծված խնդիրների մեջ փնտրել և գտնել նման խնդիր՝ արդեն ունեցած մեթոդները որպես գաղափար օգտագործելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Է. Ի., Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Երևան, ԵՊՀ, 2016, 202 էջ:
2. Методика и технология обучения математике. Курс лекций: пособие для вузов под научн. ред. Стефановой Н. Л., Подходовой Н. С., Москва: Дрофа, 2008, 415 с.
3. Фридман М. Как научиться решать задачи, М., Просвещение, 1979, 160 с.
4. https://lib.armedu.am/files/resource/files/2022-04-11/3144f40741e343a59 f0651c 98805286d.pdf?fbclid=IwAR0x1WH-WZKT0ZtOKX6xzkdmS84CZXr96Ykyv oSrBw1DjtZAOa4nUJqk-XE

О решении нестандартных текстовых задач арифметическим методом

Автян Лусине
АрГУ, Математика, 2-й курс
Научный руководитель:
кандидат физико-математических наук, доцент Г. Петросян

Резюме

Ключевые слова: *движение, начальная скорость, пройденный путь, расстояние, время*

Задачи, включенные в школьные учебники по математике, как правило, направлены на усвоение теоретического материала по заданной теме. Ограничиваясь только задачами, включенными в учебник, учащиеся могут формировать только общедоступные знания. Именно поэтому иногда можно решать интересные и более сложные задачи со студентами. Основной целью данной инициативы является развитие интеллектуальных способностей студентов, формирование высокоуровневого мышления, а также обучение четкому изложению мыслей, что способствует принятию обоснованных и грамотных решений.

About Solving Non-Standard Text Problems by Arithmetic Method

Avtyan Lusine
ArSU, Mathematics, 2nd year
Academic Supervisor: G. Petrosyan,
Candidate of Physical and Mathematical Sciences,
Associate Professor

Summary

Key words: *movement, initial velocity, distance traveled, time*

The tasks included in school textbooks in mathematics, as a rule, are aimed at mastering the theoretical material on a given topic. Restricted only to the tasks included in the textbook, learner can form only publicly available knowledge. That is why sometimes one can solve interesting and complex problems with students. The primary objective of this initiative is to foster the development of the student´s intellectual abilities, to cultivate advanced critical thinking skills, and to teach the clear formulation of thoughts, thereby enabling the making of well-reasoned and articulate judgments.

Մսի վաճառքի գործընթացի ավտոմատացումը շրջափակման պայմաններում

Գալստյան Անգելինա
ԱրՊՀ, Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Վ. Առստամյան

Հանգուցային բառեր. *մսամթերք, ավտոմատացում, կայքէջ, շրջափակում, հավելված, HTML, CSS, JS ծրագրավորման լեզու*

Աշխարհի ցանկացած երկրի բնակչության սպառողական զամբյուղի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում միսն ու մսամթերքը: Սակայն Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետևանքով Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում բազմաթիվ խնդիրներ են ստեղծվել, այդ թվում՝ կերային բազայի համալրման հետ կապված: Պակասել են անասնակերերը, ինչպես նաև մսամթերքը:

Վիճակը հատկապես կրիտիկական է խոզաբուծության և թռչնաբուծության ուղղություններում՝պայմանավորված այն հանգամանքով, որ այդ կենդանատեսակները սնվում են բացառապես հատիկային կերով:

Մարդու օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջներով պայմանավորված՝ մսի առկա քանակն անբավարար կարելի է համարել, սակայն նվազագույն զամբյուղի հաշվարկներով արտադրանքի քանակը բավարար է: Շրջափակման օրերին շուկայում տավարի և ոչխարի մսի պակաս է նկատվում, ինչը պայմանավորված է սեզոնային որոշ առանձնահատկություններով: Բնակչությանը մսամթերքով ապահովելու և նրանց կողմից մսամթերքի պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտություն է առաջանում ստեղծել ավտոմատացված համակարգ:

Տվյալ նախագիծը հնարավորություն կտա բնակչությանը տեղեկանալ խանութներում առկա մսամթերքի տեսականու մասին: Մսամթերքի խանութների ավտոմատացման առավելություններն են.

- պոտենցիալ պատվիրատուի և մատակարարի միջև կապի հաստատում,
- անհրաժեշտ տեղեկատվության էլեկտրոնային փոխանակում,
- ապրանքի կամ ծառայության վաճառքի ակտի կատարման ապահովում,
- էլեկտրոնային վճարում:

Ծրագրի նախագծման համար առաջին հերթին պետք է կազմել դրա բլոկսխեման: Տվյալ ծրագրի համար այն կունենա նկար 1-ում պատկերված տեսքը:

Ծրագրի գործարկման ժամանակ անհրաժեշտ տեսակը գտնելու հարցումները կատարվելու են տվյալների բազայից: Որոնման ընթացքում արդյունք ստանալու դեպքում ծրագիրը կավարտի աշխատանքը, հակառակ դեպքում՝ կշարունակի որոնել այնքան, մինչև կգտնի անհրաժեշտը:



Նկար 1. Ծրագրի բլոկ-սխեմա

Համակարգի նախագծման համար օգտագործվել են վեբ-էջերի ստեղծման հիմնական տեխնոլոգիաները՝ HTML հիպերտեքստային գծանշման լեզուն, որն ապահովում է էջի կառուցվածքը, CSS կասկադային ոճերի աղյուսակները, որոնք ապահովում են էջի դիզայնը և JS ծրագրավորման լեզուն, որն ապահովում է էջի ֆունկցիոնալությունը [1, 2, 3; 50-55, 100-110, 43-45]:

Կայքի նախագծումը արդյունավետ առցանց ռեսուրսի մտածված մոդելավորումն է: Կայքի նախագծման ժամանակ մշակվել են նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև դրանց հասնելու ուղիները:

Աշխատանքի ընթացքում լուծվել են հետևյալ խնդիրները.

- մշակվել է կայքէջ խանութի համար,
- հնարավորություն է ընձեռվել կատարել պատվեր և վճարել առցանց,
- տնտեսել ժամանակ:



Նկար 2. Հիմնական էջ

Կայքի հիմնական էջում (նկար 2) այցելուն հնարավորություն ունի կատարել

- խանութի որոնում անունով,
- մսամթերքի տեսականու ցանկի ցուցադրում,
- խանութների որոնում ըստ բնակեցման վայրի ու փողոցի,
- անձնական էջի ստեղծում կամ հաշվի մուտք գործում,
- հետադարձ կապի հնարավորություն:

Կայքի հիմնական էջում կցուցադրվեն բոլոր այն խանութները, որտեղ առկա են մսամթերքի բավականաչափ տեսականի, դրանց համապատասխան քանակը:

Կայքի որոնման էջում (նկար 3) կբացվի այն խանութի մսամթերքի տեսականին, որը կընտրվի հիմնական էջում:



Նկար 3. Որոնման էջ

Նախընտրած մսամթերքի տեսականին կարող է ավելացվել զամբյուղ՝ համապատասխան հրամանի վրա սեղման արդյունքում (նկար 4):



Նկար 4. Ապրանքի մանրամասն նկարագրություն

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նպաստում է բազմաթիվ համակարգերի ավտոմատացմանը: Տվյալ նախագիծը հնարավորություն է տալիս շրջափակման մեջ գտնվող բնակչությանը տնտեսել ժամանակը, մեքենաների վառելիքը, և իհարկե, պետությանը տանում է նորարարական տեխնոլոգիաների:

Մեր կողմից նախատեսվում է մշակել բջջային հավելված, որը հնարավորություն կտա առավելագույնս ավտոմատացնել ու դյուրացնել մսի վաճառքը առկա պայմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Макфарланд Д. Новая большая книга CSS, Питер, 2019, 720 стр.
2. JavaScript. Подробное руководство, 6-е издание, Дэвид Флэнаган, 2017, 1080 стр.
3. Хоган Б. «HTML5 и CSS3. Веб-разработка по стандартам нового поколения», 2011.

Автоматизация процесса продажи мяса в условиях блокады

Галстян Ангелина
АрГУ, Информационные технологии, 3-й курс
Научный руководитель:
кандидат педагогических наук, доцент В. Арстамян

Резюме

***Ключевые слова**: мясо, автоматизация, сайт, блокировка, приложение, HTML, CSS, язык программирования JS*

Мясо и мясные продукты занимают важное место в потребительской корзине населения любой страны мира. Однако в результате блокады Арцаха со стороны Азербайджана в аграрном секторе республики создано множество проблем, в том числе и с пополнением кормовой базы: не хватает фуража и мясных продуктов.

Развитие информационных технологий способствует автоматизации множества процессов. В связи с этим, данный проект предоставляет осажденному населению возможность сэкономить время и топливо, а также способствует внедрению инновационных технологий в государственное управление.

Automation of the Meat Sales Process under Blockade Conditions

Galstyan Angelina
ASU, Information Technology, 3rd year
Academic Supervisor: V. Arstamyan,
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

***Key words:** meat, automation, website, blocking, application, HTML, CSS, JS programming language*

Meat and meat products occupy an important place in the consumer basket of the population in any country worldwide. However, as a result of the blockade of Artsakh by Azerbaijan, many problems have emerged in the agrarian sector of the republic, including difficulties in replenishing the feed supply. This has led to a shortage of both feed and meat products.

The advancement of information technology facilitates the automation of various systems. In this regard, this project offers the besieged population an opportunity to save time and fuel, while simultaneously guiding the state toward the adoption of innovative technologies.

Մաթեմատիկայի դասավանդումը երկկոմպլեկտ դասարաններում

Դաշյան Շուշան
ԱրՊՀ, Մաթեմատիկա, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.-մ. գ. թ., դոցենտ Գ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *երկկոմպլեկտ դասարան, մաթեմատիկա, մեթոդ, դասի պլան*

Երկկոմպլեկտ դասարաններում չկան ընդհանուր նպատակներ ու խնդիրներ: Նման դասարաններում աշխատելու ժամանակ պետք է առավել ուշադիր լինել և ավելի շատ ջանք գործադրել: Մաթեմատիկա առարկայի դասավանդումը երկկոմպլեկտ դասարաններում առավել դժվար է, քանի որ պետք է ուսուցիչը հասցնի դաս հարցնել, նոր թեմա բացատրել և խնդիրներ լուծել: Այդ դժվարությունները հաղթահարելու համար պետք է կիրառել տարբեր մեթոդներ, որոնք կհեշտացնեն ուսուցումը երկկոմպլեկտ դասարաններում: Երկկոմպլեկտ դասարաններում աշխատելու ժամանակ ուսուցիչը դասարաններից մեկին դաս է հարցնում կամ բացատրում, իսկ մյուսին տալիս է վարժություններ ինքնուրույն լուծման համար, որպեսզի աշակերտները չխանգարեն իրար:

Կան թեմաներ, որոնք կապված են միմյանց հետ, և այս դեպքում հարմար է կիրառել համագործակցման մեթոդը:

Համագործակցային ուսուցումը այն միջոցն է, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների, կարողությունների, բնավորության առանձնահատկությունների և տարբերությունների նկատմամբ: Համագործակցային ուսուցումը փորձում է լուծել նաև սովորողների հնարավորինս համաչափ զարգացման խնդիրը (մասնավորապես, համագործակցային ուսուցումը խրախուսում է միմյանց օգնելու, աջակցելու որակները), ինչը շատ կարևոր է ժողովրդավարական հասարակությունում մեծ վտանգներ պարունակող բևեռացումից խուսափելու առումով: Հայաստանում ավանդաբար ուսուցիչները սովոր են միայնակ աշխատելու, ինչն արդյունավետ չէ: Չի կիրառվում դասընթացներն ու դասերը համատեղ պլանավորելու, միջառարկայական ընդհանրությունները արդյունավետ օգտագործելու աշխատառճը: Համագործակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը, այլև ուսուցիչ-ուսուցիչ համագործակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները շատ ավելի հեշտ են հարմարվում համագործակցային աշխատառճին, քան ուսուցիչները: Համագործակցման մեթոդի կիրառությունը կնպաստի բարձր դասարանի աշակերտների՝ իրենց գիտելիքների ամրապնդմանը, աշակերտների անկաշկանդ խոսելուն, հարցուպատասխանի միջոցով գիտելիք ստանալուն: Այս մեթոդի շնորհիվ կարելի է բարելավել աշակերտների խմբային աշխատելու կարողությունները, ունենալ արդյունավետ դաս և հասնել պլանավորված նպատակներին [4]:

Խմբային աշխատանքի ժամանակ աշակերտների ներգրավվածությունը դա-

սապրոցեսին արդյունավետ դասի հիմքն է: Այդ ներգրավվածությունը կարող է խթանել մոտիվացիոն գործընթացին: Մաթեմատիկայում աշակերտների ներգրավվածությունը իրենից ներկայացնում է ուսուցման տարրերի կիրառում և ինտերակտիվություն: Կարելի է կազմակերպել խմբային աշխատանք, որի ժամանակ ըստ դասարանների կբաժանվեն երկու խմբի, և նրանց կտրամադրվի որոշակի ժամանակ: Նրանց կարելի է տրամադրել հարցաթերթիկներ, որոնցում համապատասխան դասին վերաբերվող հարցեր են և խնդիրներ: Աշակերտները, միասին աշխատելով ու քննարկելով, կներգրավվեն դասին: Ժամանակը լրանալուն պես ուսուցիչը հարցերի միջոցով կստուգի նրանց աշխատանքները: Հարցադրումներից հետո տրվում է հայտորոշիչ թեստ, որի նպատակն է պարզել, թե որքանով յուրացրին թեման: Այնուհետև կբացատրվի նոր թեման, և կհանձնարարվեն տնային աշխատանքներ:

Այն թեմաների դասավանդման ընթացքում, որոնք չունեն ընդհանրություններ կամ քիչ ունեն, կիրառվում են այլ մեթոդներ, որոնք կօգնեն ուսուցչին առավել արդյունավետ դաս ունենալ: Կարելի է կիրառել խաղային ու ակտիվ ուսուցման մեթոդները:

Խաղը կատարում է երկու կարևոր գործառույթ.

- նպաստում է գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,
- խթանում է նոր գիտելիքների արդյունավետ յուրացմանը:

Մաթեմատիկայի դասագրքերում կան պատմական ակնարկներ, որոնց ժամանակ խաղային մեթոդի կիրառությունը առավել արդյունավետ կլինի, դասը կհետաքրքրի աշակերտներին: Երկկոմպլեկտ դասարաններում այդ տիպի դասերը կնպաստեն սովորողների մոտիվացումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Երկկոմպլեկտ դասարաններում մաթեմատիկա առարկայի ժամանակ ակտիվ ուսուցման մեթոդը կարելի է կիրառել աշակերտների գիտելիքները ստուգելու համար: Ներկայացնենք 6-րդ և 7-րդ դասարաններից կազմված երկկոմպլեկտ դասարանում, համապատասխանաբար, «Ամբողջ թվերի բազմապատկումը» և «Բազմանդամի վերլուծումը արտադրիչների» թեմաների ուսուցման շրջանակում ակտիվ ուսուցման մեթոդի կիրառությունը:

Զույգերով աշխատում են նույն դասարանի աշակերտները: Յուրաքանչյուր զույգ ստանում է թղթեր, որոնցում նշված են տվյալ թեմաներին համապատասխան առաջադրանքներ իրենց ճիշտ և սխալ լուծումներով կամ առանց լուծումների: «Ամբողջ թվերի բազմապատկումը» թեմայի դեպքում աշակերտները ծրարից պետք է հանեն այդ փոքրիկ թղթերը և առանձնացնեն այն թերթիկները,

որտեղ կատարված է ճիշտ բազմապատկում, իսկ որոնք առանց լուծում են, լուծեն դրանք: «Բազմանդամի վերլուծումը արտադրիչների» թեմայի դեպքում նույնպես պետք է հանեն այդ փոքրիկ թղթերը և առանձնացնեն ճիշտ գործողությունները սխալ գործողություններից, իսկ պատասխան չունեցող տարբերակների դեպքում գրեն լուծման ճիշտ տարբերակը:

Երկկոմպլեկտ դասարանների համար դասի պլան գրելիս առաջնորդվում են դպրոցի պահանջներով: Ուսուցիչները դասի պլան կարող են գրել ինչպես յուրաքանչյուր դասարանի համար առանձին, այնպես էլ երկու դասարանների համար միասին: Ներկայացնենք երկկոմպլեկտ դասարանում ուսումնասիրվող դասի անցկացման պլանը (միասին կազմված պլան):

Դասի պլան (45 րոպե)

Ուսուցիչ՝

Ամսաթիվ՝

Առարկա՝ մաթեմատիկա, հանրահաշիվ

Դասարաններ՝ 6-րդ դասարան

7-րդ դասարան

Դասի թեմա՝

6-րդ դասարան – Ամբողջ թվերի բազմապատկումը

7-րդ դասարան – Բազմանդամի վերլուծումը արտադրիչների

Դասի տիպը՝ անցած նյութի կրկնություն, վարժությունների լուծում:

Դասի նպատակը

6-րդ դասարան – 1. Աշակերտների ամբողջ թվերի բազմապատկում թեմայից տեսական գիտելիքները ամրապնդել:

2. Հնարավորություն տալ աշակերտներին լուծել առաջադրանքներ և ձևավորել ու զարգացնել համապատասխան հմտություններ:

3. Նպաստել հետագայում համապատասխան հմտություններ կիրառելուն:

7-րդ դասարան – 1. Թեմայի շուրջ աշակերտների ունեցած տեսական գիտելիքները ամրապնդել:

2. Զարգացնել խնդիրները մոդելավորելու և լուծելու կարողություններ:

Կրթական խնդիրներ

6-րդ դասարան

Իմանա՝

1. Բազմապատկման աղյուսակը:
2. Ամբողջ թիվի գաղափարը:
3. Իմանա ամբողջ թվերի հետ կատարվող գործողությունները:

Կարողանա՝

1. Բազմապատկել ամբողջ թվերը:
2. Համեմատել թվերն առանց բազմապատկման գործողության:

7-րդ դասարան

Իմանա՝

1. Բազմանդամի գաղափարը և դրա հետ կատարվող գործողությունները:
2. Բազմանդամը արտադրիչների վերլուծելու եղանակները:

Կարողանա՝

1. Բազմանդամը վերլուծել արտադրիչների՝ կիրառելով տարբեր մեթոդներ:
2. Արտահայտությունը ներկայացնել արտադրյալի տեսքով:

Անհրաժեշտ կահավորումը՝ դասագրքեր, գրատախտակ, կավիճ, A5 ձևաչափի թղթեր, գրիչներ:

Դասի ընթացքի նկարագրությունը

I. Տնային աշխատանքների ստուգում և անհասկանալի հարցերի պարզաբանում. Աշակերտները ներկայացնում են իրենց տնային հանձնարարությունները, այնուհետև անհասկանալի հարցերի դեպքում պարզաբանվում են դրանք:

II. 6-րդ դասարանի աշակերտները պատասխանում են դասին վերաբերվող հարցերի, հետո դասի հարցում է կատարվում և առաջադրանքների կատարում գրատախտակին:

Ո՞ր թվերն են կոչվում ամբողջ թվեր:

Ինչպե՞ս կարող եք ձևակերպել միևնույն նշանով ամբողջ թվերի բազմապատկման կանոնը:

7-րդ դասարանի աշակերտներին տրվում են A5 ձևաչափի թղթեր, որոնցում կան ինքնուրույն լուծման համար վարժություններ:

Առաջադրանք. Ընդհանուր արտադրիչը դուրս բերել $x^2y + x^2y^3$:

III. 6-րդ դասարանի աշակերտներին տրվում են A5 ձևաչափի թղթեր, որոնցում կան ինքնուրույն լուծման համար վարժություններ:

Առաջադրանք. Առանց բազմապատկում կատարելու համեմատել՝

$(-5) * (-7)$ և 0:

7-րդ դասարանի աշակերտները պատասխանում են դասը: Նախքան դասը պատասխանելը 7-րդ դասարանցիները պետք է պատասխանեն ստորև նշված հարցերին:

Ինչպիսի՞ եղանակներ կարելի է կիրառել բազմանդամը արտադրիչների վերլուծելիս:

IV. Դասի այս փուլում կարելի է հանձնարարել հայտորոշիչ թեստ, որը կազմված կլինի նմանատիպ հարցերից:

6-րդ դասարան

1. Կատարել ամբողջ թվերի բազմապատկում. $(+13) * (-5)$:
2. Համեմատել -25 և $(-5) * (+5)$ թվերը:
3. Առանց բազմապատկում կատարելու համեմատել
   $0 * (-100)$ և $(+3) * (+33)$ թվերը:

7-րդ դասարան

1. Ընդհանուր արտադրիչը դուրս բերել փակագծերից. $5xy^2 + xy^6z - x^2y^3z^4$:
2. $25x^2 - 64y^2$ բազմանդամը վերլուծել արտադրիչների:
3. $60b^2 - 84d^4 + 5ab^2 - 7ad^4$ արտահայտությունը ներկայացնել արտադրյալի տեսքով:

V. Գնահատում՝ ըստ հայտորոշիչ թեստի:

VI. Տնային աշխատանքի հանձնարարում.

6-րդ դասարան՝ 590.դ, ե, զ; 591.գ, դ;

7-րդ դասարան՝ 283.թ, ժ; 284բ, դ, զ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նահապետյան Բ., Աբրահամյան Ա., Մաթեմատիկա 6, Երևան, 2012, 224 էջ:
2. Նիկոլսկի Ս. Մ., Հանրահաշիվ 7, Երևան, 2016, 208 էջ:
3. Պետրոսյան Ա., Համակազմ դասարաններում սովորողների ուսումնական գործունեության ակտիվացման մանկավարժական պայմանները, Գիտական Արցախ, Ստեփանակերտ, 2018, 409-414 էջ:
4. Սաֆարյան Հ., Երկկոմպլեկտ դասարաններում խառը համագործակցության խմբային մեթոդով աշակերտների ներգրավածություն և մոտիվացիա, Արմավիր, 2022, 21 էջ:
5. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_7.html?m=1

Математика в двойных классах

Дашян Шушан
АрГУ, Математика, 4-й курс
Научный руководитель:
кандидат физико-математических наук, доцент Г. Петросян

Резюме

Ключевые слова: *двухсетный класс, математика, методика, план урока*

В связи с недостаточным количеством учащихся в отдельных школах Армении и Арцаха были созданы два комплектных класса. Формирование таких классов порождает сложные проблемы для педагогов: они обязаны обеспечивать эффективное и рациональное использование времени на занятиях, при этом учащиеся в данных классах сталкиваются с трудностями в мотивации и вовлечении в учебный процесс. В настоящей работе исследуются наиболее эффективные методы преподавания математики в таких классах, а также представлен пример плана урока.

Mathematics in Double Classes

Dashyan Shushan
ArSU, Mathematics, 4th year
Academic Supervisor: G. Petrosyan,
Candidate of Physical and Mathematical Sciences,
Associate Professor

Summary

Key words: *two-set class, mathematics, method, lesson plan*

Due to the insufficient number of students in some schools of Armenia and Artsakh, two-set classes are established. The formation of these two-set classes presents significant challenges for teachers, who must ensure the effective and efficient use of class time. Additionally, students in these classes have difficulties to motivate and engage in the learning process. This article explores the most effective methods for teaching mathematics in such settings, along with an example of a lesson plan.

ԱՀ-ում գործող դեղատների գործունեությունը շրջափակման պայմաններում

Ղազարյան Ռիմա
ԱրՊՀ, Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 3-րդ կուրս,
գիտական ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Վ. Առստամյան

Հանգուցային բառեր. *դեղորայք, ավտոմատացում, կայքէջ, HTML, նախագիծ, դեղատուն*

Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի փակման պատճառով Արցախի բնակչության կողմից դեղատներից դեղորայք գնելու խնդիր առաջացավ, որոնց թվին են պատկանում կենսական նշանակության դեղամիջոցները և մանկական կերերը: Խնդրի հիմնական պատճառներից էր այն փաստը, որ բնակչությունը տեղյակ չէր դեղատներում առկա դեղերի մասին:

Աշխատանքի նպատակն է ստեղծել կայքէջ, որը հնարավորություն կտա որոնել դեղերը Արցախում գործող բոլոր դեղատներում, համեմատել դեղորայքի գները, կատարել դեղի ամրագրում:

Տվյալ նախագիծը հնարավորություն կտա ավտոմատացնել դեղատների գործունեությունը, դեղերի գրանցումը, վաճառքն ու պատվիրումը դարձնել կառավարելի, ինչպես նաև իրականացնել վաճառքի ծավալների կարճաժամկետ պլանավորում:

Հասարակության, գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ դեղամիջոցները դարձել են առօրյայի կարևոր մասնիկ, որոնք կարող ենք գնել դեղատնից, ինչը նախկինում հեշտ չէր: Բնակչությանը բուժօգնություն ցուցաբերելու նպատակով երկրի բազմաթիվ բնակավայրերում սկսեցին բացվել դեղատներ, դեղատների կրպակներ, ստեղծվեցին դեղատների ցանցեր:

Դեղատների ավտոմատացված համակարգերի առավելությունները նշանակալի են, քանի որ դեղատունը կարող է ավտոմատացնել դեղերի տրամադրման գործընթացը՝ հնարավորինս մրցունակ մնալու համար: Ստորև նշենք դեղատների ավտոմատացման մի քանի առավելություններ.

- Արտադրողականության բարձրացում: Դեղատների ավտոմատացումը մեծացնում է արտադրողականությունը և խնայում ժամանակը:
- Հիվանդի անվտանգության բարելավում: Վեբ հավելվածի շնորհիվ կնվազի հետընդունումը հիվանդանոցներ՝ հիվանդներին համապատասխան դեղամիջոցներ տրամադրելու շնորհիվ:
- Աշխատանքի ծախսերի կրճատում: Դեղատների ավտոմատացման լուծումներն ու սարքավորումները կարող են օգնել կրճատել անձնակազմի քանակը:
- Գործընթացի օպտիմալացում: Դեղատների վեբ հավելվածի միջոցով դեղագործը ապահովում է պահեստի արդյունավետ կառավարում՝ օպտիմալաց-

նելով գույքագրումը կայուն և անվտանգ աշխատանքային ընթացակարգերով:

▪ Հաճախորդների բավարարվածություն: Դեղատների վեբ հավելվածը թույլ է տալիս ընդլայնել ծառայություններն ու առաջարկները, ինչպես նաև ապահովել բարձր մակարդակի անվտանգություն:

Կայքէջի ստեղծման համար օգտագործվել է հիպերտեքստի նշագրման լեզու (HTML), կասկադային ոճավորման լեզու (CSS) [1, 12], կայքէջի ֆունկցիոնալության համար օգտագործվել է JS [2, 5-6], դեղերի և դեղատների մասին տեղեկությունները պահելու համար SQL Server [3, 4]:

Համակարգի կառուցվածքը ներկայացված է նկար 1-ում:



Նկար 1 . Դեղատնային ցանցում դեղերի որոնման տեղեկատվական համակարգի կառուցվածքը

Աշխատանքի ընթացքում լուծվել են հետևյալ խնդիրները.

- կատարվել է առարկայական ոլորտի վերլուծություն,
- տվյալների պահպանում առանց կորստի,
- հարցումների արագ արձագանքում,
- անձնական տվյալների արագ մուտքագրում,
- ծրագրի անխափան աշխատանքի ապահովում:



Նկար 2. Հիմնական էջ

Կայքի հիմնական էջում (նկար 2) այցելուն ունի հետևյալ հնարավորությունները.

- անձնական հաշվի ստեղծում կամ հաշվի մուտք գործում,
- ապրանքների որոնում անունով կամ դեղերի ընտրություն ըստ նկարագրության,
- ապրանքների և դեղատների ցանկի ցուցադրում, որոնք համապատասխանում են որոնման համար մուտքագրված տվյալներին,
- դեղամիջոցի մասին մանրամասն տեղեկատվության ուսումնասիրում,
- դեղատների որոնում ըստ շրջանի, բնակեցման վայրի ու փողոցի և դրանց դիտումը քարտեզի վրա,
- հետադարձ կապի հնարավորություն:

Դեղերի որոնման արդյունքում կցուցադրվեն բոլոր այն դեղատները, որտեղ առկա են, դրանց համապատասխան գները, թարմացման ամսաթիվը, ինչպես նաև դեղատան հասցեն:

Դեղորայքի որոնման ժամանակ կա հնարավորություն՝ ընտրելու նաև դեղորայքի տեսակը և արտադրող ընկերությունը: Որոնումից հետո դեղորայքը կարող է ավելացվել զամբյուղ՝ համապատասխան հրամանի ընտրության արդյունքում:



Նկար 3. Որոնման էջ

Այսպիսով, տվյալ նախագիծը հնարավորություն է տալիս արագ և հեշտ կատարել դեղորայքի ընտրություն՝ առանց հերթերի և շատ ժամանակ ծախսելու: Հետագայում պլանավորվում է շարունակել և ընդլայնել ծրագիրը, ինչպես նաև ստեղծել դրա բջջային հավելվածը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Макфарланд Д. Новая большая книга CSS, Санкт-Петербург, 2019, 720 с.
2. Флэнаган Д. JavaScript, подробное руководство, 6-е издание, 2017, 1080 с.
3. Бен-Ган И. Microsoft SQL Server 2008, Санкт-Петербург, 2009, 430 с.

Деятельность аптек, работающих в НКР в условиях блокады

Казарян Рима
АрГУ, Информационные технологии, 3-й курс
Научный руководитель:
кандидат математических наук, доцент В. Арстамян

Резюме

***Ключевые слова**: медицина, автоматизация, сайт, HTML, проект, аптека*

В связи с закрытием Азербайджаном единственной дороги, соединяющей Арцах с Арменией, возникла проблема обеспечения населения Арцаха необходимыми лекарственными средствами, включая жизненно важные препараты и детское питание. Одной из основных причин данной проблемы стало отсутствие надлежащей осведомленности населения о наличии лекарств в аптеках. Целью данной работы является разработка веб-сайта, который позволит пользователям осуществлять поиск лекарств в аптеках, функционирующих на территории Арцаха, сравнивать цены на препараты и осуществлять их предварительное резервирование.

Activities of Pharmacies Operating in the NKR under the Blockade

Ghazaryan Rima
ASU, Information Technology, 3rd year,
Academic Supervisor: V. Arstamyan,
Candidate of Mathematical Sciences, Associate Professor

Summary

***Key words:** medicine, automation, website, HTML, project, pharmacy*

Due to the closure of the sole road connecting Artsakh to Armenia by Azerbaijan, a significant issue has arisen regarding the procurement of medicines, including essential medications and infant food, for the population of Artsakh. One of the primary causes of this problem is the lack of awareness among the population regarding the availability of medications in pharmacies. The objective of this article is to develop a website that will allow users to search for medications in all pharmacies operating within Artsakh, compare drug prices, and make reservations for medications.

Հաջորդականություններ թեմայի ուսուցման մեթոդիկան 11-րդ դասարանում և նրանում Mathcad ծրագրի կիրառման հնարավորությունները

Մահակյան Ռուզաննա
ԱրՊՀ, Մաթեմատիկա, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.-մ. գ. թ., դոցենտ Գ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *հաջորդականություն, զուգամետ հաջորդականություն, հաջորդականության սահման, անվերջ փոքրեր, Mathcad*

Ավագ դպրոցի հանրահաշվի դասընթացի գլխավոր թեմաներից են ֆունկցիայի ածանցյալն ու դրա կիրառությունները: Դրա ուսումնասիրությունը կարծես լիարժեք չէ առանց ֆունկցիայի սահմանի մակերեսային գաղափարների իմացության:

Ինչպես ֆունկցիայի, այնպես էլ հաջորդականության սահմանը մաթեմատիկայի հիմնարար հասկացություններից են: Մաթեմատիկական և կիրառական արժեքներից բացի դրանք կրում են նաև մշակութաբանական արժեք, ուստի նրանց հետ ծանոթությունը անհրաժեշտ է ավագ դպրոցի տարբեր ոլորտների շրջանակներում մաթեմատիկա ուսումնասիրող աշակերտների համար: Դպրոցում այս նյութի ուսումնասիրությունը կարելի է համարել նաև նախապատրաստական փուլ «Բարձրագույն մաթեմատիկայի» դասընթացում այս հասկացությունները յուրացնելու համար: Սա հատկապես կարևոր է նրանց համար, ովքեր կուսումնասիրեն «Բարձրագույն մաթեմատիկայի» համառոտ դասընթացը, որում այդ հասկացությունները կրում են ֆորմալ բնույթ, հիմնական ուշադրությունը կենտրոնացած է սահմաններ հաշվելու վերաբերյալ խնդիրների լուծման վրա [3, 379]:

Կարելի է առաջարկել հատուկ ինդուկտիվ մոտեցում հաջորդականության և դրա սահմանի հասկացությունների ներդրման համար:

Հաջորդականություններ թեման ուսումնասիրելիս նախ պետք է տալ թվային հաջորդականության գաղափարը.

Այն թվային ֆունկցիաները, որոնց որոշման տիրույթը բնական թվերի բազմությունն է (N)*, անվանում են անվերջ թվային հաջորդականություն:* $f: N \to R$ *ֆունկցիան կանվանենք թվային հաջորդականություն, իսկ* $a_n = f(n)$ *արժեքը՝ հաջորդականության* n*-րդ կամ ընդհանուր անդամ: Այսպիսով, հաջորդականության ամեն մի* n *բնական թվի համապատասխանեցվում է որևէ* a_n *թիվ* [1, 81]:

Այնուհետև տրվում է հաստատուն և մոնոտոն հաջորդականությունների գաղափարները.

$a_n = 5$ հաջորդականության բոլոր անդամներն իրար հավասար են (հավասար են 5-ի): Այդպիսի հաջորդականություններն անվանում են հաստատուն հաջորդականություններ:

Մասնավորապես, a_n հաջորդականությունն աճող է, եթե կամայական m և k բնական թվերի համար $m < k$ պայմանից հետևում է, որ $a_m < a_k$: Նշենք միայն, որ հաջորդականության աճող լինելն ապացուցելու համար բավական է ցույց տալ, որ նրա յուրաքանչյուր անդամ փոքր է իր հաջորդ անդամից, այսինքն՝

a_n հաջորդականությունն աճող է, եթե

$$a_n < a_{n+1}, \ n = 1, 2, 3\ldots :$$

Օրինակ, 5-ի վրա բաժանվող թվերի

$$5, 10, 15, 20\ldots$$

հաջորդականությունն աճող է. նրա յուրաքանչյուր անդամ փոքր է իր հաջորդից (և հետևաբար հաջորդներից):

a_n հաջորդականությունը նվազող է, եթե

$$a_n > a_{n+1}, \ n = 1, 2, 3\ldots :$$

Հաջորդականությունների գաղափարի ներմուծումից և հաջորդականության տրման եղանակները ներկայացնելուց հետո աշակերտներին առաջարկվում են հաջորդականությունների հետևյալ օրինակները.

1. $a_n = 1; 1; \ldots;$
2. $b_n = -2; 2; -2; 2; \ldots;$
3. $c_n = 1; 3; 5; 7; \ldots;$
4. $d_n = \frac{1}{n}$;
5. $e_n = \frac{(-1)^n}{n^2}$;
6. $f_n = \frac{3+n}{n}$:

Առաջին հաջորդականության տարրերը կոորդինատային առանցքի վրա պատկերելով՝ ուսուցիչը նշում է, որ այդ հաջորդականության բոլոր տարրերը «նստում են» 1 կետում, և այս հաջորդականության բոլոր տարրերը կգտնվեն տվյալ կետի շրջակայքում:

Երկրորդ հաջորդականության բոլոր զույգ համարներով տարրերը գտնվում են 2 կետում, իսկ կենտ համարներով տարրերը՝ -2 կետում: Այս դեպքում կլինեն հաջորդականության անթիվ բազմությամբ տարրեր, որոնք դուրս են մնում 2 կետի շրջակայքից, նմանապես -2-ի դեպքում:

Երրորդ օրինակում՝ $c_n = 1;3;5;7;\ldots$, յուրաքանչյուր կենտ թվի համար կգտնվի մի շրջակայք, որը կպարունակի հաջորդականության անվերջ շատ տարրեր:

Այստեղ ամենակարևոր օրինակը $d_n = \frac{1}{n}$ հաջորդականությունն է: Հասկանալի է, որ տարրի համարի՝ n-ի մեծացմանը զուգընթաց այս տարրի և զրոյի միջև հեռավորությունը նվազում է: Որքան հաջորդականության անդամը մոտ է զրոյին, այնքան ավելի խիտ են դասավորված հաջորդականության տարրերը կոորդինատային առանցքի վրա, և նրանց միջև հեռավորությունը աստիճանաբար նվազում է: Բացի այդ, հասկանալի է, որ ընտրելով զրոյի ցանկացած շրջակայք, հնարավոր է որոշել այն համարը, որից սկսած՝ հաջորդականության բոլոր անդամները ընկնում են ընտրված շրջակայքը: Այս օրինակի միջոցով կարելի է տալ անվերջ փոքրի սահմանումը.

Սահմանում 1: *a_n հաջորդականությունը կոչվում է անվերջ փոքր, եթե կամայական ε դրական թվի համար գոյություն ունի այնպիսի N բնական թիվ, որ $n > N$ պայմանից հետևում է, որ*

$|a_n| < \varepsilon$ [1, 83]:

Այլ կերպ կարելի է ասել, որ a_n հաջորդականությունն անվերջ փոքր է, եթե նրա անդամները, ինչ-որ համարից սկսած, բացարձակ արժեքով փոքր են նախապես տրված կամայական դրական թվից: Փաստորեն, այդ «ինչ-որ համարն» այն բնական N -ն է, որից ավելի մեծ ինդեքսներով անդամները բավարարում են (1) անհավասարությանը:

Եթե վերցնենք 0-ի 0,01 շառավիղով շրջակայք՝ $\varepsilon = 0{,}01$, ապա դիտարկվող հաջորդականության բոլոր տարրերը՝ սկսած 101-րդից, կբավարարեն (1) պայմանին: Նման կերպ $\varepsilon = 0{,}000001$ դեպքում (1) պայմանին կբավարարեն հաջորդականության 1000001-րդից սկսած անդամները:

0 թվի ցանկացած շրջակայքում կլինեն այս հաջորդականության անսահման թվով անդամներ և.

Սահմանում 2: *a_n հաջորդականությունն անվերջ փոքր է, եթե կամայական ε դրական թվի համար $(-\varepsilon;\varepsilon)$ միջակայքից դուրս կարող են լինել միայն վերջավոր թվով a_n -եր:*

Նույն պատկերն է հինգերորդ օրինակում՝ $e_n = \frac{(-1)^n}{n^2}$, որտեղ տարրերը երկու կողմից կմոտենան զրոյին՝ աջ կողմում զույգ թվերով բոլոր տարրերը, ձախում՝ կենտ թվերով: Ցույց տալով այս օրինաչափությունները՝ ուսուցիչը կարող է

ձևակերպել հաջորդականության սահմանի սահմանումը և ներկայացնել գրելաձևը (նշանակումը):

Սահմանում 1: *a թիվը կոչվում է a_n հաջորդականության սահման, եթե $a_n - a$ հաջորդականությունն անվերջ փոքր է* [1, 106]:

Եթե հաջորդականությունն ունի վերջավոր սահման, կոչվում է զուգամետ, հակառակ դեպքում կոչվում է տարամետ:

Եթե a թիվն a_n հաջորդականության սահմանն է, ապա գրում են

$$a = \lim_{n\to\infty} a_n \text{ կամ } a_n \to a$$

և ասում են՝ a_n -ը ձգտում է a -ի, կամ a_n -ը զուգամիտում է a -ի:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ դիտարկված օրինակների համար կարող ենք գրել.

$$\lim_{n\to\infty} a_n = 1; \quad \lim_{n\to\infty} c_n = 0; \ \lim_{n\to\infty} e_n = 0:$$

Վերջին օրինակի օգնությամբ՝ $f_n = \dfrac{3+n}{n}$, նախապես նրա աջ մասը ներկայացնելով $\dfrac{3+n}{n} = \dfrac{3}{n} + 1$ տեսքով, ուսուցիչը նրկայացնում է հաստատունի արտադրիչը սահմանի նշանի տակից դուրս բերելու թեորեմը, ինչպես նաև ձևակերպում և գրում է գումարի, տարբերության և արտադրյալի սահմանի վերաբերյալ թեորեմները.

Թեորեմ 1: *Եթե a_n և b_n հաջորդականությունները զուգամետ են, զուգամետ են նաև $a_n + b_n$, $a_n - b_n$, $a_n \cdot b_n$ հաջորդականությունները, ընդ որում,*

1. $\lim\limits_{n\to\infty}(a_n + b_n) = \lim\limits_{n\to\infty} a_n + \lim\limits_{n\to\infty} b_n$,
2. $\lim\limits_{n\to\infty}(a_n - b_n) = \lim\limits_{n\to\infty} a_n - \lim\limits_{n\to\infty} b_n$,
3. $\lim\limits_{n\to\infty}(a_n \cdot b_n) = \lim\limits_{n\to\infty} a_n \times \lim\limits_{n\to\infty} b_n$ [1,107]:

Կարևոր է ընդգծել նաև քանորդի սահմանի վերաբերյալ թեորեմը՝ շեշտելով այն փաստը, որ քանորդի հայտարարի սահմանը պետք է տարբեր լինի 0-ից.

Թեորեմ 2: *Դիցուք, a_n և b_n հաջորդականությունները զուգամետ են, ընդ որում, $b_n \neq 0$, $n \in N$, և $\lim\limits_{n\to\infty} b_n \neq 0$: Այդ դեպքում $\dfrac{a_n}{b_n}$ հաջորդականությունը նույնպես զուգամետ է և*

$$\lim_{n\to\infty}\frac{a_n}{b_n}=\frac{\lim\limits_{n\to\infty}a_n}{\lim\limits_{n\to\infty}b_n}\ [1,\ 108]:$$

Բավականին պատրաստված դասարաններում ուսուցիչը կարող է ձևակերպել նաև սահմանի սահմանումը $\varepsilon-n$ լեզվով, աշակերտներին ներկայացնել սահմանների վերաբերյալ թեորեմների ապացուցման ընթացքում ցուցաբերվող հիմնական մոտեցումը՝ ըստ սահմանի սահմանման ստացված անհավասարությունների գնահատումը, տալ սահմանների հաշվարկման օրինակներ, մտցնել $e=\lim\limits_{n\to\infty}\left(1+\frac{1}{n}\right)^n$ թիվը:

e -ն իռացիոնալ թիվ է, որի առաջին նիշերն են՝

$e=2{,}718281828\mathbf{9}04590\ldots$:

Հետաքրքիր է նշել, որ, ներմուծվելով «ընդամենը» որպես մի հաջորդականության սահման, e թիվը կարևոր տեղ է գրավում մաթեմատիկական անալիզում, այնպես, ինչպես π թիվը՝ եռակյունաչափության մեջ: Մասնավորապես, կարևոր դեր են խաղում e հիմքով աստիճանային և լոգարիթմական ֆունկցիաները:

e հիմքով լոգարիթմն անվանում են բնական լոգարիթմ և նշանակում են $\ln a$, այսինքն՝ $\ln a=\log_e a$ [1, 110]:

Բերենք հաջորդականության սահմանի հաշվման օրինակներ.

Օրինակ 1: Գտնել հետևյալ հաջորդականության սահմանը.

$$a_n=\frac{n^3-2n+1}{2n^3-n^2+5}:$$

Աշակերտնրին պետք է հուշել, որ n բնական արգումենտով ռացիոնալ արտահայտության սահմանի հաշվումը, ինչպես նաև $f_n=\frac{3+n}{n}$-ի դեպքում, անհրաժշտ է բերել անվերջ փոքրի սահմանի գաղափարին, ինչի համար օրինակում կոտորակի համարիչն ու հայտարարը բաժանում են կոտորակում n-ի ամենամեծ աստիճանին: Տվյալ դեպքում դա n^3-ն է: Ստանում ենք.

$$a_n=\frac{1-\frac{2}{n^2}+\frac{1}{n^3}}{2-\frac{1}{n}+\frac{5}{n^3}}:$$

Քանի որ $-\frac{2}{n^2}+\frac{1}{n^3}$ և $-\frac{1}{n}+\frac{5}{n^3}$ հաջորդականություններն անվերջ փոքր են, ուստի

$$\lim_{n\to\infty}\left(1-\frac{2}{n^2}+\frac{1}{n^3}\right)=1,\ \lim_{n\to\infty}\left(2-\frac{1}{n}+\frac{5}{n^3}\right)=2:$$

Կիրառելով զուգամետ հաջորդականությունների քանորդի վերաբերյալ թեորեմը՝ ստանում ենք՝

$$\lim_{n\to\infty}\frac{n^3-2n+1}{2n^3-n^2+5}=\frac{1}{2}:$$

Պատասխան՝ $\frac{1}{2}$:

Օրինակ 2: Գտնել հետևյալ հաջորդականության սահմանը.

$$a_n=\frac{3}{\sqrt{n+3}-\sqrt{n}}-\frac{1}{\sqrt{n+2}-\sqrt{n+1}}:$$

Վերհիշելով լուծորդի գաղափարը և ձևափոխելով a_n -ը՝ ստանում ենք՝

$$a_n=\frac{3\left(\sqrt{n+3}+\sqrt{n}\right)}{n+3-n}-\frac{\sqrt{n+2}+\sqrt{n+1}}{n+2-(n+1)}=$$

$$=\left(\sqrt{n+3}-\sqrt{n+2}\right)-\left(\sqrt{n+1}-\sqrt{n}\right)=$$

$$=\frac{1}{\sqrt{n+3}+\sqrt{n+2}}-\frac{1}{\sqrt{n+1}+\sqrt{n}}:$$

Հետևաբար՝ $\lim_{n\to\infty}a_n=0$:

Պատասխան՝ 0:

Տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս արագացնել և բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը, այն դարձնել ավելի տեսողական, հարմար քննարկվող նյութի յուրացման համար: Մի շարք մաթեմատիկական ծրագրերի, օնլայն հաշվիչների և այլ մեխանիզմների օգտագործումը բավականին արագացնում և արդյունավետ են դարձնում թեմայի ընկալումն ու յուրացումը: Այսպիսի մաթեմատիկական ծրագրերից է Mathcad-ը [2]: Այն ունի անհրաժեշտ ռեսուրսներ ու միջոցներ տարբեր մաթեմատիկական հասկացություններ պատկերելու, ինչպես նաև բազմաթիվ ու բազմաբնույթ մաթեմատիկական մեծությունների ու արտահայտությունների հետ աշխատելու հնարավորություն: Նշենք, որ Mathcad-ը տալիս է ներմուծված խնդրի միայն ճշգրիտ պատասխանները, իսկ լուծման գործընթացը՝ ոչ [4]: Ծրագիրը աշակերտների մոտ կձևավորի մաթեմատիկական մոդելավորման ունակություններ և կզարգացնի դրանք [5]: Mathcad-ի և նմանօրինակ ծրագրերի միջոցով դասընթացն առավել տպավորիչ, հետաքրքիր, տեսանելի, ոչ ստանդարտ և հիշվող է դառնում, իսկ թեմայի ամրապնդումը՝ դյուրին: Ծրագրի ընձեռած հնարավորությունները բազմազան ու բազմաոլորտ են, առավել նպատակահարմար թեմայի ամրապնդման և ամփոփման համար: Ներկայացնենք թեմային համապատասխանող որոշ օրինակների լուծումներ Mathcad միջավայրում:

1. Գտնել a_n հաջորդականության առաջին հինգ անդամները [1, 84]:

Լուծում: Հաջորդականություններ թեմայի ուսուցման ընթացքում Mathcad փաթեթի կիրառությունը հարմար է սկսել նմանատիպ առաջադրանքների քննարկումով: Այստեղ ներկայացվում է Matrix գործողությունների վահանակը և դրա Range Variable և Subscript հրամանները, որոնց միջոցով արտածվում է խնդրի պատասխանը.

$$n := 1, 2 .. 5$$

$$a_n := n \cdot \sin\left(\frac{\pi n}{2}\right)$$

$$a_n =$$

1
0
-3
0
5

2. Գտնել a_n հաջորդականության սահմանը [1, 111]:

Լուծում: Այս օրինակի միջոցով կարելի է աշակերտներին ծանոթացնել Calculus գործողությունների վահանակի Two-sided Limit հրամանին:

ա) $a_n = \frac{1+(-1)^n}{n}$ բ) $a_n = \frac{2 \cdot n + \sin(n)}{n}$ գ) $a_n = -5^{-\frac{n}{2}} + n^{-1}$

$$\lim_{n \to \infty} \frac{1 + (-1)^n}{n} \to 0 \quad \lim_{n \to \infty} \frac{2 \cdot n + \sin(n)}{n} \to 2$$

$$\lim_{n \to \infty} 5^{\frac{-n}{2}} + n^{-1} \to 0$$

3. Հաշվել հետևյալ սահմանները [1, 112].

Լուծում:

$$\lim_{n \to \infty} \left(3 + \frac{1}{n}\right) \cdot \left(1 + \frac{1}{n}\right)^n \to 3 \cdot \exp(1)$$

$$\lim_{n \to \infty} \left(1 + \frac{1}{n}\right)^{-2 \cdot n + 1} \to \exp(-2) \quad \lim_{n \to \infty} \frac{\sqrt{n+2} - \sqrt{n+1}}{\sqrt{n+1} - \sqrt{n}} \to 1$$

4. Հաշվել հետևյալ հաջորդականությունների գումարը նշված արժեքների համար.

Լուծում: Հաջորդականության գումարը գտնելու համար օգտագործում են Calculus գործողությունների վահանակի Summation հրամանը:

$$\sum_{n=1}^{10} \left(1 + \frac{1}{n}\right)^{2 \cdot n} = 59.65 \quad \sum_{n=1}^{15} \frac{\sin(n)}{n} = 1.135$$

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Գ. Գ., Սահակյան Ա. Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր 11. բնագիտամաթեմատիկական հոսքի համար, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010, 200 էջ:
2. Սահակյան Գ. Հ., Mathcad 2000, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004, 148 էջ:
3. Стефанова Н. Л., Подходова Н. С. Методика и технология обучения математике, курс лекций: пособие для вузов, под научн. ред., 2-е изд, испр., Москва: Дрофа, 2008, 415 с.
4. https://cyberleninka.ru/article/n/matematicheskoe-modelirovanie-kak-sredstvo-obucheniya/viewer/
5. https://7universum.com/ru/psy/archive/item/8410

Методика обучения последовательностей в 11-ом классе и возможности применения в нем программы Mathcad

Саакян Рузанна
АрГУ, Математика, 4-й курс
Научный руководитель:
кандидат физико-математических наук, доцент Г. Петросян

Резюме

Ключевые слова: *последовательность, равномерная последовательность, предел последовательности, бесконечно малые, Mathcad*

В статье представлена методика обучения последовательностям в 11-ом классе. Приведены все необходимые определения, леммы, теоремы изучаемых подтем, а также рассмотрены решения соответствующих примеров. Рекомендуется использовать программу Mathcad при закреплении темы и знакомить учащихся с возможностями, которые предлагает программа. Использование математического пакета также сэкономит время, затрачиваемое на решение различных математических задач, и тем самым облегчит процесс анализа полученных результатов, что в конечном итоге важнее, чем процесс их вычисления.

Method of Teaching Sequences in the 11th Grade and the Potential Applications of the Mathcad Program

Sahakyan Ruzanna
ArSU, Mathematics, 4th year
Academic Supervisor: G. Petrosyan,
Candidate of Physical and Mathematical Sciences, Associate Professor

Summary

Key words: *sequence, even sequence, limit of sequence, infinitesimals, Mathcad*

The article presents a methodology for teaching sequences in the 11th grade. All relevant definitions, lemmas, and theorems pertaining to the subtopics under investigation are presented, alongside the corresponding example solutions. It is recommended to incorporate the Mathcad program for reinforcing the topic and to familiarize students with its capabilities. The utilization of this mathematical software package not only reduces the time spent on solving various mathematical problems but also facilitates the analysis of results, which is ultimately of greater significance than the calculation process itself.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ

БИОЛОГИЯ И ХИМИЯ

BIOLOGY AND CHEMISTRY

Արցախի դենդրոֆլորան, նրա պահպանության հիմնախնդիրները

Բաբայան Մարտա
ԱրՊՀ, Կենսաբանություն/Քիմիա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ Կ. Բալայան

Հանգուցային բառեր. *Արցախ, դենդրոֆլորա, կաղնի, հաճարենի, բոխի, թխկի, սզնի, մասրենի*

Աշխատանքում ներկայացվում են Արցախի դենդրոֆլորայի կարգաբանական բազմազանությունը, նշանակությունը և նրա պահպանության հիմնախնդիրները: Անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ Կաղնի վրացական (Quercus iberica), Կաղնի խոշորառէջ (Q. macranthera), Բոխի կովկասյան (Carpinus caucasica), Հաճարենի արևելյան (Fagus orientalis): Ուղեկցող տեսակներից են Բոխի արևելյան (Carpinus orientalis), Իլենի եվրոպական (Euonymus europaea), Սզնի արևելյան (Crataegus orientalis) և այլն:

Արցախի բուսական ծածկույթում առանձնապես մեծ է անտառների դերը: Նրանք աչքի են ընկնում իրենց բարդ կառուցվածքով և կենսաձևերի բազմազանությամբ: Արցախում անտառները հիմնականում լայնատերև են, որոնց կազմում գերիշխող ցեղերն են՝ կաղնին (*Quercus* L.), բոխին (*Carpinus* L.) և հաճարենին (*Fagus* L.): Նշված ցեղերն առաջացնում են ինչպես միատարր համակեցություններ՝ հաճարկուտներ, կաղնուտներ ու բոխուտներ, այնպես էլ խառն անտառների տարբեր ձևեր: Կաղնուտներում հանդիպում են Կաղնի վրացական (*Quercus iberica* Stev.), Կ. խոշորառէջ (*Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen.) տեսակները: Վրացական կաղնին հանդիպում է հիմնականում 550-700-ից մինչև 1400-1500 մ բարձրություններում: Շնորհիվ բարձր ցրտադիմացկունության՝ խոշորառէջ կաղնին գրեթե բոլոր անտառային շրջաններում տարածվում է մինչև 2400-2600 մ բարձրությունները:

Արցախում բնականորեն աճում է բոխու 3 տեսակ՝ Բ. կովկասյան (*Carpinus betulus* L.), Բ. արևելյան (*C. orientalis* Mill.) և Բ. Շուշիի (*C. schuschaensis* H. Winkler), որոնք իրենց էկոլոգիայով զգալիորեն տարբերվում են: Արևելյան բոխին աճում է 500-1600 մ բարձրությունների վրա, հարավային դիրքադրության լեռնալանջերին և վրացական կաղնու հետ կազմում է կաղնուտա-բոխուտային անտառներ: Բ. արևելյանը և կովկասյանը հանդիպում են բոլոր անտառային շրջաններում, իսկ *C. schuschaensis* H. Winkler տեսակն ունի տարածման ոչ մեծ արեալ, որն ընդգրկում է Մարտակերտի շրջանի հյուսիսային տարածքները՝ 1200-1800 մ բարձրությունների վրա: Արցախի տարածքում անտառկազմող հիմնական տեսակներից է նաև արևելյան հաճարենին (*Fagus orientalis* Lipsky), որը հանդիպում է գերազանցապես հյուսիսային թեքության լեռնալանջերին: Հաճարենուն ուղեկցում են *Tilia caucasica* Rupr., *Sorbus aucuparia* L., *Euonymus latifolia* L. Mill., *Viburnum opulus* L. և այլն [2]:

Աշխատանքը արդիական է, քանի որ Արցախի դենդրոֆլորայի ուսումնասի-

ությունները արդի պայմաններում հնարավորություն կտան ներկայացնելու նրա կարգաբանական բազմազանությունը, տարածվածությունն ու պահպանության հիմնախնդիրները:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ու ներկայացնել Արցախի դենդրոֆլորայի կարգաբանական բազմազանությունը, տարածվածությունը, նշանակությունը և պահպանության առկա հիմնախնդիրները:

Արցախի դենդրոֆլորայի վերաբերյալ ուսումնասիրություններն ու գիտական հետազոտությունները կատարվել են երթուղային, հերբարիումային մեթոդներով: Հերբարիումների տեսակային կազմը որոշվել է որոշիչի օգնությամբ [6]: Աշխատանքի իրականացման համար հիմք են հանդիսացել նաև գրական աղբյուրները [1, 3, 4, 5]:

Արցախի ֆլորայում ծառերի ու թփերի բաշխվածությունն ըստ վարչական շրջանների կրում է անհավասարաչափ բնույթ: Դենդրոբազմազանությամբ աչքի են ընկնում Մարտակերտի, Ասկերանի շրջանները, ինչը պայմանավորված է նշված վարչական շրջանների անտառապատվածությամբ: Ծառաթփային տեսակները սակավաթիվ են Մարտունու շրջանում, որը զբաղեցնում է Արցախի տարածքի հարավարևելյան մասը: Մյուս վարչական շրջանների համեմատությամբ Մարտունու շրջանի տարածքի զգալի մասը հարթավայրային է և ծովի մակարդակից ունի մինչև 400 մ բարձրություն: Մարտունու շրջանի տարածքում անտառներով հարուստ են Ննգի, Թաղավարդ, Սխտորաշեն գյուղերի մոտակայքում ձգվող լեռնաճյուղերի զագաթները, որոնք ունեն ծովի մակարդակից 1200-1500 մ բարձրություն:

Արցախի Մարտունու շրջանի Ննգի գյուղի, Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի մերձակա անտառներում պահպանվել են Շագանակենի սովորական (*Castanea sativa* Mill.) ռելիկտային տեսակի որոշակի պոպուլյացիաներ: Շագանակենու պոպուլյացիան հանդիպում է կաղնեբոխային անտառներում, հյուսիսային լանջերին՝ 1100-1800 մ բարձրություններում:

Արցախի ռելիկտային դենդրոֆլորան ներկայացված է հետևյալ տեսակներով՝ Սոսի արևելյան (*Platanus orientalis* L.), Ձելկվա բոխատերև (*Zelkowa carpinifolia* (Pall.) C. Koch), Խաղող անտառային (*Vitis silvestris* C.C.Gmel.), Ընկուզենի սովորական (*Juglans regia* L.), Կենի հատապտղային (*Taxus baccata* L.), Արջատխլենի (*Corylus colurna* L.), Բաղեղ սովորական (*Hedera helix* L.), Հաճարենի արևելյան (*Fagus orientalis* Lipsky), Պիստակենի բթատերև, խնկենի (*Pistacia mutica* Fisch. et C. A. Mey) և այլն:

Սոսի արևելյանը (*Platanus orientalis* L.) աչքի է ընկնում բարձր գեղազարդությամբ և երկարակեցությամբ: «Տնջրե» կամ հանրահայտ սոսենու 2000–ամյա ծառը համարվում է Արցախի, մասնավորապես Մարտունու շրջանի, բնության հուշարձաններից մեկը, որը գտնվում է Սխտորաշեն գյուղի մոտ: Սոսի արևելյանը հանդիպում է Արցախի տարածքում ինչպես բնական պայմաններում՝ անտառներում, այնպես էլ լայնորեն կիրառվում է կանաչապատման նպատակներով:

Ձելկվա բոխատերևը (*Zelkowa carpinifolia* (Pall.) C. Koch) տարածված է Ասկե-

բանի, Մարտունու վարչական շրջանների անտառներում: Հանդիպում է ենթանտառում, մինչև 1500 մ բարձրությունները:

Հատապտղային կենին (*Taxus baccata* L.) բնականորեն տարածված է Արցախում, որպես ենթանտառ հանդիպում է հաճարենու, ինչպես նաև կաղնեբոխային անտառներում:

Արցախի տարածքում հանդիպում են գիհու հետևյալ 5 տեսակները՝ Գիհի գարշահոտ /սրաթեփուկ/, ցրտկենի (*Juniperus foetidissima* Willd.), Գ. երկարատերև (*J. oblonga* Bieb.), Գ. բազմապտուղ (*J. polycarpos* C. Koch.), Գ. ցածրաճ (*J. depressa* Stev.), Գ. կազակական (*J. sabina* L.): Չոր, քարքարոտ լեռնալանջերին և ժայռոտ վայրերում բնորոշ են գետնատարած, փռվող *J. depressa* Stev. և *J. sabina* L. տեսակները, որոնք առաջացնում են համատարած մացառուտներ՝ գիհուտներ: Դրանք ունեն հակաէրոզիոն նշանակություն: *J. foetidissima* Willd., *J. oblonga* Bieb. և *J. polycarpos* C. Koch. տեսակները հանդիպում են նոսրանտառների կազմում:

Պիստակենի բթատերևը կամ խնկենին (*Pistacia mutica* Fisch. et C. A. Mey) հանդիպում է Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու տարածքներում՝ չոր, քարքարոտ թեքություններին, արիդային նոսրանտառներում և հանդիսանում է քսերոֆիտ բուսականության տարր: Դաշտային հետազոտությունների արդյունքում գրանցվել է, որ խնկենու ներկայացուցիչների մեծամասնությունը վարակված են գալլերով, որոնք հիմնականում վնասում են նշված բույսերի պտուղները:

Արցախում բնականորեն աճում են Ճապկի հարավային (*Swida australis* Pojark.) և Ճ. արական կամ հոնի (*Cornus mas* L.) տեսակները, որոնք հանդիպում են հիմնականում ենթանտառում, թփուտներում: Հոնի պտուղները բարձր են գնահատվում որպես հակաբորբոքային միջոց և լայնորեն օգտագործվում են ժողովրդական բժշկության մեջ:

Արցախի դենդրոֆլորայում տնտեսական մեծ նշանակություն ունեն Տիլենի սովորականը (*Corylus avellana* L.) և Ընկուզենի հունականը (*Juglans regia* L.), որոնք տարածված են կաղնեբոխային անտառներում:

Բարձր գեղազարդությամբ աչքի է ընկնում անտառեզրերին և չոր, քարքարոտ թեքությունների վրա հանդիպող Դրախտածառ սովորականը (*Cotinus coggygria* Scop.), որը պարունակում է ներկանյութեր:

Եվրոպական իլենին *(Euonymus europaea* L.) և Թխկի դաշտայինը (*Acer campestre* L.) լայն տարածում ունեն Արցախի անտառներում, աճում են հաճարենու, կաղնու, բոխու ենթանտառում: Պիտանի են նաև կանաչապատման համար, որպես գեղազարդ տեսակներ:

Արցախի անտառներում, անտառեզրերին, գետահովիտների բուսական ծածկույթում հանդիպում են հետևյալ լիանները. Բաղեղ սովորական (*Hedera helix* L.), Շրջահյուս հունական (*Periploca graeca* L.), Խաղող անտառային (*Vitis silvestris* C. C. Gmel.) և այլն:

Բաղեղ սովորականը մշտադալար լիան է, որը կառչելով բարձրանում կամ մագլցում է ծառերի ու այլ հենարանների վրա: Տարածված է Ասկերանի, Մարտակերտի շրջանների խոնավ աճելավայրերում, հանդիպում է հաճախ

հաճարենու, կաղնու, բոխու անտառային համակեցություններում:

Մղամուճ սպիտակը (*Viscum album* L.) մակաբուծում է սաղարթավոր և փշատերև ծառերի վրա արմատներով թափանցելով դրանց կեղևի և բնափայտի մեջ: Արցախի անտառներում այն հանդիպում է հիմնականում կաղնու, խնձորենու, տանձենու, ավելի սակավ՝ լորենու, թեղու, բոխու, ալոճենու և մի շարք այլ պտղատու ծառերի վրա: Ճագումը զգալի վնաս է հասցնում անտառներին և այգիներին, հատկապես Մարտակերտի վարչական շրջանում:

Ստորև նշված աղյուսակում ներկայացվում է Արցախի դենդրոֆլորայի կարգաբանական բազմազանությունը.

Աղյուսակ

Արցախի դենդրոֆլորայի կարգաբանական բազմազանությունը

№	Ընտանիք	Ցեղ	Տեսակ
1.	Աղտորազգիներ *Anacardiaceae*	Դրախտածառ *Cotinus*	Դ. սովորական *C. coggygria* Scop.
		Պիստակենի *Pistacia*	Պ. բթատերև, խնկենի *P. mutica* Fisch. et C. A. Mey
2.	Արալիազգիներ *Araliaceae*	Բաղեղ *Hedera*	Բ. սովորական *H. helix L.*
3.	Ընկուզազգիներ *Juglandaceae*	Ընկուզենի *Juglans*	Ը. սովորական *J. regia* L.
4.	Թխկազգիներ *Aceraceae*	Թխկի *Acer*	Թ. դաշտային *A. campestre* L.
5.	Թունաթափազգիներ *Asclepidaceae*	Շրջահյուս *Periploca*	Շ. հունական *Periploca graeca* L.
6.	Իլենազգիներ *Celastraceae*	Իլենի *Euonymus*	Ի. եվրոպական *E. europaea* L.
7.	Լորենազգիներ *Tiliaceae*	Լորենի *Tilia*	Լ. կովկասյան *T. caucasica* Rupr.
			Լ. մանրատերև, սրտաձև *T. cordata* Mill.
8.	Խաղողազգիներ *Vitaceae*	Խաղող *Vitis*	Խ. անտառային *V. sylvestris* C.C.Gmel.
9.	Կենազգիներ *Taxaceae*	Կենի *Taxus*	Կ. հատապտղային *T. baccata* L.
10.	Հաճարազգիներ *Fagaceae*	Հաճարենի *Fagus*	Հ. արևելյան *F. orientalis* Lipsky
		Կաղնի *Quercus*	Կ. վրացական *Q. iberica* Stev.
			Կ. խոշորառէջ *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen.
11.	Հոնազգիներ *Cornaceae*	Հոնի *Cornus*	Հ. սովորական *C. mas* L.
		Ճապկի *Swida*	Ճ. հարավային *S. austrralis* Pojark.

№	Ընտանիք	Յեղ	Տեսակ
12.	Նոճազգիներ *Cupressaceae*	Գիհի *Juniperus*	Գ. գարշահոտ *J. foetidissima* Willd.
			Գ. երկարատերև *J. oblonga* Bieb.
			Գ. բազմապտուղ *J. polycarpos* C. Koch.
			Գ. ցածրաճ *J. depressa* Stev.
			Գ. կազակական *J. sabina* L.
13.	Սոսազգիներ *Platanaceae*	Սոսի *Platanus*	Ս. արևելյան *Platanus orientalis* L.
14.	Վարդազգիներ *Rosaceae*	Տանձենի *Pyrus*	Տ. կովկասյան *P. caucasica* Fed.
		Սալորենի *Prunus*	Ս. սովորական *P. divaricata* Ledeb.
			Ս. փշոտ, մամխենի *P. spinosa* L.
		Սզնի *Crataegus*	Ս. արևելյան *C. orientalis* Pall.
			Ս. կովկասյան *C. caucasica* K. Koch
		Մոշենի *Rubus*	Մ. կովկասյան *Rubus caucasicus* Focke.
		Մասրենի *Rosa*	Մ. վրացական *R. iberica* Stev.
			Մ. սովորական *R.canina* L.
		Զկեռենի *Mespilus*	Զ. գերմանական *M. germanica* L.
		Արոսենի *Sorbus*	Արոսենի հայկական *S. armeniaca* Hedl.
			Ա. բուժիչ, ծտիտանձ *S. torminalis* /Z./ Grantz.
			Ա. սովորական, ծտիխնձոր *S. aucuparia* L.
15.	Տխլազգիներ *Corylaceae*	Տխլենի *Corylus*	Տ. սովորական *C. avellana* L.
			Արջատխլենի *Corylus colurna* L.
		Բոխի *Carpinus*	Բ. արևելյան *C. orientalis* Mill.
			Բ. կովկասյան *C. caucasica* L.

№	Ընտանիք	Յեղ	Տեսակ
			Բ. Շուշիի *C. schuschaensis* H. Winkl.
16.	Փոկածաղկազգիներ *Loranthaceae*	Մղամուճ, ճազում *Viscum*	Մ. սպիտակ *V. album* L.

Վերլուծելով աղյուսակի տվյալները՝ կարող ենք նշել, որ Արցախի դենդրոֆլորայի կազմում առաջատար դերը պատկանում է Վարդազգիների (*Rosaceae*) ընտանիքին, որի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը հանդիսանում են վայրի պտղատուներ: Այսպիսով, Արցախի անտառային դենդրոբազմազանության կազմում արժեքավոր և հեռանկարային են հետևյալ վայրի պտղատուները՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica* Fed.), արևելյան խնձորենին (*Malus orientalis* Uglitzkich), սալորենի սովորականը (*Prunus divaricata* L.), գերմանական զկեռենին (*Mespilus germanica* L.), արևելյան սզնին (*Crataegus orientalis* Pall.), արոսենի սովորական (*Sorbus aucuparia* L.), ա. բուժիչ, ծտիտանձ (*S. torminalis* /Z./ Grantz.) և այլն:

Արցախի դենդրոֆլորան ծանր կորուստներ է կրել 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում՝ Արցախի տարածքի զգալի մասի, այդ թվում Հադրութի, Շահումյանի, Մարտակերտի, Քաշաթաղի և Շուշիի անտառների մեծ մասի անցումը թշնամու վերահսկողության տակ: Հաշվի առնելով, որ պատերազմի ընթացքում Ադրբեջանը կիրառել է նաև Ժնևյան կոնվենցիայով արգելված՝ ֆոսֆորային զենք, որի հետևանքով Արցախի տարածքում բռնկվել են մասսայական անտառային հրդեհներ և ոչնչացվել է 1815 հեկտար անտառապատ տարածք (ըստ վարչական շրջանների՝ Շահումյան – 108 հա, Շուշի – 270 հա, Քաշաթաղ – 910 հա, Ասկերան – 122 հա, Մարտակերտ – 185 հա, Մարտունի – 190 հա, Հադրութ – 30 հա) [7]:

Ադրբեջանական ագրեսիայի հետևանքով հրդեհված տարածքներում անտառկազմող հիմնական և ուղեկցող տեսակներից բացի, վնասվել են նաև Արցախի անտառներում հազվագյուտ հանդիպող տեսակները՝ Արոսենի հայկական (*Sorbus armeniaca* Hedl.), Բոխի Շուշիի *(Carpinus schuschaensis* H. Winkler), Արջատիլենի *(Corylus colurna* L.): Պետք է նշել նաև, որ արևելյան սոսիների ծառուտների մի մասը մնացել են Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում:

2022թ. դեկտեմբերից Արցախը, հայտնվելով շրջափակման և էներգետիկ ճգնաժամի մեջ, անտառապատ տարածքները կրկին կրում են կորուստներ՝ ենթարկվելով չհամակարգված անտառահատումների: Ներկայումս, երբ Արցախը շարունակում է գտնվել տնտեսական և էներգետիկ շրջափակման մեջ, անտառահատումները դառնում են անկառավարելի ու կարող են առաջացնել բնապահպանական աղետներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Հ. Մ., Հայաստանի բնաշխարհ, Երևան, 2006, 585 էջ:
2. Բալայան Կ. Վ., Լեռնային Ղարաբաղի ֆլորան (Անոթավոր բույսեր), ատեն. կենս. գիտ. թեկն., Երևան, 2014, 105 էջ:
3. Հարությունյան Լ. Վ., Հարությունյան Ս. Լ., Հայաստանի դենդրոֆլորան, Երևան, 1986, 360 էջ:
4. Հայրապետյան Է. Մ. Շրջակա միջավայրի պահպանություն, Երևան, 2005, 458 էջ:
5. Վարդանյան Ժ. Հ., Ծառագիտություն, Երևան, 2005, 370 էջ:
6. Новиков В. С., Губанов И. А., Популярный атлас определитель дикорастущие растения, Москва, 2008, 292 стр.
7. https://www.ecolur.org/hy/news/sos/12812/ (03.05.2023)

Дендрофлора Арцаха, основные проблемы ее сохранения

Бабаян Марта

АрГУ, Биология/Химия, 2-й курс

Научный руководитель:

кандидат биологических наук, доцент К. Балаян

Резюме

Ключевые слова: *Арцах, дендрофлора, дуб, бук, граб, клен, боярышник, шиповник*

В работе представлено таксономическое разнообразие дендрофлоры Арцаха, его значение и основные проблемы сохранения. Основными породами лесных деревьев являются: Дуб грузинский (*Quercus iberica*), Д. крупнопыльниковый (*Q. macranthera)*, Граб обыкновенный (*Carpinus caucasica)* и Бук восточный (*Fagus orientalis).* Среди сопутствующих видов – Граб восточный *(Carpinus orientalis)*, Бересклет европейский (*Euonymus europaea)*, Боярышник восточный (*Crataegus orientalis*) и др. .

Dendroflora of Artsakh, Main Problems of its Conservation

Babayan Marta

ASU, Biology/Chemistry, 2nd course

Academic Supervisor: K. Balayan

Candidate of Biological Sciences, Associate Professor

Summary

Key words: *Artsakh, dendroflora, Quercus, Fagus, Carpinus, Acer, Crataegus, Rosa*

The paper presents the taxonomic diversity of the dendroflora of Artsakh, its significance and the main problems of conservation. The main species of forest trees are: *Quercus iberica*, *Q. macranthera, Carpinus caucasica* and *Fagus orientalis*. Associated species include *Carpinus orientalis*, *Euonymus europaea*, *Crataegus orientalis* and others.

Արցախի ֆլորայի դեղաբույսերը, նրանց պահպանության հիմնախնդիրները

Դանիելյան Մանուշակ
ԱրՊՀ, Կենսաբանություն/Քիմիա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ Կ. Բալայան

Հանգուցային բառեր. *Արցախ, ֆլորա, դեղաբույսեր, երեքնուկ, զիվան, եղերդակ, սրոհունդ, ուրցաղաղձ*

Աշխատանքում ներկայացվում են Արցախի ֆլորայի դեղատու որոշ բույսերի տարածվածությունը և նրանց պահպանության առկա հիմնախնդիրները: Արցախի ֆլորան ընդգրկում է դեղատու այնպիսի բուսատեսակներ, որոնք լայնորեն կիրառվում են ժողովրդական ու գիտական բժշկության մեջ: Հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել է դեղատու բույսերի 17 տեսակ՝ Երեքնուկ մարգագետնային (Trifolium pratense L.), Զիվան հսկայական (Cephalaria gigantea L.), Եղերդակ դեղատու (Cichorium officinalis L.), Սրոհունդ սովորական (Hypericum perforatum L.), Առյուծագի սովորական (Leonurus cardiaca L.) և այլն:

Արցախի բուսական աշխարհի բազմազանությունն անգնահատելի արժեք է հանդիսանում ներկա և ապագա սերունդների համար: Արցախի ֆլորայում դեղատու բույսերը կազմում են 549 տեսակ՝ 299 ցեղից և 105 ընտանիքից: Դեղատու բույսերից առավել լայն տարածված են *Asteraceae, Rosaceae և Lamiaceae* ընտանիքների ներկայացուցիչները [1]:

Դեղաբույսերի բուժիչ հատկությունները պայմանավորված են դրանց օրգաններում առկա տարբեր օրգանական նյութերով (ալկալոիդներ, գլիկոզիդներ, սապոնիններ, եթերայուղեր, վիտամիններ և այլն), որոնք ֆիզիոլոգական ներգործություն են ունենում մարդկանց կամ կենդանիների օրգանիզմների վրա: Դեղաբույսերը մարդկանց և կենդանիների տարբեր հիվանդությունների բուժման ու կանխարգելման համար օգտագործվող բույսերի խումբ են: Բույսերում առաջացող կենսաբանական ակտիվ նյութերը կենդանի օրգանիզմի նյութափոխանակության արդյունք են, ուստի ավելի բնական ձևով են մասնակցում մարդու օրգանիզմի կենսաքիմիական և այլ կենսաբանական շարժերին: Բույսերում պարունակվող որոշ նյութեր ազդում են սպիտակուցների կենսասինթեզի վրա, պայմաններ ստեղծում իմունային մարմինների սինթեզի համար, բարձրացնում օրգանիզմի պաշտպանական ռեակցիաները, ֆերմենտների ակտիվությունը և այլն [2]:

Աշխատանքի արդիականությունը այն է, որ Արցախի բնակչության կողմից լայնորեն կիրառվում են դեղատու բույսերը ժողովրդական բժշկության մեջ տարբեր հիվանդությունների կանխարգելման և բուժման համար, ուստի դեղաբույսերի տեսակային բազմազանության, տարածվածության և նշանակության վերաբերյալ ուսումնասիրությունները հնարավորություն կտան ներկայացնել Արցախի ֆլորայի արժեքավոր դեղատու տեսակները:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ու ներկայացնել Արցախի տա-

բածքում աճող որոշ դեղաբույսերի կարգաբանական բազմազանությունը, նրանց նշանակությունը և պահպանության առկա հիմնախնդիրները:

Աշխատանքի իրականացման համար հիմք են հանդիսացել մեր կողմից կատարված ուսումնասիրությունները և դաշտային հետազոտությունները: Դեղաբույսերի հավաքի համար կազմակերպվել են երթուղիներ Արցախի վարչական շրջանների տարածքներ, որոնց ընթացքում կիրառվել են հերբարիումային և նկարագրական մեթոդները: Հերբարիումների տեսակային կազմը որոշվել է ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի լաբորատորիայում՝ որոշիչի օգնությամբ [6]:

Մեր ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքում գրանցվել է 17 տեսակ դեղաբույս, որոնք պատկանում են 7 ընտանիքների, 17 ցեղերի: Ըստ տեսակային կազմի՝ առաջատար են աստղածաղկազգիների (*Asteraceae*), շրթնածաղկազգիների (*Lamiaceae*), բակլազգիների (*Fabaceae*), վարդազգիների (*Rosaceae*) ընտանիքները:

Արցախի ֆլորայի դեղաբույսերից մեր կողմից ուսումնասիրվել է ստորև ներկայացված ընտանիքներին պատկանող որոշ ներկայացուցիչների տարածվածությունը և նշանակությունը:

Ընտանիք՝ Բակլազգիներ – Бобовые – *Fabaceae*

Ցեղ՝ Երեքնուկ – Клевер – *Trifolium* L.

Տեսակ՝ Ե. մարգագետնային – К. луговой – *T. pratense* L.

Տարածված է Արցախի բոլոր շրջաններում: Աճում է թփուտներում, խոնավ մարգագետիններում, գետահովիտներում: Բնակչության կողմից հավաքվում են երեքնուկի տերևներն ու գլխիկաձև ծաղկաբույլերը, որոնք օգտագործվում են թեյի և եփուկների տեսքով: Այն ունի միզամուղ ու քրտնաբեր հատկություն: Բացի այդ, երեքնուկի պատրաստուկները մաքրում են անոթները խոլեստերինից:

Ցեղ՝ Իշառվույտ– Донник – *Melilotus* (L.) Mill.

Տեսակ՝ Ի. դեղատու – Д. лекарственный – *M. officinalis* (L.) Lam.

Տարածված է Արցախի միջին լեռնային գոտում: Աճում է թփուտներում, մարգագետիններում, այգիներում: Բնակչության կողմից որպես դեղաբուսական հումք հավաքում են բույսի վերգետնյա հատվածը՝ ծաղկման շրջանում: Հանդիսանում է հակաբորբոքային և միզամուղ միջոց: Բարձր չափաքանակները վտանգավոր են, կարող են ախտահարել նյարդային համակարգը:

Ընտանիք՝ Աստղածաղկազգիներ (Բարդածաղկավորներ) – Сложноцветные - *Asteraceae*

Ցեղ՝ Եղերդակ (ճարճատուկ) – Цикорий – *Cichorium*L.

Տեսակ՝ Ե. սովորական – Ц. обыкновенный – *C. intybus*L.

Աճում է բնակավայրերի շրջակայքում, անտառեզրերին, ճանապարհների և դաշտերի եզրերին, մարգագետիններում: Եղերդակի դալար ընձյուղները, ցողունները ու տերևներն օգտագործում են որպես սննդային, իսկ արմատները՝ սուրճին փոխարինող և դեղատու միջոց: Արմատների թուրմն ունի ախորժաբեր և մարսողությունը կարգավորող, իսկ տերևների թուրմը՝ հակամանրէային ազդեցություն: Բուսաբուժության մեջ օգտագործվում են եղերդակի ինչպես արմատները, այն-

պես էլ տերևներն ու ծաղիկները: Թուրմն ու եփուկն օգտագործվում է ստամոքսի խոցի, գաստրիտի, երիկամների հիվանդությունների դեպքում:

Ցեղ՝ Օշինդր – Полынь – *Artemisia* L.

Տեսակ՝ Օ. դառը – П. горькая – *A. absinthium*L..

Հանդիպում է ամենուրեք՝ Արցախի վարչական բոլոր շրջաններում: Աճում է թփուտներում, մարգագետիններում, այգիներում, բնակավայրերի շրջակայքում: Ամբողջ բույսն ունի սուր եթերայուղային հոտ և չափազանց դառը համ՝ շնորհիվ աբսինտին ու անաբսինտին գլիկոզիդների: Օշինդրը համարվում է երկրագնդի ֆլորայի ամենադառը բույսերից մեկը: Դառն օշինդրը ծաղկում է հուլիսից մինչև սեպտեմբեր ամիսը: Դեղաբույսի եփուկը կիրառվում է ճիճվակրության, անքնության, լյարդի հիվանդությունների ժամանակ: Բույսի ծաղկաթուրմն օգտագործում են ճարպակալման, ընկնավորության ժամանակ և այլն:

Ցեղ՝ Խատուտիկ – Одуванчик – *Taraxacum* F. H. Wigg.

Տեսակ՝ Խ. դեղատու – О. лекарственный – *T. officinale* F. H. Wigg.

Աճում է ամենուրեք: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են ամբողջ բույսը: Թարմ տերևները և հյութը օգտագործում են աթերոսկլերոզի, C-ավիտամինոզի, լյարդի, լեղապարկի, ստամոքսի հիվանդությունների, ինչպես նաև ճարպերի վատ յուրացման, փորկապության, շաքարային դիաբետի ժամանակ: Խատուտիկն ինչպես շատ երկրներում, այնպես էլ մեզ մոտ համարվում է նաև սննդային բույս: Նրա տերևներից պատրաստում են աղցան: Այս նպատակով մատղաշ տերևները 30 րոպե թողնում են սառը աղաջրում՝ դառնահյութը վերացնելու համար:

Ցեղ՝ Հազարատերևուկ – Тысячелистник – *Achillea* L.

Տեսակ՝ Հ. սովորական – Т. обыкновенный – *A.millefolium* L.

Աճում է թփուտներում, անտառներում, մարգագետիններում: Սովորական կամ հատվածատերև հազարատերևուկի տերևներն ու ծաղկաբույլերը պարունակում են եթերայուղեր: Հյութը և թուրմը կիրառվում են ժողովրդական բժշկության մեջ: Պատրաստուկներն օգտագործում են որպես արյունահոսությունը դադարեցնող, վերքերն ապաքինող, ախորժաբեր միջոց:

Ընտանիք՝ Վարդազգիներ – Розовые – *Rosaceae*

Ցեղ՝ Մասրենի – Шиповник – *Rosa* L.

Տեսակ՝ Մասրենի սովորական – Ш. обыкновенный – *Rosa canina* L.

Աճում են լեռնալանջերին, անտառեզրերին, թփուտներում: Ժողովրդական բժշկության մեջ հիմնականում օգտագործում են պտուղները, որոշ չափով, նաև ծաղիկները, տերևները, կեղևը և արմատը: Հասուն պտուղներն օգտագործում են որպես վիտամինային հումք (թուրմ, հյութեր և այլն), յուղը կիրառվում է սնուցող, հակաբորբոքային, մաշկային որոշ հիվանդությունների բուժման համար: Ծաղիկներից ստացվում է հատուկ յուղ, որն օգտագործվում է օծանելիքի արտադրության և բժշկության մեջ: Մասրենու պտուղները դրական ազդեցություն ունեն նյարդային համակարգի վրա:

Ցեղ՝ Գետնամորի – Земляника – *Fragaria* L.

Տեսակ՝ Գ. անտառային – З. лесная – *F. vesca* L.

Հանդիպում է Արցախի բոլոր վարչական շրջաններում: Գետնամորի անտառայինն աճում է անտառեզրերին, մացառուտներում, անտառի բացատներում և թփուտներում: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են բույսի բոլոր մասերը, հատկապես պտուղները: Պտուղները հավաքում են չոր եղանակին, առավոտյան ցողն անցնելուց հետո կամ օրվա վերջում, որովհետև թաց պտուղները շուտ են փչանում, իսկ շոգին՝ շուտ թորշոմում: Ճիշտ չորացնելիս պտուղները պահպանում են իրենց նախնական վառ կարմիր գույնը: Միաժամանակ համարվում է որպես հակաբորբոքիչ, ցավազրկող և վերքամոքիչ միջոց: Օգտագործվում է նաև պոդագրայի և հեպատիտների ժամանակ: Տերևների եփուկն օգտագործում են շնչահեղձության, խոցային հիվանդության, գաստրիտի, անեմիայի, հիպերտոնիկ և սրտային հիվանդությունների, աթերոսկլերոզի ժամանակ: Կիրառվում է որպես հումք վիտամինային թեյերի համար:

Ընտանիք՝ Սրոհունդազգիներ – Зверобойные – *Hipericaceae*

Ցեղ՝ Սրոհունդ – Зверобой – *Hypericum* L.

Տեսակ՝ Ս. խոցված կամ սովորական (արևքուրիկ) – З. продырявленный – *H. perforatum* L.

Աճում է անտառների բացատներում, թփուտներում, չոր մարգագետիններում: Սրոհունդի պատրաստուկներն օժտված են հակաբորբոքային հատկություններով: Սրոհունդի մեջ պարունակվում են եթերային յուղեր, վիտամիններ: Թուրմն արդյունավետ օգնում է սթրեսային իրավիճակներում և օգնում է հանգստացնել նյարդային համակարգը: Ունի ֆիտոնցիդային հատկություն: Սրոհունդի թեյն իր հակավիրուսային ու հակաբիոտիկային հատկությունների շնորհիվ շատ օգտակար է հարբուխի, բրոնխիտի բուժման համար, բացի այդ, այն օգնում է անքնության, նյարդային լարվածության ժամանակ՝ թողնելով հանգստացնող ազդեցություն:

Ընտանիք՝ Խուլեղինջազգիներ – Яснотковые – *Lamiaceae*

Ցեղ՝ Առյուծազգի – Пустырник –*Leonurus* L.

Տեսակ՝ Ա. սովորական – П. обыкновенный – *L. cardiaca* L.

Տարածված է Արցախում: Աճում է անտառներում, բացատներում, գետափերին, թփուտներում: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են բույսի վերգետնյա ծաղկող մասը և տերևները: Պատրաստուկներն ունեն կենտրոնական նյարդային համակարգը հանգստացնող, սրտի աշխատանքը կարգավորող, զարկերակային ճնշումն իջեցնող հատկություններ:

Ցեղ՝ Խնկածաղիկ – Душица – *Origanum* L.

Տեսակ՝ Խնկածաղիկ սովորական – Душица обыкновенная – *Origanum vulgare* L.

Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է բույսի ամբողջ վերգետնյա մասը, որը հավաքում են ծաղիկները լրիվ բացվելուց հետո, չորացնում բացօթյա:

Դեղաբույսը լայնորեն օգտագործվում է շնչառական և մարսողական համակարգերի հիվանդությունների դեպքում:

Ցեղ՝ Լերդախոտ – Дубровник – *Teucrium* L.

Տեսակ՝ L. սպիտակ, Մարիամ խոտ, Մարիամ ծաղիկ, u. Գրիգորի խոտ – Д. белый – *T. polium* L.

Տարածված է Արցախի միջին լեռնային գոտում: Աճում է չոր, քարքարոտ լանջերին: Խոտաբույսը պարունակում է եթերայուղեր, ֆիտոնցիդներ: Բուժահումք է հանդիսանում բույսի վերգետնյա հատվածը: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են որպես ախորժաբեր, լեղամուղ միջոց և այլն:

Ցեղ՝ Ուրց – Чабрец – *Thymus* L.

Տեսակ՝ Ու. սողացող – Ч. ползучий –*Th. serpyllum* L.

Աճում է ժայռերի, քարքարոտ թեքությունների վրա: Տերևներում պարունակվում է եթերային յուղ և վիտամին C: Ուրցն ու նրանից ստացվող պատրաստուկներն օժտված են հակաբորբոքային, խորխաբեր հատկություններով: Օգտագործվում է նաև գլխացավերի, ասթմայի, ողողումների ձևով՝ բերանի խոռոչի բորբոքումների և անգինայի ժամանակ:

Ցեղ՝ Ուրցաղաղձ – Зизифора – *Ziziphora* L.

Տեսակ՝ Ու. վայրի ռեհանաուրցանման – З. клиноподиевидная– *Z. clinopodioides* Lam.

Աճում է չոր, քարքարոտ վայրերում: Հանդիպում է Մարտակերտի և Ասկերանի վարչական շրջաններում: Որպես դեղաբույս բնակչության կողմից մեծ քանակությամբ հավաքներ է իրականացվում ծաղկման շրջանում, քանի որ լայնորեն ընդգրկվում է տարբեր թեյերի բաղադրության մեջ: Պարունակում է եթերայուղեր: Պատրաստուկներն ունեն հակաբորբոքային նշանակություն, կիրառվում են նաև որպես միզամուղ, իջեցնում են արյան բարձր ճնշումը, բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը:

Ցեղ՝ Պատրինջ – Мелисса – *Melissa* L.

Տեսակ՝ Պ. դեղատու, թուրինջ խոտ – M. лекарственная, лимонная мята, лимонная трава – *M. officinalis* L.

Տարածված է Արցախի բոլոր վարչական շրջաններում: Աճում է անտառների բացատներում, ստվերոտ, խոնավ ձորերում: Պատրինջի մատղաշ տերևները և ցողունները, որոնք հավաքվում են մինչև ծաղկելը, օգտագործվում են որպես համեմունք: Թարմ կամ չորացրած վիճակում ավելացվում են սննդի մեջ: Սև կամ կանաչ թեյին պատրինջը տալիս է կիտրոնի ու դաղձի դուրեկան բուրմունք՝ տերևներում պարունակվող եթերային յուղերի շնորհիվ: Պատրաստուկը հանդիսանում է արյան ճնշումն իջեցնող միջոց:

Ընտանիք՝ Ակբանազգիներ – Ворсянковые – *Dipsacaceae*

Ցեղ՝ Զիվան կամ դանթափա – Головчатка – *Cephalaria* L.

Տեսակ՝ Զ. հսկայական – Г. гигантская – *Cephalaria gigantea* (Ledeb.) Bobr.

Տարածված է Արցախի Մարտակերտի վարչական շրջանում: Աճում է 1700 – 2500 մ բարձրությունների վրա, անտառի վերին սահմանի մոտ, բացատներում, մարգագետիններում: Ծաղկման շրջանում հավաքում են ծաղկաբույլերը, որոնք

գնդաձև գլխիկներ են: Ծաղիկները դեղնավուն են՝ պատված կաշեկերպ, կղմինդրաձև դասավորված ծածկոցի թերթիկներով: Լայն կիրառություն ունի ժողովրդական բժշկության մեջ որպես քրտնաբեր, խորխաբեր միջոց, հատկապես, շնչառական ուղիների հիվանդությունների ժամանակ:

Ընտանիք՝ Կակաչազգիներ – Маковые – *Papaveraceae*

Ցեղ՝ Ծիծեռնախոտ – Чистотел – *Chelidonium* L.

Տեսակ՝ Ծ. մեծ – Ч. большой – *Ch. majus* L.

Աճում է այգիներում, բանջարանոցներում, բնակավայրերի շրջակայքում, անտառներում: Ծիծեռնախոտով (կանթեղախոտ) պատրաստված դեղատոմսերը ժողովրդական բժշկության մեջ հայտնի են շատ հնագույն ժամանակներից: Ծիծեռնախոտի տերևների հյութով հեռացվում են կոշտուկները, գորտնուկները և այլն: Ծիծեռնախոտի բուժիչ հատկությունը պայմանավորված է հենց բնական ալկալոիդների պարունակությամբ, մասնավորապես՝ հելիդոնին ալկալոիդի: Այս բույսի մեջ եղած ալկալոիդներից մի քանիսն էլ կարող են կանխել չարորակ ուռուցքների մեծացումը [5]:

Արցախի ֆլորայի որոշ դեղաբույսերի նշանակությունը, ըստ մարդու օրգանիզմի վրա ազդեցության, ներկայացվում է աղյուսակ 1-ում:

Այսպիսով, աշխատանքում ընդգրկված դեղաբույսերը խմբավորելով ըստ մարդու օրգանիզմի վրա ունեցած ազդեցության, կարող ենք նշել, որ հենաշարժիչ համակարգի հիվանդությունների դեպքում կիրառվող դեղաբույսերից են ուրցադաղձը, գետնամորին, իսկ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների դեպքում՝ երեքնուկը, պատրինջը, առյուծագին, ուրցը, եղերդակը և այլն [3]: Մարսողական համակարգի հիվանդությունների դեպքում կիրառվում են լերդախոտը, երեքնուկը, խատուտիկը, իսկ շնչառական ուղիների հիվանդությունների դեպքում՝ ուրցը, ուրցադաղձը, խնկածաղիկը և այլն [4]: Նյարդային համակարգի հիվանդությունների դեպքում օգտագործվում են երեքնուկը, խնկածաղիկը, պատրինջը, եղերդակը, առյուծագին և այլն, իսկ որպես հակաճիճվային միջոցներ կիրառվում են օշինդրի, հազարատերևուկի պատրաստուկները [5]: Հակաբորբոքային և հակաուռուցքային ազդեցության համար ժողովրդական բժշկության մեջ կիրառվում են ծիծեռնախոտը, օշինդրը և այլն [7]:

Արցախի ֆլորայի դեղաբույսերի պահպանության հիմնախնդիրներից են բնակչության կողմից անկանոն մեծածավալ հավաքների վերահսկումը, ինչպես նաև հավաքների ճիշտ կազմակերպումը: Հաճախ զանգվածաբար ոչնչացվում են լայն ճանաչում ունեցող դեղաբույսերը՝ ուրց, ուրցադաղձ, խնկածաղիկ, սրոհունդ և այլն: Դրա հետևանքով կրճատվում են որոշ բուսատեսակների քանակները, քանի որ չեն պահպանվում խոտաբույսերի հավաքի կանոնները: Բույսերի սակավացման պատճառ են հանդիսանում ոչ միայն անհատ անձերի, այլև տարբեր մթերող կազմակերպությունների միջոցով կազմակերպված օգտակար բույսերի անհաշվենկատ հավաքը՝ հաշվի չառնելով բույսերի վերարտադրման առանձնահատկությունները:

Արցախում դեղատու բուսատեսակներն ունեն տնտեսական մեծ նշանակություն, ուստի նրանց հետագա պահպանման նպատակով անհրաժեշտ է մշակու-

թյան մեջ ընդգրկել զիվանը, ուրցը, ուրցադաղձը, եղերդակը, սրոհունդը, խնկաձաղիկը և այլն:

Աղյուսակ 1.

Արցախում տարածված որոշ դեղաբույսերի նշանակությունն ըստ ազդեցության

Ազդեցությունը / Բույսի անվանումը	Հիպոտենզիվ	Սիրտանոթային	Սպասմոլիտիկ	Հեշտալիտիկ	Սիրտամարտակոչ	Դիուրետիկ	Հակիսկլերոտիկ	Հակիաթերոսկլերոտիկ	Հակիանգինոզային
Երեքնուկ մարգագետնային *Trifolium pratense* L.	-	+	+	+	+	+	-	+	+
Իշառվույտդեղատու *Melilotus officinalis* L.	-	-	-	-	+	+	-	+	-
Պատրինջդեղատու *Melissa officinalis L.*	-	+	-	+	+	+	-	+	-
Լերդախոտ սպիտակ *Teucrium polium L.*	-	+	+	-	+	-	-	-	-
Առյուծագի սովորական *Leonurus cardiaca* L.	-	+	-	-	+	+	-	-	-
Խնկաձաղիկ սովորական *Origanum vulgare* L.	-	+	+	+	+	+	-	+	+
Ուրց սողացող *Thymus serpyllum* L.	-	+	+	+	+	+	-	+	-
Ուրցադաղձ վայրի ռեհանաուրցանման *Ziziphora clinopodioides* Lam.	+	+	+	+	+	+	+	+	-
Եղերդակ դեղատու *Cichorium officinalis* L.	-	+	+	-	+	+	-	+	-
Օշինդր դառը *Artemsia absinthium* L.	-	+	+	-	+	+	+	+	+
Խատուտիկ դեղատու *Taraxacum officinalis* L.	-	+	+	+	+	+	-	+	+
Հազարատերևուկ հատվածատերև *Achillea millefolium* L.	-	+	+	-	+	-	+	+	-
Մասրենի սովորական *Rosa canina* L.	+	+	+	-	+	+	-	+	+
Գետնամորի անտառային *Fragaria vesca* L.	+	+	+	-	+	+	+	+	-
Սրոհուն դասվորական (արևքուրիկ) *Hypericum perforatum L.*	-	+	+	-	+	-	+	+	-
Ծիծեռնախոտ մեծ *Chelidonium majus* L.	-	+	+	-	+	+	+	+	+

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2. Բալայան Կ. Վ., Լեռնային Ղարաբաղի ֆլորան (Անոթավոր բույսեր), Սեղմագիր ատեն., կենս. գիտ. թեկն.,Երևան, 2014, 25 էջ:
3. Թորոսյան Ա., Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983, 300 էջ:
4. Ղազանջյան Մ., Դեղաբույսեր բոլորի համար, Երևան, 2013, 128 էջ:
5. Мазнев Н.И., Новейшая энциклопедия лекарственных растений, Москва, 2008, 249 стр.
6. Мартиросян А. А. Энциклопедия лекарственных растений и секреты фитотерапии, Ереван, 2010, 401 стр.
7. Новиков В. С., Губанов И. А. Популярный атлас определитель дикорастущие растения, Москва, 2008, 292 стр.
8. Самылина И. А., Сорокина А. А. Атлас лекарственных растений и сырья, Москва, 2008, 318 стр.

Лекарственные растения флоры Арцаха, основные проблемы их сохранения

Даниелян Манушак

АрГУ,Биология/Химия, 2-й курс

Научный руководитель:

кандидат биологических наук, доцент К. Балаян

Резюме

Ключевые слова: *Арцах, флора, лекарственные растения, клевер, головчатка, цикорий, зверобой, зизифора*

В работе представлено распространение некоторых лекарственных растений флоры Арцаха и существующие проблемы их сохранения. Флора Арцаха включает виды лекарственных растений, которые широко используются в народной и научной медицине. В ходе исследований были изучены 17 видов лекарственных растений: клевер луговой (*Trifolium pratense* L.), головчатка гигантская (*Cephalaria gigantea* L.), цикорий лекарственный (*Cichorium officinalis* L.) и др.

Medicinal Plants of Artsakh Flora, the Main Problems of their Conservation

Danielyan Manushak

ASU, Biology/Chemistry, 2nd year

Academic Supervisor: K. Balayan

Candidate of Biological Sciences, Associate Professor

Summary

Key words: *Artsakh, flora, medicinal plants, Trifolium, Cephalaria, Cichorium, Hypericum, Ziziphora*

The paper presents the distribution of some medicinal plants of the flora of Artsakh and the existing problems of their conservation. The flora of Artsakh includes species of medicinal plants that are widely used in folk and scientific medicine. During the research, the 17 types of medicinal plants were studied: *Trifolium prate*nse L., *Cephalaria gigantea* L., *Cichorium officinalis* L. and other.

Ասկերանի շրջանի դենդրոֆլորայի ուսումնասիրությունների վերլուծությունը

Եղիյան Քնարիկ
ԱրՊՀ, Կենսաբանություն/Քիմիա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ գ. գ. թ., դոցենտ Մ. Ծատրյան

Հանգուցային բառեր. *դենդրոֆլորա, ծառ, թուփ, լիան, բազմազանություն, ընտանիք, ցեղ*

Աշխատանքում ներկայացվում են Արցախի Ասկերանի շրջանի դենդրոֆլորայի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Ըստ մեր ուսումնասիրությունների արդյունքների՝ Ասկերանի շրջանի դենդրոֆլորան ընդգրկում է 76 տեսակի ծառեր, թփեր, կիսաթփեր և լիաններ, որոնք պատկանում են 47 ցեղերի և 29 ընտանիքների: Ներկայումս յուրահատուկ ուշադրություն պետք է դարձնել Արցախի դենդրոֆլորայի պահպանության հիմնախնդիրներին, որոնք ունեն գիտական կարևոր նշանակություն:

Ներկայումս, ինչպես երկրագնդի, այնպես էլ Արցախի էկոհամակարգերի վրա, երբ մեծանում է անթրոպոգեն ճնշումը և կրճատվում են բնական պաշարները, առավել արդիական է դառնում ռացիոնալ օգտագործման միջոցով կենսաբազմազանության պահպանությունը: Սա համայն մարդկության, ինչպես նաև մեր հանրապետության առջև կանգնած հիմնական խնդիրներից մեկն է: Առավել ինտենսիվ օգտագործվում են անտառային էկոհամակարգերը և մարգագետնային, տափաստանային, մարգագետնատափաստանային էկոհամակարգերը՝ որպես արոտավայրեր և խոտհարքներ: Բուսական համակեցությունների շարքում առավել օգտագործվող անտառի բնափայտն օգտագործվել է որպես վառելիք և շինափայտ:

Ինտենսիվ արդյունաբերական շահագործումից անտառների որոշ մասի պահպանության անհրաժեշտությունը գիտակցվել է արդեն շատ վաղուց և ոչ միայն բնության պաշտպանների շրջանում, այլև անտառների կայուն կառավարման մի շարք դրույթներում: Ըստ որի՝ «անտառօգտագործողը չպետք է նվազեցնի անտառների արտադրողականությունը, միաժամանակ չպետք է փոփոխի անտառների էկոհամակարգային ծառայությունների ծավալն ու բնույթը, չպետք է վտանգի անտառային կենսաբազմազանությունը» [2]:

Ներկայումս խիստ անհրաժեշտ է ֆլորայի խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունը բնական բուսական համակեցությունների պահպանման, բարելավման և առավել արդյունավետ օգտագործման միջոցառումների մշակման համար:

Հետազոտման օբյեկտ են հանդիսացել Ասկերանի շրջանի տարածքում աճող ծառաթփատեսակները: Անձնական հետազոտության և տարբեր աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա բացահայտվել է ծառաթփատեսակների տեսակային կազմը: Հետազոտություններն իրականացվել են մի շարք մեթոդներով.

երթուղային արշավներ (Ասկերանի հյուսիսարևելյան մաս՝ Խրամորթ համայնքի տարածաշրջան, հարավարևմտյան մաս՝ Շոշ, Դաշուշեն, Քռասնի համայնքների տարածաշրջան, կենտրոնական արևմտյան մաս՝ Այգեստան համայնքի տարածաշրջան) և բույսերի դաշտային հավաքումներ տարբեր տարածքներից, բույսերի լուսանկարում, չորացում և դրանց հերբարիզացում, ուսումնասիրվող բույսերի դասակարգում: Բուսատեսակների որոշումների ժամանակ օգտագործվել են դասական որոշիչներ [4, 5]:

Արցախի անտառներում ծառատեսակների բաշխվածությունն անհավասարաչափ է: Առավել հարուստ են Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի, Ասկերանի, Քարվաճառի, Շահումյանի շրջանները, իսկ Մարտունու շրջանն աղքատ է, որը պայմանավորված է համեմատաբար չորային կլիմայով և հարթավայրային բնույթով: Մեծ մասամբ անտառները լայնատերև են: Արցախի անտառներն ունեն բարդ կառուցվածք և կենսաձևերի վիթխարի բազմազանություն:

Ասկերանի շրջանը զբաղեցնում է Արցախի Հանրապետության արևելյան մասը: Ընդգրկում է Կարկառ գետի ավազանը: Շրջանի մակերևույթը լեռնային է՝ խիստ կտրտված գետահովիտներով և անդնդախոր կիրճերով: Հիմնականում անտառապատ է, ցածրադիր վայրերում՝ թփուտածածկ: Շրջանի արևմտյան կողմում Արցախյան լեռնաշղթան է, որի առանձին գագաթների բարձրությունը 2500-2750 մ է: Միջին բարձրությունը 800 մ է: Շրջանի ընդերքը հարուստ է կրաքարի, պղնձի, մարմարի, պեմզայի, կապարի, կավի պաշարներով: Տարածքով հոսում են Կարկառ, Մեղրագետ, Բաղարա, Քոլատակ գետերը: Կլիման չոր մերձարևադարձային է [3]:

Ասկերանի շրջանի հարավարևմտյան մասը գտնվում է 800-920 մ բարձրության վրա՝ ընդգրկելով տափաստանային և լեռնատափաստանային գոտիները, որոնք ընդարձակ տարածություններ են զբաղեցնում: Գոտու արևելահայաց լանջերը չոր, քարքարոտ լեռնալանջեր են, շիբլյակներ: Առավել տարածված է փարթամ ցաքիի (*P. spina-christi Mill.*) գերակշռությամբ ֆորմացիան, որին հաճախ խառնվում են ցախակեռաս վրացականը (*Lonicera iberica M. Bieb.*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii Fisch. et Mey. C. A. Mey.*), մասրենի առատափուշը (*Rosa spinosissima L.),* իսկ հասմիկը *(Jasminum fruticans L.),* ասպիրակը (*Spiraea hypericifolia L.)* և ամբողջաեզր չմենին՝ *(Cotoneaster integerrimus Medik*) սակավաթիվ, կիսաթփերից՝ գազ մանրագլխիկը, (*Astragalus microcephalus Willd*)՝ ընդարձակ բուսուտներով: Հատուկենտ հանդիպում են ծառատեսակներից՝ կովկասյան փոշնի *(Celtis caucasica Willd.*): Այստեղ մեծ տարածվածություն ունեն մոշենու ենթացեղի տեսակները՝ կովկասյան և թաղիքավոր մոշենին *(Rubus caucasicus Focke ex Haussen., Rubus tomentosus Borkh*), որոնք տարածված են անտառեզրերին, ձորեզրերին: Սահմանափակ տարածվածություն ունի նաև մոշենի Զանգեզուրին *(R.Zangezurus Mulk.*) (Շոշ, Խնածախ): Հայկական էնդեմ է: Աճում է քարքարոտ հողերում, փլվածքներում:

Արևմտյահայաց լանջերին աճում են ասպիրակի, հասմիկի և ցախակեռասի, մասրենու *(Rosa canina L., Rosa spinosissima L.)* և արևելյան սզնու (*Grataegus*

orientalis Pall.) թփերը: Արևմտյան հատվածը դեպի վեր հիմնականում վեր է ածվում կաղնեբոխային անտառի: Այստեղ գերակշռում են արևելյան բոխին, ջղանե (*Carpinus orientalis Mill.),* տերևառատ թեղին (*Ulmus foliacea Gilib.*), վրացական և խոշորառէջ կաղնիները (*Quercus iberica Steven., Q. macranthera Fisch. et C. A. Mey. et Hohen),* սակավաթիվ հանդիպում են դաշտային թխկին (*Acer campestre L..),* կովկասյան սզնին (*Crataegus caucasica K. Koch*), հոնին (*Cornus mas L.*), որոնք անտառկազմող ծառատեսակներ են և մաքուր ծառուտներ չեն առաջացնում:

Ասկերանի հյուսիսարևելյան հատվածի միջին բարձրությունը ծովի մակարդակից մոտ 600 մետր է, ընդ որում նախալեռները իջնում են մինչև 400-500 մ: Այս տարածքում առավել տարածված են չոր, մերձարևադարձային կլիմայի ներկայացուցիչներ՝ նռնենին (*Punica granatum L.),* թզենին *(Ficus carica L.*), որոնք ենթանտառ կազմող տեսակներ են: Իսկ չոր, քարքարոտ լանջերին երկհասկավոր էֆեդրան (*Ephedra distachya L.)* առաջացնում է ընդարձակ բուսուտներ, հանդիպում է նաև կազակական գիհին (*Juniperus Sabina L.):* Նոսր բուսուտներով տարածված է աղտոր դաբաղայինը (*Rhus coriaria L.):*

Անտառների գերիշխող տեսակներ են՝ կովկասյան բոխին *(Carpinus caucasica L.),* վրացական և խոշորառէջ կաղնիները: Որպես ուղեկցող ծառատեսակներ հանդիպում են դաշտային թխկին՝ անտառի ստորինից մինչև վերին սահմաններում, արևելյան բոխին՝ որպես ստորադաս ծառատեսակ, հարավային ճապկին (*Cornus australis Pojark*), իսկ թփատեսակներից՝ սովորական տխլենին (*Corylus avellana L.*), եվրոպական և լայնատերև իլենիները (*Euonymus europea L., E. latifolia/Z./ Mill.*), որոնք անտառի ստորին սահմանում առաջացնում են ծառուտներ: Անտառի փոքր տարածությունների վրա արևելյան սոսին *(Platanus orientalis L.)* առաջացնում է մաքուր ծառուտներ: Ընդարձակ բուսուտներով է հանդես գալիս գերիմաստին (*Viburnum lantana L.*)՝ անտառի ստորինից մինչև վերին սահմաններում: Անտառային դենդրոֆլորան հարուստ է նաև վայրի պտղատուներով՝ սովորական զկեռենին (*Mespilus germanica L.*), կովկասյան տանձենին (*Pyrus caucasica Fed.*), արևելյան խնձորենին *(Malus orientalis Uglitzk.),* սզնին (*Crataegus),* սովորական սալորենին *(Prunus divaricate Ledeb.),* մամխենին *(Prunus spinosa L.)*:

Սովորական շագանակենու (*Castanea sativa Mill.*) ծառուտներ հանդիպում են Հաղրութի շրջանի անտառներում, Ասկերանի շրջանում հանդիպում է Չանախչի գյուղի անտառտարածքում [1]:

Այգեստան համայնքի տարածաշրջանի (Ասկերանի կենտրոնական մաս) դենդրոֆլորան ընդգրկում են դաշտային թխկին, սովորական կիպրոսը (*Ligustrum vulgare L.*) և ընդարձակ բուսուտներ են առաջացնում անատոլիական մոշենու (*Rubus anatolicus Focke.*) կիսաթփերը: Ենթանտառը հիմնականում կազմում են մոշուտները, հանդիպում են նաև արևելյան խնձորենին, զկեռենին, ցաքին: Անտառը կազմող տեսակներն են՝ տերևառատ թեղին, կովկասյան բոխին, հոնին, հարավային և վրացական ճապկին (*Swida australis Pojark, S. iberica Pojark. ex Grossh*), վրացական կաղնին, բոխատերև ձելկվան (*Zelkova carpinifolia (Pall.)*

K. Koch), առավել շատ են հանդիպում տխլենու և զկեռենու ծառուտները: Բաց լուսավոր տարածքներում հանդիպում է սովորական թզենին, կովկասյան փոշնին, ակացիան (*Robinia pseudoacacia L.*) և արևելյան սոսին (*Platanus orientalis L.*): Սակավաթիվ հանդիպում է նաև սզնի հայկականը (*Crataegus armena Pojark.*):

Ասկերանի շրջանի տարածքի ծառաթփատեսակներից ռելիկտային նշանակություն ունեն սովորական ընկուզենին (*Juglans regia L.),* արևելյան սոսին (*Platanus orientalis L.*), բոխատերև ձելկվան (*Zelkowa carpinifolia (Pall.) C. Koch*), անտառային խաղողը (*Vitis silvestris C.C.Gmel.*), սովորական բաղեղը (*Hedera helix L.)* և այլն:

Աղյուսակ 1

Ասկերանի շրջանի դենդրոֆլորայում ընդգրկված ընտանիքները

Ընտանիքի անվանումը	***Տեսակների թիվը***
1. Աղտորազգիներ – Anacardiaceae	1
2. Արալիազգիներ – Araliaceae	1
3. Բակլազգիներ – Fabaceae	2
4. Դդմազգիներ – Cucurbitaceae	1
5. Դժնիկազգիներ - Rhamnaceae	3
6. Դիոսկորեազգիներ – Dioscoreaceae	1
7. Դրախտավարդազգիներ – Hydrangeaceae	1
8. Ընկուզազգիներ – Juglandaceae	2
9. Թթազգիներ – Moraceae	1
10. Թխկազգիներ – Aceraceae	2
11. Թեղազգիներ – Ulmaceae	3
12. Թունաթափազգիներ – Asclepiadaceae	1
13. Իլենազգիներ – Celastraceae	2
14. Լորենազգիներ – Tiliaceae	2
15. Լեռնաչամիչազգիներ Ephedraceae	1
16. Խաղողազգիներ – Vitaceae	1
17. Ծորենազգիներ – Berberidaceae	1
18. Հաճարազգիներ – Fagaceae	3
19. Հոնազգիներ – Cornaceae	3
20. Ձիթենազգիներ – Oleaceae	4
21. Նոճազգիներ – Cupressaceae	3
22. Նռնազգիներ – Punicaceae	1
23. Սոսազգիներ – Platanaceae	1
24. Վարդազգիներ – Rosaceae	23
25. Տխլազգիներ – Corylaceae	3
26. Ցախակեռասազգիներ – Caprifoliaceae	5
27. Ուռազգիներ – Salicaceae	2
28. Փոշնազգիներ – Celtidaceae	1
29. Փշատազգիներ – Elaeagnaceae	1

Ըստ մեր ուսումնասիրությունների արդյունքների, Ասկերանի շրջանի դենդրոֆլորան ընդգրկում է 76 տեսակի ծառեր, թփեր, կիսաթփեր և լիաններ, որոնք պատկանում են 47 ցեղերի և 29 ընտանիքների:

Գերակշռողը վարդազգիների (*Rosaceae*) ընտանիքն է՝ 11 ցեղ և 23 տեսակ: Ցախակեռասազգիները (*Caprifoliaceae*) ներկայացված են 3 ցեղով և 5 տեսակով, ձիթենազգիները (*Oleaceae*) ներկայացված են 3 ցեղով և 4 տեսակով, բակլազգիները (*Fabaceae*)՝ 2 ցեղով և 2 տեսակով, տխլազգիները (*Corylaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, դժնիկազգիները (*Rhamnaceae)*՝ 2 ցեղով և 3 տեսակով, հոնազգիները (*Cornaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, թեղազգիները (*Ulmaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, ուռազգիները (*Salicaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, հաճարազգիները (*Fagaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, թխկազգիները (*Aceraceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, իլենազգիները (*Celastraceae*)՝1 ցեղով և 2 տեսակով, նոճազգիները (*Cupressaceae*)՝ 1 ցեղով և 3 տեսակով, ընկուզազգիները (*Juglandaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով: Մնացած ընտանիքները ներկայացված են 1 ցեղով և 1 տեսակով (աղյուսակ1):

Ասկերանի շրջանի դենդրոֆլորան հարուստ է արժեքավոր տեսակներով, որոնց փայտանյութը օգտագործվում է որպես վառելիք, շինանյութ: Դենդրոֆլորան հատկապես կարևորվում է վայրի պտղատու ծառաթփատեսակներով:

Այդ նպատակով պետք է իրականացնել տարածքի բուսական պաշարների ընդհանուր գույքագրում և օգտակար բույսերի պաշարների գնահատում, ինչպես նաև կիրառել դրանց պահպանմանը նպատակաուղղված արդյունավետ միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առուշանյան Ռ. Ի., Սովորական շագանակենու կուլտուրաները Լեռնային Ղարաբաղում, ԱրՊՀ Տեղեկագիր, 2004, էջ 80-82:
2. ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը, Երևան, 2015:
3. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, 132 էջ:
4. Гроссгейм А. А. Флора Кавказа. Москва: Азфан, т.1-7, 1939-1967
5. Флора Армении. Ереван: АН Арм. ССР, т. 1 – 11, 1954 – 2009.

Анализ исследований дендрофлоры аскеранской области

Егиян Кнарик
АрГУ, Билогия/Химия, 2-й курс
Научный руководитель:
кандидат сельскохозяйственных наук, доцент М. Цатрян

Резюме

Ключевые слова: *дендрофлора, дерево, куст, лиана, разнообразие, семейство, род*

В работе представлены результаты выполненных исследований относительно дендрофлоры Аскеранской области Республики Арцах. В соответствии с результатами наших исследований, дендрофлора Аскеранской области охватывает 76 видов деревьев, кустов, полукустарников и лиан, которые принадлежат 47 родам и 29 семействам. В настоящее время следует уделять особое внимание проблемам сохранения Арцахской дендрофлоры, которые имеют важное, научное значение.

The Analysis of Dendroflora Studies of Askeran Region

Yeghiyan Knarik
ASU, Biology/Chemistry, 2nd year
Academic Supervisor: M. Tsatryan
Candidate of Agricultural Sciences, Associate Professor

Summary

Key words: *Khnatsakh, dendroflora, tree, bush, liane, variety, family, genus*

The work presents the results of studies on the dendroflora of the Askeran region of Artsakh. According to the results of our studies, the dendroflora of Askeran region includes 76 types of trees, shrubs, semi-shrubs and lianas, which belong to 47 tribes and 29 families. At present, special attention should be paid to the conservation problems of the dendroflora of Artsakh, which are of scientific importance.

Մանկական կերերի սննդային արժեքի և քիմիական բաղադրության վերլուծություն

Պետրոսյան Հասմիկ
«ՎՊՀ» հիմնադրամ, Դեղագործական քիմիա, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ Վ. Հովսեփյան

Հանգուցային բառեր. *կաթնախառնուրդներ, մայրական կաթ, սպիտակուցներ, լակտոզա*

Առողջության պահպանման կարևոր պայմաններից մեկն է երեխայի որակյալ, լիարժեք սնունդը վաղ տարիքում, որը կարող է երաշխավորել երեխայի օրգանիզմի ներդաշնակ զարգացումը, առողջությունը և կայունությունը շրջական միջավայրի վնասակար գործոնների հանդեպ [1]: Մինչև մեկ տարեկան երեխաների հիմնական սնունդը մնում է կաթը, մայրերին խորհուրդ է տրվում շարունակել ըստ պահանջի կրծքով կերակրել երեխաներին մինչև նրանց մեկ տարեկան դառնալը, իսկ եթե մայրը չի կերակրում կրծքով, ապա կերակրել դոնորական կաթով կամ ադապտացված արհեստական կաթնախառնուրդով: Մայրական կաթը կյանքի առաջին ամիսներից երեխայի աճի և զարգացման համար անհրաժեշտ բոլոր սննդանյութերի իդեալական աղբյուրն է: Չնայած կրծքով կերակրման ակնհայտ առավելություններին, շատ երեխաներ տարբեր պատճառներով զրկված են կրծքի կաթ ստանալու հնարավորությունից: Կյանքի առաջին տարում երեխային արհեստական կերակրման համար ապրանքների համարժեք ընտրությունը դեռևս բավականին բարդ խնդիր է, որի հետ բախվում են ինչպես մանկաբույժները, այնպես էլ ծնողները [2]:

Վերջին տվյալները ցույց են տալիս, որ մեծահասակների շատ հիվանդություններ առաջանում են մանկական տարիքում և հիմնականում պայմանավորված են կյանքի առաջին տարում սնվելու բնույթով [3]: Այնուամենայնիվ, որոշներին կրծքով կերակրումը չի բավարարում, կամ էլ խորհուրդ չի տրվում բժշկական նկատառումներով, կամ մայրը չի նախընտրում կրծքով կերակրել երեխային: Նման իրավիճակների համար մշակվել են մանկական կաթնախառնուրդներ: Մանկական կաթնախառնուրդի բաղադրությունը խստորեն կարգավորվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից:

Մայրական կաթի բաղադրության վերաբերյալ կան հսկայական քանակությամբ տվյալներ, որոնք էլ հնարավոր են դարձնում մանկական կաթի խառնուրդների մշակում, որոնք բաղադրությամբ մոտ են մայրական կաթին [3]:

Արհեստական կաթի ընդունելի բաղադրություն ապահովելու համար մասնագետները փորձում են վերարտադրել մայրական կաթի սննդային բաղադրամասերի (սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, վիտամիններ) հարաբերակցությունը: Սակայն արհեստական կաթը մնում է երեխայի օրգանիզմին միանգամայն խորթ, որը սնուցման միջոց է, և միայն այդքանը: Այն չի պաշտպանում երեխային հիվանդություններից, չի խթանում նրա օրգանների և մտավոր ընդունակությունը-

ների զարգացմանը, չի նպաստում մոր և մանկան միջև կապի հաստատմանը [4]: Կաթնախառնուրդը, որը կարելի է ձեռք բերել խանութներից, ենթարկվում է անվտանգության խիստ հսկողության և կարող է առաջարկվել խառը և արհեստական կերակրման համար [5]:

Ուսումնասիրության մեթոդներ: Մանկական կերերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով անցկացվել են էլեկտրոնային հարցումներ: Հարցումը կատարվել է www.survio.com կայքի միջոցով: Հարցմանը մասնակցել են 54 հոգի: Հարցման նպատակն է եղել ստանալ տեղեկատվություն մանկական կերերի կիրառելիության և կարևորության մասին: Ուսումնասիրման են ենթարկվել տարբեր ֆիրմաների 5 կաթնախառնուրդներ: Լակտոզայի քանակությունը կաթնախառնուրդներում որոշվել է ռեֆրակտոմետրիկ եղանակով: Օսլայի որոշումը մանկական կաթնախառնուրդներում իրականացվել է լուսագունաչափական մեթոդով: Կաթի ընդհանուր սպիտակուցի և կազեինի որոշումը կատարելվել է ֆորմալինային եղանակով:

Ուսումնասիրության արդյունքները: Հարցմանը մասնակցել են կերակրող և 8 ամսականից ավելի մեծ երեխա ունեցող մայրերը, որոնց 99 % կարևորել են երեխային կրծքով կերակրելը: Հարցման արդյունքում պարզվեց, որ 55 % բավականին երկար կերակրել են իրենց բալիկներին մայրական կաթով, 27 % կերակրել են մինչև 2 ամսականը, իսկ 10 % ՝ մինչև 8 ամսականը:



Տրամագիր 1. Արհեստական սնուցման անցնելու վերաբերյալ տվյալների վերլուծություն

Կաթնախառնուրդներ ընտրելիս ծնողների 80 %-ը խորհրդակցում է բժիշկների հետ և անցնում արհեստական սնուցման նրանց հսկողության տակ (տրամագիր 1):

Արհեստական կանթանախառնուրդների անցնելուց հետո երեխաների մոտ կարող են նկատվել ալերգիկ ռեակցիաներ, մարսողության խանգարումներ, քնի հետ կապված խնդիրներ: Հարցվողները նշել են, որ միայն 20 % մոտ են նկատվել ալերգիկ ռեակցիաներ: Մարսողության հետ կապված խնդիրների մասին նշել են հարցվածների 33 %:

Հայաստան ներմուծվող կաթնախառնուրդները շատ բազմազան են: Հարցումներից պարզ դարձավ, որ ավելի շատ օգտագործվող կաթնախառնուրդներն են՝ Nan՝ 59 %, Nutrilon՝ 38 %, Nestigen՝ 22 % (տրամագիր 2):



Տրամագիր 2. Առավել օգտագործվող կաթնախառնուրդների վերլուծություն

Այսպիսով ծնողները գիտակցում են մայրական կաթի կարևորությունը և աշխատում են հնարավորին չափ երկար կերակրել իրենց բալիկներին մայրական կաթով:

Շատ հաճախ արհեստական կաթնախառնուրդների անցնելուց հետո երեխաները շատ արագ քաշ են ավելացնում, հնարավոր է, որ դա պայմանավորված լինի մանկական կերերի մեջ օսլայի պարունակությամբ: Մայրական կաթի անբավարարության հետ մեկտեղ մանկական կաթնախառնուրդ նշանակելիս երեխան սովորում է կերին և հրաժարվում է մայրական կաթից, դա պայմանավորված է մանկական կաթնախառնուրդում բարձր ածխաջրերի քանակով, այն քաղցր է և երեխային ավելի է գրավում: Այդ պատճառով էլ մենք փորձեցինք պարզել մանկական կերերում լակտոզայի և օսլայի պարունակությունը: 0-6 ամսականների համար նախատեսված կաթնախառնուրդներում խորհուրդ չի տրվում օսլայի պարունակությունը, քանի որ օսլան քայքայող ամիլազա ֆերմենտը ակտիվանում է կյանքի 3,5-4 ամիսներից: Օսլան, չնայած նպաստում է լավ հագեցմանը, բայց բերում է ստամոքսաղիքային համակարգի կողմից անցանկալի երևույթների:

Մեր ուսումնասիրած ոչ մի կաթնախառնուրդի բաղադրության մեջ նշված չի եղել, որ պարունակում է օսլա: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրված նմուշներից միայն մեկ նմուշում է հայտնաբերվել հետքային քանակով օսլա:

Կաթնախառնուրդներում գլյուկոզայի, ֆրուկտոզայի, սախարոզայի առկայությունը ցանկալի չէ, քանի որ ուժեղացնում են խմորման, գազագոյացման պրոցեսները աղիներում, կարող են նպաստել ալերգիայի զարգացմանը, սովորեցնում են երեխային քաղցր սննդի, որով էլ խանգարում են ինսուլին հորմոնի կարգա-

վորմանը: 0-6 ամսական երեխաների համար նախատեսված կաթնախառնուրդներում լակտոզայի քանակությունը չպետք է լինի ավել ածխաջրերի ընդհանուր քանակի 65 %-ից: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1–ից, բոլոր ուսումնասիրված նմուշներում լակտոզայի քանակությունը համապատասխանել է նորմային և չի գերազանցել 65 % ընդհանուր ածխաջրերի քանակության մեջ:

Աղյուսակ 1.

Լակտոզայի պարունակությունը մանկական կերերում

Մանկական կաթնախառնուրդներ	*Ածխաջրերի ընդհանուր քանակությունը 100 մլ մանկական կաթնախառնուրդում (գ)*	*Լակտոզայի քանակությունը 100 մլ մանկական կաթնախառնուրդում՝ ըստ ուսումնասիրության արդյունքների*	*Լակտոզայի քանակությունը ածխաջրերի ընդհանուր քանակի մեջ %*
Նմուշ 1	21	4,19	20 %
Նմուշ 2	57	4,13	7 %
Նմուշ 3	6.80	4,19	60 %
Նմուշ 4	21.7	4,2	20 %
Նմուշ 5	10.3	4,93	48 %

Կաթի հիմնական սպիտակուցային ֆրակցիաներն են կազեինները (α-կազեիններ, β-կազեիններ) և շիճուկի սպիտակուցները (α-լակտալբումին, β-լակտոգլոբուլին, γ-գլոբուլիններ, լակտոֆերին և այլն): Շիճուկային սպիտակուցների և կազեինների հարաբերությունը մայրական կաթում միջինում կազմում է 60:40 [1]:

Աղյուսակ 2.

Ընդհանուր սպիտակուցի և կազեինի հարաբերկացությունը մանկական կաթնախառնուրդներում

Մանկական կաթնախառնուրդներ	*Ընդհանուր սպիտակուցի քանակությունը 100 մլ մանկական կաթնախառնուրդում՝ ըստ ուսումնասիրության արդյունքների*	*Կազեինի քանակությունը 100 մլ մանկական կաթնախառնուրդում՝ ըստ ուսումնասիրության արդյունքների*	*Սպիտակուց/ կազեին հարաբերությունը*
Նմուշ 1	5,3	4.2	56/44
Նմուշ 2	4,5	3.5	56/44
Նմուշ 3	5,9	4.6	56/44
Նմուշ 4	4,8	3.8	55/45
Նմուշ 5	4,0	3.2	56/44

Այսպիսով ուսումնասիրված բոլոր նմուշները համապատասխանել են նորմային, միայն մեկ նմուշում հայտնաբերվել է մակնիշման մեջ չնշված օսլա: Բոլոր ուսումնասիրված նմուշներում լակտոզայի քանակությունը համապատասխանել է նորմային և չի գերազանցել 65 % ընդհանուր ածխաջրերի քանակության մեջ: Ընդհանուր սպիտակուց կազեին հարաբերակցությունը բոլոր ուսումնասիրված նմուշներում կազմել է միջինը 56/44:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Горбатова К. К. Химия и физика молока, изд. Гиорд, 2004.
2. Просеков А. Ю., Юрьева С. Ю. Технология молочных продуктов детского питания: учебное пособие. Кемеровский технологический институт пищевой промышленности. Кемерово, 2005. - 278 с.
3. Тихомирова Н. А., Шириев Э. А, Шмелев Д. В. Товароведная оценка и экспертиза качества сухих молочных смесей для детского питания. / Государственный социально-гуманитарный университет, 2019, - 290 с., 291 с.
4. Просеков А. Ю., Юрьева С. Ю. Технология молочных продуктов детского питания: учебное пособие. / Кемеровский технологический институт пищевой промышленности. Кемерово, 2005, - 278 с.
5. https://nutrilak.com/article/detskie-smesi-osobennosti-sostava/ (15.01.2023)

Анализ пищевой ценности и химического состава детского питания

Петросян Асмик
ВГУ, Фармацевтическая химия, 4-й курс
Научный руководитель:
кандидат биологических наук, доцент В. Овсепян

Резюме

Ключевые слова. *молочные смеси, материнское молоко, белок, лактоза*

Одним из важных условий сохранения здоровья является качественное полноценное питание ребенка в раннем возрасте, которое может гарантировать гармоничное развитие, здоровье и устойчивость организма ребенка к вредным факторам окружающей среды. Материнское молоко – идеальный источник всех питательных веществ, необходимых для роста и развития ребенка с первых месяцев жизни. Результаты опроса показали, что родители осознают важность материнского молока и стараются как можно дольше кормить своих детей материнским молоком. Во всех исследованных образцах количество лактозы не превышало 65 % от общего количества углеводов, а соотношение общего белка и казеина составляло в среднем 56/44.

Analysis of the Nutritional Value and Chemical Composition of Baby Food

Petrosyan Hasmik
VSU, Pharmaceutical Chemistry, 4th year
Academic Supervisor: V. Hovsepyan,
Candidate of Biological Sciences, Associate Professor

Summary

Kay words. *milk formula, mother's milk, rumen cells, lactose*

One of the important conditions for preserving health is high-quality, full-fledged nutrition of the child at an early age, which guarantee the harmonious development, health and resistance of the child's body to harmful environmental factors. Mother's milk is an ideal source of all nutrients necessary for the growth and development of the child from the first months of life. The results of the survey showed that parents are aware of the importance of mother's milk and try to extend the period of using mother's milk as long as possible. Starch was founded in only one of the samples studied. In all studied samples, the amount of lactose did not exceed 65 % of total carbohydrates, and the ratio of total protein to casein was on average 56/44.

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ЕСТЕСТВОЗНАНИЕ И ГЕОГРАФИЯ

NATURAL SCIENCE AND GEOGRAPHY

Արբանյակային լուսանկարների կիրառումը Գավառագետի էկոհամակարգի ուսումնասիրության գործում

Օհանյան Ռուզաննա
ԳՊՀ, Քարտեզագրություն և կադաստրային գործ, 2-րդ կուրս
Հովհաննիսյան Ադելա
ԳՊՀ, Քարտեզագրություն և կադաստրային գործ, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Լ. Մկրտչյան

Հանգուցային բառեր. *Գավառագետ, արբանյակ, պոյմա, ջրհավաքավազան, Landsat համակարգ, էրոզիոն գործընթացներ*

Երկրագնդի բնակչության թվի աճի հետ մեկտեղ աճում է նաև քաղցրահամ ջրի պահանջարկը: Տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց արդյունաբերության մեջ ջրի պահանջարկը նույնպես մեծանում է: Ջուրը, որպես բնական ռեսուրս, միայն քանակապես է վերականգնվում, իսկ որակապես սպառվում է:

Ջուրը կենսական նշանակություն ունի մարդու համար: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության World Health Organization (WHO), հիվանդությունների 90 %-ը առաջանում են անորակ ջրի օգտագործումից, որն էլ հանգեցնում է տարեկան 3.5 մլն մարդկանց մահվան: Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը բերել է նրան, որ շատ երկրներ հսկայական ծախսեր են կատարում՝ ծովի ջրից թորման միջոցով քաղցրահամ ջուր ստանալու համար:

Նույնիսկ ծորակից հոսող ջուրն արդեն իսկ հագեցած է լինում մեծ քանակությամբ անցանկալի միկրոօրգանիզմներով: Վարակման հնարավոր վայր են համարվում լողավազանը, լճակները, գետերն ու ծովը:

Ներկայումս ջրի որակի, ինչպես նաև պաշարների գնահատման գործում ինտենսիվ կերպով կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաները, մասնավորապես՝ հեռազննման տեխնոլոգիաները և արբանյակային տվյալները: Հեռազննման տեխնոլոգիաների և արբանյակային տվյալների, տարբեր միջավայրերի, մասնավորապես ցամաքային ջրերի էկոլոգիական վիճակի ուսումնասիրման և գնահատման գործում կիրառությունը ունի տասնամյակների պատմություն: Հեռազննումը հնարավորություն է տալիս կրճատել հետազոտությունների հետ կապված ժամանակն ու ծախսերը, ընդարձակել հետազոտության մասշտաբները, ուսումնասիրություններ կատարել հեռավոր և դժվար հասանելի տարածքներում:

Ցամաքային ջրերը, ի տարբերություն օվկիանոսների ջրերի, ունեն ավելի բարդ «օպտիկական կառուցվածք»: Մյուս կարևոր առանձնահատկությունը բնական պայմանների տարբերությունն է, որով նաև պայմանավորվում է այն հանգամանքը, որ հնարավոր չէ մշակել մեկ ունիվերսալ ալգորիթմ, որը կիրառելի կլիներ բոլոր գետերի, նույնիսկ նման պայմաններում գետերի համար: Այդ պայմաններն են ռելիեֆի կառուցվածքը, ծովի մակարդակից բարձրությունը, անթրոպոգեն օբյեկտների մոտիկությունը, գետի խորությունը, մթնոլորտում աերոզոլների կազմը և այլն: Ելնելով դրանից՝ գրեթե յուրաքանչյուր գետի համար պետք է մշակել առանձին ալգորիթմ/մոդել:

Landsat շարքի արբանյակային լուսանկարները Երկրի հեռազննման տարբեր ոլորտներում, այդ թվում ցամաքային ջրերի հեռազննման մեջ ամենաշատ կիրառված արբանյակային լուսանկարներն են: Սա պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

▪ Landsat համակարգը ապահովում է Երկրի հեռազննման անընդմեջ ստացվող տվյալների ամենամեծ ժամանակային շարքը (սկսած 1972 թ.-ից) [10]:

▪ Landsat շարքի արբանյակային նկարներն ունեն շատ լճերի հեռազննման համար ընդունելի տարածական լուծաչափ, նկարները ստացվում են 16 օրյա պարբերականությամբ, տվյալները ստացվում են նաև թերմալ տիրույթում (սկսած Landsat TM-ից (Landsat 4-5)) [10]:

▪ Landsat 8 OLI/TIRS արբանյակային նկարները ունեն ավելի բարձր ազդանշան/աղմուկ հարաբերակցություն (Signal to Noise Ratio – SNR): Սա բարձրացնում է հեռազննման տվյալների վերծանման արդյունավետությունն ու ճշտությունը, մասնավորապես, ջրային օբյեկտների համար, քանի որ, ի տարբերություն ցամաքային օբյեկտների, ջրային օբյեկտներից ճառագայթումը ավելի թույլ է [10]:

Հայաստանում ջրային մարմինների, մասնավորապես գետերի հեռազննումն ունի հարաբերականորեն կարճ պատմություն: Չնայած դրան, այս հետազոտություններում ուսումնասիրվել են այն հիմնական գործոնները, որոնք կարևոր են գետի էկոլոգիական առանձնահատկությունների վերլուծության և գնահատման տեսանկյունից:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է ներկայացնել արբանյակային տվյալների կիրառմամբ Գավառագետի ջրի որակական մի շարք ցուցանիշների և ափագծերի փոփոխության ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտման օբյեկտ – Աշխատանքի հետազոտման օբյեկտն է Գավառագետը, որը սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի հյուսիսային լանջից, 3050 մ բարձրությունից: Գավառագետին են միանում Գեղամա լեռնաշղթայի արևելյան հատվածից սկիզբ առնող Գռիձոր և Գեղարքունիքջուր գետերը և թափվում են Սևանա լիճ: Բացի այս՝ Սարուխան և Գանձակ համայնքներից սկիզբ են առնում ստորգետնյա քաղցրահամ աղբյուրների ջրերով սնվող երկու գետակ, որոնք նույնպես միանում են Գավառագետին: Վերոնշյալ գետերը և Գավառագետը ամբողջությամբ, անցնելով Գեղարքունիք, Լանջաղբույր, Սարուխան, Գանձակ, Կարմիրգյուղ, Գավառ և Նորատուս համայնքներով, ենթարկվում են կենցաղային աղտոտման:

Երկարությունը 50 կմ է, ջրահավաք ավազանը՝ 480 կմ²: Ձմռանը սառցակալում է: Մնումը հիմնականում ստորերկրյա (83 %) է, վարարումը՝ ապրիլ-հունիսին: Տարեկան միջին ծախսը 3, 82 մ³/վ, առավելագույնը՝ 72, 6 մ³/վ (1928-ի ապրիլի 7, Նորատուս գյուղ), հոսքը՝ 120, 6 միլիոն մ³: Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով [1]:

Գավառագետի ջրհավաք ավազանը կազմվում է բազմաթիվ գետակներից: Վերին հոսանքներում վտակներից մի քանիսը հոսում են տրոգային հովիտների միջով: Դուրս գալով հարթավայր՝ գետերը դառնում են դանդաղահոս, առաջաց-

նում են գալարներ և կուտակում ալյուվիալ նստվածքներ: Սևանի մակարդակի իջեցումից հետո գետը գետաբերանի շրջանում մի քանի մետր խորությամբ խրվել է սեփական նստվածքների մեջ:

Գավառագետի վրա առկա է մարդածին գործոնի ինտեսիվ ազդեցությունը: Գետը հիմնականում աղտոտվում է տարաբնակեցման համակարգի կենցաղային հոսքաջրերով: Նույնատիպ աղտոտվածության պայմաններում ձևավորվում է նույնատիպ ջրի որակ: Մանրէաբանական և ջրակենսաբանական մեթոդներով գետի ջրի գնահատումը տալիս է նույն արդյունքը:

Գավառագետի վրա մեծ ազդեցություն են ունեցել Նորատուս և Գավառ համայնքների հոսքաջրերը, որի հետևանքով ջրի որակը եղել է «ցածր որակի»: Հետևաբար Գավառագետում ջրի որակի վերականգնման նպատակով պետք է կատարել ջրհավաք ավազաններում տնտեսական գործունեության հետևանքները նվազեցնող, բացասական ազդեցությունները կանխարգելող գործնական միջոցառումներ: Գավառագետում ջրի որակի պահպանումը հանդիսանում է ներկայիս բնապահպանական հիմնախնդիրներից մեկը, որովհետև կենցաղային, տնտեսական կեղտաջրերը, որոնք հարուստ են օրգանական ու անօրգանական տարբեր նյութերով և առանց որևէ մաքրման լցվում են լիճ, բարենպաստ միջավայր են ստեղծում ծաղկման պատճառ հանդիսացող ցիանոբակտերիաների (կապտականաչ ջրիմուռների) զարգացման համար:

Գավառագետի ջրի, ինչպես նաև Սևանա լիճ թափվող այլ գետերի ջրի որակը պարբերաբար ենթարկվում է հետազոտության: Կառավարության 2011 թ. որոշմամբ հաստատվել են մակերևութային ջրերի որակի նորմերը: Ըստ այդմ՝ գործում է ջրի որակի հետևյալ դասակարգումը՝ «գերազանց», «լավ», «միջակ», «անբավարար», «վատ» (I-V դասեր): Դասերը որոշելու համար հիմք են ծառայում ջրի որակի ցուցանիշները՝ ջերմային ռեժիմը, թթվածնային ռեժիմը, կենսածին տարրերը, հանքայնացումն ու թթվայնությունը, մետաղները, աղտոտիչները, այլ ցուցանիշներ:

2015-2020 թթ. մոնիթորինգի արդյունքները, որոնք ցույց են տալիս, որ Գավառագետի ջրի որակը երբեք առաջին դասի կամ «գերազանց» որակի չի եղել, սակայն Գավառագետի միջին հոսանքում ջրի որակը, ըստ ՀԿԻ-ի (4.03 միավոր), գնահատվել է որպես «լավ», որը ևս տեղավորվում է նորմայի մեջ:

2020 թ. նոյեմբեր ամսին կատարել է հետազոտություն Գավառագետում: Ջրերը փորձաքննության ենք ներկայացրել ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն: Գավառագետի դիտակետերը գտնվում են գետաբերանում և Գոիձոր և Գեղարքունիջուր վտակների միախառնումից ներքև, արդյունքում ջրի որակը գնահատվել է լավ:

Հետազոտության մեթոդները – Հետազոտության մեջ օգտագործվել են Landsat 8 OLI/TIRS բազմասպեկտրյալ արբանյակային լուսանկարները, որը երկրից արձակվել է 2013 թվականի փետրվարի 11-ին [7]:

Landast 8-ը օրական նկարահանում է ավելի քան 700 տեսարան, ինչը հնարավորություն է տալիս ավելի տեսանելի կերպով ուսումնասիրել իրականացվող

փոփոխությունները ժամանակի ընթացքում: Ջերմային ինֆրակարմիր սենսորը (TIRS), որը կառուցվել է ՆԱՍԱ-ի Գոդարդի տիեզերական թռիչքների կենտրոնի կողմից, իրականացնում է ջերմային պատկերների մշակում և կարողանում է օժանդակել այնպիսի ծրագրերի, ինչպիսիք են ջրի կառավարման ու գոլոշացման արագության չափումները: Ջերմային ինֆրակարմիր սենսորի կիզակետային հարթությունն օգտագործում է գալիումի արսենիդի (GaAs) քվանտային ինֆրակարմիր ֆոտոդետեկտորի զանգվածներ, ինչը առաջինն է Landsat 8 ծրագրի համար [8]: Landsat 8 վերգետնյա համակարգը կատարում է երկու հիմնական գործառույթ՝ արբանյակի կառավարում և արբանյակից ուղարկված տվյալների վերլուծություն: Արբանյակների ղեկավարումն ու կառավարումը իրականացվում է Գոդարդի տիեզերական թռիչքների օպերացիոն կենտրոնի (NASA) կողմից:

Landsat 8 արբանյակային լուսանկարահանող սարքի՝ տարբեր ժամանակահատվածներում իրականացված նկարների ուսումնասիրումը հնարավորություն է տալիս հասկանալ Գավառագետի էկոհամակարգի փոփոխությունը 2001-ից 2022 թվականների ընթացքում:

Ընտրվել են 2001-2022 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի համար առկա բոլոր հասանելի Landsat 8 արբանյակային լուսանկարները, որոնք զուրկ են ամպային ծածկույթից կամ առկա է նվազագույն ամպային ծածկույթ: Նշված ժամանակահատվածը ընտրվել է այն պատճառով, քանի որ Հայաստանի Հանրապետությունը 2001 թվականից առաջ չունի բավարար թույլատվելիությամբ արբանյակային լուսանկարներ, որով հնարավորություն կունենայինք ուսումնասիրել Գավառագետի էկոհամակարգում իրականացվող ժամանակագրական փոփոխությունները:

Դաշտային տվյալներ: Արբանյակային նկարների վերծանման արդյունքների ստուգման նպատակով 2022 թվականի նոյեմբերի 19-ին կատարվել են դաշտային հետազոտություններ: Դիտարկելով ութ համայնքներով Գավառագետի գետահունի շրջանը (Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ, Կարմիրգյուղ, Գավառ և Նորատուս)՝ կարող ենք ասել, որ հատկապես աղտոտված է եղել Գավառի և Նորատուսի համայնքներով Գավառագետի անցնող շրջանները, որի պատճառներից մեկը այն է, որ նշված համայնքները գտնվում են գետի ակունքից ավելի հեռու, քան մյուս համայնքները:

Գետի ափագծի փոփոխություն: Գավառագետի ափագիծը ժամանակի ընթացքում կրել է բավականին արտահայտրչ փոփոխություններ, որոնք հատկապես կապված են անթրոպոգեն գործոնների ազդեցության հետ: Գետի ափագծի փոփոխության վերաբերյալ թարմացված արբանյակային տվյալներ կան 2001, 2008, 2010, 2018, 2019, 2020 և 2022 թվականներին:

Սակայն տարվա որոշ ամիսների ամպամածության աստիճանը բավականին շատ է եղել, որի հետևանքով Գավառագետի ափամերձ հատվածներում իրականացվող փոփոխությունները լավ տեսանելի չեն: Այդ իսկ պատճառով ուսումնասիրության համար ընտրվել են միայն տարվա այն ամիսներին իրականացված

արբանյակային լուսանկարները, որտեղ ամպամածության աստիճանը հնարավորինս նվազագույնն է եղել:

2001 թվականին իրականացված արբանյականյին լուսանկարները ուսումնասիրելով՝ նկատում ենք, որ գետի ակունքի հատվածում ջրի հոսքի քանակը ավելի շատ է: Հայտնի է, որ հոսանքի կենդանի ուժը պայմանավորված է ջրի քանակից: Արբանյակային լուսանկարներում երևում է, որ այս ժամանակահատվածում գետի առափնյա շրջանում բուսականությունը համեմատաբար ավելի շատ է, և պոյմայի շրջանը ավելի բարձր է: 2001 թվականին գետի առափնյա հատվածներում շինությունների քանակը ավելի քիչ է, հետևաբար կարող ենք ասել, որ այս ժամանակահատվածում գետի էկոհամակարգի վրա անթրոպոգեն գործոնի ազդեղությունը բավականին քիչ է եղել:

Նկատելի է նաև այն, որ գետի հունի լայնությունը և խորությունը ավելի մեծ է, ինչը փաստում է այն մասին, որ ջրի քանակը ավելի շատ է եղել, հետևաբար էրոզիոն գործընթացները ավելի ակտիվ կերպով են տեղի ունեցել: Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ համայքներում Գավառագետի հունը ավելի նեղ է համեմատած Գավառ, Կարմիրգյուղ և Նորատուս համայնքների հետ, քանի որ վերջիններս գտնվում են ավելի մոտ գետաբերանային հատվածին, և այստեղ ջրի քանակությունը ավելի շատ է, որի հետևանքով Էրոզիոն գործընթացը ավելի ակտիվ է իրականանում: Ինչպես նաև Գավառագետի՝ Սևանա լիճ լցվելու շրջանում ջուրը դուրս է եկել իր հիմնական հունից և թափվել ափամերձ շրջաններ: Այդ իսկ պատճառով այս հատվածում ճահիճների առկայությունը բավականին շատ է:

2007-2008 թվականների արբանյակային լուսանկարներում երևում է, որ Գավառագետի հունի լայնությունը ավելի նվազել է համեմատած 2001 թվականի հետ: Ափամերձ շրջանները էական փոփոխություն չեն կրել, հետևաբար նաև Գավառագետի էկոհամակարգը էական փոփոխությունների չի ենթարկվել, սակայն նկատելի է, որ ափամերձ շրջանների բուսածածկույթը որոշ չափով կրճատվել է:

2010 թվականին Գավառագետի շրջանում նկատելի է պոյմայի իջեցում և հարակից շրջանում կանաչապատ տարածքների նվազում: Ինչպես նաև գետի գետահունի կրճատման հետևանքով առաջացել են տարբեր լայնության հարթակներ, որոնք բաժանված են ելուստներով: Սրանք գետի հովիտի լանջով առաջացրել են գետային դարավանդներ: Դարավանդների կառուցվածքում մասնակցել են նաև ալյուվիալ նստվածքները: Դա ապացուցում է այն, որ գետը ինչ որ մի ժամանակ հոսել է այդ բարձր մակարդակի վրայով, և դարավանդները հանդիսանում են պոյմաներ, որոնք հունի ազդեցությունից ազատվել են նրա խորացման պատճառով:

2018-2019 թվականների արբանյակային լուսանկարներում երևում են էական փոփոխություններ գետի էկոհամակարգում: Այստեղ նկատվում է որոշ վտակների անհետացում: Նկատելի է ջրի քանակության բավականին կրճատումը, որի հետևանք են հանդիսանում Գավառագետը սնուցող վտակներում ջրի հոսքի դադարումը:

Անթրոպոգեն գործոնների ազդեցության մեծացման հետևանքով նկատելի է դառնում Գավառագետում ջրի աստիճանաբար կանաչում, ինչը պայմանավորված է շինությունների թվի աճով, որը նպաստում է գետի ջրի աղտոտմանը: Այս ամենի հետևանքով մի շարք նյութեր, լցվելով Գավառագետ, մեծ ազդեցություն են ունենում ջրի քիմիական կազմի վրա, որի հետևանքով ստեղծվում են բարենպաստ պայմաններ մի շարք բակտերիաների աճի համար: Արդյունքում փոխվում է գետի ողջ էկոհամակարգը:

2020-2022 թվականների արբանյակային լուսանկարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կախված կլիմայական պայմանների որոշակի փոփոխություններից և տեղումների քանակի զգալի նվազումից՝ նկատվում է վտակների էական ցամաքում: Հատկապես այն հատկանշական է Գանձակ, Հացառատ և Սարուխան համայնքներում: Հիմնականում պահպանվել են գետի այն հատվածները, որոնք ունեն ջրի առատ սնուցման աղբյուրներ: Գետաբերանային հատվածը էապես կրճատվել է, և Սևանա լճի ափամերձ շրջանը հետ է նահանջել: Նորատուս համայնքի շրջանում նկատվում է ճահիճների ակտիվ չորացում, ինչի մասին վկայում են արբանյակային լուսանկարներում կանաչապատ տարածքների կրճատումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԳԱԱ, Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, էջ 360-378:
2. Тиквунов В. С. Геоинформатика, Москва, 2005, 480 с.
3. Иванников А. Д., Кулагин В. П., Тихонов А. Н., Цветков В. Я. Геоинформатика, Москва: МАКС Прес, 2001, 349 с.
4. Бердников К. В., Тикунов В. С. Данные, информация, знания в картографии и геоинформатике, изв. рус. геогр. общества, 1992, вып. 4, с. 369-374.
5. Берлянт А. М., Сербенюк С. Н., Тикунов В. С. Принципы и методика использования географических карт для формирования банка данных, Москва: изд-во МГУ 1987, с. 38-47.
6. Берлянт А. М., Геоинформационное картографирование: картография и геоинформатика. Итоги науки и техники, Москва: ВИНИТИ АН СССР, 1991, т. 14, с. 80-117.
7. Кошкарев А.В., Картография и геоинформатика: пути взаимодействия. АН СССР: 1990. N1, с. 27-37.
8. David W. Allen, GIS tutorial for Arc GIS10, Spatial Analysis Workbook 2, ESRI Press. California, 2009, 330 p.
9. Thomas M. Lillesand, Ralph W. Kiefer, Jonathan W. Chipman, Remote Sensing and Image Interpretation, 6th Edition, USA, 2008, 757 p.
10. Th. Blaschke, S. Lang, G.Hay, Object-Based Image Analysis, Spatial Concepts for Knowledge-Driven Remote Sensing Applications, Springer, 2008, 817 p.
11. www.esri.com

Применение спутниковых снимков в изучении экосистемы провинции

Оганян Рузанна
ГГУ, Картография и кадастровые работы, 2-й курс
Оганесян Адела
ГГУ, Картография и кадастровые работы, 2-й курс
Научный руководитель: Л. Мкртчян

Резюме

Ключевые слова: *спутник, пойма, водосбор, система Landsat, эрозионные процессы*

В статье представлены возможности спутникового дистанционного зондирования при изучении экологических проблем Гаварагета с целью изучения отдельных факторов. Исследования Гаварагета в 2001-2022 годах показывают, что река претерпела значительные изменения. Спутниковые фотографии дают возможность досконально сопоставить хронологические изменения в реке.

При изучении спутниковых снимков становится ясно, что в прошлом климатические условия, а также обильные осадки способствовали обильному питанию реки, но в настоящее время происходит обратный процесс. Строительные процессы, проводившиеся в прибрежных районах реки, также оказали значительное влияние на экосистему реки.

Выраженная корреляция между данными, полученными в результате дешифрирования спутниковых фотографий, и натурными измерениями показывает, что по данным, использованным для дешифрирования фотографий, можно изучать пространственно-временные изменения Гаварагета и делать качественную оценку экологического состояния. Изменения, внесенные за период, и сравнение водного баланса реки показывают, что изменение русла реки находится в прямой зависимости от изменения водного баланса реки. С использованием спутниковых фотографий можно получить количественную картину изменений русла реки, направления и степени изменений с наибольшими изменениями.

Application of Satellite Images in the Study of the Province Ecosystem

Ohanyan Ruzanna
GSU, Cartography and Cadastral Works, 2nd year
Hovhannisyan Adela
GSU, Cartography and Cadastral Works, 2nd year
Academic Supervisor: L. Mkrtchyan

Summary

Key words: *satellite, floodplain, basin, Landsat system, erosion processes*

The article explores the potential of satellite remote sensing in studying the ecological challenges faced by the Gavaraget River, with a focus on examining individual contributing factors. Research conducted on Gavaraget from 2001 to 2022 reveals that the river has undergone significant changes. Satellite photos provide an opportunity to thoroughly compare the chronological changes in the river.

When studying the satellite photos, it becomes clear that in the past the climatic conditions as well as abundant rainfall contributed to the feeding of the river with abundant water, but currently the opposite process is taking place. The construction processes carried out in the coastal areas of the river also had a significant impact on the ecosystem of the river.

The clear correlation between the data obtained as a result of the decoding of satellite photos and the field measurements shows that it is possible to study the spatiotemporal changes of Gavaraget and conduct a qualitative evaluation of its ecological condition with the data used for decoding the photographs. Analysis of the riverbed of Gavaraget from Landsat satellite imagery spanning 2001 to 2022 reveals that changes in the riverbed correlate directly with alterations in the river´s water balance. With the use of satellite photos, it is possible to acquire a quantitative understanding of the changes in the riverbed, including the direction, extent, and magnitude of the most significant alterations.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ПЕДАГОГИКА

PEDAGOGY

Գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրումը որպես գեղագիտական դաստիարակության միջոց տարրական դասարաններում

Ավետիսյան Անիկ
ԳՊՀ, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
Գիտական ղեկավար՝ Օ. Ղազարյան

Հանգուցային բառեր. *տարրական դպրոց, մայրենի, գեղագիտական դաստիարակություն, ներդաշնակ զարգացում, գեղագիտական ընկալում*

Հայաստանի Հանրապետությունում արդի սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական զարգացումները նոր խնդիրներ են առաջադրում կրթական համակարգի առջև: Հանրակրթության ոլորտում մշտապես իրականացվում են բարեփոխումներ, ստեղծվում կրթական նոր փաստաթղթեր, որոնցով փորձ է արվում դպրոցը մոտեցնել կյանքին և պատրաստել կյանքի ցանկացած փոփոխությանը դիմակայող, ճկուն մտածելակերպ ու գործելակերպ ունեցող, ինչպես նաև աշխարհը գեղագիտորեն ընկալող անհատ: Գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով: Այս հարցը ներկայումս խիստ արդիական է:

Հետազոտության նպատակը կրտսեր դպրոցում մայրենիի դասերին գեղագիտական դաստիարակության իրականացման առանձնահատկությունների և արդյունավետության, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների ընձեռած հնարավորությունների ուսումնասիրումն է: Գիտական նորույթը գեղագիտական դաստիարակության դերի նորովի ուսումնասիրումն է կրտսեր դպրոցում մայրենիի դասերին:

Հոդվածի հիմնախնդիրն է բացահայտել և վերլուծել մայրենիի դասավանդման գործընթացում գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները՝ համաձայն ՀՀ պետական չափորոշչի:

Հանրակրթական պետական չափորոշիչը սահմանում է կրթության բովանդակությունը, որն էլ ներկայացվում է ուսումնական բնագավառներով, իսկ յուրաքանչյուր ուսումնական բնագավառ իր մեջ ներառում է կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչները.

1. գիտելիքների համակարգ,
2. կարողություններ և հմտություններ՝ ճանաչողական-տրամաբանական,

հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական և ինքնուրույն գործունեություն,

3. արժեքային համակարգ [5]:

Կրթության բնագավառի այս բաղադրիչները փոխկապակցված են. գիտելիքի հիման վրա պետք է ձևավորվեն և զարգանան որոշակի կարողություններ և հմտություններ, պիտի շեշտադրվի և կարևորվի անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը: Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացին, ով գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն [3, 169]:

Ներդաշնակ զարգացման կարևոր հատկանիշներից մեկն էլ գեղագիտական հայեցակետի ամրակայումն ու դաստիարակությունն է: Աշխարհը գեղագիտորեն ընկալող մարդը իրերը, երևույթները, մարդկային փոխհարաբերությունները չափում է գեղեցիկի, վեհի տեսանկյունից: Գեղագիտական զարգացում ունեցող մարդը ամենուրեք՝ բնության մեջ, արվեստում, աշխատանքում, զանազանում է գեղեցիկը տգեղից, վեհը՝ ստորից: Նրա մեջ ձևավորվում է կյանքի տարբեր բնագավառներում գեղագիտական արժեքները վեր հանելու և գնահատելու միտումը: Բացի դրանից՝ աշխարհը գեղեցիկի դիրքերից չափող մարդը նաև ազգային մշակութային ժառանգության կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողն է: Ազգային մշակույթի արժեքներով մեծացած անձը աչքի է ընկնում ժամանակակից արվեստի դրսևորումների բարձրաճաշակ զգացողությամբ և տեղին գնահատմամբ: Սովորողների՝ հատկապես տարրական դպրոցի աշակերտների գեղագիտական դաստիարակության գործում անգնահատելի է բնության դերը: Չէ՞ որ բնության պատկերները միշտ թարմ են, բնական: Բնությունը գեղեցկության իսկական աղբյուր է: Կ. Դ. Ուշինսկին գտնում է, որ երիտասարդ մարդու հոգու վրա ունեցած բնության ազդեցության ուժի հետ մանկավարժն անգամ չի կարող մրցել: Բնությունը ներգործում է երեխաների հոգու վրա, ազնվացնում նրանց զգացմունքները, ձևավորում նրանց հոգևոր կերպարը: Այն օգնում է զարգացնելու նրանց գեղագիտական զգացմունքները, դիտունակությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու ունակությունները: Ուրեմն, ուսուցչի խնդիրը պետք է լինի ամեն կերպ օգտագործել սովորողների հնարավորությունները, որոնք ընձեռված են բնությունից: Այդ նպատակով ուսուցիչը հաճախակի կազմակերպում է էքսկուրսիաներ, զբոսանքներ և պահանջում իր սաներից գրավոր նկարագրել իրենց դիտած ու զննած երևույթներն ու օբյեկտները և հաշվետվությամբ հանդես գալ դասղեկի ժամին [1, 371]:

Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում մայրենի լեզվի միասնացված դասընթացում մեծ հնարավորություններ կան ազգային մշակույթը սովորողներին տեղ հասցնելու, նրանց գեղագիտական ընկալումը ձևավորելու և

զարգացնելու առումով: Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում սկսվում է տարրական դասարաններում լեզվի, գրական ստեղծագործությունների ուսուցման ընթացքում, ինչպես նաև կերպարվեստի և երաժշտության դասերին: Այս աշխատանքի արդյունքում երեխաները գործնականորեն ծանոթանում են արվեստի տարբեր տեսակներին, ինչը հանգեցնում է գեղագիտական ընկալմանը և պարզագույն գեղագիտական դատողություններ կատարելուն: Նշված խնդրի լուծման գործում մեծ դեր են խաղում հենց ուսուցչի օրինակը և գեղարվեստական պատրաստվածությունը: Նա պետք է տիրապետի գեղեցիկ գրելու, բանաստեղծությունների ու պատմվածքների արտահայտիչ և հուզական ընթերցանության ունակությանը, կարողանա հմտորեն անցկացնել դասերը: Ուսուցչի գեղարվեստական պատրաստվածությունը և արվեստի տարբեր ձևերի իմացությունը երեխաների մոտ ոչ միայն ծնում են ներքին հակասություն իրենց գեղագիտական զարգացման իրական և անհրաժեշտ աստիճանների միջև, այլև առաջացնում արվեստի հետ շփման պահանջմունք:

Ռուս նկարիչ և մանկավարժ Մ. Բ. Նեմենսկին գտնում է, որ գեղագիտական դաստիարակության համակարգը նախ և առաջ պետք է լինի միասնական, միավորի բոլոր առարկաները, արտադասարանական պարապմունքները, դպրոցականի հասարակական ողջ կյանքը, որտեղ պարապմունքի յուրաքանչյուր տեսակ գեղագիտական մշակույթի և անձնավորության ձևավորման գործում ունի իր խնդիրը [2, 160]: Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում անհրաժեշտ է լայնորեն կիրառել բանաստեղծությունները, երգերը անգիր սերտելու, լավագույն նկարիչների նկարների վերարտադրությունները ցուցադրելու և այլ մեթոդներ: Գեղագիտական պահանջմունքների զարգացման և ամրապնդման դաստիարակչական աշխատանքը, ընկալման ձգտումը ավելի բարձր մակարդակով շարունակվում և զարգանում են նաև հաջորդող դասարաններում:

Սուխոմլինսկին մշակել է «դաստիարակությունը գեղեցկությամբ» համալիր գեղագիտական ծրագիրը: Ըստ նրա՝ գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարստություն, բարություն, սրտացավություն և դրա հիման վրա իր մեջ արմատավորելու գեղեցիկը: Գեղեցկության ըմբռնումը, իմաստավորումը գեղագիտական կրթության հիմքն է, առանցքը, գեղեցիկի ընկալումից և ճանաչումից է սկսվում գեղագիտական մշակույթի դաստիարակումը, զգացմունքների դաստիարակությունը: Մենք ձգտում ենք, որ երեխայի հոգևոր կյանքի բոլոր ոլորտների՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքի, ստեղծագործության, հասարակական գործունեության, բարոյագեղագիտական հարաբերությունների, բարեկամության, սիրո միջով կարմիր թելի նման անցնի միտքը, թե գեղեցկությունը հարկավոր է գնահատել և պահպանել [4, 473]:

Սովորողների մոտ գեղագիտական պատկերացումների, ըմբռնումների ու

ճաշակի ձևավորումը բավականին բարդ մանկավարժական խնդիր է: Գեղագիտական պարզագույն պատկերացումներն ու դատողությունները ձևավորվում են արդեն իսկ տարրական դասարաններում: Հայտնի է, որ գեղագիտական դաստիարակությունն անձի կայացման, երեխայի զարգացման կարևորագույն բաղադրիչներից է: Գեղեցիկի ըմբռնման, արվեստից հաճույք ստանալու ունակության դաստիարակումը, առանց որի անձը չի կարող համարվել համակողմանիորեն զարգացած, մանկավարժական գործընթացի նպատակներից է: Զարգացման բոլոր փուլերում երեխան յուրացնում է շրջապատող աշխարհը նաև նրա գեղեցկության, գեղագիտության տեսանկյունից: Շատ բան կախված է նրանից, թե այդ ճանապարհին որքանով են նրան օգնում մեծահասակները:

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում: Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոցն է, քանի դեռևս սովորողները չեն անցնում առանձին մասնագիտական առարկաներ: Հետևաբար՝ ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների, լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում: Գեղագիտական դաստիարակության իրականացման նպատակով հատկացված դասաժամերը կրտսեր դպրոցում որքան էլ արդյունավետ օգտագործվեն, միևնույն է, չեն կարող լիովին բավարարել այս պահանջները: Կրտսեր դպրոցականների ուսուցման արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստում է ուսումնական նյութի մատուցման բազմազանությունը, որը ծառայում է ոչ միայն գիտելիքներ և կարողություններ ձեռք բերելուն, այլև աշակերտների մտավոր, հուզական, կամային և գեղագիտական բազմակողմանի գործունեությանը: Այսօր առանց վարանելու կարելի է ասել, որ «Այբբենարանը» և «Մայրենի–1», «Մայրենի–2», «Մայրենի–3», «Մայրենի–4» դասագրքերը, ինքնուրույն ընթերցանության նյութերի ժողովածուները էական դեր կարող են խաղալ ուսուցման արդյունավետության բարձրացման գործում, գրքի նկատմամբ հետաքրքրասիրության բարձրացման և գիտելիքների ձեռքբերման ու ոչ ստանդարտ իրավիճակներում գործադրելու իրողությունների ձևավորման ու զարգացման, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումն ապահովելու, բարոյական, հայրենասիրական, գեղագիտական դաստիարակություն իրականացնելու գործում:

Փորձելով երեխաների ընդունակությունները բազմաբնույթ գեղարվեստական ստեղծագործություններում՝ կարող ենք զարգացնել ոչ միայն բնատուր ընդունակությունները, այլև երեխայի այն կողմերը, որոնք շեշտված կերպով չեն արտահայտվում: Երեխաների ստեղծագործական ընդունակությունների զարգացման հիմնախնդիրը հասարակության զարգացման ժամանակակից պայման-

ներում խիստ կարևոր է և հետաքրքրություն է ներկայացնում մանկավարժական գիտության համար: Այդ հիմնախնդիրը հատուկ հետաքրքրություն է առաջացնում երեխաների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման բնագավառում, քանի որ հենց այստեղ է անհրաժեշտ ստեղծել առավել բարենպաստ պայմաններ ստեղծագործական ընդունակությունների զարգացման համար: Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ հանրակրթական դպրոցում դասավանդվող հատկապես մայրենի, կերպարվեստ, տեխնոլոգիա առարկաների դասերին հատուկ կազմակերպված ծրագրի շնորհիվ ավելի արդյունավետ է դառնում կրտսեր դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այն ավելի արդյունավետ է ընթանում նաև արտադպրոցական մշակութային հաստատություններում, որտեղ երեխաները հնարավորություն ունեն զբաղվելու ստեղծագործական գործունեության այնպիսի տեսակներով, ինչպիսիք են կերպարվեստը, պարարվեստը, երաժշտությունը և այլն: Երկրորդ՝ այստեղ հնարավորություն կա կիրառելու ուսուցման ազատ ձևեր՝ դիդակտիկ խաղեր, խաղ-բեմականացումներ, ազատ պարեր և այլն: Երրորդ՝ յուրաքանչյուր երեխայի ուսուցման ծրագիրը պետք է լինի ավելի անհատականացված, հետաքրքրական, ինչը կօգնի նրան ավելի լավ բացահայտվել ստեղծագործական դրսևորման մեջ: Կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքների զարգացմանը մեծապես նպաստում են «Մայրենիի» դասագրքերում զետեղված շատ ստեղծագործություններ: Կարելի է ընդգծել հատկապես հետևյալ ստեղծագործությունները. 2-րդ դասարանում՝ Պատվական Խաչատրյանի «Աշուն տատիկը», Հովհ. Թումանյանի «Աշուն», «Տերևաթափ», «Գետակը», «Ծաղիկները», «Մի բաց նամակ ամենքին», «Կաքավի գովքը», Գեղամ Սարյանի «Փափուկ ձյուն», Ղ. Աղայանի «Աշուն», «Ամիսներ և չորս եղանակ», «Այդ ե՞րբ է լինում», «Ձմեռ», Նիկոլայ Սլադկովի «Ինչու է նոյեմբերը գույնզգույն», Համո Սահյանի «Գարուն», Վաչագան Սարգսյանի «Արևն ու ծիածանը», Նանսեն Միքայելյանի «Ո՞ւմ ծառն է» և բազմաթիվ այլ բանաստեղծություններ, որոնցից շատերը երգի են վերածված, ինչը նպաստում է տարրական դասարաններում միջառարկայական կապերի ստեղծմանը գրականության և երաժշտության միջև: Վերոնշյալ գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրությունը կարող ենք իրականացնել բնության գրկում՝ էքսկուրսիաների կազմակերպման միջոցով, ինչը հնարավորություն կտա զարգացնել երեխաների ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու հմտությունները:

Դասագրքում ուրույն տեղ են գրավում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները՝ առածները, ասացվածքները, դարձվածքները, հանելուկները, սուտասելուկներն ու շուտասելուկները, խնդուկները, որոնք ևս նպաստում են գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

4-րդ դասարանի մայրենիի գրքում հանդիպում ենք «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները», «Արամ Խաչատրյանի հետ», «Սարյանի նկարներում շողշողում է

Հայաստանի հավերժությունը» ստեղծագործությունները: Այս ստեղծագործությունների ուսուցման ընթացքում կարող ենք միջառարկայական կապ հաստատել կերպարվեստի և երաժշտության հետ, գեղարվեստական ընթերցումը զուգորդել երաժշտության հետ: Գեղագիտական դաստիարակության տեսանկյունից ուրույն հետաքրքրություն են ներկայացնում «Ինքնուրույն ընթերցանության նյութերի» ժողովածուները, որոնց ուսումնասիրումը նախատեսվում է 2-րդից 4-րդ դասարաններում: 2-րդ դասարանի «Ինքնուրույն ընթերցանության նյութերի» ձեռնարկում հիմնականում զետեղված են փոքրածավալ ստեղծագործություններ, որոնք ունեն ինչպես ճանաչողական, այնպես էլ՝ գեղագիտական նշանակություն:

3-րդ դասարանի «Ինքնուրույն ընթերցանության նյութերի» ձեռնարկում ներկայացվում են Մեր հայրենիք, Մարդու գործերն ու արարքները, Տարվա եղանակները, Հայ մանկագիրների պատկերասրահ, Հետաքրքիր աշխարհ, Յոթ առակ, Աշխարհի ժողովրդական հեքիաթները թեմատիկ խմբերը, որոնցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է գեղագիտական դաստիարակության, գեղարվեստական ճաշակի ձևավորման յուրօրինակ միջոց:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի 4-րդ դասարանի «Ինքնուրույն ընթերցանության նյութերի» ժողովածուն, որը հնարավորություն է տալիս ծանոթանալ ազգային և համամարդկային մշակութային ժառանգությանը: Ձեռնարկում տեղ են գտել մենախոսություններ և երկխոսություններ, գիտահանրամատչելի և նկարագրական խոսքի նմուշներ, գեղարվեստական վավերագրության տեսակներ՝ հիմնականում՝ հուշեր: Այս բազմազան նմուշները սովորողների առջև բացում են երաժշտության, կերպարվեստի, քանդակագործության, ճարտարապետության, կինոյի, թատրոնի, խոսքարվեստի դռները: Ձեռնարկի առաջին թեմատիկ խմբում ներկայացվում է Կոմիտաս վարդապետի («Լոկ ձայնի համար համարվեց նա սան»), Ալեքսանդր Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Շառլ Ազնավուրի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, Լյուդվիգ Վան Բեթհովենի կյանքը և ստեղծագործությունը, որը զուգորդվում է համապատասխան երաժշտության ունկնդրման հետ: Երկրորդ թեմատիկ խումբը նվիրվում է կերպարվեստի ականավոր ներկայացուցիչների կյանքին և գործունեությանը՝ Թորոս Ռոսլին, Հովհաննես Այվազովսկի, Մարտիրոս Սարյան, Մինաս Ավետիսյան, Լեոնարդո դա Վինչի: Այս ընթացքում սովորողները ծանոթանում են ոչ միայն նրանց կյանքին և գործունեությանը, այլև ուսումնասիրում են նրանց ստեղծագործությունները: Երրորդ թեմատիկ խումբը նվիրվում է նշանավոր ճարտարապետների կյանքի և գործունեության ներկայացմանը՝ Մանուել, Տրդատ, Մոմիկ, Ալեքսանդր Թամանյան, Երվանդ Քոչար, Արա Շիրազ: Չորրորդ թեմատիկ խումբը բացահայտում է կինոյի և թատրոնի նշանավոր ներկայացուցիչներին՝ Համո Բեկնազարյան, Միհեր (Ֆրունզիկ) Մկրտչյան, Սոս Սարգսյան, Լեոնիդ Ենգիբարյան, Չարլի Չապլին: Վերջին՝ հինգերորդ թեմատիկ խմբում ներկայացվում են Վազգեն 1-ին կաթողիկոսի, Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Վիլյամ Սարո-

յանի, Ալեքսանդր Պուշկինի կյանքը և ստեղծագործությունները: «Մայրենիի» դասագրքերում լայն տեղ են գրավում նաև հայրենիքին ու մայրենի լեզվին նվիրված գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք գեղեցիկի, վեհի, հերոսականի գեղագիտական զգացմունքներ են առաջացնում կրտսեր դպրոցականների մեջ: Հայրենիքի և ազգի գաղափարը անբաժանելի է մայրենի լեզուն սիրելու և պահպանելու գաղափարից, դա արտացոլված է ազգապահպան մայրենի լեզվին նվիրված բազմաթիվ բանաստեղծություններում: Կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքների զարգացմանը մեծապես նպաստում են գեղարվեստական արձակ երկերը, հեքիաթները, որոնք հանձնարարվում են նաև արտադասարանական ընթերցանության համար:

Այսպիսով, ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, կարող ենք նշել, որ մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք բազմագույն հատկանիշների դաստիարակում և դրանում իրենց ուրույն տեղն ունեն Մայրենիի դասագրքերն ու Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկները:

Դպրոցում կատարված ուսումնասիրությունների արդյունքում նկատեցինք, որ մայրենի լեզվի դասավանդման ընթացքում մեծ տեղ են զբաղեցնում զրույցները, բնագրի ընթերցանությունը, կարդալու և պատմելու տարբեր տեսակների կիրառման կարողությունների զարգացումը: Որոշ դեպքերում գերակշռում են ընթերցանության գործընթացին ուղղված աշխատանքները, և բնագրի շուրջ տարվող վերլուծական, համադրական աշխատանքները, սակայն դրանց կապը այլ առարկաների կամ թեմաների հետ անտեսվում են: Դասավանդման գործընթացում բավարար չափով ուշադրություն չի դարձվում գեղագիտական դաստիարակության իրականացմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, գեղարվեստական բնագրերը երբեմն ծառայում են միայն որպես ընթերցանության նյութ և չի բացահայտվում, մեկնաբանվում դրա գեղագիտական արժեքը, հազվադեպ են հանդիպում դասեր, որոնց ընթացքում կիրառվեն միջառարկայական կապեր, գեղարվեստական ստեղծագործությունները զուգակցվեն երաժշտության կամ կերպարվեստի հետ, քիչ են դասերը, որոնք անցկացվում են բնության գրկում, որոնց շրջանակներում կազմակերպվում են էքսկուրսիաներ: Այսպիսի դասերը չեն ապահովում երեխաների բազմակողմանի զարգացումը, չեն նպաստում նրանց գեղագիտական դաստիարակության և ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը:

Մեր կողմից նկատված խնդիրների առավել հիմնավոր բացահայտման նպատակով իրականացրել ենք հարցում, որին մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների տարրական դասարանների 8 դասվար: Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքները:

1. Կարևոր համարո՞ւմ եք մարդու գեղագիտական դաստիարակությունը:



Գծապատկեր 1.

Բոլոր հարցվողները՝ 100 %-ը, նշում են, որ մայրենիի դասավանդման գործընթացում կարևորում են գեղագիտական դաստիարակության դերը,

- քանի որ դրանք հնարավորություն են տալիս նյութը ճիշտ ընկալել և հասկանալ,
- քանի որ նպաստում են մարդու հուզազգացմունքային ոլորտի զարգացմանը,
- նպաստում են գեղեցիկն ընկալելուն, զգալուն և գնահատելուն,
- քանի որ հնարավորություն է տալիս ճանաչել բնությունն ու հասարակությունը,
- քանի որ ձևավորում է գեղագիտական մշակույթ (ճաշակ, իդեալ, գեղեցիկը գնահատելու կարողություն և ներդաշնակություն):

2. Ո՞ր հասակից և ինչի՞ց պետք է սկսել անձի գեղագիտական դաստիարակությունը:

Հարցին ի պատասխան ուսուցիչները նշել են, որ գրեթե բոլոր տարիքներում էլ կարող ենք իրականացնել գեղագիտական դաստիարակություն, և այն միշտ էլ կարևոր է:

- Գեղագիտաական դաստիարակությունը պետք է սկսել բոլոր հասակներում, սակայն շուտ սկսելու դեպքում ավելի արդյունավետ է լինում:
- Ծննդյան 1-ին օրվանից սկսած՝ օրորոցայինից մինչև սենյակի կահավորում,
- Փոքր հասակից, երբ ձևավորվում է անհատականություն, մշակույթ, գեղեցիկն ու տգեղը տարբերելու, գնահատելու ունակություն:

3. Դժվարությունների հանդիպո՞ւմ եք մայրենիի դասերին գեղագիտական դաստիարակության իրականացման գործընթացում:



Գծապատկեր 2.

4. Հարցվողների 45 %-ի կարծիքով գեղագիտական դաստիարակության զարգացման գործընթացում հանդիպում է դժվարությունների, 35 %-ի կարծիքով՝ մասամբ են դժվարություններ նկատվում, իսկ 20 %-ի կարծիքով այդ գործընթացում դժվարությունների չի հանդիպում: Այն հարցին, թե ի՞նչ դժվարություններ կան, տրվել են հետևյալ պատասխանները.

- Քանի որ երեխաների գեղագիտական ճաշակները տարբեր են, ուստի դժվարությունները բխում են այդտեղից:
- Ձգտում են զարգացնել գեղեցիկի զգացումը, ձևավորել առողջ գեղագիտական ճաշակ:
- Մայրենիի դասերին հանդիպած 1-ին դժվարությունը աշակերտների արդեն իսկ ունեցած պատկերացումն է գեղեցիկի նկատմամբ: Սակայն տարրական դասարաններում այն ձևավորելն ավելի հեշտ է և արդյունավետ:

5. Կարևո՞ր է արդյոք գեղագիտական դաստիարակության զարգացումը անձի որակական հատկանիշների ձևավորման գործում:



Գծապատկեր 3.

Բոլոր հարցվողների կարծիքով գեղագիտական դաստիարակության զարգացումը կարևոր նշանակություն ունի անձի որակական հատկանիշների ձևավորման գործում:

«Ի՞նչ հատկանիշներ են ձևավորվում գեղագիտական դաստիարակության միջոցով» հարցին տրվել են հետևյալ պատասխանները.

- նպաստում է դասի զարգացնող և կրթական նպատակների ավելի արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև անհատի ընդհանուր զարգացմանը,
- դասն ընթանում է առավել հետաքրքիր,
- ապահովում է հուզական զգացողություններ, որոնք ավելի մատչելի և պատկերավոր են դարձնում դասանյութը,
- զարգացնում են բազմաբնույթ մտածողությունը,
- ձևավորվում են մարդկային փոխհարաբերությունների կարգավորման հատկանիշներ,
- բարոյականի, ինտելեկտուալի, գեղեցիկի, բարու փոխհարաբերություններ և հոգևոր աշխարհի լիակատար ներդաշնակություն,
- երբ երեխան ներգրավվում է ակտիվ ստեղծագործական գործունեության մեջ, սովորում է սեփական ձեռքերով ստեղծել գեղեցիկը:

6. Ձեր կարծիքով ի՞նչն է ազդում անձի գեղագիտական դաստիարակության վրա:

- Նկարելը, հեքիաթներ հորինելը, պլաստիլինից քանդակելը, պարելը, երգելը, բանաստեղծություններ արտասանելը,
- Երբ ուսուցչի կողմից կազմակերպվում են թատերական ներկայացումներ, համերգներ, ցուցահանդեսներ, դրանք անպայման ազդում են անձի դաստիարակության վրա,
- Առաջինն ազդում է ժառանգականության գործոնը, ընտանիքի բարոյական վիճակը, հաճախակի կազմակերպվող միջոցառումները, ժամանցի վայրերը և ուսուցիչը:

7. Հանրակրթական չափորոշիչը, տարրական դպրոցի դասագրքերն ու մեթոդական նյութերը նպաստո՞ւմ են անձի գեղագիտական զարգացմանը:

- Նշվածներից յուրաքանչյուրն էլ նպաստում են անձի գեղագիտական զարգացմանը, սակայն ամեն բան կապված է ուսուցչի հմտություններից և վարպետությունից;
- Այո, տարրական դպրոցի և՛ դասագրքերը, և՛ մեթոդական նյութերը նպաստում են, քանի որ դասագրքերը լի են գեղեցիկը տեսնելու և գնահատելու նկարներով:

8. Նկարագրե՛ք մայրենիի դասավանդման գործընթացում արդյունավետ իրականացված գեղագիտական դաստիարակությանը միտված դասի մեկ օրինակ;

- «Ո՞վ է մեզնից գեղեցիկը», «Կապույտ տերևներ», «Եղեգնը», Հ. Թումանյանի «Աշուն», «Ամիսներ և չորս եղանակ»:

Այստեղ նկատում ենք, որ հարցմանը մասնակցած միայն մեկ ուսուցիչ է նշում կոնկրետ դասերի վերնագրեր, որոնց միջոցով իրականացրել է գեղագիտական դաստիարակություն: Մյուս ուսուցիչները խուսափում են պատասխանելուց, ինչը հաստատում է մեր կողմից առաջ քաշված այն վարկածը, որ գեղարվեստա-

կան բնագրերը հանդես են գալիս որպես պարզապես ընթերցանության նյութ, և անտեսվում է գեղագիտական արժեքը:

9. Մայրենիի դասավանդման ընթացքում ո՞ր թեմաներն են միտված գեղագիտական դաստիարակության իրականացմանը:

- «Ոսկեծամիկ աշուն»
- «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»
- «Տեսնես լա՞վ է, թե՞վատ»
- «Իմ խաղաղ տունն ու ընտանիքը»
- «Մեր բարեկամ կենդանիները»:

10. Ի՞նչ մեթոդներ եք կիրառում գեղագիտական դաստիարակության իրականացման արդյունավետության ողղությամբ:

- Մտագրոհ
- Բացատրական ընթերցանություն
- Վենի դիագրամ
- Քառաբաժան:

Այսպիսով, ամփոփելով ուսուցիչների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, կարող ենք փաստել, որ ուսուցիչները կարևորում են գեղագիտական դաստիարակության ձևավորման ու զարգացման անհրաժեշտությունը տարրական դպրոցում, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովումը, սակայն այդ գործընթացում արդյունավետության մակարդակն այնքան էլ բարձր չէ:

Գեղագիտական դաստիարակությունը կարևոր տեղ է գրավում կրտսեր դպրոցում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգում, քանի որ դրանով է պայմանավորված անհատի գեղագիտական որակների, նրա էական ուժերի, հոգևոր պահանջմունքների, բարոյական իդեալների, անձնային և հասարակական պատկերացումների, աշխարհայացքի զարգացմանը: Դաստիարակչական նշանակություն ունեն և՛ բնությունը, և՛ աշխատանքը, և՛ շրջապատող իրականությունը՝ կենցաղը, ընտանիքը, միջանձնային հարաբերությունները, այն ամենը, ինչը կարող է գեղեցիկ լինել: Միայն նպատակաուղղված մանկավարժական գործունեության ազդեցությունը կարող է երեխաներին ընդգրկել տարբեր տեսակի գեղարվեստական ստեղծագործական գործունեության մեջ և նպաստել նրանց զգայական ոլորտի զարգացմանը, ապահովել գեղագիտական երևույթների խոր ընկալումն ու գնահատումը:

Վերոնշյալ խնդիրների լուծման, նկատված դժվարությունների հաղթահարման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. Հենվելով գեղագիտական դաստիարակության մշակված ծրագրերի վրա, անհրաժեշտ է շեշտադրել տարրական դպրոցում անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործընթացը:

2. Տարրական դպրոցում մայրենիի դասերին ուսումնասիրվող գեղարվեստական ստեղծագործությունները ծառայեցնել ոչ միայն որպես ընթերցանության նյութ, այլև բացահայտել, մեկնաբանել դրանց գեղագիտական արժեքը:

3. Կրտսեր դպրոցում մայրենիի դասերին առավել շատ դասեր անցկացնել բնության գրկում, օգտագործել բնության ընձեռած բոլոր հնարավորությունները, կազմակերպել էքսկուրսիաներ, զբոսանքներ:

4. Կազմակերպել տարրական դասարանների ուսուցիչների վերապատրաստումներ՝ փոխհամագործակցելու, առարկաների և թեմաների միջև կապեր գտնելու, գեղագիտական դաստիարակության իրականացումն առավել արդյունավետ պլանավորելու կարողությունների զարգացման նպատակով:

5. Դասավարներին ցուցաբերել մեթոդական օգնություն՝ գեղարվեստական ստեղծագործությունների, ուսուցման մեթոդների ընտրության, միջառարկայական կապերի ստեղծման և կիրառման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Թվարկված բոլոր մոտեցումները կարևոր են անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումն ապահովելու, բարոյական, հայրենասիրական, գեղագիտական դաստիարակություն իրականացնելու գործում: Տարրական դասարաններում ուսումնական առարկաների բազմաբնույթ միասնացումը, այսինքն՝ ճանաչողության ամբողջականության պահպանումը ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոն է և ուսուցման արդիական նպատակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու. Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005, 455 էջ:
2. Գարդներ Հ., Բազմաբնույթ մտածողության էությունը, Երևան, «Ոսկան Երևանցի», 2004, 288 էջ:
3. Հովսեփյան Վ. Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Երևան, 1979, 240 էջ:
4. Սուխոմլինսկի Վ. Ա., Պավլիշի միջնակարգ դպրոցը: Գյուղ. միջն. դպր. ուսումնադաստիարակչ. աշխատանքի փորձի ընդհանրացում, Երևան, «Լույս», 1984. 502 էջ:
5. [URL: http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829: (Հղումը կատարվել է 01. 08. 2022):

Изучения художественных произведений как средства эстетического воспитания в начальной школе

Аветисян Аник

ГГУ, Педагогика младших классов и методика,

Научный руководитель: О. Казарян

Резюме

Ключевые слова: *начальная школа, родной язык, эстетическое воспитание, гармоничное развитие, эстетическое восприятие*

Цель работы – изучить особенности и эффективность реализации эстетического воспитания на уроках родного языка в младшей школе, возможности, предоставляемые учебниками и методическими пособиями, выявить и проанализировать особенности реализации эстетического воспитания в процессе обучения родному языку. Из проведенных исследований можно констатировать, что только воздействие целенаправленной педагогической деятельности может включать детей в различные виды художественной творческой деятельности и способствовать развитию их сенсорной сферы, обеспечивать глубокое восприятие и оценку эстетических явлений.

The Study of Works of Art as a Means of Aesthetic Education in Primary School

Avetisyan Anik

GSU, Elementary Pedagogy and Methodology,

Academic Supervisor: O. Ghazaryan

Summary

Key words: *primary school, native language, aesthetic education, harmonious development, aesthetic perception*

The purpose of the article is to study the features and effectiveness of the implementation of aesthetic education in the lessons of the native language in primary school, the opportunities provided by textbooks and methodological manuals, to identify and analyze the features of the implementation of aesthetic education in the process of teaching the native language. From the conducted research, it can be stated that only the impact of purposeful pedagogical activity can involve children in various types of artistic creative activity and contribute to the development of their sensory sphere, provide a deep perception and evaluation of aesthetic phenomena. Both nature, work, and the surrounding reality – everyday life, family, interpersonal relations, everything that can be beautiful – have educational significance.

Տուրիզմը որպես ուսանողական ակտիվի ժամանցի ապահովում

Էվոյան Էլմիրա
«ՎՊՀ» հիմնադրամ, Սերվիս, 3-րդ կուրս
Մոսինյան Շուշանիկ
«ՎՊՀ» հիմնադրամ, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ
Գիտական ղեկավար՝ մ. գ. դ., պրոֆեսոր Պ. Գևորգյան

Հանգուցային բառեր. *զբոսաշրջություն, ուսանող, ուսանողական ակտիվ, ուսանողական ինքնակառավարում, ճանաչում, փոխհաղորդակցում*

«Զբոսաշրջություն» հասկացությունը ծագել է ֆրանսերեն «Tour» բառից, որը նշանակում է զբոսանք: Տերմինն առաջին անգամ կիրառել է Վ. Ժեկմոն 1830 թվականին:

Ժամանակակից զբոսաշրջությունը մի կողմից նոր ոլորտ է, քանի որ զանգվածային է դարձել երկրորդ աշխարհամարտից հետո, մյուս կողմից՝ ունի խոր պատմական արմատներ, քանի որ ճանապարհորդությունները մարդկությանը հայտնի են եղել դեռևս հին ժամանակներից (Հին Հռոմում և Հին Հունաստանում, մինչև Ն. Ք. 50-ական թթ.-երը): Հռոմեական կայսրության կործանումից հետո (Ք. Հ. 5-րդ դար) զբոսաշրջությամբ զբաղվող բոլոր օբյեկտները փակվել են և նոր ծաղկում ապրել 13-14-րդ դարերում՝ առևտրի և ճանապարհորդության վերսկսմանը զուգահեռ:

Այսօր Հայաստանում զբոսաշրջությունը աճող արդյունաբերություն է: Սակայն չկա առցանց որևէ հարթակ կամ կայք, որը կտրամադրի համակողմանի, թարմ և ճշգրիտ տեղեկատվություն թե՛ սիրված, թե՛ դեռևս չբացահայտված զբոսաշրջային վայրերի մասին: Ուրեմն անհրաժեշտ է այն շուտափույթ ստեղծել:

Ժամանակակից ընկալմամբ, զբոսաշրջության առաջացման և զարգացման ուղղությամբ առաջին ճանապարհորդությունը 1841 թվին կատարել է անգլիացի ձեռնարկատեր Թոմաս Կուկը՝ կազմակերպելով 20 մղոնանոց շրջագայություն շոգեքարշով, որին մասնակցել է 600 մարդ [3, 4]:

Ցանկացած տնտեսական խնդիր ծագում է մարդկանց պահանջմունքները բավարարելու համար: Պահանջմունքների դասակարգումը բազմազան է: Դիտարկելով դրանցից Մասլոուի տեսությունը՝ նշում ենք որ պահանջմունքները բաժանվում են հետևյալ աճող կարգերի՝ ցածրից (նյութականից) մինչև վերին (հոգևոր):

Զբոսաշրջությունը կարող է բավարարել հետևյալ հոգևոր պահանջմունքներին.

1. Սոցիալական կապերի պահանջմունք (սեր, քնքշություն, ընկերներ և այլն),
2. Ինքն իրեն հարգելու պահանջմունք (ճանաչվել, ընդունվել և այլն),

3. Ինքնահաստատման պահանջմունք (ընդունակությունների իրացում և այլն):

Երբ մարդու մոտ նշված բոլոր պահանջմունքները բավարարված են լինում, մարդը ցանկանում է տեսնել, հիանալ, հաճույք ստանալ նորություններից, և այդ պատճառով էլ սկսում է ճանապարհորդել, ու զարգանում է զբոսաշրջությունը:

Ժամանակին մարդիկ ճանապարհորդում էին, որպեսզի բացահայտեն տարածաշրջաններ, բնության գեղեցկություններ: Այնուհետև մարդիկ ճանապարհորդում էին, որպեսզի տեսնեին այդ բացահայտված վայրերը: Սակայն իրողությունը այլ է այժմ: Ճանապարհորդության բավականաչափ հասանելիության պայմաններում և արդի տեխնոլոգիաների և տեղեկատվության խելահեղ ընթացքի մեջ մարդիկ քիչ են ճանապարհորդում: Այս նոր մոտեցումներով և նոր գաղափարներով նոր սերունդն է, որ համակցված է, մենք պարզապես պետք է հասկանանք՝ ինչպիսի՞ հատկություններ և ինչպիսի՞ պահանջմունքներ ունի նոր սերունդը, ինչպե՞ս կարող ենք համարժեքորեն արձագանքել դրանց: Զբոսաշրջության ավանդական ձևերը, այսինքն մշակութային, ճանաչողական տուրերը և զբոսաշրջության տիպերը շատ քիչ են բավարարելու մարդկանց պահանջմունքները, դրանով իսկ մեծացնելով նորարարությունների դերը, որոնք նորություն և հետաքրքրություն են մտցնում զբոսաշրջության մեջ:

Ներկայումս զբոսաշրջությունը ստացել է զանգվածային բնույթ՝ ընդգրկելով բնակչության ավելի լայն խավեր:

Ըստ իրենց ունեցած նախասիրությունների՝ զբոսաշրջիկներին բաժանում են տարբեր խմբերի՝ խաղաղ հանգիստ նախընտրողներ, հաճույքի սիրահարներ, ճանաչողական և ուսուցողական նպատակով զբոսաշրջիկներ, արկածների սիրահարներ և այլն [2, 14-16]:

Ժամանակակից տեխնոլոգիաները մարդուն մեկուսացնում են և իրենից խլում են «ավանդական» մարդկային զգացումները, և այդ բացը լրացնելու լավագույն տարբերակներից մեկը ճամփորդությունն է: Եվ նոր զգացողությունների ու նորությունների բացահայտման հիմնական մասսան երիտասարդությունն է, որն էլ ուսանողներն են իրենց ակտիվ գործունեությամբ:

Ուսանողական ակտիվը ուսանողական ինքնակառավարման մարմին է, որի գործունեությունն ուղղված է ուսանողներին օգնելուն, նրանց և համալսարանի ղեկավարության միջև փոխգործակցության ապահովմանը և նրանց համախմբմանը:

Ակտիվը ինքնաիրացման և նախաձեռնության զարգացման միջոց է: Կոլեկտիվիզմ, համախմբվածություն, ընդհանուր հետաքրքրություններ, ընկերություն, հաղորդակցություն. սա հեռու չէ ուսանողի սիրողական կատարողականի դրական հատկանիշների ամբողջական ցանկից, որն այս համատեքստում նշանակում է աշխատանք սեփական անձի վրա և սեփական համայնքի զարգացում:

Ակտիվների գործունեությունը ենթադրում է սոցիալական պատասխանատվության գոտու մշտական ընդլայնում: Ուսանողական ակտիվի կազմը անընդհատ ավելանում է, զարգանում է ուսանողական խմբերի վերահսկողությունը:

Ուսանողական ակտիվը նպաստում է.

- ուսանողների ինքնակառավարման հմտությունների և կարողությունների ձևավորմանը,
- քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, սոցիալական հասունության, ինքնակազմակերպման և ինքնազարգացման ունակության զարգացմանը:

Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն ունի իր ուսանողական ակտիվը, դրա հիման վրա էլ իր գործունեությունն է ծավալում ուսանողական խորհուրդը: Ուսանողները չպետք է դիտարկվեն միայն որպես մանկավարժական ազդեցության օբյեկտներ, նրանք պետք է լինեն որպես բուհի առանձին օրգան, որը առաջնորդվում է իրեն բնորոշ հատուկ կանոնակարգով [1, 10-13]:

Ըստ ՎՊՀ-ի ուսանողական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 6-րդ ենթակետի՝ ուսանողական խորհուրդը պարտավորվում է միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը [4, 3]:

Այստեղից հետևում է, որ ուսանողական խորհուրդը զբաղվում է նաև ուսանողների ժամանցի կազմակերպման և ապահովման գործընթացով: Սա կարևորագույն խնդիր է, քանի որ այսօր ուսանողական խորհուրդը միշտ չէ, որ կատարում է իր առջև դրված իրավունքներն ու պարտականությունները: Անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել ինչպես ներքին, այնպես էլ արտագնա տուրիստական արշավներ:

Տուրիզմի՝ որպես ուսանողական ակտիվի ժամանցի ապահովումը բացահայտելու նպատակով կատարել ենք հետազոտություն հարցաթերթիկի միջոցով, առցանց տարբերակով: Հարցմանը մասնակցել են ՎՊՀ-ի, ՇՊՀ-ի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ուսանողները:

Որքանո՞վ են ուսանողական խորհրդում ընգրկված ուսանողները հետաքրքրված զբոսաշրջային օբյեկտներ այցերով հարցին ուսանողների 55 %-ը պատասխանել է, որ ակտիվ են, 15 %-ը պասիվ են, 25 %-ը լինում են առաջարկներ, 5 %-ը նախընտել է այլ տարբերակը:

Ուսանողական խորհուրդը կազմակերպո՞ւմ է այցեր դեպի զբոսաշրջության վայրեր հարցին հարցվածներից 75 %-ը պատասխանել է այո, 20 %-ը նշել է կազմակերպվում է, բայց չեմ մասնակցել պատասխանը, 5 %-ը պատասխանել է ոչ:

Զբոսաշրջության ո՞ր տեսակով են ավելի հետաքրքրված ուսանողները հարցին ուսանողների 50 %-ը պատասխանել է արկածային, 35 %-ը՝ ճանաչողական, 10 %-ը՝ մշակութային, 5 %-ը՝ այլ:

Ընդգրկված էին նաև բաց հարցեր, որոնցից «Ի՞նչ միջոցներ է ձեռնարկում ուսանողական խորհուրդը ուսանողների ճանաչողական այցերը կազմակերպելու համար» հարցին ուսանողները տվել են տարատեսակ պատասխաններ: Առանձնացնենք մի քանիսը. «կազմակերպվում են ժողովներ, որոնց ընթացքում ուսանողներին հարցումներ են կատարվում և հորդորում նրանց ակտիվ լինել ՈՒԽ-ի կազմակերպած միջոցառումներում» կամ «քննարկումների միջոցով, ուսանողական խորհրդի անդամների հետ հանդիպումների միջոցով, ուսանողները նշում են իրենց առավել հետաքրքրող վայրերը, և հաշվի է առնվում ցանկացած հետաքրքիր գաղափար ուսանողների օրը առավել հետաքրքիր և օգտակար դարձնելու համար»:

Հարցումների արդյունքում տեսնում ենք, որ ուսանողական խորհրդի կազմակերպած այցերի ընթացքում մեծամասամբ հաշվի են առնվում ուսանողների նախընտրած վայրերը, իսկ ուսանողները առավելապես գերադասում են այցելել վայրեր, որոնք ապահովում են իրենց ակտիվ ժամանցը: Արդյունքում տեսնում ենք միայն արկածային բնույթի էքսկուրսիաների կարևորությունը: Դրան զուգահեռ պետք է զարգացնել զբոսաշրջության մյուս ճյուղերի կարևորությունը:

Զբոսաշրջությունը նպաստում է ուսանողական ակտիվի մասնակից անդամների փոխհաղորդակցմանը, փոխճանաչմանը, փոխադարձ հետաքրքրությունների բացահայտմանը, ուսանողական ակտիվի գործունեության կատարելագործմանը:

Հաշվի առնելով հարցումների պատասխանները՝ ուսանողական խորհուրդներին առաջարկում ենք իրականացնել և իրենց ծրագրերում ընդգրկել հետևյալ կետերը.

1. Ժամանցային այցելություններից զատ իրականացնել նաև էքսկուրսիաներ դեպի կրթական, մշակութային, ճանաչողական վայրեր, ուսանողների պրակտիկ գիտելիքների ընդլայնման նպատակով:

2. Կազմակերպվող էքսկուրսիաներին ներառել սերվիս/տուրիզմ բաժնի ուսանողներին, ովքեր կղեկավարեն այցելությունները, իրենք անձամբ ուսանողներին կուղեկցեն և կներկայացնեն այցելվող վայրի վերաբերյալ տեղեկությունները, և որը հնարավորություն կտա ուսանողներին պրակտիկայում կիրառել իրենց գիտելիքները:

3. Համագործակցություն ապահովել տարբեր համալսարանների միջև, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ընդլայնել իրենց շրջապատը, ինչպես նաև փորձի փոխանակում ունենալ: Կատարել արտասահմանական այցելություններ, որի շրջանակներում տվյալ ուսանողական խորհրդի անդամ ուսանողները կծանոթացնեն իրենց մարզին, իրենց մշակութային արժեքներին, ինչպես նաև համալսարանի կրթական ծրագրերին:

4. Ուսանողական խորհրդի ներքին կանոնադրությամբ սահմանել որոշակի

թվով այցելություններ, որոնք կլինեն կրթական ուղղվածությամբ: Կրթական կամ ուսումնական էքսկուրսիաները իրականացվում են մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտելիքներ ստանալու նպատակով: Կրթական զբոսաշրջությունը նախատեսում է նաև կրթական և գիտական վերապատրաստումներ, բուհերում կրթության արդյունավետության բարձրացում, մասնակցություն սեմինարների, կոնֆերանսների, ինչպես նաև նոր գիտական, մասնագիտական տեղեկատվության ստացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алексеева Н. Л., Гоеб А. В. Перспективное планирование деятельности профсоюзной организации в рамках стратегии вуза // Нефтегазовое дело. 2013. № 11-1. С. 10-13.
2. Հարությունյան Շ., Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, http://lib.ysu.am/disciplines_bk/9b772e611c0be9ed216935636a612d12.pdf (2004 թ.):
3. Մարգարյան Ա., Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման իրավական կարգավորումները (2017 թ.):
4. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողական խորհրդի կանոնադրություն, Վանաձոր, 2021:

Туризм как студенческая деятельность в обеспечении развлечений

Эвоян Эльмира
ВГУ, Сервис, 3-й курс
Мосинян Шушаник
ВГУ, соискатель кафедры педагогики и психологии
Научный руководитель:
доктор педагогических наук, профессор П. Геворкян

Резюме

Ключевые слова. *туризм, путешествие, студенческий, студенческий актив, студенческое самоуправление,признание, общение*

В этой статье мы обсудили возможные варианты активного отдыха студенческого совета, особенно с точки зрения туризма. На основе статистических данных и опросов были представлены предпочтительные места студентов, возможные варианты развлечений. В результате исследований и опросов мы выяснили, что студенческий совет активно способствует развитию внутреннего туризма, и особенно развитию культурно-познавательного туризма. Однако студенты отдают предпочтение развлекательной стороне, которая не способствует достижению основной цели. Наряду с имеющимися пробелами, мы представили свои рекомендации, которые позволят студенческому совету улучшить возможные варианты организации досуга студентов.

Tourism as a Student Activity in Providing Entertainment

Evoyan Elmira
VSU, Service, 3rd year
Mosinyan Shushanik
VSU, Applicant of the Chair of Pedagogy and Psychology,
Academic Supervisor: P. Gevorgyan,
Doctor of Pedagogical Sciences, Professor

Summary

Key words*: tourism, student, student activity, student self-government, cognition, intercommunication*

In this article, we have discussed the possible options for active entertainment of the student council, especially from the touristic point of view. On the basis of statistical data and surveys, the preferred places of students, the possible options for entertainment have been presented. As a result of studies and surveys, we found out that the student council actively contributes to the development of domestic tourism, and especially to the development of cultural and cognitive tourism. However, students prefer the entertainment, which does not contribute to the main goal. Along with the existing gaps, we have presented our recommendations, which will enable the student council to improve the possible options for providing students' entertainment.

«Մայրենի» և «Կերպարվեստ» առարկաների ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները

Հովսեփյան Անահիտ
«ՎՊՀ» հիմնադրամ,
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա,
4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

Հանգուցային բառեր. *աշակերտ, միջառարկայական կապ, տեղեկություն, նկար, պատմություն, խոսքի զարգացում*

Ուսումնասիրության նյութ դարձնելով «Մայրենի» և «Կերպարվեստ» առարկաների դասագրքերում զետեղված ստեղծագործությունները՝ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման ճանապարհով փորձել ենք ներկայացնել ինտեգրված ուսուցման արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համակարգ, որի կիրառումը կնպաստի միջգիտակարգային դրույթների բացահայտմանը՝ նյութի գիտակցական, առավել տրամաբանված ըմբռնմանը, սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների մշակմանը:

Նախաբան: Դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումն առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների շրջանակների մեծացման, որ հնարավոր կարող են դառնալ տարբեր գիտությունների, երևույթների միջև եղած կապերի բացահայտման շնորհիվ: Երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորինս բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռորոշ նշանակություն ունեն նրանց աշխարհաճանաչողության համար [4]:

Դպրոցական կրթության մեջ միջգիտակարգային կապի խնդիրը վաղուց մշակվել է հետազոտողների կողմից. «Այն ամենը, ինչ փոխադարձ կապի մեջ է, պետք է սովորեցնել նույն կապով» [7]: Այսպես նաև Ջոն Լոքը կարծում էր, որ յուրաքանչյուր առարկա չպետք է դասավանդվի «մաքուր» ձևով, այն անպայման պետք է լցված լինի այլ առարկաների տարրերով [8]:

Մեծ մտածողների ներկայացված հայտարարությունները արդիական են նաև ժամանակակից պայմաններում, քանի որ անհատի առօրյայում անհրաժեշտ լուծվելիք խնդիրները բազմակողմանի են և առնչվում են մեկը մյուսին, որոնք տարրական դասարաններում իրենց պատասխանները հիմնականում ստանում

են մայրենիի դասերին, ուստի դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի միջ-գիտակարգային կապերը՝ հնարավորություն տալով աշակերտի անձի համակող-մանի ու ներդաշնակ զարգացմանը, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: «Մայրենի» միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշ-չով սահմանված նպատակներից մեկը. «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը» [6]:

Ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանա-կում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ» [7]:

Տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օջախ չէ. գիտելիքն ուսուցման այս փուլում դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ տարրական դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղոր-դումը, այլ դրանց՝ երեխաների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունա-վետությունը, հետագա ուսումնական գործունեության ծավալման և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանելիությունը: Այս խնդիրների իրականացումը պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին:

«Կերպարվեստ» դասընթացը զարգացնում է աշակերտների հիանալու և երևակայելու կարողությունը: Տարրական դասարաններում կերպարվեստի դա-սավանդումն օգնում է աշակերտներին ըմբռնել, թե ինչպիսի հնարավորություն-ներ է ընձեռում նկարելու կարողությունը: Նկարը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր և առանձնահատուկ բաղադրիչներից է: Նկարները լայնորեն օգտագործվում են ինչպես «Այբբենարան»-ներում, այնպես էլ լեզվի ընթերցարաններում և դասագրքերում: «Այբբենարան»-ների նկարները հիմնակա-նում պատկերում են ուսուցանվելիք նյութը. դրանք կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար:

Նկարները աշակերտների բանավոր խոսքի զարգացման գործընթացում

իրենց յուրօրինակ նշանակությունն ունեն ոչ միայն «Մայրենի», այլև «Կերպարվեստ» առարկաների ժամերին, քանի որ նայելով նկարին՝ տարբեր հույզեր են առաջանում աշակերտների մոտ: Ինչպես դասագրքի, այնպես էլ աշակերտների ստեղծած նկարների շուրջ իրականացվող աշխատանքներում իր ուրույն տեղն ունի հարցը, որ տրվում է.

1. Նկարի ընդհանուր բովանդակության բացահայտման նպատակով – Ինչի՞ մասին է նկարը: Ինչպե՞ս այն դուք կվերնագրեք: Ինչո՞ւ է այդպես վերնագրված նկարը և այլն:

2. Առարկաների, երևույթների նկարագրման նպատակով – Ի՞նչ է նկարված: Ինչպիսի՞ն է այն: Ինչի՞ է նման: Ի՞նչ է անում:

3. Պայմանավորված աշակերտների՝ նկարի բովանդակությունը մոտ անձնական փորձով – Իսկ քեզ հետ պատահե՞լ է այդպիսի դեպք: Դու ի՞նչ կանեիր նման դեպքում:

4. Բառապաշարի ակտիվացման նպատակով. հոմանիշներ ասելու պահանջով – Ինչպե՞ս կարելի է այլ կերպ ասել այս միտքը: Ինչպե՞ս (ուրիշ ի՞նչ գույնով) կարելի է նկարագրել այս ծառը, ամպը, դաշտը, բույսը և այլն [1, 344]:

Զանազան վարժությունները պիտի զարգացնեն աշակերտի՝ հարցերին համառոտ և ընդարձակ պատասխաններ տալու կարողությունները, նրա հրապարակախոսական ունակությունը, պատմելու, նկարագրելու կարողությունները, որոնք զարգանում են ծրագրում եղած գրական ստեղծագործությունների բովանդակության վերարտադրության շնորհիվ: Ուսուցիչը պիտի հետևի, որ աշակերտները նյութը բառացի չներկայացնեն, արձակը անգիր չասեն [2, 336]:

«Այբբենարան»-ներում ուսուցումն սկզբնական շրջանում իրականացվում է նկարների օգնությամբ, որն էլ հենց միտված է կապակցված խոսքի զարգացմանը: «Այբբենարան»-ի յուրաքանչյուր նկար ուսուցիչը պետք է հնարավորինս գեղարվեստորեն ներկայացնի, որպեսզի նկարը կենդանի օրինակ տա, այն դարձնի մտածողությունն ու խոսքը հարստացնելու միջոց [5]:

«Նկարի պատմում» առաջադրանքի միջոցով գաղափար է տրվում *տեքստ, նախադասություն, բառակապակցություն* և *բառ* հասկացությունների մասին, օրինակ՝ տրված տեքստը բաժանվում է մասերի՝ նախադասությունների, իսկ նախադասությունն էլ՝ բառերի: Կարևոր է նշել, որ աշակերտները տառերը սովորում են ոչ այբբենական կարգով, որը նույնպես հատուկ նպատակ է հետապնդում: Միջառարկայական կապ կարելի է տանել առարկաների միջև 1-ին դասարանից, քանի որ «Կերպարվեստ» առարկան նույնպես դասավանդվում է 1-ին դասարանից: Օրինակ՝ «**Օ»** տառի ուսուցումը կարելի է կապել «Կերպարվեստ» առարկայի դասի հետ և լեզվական գիտելիքներ հաղորդելուց հետո աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն և հետաքրքրական դարձնելու համար աշակերտներին սովորեցնել **օղակ** նկարել, որը նման է **Օ** տառին:

Աշակերտներն 1-ին դասարանից կարդում են գեղարվեստական տարբեր ստեղծագործություններ՝ պատմվածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հանելուկներ, առածներ, ասացվածքներ, շուտասելուկներ, որոնք խոսքարվեստի դրսևորման ձևերից են: Եթե նկարիչը նկարում է, ապա գրողն ու բանաստեղծն էլ խոսքի տարբեր ձևերի՝ բանաստեղծության, պոեմի, պատմվածքի, հեքիաթի, առակի և այլ ստեղծագործությունների հորինողներն ու արարողներն են:

«Մայրենի 1»-ը «Այբբենարանից» հետո ընթերցանության առաջին գիրքն է, որը համապատասխանում է աշակերտների աշխարհընկալմանը և հետաքրքրություններին: Բնագրերը հոգեհարազատ են աշակերտներին, քանի որ ուղեկցվում են խաղերով ու լեզվատրամաբանական բազմազան առաջադրանքներով:

1-ին դասարանում կերպարվեստի դասագիրք չկա, այն աշխատանքային տետր է՝ լի հետաքրքիր և միաժամանակ բազմազան առաջադրանքներով: Աշխատանքային տետրի միջոցով աշակերտները ներկում են, նկարում ու գծում: Աշխատանքային տետրով հենց առաջին էջին տրված գույներով ու պատկերներով սովորում են ծիածանի գույները, մի քանի գույներ խառնելով՝ ստանում են մեկ գույն: Քանի որ արդեն «Այբբենարան»-ից ծանոթ են գծերին, նշաններին, հաջորդ էջերում տրված առաջադրանքները կարող են հեշտությամբ կատարել: Այնուհետև երեխաներն սկսում են նկարել մրգեր, դրանք բնութագրել, գումարել, հանել՝ միաժամանակ միջառարկայական կապեր տանելով նաև «Մաթեմատիկա» առարկայի հետ: Տրված է առաջադրանք, պատկերված առարկաներից պետք է առանձնացնել, թե որն ունի շրջանի, որը՝ ձվածիրի տեսք:

Տարրական դասարաններում «Կերպարվեստ» առարկայի դասագիրքը հորինված է միջառարկայական կապերի կիրառության հիմունքներով: «Կերպարվեստի» դասաժամերին երեխաները սովորում են ճիշտ օգտագործել գույները, կարողանում են տիրապետել նկարչության գաղտնիքներին: Այդ դասագիրքն օգնում է պատկերելու գեղեցիկը, պատրաստել զարմանալի առարկաներ, ինչպես նաև օգնում է հասկանալ, որ յուրաքանչյուրը պետք է ճանաչի ու պահպանի շրջակա աշխարհը: «Մայրենի» դասագրքերը նույնպես բազմազան ու հետաքրքիր թեմաներով լեցուն են, և իհարկե, այս ամենը ուղեկցվում է նկարներով, որ տարրական դասարանի դասագրքերի անբաժան մասնիկն են: «Կերպարվեստ 2» դասագրքում պատկերված Մարտիրոս Սարյանի «Հայաստան» և Կլոդ Մոնեի «Ամառ» նկարների վերաբերյալ կարելի է կիրառել «Այբբենարան»-ից սովորած «Պատմություն նկարի շուրջ» մեթոդական հնարը և հարց ու պատասխանի միջոցով երեխաներին առաջարկել պատմել նկարները: Հարցերը կարող են լինել այսպիսին, թե ինչ են տեսնում նկարներում, ինչ գույներ կան, որ նկարում է ամառն ավելի տաք, ինչից է դա երևում:

Միջառարկայական կապերով կարելի է ուսուցանել նաև «Մայրենի» դասա-

գրքի «Մեր տունը» թեման, որը բաղկացած է մորը նվիրված մի շարք ստեղծագործություններից, որոնք համադրելի են «Կերպարվեստ»-ի «Հրաշք զարդապատկերներ» թեմայի հետ: Երեխաները կարող են գեղեցիկ մաղթանքներ գրել՝ նվիրված իրենց մայրիկներին, և գեղեցիկ զարդապատկերներով զարդարել այն: Դա կարող են նվիրել իրենց մայրիկներին՝ որպես բացիկ: «Մայրենի» դասագրքում ներառված է Զարուհի Գալեմքարյանի՝ «Մեծ մայրիկի նամակը» ստեղծագործությունը, ըստ դրա էլ կարող են կատարել առաջադրանքը:

«Կերպարվեստ» առարկայի աշխատանքային ծրագիրն ստեղծվել է հիմնական հանրակրթության պետական ստանդարտի դաշնային բաղադրիչի հիման վրա: Այն մշակվել է կրթական ստանդարտի բովանդակությունը կոնկրետացնելու համար՝ հաշվի առնելով միջհամայնքային և միջառարկայական կապերը, կրթական գործընթացի տրամաբանությունը և կրտսեր աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Ինչպես «Մայրենի», այնպես էլ «Կերպարվեստ» առարկաների ուսուցման նպատակն է պատկերացում կազմել երկրի, ժողովուրդների՝ մշակույթների բազմազանության և մարդկանց հոգևոր գեղեցկության վերաբերյալ մարդկանց պատկերացումների միասնության մասին: Աշխատանքային ծրագիրը կառուցված է այնպես, որ աշակերտները հստակ պատկերացում կազմեն արվեստի և կյանքի փոխազդեցության համակարգի մասին: Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձևի՝ դասի հետ մեկտեղ, անցկացվում են էքսկուրսիաներ՝ դեպի տեղական պատմության թանգարաններ. օգտագործվում են արվեստի թանգարանների և արվեստի պատկերասրահների վերաբերյալ տեսաերիզներ:

Հիմնական միջառարկայական կապերն իրականացվում են երաժշտության և գրական ընթերցման դասերին: Որոշ թեմաների ընդունման ընթացքում օգտագործվում են միջառարկայական կապեր արտաքին աշխարհի հետ («Ռուսաստանի բնությունը», «Հայրենի երկիրը՝ մեծ երկրի մաս», «Համաշխարհային պատմության էջեր», «Հայրենիքի պատմության էջեր»), մաթեմատիկա (երկրաչափական ձևեր և ծավալներ), տեխնոլոգիա (բնական և արհեստական նյութեր, պատրաստի արտադրանքի պատրաստում) [3]:

Եզրահանգում: Հանրակրթության համակարգում մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ ունի մի կողմից՝ որպես աշխարհաճանաչողության, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, հոգեբանական կարգերի՝ ուշադրության, հիշողության, երևակայության, տրամաբանական և պատկերավոր մտածողության հիմնական միջոց, մյուս կողմից՝ որպես ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ: Մայրենի լեզվով տարբեր ոճերի բնագրերի գիտակցական ընթերցումը և միտքը ազատորեն շարադրելու կարողությունը նպաստում են մյուս բոլոր առարկաների յուրացմանն ու նպատակային վերարտադրմանը:

«Մայրենի» և «Կերպարվեստ» միջառարկայական կապը հաճախ է ընդմիջարկվում «Երաժշտություն» առարկայով, քանի որ դասագրքերում բնագրերի վերջում հաճախ առաջադրվում է որևէ երգի կատարում:

«Մայրենի» և «Կերպարվեստ» առարկաների միջառարկայական կապն ամրապնդվում է հատկապես այն ստեղծագործությունների շնորհիվ, որ ուսուցանվում են երկու առարկաների շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ., Տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2015:
2. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1987:
3. Կերպարվեստ և գեղարվեստական աշխատանք: Աշխատանքային ծրագիր «Կերպարվեստ և գեղարվեստական աշխատանք» Դուք պատկերում, զարդարում և կառուցում եք https://thestrip.ru/hy/kinds-of-makeup/izobrazitel noe-iskusstvo-i-hudozhestvennyi-trud-rabochaya/ Հասանելի է 10. 06. 2022:
4. Հասմիկ Թոփչյանի բլոգ https://hasmiktopchyan.wordpress.com/2016/09/25/ (հասանելի է 10. 06. 2022):
5. Միջդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ https://forum. armedu.am/forum (հասանելի է 05. 05. 2022):
6. Միքայելյան Մ., Միջառարկայական կապերը մայրենիի դասերին: https://multiurok.ru/files/mijarharkayakan-kapere-mayrenii-daserin.html: (հասանելի է 10. 06. 2022):
7. Коменский Я. Великая дидактика. http://jorigami.ru/PP_corner/Classics/ Komensky/Komensky_Yan_Amos_Velikaya_didakt_izbr.htm
8. Локк Дж. Мысли о воспитании, 1691. http://filosof.historic.ru/books/item/f00/s00/z0000460/st000.shtml

Специфические особенности интегрированного преподавания предметов “Родной язык” и “Живопись”

Овсепян Анаит
ВГУ, Педагогика и методика начального обучения, 4-й курс
Научный руководитель:
кандидат филологических наук, доцент Л. Петросян

Резюме

***Ключевые слова**: ученик, межпредметные связи, сведения, картина, история, развитие речи*

На примере произведений из учебников «Родной язык» и «Живопись», с использованием традиционных и современных методов методических приемов, была представлена методическая система повышения интенсивности интегрированного обучения. Применение данной системы позволит установить межпредметные связи, сознательно и логично усвоить учебный материал, расширить мышление и словарный запас, а также способствовать формированию навыков устной и письменной речи.

Specific Features of Integrated Teaching of the Subjects “Native Language” and “Painting”

Hovsepyan Anahit
VSU, Elementary Pedagogy and Methodology, 4th year
Academic Supervisor: L. Petrosyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

Summary

***Key words:** pupil, interdisciplinary connection, information, picture, story, speech development*

Using works from the textbooks *Native Language* and *Painting*, and employing both traditional and modern pedagogical methods, a methodological system for enhancing the intensity of integrated learning has been presented. The application of this system will establish interdisciplinary connections, allow pupils to consciously and logically absorb the educational material, expand their thinking and vocabulary, and also contribute to the development of oral and written language skills.

Գնահատումը որպես ուսման մոտիվացիայի ձևավորման գործոն

Մխիթարյան Ստելլա
«ՎՊՀ» հիմնադրամ,
Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա
Գիտական ղեկավար՝ մ. գ. դ., պրոֆեսոր Պ. Գևորգյան

Հանգուցային բառեր. *գնահատման չափանիշներ, գնահատման գործառույթներ, թվանշան, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում*

Ներկա ժամանակաշրջանը բնութագրվում է գնահատման նոր չափանիշների ներդրումով, որը, ենթադրվում է, նպաստելու է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսումնառության վերահսկմանը, բարելավմանն ու շարունակական զարգացմանը: Ուսուցման արդյունավետության և որակի բարձրացման վրա էական ազդեցություն ունեցող գործոնների շարքում հատուկ տեղ է գրավում սովորողների գիտելիքների ստուգումն ու գնահատումը: «....գիտելիքների ստուգումն ու գնահատումը ուսումնադաստիարակչական պրոցեսի անհրաժեշտ մասն է. նրա ճիշտ դրվածքից է շատ բանով կախված այդ պրոցեսի հաջողությունը» [2.]:

Ըստ 2023 թվականի փետրվարի 24-ի ԿԳՄՍ նախարարի ստորագրած հրամանի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողներին գնահատելու են նոր չափանիշներով՝ համաձայն հրամանում սահմանված հավելվածի [5], որով գնահատումը կձևավորի ուսման մոտիվացիա:

Այս նոր կարգի հետ կապված կան թյուր պատկերացումներ և՛ ուսուցիչների, և՛ սովորողների, և՛ ծնողների շրջանում, որոնք կարծում են, որ գնահատումը կդադարի ուսման մոտիվացիա լինելուց, ուստի այդ նպատակով էլ կատարել ենք ուսումնասիրություններ Վանաձորի 3 դպրոցներում (թվով 45 ուսուցիչների, 358 աշակերտների՝ 150 տարրական, 108 միջին, 100 ավագ դպրոցների) հետ: Ուսումնասիրությունները իրականացվել են դիտում, զրույց, առցանց հարցում, հարցաթերթ (համեմատություն, վերլուծություն) մեթոդներով:

Ստորև ներկայացնենք արդյունքների վերլուծությունը: Դիտման և զրույցների արդյունքները հնարավորություն տվեցին պատկերացում կազմելու գնահատման ձևերի վերաբերյալ սովորողների և ուսուցիչների վերաբերմունքի մասին. սովորողներին շատ էր ոգևորում ոչ միավորային գնահատականը, սակայն նրանց համար ամենակարևորը, այնուամենայնիվ, միավորային գնահատականն էր մնում: Իսկ ուսուցիչների համար կարևոր էր միավորային գնահատումը, քանի որ նրանց կարծիքով հենց միավորային գնահատումն է ամրագրում ուսուցման փուլի արդյունքը և ապահովում ուսման մոտիվացիա:

Հարցումների ժամանակ պարզեցինք, որ ուսման մոտիվացիան կախված է ոչ միայն գնահատականից, այլ նաև սովորողների առանձնահատկություններից, ուսուցչի կիրառած մեթոդներից, լաբորատոր պարապմունքներից, ՏՀՏ գործիքների կիրառությունից, դասագրքերից և այլ գործոններից:

Հարցման արդյունքների վերլուծությունից, որոնք ուղղված էին ուսուցիչներին և աշակերտներին, պարզ դարձավ, որ և՛ միավորային, և՛ ոչ միավորային գնահատականները մոտիվացնում են սովորողներին (տե՛ս տրամագիր 1):



Տրամագիր 1. Ո՞ր գնահատումն է ապահովում ուսման մոտիվացիա:

Իսկ այս հարցի շուրջ ավելի մանրամասն վերլուծություն կներկայացնենք առցանց հարցման վերլուծությունից:

Առցանց հարցմանը [6] մասնակցել են ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ, դպրոցի հետ այլ կապերով կապված անձինք (թվով՝ 98 անձ): Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ շատերն են համակարծիք, որ գնահատումը մոտիվացնում է սովորողներին, այդ կարծիքը չեն կիսել պատասխանողների միայն 10.2 %-ը, իսկ վստահաբար համաձայնել են 50 %-ը (տե՛ս տրամագիր 2):



Տրամագիր 2

Բազմազան էր գնահատման միավորային և ոչ միավորային ձևերի նկատմամբ վերաբերմունքը (տե՛ս տրամագիր 3): Պատասխանողների 39,8 %-ը գտնում է, որ միավորային գնահատումն է մոտիվացնում, 27,6 %-ը՝ ոչ միավորային գնահատումը, իսկ երկու գնահատումն էլ կարևորել են 31,6 %-ը:



Տրամագիր 3

Այն հարցին, թե ինչ կարծիք ունեն այն հանգամանքի վերաբերյալ, որ 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվելու է բնութագրման միջոցով, եղան տարաբնույթ պատասխաններ, ուսման մոտիվացիայի հետ կապված մի քանի մեջբերումներ կանենք այդ պատասխաններից. *«Ես կարծում եմ, որ մոտիվացիան կնվազի», «Երեխային մոտիվացնելու համար ես կողմ եմ, որ գնահատումը լինի 3-րդ դասարանից»* (նկատի ունի միավորային գնահատումը), *«Բնութագիրը անհրաժեշտ է ուսուցիչներին, իսկ գնահատականի ներկայությունը, իմ կարծիքով, պարտադիր է, չէ՞ որ գնահատականի միջոցով աշակերտը կարողանում է տեսնել տարբերությունը իր և իմացողի, նաև իր և չիմացողի միջև, որն էլ կբերի մրցակցության, ասել է, թե գնահատումը դիտվեց որպես ուսման մոտիվացիա», «Մոտիվացիան գուցե պակասի», «Այդ տարիքի երեխաները մրցակցության մեջ են լինում, նրանց խթանում է գնահատականը, իսկ եթե բնութագրով գնահատվեն, գուցե կորցնեն այն տեմպը, որով շարժվում էին», «Միավորային գնահատականը խթանիչ դեր ունի մասնավորապես տարրական դասարաններում, և հրաժարումը, կարծում եմ, այնքան էլ նպատակային չի լինի», «Մինչև մի սերունդ չանցնի այս փորձաշրջանը, ոչինչ պարզ չի լինի»:*

Այս տեսակետներից հետո հետաքրքրական է, որ հարցման մասնակիցների 34,7 %-ը ցանկացել է, որ միավորային գնահատականը հանվի նաև դպրոցի մյուս աստիճաններում (տես՝ տրամագիր 4):



Տրամագիր 4

Ուսուցիչների 90 %-ը գնահատման վերաբերյալ առաջարկներում նշել էին, որ ցանկանում են ամփոփիչ գնահատումը մնա միավորային, 10 %-ը՝ բնութագրող, իսկ մյուս հարցվողների 60-40 %-ն է առաջարկել միավորային գնահատում, 30-40 %-ը՝ բնութագրող (տե՛ս տրամագիր 5):

Ո՞ր գնահատականը կառաջարկեք կիրառել ամփոփիչ գնահատման ժամանակ:

Հարցաթերթի վերլուծությունը ցույց տվեց նաև, որ ուսուցիչները կարևորում են միավորային գնահատումը՝ չբացառելով նաև զուգահեռ ձևավորող գնահատում: Նրանց զգալի մասը մտահոգված է, որ միավորային գնահատում չլինելու դեպքում կնվազի սովորողների մոտիվացիան, քանի որ ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի արդյունքների գնահատումը սովորողի մոտ փաստում է զարգացման աստիճանը: Իսկ միավորին փոխարինող բնութագրական գնահատումը հաճախ կարող է լինել ոչ հավաստի և ամբողջական: Ուսուցիչների և աշակերտների գերակշիռ մասը այն կարծիքն են արտահայտել, որ գնահատումը չի ազդում սովորողների միջանձնային փոխհարաբերությունների վրա:



Տրամագիր 5

Այսպիսով՝ «Գնահատումը ոչ միայն կրթական, այլ նաև կյանքի բոլոր բնագավառներին առնչվող խնդիր է: Գնահատումը կլինի թերի և ոչ համարժեք, եթե այն միայն օգտագործվում է որպես վերահսկման գործիք: Թեև գնահատումը կարևոր է հանրակրթության բոլոր աստիճաններում, սակայն հիմնական և ավագ դպրոցում սովորողների տարիքային առանձնահատկությունների բերումով այն յուրահատուկ նշանակություն ունի» [1]:

Ուսուցիչների պարտականությունն է ուսուցման մոտիվացիայի ձևավորման համար կիրառել գնահատման տարբեր ձևեր՝ ձևավորող, միավորային և բնութագրող: Ուսուցիչը սովորողներին ոչ թե պիտի լուռ գնահատի, այլ բացատրի, թե ինչպես և ինչու է դա արվել, բացատրի, մեկնաբանի, թե ինչպես է կատարվում յուրաքանչյուր գնահատում, ինչու է այն կարևոր, ուստի նպատակահարմար է կազմել գնահատման չափանիշների սանդղակ, որը կապահովի գնահատման օբյեկտիվությունը, հավաստիությանը, հուսալիությունը, մատչելիությունը, արդարությունն ու թափանցիկությունը:

Սովորողների գիտելիքների գնահատումը սկսվում է կրթական արժեքները սահմանելուց: Ընդ որում, կրթական արժեքները ներառում են ոչ միայն այն, ինչ մենք ցանկանում ենք գնահատել, այլ նաև այն, թե գնահատման արդյունքում երեխան ինչպիսի հատկանիշներ կամ վարք կդրսևորի շրջապատի նկատմամբ, «որովհետև դպրոցից տուն տարած ոչ օբյեկտիվ գնահատականը երեխայի համար դառնում է ոչ միայն պատժամիջոց, այլ նաև ընտանիքի անդամների կողմից դպրոցն ու ուսուցիչներին հանիրավի վատաբանելու պատճառ» [3]:

Ուսուցչի կատարարած աշխատանքը մոտիվացնող է դառնում, երբ նա կա-

րողանում է ճիշտ գնահատել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնները, ինչպես իր տրամադրվածությունը, այնպես էլ սովորողների անձնական հատկանիշները, մակարդակը, հոգեբանական իրավիճակները և այլն: Ցանկալի չէ կիրառել համեմատական գնահատման ձևը, քանի որ այն սովորողների մոտ առաջացնում է տագնապ, թերարժեքության զգացում, իջեցնում է ինքնագնահատականը: Ցանկալի է կիրառել գնահատման անձնային մոտեցումը՝ օգնելով սովորողներին յուրացնել ինքնավերահսկման և ինքնագնահատման հմտություններ: Ավելի մոտիվացնող արդյունքի կարելի է հասնել գնահատման այս երկու ձևերը համատեղելով կամ զուգորդելով: Սովորողի տարիքի մեծացման հետ պետք է ավելի մեծ և կարևոր տեղ տալ փոխգնահատմանը և ինքնագնահատմանը, որը կխթանի սովորողի անհատական առանձնահատկությունների ճանաչումը, վստահությունն ու հարգանքը կոլեկտիվի մեջ: «Կրթադաստիարակչական հարցերի նկատմամբ աշակերտների գիտակցական վերաբերմունքը նպաստում է ուսումնառությանը նրանց ակտիվ մասնակցության միջոցով ձեռք բերել այնպիսի արժեքներ, որոնք են սեփական ուժերին վստահելը, ինքնուրույնությունը, վստահությունը, համագործակցելու կարողությունը և այլն [4]: Հաշվի առնելով նաև աշակերտի վրա գնահատման ազդեցության հոգեբանական պայմանները՝ նկատում ենք, որ այդ գնահատականը ունենում է ոչ միայն մոտիվացնող, այլ նաև հակառակ ներգործություն: Ուսուցչի գնահատականը մոտիվացնող արդյունք է ունենում միայն այն դեպքում, երբ սովորողը ներքուստ համաձայն է ուսուցչի հետ:

Թե ինչպիսի արդյունքներ կստացվի գնահատման նոր մոտեցման պարագայում, ցույց կտա ժամանակը: Հուսով ենք, որ այն չի նվազեցնի գնահատման դերը ուսման մոտիվացիայի ձևավորման մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դունամալյան Ա., Գնահատման գործառույթների կիրառումը ուսուցչի կողմից որպես սովորողների կրթության և դաստիարակության կարևոր նախադրյալ, «Մխիթար Գոշ». գիտական հոդվածներ, 2 (228), 2014:
2. Պոլոնսկի Վ., Դպրոցականների գիտելիքների գնահատումը, Երևան,, «Լույս» հրատարակչություն, 1983:
3. Краевский В. В. Методология научного иследования: Пособие для студентов и аспирантов гуманитарных ун-тов, Санкт-Петербург, 2001. Самара. 264 с.
4. Линкина А. И., Рыбак Л. А. Кримичхоцть и самооценка в учебной деятельности, Москва, 1968, с. 54.
5. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760, 18. 03. 2023, 19:09
6. https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScF9a3xWSjR5iBkOzmhyQd2UJLjmfn-nUmf2FhCFsj22yXCUA/viewform,18. 03. 2023, 20:12

Оценивание как фактор формирования мотивации учения

Мхитарян Стелла
Школьная педагогика и методика,
Научный руководитель:
доктор педагогических наук, профессор П. Геворкян

Резюме

***Ключевые слова**: критерии оценивания, функции оценивания, отметка, самооценивание, взаимооценивание*

В статье рассматривается роль оценивания в формировании учебной мотивации, а также задачи, связанные с оцениванием. Для выяснения связи оценивания с формированием мотивации учения, были изучены некоторые литературные источники, было проведено обширное изучение мнений учителей и учащихся. Мы сделали выводы, которые позволят оптимизировать процессы оценивания и самооценивания, что, по-нашему мнению, станет основой для реализации искомой проблемы, т.е. влияние оценивания на формирование мотивации учения.

Assessment as a Factor of the Formation of Learning Motivation

Mkhitaryan Stella
School Pedagogy and Methodology,
Academic Supervisor: P. Gevorgyan,
Doctor of Pedagogical Sciences, Professor

Summary

***Key words:** assessment criteria, assessment functions, mark, self-assessment, mutual assessment*

The current article aims to discuss the role of assessment in the formation of learning motivation, as well as the tasks associated with assessment. In order to find out the connection between the assessment and the formation of learning motivation, some literary sources have been studied and a quite extensive study of the teachers′ and students′ opinions have been carried out. We have made conclusions that will allow us to optimize the processes of assessment and self-assessment, which, in our opinion, will become the basis for the implementation of the desired problem, i.e. the influence of assessment on the formation of motivation for learning.

Մանկավարժական փոխգործուն և բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիաները՝ որպես տարրական դպրոցում կապկու երեխաների ներդրման և ուսուցման արդյունավետության պայման

Մկրտչյան Թագուհի
ԳՊՀ, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Ա. Դավթյան

Հանգուցային բառեր. *ներառական ուսուցում, մանկավարժական տեխնոլոգիաներ, կրթություն, փոխներգործուն ուսուցում, բազմաբնույթ մտածողություն, երեխաներ*

Մենք գիտենք, որ արդեն մի քանի տարի է, ինչ մեր երկրում իրականացվում է ներառական կրթության ծրագիրը, սակայն ոչ բոլորն են ամբողջությամբ պատկերացնում դրա էությունն ու անհրաժեշտությունը: Խոսքը այստեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, նրանց՝ հասարակությանը լիարժեք կերպով ինտեգրելու մասին է:

Ներառական ուսուցումը այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություններ երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառում տերմինը առաջացել է ֆրանսերեն բառից: Տերմինը վերաբերում է կրթական համակարգին, որը թույլ է տալիս բոլոր երեխաներին ստանալ հավասար կրթություն, այդ թվում նաև հատուկ կարիքով կամ հաշմանդամություն ունեցող: Ներառական կրթությունը համաշխարհային մաշտաբի նախաձեռնության մի մասն է, որն ապահովում է անձի իրավունքների իրացումն ու նպաստում սոցիալականացմանը: Ներառական կրթության առանցքային բաղադրիչը համատեղ ուսումնառության կազմակերպումն է, որի արդյունքում պայմաններ է ստեղծում նրանց հավասար մասնակցության ու ինքնուրույն որոշումների կայացման, մշակույթային և համայքային կյանքի մասնակցության համար:

Ներառական կրթությունը թելադրում է ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցումների կիրառություն, որի շնորհիվ հնարավոր է դառնում սովորողների զանազան կրթական կարիքների բավարարումը: Հատկանշական է, որ ներառական կրթության պահանջներին բավարարող փոփոխությունները արդյունավետ են դարձնում ուսուցման գործընթացը ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ՝ ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ), այլև բոլոր երեխաների համար: Կրթության մեջ ներառումը ենթադրում է՝

1. Դպրոցական համակարգի և կրթական գործընթացների հարմարեցում յուրաքանչյուր երեխային՝ հաշվի առնելով նրա մտավոր, ֆիզիկական,

հոգեկան մշակութային առանձնահատկություններն ու տարբերությունները:

2. Կրթական գործընթացներում ամեն տեսակի խոչընդոտների վերացում և կրթության մեջ բոլոր երեխաների հավասար մասնակցության ապահովում՝ չսահմանափակելով միայն հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներով:
3. Դպրոցական միջոցառումներին բոլոր երեխաների հավասար ներգրավվածություն:
4. Երեխաների որակյալ կրթությանը խոչընդոտող գործոնների վերացման սեփական փորձից դասեր քաղել և սովորել:
5. Երեխաների միջև եղած տարբերություններն ընդունել որպես կրթական գործընթացին նպաստող և ոչ թե խանգարող գործոններ:
6. Ընդունել, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի հաճախելու իր համայնքում, բնակության վայրին ամենամոտ դպրոցը և ստանալու ներառական և որակյալ կրթություն:
7. Կարևորել դպրոցների դերը հասարակության արժեհամակարգի ձևավորման և ամրապնդման գործում:
8. Ընդունել, որ ներառական հասարակության ձևավորումը սկսվում է դպրոցից:

Ներառման նպատակով դասարաններում կարող են ընդգրկվել այնպիսի երեխաներ, որոնք ունեն տեսողության (թեթև և միջին աստիճան), լսողության (թեթև և միջին աստիճան), հենաշարժողական ապարատի, խոսքի զարգացման, հուզակամային ոլորտի և վարքի խանգարումներ, հոգեկան զարգացման հապաղում, մտավոր հետամնացության թեթև աստիճան և այլն:

Քանի որ ներառական ուսուցումը բարդ և բազմակողմանի համակարգային գործընթաց է, նպատակահարմար ենք համարում տեխնոլոգիական մոտեցման կիրառումը:

«Տեխնոլոգիա»-ն ծագել է հունարեն «techno-արվեստ, արհեստ, վարպետություն» և logos հասկացություն, ուսմունք, գիտություն բառերից, որը թարգմանաբար նշանակում է գիտություն արվեստի, վարպետության մասին:

Այսօր «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը տարբեր հեղինակների մոտ տարբեր մեկնաբանություն ունի.

- Մանկավարժական տեխնոլոգիան մանկավարժի արվեստն է, նրա հմտությունը, որը թույլ է տալիս նրան փոփոխել իրավիճակն ու դրությունը [2]:
- Մանկավարժական տեխնոլոգիան համակարգված գործողությունների ծրագիր է, որն ուղղված է մի գործողության ստեղծմանը, կիրառմանը՝ հաշվի առնելով մարդկային և տեխնիկական ռեսուրսները և դրանց փոխազդեցությունը, որն իր առջև նպատակ է դրել օպտիմացնել զարգացման գործընթացները [3]:
- Մանկավարժական տեխնոլոգիան ուսումնական գործընթացի ճշգրիտ նախագծումն է և այդ նախագծի հստակ կիրառումը՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ սովորողի և սովորեցնողի համար:

▪ Մանկավարժական տեխնոլոգիան մանկավարժի գործունեության փոխկապակցված և հաջորդական համակարգ է, որը ուղղված է մանկավարժական խնդիրների լուծմանը:

Այսպիսով՝ մանկավարժական տեխնոլոգիաներն ուղղված են կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվ, անձնային կողմնորոշում ունեցող ուսուցում, որը նպաստում է հաղորդակցական և գիտակցական զարգացմանը:

Մանկավարժական տեխնոլոգիան դիտարկվում է որպես մանկավարժական գործունեության փուլերի, մեթոդների և միջոցների ամբողջություն, որոնք ապահովում են գործունեության արդյունավետ հաջորդականությունը, որն էլ ուղղված է որոշակի մանկավարժական խնդիրների լուծմանը, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Մանկավարական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված չէ առանձին հնարներով, մեթոդներով, այլ միայն դրանց համալիր կիրառման համակարգով՝ մանկավարժական տեխնոլոգիաներով: Ողջ մանկավարժական գործընթացը նպատակաուղղված է տարաբնույթ խնդիրների լուծմանը, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է խնդրին համապատասխան նպատակային տեխնոլոգիաների մշակում, կիրառում:

Դպրոցական կրթությունը ներառում է մի շարք մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման մեթոդներ, որոնց նպատակն է ապահովել ուսուցման առավելագույնս բարձր մակարդակը: Դրանց շարքում առավել տարածվածներից են փոխներգործուն ուսուցման տեխնոլոգիաներ (ՓՈՒՏ):

ՓՈՒՏ-ի մեթոդաբանությունը կենտրոնանում է սովորողների լայն շփման ապահովման վրա՝ ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Այս դեպքում ուսուցիչն ու աշակերտը ուսուցման գործընթացի սուբյեկտներ են: Ներկա պայմաններում փոխներգործուն ուսուցումը կազմակերպման հատուկ ձև է, որոնցում բացառված է, որ աշակերտը չմասնակցի ուսումնական գործընթացին բոլոր մասնակիցների հետ կոլեկտիվ, փոխլրացնող գործողությունների: Փոխներգործուն ուսուցման գլխավոր նպատակն է ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ բոլոր սովորողները գործնականում ներգրավվեն ուսումնաճանաչողական գործընթացում:

Փոխներգործուն են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ ուսուցանող համակարգում սովորողը պարբերաբար հանդես է գալիս փոփոխվող սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններում՝ դառնալով նրա ակտիվ ինքնավար սուբյեկտ:

Մյուս մանկավարժական տեխնոլոգիան, որը նպատակահարմար ենք գտնում կիրառել ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման գործընթացում, բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիան է: Այն առավել հարմար է ԱՈՒՊ-ը ձևավորելու և կիրառելու համար: Մեզ շրջապատող աշխարհը միասնական է ու ամբող-

ջական, և երեխան այն ընկալում է հենց այդպես: Ուստի ուսուցման առավել արդյունավետ տեսակը միավորված, ինտեգրված, ամբողջական մոտեցումն է: Այդպիսի մոտեցում ցուցաբերել հնարավորություն է տալիս Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Հովարդ Գարդների այսօր արդեն լայն տարածում գտած բազմաբնույթ մտածողության տեսությունը: Հայտնի է, որ աշխարհաճանաչողությունը երեխան սկսում է իրենից և իր շրջապատից: Ուստի նրա բնական հետաքրքրությունները բավարարող և իրական հետազոտական գործունեությունը պետք է սկսել ինքնաճանաչումից: Այդ տեսությունը փորձում է լուծել կրթական համակարգի մի շարք հիմնախնդիրներ, ուսումը դարձնում է ավելի դյուրին ու հետաքրքիր: Այս տեսությունը անձի զարգացումը տանում է գրքից դեպի կյանք, խոսքից դեպի փորձ և զգացմունքներ:

Գարդներին հաջողվեց ձևավորել տարբեր ընդունակությունների մի համակարգ, որը հեղինակը և նրա համախոհները զարգացրել ու զարգացնում են մինչև օրս: Որպես մանկավարժ հոգեբան՝ Գարդները կարծում էր, որ յուրաքանչյուր մարդու հատուկ են մտածողության, ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր, որոնք հազվադեպ են գործում իրարից անկախ: Դրանք օգտագործվում են միաժամանակ և մարդու կարողությունների զարգացման կամ խնդիրների լուծման ընթացքում ունեն միմյանց լրացնելու հակում:

ԲՄ տեխնոլոգիան չափազանց արդյունավետ է նաև օժտված երեխաների, մեծահասակների, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ երեխաների համար [1]: Գարդները առանձնացնում է մտածողության 7 տեսակ և այսպես հիմնավորում դրանք:

1. Կան երեխաներ, որոնք նյութն ավելի լավ են յուրացնում՝ տեսնելով, տարածության մեջ կողմնորոշվելով: Նրանք հաճույք են ստանում սխեմաներից, գրաֆիկներից, քարտեզներից, պատկերազարդումներից, նկարներից, մի խոսքով՝ այն ամենից, ինչը հիմնված է տեսողական ընկալման վրա: Հետևաբար՝ նրանց մոտ առավել զարգացած է այսպես կոչված տեսողական տարածական մտածողությունը: Ինչպես նկատել է Հ. Գարդները, այն ձևավորված է նաև կույր երեխաների մոտ:

2. Կան երեխաներ, որոնք առավել լավ են ընկալում խոսքը (գրավոր կամ բանավոր): Նրանց համար ընդունելի և մատչելի է ավանդական ուսուցումը: Այս երեխաների մոտ առավել զարգացած է այսպես կոչված լեզվական մտածողությունը:

3. Կան երեխաներ, որոնք առավել հակված են տրամաբանել, ապացուցել, սիրում են թվերի հետ գործողություններ ու խնդիրներ: Նրանց համար նույնպես հարմար են ուսուցման ավանդական ձևերը: Այս երեխաների մոտ էլ տրամաբանական-մաթեմատիկական մտածողությունն է ավելի զարգացած:

4. Կան երեխաներ, որոնք ավելի լավ են ընկալում ակտիվ գործունեության մեջ ընդգրկվելիս, երբ շարժվում են, խաղում, ինչ-որ բան ստեղծում, կառուցում: Այսպիսի երեխաներն ամենից շատ են հոգս պատճառում ուսուցչին իրենց «չափազանց ակտիվությամբ»: Ըստ Գարդների՝ նրանց մոտ մարմնաշարժողական մտածողությունն է առավել զարգացած:

5. Կան երեխաներ, որոնք առավել լավ են ընկալում երաժշտությամբ, ռիթմով, հետևաբար նրանց մոտ այսպես կոչված երաժշտական մտածողությունն է առավել զարգացած:

6. Կան երեխաներ, որոնք սիրում են շփվել, գերադասում են սովորել՝ հաղորդակցվելով և համագործակցելով, սիրում են աշխատել խմբով կամ ընկերոջ հետ: Այս երեխաների մոտ, որոնց ավանդական ուսուցիչները «շատախոս» են համարում, այսպես կոչված միջանձնային մտածողությունն է առավել զարգացած:

7. Եվ, վերջապես, կան երեխաներ, որոնք ինքնամփոփ են, դժվարանում են կիսել իրենց մտքերը, զգացմունքներն ու ապրումները: Նրանք ավելի զուսպ են իրենց խոսքում ու գործողություններում, ուժեղ կանխազգացում ունեն: Այս երեխաների մոտ, ըստ Գարդների, ներանձնային մտածողությունն է զարգացած:

Այսպիսով՝ կատարված հետազոտության նպատակն է՝ տեսականորեն ուսումնասիրել նշված տեխնոլոգիաների ներդրման առանձնահատկությունները և կիրառման հնարվորությունները ԿԱՊԿՈՒ կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Այս նպատակից ելնելով՝ կատարել ենք փորձարարական հետազոտություն, որի ժամանակ կիրառել ենք հետևյալ մեթոդները՝

- Ի՞նչ է բացակայում նկարում:
- Ի՞նչ է պատկերված նկարում:
- Հիշի՛ր նկարը:
- Հիշի՛ր 10 բառ:
- Հիշի՛ր և դի՛ր համապատասխան նշանները:

Այնուհետև վարել ենք դասեր՝ համագործակցային և բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիաներով, որոնց նպատակն էր բարձրացնել ուսուցման արդյունավետության, ԿԱՊԿՈՒ սովորողների առաջադիմությունը, իմացական գործընթացների մակարդակը:

Այսպիսով կարող ենք փաստել կատարված փորձարարական աշխատանքներից, որ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում բարձրացնում է ՆԿ որակը, ինչպես նաև երեխաները ունենում են զգալի առաջընթաց:

ԳՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցչի համար, Երևան, 2001, 288 էջ:
2. Шепель В. Производство и педагогика, Москва, 112 с.
3. Щуркова Н. Е. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993, 112 с.

Педагогические технологии интерактивного и разнообразного мышления как условие эффективности реализации и обучения зависимых детей в начальной школе

Мкртчян Тагуи
ГГУ, Педагогика и методика начального обучения, 4-й курс
Научный руководитель: А. Давтян

Резюме

Ключевые слова: *инклюзивное обучение, педагогические технологии, образование, взаимное обучение, многогранное мышление, дети*

В ходе исследования, проведенного с целью изучения проблемы и эффективности внедрения различных педагогических технологий в процесс организации инклюзивного образования, экспериментально выявлены возможности использования различных педагогических технологий и условия оценки их эффективности. Сделан следующий вывод: адаптивное внедрение и применение современных технологий способствует повышению качества образования, эффективному решению задач обучения, воспитания и социализации детей.

Pedagogical Technologies of Interactive and Diverse Thinking as a Condition for the Effectiveness of Implementation and Training of Dependent Children in Elementary School

Mkrtchyan Taguhi
GSU, Elementary Pedagogy and Methodology, 4th year
Academic Supervisor: A. Davtyan

Summary

Key words: *inclusive learning, pedagogical technologies, education, mutual learning, multi-faceted thinking, children*

In the course of the study conducted to study the problem and effectiveness of implementing various pedagogical technologies in the process of organizing inclusive education, the possibilities of using different pedagogical technologies and the conditions for assessing their effectiveness were experimentally identified. The following conclusion has been made: the adaptive implementation and use of modern technologies contribute to improving the quality of education and the effective solution of tasks related to teaching, upbringing, and the socialization of children

Ուսուցչի մոտիվացիան որպես կրթության որակի ապահովման պայման

Պապինյան Անժելա
«ՎՊՀ» հիմնադրամ, Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Ա. Հարությունյան

***Հանգուցային բառեր. ****ուսուցչի մոտիվացիա, մանկավարժական գործունեություն, ներքին և արտաքին մոտիվացիա, կրթություն, կրթության որակ*

Այսօր ավելի քան ակնհայտ է մանկավարժի մասնագիտական մոտիվացիայի կարևորությունը՝ մոտիվացիա, որը հիմք է հանդիսանում մասնագետի կողմից իր բազմաբնույթ գործառույթներն իրագործելու համար: Նման մտայնությունը պահանջում է մշակել, ստեղծել ուսուցիչների մասնագիտական զարգացման այնպիսի համակարգ, որտեղ բացառիկ կարևորություն է տրվում մոտիվացված գրելառճի ձևավորմանը, հումանիզմին, փոխըմբռնմանը, ինչպես նաև համապատասխան կոմպետենտությամբ օժտված մասնագետի ձևավորմանը:

Խոսքը վերաբերում է ոչ միայն ուսուցչի մասնագիտական գործունեությունը առավել մոտիվացված դարձնելուն, մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը պահպանելուն, հասարակության մեջ նրա դերի բարձացմանը, այլ նաև հարիր ժամանակակից տեխնոլոգիաներ ու ռազմավարություններ ներդնելուն [3, 98-102]:

Կրթության արդիականացման պայմաններում ուսուցիչները տիրապետում են նոր գաղափարների, գործունեության ոլորտներին, ուսումնական գործունեության նոր բովանդակությանը: Դրանում առանձնահատուկ դերը պատկանում է մեթոդական աշխատանքին, քանի որ դրա հաջողությունը կախված է ուսուցիչների մասնագիտական զարգացման հետաքրքրությունից, դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման թիմի բավարարվածությունից: Որքան ուսուցիչը գոհ է իր աշխատանքից, այնքան ավելի է նա շահագրգռված իր հմտությունների կատարելագործմամբ:

Մոտիվացիան սերտորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են շարժառիթը, կարիքը, պարգևները: Շարժառիթը ներքին ազդակ է (իմպուլս), որը ստիպում է մարդուն գործել որոշակի ձևով: Հայտնի է, որ մարդու խթանումն անմիջականորեն կապված է նրա տարբեր կարիքների (ֆիզիոլոգիական, հոգևոր, տնտեսական) բավարարման հետ: Շարժառիթը գործում է որպես պատճառ, ինչ-որ բան անելու օբյեկտիվ անհրաժեշտություն, ինչ-որ բան անելու խթան: Մանկավարժական գործունեության շարժառիթները ձևավորվում են մինչև մասնագիտական գործունեության սկիզբը: Մարդը սովորում է մանկավարժական բարոյականության և էթիկայի արժեքներն ու նորմերը՝ դնելով մասնագի-

տական գործունեության նկատմամբ իր վերաբերմունքի հիմքերը: Մոտիվը մարդու «ներսում» է, ունի «անձնական» բնավորություն, կախված է մարդու հետ կապված բազմաթիվ արտաքին և ներքին գործոններից, ինչպես նաև դրան զուգահեռ առաջացող այլ շարժառիթների գործողությունից [2, 103-105; 5, 87-89]:

Մոտիվացիայի բարձր մակարդակ ունեցող ուսուցիչները պատրաստ են ավելի շատ աշխատել իրենց առաջադրանքների կատարման վրա, ինչը նշանակում է, որ նրանց գործունեությունն ավելի հաջողված է: Թեմայի արդիականությունը այն է, որ մոտիվացիան կխթանի ուսուցիչների մոտ մասնագիտական գիտելիքների զարգացմանը և հանրակրթական ուսումնական հաստատություններում ծառայությունների որակի բարձրացմանը:

Մոտիվացիայի բացահայտման և կրթական որակի վրա, դրա ազդեցությունը պարզելու ուղղությամբ անցկացվել են հարցումներ Լոռու մարզի թվով 36 ուսուցիչների շրջանում, որոնց մեծ մասը միջին տարիքային խմբին էին պատկանում.

- Մոտիվացիան դիտարկում եք կրթության որակի ապահովման պայման,
- Նյութական պարգևատրումը հանդիսանում է ձեզ համար մոտիվացիա,
- Ծնողների գոհունակությունը ուսուցման որակի հետ կապված հանդիսանում է ձեզ համար մոտիվացիա,
- Կարևորում եք թե ներքին, թե արտաքին մոտիվացիան,
- Գնահատված լինելը ձեզ համար խթան հանդիսանում է,
- Ինքնակրթությունը ազդում է կրթության որակի վրա,
- Աշակերտների ձգտումները հանդիսանում են ուսուցչի համար մոտիվացիա,
- Վերահսկողությունը հանդիսանում է ուսուցչի մոտիվացիա,
- Կարևոր է թե նյութական, թե հոգևոր խրախուսանքը՝ ընդգծել:

Ուսուցիչների հետ հարցման արդյունքում պարզ դարձավ, որ այն ուսուցիչները, ովքեր մասնակցել և մասնակցում են վերապատրաստման դասընթացների, սեմինարների, նրանք ավելի մասնագիտացված են իրենց գործում և բարձր արդյունքների են հասնում, բայց դա, իհարկե, բավարար պայման չէ կրթության որակի ապահովման համար:

Մեր հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ուսուցիչների միայն 73 %-ն է մոտիվացված, մնացածը կարիք ունի վերապատրաստման և մոտիվացիան բարձրացնելու: Կան ուսուցիչներ, ովքեր ստիպված են աշխատում որպես ուսուցիչ և հետագայում ցանկանում են այլ տեղ աշխատել:

Ուսուցիչների մեծամասնությունը՝ մոտ 58 %-ը, նշեցին, որ իրենց մոտիվացիոն աղբյուրն է համարվում աշխատավարձը, գումարային պարգևատրումները: Նրանք միշտ շեշտում էին, որ իրենց աշխատանքը չի գնահատվում, ուսուցչի աշխատավարձը ցածր է, և այդ իսկ պատճառով կորցնում են մոտիվացիան: Ուսուցիչների միայն 23 %-ն էր շեշտում, որ երեխաների սովորելու գործընթացն է

ավելի շատ մոտիվացնում, երբ երեխան հասկանում է, սովորում և իրեն մատուցում գիտելիքները, դրանով ուսուցիչն ավելի է մոտիվացվում: Ուսուցիչների 10 %-ը նշում էր, որ ծնողների հետ փոխադարձ կապն իրենց ոգևորում է, դրա հետ նշեցին նաև, որ երբ ծնողներն իրենց աշխատանքը գնահատում են, ապա իրենց մոտիվացիան ավելի է բարձրանում: 9 %-ը նշեց, որ մասնակցում է վերապատրաստման դասընթացների, թրեյնինգների և դրանով ավելի է մոտիվացվում:



Նշենք, որ մանկավարժական կարողություններ ձևավորվում են անկախ մանկավարժական ուղղվածությունից, այսինքն՝ դրանք զարգանում են այն մարդկանց շրջանում, ովքեր ցանկանում են ձեռք բերել ուսուցչի մասնագիտություն: Ուսուցիչները, ովքեր գիտեին իրենց աշակերտների հետաքրքրությունները և հակումները, ջանք ու եռանդ չէին խնայում, օգնում էին նրանց գտնել իրենց, բացահայտում էին իրենց կարողությունները և սեփական օրինակի միջոցով, հատուկ օրինակներով, հատուկ առաջադրանքների համակարգ զարգացնելու ունակություններով բարձրացնում մոտիվացիան թե՛ իրենց և թե՛ աշակերտներինը [4. 132-135]:

Ցանկացած մասնագիտական գործունեության համար, ներառյալ մանկավարժական գործունեության համար, մոտիվները կարող են համակցվել խմբերի.

- հասարակական,
- նյութական,
- պրոֆեսիոնալ,
- ինքնակատարելագործում, ինքնազարգացում,

- ինքնապաշտպանություն, ինքնապահպանում:

Մոտիվացիայի և վարքի դրդապատճառների խնդիրը հոգեբանության հիմնական խնդիրներից է: Անաչառ վերլուծությունը, խնդրի վերաբերյալ առկա տեսակետների քննադատական քննությունը և դրա լուծման նոր մոտեցման որոնումը թույլ են տալիս մեզ մեծ արժեք տեսնել տարբեր վարկածների և ձևակերպումների մեջ, որոնք կարող են համակցվել ամբողջական և հետևողական հայեցակարգի մեջ [1, 67-69]:

Զրույցի արդյունքում պարզ դարձավ, որ ուսուցչի մոտիվացիան բարձրացնելու համար կարևորում են.

- աշխատանքի գնահատումը,
- կառավարման ոճը,
- աշխատանքային զրույցները,
- կարիերայի առանջնթացի ապահովումը,
- հետադարձ կապի ապահովումը,
- աշխատանքային բարենպաստ պայմանների ապահովումը,
- կոնֆլիկտների կառավարումը,
- մոտիվացնող կազմակերպական մշակույթի ձևավորումը,
- բացառել մասնագիտական խտրականությունը:

Մեր ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ երիտասարդ մասնագետները հաճախ դժգոհ են աշխատավարձի մակարդակից, ոչ բոլորն են պատրաստ աշխատել համեստ աշխատավարձով, չնչին բեռով՝ փորձ և համապատասխան որակավորում ձեռք բերելու համար: Երիտասարդ աշխատողները դեռ լիովին չեն կարողանում պլանավորել, կանխատեսել իրենց աշխատանքը, որոշել վերջնական արդյունքը, բայց միևնույն ժամանակ կարծում են, որ նույնիսկ իրենց փոքր ձեռքբերումները պետք է նշել:

Զրույցի ընթացքում պարզեցինք, որ միջին տարիքային խմբի ուսուցիչները հիմնականում բարձր որակավորում ունեցող մասնագետներ են, որոնք աշխատում են հիմնականում արդյունքի համար: Նրանք իրատես են, ակտիվ, նախաձեռնող, ձգտում են մասնակցել որոշումների կայացմանը, իրենց վրա վերցնել հասարակական տարբեր խնդիրներ: Նրանք գիտակցում են իրենց ներդրումը կրթական գործունեության հաջողության գործում:

Ստեղծագործ ուսուցիչները ստեղծագործ անհատներ են, մտավորականներ, ովքեր մշտապես ստեղծագործական փնտրտուքի մեջ են: Նրանք փնտրում են հետաքրքիր տեխնիկա, մոտեցումներ, փորձում են արդիականացնել ուսումնական գործընթացը, կարողանում են գաղափարներ առաջ քաշել և իրականացնել:

Ավագ ուսուցիչները գնահատում էին աշխատանքի հարմարավետությունը, դրա ժամանակին մեկնարկն ու ավարտը, կառավարման գործողությունների հստակությունն ու պլանավորումը:

Հաջողության գրավականը ուսուցիչներին տալն է այն, ինչ նրանք իրականում ցանկանում են, ինչին ձգտում են: Սոցիալ-հոգեբանական տիպերը օգնում են հասկանալ դա և ձևավորել մոտիվացիայի համապատասխան համակարգ: Մոդելը սահմանում է ուսուցիչների չորս կատեգորիաներ՝ համապատասխան այս տեսակի, մասնագիտական կարիքների, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ բոլոր մարդիկ դրդված են տարբեր գործոններով:

Զրույցի, հարցման արդյունքները ցույց տվեցին, որ կրթության որակի ապահովման համար կարևոր են մոտիվացիան, որակը, վերապատրաստումները, այսինքն այն ամենը, ինչը հնարավորություն կտա լիարժեք իրականացնել կրթությունը: Այս ամենին ավելացնենք նաև այն, որ ուսուցչի մոտիվացիայով է պայմանավորված աշակերտների սովորելու մոտիվացիան և ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнян В. Э. Особенности мотивации профессионального развития педагога в системе повышения квалификации. URL https://www.dissercat.com/content/osobennosti-motivatsii-professionalnogo-razvitiya-pedagoga-v-sisteme-povysheniya-kvalifikats (дата обращения: 04.10.2019).
2. Бакурадзе А., Джамулаев А. Мотивация учителей: актуальные потребности и принципы их удовлетворения или компенсации, 2007.
3. Кирдянкина С. В. Концепция «Мотивация профессионального роста педагогов», Управление современной школой, 2010.
4. Моисеев, А. М. Заместитель директора школы по научной работе, Москва, 1996, - 143 с.
5. Самочкина Н. В. Эффективная мотивация персонала, Изд. Вершина, Санкт-Петербург, 2006.

Мотивация учителя как условие обеспечения качества образования

Папинян Анжела
ВГУ, Школьная педагогика и методика,
магистратура, 1-й курс
Научный руководитель:
кандидат педагогических наук, доцент, А. Арутюнян

Резюме

Ключевые слова: *мотивация учителя, педагогическая деятельность, внутренняя и внешняя мотивация, качество образования*

Сегодня становится более очевидной важность профессиональной мотивации педагога, которая является основой реализации многогранных функций специалиста. Такое мышление требует разработки и создания системы профессионального развития педагогов, которая предоставляет уникальную возможность формирования мотивированного стиля работы, гуманизма, взаимопонимания, а также подготовки специалиста, обладающего необходимой компетентностью.

Teacher Motivation as a Condition for Ensuring the Quality of Education

Papinyan Anzhela
VSU, School Pedagogy and Methodology,
MA, 1st year
Academic Supervisor: A. Harutyunyan,
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *teacher's motivation, pedagogical activity, internal and external motivation, education, quality of education*

Today, the importance of a teacher's professional motivation, which serves as the foundation for the implementation of the specialist's multifaceted functions, is becoming more evident. This approach requires the development and creation of a system for the professional development of teachers, which provides a unique opportunity for forming a motivated work style, humanitarian values, mutual understanding, and for training specialists with the necessary competencies.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ПСИХОЛОГИЯ И СОЦИОЛОГИЯ

PSYCHOLOGY AND SOCIOLOGY

Դեռահասների ինքնագնահատականի և տագնապայնության համահարաբերակցությունը

Ասչյան Գրիգոր
«ՎՊՀ» հիմնադրամ, Անձի հոգեբանության և
հոգեբանական խորհրդատվություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ Ն. Կոստանդյան

Հանգուցային բառեր. *դեռահաս, ինքնագնահատական, տագնապայնություն, տագնապ*

Դեռահասության տարիքում առաջանում են մի շարք ֆիզիկական և հոգեբանական փոփոխություններ: Հոգեբանական փոփոխություններից մեկն էլ անձի ինքնահատականի առավել կայուն և հստակ կողմնորոշված վիճակն է: Վերջինի կայուն զարգացմանը կարող են խոչընդոտել մի շարք գործոններ, որոնցից մեկն էլ կայուն տագնապայնությունն է, որը դեռահասի մոտ կարող է հանգեցնել մի շարք խնդիրների առաջացման:

Ինքնագնահատականը մարդու ինքնագիտակցության բաղկացուցիչ մասն է, որի միջոցով անհատը գնահատում է սեփական կարողությունները, հմտությունները, արժանիքները և թերությունները: Հոգեբանության պատմության ողջ ընթացքում մասնագետների մեծամասնությունը նշում է, որ ինքնագնահատականը մի տարր է, որը բնորոշ է յուրաքանչյուրին և որը իրենից ենթադրում է բազմաթիվ փոփոխություններ մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Ինքնագնահատականը զարգանում է աշխարհի հետ հարաբերությունների պատճառով և անընդհատ փոխվում է, քանի որ դա կապված է հասարակության փոփոխության հետ: Տարբեր սոցիալական և մշակութային ենթատեքստեր կհամապատասխանեն տարբեր ընկալումներին, թե ինչն է համարվում առողջ ինքնագնահատական: Չնայած այն փաստին, որ ինքնագնահատականի հիմքերը դրվում են մանկության տարիներին, այն անփոփոխ չէ և կյանքի տարբեր փուլերում կարող է ենթարկվել զանազան փոփոխությունների:

Գոյություն ունեն ինքնագնահատականի տարբեր մոտեցումներ՝

1. Անհատական և ընդհանուր ինքնագնահատական – առաջինին են վերաբերվում, օրինակ, արտաքին տեսքի, բնավորության անհատական գծերի գնահատումը: Ընդհանուր կամ գլոբալ ինքնագնահատականը ցույց է տալիս այն հավանությունը կամ անհամաձայնությունը, որը մարդն ունենում է ինքն իր նկատմամբ [1],

2. Ակտուալ (այն, ինչին արդեն հասել է) և պոտենցիալ (ինչին կարող է հասնել) ինքնագնահատական – պոտենցիալ ինքնագնահատականը հաճախ անվանում են նաև ձգտման մակարդակ: Մարդն ինքն իրեն կարող է գնահատել ադեկվատ և ոչ ադեկվատ ձևերով: Ընդհանուր ինքնագնահատականի անկայունությունը կարող է արդյունք լինել այն բանի, որ դրան ձևավորող առանձին գնա-

հատկանիշներ կայունության և համարժեքության տարբեր մակարդակներում են: Բացի այդ, դրանք կարող են տարբեր համագործակցություններ ունենալ միմյանց հետ, լինել համաձայնեցված, լրացնել միմյանց կամ լինել հակասական,

3. Ըստ Իվանովի, առանձնացվում են ինքնագնահատականի հետևյալ մակարդակները՝

ա. բարձր մակարդակ – այս մակարդակում նկատվում են բարձր պահանջկոտություն իր նկատմամբ, ինքնաքննադատությունը դառնում է վերջինիս կարևոր հատկանիշը,

բ. ցածր մակարդակ – այս խմբին պատկանող դեռահասներն ունեն ինքնաքննադատման ցածր ցուցանիշ,

գ. միջին մակարդակ – ինքնաքննադատությունն ունի ընտրողական բնույթ [2],

4. Լուիս Հորնշտեյնը իր «Ինքնագնահատականը և ինքնությունը: Ինքնասիրություն և սոցիալական արժեքներ» գրքում առաջարկում է ինքնագնահատականի չորս տեսակ՝ կախված բարձր կամ ցածր, կայուն կամ անկայուն լինելուց: Ըստ դրա՝ առանձնացվում են կայուն բարձր, անկայուն բարձր, կայուն ցածր, անկայուն ցածր ինքնագնահատականները [6]:

Ինքնագնահատականի վրա ազդում են տարբեր գործոններ: Ինչպես և մնացած տարիքային ժամանակաշրջաններում, այստեղ նույնպես անհնար է խոսել միայն հոգեբանական գործոնների մասին՝ հաշվի չառնելով այլ գործոնների (ժառանգական, բնածին, ֆիզիկական և այլն) ազդեցությունները և դրանց ժամանակագրությունը՝ դրանց սերտ կապվածության պատճառով: Մասնավորապես, դեռահասի ինքնագնահատականի վրա էական ազդեցություն կարող են թողնել ընկերների, մոտ մարդկանց հետ հարաբերությունները, ընտանեկան, հոգեբանական և սոցիալական վիճակը և այլն:

Տագնապայնությունը անհատական հոգեբանական առանձնահատկություն է, որն արտահայտվում է անձի հաճախ համեմատաբար փոքր պատճառներով տագնապ զգալու հակվածությամբ: Տագնապը որպես անձնային կազմավորում կամ կապված է թույլ նյարդային համակարգի հետ կամ խառնվածքի տիպի կամ էլ երկուսի հետ միաժամանակ:

Տագնապ առաջանում է, երբ անհատն ընկալում է որոշակի գրգռիչ կամ իրավիճակ, որը կարող է վտանգի կամ սպառնալիքի տարրեր ունենալ: Տագնապի վիճակը ժամանակի ընթացքում կարող է փոխվել որպես դիսթրեսի ֆունկցիա, որին ենթարկվում է անհատը [3]:

Դեռահաների տագնապայնության խնդիրներին անդրադարձել են այնպիսի հոգեբաններ, ինչպիսիք են Կ. Հորնին, Է. Էրիկսոնը և այլք: Ըստ Կ. Հորնիի՝ տագնապն առաջանում է միջանձնային հարաբերություններում անվտանգության զգացման բացակայության արդյունքում, որի հիմքը ծնող-երեխա հարաբերությունների անլիարժեքությունն է: Անվտանգության, անօգնականության և թշնամանքի զգացումները հաղթահարելու համար էլ դեռահասն օգտագործում է տարբեր պաշտպանական ռազմավարություններ: Այստեղ կարելի է նշել նաև մանկա-

կան հոգեվերլուծողներին (մասնավորապես Ա. Ֆրոյսին և Մ. Քլայնին), ովքեր նույնպես կարևորում էին երեխա-ծնող (առաջնահերթ մայր) հուզական կապը և դրանց անվիարժեքությունից բխող խնդիրները, որոնք հետագայում կարող են դրսևորվել երեխայի տագնապայնությամբ:

Դեռահասի տագնապայնության վրա էական ազդեցություն կարող են ունենալ ինչպես ընտանեկան, այնպես էլ ընկերական շփումները, սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակը: Եթե դեռահասի կյանքում պակասում է անձնային և սոցիալական կայունությունը, ապա առկա է մեծ հավանականություն, որ նրա մոտ կարող է առաջանալ և զարգանալ տագնապայնություն: Այսպիսով, տագնապայնությունն առաջանում է այն ժամանակ, երբ դեռահասի պահանջմունքները (առաջնահերթ հուզական) չեն բավարարվում, ինչի հետևանքով էլ դեռահասն ունենում է անվստահության, կասկածամտության, անապահովության և նմանատիպ այլ զգացողություններ:

Ինքնագնահատականի և տագնապայնության կապն ուսումնասիրվել է մի շարք հետազոտողների կողմից: Օ. Ա. Շևչենկոն էմպիրիկորեն հաստատեց դեռահասների ինքնագնահատականի և նրանց հաղորդակցման հմտությունների մակարդակի փոխհարաբերությունները: Ցածր ինքնագնահատական ունեցող դեռահասները ոչ միայն պակաս շփվող են, այլև դժվարություններ են ունենում կապ հաստատելու, զրույց պահելու, զրուցակցի զգացմունքներն ու դատողությունները հասկանալու հարցում: Թ. Մ. Ուվարովան պնդում է, որ ինքնագնահատականը և տագնապայնությունը փոխադարձ և բարդ կապ ունեն: Մի կողմից, բարձր, ադեկվատ ինքնագնահատականը նպաստում է ընդհանուր և դպրոցական տագնապայնության ցածր մակարդակին, իսկ ոչ ադեկվատ, անկայուն (ինչպես ցածր, այնպես էլ բարձր) ինքնագնահատականը, առաջացնում է տագնապայնության բարձր մակարդակի ձևավորման հավանականություն: Մյուս կողմից, ուժեղ տագնապն ազդում է ինքնագնահատականի վրա, քանի որ այն բացասաբար է ազդում ինչպես ուսման մեջ հաջողության, այնպես էլ հասակակիցների, ուսուցիչների հետ հարաբերությունների վրա, ինչը իր հերթին կհանգեցնի ինքնագնահատականի անկմանը և տագնապայնության հետագա ամրապնդմանը [5]:

Յ. Վ. Միխալյուկի փորձարարական հետազոտությունները՝ նվիրված դեռահասի ինքնագնահատականի, ագրեսիվության և տագնապայնության միջև կապի խնդրին, ցույց են տվել առկա փոխկապակցվածությունը ոչ միայն տագնապայնության և ինքնագնահատականի, այլև վարքի ագրեսիվ նշանների (ֆիզիկական ագրեսիա, գրգռում) միջև: Ձեռք բերված տվյալների հիման վրա հետազոտողը եզրակացնում է, որ ինքնագնահատականի բարձր մակարդակը ենթադրում է դեռահասի մոտ ագրեսայի ցուցաբերում, որը արտահայտվում է ակնհայտ ձևով, ինչպես նաև այն, որ տագնապայնության բարձր մակարդակը փոխկապացված է դեռահասի մոտ հուզական անկմամբ [4]:

Այսպիսով, կարելի է վստահությամբ նշել, որ ինքնագնահատականի և տագնապայնության միջև կապի որոշումը կարևոր նախապայման է դեռահասի սոցիալական ադապտացման և լիարժեք հաղորդակցման համար:

Հետազոտության մեթոդիկաների և ընտրակազմի նկարագրություն: Հետազոտության կատարման համար ընտրվել են հետևյալ մեթոդիկաները՝

1. Գ. Ն. Կազանցևա. «Ընդհանուր ինքնագնահատականի ուսումնասիրություն» [7],
2. Ս. Թեյլոր. «Տագնապախռովության մեթոդիկա» [8]:

Հետազոտությունն անցկացվել է Վանաձոր քաղաքի դպրոցներից մեկում, որի համար ընտրվել են 30 հոգի՝ 12 տղա և 18 աղջիկ դեռահասներ:

Արդյունքների վերլուծություն: Փորձարարական հետազոտությունն անցկացվել է երկու փուլով: Առաջին փուլում դեռահասներին տրվել է հարցարան՝ պարզելու համար նրանց ինքնագնահատականի մակարդակը: Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 1-ում:



Տրամագիր 1. Դեռահասների ինքնագնահատականի արտահայտվածության մակարդակի տրամագիր

Հետազոտությունից պարզ դարձավ, որ 30 դեռահասներից բարձր ինքնագնահատական ունեն հետազոտվողների 33 %-ը, ցածր ինքնագնահատական՝ 7 %-ը, ադեկվատ ինքնագնահատական՝ 60 %-ը:

Երկրորդ փուլում հետազոտվողներին տրամադրվել է հարցարան՝ պարզելու նրանց տագնապայնության մակարդակը: Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 2-ում:



Տրամագիր 2. Դեռահասների տագնապայնության արտահայտվածության մակարդակի տրամագիր

Երկրորդ փուլում կատարած հետազոտությունների արդյունքերը հետևյալն է՝ 30 դեռահասներից տագնապայնության բարձր մակարդակ ունեն հետազոտվողների 27 %-ը, ցածր մակարդակ՝ 0 %-ը, միջին մակարդակ՝ 73 %-ը:

Հետազոտվողների 13 %-ի մոտ դիտվել է թեստերի կորելացիոն արդյունքների անհամապատասխանություն, որը վկայում է տագնապայնության մեծ աստիճանի մասին:

Եզրակացություն

Տեսական հետազոտությունների և փորձարարական հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումը. մեր կողմից ուսումնասիրված երևույթների՝ ինքնագնահատականի և տագնապայնության միջև կա փոխկապվածություն՝ ադեկվատ ինքնագնահատական ունեցող դեռահասների տագնապայնության մակարդակը միջին կամ ցածր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Берне Р. Развитие Я-концепции и воспитание, Москва, 1986, - 74 с.
2. Крайг Г., Бокум Д. Психология развития, 492 с.
3. Попова, Т. А. Тревожность и самооценка подростков, воспитывающихся в детском доме и патронатной семье, 152 с.
4. Михайлюк Ю. В. Проблема взаимосвязи самооценки, агрессивности и тревожности личности учащихся, 268 с.
5. Прихожан А. М. Виды тревожности, 56-71 с., 125-200 с.
6. Ինքնագնահատականի 5 տեսակները և դրանց բնութագրերը. https://hy.nsp-ie.org/los-6c-tipos-de-autoestima-y-sus-caracteristicas-46c0d4-2a282a (01. 02. 2023)
7. Կազանցևա Գ. Ն., Ընդհանուր ինքնագնահատականի ուսումնասիրություն. մեթոդիկա. https://урок.рф/library/izuchenie_obshej_samootcenki_metodika_gn_kazantcevoj_132615.html (27. 04. 2016)
8. Թեյլոր Ս., Տագնապախռովության մեթոդիկա. https://www.doctors.am/teylori-tagnapakhrovutyan-metodika (02. 05. 2011)

Взаимосвязь между подростковой самооценкой и тревожностью

Асчян Григор
ВГУ, Психология личности и психологическое консультирование,
магистратура, 2-й курс
Научный руководитель:
кандидат психологических наук, доцент Н. Костандян

Резюме

Ключевые слова: *подросток, самооценка, тревожность, тревога*

В статье представлена взаимосвязь подростковой самооценки и тревожности. Поскольку подростковый возраст является одним из самых главных периодов жизни индивида, были изучены их особенности. В частности, обсуждались самооценка и тревожность подростков. Теоретические и экспериментальные исследования показывают, что подростки с адекватной самооценкой имеют средний или низкий уровень тревожности.

The Relationship Between Adolescent Self-Esteem and Anxiety

Aschyan Grigor
VSU, Personality Psychology and Psychological Counseling,
MA, 2nd year
Academic Supervisor: N. Kostandyan,
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words*: adolescent, self-esteem, anxiety, anxiety*

The article presents the relationship between adolescent self-esteem and anxiety. Since adolescence is one of the most important periods of an individual's life, its features were studied. In particular, self-esteem and anxiety of adolescents were discussed. Theoretical and experimental studies show that adolescents with adequate self-esteem have an average or low level of anxiety.

Կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարումը ուսումնական գործընթացում և դրա հաղթահարման ուղիները

Հալաջյան Էդիտա
«ՎՊՀ» հիմնադրամ,
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա,
4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Զ. Գրիգորյան

Հանգուցային բառեր. *հարմարվողականություն, հոգեբանական, դպրոցական, մանկավարժական, հարմարվողականության խանգարում*

Հոդվածում ներկայացված են «դպրոցական հարմարվողականության խանգարում», «դպրոցական հարմարվողականություն» հասկացությունները և դրանց արտահայտման ձևերը: Վերլուծվում է դպրոցական հարմարվողականության խանգարման առաջացման գործընթացը և հատուկ ստեղծված մանկավարժական և հոգեբանական պայմանների օգնությամբ հնարավորինս հարմարվողականության գործընթացը:

Յուրաքանչյուր երեխայի դպրոց ընդունվելը սկզբունքորեն նոր փուլ է նրա կյանքում և կարևոր փորձաշրջան նրա ծնողների համար, որը կարող է ուղեկցվել հուզական սթրեսի առաջացմամբ: Դպրոցն առաջին իսկ օրերից երեխայի առջև դնում է մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են նրա մտավոր ու ֆիզիկական ուժերի համախմբում:

Հայտնի է, որ ուսումնական գործընթացը հանդիսանում է կրտսեր դպրոցականի գործունեության առաջատար տեսակ: Սակայն խաղային գործունեությունը դեռևս շարունակում է մնալ երեխայի գիտակցության, մտածողության, երևակայության և այլ իմացական գործընթացների մեջ, ինչն էլ ենթադրում է երեխայի զարգացման տարաբնույթ դժվարություններ: Արդյունքում, ուսումնական գործընթացի շատ ասպեկտներ կրտսեր դպրոցականների համար դժվարություններ են առաջացնում: Նրանց համար դժվար է չշեղվել և հետևել ուսուցչի մտքին և խոսքին, դժվար է անընդհատ անել ոչ թե այն, ինչ նրանք ցանկանում են, այլ այն, ինչ նրանցից պահանջվում է, դժվար է զսպել և բարձրաձայն չարտահայտել իրենց մտքերն ու հույզերը, որոնք առատորեն հայտնվում են: Նա պետք է փոխհարաբերություններ հաստատի հասակակիցների և ուսուցիչների հետ, սովորի կատարել դպրոցական կարգապահության պահանջները և տնային առաջադրանքները, ուսման հետ կապված այլ պարտականություններ: Հետևաբար, կրտսեր դպրոցականին ժամանակ է հարկավոր դպրոցին և նրա հետ կապված բազմաթիվ նորամուծություններին հարմարվելու, նոր պայմանները և պահանջները ընկալելու համար, ապա սովորելու բավարարել դրանք:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տարրական դասարանների աշակերտների դպրոցական հարմարվողականության խանգարման պատճառները և ներկայացնել դրանց հաղթահարման ձևերը, միջոցները, ուղիները:

Դպրոցում երեխաների ուսուցման հետ կապված տարբեր խնդիրների ուսումնասիրության ժամանակ օգտագործվում է «դպրոցական հարմարվողականության խանգարում» տերմինը: Այս տերմինը որպես կանոն նշում է աշակերտի ուսումնական գործունեության հետ կապված շեղումները, որոնք առաջանում են ուսուցման դժվարությունների, կարգապահության խախտումների, դասընկերների հետ կոնֆլիկտների հետևանքով:

Նշված խնդիրների հիմնական պատճառներից մեկը շատ հետազոտողներ համարում են սովորողների հնարավորությունների և դպրոցում առկա կրթական պահանջների անհամապատասխանությունը (Ա. Լիչկո, Գ. Բոչարովա, Բ. Ալմազով, Ռ. Օվչարովա):

Հարմարվողականությունը մարդու ակտիվ հարմարումն է միջավայրին: Այս գործընթացում կարևոր դեր ունի անձի կայունությունը: Այդ կայունության մեջ, որը ենթադրում է մարդու պաշտպանական մեխանիզմը հարմարվողականության մեջ, մտնում են՝ ինտելեկտուալ մակարդակը, հոգեկան գործընթացի որակը, հուզականությունը, հոգեկան վիճակների հավասարակշռությունը:

Հարմարվողականության խանգարումը կարող է առաջանալ ուսումնական գործունեության առարկայական կողմի անբավարար տիրապետման, վարքի կամայականության պատճառով: Հարմարվողականության խանգարում հասկացությունը սկսել է օգտագործվել վերջին տարիներին՝ տարբեր տարիքի երեխաների՝ դպրոցում սովորելու հետ կապված խնդիրների և դժվարությունների նկարագրության համար: Այս շեղումները կարող են լինել ինչպես առողջ, այնպես էլ ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ: Հարկ է նշել, որ հարմարվողականության խանգարում հասկացության ձևակերպման և սահմանման վերաբերյալ միասնական կարծիք գոյություն չունի: Դպրոցական հարմարվողականության խանգարումը սոցիալական խնդիր է, այն բնութագրվում է դպրոցի պահանջների հարմարվողականության խախտմամբ կամ բացակայությամբ:

Կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարումը բազմաթիվ հետազոտողների խնդրի առարկա է դարձել: Մասնավորապես, Ռ. Օվչարովան նշում է կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարման երկու հիմնական պատճառ [3, 117-119].

1. սխալ դաստիարակությունն ընտանիքում կամ երեխաների անհատական առանձնահատկությունների անտեսումը ծնողների կողմից,
2. երեխայի անբավարար մտավոր և հոգեկան զարգացումը, ուսուցիչների և ծնողների կողմից ցուցաբերվող օգնության և ուշադրության բացակայությունը:

Կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարումը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով, որոնք միավորվում են երկու մեծ խմբերում.

1. օբյեկտիվ գործոններ (սոցիալական),
2. սուբյեկտիվ գործոններ (անհատական):

Երկու խմբերի գործոնները սերտորեն կապված են, լրացնում են միմյանց և

փոխկապակցված են: Օբյեկտիվ գործոնները ներառում են միկրո-, մակրո- և մեզոմիջավայրեր, որոնք անմիջականորեն նպաստում են հարմարվողականության խանգարման առաջացմանը:

Միկրոմիջավայրը, ինչպես փորձն է ցույց տալիս, պատասխանատու է երեխայի սոցիալական հարմարվողականության հաջողության համար: Այն ներառում է դպրոցը, հայրենիքը, ընտանիքը, ընկերները, մերձավոր սոցիալական շրջապատը: Կարելի է ասել, որ վարքագիծը դառնում է սոցիալական, մշակութային գործոն ոչ միայն իր բովանդակությամբ, այլև իր մեխանիզմներով և մեթոդներով: Զարգացման սոցիալական իրավիճակը որոշում է մարդու հոգեկան կյանքը նրա զարգացման տարբեր փուլերում: Ըստ Լ. Վիգոտսկու, մարդը կախված է ոչ թե սոցիալական իրավիճակից, այլ մարդկանցից, ովքեր ստեղծում են սոցիալական իրավիճակ [2, 207-210]:

Երեխայի գիտակցությունը, վերաբերմունքը անընդհատ փոխվում են մարդկանց, իրերի, շրջապատի և, ի վերջո, իր նկատմամբ: Արդյունքում երեխան ձեռք է բերում փորձ: Միջավայրը և սուբյեկտը ներկայացված են անխզելի միասնության մեջ: Շրջակա միջավայրը հասկացվում է որպես «կենսակերպ», ներառում է ոչ միայն պատմական ժամանակը, սոցիալական ռեժիմը, այլև որոշակի սոցիալական տարածություն, օբյեկտիվ իրականություն, որտեղ կան սոցիալականացման տարբեր ինստիտուտներ՝ ընտանիք, դպրոց, այլ ասոցիացիաներ և կոլեկտիվներ): Բազմաթիվ հետազոտողներ (Տ. Դ. Մոլոդցովա, Ս. Ա. Բելիչևա և ուրիշներ) առաջնային են համարում ընտանիքի, ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, հասարակության մեջ երեխայի հարմարվողականության մակարդակը որոշող, սոցիալականացումն ապահովող գործոնները [6]:

Ընտանիքի առանձնահատկություններով են պայմանավորված ուսուցման ընթացքում առաջացող դժվարությունները:

Կրտսեր դպրոցականների ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Այսպես, Գ. Բոչարովան տարբերում է ընտանիքների հետևյալ տեսակները՝ դասակարգման հիմքում դնելով երեխայի ապրումները:

1. Ընտանիք, որտեղ տիրում է անբարենպաստ մթնոլորտ, որտեղ ծնողները ոչ միայն անտարբեր են, այլ նաև կոպիտ, անհարգալից իրենց երեխաների նկատմամբ:
2. Ընտանիք, որտեղ անդամների միջև զգացմունքային շփումներ չկան, իշխում է անտարբերությունը: Նման իրավիճակներում երեխան ձգտում է գտնել հարաբերություններ ընտանիքից դուրս:
3. Ընտանիք, որն ունի անառողջ բարոյական մթնոլորտ, ուր երեխային ներարկում են անցանկալի կարիքներ և շահեր: Նա ներգրավվում է անառողջ ապրելակերպի մեջ [2, 110-115]:

Ա. Լիչկոն ընտանիքում անբարենպաստ է համարում այն իրավիճակները, երբ երեխան անտեսված է ծնողների կողմից, անընդհատ ուշադրության կենտրո-

նում է, ծնողների ուշադրությունն ուղղված է միայն սեփական անձին և քիչ ուշադրություն դեպի երեխան [2, 95-99]:

Մ. Ռատտերը «դժվար» երեխաների առաջացմանը նպաստող հանգամանքների թվին դասում է ընտանեկան տրավմաները, կոնֆլիկտները, ծնողների սիրո պակասը, նրանցից մեկի մահը, շուրջօրյա խնամքի հաստատություններում հայտնվելը և այլն: Երեխաները յուրացնում են ծնողների վարքի դրական և բացասական կողմերը՝ երբեմն դրանք հասցնելով ծայրահեղությունների: Ընտանիքի ազդեցությունն՝ ուղղված կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությանը և ընդհանուր դպրոցին, չափազանց մեծ նշանակություն ունի: Այսինքն՝ ծնողների կարծիքը մեծ նշանակություն ունի՝ ուղղված կրտսեր դպրոցականի հարմարվողականության գործընթացին:

Ընտանիքի անդամների վերոնշյալ վերաբերմունքը երեխաների մոտ կարող է առաջացնել հարմարվողականության խանգարում: Արդյունքում ի հայտ է գալիս առարկան յուրացնելու անկարողություն, բացասական ագրեսիվ վերաբերմունք ուսումնական գործընթացի նկատմամբ, ինչպես նաև դեպրեսիվ վիճակներ, մեկուսացում, վախ սովորելու նկատմամբ [2, 130-135]:

Աշակերտի հարմարվողականության խանգարումը պայմանավորված է նաև դպրոցական գործոնով: Դպրոցը բարդ սոցիալական ինստիտուտ է, որն արտացոլում է հասարակության բնույթը, նպատակը, խնդիրները, հակասությունները, մանկավարժի անձի որակները, հաղորդակցման ոճը:

Նշված պատճառները նպաստում են հարմարվողականության խանգարման տարբեր ձևերի առաջացմանը, որոնցից առանձնացվում են թերարժեքության զգացումը սեփական անձի նկատմամբ, դպրոցական կարգապահության կանոնների անտեսումը, անտարբերությունը, ագրեսիվությունը, մեկուսացումը հասակակիցներից [3, 94-96]:

Կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարման առաջացման սուբյեկտիվ գործոններն են գենետիկական ազդեցության մեխանիզմները, մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, երեխայի ճանաչողական ոլորտի զարգացման առանձնահատկությունները, դրդապատճառային-կամային ոլորտի զարգացումը, խոսքի զարգացման խանգարումները, անհատական առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ սուբյեկտիվ պատճառների գերակշիռ մասը առաջանում է արտաքին, այսինքն՝ էկզոգեն պայմանների ազդեցության տակ:

Կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարման պատճառ կարող է հանդիսանալ նաև դպրոցական նևրոզը, որի մասին խոսել են Ս. Ա. Բելիչևան, Տ. Դ. Մոլոդցովան, Բ. Ն. Ալմազովը, Ա. Ե. Լիչկոն և ուրիշները [6]:

Ներկայացնելով տարրական դասարանների աշակերտների «դպրոցական նևրոզ» հասկացությունը՝ անհրաժեշտ է այն ավելի ճշգրիտ սահմանել:

Այս տերմինը հայտնվել է 1960 թ. հոգեբանության և մանկավարժության մեջ: Դրա տակ հասկանում ենք հոգեբանական, մտավոր գործունեության հատուկ սահմանային խանգարումներ, որն առաջացել է դպրոց հաճախելու հետևանքով և

դրսևորվում է այն ախտանշանների առկայությամբ, ինչպիսիք են դպրոց հաճախելու ցանկության բացակայությամբ, դժկամությամբ: Ցանկացած մտավոր շեղում հանգեցնում է սոցիալական հարմարվողականության խանգարման տարբեր աստիճանի արտահայտվածության: «Դպրոցական նևրոզ» կամ «դպրոցական ֆոբիա» հասկացությունները բավականաչափ հստակ ու տարբերակված չեն, թեև դրա հետևում կան բավականաչափ խնդիրներ [4, 147-149]:

Անդրադառնանք հարմարվողականության խանգարման արտահայտման ձևերին, որոնք առավել հստակ ու բազմակողմանիորեն ներկայացրել է Ս. Ա. Բելիչևան, ապա հետագայում լրացվել է Տ. Դ. Մոլոդցովայի կողմից: Ս. Ա. Բելիչևան հաշվի է առնում արատի արտաքին կամ խառը դրսևորումները անհատի՝ հասարակության, միջավայրի, իր հետ փոխազդեցության մեջ [6].

1. պաթոգեն. սահմանվում է որպես նյարդային համակարգի, ուղեղի հիվանդությունների և տարբեր ֆոբիաների դրսևորումների հետևանք,
2. հոգեսոցիալական. սեռային և տարիքային փոփոխությունների արդյունք, բնավորության ընդգծում, մտավոր զարգացման անբարենպաստ դրսևորումներ,
3. սոցիալական. դրսևորվում է բարոյականության և օրենքի նորմերի խախտումով:

Այս դասակարգման հիման վրա Տ. Մոլոդցովան առանձնացնում է հետևյալ տեսակները.

1. Ախտածին. դրսևորվում է նևրոզների, հիստերիաների մեջ,
2. Հոգեբանական. ֆոբիաներ, կոնֆլիկտներ, որոշ տեսակի շեշտադրումներ,
3. սոցիալ-հոգեբանական, հոգեսոցիալական. դժվար կրթվելիք, կոպտություն:

Դասին չհարմարված աշակերտը անկազմակերպ է, հաճախ շեղված, պասսիվ: Դպրոց հաճախելուն պատրաստ լինելը պայմանավորված է երեխայի օրգանիզմի հոգեֆիզիոլագիական և հոգեկան գործընթացների զարգացման որոշակի աստիճանով, որը հնարավորություն է տալիս 6 տարեկան երեխաներին հարմարվել նոր պայմաններին, գործունեության նոր տեսակին, կանոններին և ավելի մեծ ծանրաբեռնվածությանը: Դպրոցին հարմարվելը որոշակի ժամանակ է պահանջում, որոշ երեխաներ դառնում են շատ աղմկոտ, անհնազանդ, որոշ երեխաներ՝ ընդհակառակը՝ անհամարձակ, կաշկանդված և կամակոր [1, 21-22]:

Անդրադառնանք ուսումնամեթոդական գրականության մեջ ներկայացված հարմարվողականության խանգարման հաղթահարման ուղիներին: Գիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կան այնպիսի երեխաներ, որոնք ունեն ուսումնական գործընթացին հարմարվելու դժվարություններ: Ինչպե՞ս կարող ենք օգնել այս երեխաներին: Երեխայի հարմարվողականության խանգարման խնդիրը լուծելու համար պետք է ներգրավված լինեն և՛ ծնողները, և՛ ուսուցիչները: Անհրաժեշտ է վերահսկել ուսումնական նյութի յուրացումը, տանը բացատրել այն, ինչ երեխան բաց է թողել դասարանում: Ուսուցիչը ստեղծում է դասապրոցեսի հարմարավետության իրավիճակ, օգնում է դասարանում կազմակերպել

անհատական մոտեցում: Նա պետք է լինի զուսպ, հանգիստ, ընդգծի երեխաների հաջողությունները, փորձի բարելավել հարաբերությունները հասակակիցների հետ: Դասարանում անհրաժեշտ է ստեղծել զգացմունքային միջավայր: Մեծահասակները կարևոր դեր են խաղում ուսուցման հարմարավետության ապահովման գործում: Ուսուցչի անձնական որակները, ուսուցչի և ծնողների փոխազդեցությունը, դպրոցում հարաբերությունների ընդհանուր դրական հուզական ֆոնի ստեղծման և զարգացման բանալին են: Կարևոր է հաշվի առնել, որ հաջողության զգացումը, հաջողության ձգտելու ցանկությունը և հաջողության հասնելու դրդապատճառը ձևավորվում է հենց կրտսեր դպրոցական տարիքում: Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվում է երեխայի անձնային որակները, և կրտսեր դպրոցական տարիքը հենց հաջողության հասնելու դրդապատճառի ձևավորման տարիքն է: Դրանից հետո դրդապատճառ և նպատակասլացություն ձևավորելը շատ դժվար կլինի: Առաջին հերթին պետք է գնահատել երեխայի ճանաչողական և անձնային ոլորտները տարբեր ստանդարտացված ախտորոշիչ մեթոդներով, որից հետո մշակել բացահայտված խնդիրների լուծման քայլեր: Տվյալ քայլաշարում պետք է ընդգրկված լինեն առանձին մշակված պարտականություններ և քայլեր ինչպես ծնողների, այնպես էլ յուրաքանչյուր մասնագետի համար: Դպրոցական հարմարվողականության խանգարման հաղթահարումը պահանջում է համակարգված կանխարգելիչ գործողություններ. պետք է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, վերջինիս մեջ դրականի վրա հենվել և այն առավել զարգացնել, կիրառել հոգեբանական և մանկավարժական մեթոդներ, որոնք պետք է լինեն իրավիճակային: Ուսուցիչը պետք է ունենա բավական գիտելիքներ՝ կապված կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունների հետ: Երեխաների նկատմամբ ուշադրությունը, նրանց զարգացման ախտորոշումը, գնահատումը պետք է դառնա ուսուցչի գործունեության հիմնական մասը: Դպրոց ընդունվելու տարիքը պետք է համապատասխանի ոչ թե անձնագրային տարիքին, այլ հոգեֆիզիոլոգիական տարիքին (որոշ երեխաների մոտ կարող է լինել ոչ թե վեց, այլ յոթ և նույնիսկ ութ տարեկանում): Երեխայի դպրոց մուտք գործելիս պետք է հաշվի առնել ոչ այնքան գիտելիքների և կարողությունների մակարդակը, որքան յուրաքանչյուրի հոգեբանության, խառնվածքի և հնարավորությունների առանձնահատկությունները: Ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար պետք է մանրամասն ուսումնասիրել, վերլուծել և գտնել ստեղծված իրավիճակի լուծման համապատասխան ճանապարհները: Չի կարելի թողնել, որ ուսումնական գործընթացի բարդություններն ու դժվարությունները դառնան աշակերտների համար անլուծելի խնդիրներ: Հարմարվողականության խանգարման հաղթահարման հիմքում ընկած են ուսուցչի հետևողական լինելը, հաճախակի ծնողական ժողովներ կազմակերպելը, զրույցը աշակերտների հետ, նոր մեթոդների կիրառությամբ դասապրոցեսն առավել հետաքրքիր դարձնելը, աշակերտների հետաքրքրության խթանումը, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպումը, իմացության մակարդակի բարձրացումը: Ուսուցումը արդյունավետ կլինի, եթե ուսուցիչը այս

ամենի հետ մեկտեղ աշակերտի նկատմամբ ցուցաբերի նրբազգաց վերաբերմունք և առաջնորդվի Ա. Մակարենկոյի սկզբունքով՝ «Հարգանք և պահանջկոտություն սանի նկատմամբ»:

Ուստի՝ հարմարվողականության խանգարման հաղթահարման համար պետք է շտկել ուսումնական գործընթացում առաջացած ցանկացած թերություն, խորապես ուսումնասիրել դրանց պատճառները և մշակել համապատասխան մեթոդներ դրանց լուծման ուղղությամբ, մշակել մեթոդներ աշակերտների հետ աշխատելու համար և դրանք ճիշտ կիրառել գործնականում, աշակերտին ներգրավել ուսումնական գործընթացում՝ առաջացնելով հետաքրքրություն ուսումնական գործընթացի վերաբերյալ:

Այսպիսով՝ դպրոցական հարմարվողականության խանգարումը երեխայի մեջ դպրոցին հարմարվելու ոչ ադեկվատ մեխանիզմների ձևավորումն է՝ կրթական գործունեության և վարքագծի խախտումների տեսքով, անհանգստության մակարդակի բարձրացմամբ և անձի զարգացման խեղաթյուրումներով: Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է մի նոր փուլ երեխայի կյանքում, որն էլ ունի իր առանձնահատկությունները: Այս տարիքում երեխան առաջին անգամ ոտք է դնում դպրոց, որն էլ բացում է գիտելիքների և կարողությունների ձեռքբերման մի նոր աշխարհ: Այս տարիքում փոխվում են երեխայի հետաքրքրություններն ու արժեքները, և երեխան ձեռք է բերում սոցիալական նոր կարգավիճակ: Եվ այս նոր սոցիալական կարգավիճակն էլ իր հետ բերում է որոշակի դժվարություններ: Չարտահայտված հույզերը վերածվում են կամ ներամփոփության կամ կտրուկ ագրեսիայի և դպրոց չգնալու ցանկության: Ուստի, հարմարվողականության խանգարման հրահրման փոփոխության պատճառ է դառնում անծանոթ կենսամիջավայրը, մշտական հոգետրավմատիկ իրավիճակի մեխանիզմի պայմանների առկայությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղազարոսյան Ա., Սեդրակյան Ս., Հակոբյան Ն., Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում, Երևան, 2016, 182 էջ:
2. Белкин А.С. Основы возрастной педагогики: учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений, Москва: Издательский центр «Академия», 2000.
3. Гамезо М., Петрова Е., Орлова Л. Возрастная и педагогическая психология: учеб. пособие для студентов всех специальностей педагогических вузов. Москва: Педагогическое общество России, 2003. - 512 с.
4. Неудахина Н. А., Основы педагогического мастерства, Барнаул: Изд-во АГАУ, 2009.
5. Петрова Л.И. Воспитание младшего школьника: учебно-метод. Пособие для студентов вузов, Ростов на Дону: Феникс, 2008.
6. https://bazovo.ru/hy/the-change-in-intracranial-pressure/specialnaya-psihologiya-prichiny-i-proyavleniya-shkolnoi-dezadaptacii/

Дезадаптация учащихся младшего школьного возраста в учебном процессе и пути его преодоления

Аладжян Эдита
Педагогика и методология, 4-й курс
Научный руководитель:
кандидат педагогических наук, доцент З. Григорян

Резюме

Ключевые слова: *адаптация/дезадаптация, психологическая, школьная, дети группы риска, педагогические условия преодоления школьной дезадаптации школьников*

В работе проводится анализ понятий «школьная дезадаптация», «школьная адаптация», описываются их признаки. Показан механизм возникновения школьной дезадаптации и процесс перехода в состояние адаптации с помощью специально созданных педагогических условий.

Maladaptation of Junior Schoolchildren in the Learning Process and Ways of Coping

Halajyan Edita
Pedagogy and Methodology, 4th year
Academic Supervisor: Z. Grigoryan,
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words*: adaptation/*maladaptation*, psychological, school, children at risk of school* maladaptation*, conditions for overcoming school* maladaptation

The paper analyzes the concepts of “school maladaptation”, “school adaptation”, describes their signs. It outlines the mechanism of school maladaptation and the process of transitioning to a state of adaptation through the creation of specially designed pedagogical conditions.

Հանդուրժողականություն անորոշության նկատմամբ և դրա ազդեցությունը գործունեության ինքնակազմակերպման վրա շրջափակման պայմաններում

Ղահրամանյան Մարիաննա
ԱրՊՀ, Հոգեբանություն, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ավագ դասախոս Ա. Ավանեսյան

Հանգուցային բառեր. *հանդուրժողականություն անորոշության նկատմամբ, ինքնակազմակերպում, շրջափակում, հարմարվողականություն, անհանդուրժողականություն*

Որպես անհատականության հատկանիշ՝ հանդուրժողականությունը և անհանդուրժողականությունը բնութագրվում են որպես անձի ընկալում և դիմակայելու ունակություն ոչ միանման իրավիճակներին: Մարդիկ, ովքեր հանդուրժում են անորոշությունը, այս իրավիճակները համարում են հետաքրքիր և ցանկալի, մինչդեռ նրանք, ովքեր ունեն թույլ աստիճանի հանդուրժողականություն անորոշության նկատմամբ, ունենում են սթրես, անհանգստություն և գրգռվածություն ոչ միանման իրավիճակներում [1, 791-802]:

Համաձայն Լեոնտևի ուսումնասիրության՝ նվիրված անձնական զարգացմանը և սթրեսի դիմադրությանը, հենց անորոշության նկատմամբ դրական վերաբերմունքն է, որ ամենաարդյունավետն է անհատական զարգացման և սթրեսի դիմադրության համար, որի էությունը կայունության և անորոշության մանկական պատրանքից հրաժարվելն է և զարգացնել ավելի չափահաս դիրքորոշում՝ ընդունելու անորոշությունը, մյուս կողմից՝ նոր հնարավորությունների բացահայտումն ու ընտրության ազատությունը [2, 138-141]:

Հետևելով առօրյա կյանքում մեր հանդիպած բարձր աստիճանի հանդուրժողականություն ունեցող մարդկանց՝ կարելի է տալ նրանց բնորոշ բնութագիրը: Դրանք են՝

- ✓ Մտածողության ճկունություն:
- ✓ Կայունություն ֆրուստրացիայի նկատմամբ:
- ✓ Կարեկցելու կարողություն:
- ✓ Ինքնավարության ձգտում:
- ✓ Հումորի զգացում:
- ✓ Ներքին անվտանգության զգացում:

Հաշվի առնելով Արցախում ստեղծված իրավիճակը՝ արցախցիները ամեն օր բախվում են անորոշության զգացման հետ: Այն չի կարող բացասական հետևանքներ չթողնել: Մշտական անորոշությունը կարող է այնպիսի հետևանքներ թողնել, ինչպիսիք են՝

- ▪ անհանդուրժողականությունը,
- ▪ անհարմարվողականությունը,
- ▪ ագրեսիվությունը,

- ֆրուստրացիան,
- մշտական լարվածությունը,
- ապատիան,
- ռիգիդությունը և այլն:

Անորոշության նկատմամբ անհանդուրժողականությունը կարող է առաջ բերել նաև գործունեության ինքնուրույն կազմակերպման անկարողության, քանի որ ունենալով անորոշության զգացողություն, բնականաբար, մարդը, հնարավոր է, չկարողանա պատշաճ կերպով ինքնուրույն կազմակերպել իր գործունեությունը:

Որպես գիտական վարկած՝ առաջ ենք քաշել այն ենթադրությունը, որ չնայած այն փաստին, որ անորոշությունը կարող է բացասաբար ազդել գործունեության ինքնակազմակերպման վրա, բայց արցախցիները մշտապես ապրելով անորոշության մեջ՝ ձեռք են բերել հարմարվողականություն, ինչը նրանց օգնում է, անկախ անորոշ իրավիճակների ու պայմանների միջին կամ բարձր աստիճանի, ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը:

Որպես հետազոտական մեթոդակազմ ընտրել ենք Մաքլեյնի «Հանդուրժողականություն անորոշության նկատմամբ» (հեղինակ՝ Դեյվիդ Լ. Մաքլեյն (1993)/ Հարմարեցում. Գ. Լուկովիցկայա (1998), Ն. Օսին (2010)) և Ե. Յ. Մանդրիկովայի «Գործունեության ինքնակազմակերպման» հարցաթերթիկները: Հետազոտությանը համակազմ են հանդիսացել թվով 50 արցախցիներ, ովքեր հետազոտության ժամանակահատվածում գտնվում էին շրջափակման պայմաններում:

«Հանդուրժողականություն անորոշության նկատմամբ» մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացել ենք հետևյալը.



Տրամագիր 1. «Հանդուրժողականություն անորոշության նկատմամբ»

Եթե ստացված տվյալները ներկայացնենք աղյուսակի տեսքով, ապա կստանանք հետևյալը.

Աղյուսակ 1

Անորոշության նկատմամբ հանդուրժողականության աստիճանները	*Ստացված արդյունքները*
Ցածր	8 %
Միջին	88 %
Բարձր	4 %

Ինչպես տեսնում ենք, արցախցիները ունեն միջին աստիճանի հանդուրժողականություն անորոշության նկատմամբ: Այն կարելի է բացատրել նրանով, որ պատերազմից հետո արցախցիները շատ են բախվել անորոշության զգացման հետ: Մշտապես գտնվելով անորոշության մեջ՝ նրանք ձեռք են բերել հարմարվողականություն:

«Գործունեության ինքնակազմակերպում» մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացել ենք հետևյալը.



Դրամագիր 2. «Գործունեության ինքնակազմակերպում»

Ընդհանուր տվյալներով հետազոտվողների 60 %-ը միջին աստիճանի է կարողանում ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը, 38 %-ը՝ բարձր և միայն 2 %-ն է, որ ցածր աստիճանի է կարողանում ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը:

Անդրադառնալով վարկածի այն ենթամասին, որ անորոշության զգացողությունը հնարավոր է չազդել գործունեության ինքնուրույն կազմակերպման վրա, մենք ստացված տվյալները առանձնացրել ենք ըստ անորոշության հանդեպ հանդուրժողականության մակարդակների և արդյունքում ստացել ենք հետևյալը.



Դրամագիր 3. «Գործունեության ինքնակազմակերպում»

Ցածր աստիճանի հանդուրժողականություն ունեցողների 25 %-ը կարողանում է բարձր աստիճանի ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը, իսկ 75 %-ը՝ միջին աստիճանի: Միջին աստիճանի հանդուրժողականություն ունեցողների 39 %-ը կարողանում է բարձր աստիճանի ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը, 59 %-ը՝ միջին աստիճանի, իսկ 2 %-ը՝ ցածր: Բարձր աստիճանի հանդուրժողականություն ունեցողների 50 %-ը կարողանում է բարձր աստիճանի ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը, իսկ մնացած 50 %-ը՝ միջին աստիճանի: Ստացված արդյունքից կարելի է ենթադրել, որ արցախցիները, չնայած անորոշության առկայության, կարողանում են ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը: Այն կարելի է բացատրել նրանով, որ մշտապես ապրելով անորոշության զգացողությամբ, հարմարվողականություն են ձեռք բերել և կարողանում են անկախ անորոշության առկայության միջին կամ բարձր աստիճանի ինքնուրույն կազմակերպել իրենց գործունեությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Freeston M. H., Rheaume,J., Letarte H., Dugas M. J., Ladouceur R. Why do people worry? Personality and Individual Differences, 1994, pp. 791-802.
2. Леонтьев Д.А., Миюзова А. Е. Методический подход к фиксации изменений личности в результате экзистенциальной работы // Пятая Всероссийская научно-практическая конференция по экзистенциальной психологии. Москва, 2013, 138-141 с.

Толерантность к неопределенности и ее влияние на самоорганизацию деятельности в условиях блокады

Каграманян Марианна

АрГУ, Психология, 2-й курс

Научный руководитель:

старший преподаватель А. Аванесян

Резюме

Ключевые слова: толерантность к неопределенности, самоорганизация, сдерживание, адаптивность, интолерантность

В данной статье представлена толерантность жителей Арцаха к неопределенности и ее влияние на самоорганизацию деятельности в условиях блокады. Исследование было основано на опросники «Толерантность к неопределенности» Маклейна (Автор: Дэвид Л.Маклейн/Адаптация Г. Луковицкой; Н. Осин) и «Самоорганизация деятельности» Э. Ю. Мандриковой. В результате исследования было установлено, что жители Арцаха обладают толерантностью к неопределенности и способны самостоятельно организовывать свою деятельность в условиях блокады.

Tolerance for Uncertainty and its Effect on Self-organization of Activities under Conditions of Blockade

Ghahramanyan Marianna

ArSU, Psychology, 2nd year

Academic Supervisor: A. Avanesyan,

Senior Lecturer

Summary

Key words: *tolerance of uncertainty, self-organization, containment, adaptability, intolerance*

This article presents the tolerance of the residents of Artsakh to uncertainty and its impact on the self-organization of activities under the blockade. The study was based on McLane´s "Tolerance to Uncertainty" (Author: David L. McLane/Adaptation G. Lukovitskaya; N. Osin) and E. Yu. Mandrikova "Self-Organization of Activities" questionnaires. As a result of the study, it was found that the inhabitants of Artsakh have tolerance for uncertainty and are able to independently organize their activities under the blockade.

Վշտի ապրման առանձնահատկությունները և դրսևորումները 4-6 տարեկան երեխաների մոտ

Մեսրոպյան Մարինա
«ՎՊՀ» հիմնադրամ,
Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. *վիշտ, կորուստ, վշտի փուլեր, նորմալ և պաթոլոգիկ վիշտ, իրական և ցուցադրական վիշտ*

Թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մեզանից յուրաքանչյուրն, անկախ իր կամքից, ելնելով կորոնավիրուսային համավարակի ու ՀՀ-ում պատերազմական իրադրությունից, առնչվեց մահվան հետ: Հատկապես պատերազմի շրջանում ականատես եղանք մի իրականության, որտեղ բազմաթիվ երեխաներ որբացան: Կորուստն ընդհանրապես և մարդկային կորուստը հատկապես երեխաների մոտ առաջացրեց հուզական, վարքային, ֆիզիոլոգիական և այլ մի շարք փոփոխություններ: Դրանցով պայմանավորված, անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել վշտի ապրման ձևերն ու առանձնահատկությունները երեխաների մոտ, որպեսզի նաև հնարավորություն ստեղծվի նպատակային և արդյունավետ կերպով աշխատել նրանց հետ:

Աշխատանքի նպատակն էր բացահայտել վշտի ապրման առանձնահատկություններն ու դրսևորումները 4-6 տարեկան երեխաների մոտ: Նպատակի իրականացման համար մեր առջև խնդիր էինք դրել ուսումնասիրել թեմայի շրջանակներում առկա գրականությունը, բացահայտել երեխաների հուզական վիճակի առանձնահատկություններն ու տագնապայնության մակարդակը:

Վիշտը սուր ապրում ու զգացում է, որը հիմնականում վերաբերում է կորստին և ոչ միայն մահվան, այլև բնակարանի, բնակավայրի, սոցիալական դիրքի, հարաբերությունների կորստի ու խախտման երևույթներին [5]:

Հոգեբանության մեջ վիշտը սովորաբար մեկնաբանվում է որպես կորստի ապրում: Կ. Իզարդը նշում է, որ «կորուստը կարող է լինել ժամանակավոր (բաժանում) կամ մշտական (մահ), իրական կամ երևակայական, ֆիզիկական կամ հոգեբանական» [2]:

Վիշտը համարվում է կորստի դեպքում ապրվող հոգեբանական, ֆիզիկական, վարքային և սոցիալական ռեակցիա: Սա ժամանակի ընթացքում ընթացող երկարատև գործընթաց է և իր մեջ ներառում է բազմաթիվ ֆիզիկական, հոգեբանական, վարքային և այլ փոփոխություններ: Սա նորմալ ռեակցիա է, և այս ռեակցիաների բացակայությունը կարող է նորմայից շեղում և պաթոլոգիա համարվել:

Վիշտն իրենից ներկայացնում է որոշակի գործընթաց, որը տեղի է ունենում ժամանակի ընթացքում: Ժամանակակից հոգեբանության մեջ գոյություն ունեն

երկու մոտեցումներ վշտի գործընթացի մասին, որոնք ընթանում են 2 տարբեր ուղղություններով [3].

1. վիշտը խիստ անհատական գործընթաց է, բոլոր մարդիկ վիշտն ապրում են յուրովի, չկան վշտի ապրման ունիվերսալ փուլեր, յուրաքանչյուրը կորուստն ընկալում է յուրովի ու ունենում է յուրօրինակ զգացողություններ,

2. վիշտը, չնայած իր անկրկնելի լինելուն, ունի իր ընթացքի որոշակի օրինաչափություն, գոյություն ունեն կորստի ապրման ընդհանուր փուլեր:

Առանձնացնում են վշտի նորմալ և պաթոլոգիկ տեսակներ: «Պաթոլոգիկ վիշտ» հասկացությունն օգտագործվում է հոգեբուժության մեջ՝ որպես խանգարումների խմբի համախտանիշ: Նորմալ վիշտը պաթոլոգիկից առանձնանում է ըստ հետևյալի.

- առկա է դրական դինամիկա, վիշտը վիճակ չէ, այլ գործընթաց է,
- դրսևորվում է մահվան ցավալի իրադրությունից ժամանակ առ ժամանակ վերացարկվելու կարողություն,
- հարազատ մարդու մահից հետո 6 ամսվա ընթացքում առաջանում են դրական զգացողություններ,
- սուր վշտից անցում է կատարվում դեպի նորմալ վիճակի,
- կորուստ ապրած մարդը ունակ է ոչ միայն հարազատի մահն ընդունել և նրան հրաժեշտ տալ, այլ նաև փնտրում և գտնում է մահացածի հետ ունեցած հարաբերությունները դրական կերպով հիշողության մեջ պահպանելու միջոցներ:

Գրականության մեջ առանձնացվում են նաև իրական և ցուցադրական վշտի տեսակները: Առաջինի դեպքում մարդն իրոք տառապում է կորստի պատճառով: Երկրորդի դեպքում կորուստը մարդուն անտարբեր է թողնում, բայց նա արտաքնապես ցույց է տալիս վիշտն ու տխրությունը կատարվածի համար, երբեմն էլ ինքն իրեն փորձում է համոզել, որ իրոք վիշտ է ապրում: Այսպիսի վարքի պատճառ կարող են հանդես գալ մեղքի զգացումը կամ շրջապատի սպասելիքներն արդարացնելու ցանկությունը:

Ջ. Գարլոկը առաջարկել է վշտի հետևյալ մոդելը, որն իր մեջ ներառում է 7 փուլեր [3].

1. շոկ և մերժում,
2. հուզական ազատագրում,
3. դեպրեսիա և հուզական դիսթրես,
4. խուճապ և մեղքի զգացում,
5. զայրույթ և թշնամանք,
6. հույսի վերականգնում և վերակառուցում,
7. լուծում. սեփական կյանքի նկատմամբ վերահսկողության վերականգնում:

Լայն տարածում ունի նաև Ֆ. Ե. Վասիլյուկի կողմից առաջարկվող եռաքայլ սխեման: Նա առանձնացրել է հետևյալ փուլերը [1].

- շոկ (տևողությունը՝ միջինում 7-9 օր). տեղի ունեցող երևույթների նկատ-

մամբ անիրականության զգացում, հոգեկան քարացում, անզգայություն, ֆիզիոլոգիական և վարքային խանգարումներ,

▪ փնտրտուքի փուլ (ժամանակի մեջ որոշակիորեն տեղավորվում է նախորդ և հաջորդ փուլերի մեջտեղում). մահացածի ներկայության զգացում, նրան վերադարձնելու ոչ ռեալ ցանկություն և ոչ այնքան մահվան փաստի մերժում, որքան կորստի մշտականության մերժում, հույս, հրաշքի հավատ,

▪ սուր վշտի փուլ (տևում է 6-7 շաբաթ). հիասթափություն, տառապանք, անկազմակերպվածություն, բազմաթիվ ծանր, երբեմն էլ վախեցնող զգացողությունների ու մտքերի առկայություն, դատարկության և իմաստազրկության, լքվածության և միայնակության, զայրույթի և մեղքի, վախի, տագնապի և անօգնականության զգացումներ, վշտի ապրումը դառնում է գործունեության առաջնային տիպ,

▪ մնացորդային ցնցումների և վերակազմակերպման փուլ (տևողությունը՝ մոտ մեկ տարի). պահպանվում են սկզբում հաճախ, իսկ հետո գնալով ավելի հազվադեպ դրսևորվող վշտի նոպաները, կյանքը աստիճանաբար հունի մեջ է ընկնում, մահացածը դադարում է կյանքի գլխավոր շարժիչը լինելուց,

▪ ավարտի փուլ. մահացածի կերպարը գրավում է իր մշտական տեղը վիշտն ապրողի կյանքում:

Առանձնացնում են վշտի ապրման կրիտիկական ժամանակահատվածներ, որոնց միջով անցնում են բոլոր կորուստ ապրած մարդիկ [4]: Առաջին 48 ժամերը վշտի սկզբնական փուլի ցնցումն ու թմրությունն է: «Չի կարող լինել»,– սա է առաջին արձագանքը մահվան լուրին: Բնորոշ վիճակը կարող է տևել մի քանի վայրկյանից մի քանի շաբաթ:

Առաջին շաբաթը – հուղարկավորության և այլ գործերի կարիքը զբաղեցնում է բոլոր մտքերը, և կորստի զգացումը կարող է փոխանցվել զուտ ինքնաբերաբար: Այն կարող է ուղեկցվել «անկման» և էմոցիոնալ ու ֆիզիկական հյուծվածության զգացումով:

6-12 շաբաթը սուր վշտի փուլն է, հուսահատության շրջանը, տառապանքը և կազմալուծումը: Այս փուլում գիտակցվում է կորստի իրականությունը: Այդ ժամանակ ապրած հույզերի սպեկտրը բավական լայն է. մարդը կորուստ է զգում և վատ է վերահսկում իրեն: Ահա այս ժամանակաշրջանի որոշ զգացողությունների ձևեր. քնի խիստ փոփոխություններ, խուճապային վախ, ախորժակի փոփոխություններ, որոնք ուղեկցվում են քաշի կորստով կամ ավելացմամբ, հոգնածություն և ընդհանուր թուլություն, մկանային սարսուռ, տրամադրության կտրուկ փոփոխություններ, կենտրոնանալու անկարողությունը և հիշողության հետ կապված խնդիրները, լիբիդոյի նվազում, մոտիվացիայի պակաս, տառապանքի ֆիզիկական ախտանիշներ, մահացածի մասին խոսելու անհրաժեշտություն, առանձնանալու ուժեղ ցանկություն:

Ամենասուր վշտի զգացումն առաջանում է այն ժամանակ, երբ կյանքից հեռանում է մեզ համար կարևոր անձ: Եթե ուշադրություն դարձնենք հատկապես մահվան հետ կապված վշտի ապրմանը երեխաների շրջանում, ապա պետք է նշել, որ վիշտն ապրվում է տարբեր կերպ տարբեր տարիքային փուլերում:

Հայտնի հոգեբան և երեխաների վշտի հետ աշխատող մասնագետ Ջոն Դոուլբին առանձնացրել է մանկական վշտի 3 փուլեր [4].

- դիմադրության փուլ, երբ երեխան մերժում է հարազատի մահը,
- անկազմակերպվածության փուլ, երբ երեխան աստիճանաբար հարմարվում է հարազատի կորստի մտքի հետ,
- վերակազմակերպման փուլ, երբ երեխան վերջնականապես հարմարվում է մահվան մտքի հետ և ընդունում կորստի փաստը:

Մանկական վշտին հատուկ են այնպիսի գծեր, ինչպիսիք են փակվածությունը, անսպասելիությունը, անհամաչափությունը: Երեխան կարող է ոչ անմիջական արձագանք տալ, իսկ սուր արձագանքները կարող են հետաձգվել ամիսներով: Որոշ դեպքերում կորստի իրական գիտակցումն ու ապրումը գալիս են մեծ ուշացումով և մեկ այլ վշտի ազդեցության պարագայում: Երեխաների մոտ կարող են բացակայել վշտի ակնհայտ դրսևորումները, ինչպիսիք են, օրինակ, լացը կամ հույզերի խոսքային ներկայացումը, սակայն կորստի առկայությունը զգացվում է վարքի, գործունեության տեսակի փոփոխությունում, նևրոտիկ դրսևորումներում: Այս պարագայում մանկական վշտի ակնհայտ դրսևորումները շրջապատի համար անակնկալ են լինում. քիչ առաջ երեխան խաղում էր, հանգիստ էր, իսկ հիմա լաց է լինում: Հատկանշական է, որ երեխաների մոտ վշտի ապրումը լինում է խիստ փոփոխական ու հակասական, քանի որ խոր հուզական ապրումները, լացը անմիջապես կարող են փոխվել հանդարտության և անգամ ակտիվության: Երեխաները վիշտն ապրում են անհամաչափ ձևով և հակված են վշտի ապրումը արտահայտելու ժամանակ առ ժամանակ երկար ժամանակի ընթացքում:

Կորուստ ապրող երեխաները վշտի ապրման ընթացքում ունենում են սուր և երբեմն իրենց համար նոր հուզական ապրումներ: Երեխաներին վախեցնում է, որ իրենք չեն կարողանում անվանել իրենց ռեակցիաները, դրա համար նրանք մշտապես ունենում են մեծահասակների կարիքը, որպեսզի կարողանան հասկանալ, թե ինչ է կատարվում: Երեխաների կողմից վշտի հաղթահարման հարցում կարևոր դեր են խաղում այն մեծահասակները, որոնք կարող են երեխայի վրա դրական ազդեցություն թողնել իրենց սիրով, հոգատարությամբ ու ընտանեկան ջերմ միջավայրի ստեղծման միջոցով:

Եթե մահվան դեպքը տեղի է ունեցել, երբ երեխան դեռ 2 տարեկան չէ, ապա նա չի կարողանում կորստի զգացումն արտահայտել, սակայն նրա մոտ առաջացած կորստի զգացումը կարող է անդրադառնալ նրա հանգստության, սննդային ռեժիմի, վարքի վրա, կարող է առաջանալ գրգռվածություն, լաց, միզելու երևույթ: Կարող է դիտարկվել նաև զարգացման ժամանակավոր հապաղում: Երբ ընտանիքի կյանքը համեմատաբար կարգավորվում է, կայունանում, այս խնդիրները կարող են հաղթահարվել նաև իրենք իրենց: Այդ շրջանում հնարավորինս պետք է հետևել սնվելու և քնելու ռեժիմի պահպանմանը: Հպումները, ֆիզիկական կոնտակտը, երեխայի հետ խոսելը նրա մոտ կառաջացնեն սիրո, ջերմության և հարմարավետության զգացում: Մեծանալուն զուգահեռ երեխան սկսում է ավելի լավ հասկանալ իր հետ տեղի ունեցածը:

2-6 տարեկանում երեխաները մահը ընկալում են որպես երազ, որից կարելի է արթնանալ ցանկության դեպքում: Մահվան մշտականությունը դեռևս չի ընկալվում: Այս տարիքում երեխաները աշխարհին ընկալում և բացատրում են ըստ իրենց շրջապատի մեծահասակների տված ինֆորմացիայի: Երեխաներն ունակ չեն հասկանալու «մահ» և «նա այլևս չի վերադառնա» արտահայտությունները:

Երեխան անընդհատ փնտրում է մահացածին, բայց ի վերջո հասկանում է դրա անիմաստությունն ու սկսում է արձագանքել կորստին, դառնում է դյուրագրգիռ, հետաքրքրասեր, իսկ ավելի ծանր դեպքերում՝ լռակյաց: Կարող են նկատվել ախորժակի ու քնի խանգարումներ, մարսողական խնդիրներ, ցան, նյարդայնություն: Այս շրջանում վշտի ապրման դեպքում երեխաները կարող են վերադառնալ ավելի վաղ մանկական տարիքին բնորոշ վարքաձևերի: Բոլոր տարիքի երեխաները ծանր վշտի դեպքում ռեգրադացիա են ունենում: Կարող են սրվել տարիքային վախերը: Երեխան կարող է մտածել, որ ինքն է մեղավոր մահվան մեջ: Երբ մահանում է նրա ծնողներից մեկը, երեխան մտածում է, որ մահվան պատճառն իր մտքերն են [5]:

Այսպիսով, երեխաների մոտ վշտի ապրման առանձնահատկությունները կարող են պայմանավորված լինել անձնային առանձնահատկություններով, հոգեհուզական վիճակներով, հասարակության կողմից տրված արձագանքներով, սոցիալական, մշակութային առանձնահատկություններով:

Տեսական գրականության վերլուծության արդյունքները ստուգելու նպատակով իրականցրել ենք հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել 4-6 տարեկան երեխաների հուզական վիճակը տրավմայից հետո: Հետազոտությանը մասնակցել են 4-6 տարեկան թվով 12 երեխաներ, որոնք 44-օրյա պատերազմի ընթացքում կորցրել են հայր ծնողին: Հետազոտությանը ներգրավված են եղել նաև երեխաների մայրերը: Նշենք նաև, որ հետազոտությանը մասնակցող բոլոր երեխաները ստացել կամ ստանում են հոգեբանական մասնագիտական աջակցություն, ինչը, իհարկե, իր դրական ազդեցությունն է ունեցել արդյունքների վրա:

Հետազոտությունն իրականացրել ենք 2 փուլով: Առաջին փուլում կիրառել ենք զրույցի մեթոդը, երկրորդում՝ «Կակտուս» պրոյեկտիվ մեթոդիկան և Ռ. Տեմմլի, Մ. Դոռկիի, Վ. Ամենի կողմից ստեղծված «Ընտրի՛ր անհրաժեշտ դեմքը» տագնապայնության բացահայտման մեթոդիկան:

Զրույցի մեթոդի կիրառման նպատակն էր բացահայտել երեխաների մոտ առկա վարքային փոփոխությունները, նոր դրսևորումները, որոնք նախկինում բնորոշ չեն եղել երեխայի համար: Զրույցի ընթացքում ծնողներին ուղղված հարցերը կազմվել են մեր կողմից հետևյալ տրամաբանությամբ. հարցեր, որոնք վերաբերում են անմիջապես կարստից հետո ընկած ժամանակահատվածին և հարցեր, որոնք վերաբերում են վերջին ամսվա ընթացքին:

Վերլուծելով ծնողների կողմից տրված պատասխանները՝ պարզ դարձավ, որ անմիջապես կորստից հետո ընկած ժամանակահատվածում երեխաների 50 %-ը ունեցել են գիշերային մղձավանջներ, իսկ մյուս 50 %-ի մոտ չեն նկատվել քնի խանգարումներ: Ախորժակի փոփոխություն նկատվել է 67 %-ի մոտ. նրանք հրա-

ժարվել են նորմալ սնունդ ուտելուց, կերել են միայն քաղցրավենիք, ինչը չի արգելվել մեծահասակների կողմից՝ հասկանալով խնդիրը: Ծնողների 42 %-ը նշեց, որ երեխաների վարքը սկսել է տարբերվել սովորականից, երեխաները դարձել են անկանխատեսելի, նրանց գործունեության տեսակը շատ արագ փոփոխությունների է ենթարկվել: Ակտիվությունից միանգամից անցել են պասիվ վիճակի: Փոփոխությունները նկատվել են նաև հուզական ոլորտում. երեխաները դարձել են ավելի հուզական, բուռն են արձագանքել տարբեր իրադրությունների, մի մասի մոտ առաջացել են տագնապներ: Ստացված տվյալներն արտացոլված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Կորստից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածին վերաբերող տրված հարցերի պատասխանների արդյունքները

	Քնի խանգարումներ	*Ախորժակի փոփոխություն*	*Վարքի փոփոխություն*
Դրսևորվել է	50 %	67 %	42 %
Չի դրսևորվել	50 %	33 %	58 %

Վերջին մեկ ամսվա ընթացքի վերաբերյալ հարցերին տրված պատասխաններից պարզ դարձավ, որ երեխաների 83 %-ի մոտ վերջին մեկ ամսվա ընթացքում արտառոց փոփոխություններ չեն նկատվել: Նախնական դրսևորումները թուլացել են, երեխաներն անցել են բնականոն կյանքին, շարունակել են հաճախել մանկապարտեզ, վերականգնվել են քնի և սնվելու ռեժիմները: Միայն 83 %-ից մի մասը՝ 5 երեխա, երբեմն հարցեր են տալիս հայրիկի մասին, ճշտումներ անում, որոնց պատասխանները ծնողները մշակել էին մասնագետների հետ: Մյուս 17 %-ը, այսինքն հետազոտվողներից միայն 2-ը, անգամ 1 տարի անց, հաճախ են հիշում տրավմատիկ իրադրությունը, ունեն վարքային դժվարություններ, ախորժակի ու քնի խանգարումներ:

Հետազոտության երկրորդ փուլում կիրառեցինք «Կակտուս» պրոյեկտիվ մեթոդիկան, որպեսզի բացահայտենք կորուստ ապրած երեխաների ագրեսիվության մակարդակը: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ հետազոտվող երեխաներից 83 %-ի մոտ առկա չէր ագրեսիվություն, իսկ մյուս 17 %-ի մոտ առկա էր ագրեսիա, որն ուղղված էր դեպի դուրս և թույլ արտահայտված տագնապի զգացողություն: Դեպի դուրս ուղղված ագրեսիա ունեցող երեխաների մոտ, ըստ մեզ, գործում է պաշտպանական մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս նրանց թուլացնել իրենց հուզական լարվածությունը: Երեխաները որոշակի չափով տագնապի զգացողություն են ունենում, ինչը կարող է լինել անորոշությունից, սպասումից, այն մտքից, որ գուցե մի օր հայրիկը վերադառնա: Մյուս պարագաներում, երբ երեխաների հետ աշխատանքի արդյունքում տրվել է իրավիճակի նկարագրություն և իրադրության մեկնաբանություն, չկար ագրեսիա և տագնապի զգացողություն, երեխաները կարճ ժամանակում ընդունել էին իրավիճակը: Արդյունքները ներառված են տրամագիր 1-ում:



Տրամագիր 1. «Կակտուս» մեթոդիկայի արդյունքները

Ռ. Տեմմլի, Մ. Դոռկիի, Վ. Ամենի կողմից ստեղծված «Ընտրի՛ր անհրաժեշտ դեմքը» տագնապայնության բացահայտման մեթոդիկայի իրականացման արդյունքում պարզ դարձավ, որ հետազոտվողների 83 %-ի մոտ առկա է տագնապայնության ցածր մակարդակ, իսկ 17 %-ի մոտ՝ միջին մակարդակ: Արդյունքները ներկայացված են տրամագիր 2-ում.



Տրամագիր 2. Ռ. Տեմմլի, Մ. Դոռկիի, Վ. Ամենի կողմից ստեղծված «Ընտրի՛ր անհրաժեշտ դեմքը» տագնապայինության բացահայտման մեթոդիկայի արդյունքները

Այսպիսով, վերլուծելով տեսական գրականությունը և ընդհանրացնելով կիրառած մեթոդների ու մեթոդիկաների արդյունքում ստացած տվյալները, եկանք հետևյալ եզրակացությունների.

1. երեխաները մահը ընկալում են որպես երազ, որից կարելի է արթնանալ ցանկության դեպքում: Մահվան նշանակությունը դեռևս չի ընկալվում: Այս տա-

րիքում երեխաներն աշխարհն ընկալում և բացատրում են ըստ իրենց շրջապատի մեծահասակների տված ինֆորմացիայի: Նրանք անընդհատ փնտրում են մահացածին, բայց ի վերջո հասկանում են անիմաստությունն ու սկսում են արձագանքել կորստին, դառնում են դյուրագրգիռ, լարված, նկատվում են քնի և ախորժակի փոփոխություններ, վերադարձ ավելի վաղ մանկական վարքային մոդելների և այլն,

2. երեխաների մեծ մասը ծանր վշտի դեպքում ռեգրադացիա է ունենում: Կարող են սրվել տարիքային վախերը: Երեխան կարող է մտածել, որ ինքն է մեղավոր: Երբ մահանում է ծնողներից մեկը, երեխան կարող է նաև մտածել, որ մահվան պատճառն իր մտքերն են,

3. ըստ «Կակտուս» մեթոդիկայի արդյունքում ստացված տվյալների՝ երեխաների մի մասի մոտ առկա էր ագրեսիա, որն ուղղված էր դեպի դուրս և թույլ արտահայտված տագնապի զգացողություն: Դեպի դուրս ուղղված ագրեսիա ունեցող երեխաների մոտ, ըստ մեզ, գործում է պաշտպանական մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս նրանց թուլացնել իրենց հուզական լարվածությունը,

4. «Ընտրի՛ր անհրաժեշտ դեմքը» տագնապայնության բացահայտման մեթոդիկայի իրականացման արդյունքում պարզ դարձավ, որ հետազոտվողների մեծ մասի մոտ առկա է տագնապայնության ցածր մակարդակ, մյուս մասի մոտ՝ միջին մակարդակ: Ըստ մեզ՝ երեխաների տագնապի զգացողությունը կարող է լինել անորոշությունից, սպասումից, այն մտքից, որ գուցե մի օր հայրիկը վերադառնա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Василюк Ф. Е. Пережить горе // О человеческом в человеке / Под ред. И. Т. Фролова. Москва: Политиздат, 1991, 230-247 с.
2. Изард К. Эмоции человека. Москва: Изд-во Моск. ун-та, 1980, с. 266.
3. Garlock J. Coping with grief and loss
4. http://pedlib.ru/Books/2/0106/2_0106-98.shtml
5. http://www.edunyagan.ru/files/formyiimetodyirabotyisdet-mi-perejivshimigore.pdf
6. https://studfile.net/preview/9650517

Характеристика и проявления опыта гора у детей 4-6 лет

Месропян Марина
ВГУ, Психология личности и психологическое консультирование, магистратура, 2-й курс
Научный руководитель:
кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова. *горе, утрата, стадии горя, нормальное и патологическое горе, настоящее и притворное горе*

Горе считается психологической, физической, поведенческой и социальной реакцией на трату. Особенности горя у детей могут определяться личностными особенностями, психоэмоциональными состояниями, реакциями, социальными и культурными особенностями. Дети 4-6 лет могут быстро преодолеть горе в результате правильной организации режима и сотрудничества с родителем.

Characteristics and Manifestations of Grief Experience among Children Aged 4 to 6 Years

Mesropyan Marina
VSU, Personality Psychology and Psychological Counseling, MA, 2nd year
Academic Supervisor: V. Mirzoyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words. *grief, loss, stages of grief, normal and pathological grief, real and feigned grief*

Grief is considered a psychological, physical, behavioral, and social response to loss. The characteristics of grief among children can be determined by personality characteristics, psycho-emotional states, reactions, social and cultural characteristics. Children aged 4 to 6 years can overcome grief more quickly when the daily routine is properly organized and there is cooperation with the parent.

Միայնության հիմնախնդրի ուսումնասիրությունը հոգեբանական ուղղություններում

Միքայելյան Անահիտ
«ՎՊՀ» հիմնադրամ,
Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ Վ.Միրզոյան

Հանգուցային բառեր. *միայնություն, ես կոնցեպցիա, մեկուսացում, զգացմունքային և սոցիալական միայնություն*

Ժամանակակից աշխարհում մենք բախվում են միայնության տարատեսակ ձևերի՝ սկսած հոգեբանական մեկուսացումից, որը կարող է զգալ խմբի անդամը՝ խմբի կողմից համարվելով «սպիտակ ագռավ», ավարտելով ֆիզիկական մեկուսացումով: Մարդը կարող է մեկուսանալ կամավոր կամ հարկադրաբար, մենախցում կամ քաղաքակրթությունից հեռու՝ ապրելով ճգնավորական կյանքով:

Ներկայումս օտարման և միայնության խնդիրը մեծ հետաքրքրություն է առաջացնում ուսումնասիրողների շրջանում. դա պայմանավորված է ներկայիս հասարակական իրավիճակի անկայուն ու անորոշ բնույթով:

Քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտների ինտենսիվ փոփոխություններն ակտիվորեն ազդում են միջանձնային հարաբերությունների կառուցվածքի և մարդու ինքնագիտակցության վրա: Անցումային շրջանները, մասնավորապես խորհրդային սոցիալիստական հասարակարգից դեպի կապիտալիստական հասարակարգի անցումը հանգեցնում է մշակութային կառուցվածքների վերափոխումների, որոնք որոշում են մարդկանց միջանձնային հարաբերությունները, արժեքային և հասարակական գործունությունը, մարդու հուզական բարեկեցությունը:

Վերջին տարիներին համավարակի ազդեցությունը նույնպես մեծ էր հասարակության մեջ միայնության աճի վրա. մարդիկ խուսափում են մտերիմ հարաբերություններից՝ անհանգստանալով իրենց ֆիզիկական առողջության համար:

Ներկայիս հասարակական իրավիճակը մարդուց պահանջում է հավելյալ ռեսուրսներ՝ փոփոխվող աշխարհին համարժեք հարմարվողական հմտություններ ձեռք բերելու համար: Սակայն բոլորը չեն պատրաստ ընդունելու գոյության նոր պայմանները: Շատերը դժվարանում են հին կապերը խզել ու հաստատել նորերը, բայց միևնույն ժամանակ զգում են դրա անհրաժեշտությունը: Նշանակալի հարաբերությունների պակասը կամ հարաբերությունների մակերեսայնությունը մարդկանց մոտ առաջացնում է միայնության սուր բացասական զգացողություն: Միայնակ մարդը դժվարություններ է ունենում սոցիալական փոխազդեցության ժամանակ:

Միայնությունը խորը հուզական զգացողություն է, որը կարող է խեղաթյուրել

ընկալման գործընթացը, ժամանակի ընկալումը, սոցիալական գործողություններն ու ազդել մարդու վարքի վրա:

Միայնության բնույթը հասկանալը թույլ կտա մշակել ներկայիս անորոշ ու անկայուն հասարակական իրավիճակին համապատասխան միայնության հաղթահարման արդյունավետ ռազմավարություններ:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալ-մշակութային իրավիճակում՝ մարդկանց սոցիալական կարգավիճակի, արժեքաիմաստային ուղղվածության, հուզական վիճակների և հարաբերությունների տեսական ուսումնասիրման անհրաժեշտությամբ: Միայնության տեսակների ուսումնասիրությունը թույլ կտա ևս մեկ քայլ անել միայնության հաղթահարման համար, ինչպես նաև հասկանալ միայնության դերը մարդու հոգեկան կյանքում: Հետազոտության տեսական նշանակությունը այն է, որ այն թույլ կտա հասկանալ, որ միայնությունը իսկապես հոգեբանության ուսումնասիրության մակարդակում է:

Հոգեվերլուծական ուղղությունը միայնությունը մեկնաբանում է որպես բացասական հոգեբանական պարադիգմա, որի պատճառները արմատացած են մանկությունից: Հոգեվերլուծության ներկայացուցիչներից Զիլբուրգը տարբերակել է միայնություն և մեկուսացում տերմինները: Նա միայնությունը համարում էր «նորմալ» անցողիկ երևույթ, որը բխում է ինչ-որ բանի կամ որևէ մեկի բացակայությունից, իսկ մեկուսացումը անդիմադրելի, տհաճ մշտական զգացում է: Զիլբուրգը կարծում էր, որ միայնության պատճառը անհատականության այնպիսի գծերն են, ինչպիսիք են նարցիսիզմը, մեգալոմանիան և թշնամանքը:

Միայնության ծագումնաբանությանը անդրադարձել է նաև հոգեվերլուծական ուղղության մեկ այլ ներկայացուցիչ՝ Հ. Սալիվանը. նա այն դիտարկել է որպես մարդկային մտերմության պահանջմունք, երբ սկսած մանկության տարիքից և հատկապես դեռահասության տարքիում երեխան, մարդն ունենում է իր մտքերն ու գաղափարները որևէ մեկի հետ կիսելու ցանկություն, և եթե դեռահասը այն չի կարողանում բավարարել, ապա նրա մոտ կարող է առաջանալ խորը միայնության զգացում:

Է. Ֆրոմը միայնության պատճառները նշելիս առանձնացնում էր մայրական սիրուց և քնքշանքից վաղաժամ զրկվելու բացասական հետևանքները:

Միայնության վերաբերյալ Կ. Ռոջերսի մոտեցումը հոգեվերլուծական մոտեցումից տարբերվում էր նրանով, որ նա միայնության առաջացման պատճառները կապում էր ոչ թե վաղ մանկության տարիքում տեղի ունեցած իրադարձությունների հետ, այլ այն համարում էր տվյալ պահին մարդու վրա ազդող երևույթների հետևանք: Ըստ Ռոջերսի՝ միայնության առաջացման պատճառը անհատի թույլ հարմարվողականությունն ու սեփական «ես»-ի վերաբերյալ ունեցած պատկերացումների անհամապատասխանությունն է:

Միայնության առաջացման ընթացքը բաժանվում է երեք փուլի:

1. Հասարակությունը ազդում է մարդու վրա՝ ստիպելով ապրել սոցիալական նորմերով, և սահմանափակում է մարդու գործողությունների ազատությունը:

2. Դրա հետևանքով հակասություն է առաջանում «ես» կոնցեպցիայի և այլ մարդկանց հետ հարաբերվող «ես»-երի միջև, մարդը կորցնում է ապրելու և գոյության իմաստը:

3. Անհատը դառնում է միայնակ, երբ ստեղծում է պաշտպանիչ պատնեշ սեփական «ես»-ի համար, և, այնուամենայնիվ, կարծում է, որ ուրիշների կողմից մերժված կլինի: Այստեղ մարդը հայտնվում է փակ շրջանի մեջ և կարծում է, որ իր «ես»-ը մշտապես մերժվում է ուրիշների կողմից, փակվում է իր միայնության մեջ, որպեսզի կրկին չմերժվի և այդպիսով կառչելով իր իսկ ստեղծած պատնեշին՝ մնում է միայնության մեջ: Այլ կերպ ասած՝ միայնությունը առաջանում է իրական և իդեալական «ես»-երի միջև հակասությունից:

Սոցիալ-հոգեբանական մոտեցման համաձայն մարդու միայնության առաջացման պատճառը հասարակությունն է: Կ. Բոումենը առաջարկեց ժամանակակից հասարակության մեջ միայնության առաջացման մի քանի գործոններ՝ դրանք են առաջնային խմբում կապի թուլացումը, ընտանեկան և սոցիալական շարժունակության բարձրացումը:

Դ. Ռիսմենը կարծում էր, որ միայնության հիմնական պատճառներից մեկը կողմնորոշումն է դեպի ուրիշները. այսպիսի մարդիկ ցանկանում են, որ դուր գան ուրիշներին, անընդհատ հարմարվում են հանգամանքներին և կտրված են սեփական «ես»-ից ու սեփական զգացմունքներից: Սա կարող է հանգեցնել նրան, որ մարդը ձեռք բերի անհանգստության սինդրոմ և կախվածություն շրջապատի այլ մարդկանց ուշադրությունից, բայց միշտ չէ, որ այդ պահանջմունքը կարող է բավարարվել: Դ. Ռիսմենը ամերիկյան հասարակությունը բնութագրում էր որպես «դեպի դուրս կողմնորոշված», որի անդամները «միայնակների ամբոխ» են կազմում:

Է. Սլեյթերը ժամանակակից հասարակությունը անվանում էր ինդիվիդուալիստական, որի մեջ անհնար է հասնել շփման, պատկանելության պահաջմունքի անհրաժեշտ բավարարմանը, ինչն էլ մարդու մոտ առաջացնում է միայնության զգացողություն [2]:

Ինտերակցիոնալ մոտեցման ներկայացուցիչ Ռ. Վայսը գտնում էր, որ միայնությունը կապված է երկու գործոնների՝ անհատի սոցիալական փոխազդեցության բացակայության և սոցիալական կարիքների բավարարման անհնարինության հետ: Ռ. Վայսը առանձնացրել է միայնության երկու տեսակ՝ զգացմունքային և սոցիալական: Առաջինը՝ սերտ, մտերիմ հարաբերությունների ու կապերի բացակայությունն է, ինչպիսին է սերը կամ ամուսնությունը, միևնույն ժամանակ մարդը կարող է ունենալ «լքված երեխայի» անհանգստություն: Իսկ սոցիալական միայնությունը արտահայտվում է ընկերական շրջապատի կամ համայնքի բացակայությամբ, որի ժամանակ մարդը ունենում է կարոտի և սոցիալական մարգինալության զգացում:

Ըստ կոգնիտիվ մոտեցման ներկայացուցիչների՝ ընկալումն է դառնում սո-

ցիալականացման պակասի և միայնության զգացողության առաջացման պատճառը: Լ. Պեպլոն կարծում էր, որ միայնության առաջացման պատճառը ցանկալի սոցիալական շփումների և իրականում գոյություն ունեցող շփումների մակարդակի միջև դիսոնանսի գիտակցումն է [2]:

Էքզիստենցիալ հոգեբանության մեջ առանձնացում են բազային կոնֆլիկտ, որը առաջանում է մարդու մոտ գոյաբանական հարցերի շուրջ մտածելիս: Այդ կոնֆլիկտը անբաժանելի ու անխուսափելի բաղադրիչ է մարդու կյանքում: Ի տարբերություն հոգեվերլուծական և անձնակենտրոն մոտեցումների՝ էքզիստենցիալիստները միայնությունը պաթոլոգիկ վիճակ չէին համարում, և դրա պատճառները տեսնում էին մարդու գոյության պայմաններում: Մենակությունը կամ, ավելի ճիշտ, մեկուսացումը այդպիսին է [1]:

Էքզիստենցիալ հոգեբանության մեկ այլ ներկայացուցիչ՝ Ի. Յալոմը, միայնությունը համարում էր մարդու իսկության բնորոշ տարրերից մեկը: Ի. Յալոմը առանձնացնում էր միայնության երկու տեսակ՝ էքզիստենցիալ և հիմնարար: Իր «Էքզիստենցիալ հոգեթերապիա» աշխատության մեջ նա մի քանի ուղիներ էր դիտարկում, որոնք տանում են էքզիստենցիալ մեկուսացման գիտակցման: Դրանք են՝առճակատումը մահվան գաղափարի հետ և ազատությունը: Սեփական գոյության վերջանալի լինելը մարդուն ստիպում է հասկանալ, որ ոչ ոք չի կարող մահանալ ուրշի փոխարեն:

Ազատությունը հասկացվում է որպես կյանքի համար պատասխանատվության ստանձնում, ինչը ենթադրում է, որ քեզնից բացի, քո սեփական անձը ոչ ոք չի կերտում և պաշտպանում: Էքկզիստենցիալ մեկուսացման դեպքում իրականության շղարշները պոկվում են մեր կազմած աշխարհից, և մարդը կորցնում է հարմարավետության զգացումը [6]:

Ի. Յալոմը աճի և մեկուսացման կապի մասին խոսելիս մեջբերում է Օ. Ռանկի սահմանումը, ով համարում էր, որ աճի, զարգացման գործընթացը կապված է բաժանման, առանձնանալու հետ, որը իր հետ բերում է ինքնուրույնության, անհատականության ինքնակառավարման աճի: Միևնույն ժամանակ մարդը բաժանման համար մեկուսանում է:

Ի. Յալոմը գրում է, որ միայնության անվերջանալի սարսափից ազատվելու երկու տարբերակ գոյություն ունի՝ միայնության գաղափարի ընդունում և հարաբերությունների հաստատում այլ մարդկանց հետ: Թեպետ հարաբերությունները չեն կարող ամբողջությամբ վերացնել միայնությունը, բայց օգնում են կիսել այն այլ մարդկանց հետ, այնուհետև սերը փոխահատուցում է միայնության ցավը:

Առանց ընդունելու միայնության գաղափարը, առանց միայնությանը հանդիպելու, մարդը չի կարող սիրով մոտենալ ուրիշներին: «Հայտնվելով գոյության ծովում, զգալով միայնության սարսափը՝ մարդը ձգտում է հնարավորինս արագ դուրս գալ դրանից և չխեղդվել այդ ծովում»:

Էքզիստենցիալ ուղղության մեկ այլ ներկայացուցիչ՝ Կ. Մուստակասը,

առանձնացնում է «միայնության ունայություն» և «իսկական միայնություն» տերմինները: Առաջինը նա սահմանում է որպես պաշտպանական մեխանիզմների համալիր, որը այլ մարդանց հետ փոխգործության միջոցով մարդուն հեռացնում է կյանքի էական հարցերը լուծելուց: Իսկական միայնությունը գալիս է միայնակ գոյության իրականության գիտակցումից, որին մարդը հանդիպում է իր կյանքի սահմանային իրավիճակների ժամանակ՝ մահ, ծնունդ, կյանքի փոփոխություններ, ողբերգություններ, որոնք մարդը միայնակ է ապրում [1]:

Ամփոփելով տեսական վերլուծությունը՝ հասկանում ենք, որ միայնությունը բարդ հոգեբանական երևույթ է, և տարբեր ժամանակներում այն եղել է գիտնականների ուսումնասիրության դաշտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Миноскович Б. Одиночество, междисциплинарный подход/ Лабиринты одиночества, Москва: Прогресс, 1989, - 624 с.
2. Перлман Д., Пепло Л. Э. Теоретические подходы к одиночеству/ Лабиринты одиночества. Москва: Прогресс, 1989, 44-47 с.
3. Петровская Л. А. Теоретические и методические проблемы социально-психологического тренинга, Москва, 1982, 30-37 с.
4. Пузько В. И. Экзистенциональный невроз как бегство от одиночества / Материалы научной конференции «Теология, философия и психология», Владивосток, 1995. - 28 с.
5. Сартр Ж. Сумерки богов / Москва, 1991, 319-344 с.
6. Ялом И. Экзистенциальная психотерапия/ Москва, 2000. - 576 с.
7. https://turbo-suslik.org/odinochestvo/
8. https://bank.nauchniestati.ru/primery/kursovaja-rabota-na-temu-odinochestvo-kak-psihologicheskaja-problema/
9. https://bank.nauchniestati.ru/primery/kursovaja-rabota-na-temu-odinochestvo-kak-psihologicheskaja-problema/

Изучение проблемы одиночества в психологических направлениях

Микаелян Анаит
ВГУ, Психология личности и психологическое консультирование,
магистратура, 2-й курс
Научный руководитель:
Кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *одиночество, Я-концепция, изоляция, эмоциональное и социальное одиночество*

В статье рассматривается феномен одиночества в рамках психоаналитического, когнитивного, экзистенциального, гуманистического, социологического и интеракционного подхода. Представлен анализ литературы по проблеме одиночества, ее сущности и причин возникновения.

The Study of the Problem of Loneliness in Psychological Approaches

Mikayelyan Anahit
VSU, Personality Psychology and Psychological Counseling,
MA, 2nd year
Academic Supervisor: V. Mirzoyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *loneliness, self-concept, isolation, emotional and social loneliness*

The article examines the phenomenon of loneliness within the psychoanalytical, cognitive, existential, humanistic, sociological and interactional approaches. An analysis of the literature on the problem of loneliness, its essence and causes are presented.

Սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնությամբ պայմանավորված ագրեսիվության մակարդակը

Մարգսյան Նինա
ԱրՊՀ, Հոգեբանություն, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ավագ դասախոս Ա.Ավանեսյան

Հանգուցային բառեր. *հոգեբանական անվտանգություն, սահմանամերձ բնակավայրերի բնակիչներ, տագնապայնություն, ճնշվածություն, ագրեսիվություն*

Սույն հոդվածում ներկայացվում է հետպատերազմական տարածաշրջանում սահմանամերձ բնակավայրերի բնակիչների ագրեսիվության մակարդակի պայմանավորվածությունը տագնապայնության առկայությամբ, ինչպես նաև տագնապայնության և ճնշվածության ու ագրեսիվության կորելացիոն կապը: Հոդվածի շրջանակներում բացահայտվել է, որ Արցախում՝ հետպատերազմական տարածաշրջանում, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնության բարձր մակարդակով պայմանավորվում է նրանց ագրեսիվության բարձր մակարդակը, ինչպես նաև համանման հետազոտություն է իրականացվել ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների շրջանում՝ համեմատություն կատարելու և տարբերությունները բացահայտելու նպատակով:

Հետպատերազմական իրավիճակում և շրջափակման պայմաններում արդիական է սահմանամերձ բնակավայրերի բնակիչների հոգեբանական և ֆիզիկական անվտանգությամբ պայմանավորված մի շարք խնդիրների առկայությունը:

Մարդու հոգեբանական անվտանգության համար կարևոր են հետևյալ գործոնները՝

- Ապագայի նկատմամբ վստահության հիմքեր,
- գործունեության ադապտիվությանը և զարգացմանը սուբեկտների ամբողջականության խախտմանը չնպաստող հասարակական վիճակ,
- հասարակություն, որտեղ մարդն իրեն պաշտպանված է զգում:

Հետպատերազմական միջավայրում այս գործոնները վտանգվում են, և առաջանում են անձի հոգեբանական անվտանգությանը սպառնացող գործոններ, որոնք նաև կարող են դիտարկվել որպես պատճառներ: Պատերազմից հետո առաջացած նոր իրադրությունը անձի մոտ կարող է անորոշության զգացում առաջացնել: Հետպատերազմյան շրջանում բնակչության՝ մասնավորապես սահմանամերձ դարձած բնակավայրերի բնակիչների մոտ առավել սուր զգացվում է հենց ապագայի նկատմամբ անորոշության զգացումը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է տագնապայնության զգացողության մակարդակի բարձրացմանը:

Հոգեբանական անվտանգության խանգարումների ներքին ցուցիչների շարքում ներառվում են հոգեբանական անհանգստությունը, դեպրեսիան, վախը, ճնշվածությունը և այլ անբարենպաստ սուբյեկտային զգացողություններ, ինչպես նաև տագնապայնությունը: Ելնելով Արցախում բնակչության համար ստեղծված անբարենպաստ պայմաններից՝ կարող ենք եզրակացնել, որ ցանկացած տհաճ,

իսկ երբեմն էլ ճգնաժամային իրավիճակ, որը սպառնում է մարդու բարեկեցությանը կամ նույնիսկ կյանքին, առաջացնում է հուզական ռեակցիա՝ վախ, իսկ անորոշ և լարված իրավիճակում երկար մնալը՝ տագնապայնություն: Ըստ Գ. Այզենկի՝ անձի ներքին անհարմարության նկատմամբ զգայունության բարձրացման հետևանքով տագնապայնությունն առաջացնում է նաև մտավոր ակտիվություն անհանգստությունից ազատվելու ուղիներ գտնելու համար, ստիպում է մարդուն ստեղծել աշխարհի (ներկայի և ապագայի) պատկերի տարբերակներ, ինչպես նաև փնտրել դրանք իրականացնելու ուղիներ [1]:

Տագնապայնությունը հաղթահարելու համար մարդը հաճախ արձագանքում է ագրեսիայով [2]: Երբ երեխան վախենում և տագնապայություն է զգում, նա կարող է դառնալ ագրեսիվ, սկսել հարվածել ուրիշներին կամ պարփակվել իր մեջ: Այսպիսի վարքագիծը բնորոշ է նաև հասուն մարդկանց: Ըստ բիհեվիորիստ Ա. Բասսի՝ ագրեսիան սահմանվում է որպես «վարքագիծ, որն առաջացնում է գրգռվածություն և վնաս այլ օրգանիզմներին» [3]:

Ա.Բասսը և Ա.Դարկը առանձնացրել են ագրեսիայի հինգ տեսակ [4] (գծ. 1).



Գծապատկեր 1.Ագրեսիայի տեսակները

Այդ ամենին զուգահեռ Ն. Դ. Լևիտովը ագրեսիվության վիճակը նկարագրում է որպես ինքնակառավարումը կորցնելու հետևանքով առաջացած զայրույթի զգացում [5]:

Հետպատերազմյան շրջանում սահմանամերձ դարձած բնակավայրերի բնակիչների մոտ առավել սուր զգացվում է հենց ապագայի նկատմամբ անորոշության զգացումը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է տագնապայնության զգացողության և ագրեսիայի մակարդակի բարձրացմանը: Ինչպես նշվում է Ս. Ենիկոլոպովի, Յու. Կուզնեցովայի, Ն. Չուդովայի «Ագրեսիան առօրյա կյանքում» աշխատության մեջ, նման իրավիճակում մարդուն անհրաժեշտ են կոորդինատների համակարգ, կենսական ուղենիշներ, արժեքային կողմնորոշումներ. աշխարհը նրա համար որոշակի նշանակություն ունի, և աշխարհի մասին սեփական պատկերի համընկնումն իրեն շրջապատող մարդկանց պատկերացումների հետ անձամբ նրա համար ճշմարտության չափանիշն է: Նույնիսկ եթե աշխարհի պատ-

կերը չի համընկնում, իրականում այն դեռ կատարում է որոշակի հոգեբանական գործառույթ [6]:

Այս տրամաբանությամբ առաջադրվել է հետևյալ հետազոտական վարկածը. Արցախում՝ հետպատերազմական տարածաշրջանում, ֆիզիկական անվտանգության խոցելիության և շրջափակման պայմաններում սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնության բարձր մակարդակով պայմանավորված, կարող է դիտվել ագրեսիվության, ճնշվածության մակարդակի փոփոխություն:

Հաշվի առնելով այս հանգամանքը և հիմնվելով տարբեր հեղինակների՝ Հ. Յ. Այզենկի, Ա. Ասսինգերի գործոնային վերլուծության վրա՝ տագնապայնությամբ պայմանավորված ագրեսիվության մակարդակի բացահայտման նպատակով սույն հոդվածի շրջանակներում հետազոտվել են տագնապայնությունը, ճնշվածությունը, ագրեսիվությունը:

Տագնապայնությունը մարդու՝ շրջապատող միջավայրից եկող վտանգի աստիճանի սուբյեկտիվ ընկալումն է [7]: Ճնշվածությունը հոգեկանի ախտաբանական վիճակ է, բնութագրվում է տրամադրության անկումով, հետաքրքրության պակասով և ընդհանուր վիճակի վատթարացմամբ [8]:

Ագրեսիան դրդապատճառային վարք է, որը շատ հաճախ կարող է վնաս պատճառել մեկ այլ օբյեկտի կամ մարդկանց, ովքեր դեպրեսիա, անհարմարություն, լարվածություն, ճնշված վիճակ են զգում [9]:

Նպատակ ունենալով ուսումնասիրելու սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ տագնապայնությամբ պայմանավորված ագրեսիվության մակարդակի բացահայտումը շրջափակման մեջ՝ որպես հետազոտության մեթոդակազմ ընտրել ենք Հ. Յ. Այզենկի «Տագնապայնություն և ճնշվածություն», Ս. Ասինգերի «Ագրեսիվության մակարդակի ախտորոշման մեթոդիկա» և Կ. Պիրսոնի կորելացիոն (համահարաբերակցության) կապերի մեթոդիկան [10, 11]:

Հետազոտության համակազմ են հանդիսացել Արցախի սահմանամերձ բնակավայրերի 30, ինչպես նաև ոչ սահմանամերձ շրջանների 30 բնակիչներ:



Տրամագիր 1. Սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնության և ճնշվածության ցուցանիշները

Տվյալ տրամագրում տեսանելի է, որ հետազոտության մասնակիցների 17 տոկոսի մոտ դիտվում է տագնապայնության և ճնշվածության բարձր մակարդակ, 66 տոկոսի մոտ՝ միջին, 17 տոկոսի մոտ՝ ցածր: Հաստատելու համար այն վարկածը, որ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ տագնապայնությամբ պայմանավորված ագրեսիվության մակարդակը կարող է տարբերվել ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ առկա մակարդակից, նույն մեթոդակազմով հետազոտվել են նաև ոչ սահմանամերձ բնակավայրերի թվով 30 բնակիչներ:



Տրամագիր 2. Ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնության և ճնշվածության ցուցանիշները

Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից՝ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ գրանցված տագնապայնության և ճնշվածության բարձր մակարդակը 17 տոկոս է, իսկ ոչ սահմանամերձ շրջանների բնակիչների մոտ՝ ընդամենը 3 տոկոս: Այս հանգամանքը կարող է բացատրվել նրանով, որ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ խախտված է ֆիզիկական անվտանգության զգացողությունը, ինչն էլ իր հերթին ազդում է անձի հոգեբանական անվտանգության զգացողության վրա:

Հետազոտվել և համեմատվել է նաև սահմանամերձ և ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների ագրեսիվության մակարդակը՝ցույց տալու համար, որ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնության և ճնշվածության բարձր մակարդակը առաջ է բերում ագրեսիվության բարձր մակարդակ, իսկ ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնության և ճնշվածության ցածր մակարդակը՝ագրեսիվության ցածր մակարդակ:



Տրամագիր 3. Սահմանամերձ և ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների ագրեսիվության մակարդակի ցուցանիշները

Գրանցված արդյունքներից երևում է, որ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ ագրեսիվության բարձր մակարդակը կազմում է 14 տոկոս, իսկ ոչ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ՝ 3 տոկոս: Պատճառն այն է, որ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մոտ թե՛ ֆիզիկական, և թե՛ հոգեկան անվտանգության զգացողության խախտումը, շրջափակման պայմաններում առաջ բերելով տագնապայնության զգացողություն, իր հերթին առաջացնում է ագրեսիվության ավելի բարձր մակարդակ, քան ոչ սահմանամերձ բնակիչների մոտ:

Հոդվածում կատարել ենք նաև հոգեբանական անվտանգության գործոններից տագնապայնության և ագրեսիվության կորելացիոն համահարաբերակցական կապի որոշում:



Տրամագիր 4. Տագնապայնության և ագրեսվության կորելացիոն (համահարաբերակցական) կապը

Գծային համահարաբերակցության միջոցով բացահայտվում է փոփոխականների կապը՝ բացահայտ արժեքների հիման վրա: Ստացված արդյունքներից երևում է, որ տագնապայնության և ագրեսիվության պարագայում r=0.991 այսինքն՝ տվյալ գործոնների միջև առկա է կորելացիոն (համահարաբերակցական) կապ:

Կապերի բարձր արտահայտվածությունը վկայում է այն մասին, որ այդ երևույթներն անմիջականորեն ազդում են միմյանց վրա, նույնիսկ պայմանավորված են մեկը մյուսով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Месропян Г. М. Тревожность в системе психологической безопасности личности. Психология, социология и педагогика. 2016. № 3 [Электронный ресурс]. URL: https://psychology.snauka.ru/2016/03/6456
2. https://ulanude.bezformata.com/listnews/trevoga-i-agressiya-kak-oni/83703023/
3. Анатомия человеческой деструктивности: антропологическая и социально-психологическая монография Эриха Фромма, 1973.
4. https://hy.wiktionary.org/
5. https://www.doctors.am/agresia
6. Ениколопов С., Кузнецова Ю., Чудова Н. Агрессия в обыденной жизни, 206 с.
7. http://publishing.ysu.am/files/Zinvori_hogekan_aroghjutyun.pd
8. https://dzen.ru/media/psl/podavlennoe-sostoianie-prichiny-simptomy-i-metody-lecheniia-5da0289098930900b645342e
9. https://hy.wiktionary.org/wiki/
10. https://psychoanalyze.kiev.ua/statyi/test-na-trevognost/
11. https://www.doctors.am/s-asingeri-agresivutyan-makardaki-akhtoroshman-metodika

Уровень агрессивности, обусловленный тревожностью жителей приграничных населенных пунктов

Саргсян Нина
АрГУ, Психология, 2-й курс
Научный руководитель:
старший преподаватель А. Аванесян

Резюме

Ключевые слова: *психологическая безопасность, жители приграничных населенных пунктов, тревожность, подавленность, агрессивность*

В данной статье представлена договоренность об уровне агрессивности жителей приграничных населенных пунктов в послевоенном регионе с наличием тревожности, а также корреляционная связь между тревожностью, подавленностью и агрессивностью. В рамках статьи было выявлено, что в Арцахе – в послевоенном регионе, высокий уровень тревожности жителей приграничных населенных пунктов обусловлен высоким уровнем агрессивности жителей приграничных населенных пунктов. Также было проведено аналогичное исследование среди жителей приграничных населенных пунктов с целью сравнения и выявления различий.

The Level of Aggressiveness Caused by the Anxiety of Residents of Border Settlements

Sargsyan Nina
ArSU, Psychology, 2nd year
Academic Supervisor: A. Avanesyan,
Senior Lecturer

Summary

Key words: *psychological safety, residents of border settlements, anxiety, depression, aggression*

This article presents the correlation of the level of aggression among residents of border settlements in the post-war region with the presence of anxiety, as well as the correlation between anxiety, depression and aggressiveness. The study reveals that in Artsakh, a post-war region, the high levels of anxiety among residents of border settlements are linked to their high levels of aggression. Additionally, a similar study was conducted among residents of non-border settlements to compare and identify any differences.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Այվազյան Գոհար
Անվանական անդեմ նախադասություններ 8
Արփինե Ավանեսյան
Գոյականական բառակապակցությունները Լ. Խեչոյանի երկերում..... 16
Թադևոսյան Անժելա
Նորաբանությունները Արթյուր Ռեմբոյի «Բանաստեղծություններ» ժողովածուի հայերեն թարգմանական երկում 31
Չերչինյան Թեհմինա
Գոյականի քերականական առանձնահատկությունները «Վերք Հայաստանի» պատմավեպում..... 39
Պողոսյան Գայանե
Ածական նորաբանությունները Հ. Սարուխանի ստեղծագործություններում..... 51
Սարգսյան Անուշ
Վ. Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի երկու հրատարկությունները (զուգադիր քննություն) 57
Սիմոնյան Աննա
Վերլուծական բարդությունները արդի հայալեզու մամուլում..... 64
Փելեշյան Ինեսա
«Այս առաւօտուս լուսոյն» սկսվածքով հայրենի տարբերակների լեզվական քննություն..... 73

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հակոբյան Մարիամ
Հեջավորումը որպես քաղաքավարությունը կարգավորող գործիք հյուրանոցային և հյուրընկալության ծառայություններում..... 83
Պարանյան Մարիամ
«Խրճիթ» դիցույթը հնածիսական գյուղի համատեքստում և Ն. Կլյունևի ստեղծագործությունները 92

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ասրիյան Աշխեն
Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1992-2020 թթ. 100

Արզանյան Հայկուշ
Մխիթարյան միաբանության կրթական-ուսումնական
ծրագիրը (1896-1897թթ.)..... 106
Արզումանյան Վովա
Շուշիի հայկական թատրոնի անցյալն ու ներկան 114
Բաղդասարյան Ռեգինա
Հայրավանք համալիրը և նրա արձանագրությունները 123
Բավեյան Նարինե
Արմենակ Ղազարյանի (Հրայր Դժոխք) դերակատարությունը
Սասունի 1894 թվականի ապստամբության կազմակերպման գործում 131
Լալաբեկյան Աստղիկ
Տեղ գյուղում տարածված ժողովրդական երգերը..... 140
Ծատինյան Ալլա
Հնագիտական պեղումները Տաշիր-Ձորագետում. Սանահին..... 147
Հակոբյան Լիլիթ
Ջրի պաշտամունքը հայոց մեջ 156
Հայրապետյան Մելինե
1848-1850 թվականների դանիա-պրուսական
պատերազմի արձագանքը «Եվրոպա» թերթում..... 165
Հայրապետյան Մելինե
1967 թ. արաբա-իսրայելական «Վեցօրյա»
պատերազմի արձագանքը «Ալիք» օրաթերթում..... 172
Հարությունյան Լենա
Բիլդերբերգի ակումբը և նավթային քաղաքականությունը
մերձավոր արևելքում..... 180
Հովնիկյան Վիկտորյա
Շուշիի անցումը մահմեդականների ձեռքը և դրա հետևանքները..... 187
Ղազարյան Հերմինե
Հելլենիստական դարաշրջանի կերպարվեստում ճակատային ոճի
ծագումնաբանության հիմնախնդիրը..... 195
Ղազարյան Մերի
Ղազար Ջահկեցու հայապահպան գործունեությունը 202
Չատինյան Իրա
Պատրոնա-կլիենտային հարաբերությունների դերը
Հռոմից կախյալ երկրների անեքսիայի գործում 208
Պետրոսյան Կարեն
Հայաստանի Հանրապետության իշխանության
կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. հունիս) 217
Պողոսյան Լուսինե
Գավառի երկրագիտական թանգարանի հավաքածուներն
ու ցուցադրության համառոտ նկարագիրը..... 224

Ջիլավյան Գայանե
Մասոնությունը Հյուսիսային Ամերիկայում 233
Վարդանյան Վարդուհի
Ավգուստո Պինոչետ: Վերելքն ու անկումը 242

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ասլիկյան Անի
Համակարգչային հանցավորության դեմ պայքարի
քրեաիրավական ասպեկտները 252
Բաղալյան Լարիսա
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի
սահմանադրաիրավական կարգավիճակի մասին 262
Սանասարյան Լիլիթ
Վիկտիմ վարքագիծը՝ որպես բռնությամբ ուղեկցվող
հանցագործությունների աճմանը նպաստող գործոն 271
Սարգսյան Արա
Կալանքը որպես խափանման միջոց ըստ
քրեական դատավարության նոր օրենսգրքի 277

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ռոզա
Պետական պարտքի առաջացման պատճառները և
արդյունավետ կառավարման հիմնահարցերը 287
Ավետիսյան Իրինա
Գյուղատնտեսության ոլորտի արդի մարտահրավերները
Արցախի Հանրապետությունում 295
Գաբրիելյան Մերի
Հարկային քաղաքականության դրսևորման առանձնահատկությունները
ԱՀ հետպատերազմյան տնտեսությունում 304
Գոգչյան Մոնիկա
Արտահանման պետական աջակցման քաղաքականության
վերլուծությունը դրամի արժևորման արդի պայմաններում ՀՀ-ում 314
Գրիգորյան Լարիսա
Արցախի Հանրապետության վարկային շուկայի
վերլուծությունը 2017-2022 թթ. 329
Թաիրյան Աննա
ՀՀ ներդրումային ֆոնդերի գործունեության
ընդհանուր բնութագիրը արդի ժամանակաշրջանում 338

Խաչատրյան Մերի
Վարքագծային տնտեսագիտության առանցքային հասկացությունների ազդեցությունը սպառողական վարքագծի փոփոխության վրա: Համապարփակ մոդել 348
Կարապետյան Աննա
ԱՀ գյուղատնտեսության արդի մարտահրավերները..... 359
Հովհաննիսյան Արեգա
ՓՄՁ զարգացման հեռանկարները գործարար միջավայրի բարելավման համատեքստում 373
Ղահրամանյան Աննա
ՀՀ բանկային համակարգի գործունեության ընդհանուր վերլուծությունը 381
Մովսեսյան Սվետլանա
Արցախի տնտեսության իրավիճակային վերլուծությունը և մարտահրավերները 391
Վահանյան Մարիամ
Օնլայն բանկինգի դերը ժամանակակից աշխարհում. դրա զարգացման դինամիկան ՀՀ-ում 400

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Աղաբաբյան Անգելինա
Քննության կամ ստուգարքի հայտի ավտոմատ ստեղծում 411
Աղաբեկյան Լիլիթ, Թահրյան Մարիա
Պարենային ապրանքների կտրոնային համակարգի ծրագրի մշակում 418
Ավթյան Լուսինե
Ոչ ստանդարտ տեքստային խնդիրները թվաբանական մեթոդով լուծելու մասին..... 424
Գալստյան Անգելինա
Մսի վաճառքի գործընթացի ավտոմատացումը շրջափակման պայմաններում 431
Դաշյան Շուշան
Մաթեմատիկայի դասավանդումը երկկոմպլեկտ դասարաններում..... 436
Ղազարյան Ռիմա
ԱՀ-ում գործող դեղատների գործունեությունը շրջափակման պայմաններում 442
Մահակյան Ռուզաննա
Հաջորդականություններ թեմայի ուսուցման մեթոդիկան 11-րդ դասարանում և նրանում Mathcad ծրագրի կիրառման հնարավորությունները 447

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ

Բաբայան Մարտա
Արցախի դենդրոֆլորան, նրա պահպանության հիմնախնդիրները 457
Դանիելյան Մանուշակ
Արցախի ֆլորայի դեղաբույսերը,
նրանց պահպանության հիմնախնդիրները 464
Եղիյան Քնարիկ
Ասկերանի շրջանի դենդրոֆլորայի
ուսումնասիրությունների վերլուծությունը 472
Պետրոսյան Հասմիկ
Մանկական կերերի սննդային արժեքի և
քիմիական բաղադրության վերլուծություն 478

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օհանյան Ռուզաննա, Հովհաննիսյան Աղելա
Արբանյակային լուսանկարների կիրառումը
գավառագետի էկոհամակարգի ուսումնասիրության գործում 485

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Անիկ
Գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրումը
որպես գեղագիտական դաստիարակության միջոց
տարրական դասարաններում 494
Էվոյան Էլմիրա, Մոսինյան Շուշանիկ
Տուրիզմը որպես ուսանողական ակտիվի ժամանցի ապահովում 507
Հովսեփյան Անահիտ
«Մայրենի» և «Կերպարվեստ» առարկաների
ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները 513
Մխիթարյան Ստելլա
Գնահատումը որպես ուսման մոտիվացիայի ձևավորման գործոն 520
Մկրտչյան Թագուհի
Մանկավարժական փոխգործուն և բազմաբնույթ մտածողության
տեխնոլոգիաները՝ որպես տարրական դպրոցում կապկու երեխաների
ներդրման և ուսուցման արդյունավետության պայման 527
Պապինյան Անժելա
Ուսուցչի մոտիվացիան որպես կրթության որակի ապահովման պայման... 533

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Ասչյան Գրիգոր
Դեռահասների ինքնագնահատականի և
տագնապայնության համահարաբերակցությունը 540
Հալաջյան Էդիտա
Կրտսեր դպրոցականների հարմարվողականության խանգարումը
ուսումնական գործընթացում և դրա հաղթահարման ուղիները..... 546
Ղահրամանյան Մարիաննա
Հանդուրժողականություն անորոշության նկատմամբ և
դրա ազդեցությունը գործունեության ինքնակազմակերպման վրա
շրջափակման պայմաններում 554
Մեսրոպյան Մարինա
Վշտի ապրման առանձնահատկությունները և
դրսևորումները 4-6 տարեկան երեխաների մոտ..... 559
Միքայելյան Անահիտ
Միայնության հիմնախնդրի ուսումնասիրությունը
հոգեբանական ուղղություններում 568
Մարգսյան Նինա
Սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տագնապայնությամբ
պայմանավորված ագրեսիվության մակարդակը 574

СОДЕРЖАНИЕ

АРМЯНСКАЯ ФИЛОЛОГИЯ

Айвазян Гоар
Безличные предложения 8
Аванесян Арпине
Именные словосочетания в произведениях Л. Хечояна 16
Тадевосян Анжела
Неологизмы в армянском переводе произведения «Стихотворений» Артюра Рембо..... 31
Черчинян Техмина
Грамматические особенности существительного в историческом романе «Раны Армении»..... 39
Погосян Гаяне
Прилагательные-неологизмы в работах Г. Сарухана 51
Саргсян Ануш
Две публикация романа В. Григоряна «Река времени» (параллельное исследование) 57
Симонян Анна
Аналитически сложные слова в современной армяноязычной прессе..... 64
Пелешян Инеса
Языковое исследование вариантов айрена с началом «На этом утреннем рассвете»..... 73

ИНОСТРАННЫЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

Акопян Мариам
Хеджирование как средство регулирования вежливости в гостиничных услугах 83
Паранян Мариам
Мифологема «Изба» в контексте старообрядческой деревни и творчество Н. Клюева 92

ИСТОРИЯ

Асриян Ашхен
Демографическая ситуация в Шуши 1992-2020 гг. 100
Арзанян Айкуш
Образовательная программа конгрегации Мхитарян (1896-1897 гг.)..... 106
Арзуманян Вова
Прошлое и настоящее армянского театра Шуши 114

Багдасарян Регина
Комплекс Айраванк и его архитектурная структура 123
Бавеян Нарине
Действия Арменака Казаряна (Грайр Джохк)
в организации Сассунского восстания 1894 года 131
Лалабекян Астхик
Народные песни, распространённые в селе Тех..... 140
Цатинян Алла
Археологические раскопки в Ташир-Дзорагете, Санаин 147
Акопян Лилит
Поклонение воде среди армян..... 156
Айрапетян Мелине
Отклик газеты «Европа» о Датско-Прусской войне 1848-1850 гг. 165
Айрапетян Мелине
Отзывы на арабо-израильскую «Шестидневную» войну в газете «Алик» 172
Арутюнян Лена
Бильдербергский клуб и нефтяная политика на Ближнем Востоке..... 180
Овникян Виктория
Переход Шуши в руки мусульман и его последствия 187
Казарян Эрмине
Проблема генеалогии фронтального стиля в
изобразительном искусстве эллинистической эпохи..... 195
Казарян Мери
Деятельность по сохранению армянского народа Лазара Джахкеца..... 202
Чатинян Ира
Роль патрон-клиентских отношений в
аннексии зависимых от Рима стран 208
Петросян Карен
Формирование центральных органов власти
Республики Армения (июнь 1918 г.) 217
Погосян Лусине
Коллекции гаварского геологического музея и
краткое описание экспозиций 224
Джилавян Гаяне
Масонство в Северной Америке 233
Варданян Вардуи
Взлёт и падение Августо Пиночета..... 242

ЮРИСПРУДЕНЦИЯ

Асликян Ани
Уголовные аспекты борьбы с компьютерными преступлениями..... 252
Бадалян Лариса
Конституционно-правовой статус депутата национального собрания РА..... 262
Санасарян Лилит
Поведение жертвы как фактор, способствующий
увеличению насильственных нападений..... 271
Саргсян Ара
Заключение под стражу как мера пресечения
по новому уголовно-процессуальному кодексу 277

ЭКОНОМИКА

Абраамян Роза
Причины роста государственного долга и
основные вопросы эффективного управления 287
Авестисян Ирина
Современные вызовы сельского хозяйства в Республике Арцах..... 295
Габриелян Мери
Особенности проявления налоговой политики
в послевоенной экономике Республики Арцах..... 304
Моника Гогчян
Анализ государственной политики поддержки экспорта
в текущих условиях стабильности драма в РА 314
Григорян Лариса
Анализ кредитного рынка Республики Арцах в 2017-2022 гг. 329
Таирян Анна
Общая характеристика деятельности
инвестиционных фондов РА в настоящее время..... 338
Хачатрян Мэри
Влияние ключевых концепций поведенческой экономики
на изменение поведения потребителей. Комплексная модель 348
Карапетян Анна
Текущие проблемы сельского хозяйства Арцаха..... 359
Оганнисян Арега
Перспективы развития МСП в контексте улучшения деловой среды..... 373
Каграманян Анна
Общий анализ деятельности банковской системы Армении 381

Мовсесян Светлана
Ситуационный анализ и вызовы экономики Арцаха..... 391
Ваганян Мариам
Роль интернет-банкинга в современном мире: динамика его развития в РА... 400

ИНФОРМАТИКА И МАТЕМАТИКА

Агабабян Ангелина
Автоматическое создание экзаменационной или зачетной ведомости..... 411
Агабекян Лилит, Таирян Мария
Разработка продовольственной купоновой программы 418
Автян Лусине
О решении нестандартных текстовых задач арифметическим методом..... 424
Галстян Ангелина
Автоматизация процесса продажи мяса в условиях блокады..... 431
Дашян Шушан
Математика в двойных классах..... 436
Казарян Рима
Деятельность аптек, работающих в НКР в условиях блокады..... 442
Саакян Рузанна
Методика обучения последовательностей в 11-ом классе и
возможности применения в нем программы Mathcad 447

БИОЛОГИЯ И ХИМИЯ

Бабаян Марта
Дендрофлора Арцаха, основные проблемы ее сохранения 457
Даниелян Манушак
Лекарственные растения флоры Арцаха,
основные проблемы их сохранения..... 464
Егиян Кнарик
Анализ исследований дендрофлоры аскеранской области 472
Петросян Асмик
Анализ пищевой ценности и химического состава детского питания..... 478

ЕСТЕСТВОЗНАНИЕ И ГЕОГРАФИЯ

Оганян Рузанна, Оганесян Адела
Применение спутниковых снимков в изучении экосистемы провинции 485

ПЕДАГОГИКА

Аветисян Аник
Изучения художественных произведений
как средства эстетического воспитания в начальной школе 494
Эвоян Эльмира, Мосинян Шушаник
Туризм как студенческая деятельность в обеспечении развлечений..... 507
Овсепян Анаит
Специфические особенности интегрированного
преподавания предметов «Родной язык» и «Живопись» 513
Мхитарян Стелла
Оценивание как фактор формирования мотивации учения..... 520
Мкртчян Тагуи
Педагогические технологии интерактивного и
разнообразного мышления как условие эффективности реализации и
обучения зависимых детей в начальной школе 527
Папинян Анжела
Мотивация учителя как условие обеспечения качества образования..... 533

ПСИХОЛОГИЯ И СОЦИОЛОГИЯ

Асчян Григор
Взаимосвязь между подростковой самооценкой и тревожностью 540
Аладжян Эдита
Дезадаптация учащихся младшего школьного возраста
в учебном процессе и пути его преодоления..... 546
Каграманян Марианна
Толерантность к неопределенности и ее влияние
на самоорганизацию деятельности в условиях блокады..... 554
Месропян Марина
Характеристика и проявления опыта гора у детей 4-6 лет 559
Микаелян Анаит
Изучение проблемы одиночества в психологических направлениях..... 658
Саргсян Нина
Уровень агрессивности, обусловленный тревожностью жителей
приграничных населенных пунктов..... 574

CONTENTS

ARMENIAN PHILOLOGY

Ayvazyan Gohar
Impersonal Sentence 8
Avanesyan Arpine
Noun Phrases in the Works of L. Khechoyan 16
Tadevosyan Anzhela
Neologisms in the Armenian Translation of Arthur Rimbaud´s "Poems"..... 31
Cherchinyan Tehmina
Grammatical Features of the Noun
in the Historical Novel "Wounds of Armenia" 39
Poghosyan Gayane
Adjective-Neologisms in the Works of H. Sarukhan 51
Sargsyan Anush
Two Editions of V. Grigoryan's "The River of the Time"
(Parallel Examination)..... 57
Simonyan Anna
Analytically Complex Words in Modern Armenian Press 64
Peleshyan Inesa
Linguistic Research of Hayren Variants Beginning with
"On this Morning Dawn" 73

FOREIGN LANGUAGE AND LITERATURE

Hakobyan Mariam
Hedges as Politeness-Regulating Devices in Hotel&Hospitality Services..... 83
Paranyan Mariam
The Mythologem "Hut" in the Context of Old-Ritual Village.
Nikolay Kluev´s Works 92

HISTORY

Asriyan Ashkhen
Demographic Situation in Shushi 1992-2020..... 100
Arzanyan Haykush
The Educational Curriculum of the Mkhitaryan Congregation (1896-1897) 106
Arzumanyan Vova
The Past and Present of the Armenian Theater of Shushi..... 114
Baghdasaryan Regina
Hayravank Complex and its Architectural Structure 123

Baveyan Narine
Actions of Armenak Kazaryan (Hrayr Dzhokhk) during the Organization of Sassoon Uprising of 1894 131
Lalabekyan Astghik
Folk Songs Spread Throughout the Village Tegh 140
Tsatinian Alla
Archaeological Excavations in Tashir-Dzoraget, Sanahin 147
Hakobyan Lilit
Water Worship among Armenians 156
Hayrapetyan Meline
The Response of "Europe" Daily about the Danish-Prussian War of 1848-1850 165
Hayrapetyan Meline
The Reaction of the Arab-Israeli "Six-Day" War in the Daily "Alik" 172
Harutyunyan Lena
The Bilderberg Club and Oil Politics in the Middle East 180
Hovnikyan Viktorya
The Relinquishment of Control over Shushi by the Muslims and its Consequences 187
Ghazaryan Hermine
The Issue of the Genealogy of the Frontal Style in the Fine Arts of the Hellenistic Era 195
Ghazaryan Meri
The Activities of the Armenian Conservationist Lazar Jahketsi 202
Chatinyan Ira
The Role of Patron-Client Relations in the Annexation of Roman-Dependent Countries 208
Petrosyan Karen
Formation of the Central Authorities of the Republic of Armenia (June 1918)..... 217
Poghosyan Lusine
Collections of the Gavar Geological Museum and a Brief Description of the Exhibits 224
Jilavyan Gayane
Freemasonry in North America 233
Vardanyan Varduhi
Augusto Pinochet: The Rise and Fall 242

JURISPRUDENCE

Aslikyan Ani
Criminal Aspects of the Fight Against Computer Crime 252

Badalyan Larisa
Constitutional and Legal Status of a Deputy of the National Assembly of the Republic of Armenia 262
Sanasaryan Lilit
Victim Behavior as a Factor Contributing to the Increase of Violent Attacks 271
Sargsyan Ara
Detention as a Preventive Measure under the New Code of Criminal Procedure .. 277

ECONOMY

Abrahamyan Roza
Reasons for Increasing Public Debt and the Main Issues of Effective Governance 287
Avetisyan Irina
Modern Challenges of Agriculture in the Republic of Artsakh 295
Gabrielyan Meri
The Features of Tax Policy in the Post-War Economy of the Republic of Artsakh 304
Gogchyan Monika
The Analysis of the State Export Support Policy Under the Current Conditions of Dram Stability in RA 314
Grigorian Larisa
The Analysis of the Credit Market of the Republic of Artsakh in 2017-2022 329
Tairyan Anna
General Characteristics of the Activity of RA Investment Funds at the Modern Period 338
Khachatryan Meri
The Impact of Key Concepts of Behavioral Economics on Consumer Behavior Change. Comprehensive Model 348
Karapetyan Anna
Current Challenges of Artsakh Agriculture 359
Hovhannisyan Arega
SME Development Prospects in the Context of Business Environment Improvement 373
Ghahramanyan Anna
General Analysis of the Activity of the Banking System of Armenia 381
Movsesyan Svetlana
Situational Analysis and Challenges of the Artsakh Economy 391
Vahanyan Mariam
The Role of Online Banking in the Modern World: Dynamics of its Development in RA 400

INFORMATICS AND MATHEMATICS

Aghababyan Angelina
Automatic Creation of an Examination or Test Sheet 411
Aghabekyan Lilit, Tairyan Maria
Development of Food Coupon Program..... 418
Avtyan Lusine
About Solving Non-Standard Text Problems by Arithmetic Method..... 424
Galstyan Angelina
Automation of the Meat Sales Process under Blockade Conditions..... 431
Dashyan Shushan
Mathematics in Double Classes..... 436
Ghazaryan Rima
Activities of Pharmacies Operating in the NKR under the Blockade 442
Sahakyan Ruzanna
Method of Teaching Sequences in the 11th Grade
and the Potential Applications of the Mathcad Program 477

BIOLOGY AND CHEMISTRY

Babayan Marta
Dendroflora of Artsakh, Main Problems of its Conservation 457
Danielyan Manushak
Medicinal Plants of Artsakh Flora, the Main Problems of their Conservation 464
Yeghiyan Knarik
The Analysis of Dendroflora Studies of Askeran Region..... 472
Petrosyan Hasmik
Analysis of the Nutritional Value and Chemical Composition of Baby Food..... 478

NATURAL SCIENCE AND GEOGRAPHY

Ohanyan Ruzanna, Hovhannisyan Adela
Application of Satellite Images in the Study
of the Province Ecosystem 485

PEDAGOGY

Avetisyan Anik
The Study of Works of Art as a Means
of Aesthetic Education in Primary School 494

Evoyan Elmira, Mosinyan Shushanik
Tourism as a Student Activity in Providing Entertainment 507
Hovsepyan Anahit
Specific Features of Integrated Teaching of the Subjects
"Native language" and "Painting" 513
Mkhitaryan Stella
Assessment as a Factor of the Formation of Learning Motivation 520
Mkrtchyan Taguhi
Pedagogical Technologies of Interactive and Diverse Thinking
as a Condition for the Effectiveness of Implementation and Training
of Dependent Children in Elementary School 527
Papinyan Anzhela
Teacher Motivation as a Condition for Ensuring the Quality of Education 533

PSYCHOLOGY AND SOCIOLOGY

Aschyan Grigor
The Relationship Between Adolescent Self-Esteem and Anxiety 540
Halajyan Edita
Maladaptation of Junior Schoolchildren
in the Learning Process and Ways of Coping..... 546
Ghahramanyan Marianna
Tolerance for Uncertainty and its Effect on Self-organization
of Activities under Conditions of Blockade..... 554
Mesropyan Marina
Characteristics and Manifestations of Grief Experience
among Children Aged 4 to 6 Years..... 559
Mikayelyan Anahit
The Study of the Problem of Loneliness in Psychological Approaches 568
Sargsyan Nina
The Level of Aggressiveness Caused by the Anxiety
of Residents of Border Settlements..... 574

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 12-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երիտասարդ գիտնականների
գիտահետազոտական ներուժի բացահայտում

ՎԱՆԱՁՈՐ
2025

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ФОНД «ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ИМЕНИ О. ТУМАНЯНА»

МАТЕРИАЛЫ 12-ОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ

Раскрытие научно-исследовательского
потенциала молодых ученых

ВАНАДЗОР
2025

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

"VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TUMANYAN" FOUNDATION

MATERIALS OF THE 12TH REPUBLICAN STUDENT CONFERENCE

Unveiling the research
potential of young scientists

VANADZOR
2025

Լեզվական խմբագիր՝ *Վալերի Փիլոյան*
Համակարգչային ձևավորող՝ *Աշխեն Գալստյան*
Օտարալեզու տեքստերի խմբագիր՝ *Զարա Ալեքյան*

ՎԱՆԱՁՈՐ – 2025

Языковой редактор: *Валерий Пилоян*
Компьютерный дизайнер: *Ашхен Галстян*
Корректор иноязычных текстов: *Зара Алекян*

ВАНАДЗОР – 2025

Linguistic Editor: *Valeri Piloyan*
Computer Designer: *Ashkhen Galstyan*
Proofreader of Texts in Foreign Languages: *Zara Alekyan*

VANADZOR – 2025

ISBN 978-9939-1-1686-0

9 789939 116860